

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

**ԷԶԵՐ ՀԱՅ  
ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ**

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ՝  
ՓՐՈՖ. Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ  
ԵՒ  
ԴՈԿՏ. ՉԱԻՆ ԵԿԱԻԵԱՆԻ



ԵՐԵՎԱՆ - 1996 թ.



9(47.925)  
3-72

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ



ԷՉԵՐ ՀԱՅ  
ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

2935

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ՝  
ՓՐՈՖ. Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ  
ԵՒ  
ԴՈԿՏ. ՉԱԷՆ ԵԿԱԻԵԱՆԻ



ԵՐԵՎԱՆ - 1996 թ.

ՌՈՊԵՐ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ





Artwork & Typesetting  
Tabakian Press  
13460 Rangoon St. Arleta, CA. 91331  
Tel. (818)997-8535, Fax (818)988-8331  
U.S.A.

Printed by Gráfica de Coimbra, L.td  
Palheira - Assafarge - 3000 COIMBRA  
Tel. (39)438107, Fax (39)438030  
PORTUGAL

ՆՈՒԻՐԻՈՒՄ Է  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԱՆԴԱՄ  
ՌՈՊԵՐ ԿԻԼՊԵՆԿԵԱՆԻ  
ԾՆՆԴԵԱՆ 70-ԱՄԵԱԿԻՆ



Հայ պատմագիտութիւնը յատկապէս 20-րդ դարում որոշակի յաջողութիւնների է հասել հայ ժողովուրդի բազմադարեան պատմութեան ուսումնասիրման գործում: Սակայն հայ ժողովուրդի պատմութեան բոլոր խնդիրները չէ, որ հաւասար ուշադրութեան են արժանացել: Տակաւին կան պատմագիտական առանձին ասպարէզներ, որոնք կարօտ են հիմնաւոր եւ ընդգրկուն հետազօտման: Դրանցից է հայկական գաղթավայրերի պատմութիւնը, մի բնագաւառ, որի նշանակութիւնը հայ ժողովուրդի պատմութեան համար դժուար է գերազնահատել:

Ինչ խօսք դրսաշխարհում հաստատուած հայ հատուածի առանձին օճախների մասին յուշագիրների կամ տեղի պատմագիրների կողմից ոչ սակաւ նիւթեր են կուտակուել եւ ուսումնասիրութիւններ կատարուել: Սակայն դրանք միտում չեն ունեցել եւ հեռու են հայկական գաղթավայրերի առանցքային հարցերը բարձրացնելուց: Դրանք արժէքաւոր են, առաւելապէս, իրենց պարունակած փաստական նիւթերով:

Միայն 1950-ական թուականների կէտերից, անհատի պաշտամունքի ֆննադատութեան շնորհիւ ստեղծուած բարեկապատ մթնոլորտում հնարաւորութիւն ստեղծուեց շրջադարձ կատարել դէպի գաղութահայութեան պատմութեան հետազօտումը:

Անցած շուրջ չորս տասնամեակում արդիւնաւէտ աշխատանք է կատարուել տարբեր երկրների առանձին գաղթավայրերի պատմութիւնը լուսաբանելու ուղղութեամբ: Հրատարակուել են նաեւ թեմատիկ ժողովածուներ հայ-ուկրաինական, հայ-հունգարական պատմական կապերի եւ ուշ միջնադարի հայ ազատագրական շարժումներում գաղթավայրերի նշանակութեան մասին:

Պատշաճը մատուցելով կատարուածին, հարկ է միաժամանակ նշել, որ այս ուղղութեամբ անելիքները դեռեւս շատ են: Այդ է պատճառը, որ գաղթավայրերի պատմութեան յարուցած խնդիրները լուսաբանելու աշխոյժ հետաքրքրութիւնը շարունակուում է: Յօդուածների սոյն ժողովածուն նկատուող բացը լրացնելուն նպատակամղուած մի համեստ ֆայլ է:



Ընթերցողների ուշադրութեան ներկայացուող այս աշխատութիւնը այն անդրանիկ գործն է, որը ի տարբերութիւն նախորդ ժողովածուների թեմատիկ սահմանափակում չունի: Այն նուիրում է առհասարակ հայկական գաղթավայրերի պատմութեան փրոպիւմին: Նրանում արծարծում են ինչպէս տարբեր կրկրների գաղօնախնների առանձին հարցերը, այնպէս էլ հայկական գաղթավայրերի ամբողջական պատմութեան խնդիրները:

Ժողովածուն նուիրում է ի շահ հայ ժողովրդի արգասաւոր գործունէութիւն ծաւալած Կիւլպէնկեան նշանաւոր գերդաստանի արժանաւոր ներկայացուցիչ, հայկական գաղթավայրերի պատմութեան մասնագէտ, ակադեմիկոս Ռոպեր Կիւլպէնկեանի ծննդեան 70-ամեակին:

## ON THE CONTENTS

*Armenian Historical Science has improved even more in the XXth century through studies in ancient Armenian history. However all problems in history have not been afforded the same attention. Furthermore some of the historical topics need thorough, fundamental investigation. Among them the history of Armenian settlements is a significantly difficult topic to ascertain. Scientists both from Armenia and abroad have much material and many studies on numerous Armenian settlements overseas. Nevertheless this was not their intention and they fell far short of raising fundamental problems on Armenian settlements. Rather, they are more of historical and factual value.*

*Only effective from the nineteen fifties due to cult personality censure, a favorable atmosphere to be commencement of thorough study in the history of the Armenian settlements emerged. During the last four decades work has been successfully accomplished to shed light on the history of a number of Armenian settlements. Collections on the subjects of Armeno-Ukrainian, Armeno-Hungarian relations and the role of Armenian settlements in liberation movements have been published.*

*It should be mentioned that as there is so much to do all at the same time, there is still a lot more to be done. This is due to the viable undying interest shown in this subject. The present collection of articles is a modest attempt to fill the gap. This is the first study to be submitted to the attention of readers which, in contrast to previous ones, does not have topic limitations. In general, the present collection devoted to the history of Armenian settlements reflects upon their detached problems in different countries and general matters concerning them.*

*This collection is devoted to the 70th birthday of Roberto Gulbenkian, academician, specialist on the history of Armenian settlements and eminent representative of a family well-known for its patriotic activity.*



# ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԴՈԿՏՈՐ ՌՈՊԵՐԹՕ ԿԻԼՊԵՆԿԵԱՆԻ

«Հարկ չկայ յուսալ նախաձեռնելու համար  
եւ յաջողիլ յարատելելու համար»  
Ռիլհելմ Օրանժեցի

Հանրաձանօթ տնտեսագէտ եւ պատմաբան Դոկտ. Ռոպերթօ Կիլպէնկեանը ծնած է Ալժէ քաղաքը 7 Ապրիլ, 1923-ին: Ան երրորդ մանչ գաւակն է Գալուստ Կիլպէնկեանի կրտսեր եղբոր՝ Վահանի եւ Տիկին Ֆրանսուազ-Թրիլլա Կիլպէնկեանի: Նախակրթութիւնն ու երկրորդական ուսումը ստացած է Ալժէ քաղաքի Ֆրանսական պետական ճեմարանը՝ արժանանալով Պսակաւորի տիտղոսին:

Քսան տարին հազիւ բոլորած՝ երիտասարդ հայորդին 1943-ին կը զօրակոչուի - ծառայելով Հիւսիսային Ափրիկէի Ֆրանսական բանակին մէջ, որ այն ատեն կը գտնուէր Զօրավար Ժիրոյի հրամանատարութեան տակ:

Դոկտ. Ռ. Կիլպէնկեան ամուսնացած է Դեկտեմբեր 1951-ին բնիկ Լիոնցի (Ֆրանսա) Տիկին Փոլէթ Պերթըլիէ-(Կիլպէնկեանի) հետ: Անոնք բախտաւորուած են երեք մանչ գաւակներով, Միքայէլ, Սարգիս եւ Մարկոս, որոնք այսօր բարձր դիտական դիրքերու հասած են եւ վառ կը պահեն իրենց ընտանիքի համբաւը:

1944-1945-ի ժամանակամիջոցին, երիտասարդ տասնապետ Ռոպերթօ Կիլպէնկեանը եռանդուն ու գործնական մասնակցութիւն կը բերէր իր հայրենիք Ֆրանսայի ազատագրութեան մեծ մարտերուն, յատկապէս 15 Օգոստոս 1944-ին դաշնակից բանակներու հետ միատեղ Հարաւային Ֆրանսայի - Փրովանսի ցամաքահանման ճակատամարտին մասնակցելով, երբ յաջորդաբար իր զօրախումբը կ'ազատագրէր Սէն Թրոփեզ, Ավինիոն, Լիոն, Տիփոն, Ժիւռայի լեռնաշղթայէն մինչեւ Գերմանիոյ Սեւ Անտառը, ուր ծանրօրէն կը վիրաւորուէր ցախ ոտքէն:

Պատերազմի տարիներուն իր ցուցաբերած խիզախութեանց ու անձնուիրութեան համար, քաջարի մարտիկ Ռ. Կիլպէնկեան յետագային կ'արժանանայ բազմաթիւ պարգեւներու:

Առաջին պատուոյ գիրը կը պարունակէ հետեւեալ բովանդակութիւնը.

28 Սեպտեմբեր 1944 թուագրեալ հրամանագրով, Մենֆ, Զօրավար Թուրէ Տիւ Վիժիէ, առաջին հրասայլային հրամանատար, զօրաբանակի գովասանագիրը կը շնորհենք Ափրիկեան երրորդ զօրագունդի յատուկ ջոկատի, հարուածային գունդի տասնապետ՝ Կիլպէնկեան Ռոպերթոյին: Տասնապետը իր անձնական նախաձեռնութեամբ, 6 Սեպտեմբեր 1944-ին հետազօտութեան մը ընթացքին, հանդիպելով գերմանական զինուորատար մեքենայի մը, ներքին մղումով եւ արիարար յարձակում գործելով՝ ձեռնառումով կ'ոչնչացնէ ամբողջ անձնակազմը այրելով մեքենան: Ստորագրութիւն - զօրավար Տիւ Վիժիէ, ընդհանուր հրամանատարութիւն, 8 Հոկտեմբեր 1944:

Զօրախումբի պետ - Ժանսիէն - առժամեայ հրամանատար Ափրիկեան երրորդ յատուկ զօրագունդի - կնիք - ստորագրութիւն - հրամանատար Ժանսիէն:

1944-1945-ին կը ստանայ աստղակից արծաթեայ երկու պատերազմական խաչ խիզախութեան համար: 1945-ին կը պարգեւատրուի Զինուորական Ասպետի խաչով: 1952-ին՝ պաշտպանութեան նախարարութիւնը կը յանձնէ վեթերան զինուորի մետալը, որպէս Երկրորդ Համաշխարհային Պատերազմի մասնակից (1939-1945): 1965-ին կը պարգեւատրուի Ֆրանսական բանակի Ռազմիկի խաչով:

Հասարակական եւ մշակութային բեղմնաւոր գործունէութեանց առ ի երախտագիտութիւն՝ Ֆրանսայի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութիւնը 1983-ին կը պարգեւատրէ Դոկտ. Ռ. Կիլպէնկեանը Ֆրանսայի ազգային պատուոյ լեգէոնի սպայի շքանշանով:

Գալուստ Պէյ Կիլպէնկեան, քաջատեղեակ իր եղբորորդիին արժանիքներուն ու զոհաբերումի անսակարկ ոգիին, 1946-ին իր հովանիին ներքեւ կ'առնէ գինք, եւ շնորհիւ այս համագործակցութեան իր ստեղծած Միջազգային Ընկերութեան վարկը առաւել եւս կը բարձրանայ:

1955-ին, երբ Գալուստ Պէյ Կիլպէնկեան յաւիտենական հանգիստը կը գտնէր Լիզպոնի մէջ 20 Յուլիսին, Դոկտ. Ռ. Կիլպէնկեան կը մեկնի Փորթուկալի մայրաքաղաքը՝ ուր համաձայն հօրեղբօր կտակին, նորաստեղծ Հիմնարկութեան մէջ ունենալու համար բեղուն, իւրայատուկ եւ փայլուն գործունէութիւն մը: Իր ծաւալուն, բանիմաց եւ արդիւնաւէտ ժրջանութեամբ, բարեսիրական Հիմնարկութիւնը, զոր կը կրէ միջազգային համբաւ վայելող հարազատին անունը, կարճ ժամանակի ընթացքին կը դառնայ Եւրոպայի առաջինը՝ ընդգրկելով նաեւ արուեստի ու մշակոյթի բազմազան ոլորտներ, թանկարժէք իրերու թանգարանով, արուեստի հրատարակութիւններով, նուագախումբ-երգչախումբով եւայլն...:

Մինչ այդ Դոկտ. Ռ. Կիլպէնկեան, նախ Փարիզի եւ ապա Լոնտոնի մէջ աւարտած էր տնտեսագէտի բարձրագոյն ուսումը:



Հիմնարկութեան ներս առաջին իսկ մուտք գործելուն կը ստանձնէր բարձր պատասխանատու պաշտօններ՝ Հայկական Բաժանմունքի տնօրէնութիւնը, Միջին Արեւելքի եւ Նաւթարդիւնաբերական բաժանմունքներու վարիչ-տնօրէնութիւնը: Ճկուն եւ դիւանագէտի յատկութիւններով օժտուած Դոկտ. Ռ. Կիւլպէնկեան, մեծ համբաւի տիրացած է նաւթային միջազգային շրջանակներուն մէջ եւ որպէս փորձառու տնտեսագէտ, գլխաւոր պատասխանատուներէն է եւ խորհրդական՝ Հիմնարկութեան կալուածներու եւ դրամագլուխի տնտեսական գործերուն եւ այդ իսկ պատճառով 7 Ապրիլ 1964-ին միաձայնութեամբ կ'ընտրուի Տնօրէն Ժողովի անդամ:

Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Գաղթականներու բարձր Կոմիսարիան զինք կը նշանակէ ՄԱԿ-ի Գաղթականաց Կոմիսարութեան առաջին ներկայացուցիչը Փորթուկալի մօտ: Պաշտօն, որ Դոկտ. Ռ. Կիւլպէնկեան կը վարէ 1960-1974:

Այսօր անդամ է հետեւեալ ընկերութիւններու տնօրէն Ժողովներու.

Արաբական Միացեալ Հմիրութեան նաւթարդիւնաբերութեան եւ նաւթավաճառման ADCO, GASCO եւ Օմանի սուլֆանութեան նաւթարդիւնաբերութեան զարգացման կեդրոնին:

Կարգ մը երկիրներու կառավարութիւնները գնահատելով Դոկտ. Ռոպերթօ Կիւլպէնկեանի հասարակական եւ մշակութային գործունէութիւնը, իրենց երախտագիտութիւնը յայտնած են իրեն շնորհելով բարձր պարգեւներ:

Ստորեւ անուանացանկը այն երկիրներուն, որոնք առ ի գնահատանք Դոկտ. Ռ. Կիւլպէնկեանի գործունէութեանց շնորհած են զանազան պատուանշաններ.

- 1962 - Լիբանան - Մայրիի ազգային սպայից պատուանշան:
- 1965 - Յունաստան - Գեորգ Ա. Թագաւորի սպայից պատուանշան:
- 1966 - Պրագիլիա - Ռիս Պրանգօ Հրամանատարի պատուանշան:
- 1969 - Իրաք - Ռաֆիտայն Ա. Կարգի պատուանշան:
- 1971 - Մալթա - Մալթայի Մեծ Ասպետի պատուանշան:
- 1973 - Իրան - Հումայումի ասպետի պատուանշան:
- 1978 - Իսպանիա - Քաղաքացիական արժանաւորութեան Հրամանատարի:
- 1982 - Իտալիա - Իտալական Հանրապետութեան արժանաւորութեան Հրամանատար:
- 1984 - Աւստրիա - Բարձր արժանաւորութեան պատուանշան:
- 1988 - Լիւքսանպուրկ - Մեծն Դիստրեան արժանաւորութեան բարձր Ասպետ:

1995 - Փորթուկալ - Ծովագնաց Թագաժառանգ Հենրիխի Հրամանատար:

Առ ի գնահատութիւն՝ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ իր ձառայութեան՝ Հայոց Վեհապետերը Դոկտ. Ռ. Կիւլպէնկեանին շնորհած են.

1960 - Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ ձեռամբ Երջանկայիշատակ Վազգէն Ա. Կաթողիկոսին, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի պատուանշան:

1964 - Պատրիարքական Հայոց Ս. Երուսաղէմ՝ ձեռամբ Եղիշէ Բ. Պատրիարքին, Սուրբ Յարութիւն Տաճարի պատուանշան:

1967 - Անթիլիաս՝ ձեռամբ Երջանկայիշատակ Խորէն Ա. Կաթողիկոսին, Սուրբ Ներսէս Շնորհալիի Կիլիկիոյ Ասպետութեան պատուանշան:

1968 - Միւլթարեան Միաբանութիւն Վիեննա՝ Միւլթար Արքեպիսկոպոսի պատուանշան:

Մայր Հայրենիքէն.-  
1969-ին - Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը պարգեւատրած է Մեսրոպ Մաշտոցի յուշամետալով:

1992-ին Հայաստանի ազգային գրադարանի գիտական խորհուրդի որոշումով Դոկտ. Ռ. Կիւլպէնկեանը ստացած է Յակոբ Մեղապարտի շքանշան:

Դոկտ. Ռ. Կիւլպէնկեան աներեւակայելիօրէն զուարճախօս է: Ամէնօրեայ աշխատանքին զուգահեռ, Դոկտ. Ռ. Կիւլպէնկեան ունի երկու նախասիրութիւններ. մէկը պատմագիտութիւնն է, իսկ միւսը արձանագործութիւնը: Այս վերջինիս միջոցակարտայայտէ իր բիբլիական ներշնչման ներաշխարհը:

Տարիներ շարունակ հետապնդելով իր արմատները, ան դարձած է հմուտ պատմաբան: Ան մասնագէտ է յատկապէս հայփորթուկալական եւ հայ-սպանական պատմական կապերու: Մեր իրականութեան մէջ ան առաջինն է, որ մանրագնին ուսումնասիրած է Իպերեան ցամաքակղզիի արքունական, կրօնական եւ պետական դիւանները ձեռք բերելու համար հայութեան կամ Հայաստանի հետ առնչուող եզակի վաւերագրեր, որոնք կը հետաքրքրեն Արեւելքը: Մեծաւ մասամբ այս փաստագրերը անժանօթ մնացած էին հայ պատմաբաններուն համար:

Դոկտ. Ռ. Կիւլպէնկեան յայտնաբերած է փորթուկալեան ազգային դիւանները եւ ԺԸ դարու պատկանող եզակի հայերէն ձեռագիր մը, որուն մանրաթապաւէնը ղրկած է Փրոֆ. Լեւոն Խաչիկեանին՝ Մաշտոցեան Մատենադարան:

Ձեռագիրը հաշուապահական տետր մըն է, որ պատկանած է Յովհաննէս Տէր Դաւթեան Ջուղայեցի առեւտրականին: Ձեռագիր տետրը կը ներկայացնէ այդ անժանօթ անձնաւորութեան Հաշուետումարը:



Սոյն ձեռագիրը մշակուած եւ լոյս է տեսած 1984-ին Մատենադարանի հաւաքածոյի շարքին մէջ:

Պատմաբան Դոկտ. Ռ. Կիւլպէնկեան իր մենագրութիւնները հրատարակել սկսած է 1970-էն ի վեր:

Երբ առաջին աշխատասիրութիւնը կ'աւարտէ, փորձուկալացի արեւելագէտ, Հայր Սիլվա Ռեկոն կ'առաջարկէ հեղինակին, որպէսզի յօդուածը տպուի ակադեմական Ստուտիա ժողովածուին մէջ: Այս պատահած է քսանվեց տարի առաջ:

Մայիս 1995-ին, Փորձուկալի եւ Հայաստանի Գիտութեանց Ակադեմիաներու իսկական անդամ դարձած՝ Դոկտ. Ռ. Կիւլպէնկեանի եռահատոր լիակատար երկերու ժողովածուն լոյս կը տեսնէ Փորձուկալի Պատմութեան Ակադեմիայի հովանաւորութեամբ եւ նոր հրատարակութեան պաշտօնական ծանուցումը կը կատարուի Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի նախագահ՝ Փրոֆ. Դոկտ. Ֆադէյ Տաճատի Սարգսեանի ներկայութեամբ:

Դոկտ. Ռ. Կիւլպէնկեանի աշխատասիրութիւններու ցանկը ըստ հատորներու զետեղուած են ակադեմական հրատարակութեան մէջ: Առաջին հատորի խորագիրն է՝ Պատմական Ուսումնասիրութիւններ - Հայաստանի, Միջին Արեւելի եւ Փորթուկալի պատմական յարաբերութիւններ, հետեւեալ յօդուածներով:

Ա. ԺԵ դարու Ձեռագրի մը պատմութիւնը - Յիսուսեան Միաբանութեան անդամ Հայր Պարգէու-ի նամակը:

ա. տպագրութիւն փորձուկալերէն - 29 Ապրիլ 1970 Լիզպոն տես - Studia պարբերութիւն էջ 44-45:

բ. տպ. հայերէն Հայ Փորթուկալեան Յարաբերութիւններ հրատ. Երեւան 1986 Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Մաշտոցեան Մատենադարան, էջ 270-285:

Բ. Ջուլիֆայի հայ վանառական Փիլիպոս Տը Ջաղլի եւ պարսկահայ անետրային հաստատումը Մերձ-Պարսեան երկիրներ:

ա. տպ. Ֆրանսերէն - Ream, հտ. Է. էջ 361-399 փարիզ 1970

բ. տպ. հայերէն - Հ.Փ.Յ. էջ 311-351:

գ. տպ. պարսկերէն - Թարիխ-Շամարաթ լրագիր հմր. 2, 57 - Թեհրան 1972 - էջ 1-58:

Գ. Սասունցի Դաւթի աւանդութիւնը ըստ ԺՁ դարու երկու փորթուկալցի նամրորդներու (Հ. Պէրպէրեանի հետ միատեղ):

ա. տպ. Ֆրանսերէն Ream- հտ. Ը. էջ 175-188, փարիզ, 1971

բ. տպ. հայերէն Հ.Փ.Յ. էջ 231-245:

Դ. Ջակոմէ Արուս (Արրայ) հայագգի եպիսկոպոս Մալարարի մէջ (1503-1550):

ա. տպ. անգլերէն Arquivos do Centro Cultural Portuguesa հտ. Դ. էջ 149-176:

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւն Փարիզ, 1972

բ. տպ. հայերէն Հ.Փ.Յ. էջ 286-310:

Ե. Փորթուկալցի Աւգոստինեաններու եւ Տոմինիկեաններու յարաբերութիւնները հայ տոմինիկեաններու հետ ժէ դարուն:

ա. տպ. Ֆրանսերէն - Römische Guartal Schrift für Christliche Altertumskunde und Kirchengeschichte հտ. Հ. - էջ 79-99 մաս 1-2 Հերտեր - Հոռմ - Ֆրայպուրկ - Վիեննա 1975:

բ. տպ. Հ.Փ.Յ. էջ 222-230 եւ յաւելուած:

Զ. Հայաստանի եւ Փորթուկալի յարաբերութիւնները սկիզբէն մինչեւ Միջին Դարու վերջը:

ա. տպ. Ֆրանսերէն - Ream հտ. ԺԴ. էջ 171-213 փարիզ 1980:

բ. տպ. հայերէն - Հ.Փ.Յ. էջ 6-55:

Կ. Կրօնական յարաբերութիւններ հայերու եւ փորթուկալցի աւգոստինեաններու հետ ժէ դարուն Պարսկաստանի մէջ:

ա. հրատ. փորթուկալերէն - Երկերու լիակատար ժողովածու, հտ. Ա. էջ 211-253 - Լիզպոն 1995:

Ը. Պարսկերէն - Չորս Աւետարաններու» Ձեռագիրը գորպահանուած է Լիզպոնի ազգային գրադարանը - Մեծ Մոնղոլը, Յիսուսեան Միաբանութեան Հայրերը եւ Հայերը:

ա. տպ. փորթուկալերէն - Anais de Academia Portuguesa de Historia - 2-րդ շարք հտ. ԻԵ., էջ 465-516 - Լիզպոն 1969:

Թ. Ամենայն Հայոց Դաւիթ Կաթողիկոսի Հասցէագրուած երկու հետաքրքրական նամակներ ուղղուած Իսպանիոյ Ֆիլիպոս Երրորդ եւ Փորթուկալի Փիլիպոս Երկրորդ Թագաւորին (1612-1614):

ա. հրատ. Երկերու լիակատար ժողովածու հտ. Ա. էջ 301-356 Ֆրանսերէն լեզուով:

Երկերու լիակատար ժողովածուի երկրորդ հատորի վերնագիրն է Պատմական Ուսումնասիրութիւններու Պատմական Յարաբերութիւններ Փորթուկալի, Իրանի եւ Միջին Արեւելի հետ: Կը բովանդակէ սոյն մենագրութիւնները:

Ա. Լուիշ Փերեյրա տը Լասերտա, Սուրբ Աւգոստինոսի Միաբանութեան Հայրեր՝ Պելլիոթ Դոշ Անժուշ, Կիլյերմ տը Սանթօ Ակոշտինիու եւ փորթուկալցի դեսպանական առաքելութիւնը Պարսկաստան:

ա. հրատ. Ֆրանսերէն - Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան հրատարակութիւն - Չօնուած Պարսկաստանի Թագաւորութեան հիմնագրութեան 2500-ամեակի առթիւ - Լիզպոն - 1972:

բ. տպ. հայերէն - Հ.Փ.Յ. էջ 66-202:

Բ. Հայր Անթոնիո տը Կուվեյանի հեղինակած է՞ 1605-ի թուագրեալ - Համառօտ տեղեկութիւն Պարսկաստանի մասին:

ա. հրատ. փորթուկալերէն - Arquivos do Centro Cultural Portugues



- Հտ. Ը. Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւն - Փարիզ  
1974 - էջ 211-263:

բ. տպ. հայերէն - Հ.Փ.Յ. էջ 246-269:

Գ. Վրաստանի Թագուհի Բեթելեանի Փառաւոր եւ Իսկական  
Մարտիրոսութեան Պատմութիւնը:

ա. հրտ. Ֆրանսերէն - Bedi Kartlis - Հտ. Խ. Փարիզ 1982

բ. հրտ. փորթուկալերէն - Anais - Academia Portuguesa de  
Historia - 2-րդ շարք Հտ. Լ. - Լիզպոն 1985:

գ. հրտ. վրացերէն - Վրաստանի Ակադեմիայի հրտ.  
Թփիլիսի, 1987:

դ. հրտ. ռուսերէն Վրաստանի Մեցնիերերա հրտ. Թփիլիսի,  
1987:

Դ. Փորթուկալացիներու եւ հարաւային Միջագետքին Խու-  
զիստան հաստատուած Մանտէացի կրօնադաւաններու քաղաքա-  
կան փոխ-յարաբերութիւններու պատմութիւնը ժէ դարու կէսե-  
րուն:

ա. տպ. փորթուկալերէն Anais de Academia Portuguesa de Historia  
2-րդ շարք, Հտ. Լբ. համար բ. Լիզպոն, 1989:

Երկերու լիակատար ժողովածուի երրորդ հատորի  
խորագիրն է Պատմական Ուսումնասիրութիւններ - Չանագանք-  
հետեւեալ յօդուածներով:-

Պարսկերէն չորս Աւետարաններու թարգմանութեան պատ-  
մութիւնը:

ա. հրտ. անգլերէն - Neue Zeitschrift für Misionwissenschaft -  
Իմենսէ - Չուիցերիա 1981:

բ. Արեւելի պատմութիւն եւ արեւելագիտութիւնը  
Փորթուկալի Պատմութեան Ակադեմիայի մէջ:

ա. հրտ. փորթուկալերէն - Academia Portuguesa de Historia -  
Լիզպոն 1987:

գ. Ֆրանսացի քաղաքական գործիչ, բանաստեղծ, Նոպելեան  
մրցանակակիր Ալեքսի Լեֆէ (Սան Ճոն Փերս) աքսորավայրէն  
առաջած նամակագրութիւնը աքսորական իշխան Գալուստ  
Կիւլպէնկեանին (1948-1954):

ա. հրտ. Ֆրանսերէն Սէն Ճոն Փերսի նուիրուած ցուցա-  
հանդէսին առիթով - Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան  
ժամանակակից արուեստի թանգարան:

բ. հրտ. անգլերէն- Անտրրսըն Հաուզ թանգարան Լիզպոն -  
Ուաշինկթըն 1984:

Դ. Ներքոյ արեւելագէտ Հայր Փրոֆ. Դոկտ. Անթոնիօ տա  
Սիլվա Ռեկոյի առ յիշատակ:

ա. փորթուկալերէն - Academia Portuguesa de Historia - Լիզպոն  
1987:

Մամուլի տակ է Ֆրանսերէն եւ փորթուկալերէն լեզուներով  
նոր մենագրութիւն մը:

Հայկական զգեստը իրրեւ արեւելեան անցագիր եւրոպացի  
միսիոնարներու, վաճառականներու եւ ճանապարհորդներու  
համար ժՁ եւ ժէ դարերուն:

ա. հրտ. Rearm - Հտ. ԻԵ, Փարիզ, 1996

բ. հրտ. Academia Portuguesa de Historia - Լիզպոն 1996:

Վերոյիշեալ յօդուածներէն՝ մաս մը ինչպէս վերեւ նշուած է  
հայերէնով լոյս տեսած է Մատենադարանի հրատարակութեան  
մէջ Հայ-փորթուգալական յարաբերութիւններ խորագրին տակ -  
հրտ. Հայկական Հանր. Գիտ. Ակ. Երեւան, 1986:

Հոռմի պատմագիտական կաճառը բարձր գնահատելով  
Դոկտ. Ռոպերթօ Կիւլպէնկեանի աշխատասիրութիւնները, 1983-  
ին՝ զինք ընտրած է իբրեւ արտասահմանեան թղթակից անդամ  
- Consociato Cultorum Historiae Ordinis Praedicatorum.

1983 Դեկտեմբերին, Փորթուկալի Պատմական Գիտութիւն-  
ներու Ակադեմիան զինք ընտրած է իր կաճառի իսկական անդամ  
18-րդ համարակալութեան տակ:

1992 Յուլիսին՝ Հայաստանի Հանրապետութեան Գիտու-  
թիւններու Ազգային Ակադեմիան զինք կ'ընտրէ իբրեւ արտա-  
սահմանեան անդամ: Նոյն տարին, Հայաստանի Ազգային Գրա-  
դարանի գիտական խորհուրդը Դոկտ. Ռ. Կիւլպէնկեանը կ'ընտրէ  
իբրեւ խորհուրդի պատուաւոր անդամ:

1994 Սեպտեմբերին, Երեւանի Համալսարանի Գիտական խոր-  
հուրդը կը շնորհէ Դոկտ. Ռ. Կիւլպէնկեանին Պատուաւոր Դոկ-  
տորի տիտղոսը:

Յունուար 17, 1996-ին, հայազգի մասնագէտը կ'ընտրուի միա-  
ձայնութեամբ, Փորթուկալի Պատմութեան Ակադեմիայի 2-րդ  
փոխ նախագահ:



---

---

## ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ

(ԱՌԱՋԱՅՈՒՄԸ, ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ)

---

---

### Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

---

---

Պատմական մեծ անցեալ ունեցող ժողովուրդներից շատերին է բաժին ընկել օտար երկրներում գաղութներ ունենալ: Տնտեսական, ռազմաքաղաքական եւ ընդհանուր առաջին պատճառներով շատ ժողովուրդների առանձին զանգուածներ հարկադրուած են եղել թողնել հայրենիքը, արտագաղթել եւ հանդրուան գտնել մօտիկ եւ հեռու ուրիշ երկրներում: Արտագաղթերն ու օտար երկրակամարների տակ գաղթավայրի առաջացումը սակայն, անցողիկ երեւոյթ է եղել այդ ժողովուրդների համար եւ չի խախտել նրանց բնապատմական զարգացման ընդհանուր օրինաչափութիւնը: Հայ ժողովուրդը հարուստ պատմական անցեալ ունեցող այն սակաւթիւ ժողովուրդներից է, որին բախտ էր վիճակուել դեռ վաղ ժամանակներից դարեր շարունակ կրել արտագաղթի ծանրութիւնը եւ աշխարհի տարբեր մասերում ստեղծել իր գաղթօջախները: Հայկական գաղթավայրերի առաջացումը ոչ թէ տարաբախտ պատահականութեան հետեւանք է եղել, այլ ցաւօք, պարբերական բնոյթ է կրել եւ դարձել նրա պատմական զարգացման անբաժան ու կարեւոր առանձնայատկութիւնը: Այդպիսով, դարեր շարունակ հայրենիքից՝ Հայաստանից դուրս են գտնուել հայութեան ստուար զանգուածներ, հետեւաբար եւ հասարակական քաղաքական կեանքի, գիտութեան ու մշակոյթի շատ օջախներ: Ժողովուրդի հաւաքական ամբողջութիւնը խաթարուելու, նրա մի մեծ հատուածը հայրենի բնաշխարհից դուրս գտնուելու հանգամանքը պատմական զարգացման ընթացքում մշտապէս ուղեկցել է հայ ժողովուրդին: Արդի ժամանակաշրջանում եւս պատմական ճակատագրի այդ բախտորոշ դրոշմը հայ ժողովուրդը կրում է իր վրայ: Այսօր էլ Մայր հայրենիքից դուրս, աշխարհի տարբեր երկրներում հանգրուան է գտել հայ ժողովուրդի կէսը՝ աւելի քան երեք ու կէս միլիոն հայութիւնը:

Անհրաժեշտ է նկատի առնել, որ ուրիշ երկրներում ապաստան գտած այս կամ այն ժողովուրդի ամէն մի խումբը կամ ամէն մի զանգուած չէ, որ կարող է



պահպանել ազգային յատկանիշները եւ գաղութ ստեղծել: Գաղութ, գաղթավայր կամ գաղթօջախ հասկացութեան տակ պատմագիտութիւնը ընդունում է օտար երկրներում հաստատուած ունէ ժողովուրդի այն զանգուածների գոյութիւնը, որոնք նոր բնակավայրում ստեղծում են իրենց համայնքը, ստանում ինքնավարութիւն, պահպանում մայրենի լեզուն, ազգային սովորութիւնները, դաւանանքը, զիրն ու գրականութիւնը, կամ ունենում նշուած յատկանիշների մի մասը: Ուրիշ խօսքով, երբ այդ զանգուածները օտար միջավայրում պահպանում են ազգային նկարագիրը եւ իրենց յատկանիշներով եւ համապարփակ կեանքով առանձնանում հիւրընկալող ժողովուրդներից:

Հին աշխարհի առաջաւոր երկրներից մէկը՝ Հայաստանն իր պետականութիւնը ստեղծելու շրջանից հարկադրուած էր դիմակայել հզօր հարեւաններին եւ կրել դրանց հետ անխուսափելի բախման եւ յաճախ նաեւ տիրապետութեան ծանրութիւնը: Դեռեւս մեր թուականութիւնից առաջ Հայաստանն ընկաւ հզօր Պարսկաստանի, աւելի ուշ Հռոմէական կայսրութեան գերիշխանութեան տակ:

Միջին դարերը որեւէ զրական հեռանկար չէին բացում հայ ժողովուրդի պատմական ճակատագրում: Արեւելքի եւ Արեւմուտքի սահմանազլխին գտնուող Հայաստանը դեռ վաղ միջնադարում ենթարկուեց արեւելեան քոչուոր ցեղերի ու պետական միաւորների մեծաթիւ ուժերի թալանչիական ասպատակութիւններին: Տակաւին 4-րդ դարում, Հայաստանը բաժանուեց երկու մասի: Արեւելեան Հայաստանն ընկաւ Պարսկաստանի, իսկ Արեւմտեան Հայաստանը՝ Բիւզանդիայի գերիշխանութեան տակ:

Եօթերորդ դարում մի շարք կողոպտիչ արշաւանքներից ու աւերածութիւններից յետոյ Հայաստանն ընկաւ Արաբական Խալիֆայի լծի տակ: Ազատագրական յամառ մաքառումներով հայ ժողովուրդին յաջողուեց վերականգնել իր անկախութիւնը:

Բագրատունեաց հայկական անկախ պետութեան ժամանակ՝ 9-11-րդ դդ. երկիրը խաղաղ շունչ քաշեց, զարգացան տնտեսութեան տարրեր ճիւղերն ու մշակոյթը: Այդ անկախութիւնը, սակայն, չյարատեւեց անգամ երկու հարիւրամեակ: Տասնմէկերորդ դարի կէսերից Հայաստանը ենթարկուեց քոչուոր սելջուկ թուրքերի հրոսակային արշաւանքներին եւ ընկաւ նրանց տիրապետութեան տակ: Հարեւան Վրաստանի հետ դաշնակցած հայ ժողովուրդը կարողացաւ թօթափել սելջուկեան գերիշխանութիւնը: Սակայն շատ չանցած Անդրկովկասի ժողովուրդների, այդ թուում եւ հայերի վրայ կախուեց մոնղոլական աշխարհակալ տիրապետութեան տակ անցնելու վտանգը:

Մոնղոլական տիրապետութեանը փոխարինելու եկաւ թուրք-թաթարական լուծը (15-րդ դդ.), իսկ 16-րդ դարից Հայաստանն երկար դարեր ընկաւ արեւելեան հզօր երկու պետութիւնների՝ Սեֆեան Պարսկաստանի եւ Օսմանեան Թուրքիայի լծի տակ:

19-րդ դարի առաջին տասնամեակներին Հայաստանի արեւելեան, համեմատաբար փոքր մասը, միացաւ Ռուսաստանին, իսկ երկրի մեծագոյն մասը մնաց Թուրքիայի տիրապետութեան տակ: Ռուսաստանի կազմում հայ

ժողովուրդի համար ստեղծուեց քիչ թէ շատ տանելի պայմաններ, իսկ Արեւմտեան Հայաստանում շարունակուեցին հարստահարութիւններն ու ազգային հալածանքները:

Ահա օտարի աւերիչ արշաւանքների եւ դաժան ու անտանելի տիրապետութեան հետեւանքով երկրի ազգաբնակչութիւնը հարկադրուած է եղել թողնել հայրենի երկիրը եւ զանգուածաբար դիմել արտագաղթի կամ ենթարկուել բռնագաղթի: Պարբերաբար կրկնուող այդ գաղթագնացութեան հետեւանքով հայ զանգուածները հանգրուան են գտել աշխարհի տարբեր երկրներում եւ ստեղծել իրենց գաղթօջախները:

Հայրենիքից բաժանուելու, այն թողնելու ծանրութեան հետ արտագաղթողների առաջ ծառանում էր ուր գնալու եւ ինչպէս գնալու դժուարութիւնը: Հասկանալի է, որ նրանք չէին կարող անստոյգ ու անորոշ ուղղութեամբ շարժուել, բախտի քմահաճոյքին յանձնել իրենց ապագան: Գաղթողները թէկուզեւ ընդհանուր ու աղօտ պատկերացում պէտք է ունենային այն երկրի ու պայմանների մասին, ուր կարող էին խարխախ ձգել ու շարունակել իրենց յետագայ կեանքը: Հետեւաբար, գաղթականի ցուպը վերցրած զանգուածները ուղեւորում էին դէպի իրենց ծանօթ վայրերը:

Այդ խնդրում շատ էական է եղել հայ վաճառականութեան դերը: Հայ խոջանները առեւտրական գործունէութեամբ շրջում էին Ասիայի ու Եւրոպայի շատ երկրներ: Նրանք կամայ թէ ակամայ մօտիկից ծանօթանում էին այդ երկրների պայմաններին, ժողովուրդի նիստ ու կացին: Որպէս կանոն հայ վաճառականներն էին ուղենշում եւ յաճախ առաջնորդում գաղթողներին դէպի նրանց համար բարենպաստ վայրերը, այն երկրները, որտեղ հնարաւոր էր հաստատուել, գոյատեւել:

Սխալ կը լինէր հայկական գաղթավայրերի առաջացումը դիտել միմիայն Մայր Հայրենիքից՝ բուն Հայաստանից ուղղակի կատարուող արտագաղթի հետեւանք: Հայկական գաղութների մի ստուար մասը ձեւաւորուել է ոչ թէ Հայաստանից տեղի ունեցած արտահոսքի, այլ որեւէ գաղթավայրից կատարուող տեղաշարժի հետեւանքով: Ռազմաքաղաքական, տնտեսական եւ այլ պատճառներով յաճախ հայկական գաղութներից հայ բնակչութիւնը գաղթում էր իրեն արդէն ծանօթ ուրիշ երկիր: Դրանով հիմք էր դրւում նոր գաղութի:

Այսպէս, օրինակ, Ռուսաստանի տարածքի նշանաւոր հայկական կենտրոններից մէկը՝ Նոր Նախիջեւանը (այժմ Դոնի Ռոստով) հիմնադրուեց Ղրիմի թերակղզու հայաբնակ վայրերից 1779 թ. ռուսական պետութեան կազմակերպած գաղթի շնորհիւ:

Հարկաւ, նորնախիջեւանցիները իրենց համարում էին անեցիների ժառանգներ: Սակայն նրանց նախնիները միջնադարեան Հայաստանի նշանաւոր մայրաքաղաքից դուրս էին եկել հինգ-վեց հարիւր տարի առաջ եւ դարեր շարունակ բնակուել Ղրիմում: Այնպէս որ Մայր Հայրենիքից հեռանալը վաղուց մոռացուել, աւանդական պատմութիւն էր դարձել:

Համանման ձեւով հնդկահայ գաղթօջախները առաջացան ոչ թէ հայրենիքից,



այլ Պարսկաստանից, գերագանցապէս Նոր Զուղայից<sup>1</sup>, Գրիգորիոսի գաղութը՝ Մոլդովայից ու Բեսարաբիայից<sup>2</sup>, Պետերբուրգի հայ համայնքը՝ սուսահայ շրջաններից կատարուած ներհոսքի շնորհիւ եւ այլն:

\* \* \*

Հայկական գաղթավայրերի ամբողջական պատմութիւնը, իր բնոյթով եւ ժամանակագրական առումով բաժանուած է երեք հիմնական դարաշրջանների: Դրանք են՝ միջնադար, նոր եւ ապա նորագոյն ժամանակաշրջաններ:

Նորագոյն շրջանն ընդգրկում է առաջին աշխարհամարտից յետոյ ընկած ժամանակահատուածը: Օսմանեան թուրքիայում հայերի ցեղասպանութեան ու տեղահանման քաղաքականութեան հետեւանքով արեւմտահայերը սփռուեցին աշխարհով մէկ եւ ստեղծուեց հայկական սփիւռքը: Սփիւռքահայութեան ուրոյն պատմութեան խնդիրները դուրս են սոյն յօդուածում արծարծուող հարցերի շրջանակներից:

Միջնադարում, աւելի ստոյգ, ուշ միջնադարում (15-18-րդ դարերում) գոյութիւն ունեցած եւ վերելք ապրած գաղութներն ունեցել են իրենց առանձնատկութիւնները: Այդ գաղութները, որպէս կանոն, ստացել են ինքնավարութիւն, որը մարմնաւորուել է տարբեր երկրներում այլեւայլ անուանումներով (մազիստրատ, ռաթհուազ, հարիւրոց ժողով եւ այլն) հիմնուած տեղական մարմիններում: Հիւրընկալող պետութիւնների հովանաւորող քաղաքականութեան շնորհիւ, որն, անշուշտ պայմանաւորուած է եղել տուեալ երկրի առեւտրատնտեսական շահերով, այդ գաղութներում ղիւրին կերպով պահպանուել էր հայ զանգուածի ազգային նկարագիրը: Դրանց շփումները շրջապատի բնակչութեան հետ շատ թոյլ էին: Հայ համայնքն ապրում էր միջնադարին յատուկ ինքնամփոփ ու ներփակ կեանքով: Այդ հանգամանքը մեծապէս նպաստում էր գաղթավայրերի հայ բնակչութեան ազգային աւանդները, լեզուն, գիրն ու գրականութիւնը պահպանելուն:

Այդ գաղթավայրերի տնտեսական կեանքի առանցքն էր կազմում առեւտուրն ու արհեստագործութիւնը: Գիւղատնտեսական թեքում ունեցող վայրերում, որոնց տեսակարար կշիռը մեծ չէր, հիմնական զբաղմունքը դաշտավարութիւնն ու այգեգործութիւնն էր: Միջնադարում գոյատեւած եւ հայ ժողովուրդի պատմութեան մէջ մնայուն հետք թողած նշանաւոր այդ կենտրոններից էին Նոր Զուղայի, Հնդկաստանի, Լեհաստանի եւ Ուկրաինայի, Ղրիմի եւ ուրիշ գաղթավայրեր: Հայկական այդ օջախների վերելքի շրջանը եղել է 16-18-րդ դդ. մասամբ 19-րդ դարի առաջին տասնամեակները:

Հարկաւ 18-րդ դ. վերջերին կամ 19-րդ դարի առաջին տասնամեակներին, որպէս կանոն, վերանում են այդ գաղութների արտօնութիւնները: Նրանց մի մասը աստիճանաբար կորցնում է ազգային նկարագիրը, բռնում մարման ուղի:

1. Հայ ժողովուրդի պատմութիւն, Կ-4-րդ, Սրբիւմի, 1972, էջ 337-348  
2. Ж Ананян армянская колония гргориополб. Ереван 1969

Այդ երեւոյթը տեղի է ունենում գլխաւորապէս հիւրընկալող կամ տիրապետող երկրներում տարուող քաղաքականութեան փոփոխութեան հետեւանքով:

Հիմնական այդ տեղաշարժերը կատարուել էին միջնադարից դէպի նոր յարաբերութիւններին անցնելու յեղաբեկումների հետեւանքով:

Նոր շրջանում, տնտեսական կեանքում կատարուող յեղաշրջումները՝ երկաթուղիների եւ առհասարակ հաղորդակցութեան միջոցների առաջադիմութեան շնորհիւ ուժեղանում է բնակչութեան երթեւեկը: Զարգանում է արդիւնաբերութիւնը, գիւղատնտեսութիւնը, վերանում են գաղութների արտօնութիւնները եւ նրանց ինքնաբաւ կեանքը: Թուում է, թէ գաղութահայ զանգուածները կուլ կը գնան, կը ձուլուեն շրջապատի բնակչութեան մէջ: Յիրաւի մի շարք հայկական գաղթօջախներ դադարում են գոյութիւն ունենալ:

Սակայն ոչ սակաւ թուով հայկական կենտրոններ, ինչպէս ասենք, Ռուսաստանի (Աստրախան, Ղզլար, Մոզդուկ, Նոր Նախիջեւան, Մոսկուա, Պետերբուրգ), Պուլկարիայի, Պարսկաստանի, Սիրիայի, Կոստանդնուպոլսի եւ ուրիշ գաղութներ շարունակում են գոյատեւել:

Ճիշդ է վերանում են հնից եկող շատ գաղթավայրերի առանձնաշնորհումները, սակայն դրա փոխարէն ստեղծուել են ազգային բարեգործական այնպիսի հաստատութիւններ, որոնք նոր պայմաններում, ինչ որ ձեւով գալիս էին փոխարինելու գաղթավայրերի նախկին ինքնավար մարմիններին: Դրանից զատ կեանքի նոր պահանջներին համապատասխան հիմնուել են նոր կրթօջախներ, տպարաններ, թատրոններ, հրատարակուել են զրքեր, թերթեր: Դրանցում արծարծուել էին համազգային խնդիրներ, որոնք բերում էին նաեւ, նոր յարաբերութիւններին յատուկ ազգային զարթօնք: Զարգանում էին ազգային գրականութիւնն ու արուեստը: Ուժեղանում էին կապերը Մայր հայրենիքի հետ: Այդ ամէնը, չնայած նոր պայմաններում բնակչութեան ձուլման վտանգի որոշակի աճին, արգասաւորում էին հայ համայնքի ազգային կեանքը, հետեւաբար, նաեւ ստարում նրանց գոյատեւմանը:

Մեր ասածն առարկայական դարձնելու համար կրկին դիմենք Նոր Նախիջեւանի հայկական գաղութի օրինակին: Ռուսաստանը թեւակոխելով պուրժուական յարաբերութիւնների ժամանակաշրջանը, բնականաբար, ձեռնարկում էր վերակառուցելու նաեւ կայսրութեան վարչաիրաւական համակարգը: Ամբողջ երկրում մտցուել էր կառավարման համընդհանուր ձեւեր: Դա երկրի պուրժուական յարաբերութիւնների պահանջներից բխող ու դրան ընդառաջող ձեռնարկումներ էին: Այդ վերափոխումները իրենց ոլորտի մէջ են առնում տարբեր ազգութիւնների զանգուածների կողմից այլեւայլ ժամանակներում հիմնած գաղթավայրերը: 19-րդ դարի 40-ական թուականներին վերացուեցին ռուսահայ գաղութների՝ Ղզլարի, Մոզդուկի եւ ապա Նոր Նախիջեւանի արտօնութիւնները: Վերջինս հաւասարուեց կայսրութեան միւս բնակավայրերին: Թուում էր, թէ Դոնի հայ զանգուածը շուտով կարող է կորցնել իր ազգային նկարագիրը եւ տարալուծուել շրջապատի ռուսական միջավայրում: Սակայն կեանքի նոր պահանջների թելադրանքով, շատ չանցած



ստեղծուեցին ազգային բարեգործական այնպիսի հաստատություններ, որոնք եկան փոխարինելու Նոր Նախիջևեանի ինքնավարությունը մարմնավորող հայկական մագիստրատին եւ միւս մարմիններին:

1866 թ. հիմնուեց Նոր Նախիջևեանի «Բարեգործական ընկերությունը»: Յաջորդ տարում սկիզբ առաւ «Մարդասիրական ընկերությունը» մի փոքր աւելի ուշ՝ «Հայահայեաց խնամատար ընկերությունը», «Եկեղեցական հոգաբարձությունը» եւ այլն<sup>3</sup>:

Այդ շրջանում բացուեցին նոր, ժամանակի պահանջները բաւարարող թեմական, արհեստավարական, գոգոյեան դպրոցները: Հիմնուեցին Կոնստանտնուպոլսի Կոնստանտինոպոլսի հայկական մամուլը յանձինս «Նոր Կեանք», «Մեր Զայնը», «Լոյս», «Գրիչ», «Գաղութ» թերթերի: Զարգանում է գրականությունը, կերպարուեստը, արուեստի միւս ճիւղերը: Այդ ամէնը մեծապէս նպաստում էին Դոնի հայութեան ազգային ոգին ու դիմագիծը պահպանելուն: Նոյն ձեւով վերափոխուեցին նաեւ առանձնաշնորհումներից զրկուած եւ պատմութեան նոր շրջանը թեւակոխած ռուսահայ միւս համայնքները:

Մէջ բերենք պուրժուական յարաբերությունների հաստատման ժամանակաշրջանում նախկին արտօնություններից զրկուելու, բայց գաղութի գոյությունը շարունակուելու ուրիշ օրինակ:

Տրանսիլվանիայի հայերը 18-րդ դարի 80-ական թուականներին պետութեան կողմից մեծ արտօնություններ ստացան: Նրա գերազանցապէս հայերով բնակեցուած երկու քաղաքները՝ Գեոլան (Արմէնուպոլիս) եւ Եղիսարեթուպոլիսը թագաւորական քաղաքների իրաւասութիւն ստացան: Դրանք ինքնավար հայկական գաղութներ էին եւ ունէին իրենց առանձին քաղաքային վարչութիւնները: Այդ քաղաքների ազգային ինքնավարությունը իրականանում էր գործադիր իշխանութեան տեղական մարմին հանդիսացող, տնտեսական եւ իրաւական իրաւասութիւններով օժտուած քաղաքային վարչությունը՝ «հարիւրոց ժողովը»: Օգտուելով ստեղծուած տնտեսական եւ իրաւաքաղաքական նպաստաւոր պայմաններից հունգարահայերը լայն գործունէություն ծաւալեցին, ինչպէս առետրի ու արդիւնագործութեան, այնպէս էլ գիւղատնտեսութեան ասպարէզում:

19-րդ դ. 40-ական թուականների սկզբներին վերացուեցին նրանց առանձնաշնորհումները, սակայն հայ համայնքը չվերացաւ: Հունգարահայեր ակտիւ մասնակցութիւն ունեցան 1848-1849 թթ. ազատագրական, յեղափոխական շարժումներին, ձգտելով վերականգնել նաեւ հայերի նախկին իրավիճակը: Դարի երկրորդ կէսին զարգացաւ գրականությունը, ազգային լուսաւորական բազմաթիւ հաստատություններ հիմնուեցին: 1887 թ. սկսուեց հրատարակուել «Արմենիա» նշանաւոր հանդէսը, որը երկու տասնամեակ բեղմնաւոր կեանք ունեցաւ:<sup>4</sup> Ինչպէս Ռուսաստանում եւ ուրիշ երկրներում

3. Տես Վ. Բարխուդարեան, Նոր Նախիջևեանի հայկական գաղութի պատմութիւն, Երեւան, 1985  
4. Տես Հայ-հունգարական պատմական եւ մշակութային կապերի պատմութիւնից (յօդուածների ժողովածու), Երեւան, 1983 թ.

(Պուլկարիա, Ռումինիա, Սիրիա, Եգիպտոս եւ այլն) այստեղ եւս պատմութեան նոր դարաշրջանում հայկական զանգուածը պահպանեց իր գոյությունը, իր ազգային կեանքը:

Այսպիսով, հայկական գաղթավայրերի մի մասը գոյատեւել է միջնադարում, միւս մասը՝ պատմութեան նոր ժամանակներում: Մի խումբ հայկական գաղութներ առաւել երկարակեաց են եղել, միջին դարերից հասել են մինչեւ 20-րդ դար: Հայկական այդ համայնքներից շատերը, որոնք ընդունեցին Մեծ Եղեռնի փախստականներին, այդ համալրման շնորհիւ աշխոյժ ապրեցին: Սկսուեց դրանց պատմութեան նորագոյն շրջանը:



Օտար երկնակամարների տակ ապաստան գտած հայկական զանգուածները միանգամայն առանձնայատուկ ուղի են անցել: Տարբեր երկրներում հաստատուելու, հետեւաբար եւ տարբեր ժողովուրդների այլազան պայմաններում գտնուելու հանգամանքն ինքնին պայմանաւորում էին առանձին գաղթավայրերի շեշտուած առանձնայատկութիւնները: Ինչպէս արդէն նկատեցինք, այդ գաղթօջախների առաջացումն ու վերելքը տեղի է ունեցել նաեւ պատմական տարբեր դարաշրջաններում: Նշանակում է տուեալ պատմափուլի առաջադրած խնդիրների ոգուն համապատասխան փոփոխուել են նաեւ գաղթավայրերի տնտեսական, հասարակական եւ մշակութային կեանքը: Ուրիշ խօսքով, ակնյայտ է, որ հայկական գաղութները, իրարից տարանջատուած, միանգամայն տարբեր պատմութիւն են ունեցել:

Ընդգծուած այդ տարբերությունների հետ մէկտեղ գաղութները մի շատ էական, առանցքային նշանակութիւն ունեցող հարցում նման էին: Նրանք կիսում էին նոյն ճակատագիրը: Այդ հայեցակէտով բոլոր գաղութները մէկը միւսին նման են:

Գաղթավայրերի զանգուածները, մանաւանդ նրանց առաջին սերունդները իրենց մէջ կրում էին հայրենիքի գաղափարը, մայր ժողովուրդի աւանդներն ու մշակոյթը, բայց ապրում ու գործում էին օտար երկրում: Ահա այդ երկուութիւնն առաւել կամ նուազ չափով յատուկ է եղել գաղթավայրերի բնակչութեանը եւ եղել նրա մշտական ուղեկիցը: Այդ պատճառով, բոլոր գաղութների համար ընդհանուրը եղել է այն, որ նրանք լծորդել են Մայր հայրենիքը իրենց ապաստան տուած երկրի, նոր հայրենիքի հետ: Դա է գաղթավայրերի պատմութեան բնորոշ կողմը, որը եւ իր հետ բերում է բազմաթիւ թարմ եւ առանձնայատուկ երանգներ: Իւրայատուկ այդ երանգներն են, որ հարստացնում եւ ամբողջացնում են հայ ժողովուրդի պատմութիւնը:

Արդ, ի՞նչ ձեւերով ու եղանակներով էին գաղութները իրականացնում երկակի այդ կապերը եւ ի՞նչպիսի նշանակութիւն են ունեցել դրանք:

Նոր երկիր կամ նոր բնակավայր հասնելուն պէս գաղթող նորաբնակների առաջին ու զլխաւոր մտահոգութիւն է դառնում գոյությունը պահպանելու կամ օրուայ ապրուստը հոգալու հարցը: Թերեւս դա է հիմնական պատճառը, որ



նրանք գերազանցապես զբաղում են տնտեսութեան այնպիսի ճիւղերով, որոնք կարող են անմիջապէս արդիւնք տալ, հոգալ իրենց առօրեայ ապրուստը: Գիւղատնտեսութիւնն անմիջապէս չէր կարող կերակրել, դրա արդիւնքը ստացւում էր ուշ, ամիսների, տարուայ ընթացքում: Հաւանաբար դրանով է պայմանաւորուած այն հանգամանքը, որ նոր բնակավայրում արտագաղթողների առաջին զբաղմունքը դառնում է առեւտուրն ու արհեստագործութիւնը: Յետագայում, տնտեսութեան այդ ճիւղերը, նպաստաւոր պայմաններում, դառնում են հիմնականը: Եւ հայերը օտարների աչքում, յաճախ պատկերւում են որպէս զուտ առեւտրական թեքում ունեցող ժողովուրդներ:

Գաղթողները ձգտել են այնպիսի երկրում հաստատուել, ուր կարող էին արդիւնաւէտ գործունէութիւն ծաւալել:

Քիչ չեն նաեւ այն դէպքերը, երբ պետական իշխանութիւններն իրենք են հրահրում օտար ժողովուրդների եւ պայմաններ ստեղծում նրանց համար իրենց երկրի տնտեսութիւնը կամ դրա այս կամ այն ճիւղը զարգացնելու նպատակով: Յիշատակենք մեր ասածը հաւաստող մի քանի բնորոշ փաստեր:

Ինչպէս յայտնի է, 16-17-րդ դարերում Հայաստանը դարձել էր թուրք-պարսկական երկարատեւ պատերազմների թատերաբեմ: Սեֆեան Պարսկաստանի նշանաւոր շահ Աբրահամ-ն 1603 թ. պատերազմ սկսեց Թուրքիայի դէմ: Վերջինիս ճնշման տակ նահանջելով պարսկական շահը բռնի տեղահանում էր հայ բնակչութեանը: 1604-1605 թ. այդ նշանաւոր բռնագաղթի հետեւանքով հարիւր հազարաւոր հայեր տեղափոխուեցին Իրան: Աբրահամ-ն ձգտում էր հայերի միջոցով շէնացնել երկիրը, զարկ տալ արհեստներին, ներքին ու արտաքին առեւտրին: Ջուղայի հայերը հաստատուեցին մայրաքաղաք Սպահանի մօտ նրանց յատկացուած ընդարձակ տարածքում, ուր հիմնեցին Նոր Ջուղա քաղաքը:

Նորարնակ հայերի միջոցով երկրի տնտեսութիւնը բարեկարգելու իր մտադրութիւնները իրագործելու համար շահը նրանց տուեց արտոնութիւններ եւ լայն իրաւունքներ: Հարկեր վճարելու, կեանքի եւ գոյքի ապահովութեան, ազատ առեւտուր անելու հարցերում նրանք լայն իրաւունքներ ստացան:

Նոր Ջուղայի գաղութին վերապահուեց նաեւ ինքնավարութիւն ունենալու արտոնութիւն: Առանց պարսկական իշխանութիւնների միջամտութեան հայ համայնքն ունէր քաղաքապետ (քալանթար) ընտրելու իրաւունք: Քալանթարը կոչուած էր տնօրինելու գաղութի ներքին գործերը եւ մարմնաւորում էր դրա ինքնավարութիւնը: Նա իրականացնում էր պարսկական իշխանութիւնների հետ յարաբերութիւնները, հանդիսանում շահի խորհրդականը: Դատական գործերը վարում էր քաղաքապետի տեղակալը՝ քեդխուդան: Շահ Աբրահամ հանդուրժողական վերաբերմունք դրսեւորեց նաեւ դաւանանքի հարցում: Նա ոչ միայն չէր արգելում՝ հայկական եկեղեցիներ ու վանքեր կառուցելը, այլեւ ինքն էր նպաստում դրան: Ստեղծւում է անգամ Իրանահայ Հոգեւոր Թեմ:<sup>5</sup>

5. Հայ ժողովրդի պատմութիւն, հ.4-րդ, Երեւան, 1972, էջ 325-327

Օգտուելով պետութեան ստեղծած բարենպաստ պայմաններից, Ջուղայի վաճառականները առեւտրական լայն գործունէութիւն ծաւալեցին: Նրանք սկսեցին իրենց ձեռքը վերցնել մետաքսի՝ միջազգային առեւտրի այդ անփոխարինելի հումքի վաճառքը: Շուտով մրցակցութիւն է սկսւում ջուղայեցիների եւ Արեւելահնդկական անգլիական ընկերութեան միջեւ՝ իրանական մետաքսի արտահանման մենաշնորհը ձեռք բերելու համար: Այդ պայքարում յաղթող են դուրս գալիս հայ վաճառականները, որոնց յաջողւում է շեղեալ յայտարարել տալ 1617 թ. անգլիացիների հետ կնքած առեւտրական պայմանագիրը:<sup>6</sup> Հայ վաճառականները Միջերկրական ծովով կապւում էին Ֆրանսիայի, Հոլանդիայի, Իսպանիայի, Փորթուգալիայի, Իտալական քաղաքների (Վենետիկ, Ճենովա, Լիվորնո), Սկանդինաւեան երկրների հետ, ուր նրանք ունէին մշտական առեւտրական ներկայացուցիչներ:

Ջուղայի վաճառականները 17-րդ դարի կէսերից սկսում են առեւտրական ընկերութիւններ կազմակերպել: «Ջուղայի հայ առեւտրական ընկերութիւնը» առեւտրական պայմանագրեր էր կնքում ոչ միայն օտարերկրեայ համանման ընկերութիւնների, այլ անգամ առանձին պետութիւնների հետ: Նշանաւոր այդ ընկերութիւնը 1667 եւ 1673 թթ. առեւտրական պայմանագիր կնքեց Ռուսաստանի հետ, որով ազատ առեւտրի իրաւունք էր ստանում Ռուսաստանում եւ Ռուսաստանի վրայով եւրոպական երկրների հետ:<sup>7</sup>

Այսպիսով, հայերին հովանաւորելու քաղաքականութիւնը պայմանաւորուած էր երկրի, տուեալ պարագայում Պարսկաստանի առեւտրատնտեսական կեանքի բարելաւման, դրա առաջադիմութեան հետ, որին իրենց նպաստն էին բերում հայերը:

Տասնութերորդ դարում պետութեան շահերից բխող նոյնպիսի քաղաքականութիւն էր տարւում նաեւ Ռուսաստանում: Պետրոս Ա. Կայսրը 1724 թ. Ռուսաստանում բնակութիւն հաստատող հայերին տնտեսական եւ իրաւական մի շարք արտոնութիւններ տուեց: Օգտուելով կայսերական հրովարտակներով տրուած առանձնաշնորհումներից, հայերը թողնում էին Մայր հայրենիքը եւ առեւտրական ուղիներով տեղափոխուում են իրենց ծանօթ ու սահմանամօտ Հիւսիսային Կովկասի տարբեր վայրեր: Այդ եղանակով ձեւաւորւում են Ղզլարի, Մոզդուկի, Դերբենդի, աւելի ուշ Եկատերինոզարի, Գրոզնու, Պիատիգորսկի եւ միւս հայկական համայնքները:

Պետրոս Ա.-ի քաղաքականութիւնը որդեգրած Եկատերինա Բ. կայսրուհին 1763 եւ 1764 թթ. յատուկ հրամանագրեր էր արձակել, որով բաւականաչափ մեծ արտոնութիւններ էր շնորհւում հարաւում բնակուող օտարերկրացիներին: Օգտուելով պետութեան ընձեռած լայն հնարաւորութիւններից գաղթեցին եւ հարաւում բնակուեցին տարբեր ազգերի մեծ ու փոքր զանգուածներ, այդ թւում եւ հայեր:

6. Նոյն տեղում, էջ 329  
 7. Տես Վ. Բայրուրդեան, Նոր Ջուղայի հայկական գաղութը 17-րդ դարում Երեւան, 1969 (ռուսերէն), Ծ. Խաչիկեան, Նոր Ջուղայի հայ վաճառականութիւնը եւ նրա առեւտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ, 17-18-րդ դարերում, Երեւան, 1988



Ղրիմի թերակղզուց գաղթեցուած հայերին կայսրուհու յատուկ հրովարտակով (1779 թ. Նոյեմբերի 14-ին) իրաւա-տնտեսական մեծ արտօնութիւններ շնորհուեց: Ռուսական պետութիւնը օտարերկրեայ զանգուածներին արտօնեալ պայմաններով հարաւում բնակեցնելով յատուկ նպատակ էր հետապնդում: Նա դրանով իրականացնում էր հարաւի անմարդարնակ տափաստանները բնակեցնելու, տնտեսապէս իւրացնելու եւ Սեւ Մով դուրս գալու իր վաղեմի ձգտումները: Ղրիմահայերը հաստատուեցին Դոն գետի ափին, հիմնեցին Նոր Նախիջեան քաղաքը եւ հինգ հայկական գիւղեր: Գաղթողները Դոնի տափաստաններում հողային ընդարձակ տարածութիւններ ստացան, տաս տարով ազատուեցին բոլոր հարկերից: Նրանք ազատ տնտեսական գործունէութիւն ծաւալելու, դաւանանքի ազատութիւն, ազգային իրաւական նորմերով առաջնորդուելու իրաւունք եւ այլ առանձնաշնորհումներ ստացան:<sup>8</sup>

Հիւսիսային Կովկասի, Նոր Նախիջեանի, առհասարակ հարաւային Ռուսաստանի հայկական գաղութները օգտուելով կառավարութեան ընձեռած բարենպաստ պայմաններից առեւտրատնտեսական ասպարէզում մեծ յաջողութիւնների հասան: Հայկական այդ գաղութներում լայն զարգացում ապրեցին տնտեսութեան տարբեր ճիւղերը՝ արհեստներն ու արդիւնաբերութիւնը, գիւղատնտեսութիւնը եւ մանաւանդ ներքին ու արտաքին առեւտուրը: Նրանք նկատելի դեր կատարեցին հարաւային Ռուսաստանի տնտեսական իւրացման ու առաջադիմութեան ասպարէզում:

Համանման երեւոյթ էր կատարուում նաեւ Արեւելեան Եւրոպայի երկրների հայկական զանգուածների կեանքում:

Արեւմտեան Ուրբախայի եւ Լեհաստանի հայկական համայնքները ինքնավարութիւն եւ տնտեսական ակտիւ գործունէութիւն ծաւալելու արտօնութիւններ ստացան տակաւին 14-րդ դարում: Այդ ասպարէզում նրանք բաւականաչափ մեծ առաջդիմութեան էին հասել: Բաւական է նշել, որ 16-րդ դ. վերջին հայ վաճառականները այնպիսի ընդգրկուն գործունէութիւն էին ծաւալել, որ Լվովի լեհ առեւտրականները բողոքում էին թագաւորին, թէ հայերը սպառնում են ամբողջովին տիրել քաղաքի շուկային: Հաւանաբար, նրանց անհանգստութիւնն առանց հիմքի չէր, Լվովի շուկայում եղած 60 խանութներից 44-ը պատկանում էին հայերին:<sup>9</sup>

Նոյն իրողութիւնը կարելի է դիտել նաեւ Մոլդովայի, Տրանսիլվանիայի եւ այլ գաղութների օրինակով:

Յիշատակուած փաստերից պարզ է դառնում, որ մասնաւորապէս ուշ միջանդարում հայկական գաղթավայրերը նկատելի ներդրում են կատարում իրենց հիւրընկալող երկրի առեւտրատնտեսական կեանքում:

Պատմական այդ փուլում, երբ դեռեւս չկար գործարանային արտադրութիւն, գիւղատնտեսութիւնը միայն սպառողական պահանջներ էր

8. Տես Վ. Բարխուդարեան, Նոր Նախիջեանի հայկական գաղութի պատմութիւն, Երեւան, 1967, էջ 68-83

9. Տես Հայ ժողովրդի պատմութիւն, Կ-4-րդ, էջ 369

բաւարարում, իսկ պարզունակ հիմքի վրայ խարսխուած տնտեսական կեանքի զարգացումը մեծապէս պայմանաւորուած էր արհեստների եւ յատկապէս առեւտրի ծաւալումով: Դա էր պատճառը, որ այդ պետութիւնները հովանաւորող քաղաքականութիւն էին տանում գաղութների նկատմամբ:

Տնտեսական գործունէութիւնից բացի հայկական գաղութները, մանաւանդ նրանցից խոշորները, մասնակցել եւ որոշակի ներդրում են կատարել իրենց ապաստան տուած երկրի հասարակական-քաղաքական կեանքում, մշակոյթի ասպարէզում:

Գաղթավայրերի հայ զանգուածները, իրենց համեստ հնարաւորութիւններով մշտապէս ծառայել են երկրի քաղաքական խնդիրներին, արտաքին վտանգների ժամանակ սատար կանգնել նրա պաշտպանութեանը:

16-17-րդ դարերում հզօրութեան հասած Թուրքիան իր նուաճողական քաղաքականութեամբ նկատելի յաջողութիւնների էր հասել Եւրոպայում: Արեւելեան Եւրոպայի երկրները աստիճանաբար եկան այն համոզման, որ Օսմանեան կայսրութեան դէմ առանձին-առանձին պայքարը յաջողութեան չի կարող յանգեցնել: Առաջացաւ սուլթանական բանակների արշաւանքների դէմ միասնական ճակատ կազմելու անհրաժեշտութիւնը: Արեւելեան եւ կենտրոնական Եւրոպայի երկրների շատ հայ գործիչներ գործուն մասնակցութիւն ունեցան հակաթուրքական կոալիցիա ստեղծելու գործում: Դրանցից էին Պետրու Վարդիկը, Եոհան Քաջը՝ Մոլդովայում, Պետրու Գրիգորովիչը՝ Վալաքիայում, Կոստանդին Դէ Սիրին, Սեֆեր Մուրատովիչը, Բոզդան Գուրդին՝ Լեհաստանում, Պետրոս Ապետիկը, Գարրիէլ Շապինգարիսարեցին՝ Հունգարիայում եւ ուրիշներ:<sup>10</sup>

Գաղթավայրերի հայ բնակչութիւնը չի բաւարարուել իր ծառայութիւնները սոսկ դիւանագիտութեան, քաղաքականութեան ոլորտում մատուցելով: Նա երկրին սպառնացող վտանգների ժամանակ զէնքը ձեռքին կանգնել է իրեն ապաստան տուած ժողովուրդի կողքին եւ նրա հետ ուս-ուսի տուած, անձնուիրաբար պայքարել թշնամիների դէմ: Այսպէս, լեհական աշխարհագորում գոյութիւն ունէր հայկական առանձին ազգային զօրամաս: 1683 թ. Սեպտեմբերի 12-ին Վիեննայի վճռական ճակատամարտում, որն աւարտուեց Թուրքերի պարտութեամբ, Եան Սորեսկու լեհական բանակի շարքերում կրում էին հինգ հազար հայեր:<sup>11</sup>

1760-ական թուականներին հնդկահայերը ակտիւ մասնակցում էին Բենգալիայում անգլիացիների դէմ հնդիկ ժողովուրդի ազատագրական պայքարին: Բենգալական զօրքի մի զգալի մասը կազմուած էր հայերից: Շատ զօրաջոկատ-

10. Տես 16-18-րդ դարերի Հայ ազատագրական շարժումները եւ հայ գաղթավայրերը (յօդուածների ժողովածու), Երեւան, 1989, Ա. Քոյանջեան-Հայերի մասնակցութիւնը հակաթուրքական լիգայի ստեղծմանը եւ Հունգարիայի ազատագրման գործում (17-րդ դար) (Հայ-հունգարական պատմական եւ մշակութային կապերի պատմութիւնից յօդուածների ժողովածու), Երեւան, 1983, Հայ ժողովրդի պատմութիւն Կ-4, էջ 359-403

11. Հայ ժողովրդի պատմութիւն, Կ-4, էջ 373



ներ գլխաւորում էին հայերը, իսկ բանակի ընդհանուր հրամանատարն էր հայազգի Գրիգոր Յարութիւնեանը (Գորգին խանը): Հայ զինագործները մեծ ծառայութիւն էին մատուցում նաեւ զէնքեր պատրաստելով: Հայերը հնդիկների հետ հաւասար, քաջաբար մասնակցեցին մի քանի տարի տեւող այդ կռիւններին: Համանման փաստեր կարելի է բերել նաեւ ուրիշ երկրների պատմութիւնից:

Հայկական զանգուածների նամնօրինակ նուիրուածութիւնը նկատի ունէր հունգար պատմաբան Եա. Էլեքը, երբ գրում էր. «Մաջար ազգը հայերի մէջ հաւատարիմ մի դաշնակից եւ զոհաբերուող մի եղբայր գտաւ, որը մեր երջնակութեան օրերին մեզ է փարւում եւ դժբախտութեան օրերին մեզ չի լքում, որի վրայ ամէն պարագայի վստահ կարող ենք լինել»:<sup>12</sup>

Հիւրընկալող երկրի մի փոքր մասնիկը լինելով եւ նրա խնդիրներին ըստ կարելոյն ծառայելու հետ մէկտեղ հայկական գաղթավայրերը բազմաթիւ թելերով կապուած են եղել նաեւ Մայր հայրենիքի հետ: Նրանք, որպէս կանոն, տեղեակ են եղել Հայաստանի վիճակին, այնտեղ կատարուող իրադարձութիւններին եւ մշտապէս ջանացել են նիւթական ու բարոյական օգնութիւն ցոյց տալ: Նրանք նախանձախնդիր են եղել հարազատ ժողովուրդի պատմական ճակատագրի հարցում:

Մօտակայ, անգամ հեռաւոր երկրներում հանգրուանած հայ զանգուածները կենդանի կապեր են ունեցել Հայաստանի եւ հայաբնակ շրջանների հետ: Այդ կապերը իրականանում էին բազում ձեւերով:

Մայր հայրենիքի հետ շփումներն առաջին հերթին իրականացւում էր եկեղեցու միջոցով: Հայ եկեղեցու դերը, նրա ընդգրկուն, համազգային գործունէութիւնը առաւել նշանակալից էր դառնում Հայաստանում պետականութեան բացակայութեան պայմաններում: Էջմիածինը իր թեմերի ու հոգեւոր ներկայացուցիչների միջոցով կապուած էր գաղթաշխարհի հետ: Մայր Աթոռի կապերը գաղթաշխարհի հետ արտայայտւում էր կրօնական ծիսակատարութիւնները կատարելու, արժանայիշատակ անցքերի առիթով կաթողիկոսական կոնդակներն ու շրջաբերականներին արձագանգելու, եկեղացական հասոյթները հաւաքելու, ուխտագնացութեան եւ այլ ձեւերով: Յիրաւի դժուար է գերազնահատել Մայր Աթոռի դերը աշխարհասփիւռ գաղթօջախներում եկեղեցիներ հիմնելու, դպրոցներ բացելու եւ առհասարակ ազգային աւանդները, գիրն ու գրականութիւնը պահպանելու ասպարէզում:

Հայրենի երկրի հետ կապուելու կարեւոր միջոցներից էր առեւտուրը: Գաղթավայրերի վաճառականները նշանակալի դեր էին կատարում Արեւելքի եւ Արեւմուտքի, Ռուսաստանի եւ Եւրոպական երկրների հետ կատարուող միջազգային առեւտրում: Նրանք առեւտրական գործունէութեամբ շփուում էին Անդրկովկասի եւ մերձակայ ու հեռաւոր երկրների հայութեան հետ: Այդ երթեւեկի միջոցով նրանք իրազեկ էին դառնում Հայաստանում կատարուող իրադարձութիւններին:

12. Նոյն տեղում, էջ 392

Հասարակական-քաղաքական դէմքերի, գրականութեան եւ արուեստի գործիչների փոխայցելութիւնները, թատերական նշանաւոր խմբերի հիւրախաղերը, որոնք պարբերաբար կրկնուում էին նոր ժամանակների պատմափուլում, Հայաստանի հետ կենդանի կապեր պահպանելու լաւագոյն միջոցներից էին:

Յատկապէս 19-20-րդ դարերում կենդանի շփումներին գումարւում են հոգեւոր կապերի նոր թափով աշխուժացումն ու ծաւալումը: Այս ասպարէզում ծանրակշիռ է մանաւանդ պարբերական մամուլի դերը: Թիֆլիսում, Կոստանդնուպոլսում եւ հայկական նշանաւոր այլ կենտրոններում տպագրուող հայկական պարբերականները պարբերաբար հայ գաղթավայրերին վերաբերող նիւթեր էին զետեղում: Հայաստանի ու հայ իրականութեան կարեւոր իրադարձութիւններին անդրադարձող այդ թերթերը, որպէս կանոն, տարածւում էին նաեւ գաղթաշխարհում: Միւս կողմից հայկական համայնքների տեղական, քիչ թէ շատ հետաքրքրութիւն ներկայացնող թերթերը հասնում էին Հայաստան կամ հայաշատ վայրեր:

Աւելորդ չէ նկատել, որ Հայաստանի ու հայ իրականութեան հետ գաղթավայրերի, վերը նշուած, բազմաբնոյթ կապերը մեծապէս արգասաւորել եւ կենսունակ են դարձրել օտար երկրներում ծուարած հայ զանգուածների ազգային կեանքը:

Ահա տարբեր եղանակներով ու բազմազան ձեւերով՝ կենդանի կապերի եւ լրոյ հասնող տեղեկութիւնների միջոցով հայկական գաղթաշխարհը իրազեկ էր դառնում հայրենիքի իրավիճակին: Գաղթավայրերի հայ զանգուածները անտարբեր չեն եղել հայրենիքի նկատմամբ, ընդհակառակն հնարաւոր բոլոր միջոցներով ու եղանակներով նրանք ջանացել են ուղղակի կամ անուղղակի իրենց ծառայութիւնը մատուցել հայրենիքին:

Բնական աղէտների, պատերազմական արհաւիրքների եւ այլ անհրաժեշտ դէպքերում բնակչութեանը օգնելու, ինչպէս նաեւ ազգային հասարակական ձեռնարկումների համար միջոցներ հայթայթելու եւ համանման բազում կարիքների պարագայում գաղութներն անմիջապէս օգնութեան ձեռք են մեկնել հայրենիքին: Այդ ուղղակի օգնութիւնից առաւել ընդգրկուն ու կարեւոր է եղել հոգեւոր, մշակութային փոխյարաբերութիւնները:

Գաղթաշխարհում պահպանուել է հայոց հոգեւոր կեանքի, մշակոյթի աւանդները: Ամէն մի գաղութում հայկական եկեղեցին, դպրոցը, տպարանը, թերթը, բարեգործական եւ լուսաւորական հաստատութիւնները ազգային մթնոլորտն ու աւանդները պահպանող հիմնական լծակներն են եղել: Այնտեղ գրուել ու արտագրուել են ձեռագրեր, ստեղծուել մատենագիտական պատմագիտական, գեղարուեստան, արուեստի տարբեր ճիւղերին վերաբերող գործեր: Այդ ամէնի շնորհիւ գաղութներում ոչ միայն պահպանուում է, այլեւ նկատելի չափով զարգացում է ապրում հայկական մշակոյթը: Այնտեղ ստեղծուում են նաեւ այնպիսի արժէքներ, որոնք դուրս են գալիս գուտ տեղական նշանակութեան սահմաններից եւ համազգային հնչեղութիւն են ստանում: Այդ տեսակէտից խիստ յատկանշական է հայ տպագրութեան սկզբնաւորման եւ դրա



յետագայ զարգացման առաջին փուլի՝ միջնադարեան կամ հնատիպ գրքի շրջանի պատմությունը:

Ինչպէս յայտնի է հայոց մշակոյթի կարեւոր նուաճումներից մէկը՝ հայկական տպագրութիւնը սկզբնաւորուել է հայրենիքից դուրս՝ հայկական հեռաւոր համայնքում: 1512 թ. Վենետիկում Յակոբ Մեղապարտը ղնում է հայ տպագրութեան հիմքը, տպագրում առաջին գիրքը «Ուրբաթագիրքը»: Յաջորդ տարում հրատարակում է չորս հայերէն գրքեր: Կէս դար անց՝ 1565 թ. նշանաւոր հրատարակիչ Աբգար դպիր Թոխատեցին այնտեղ հրատարակում է եւս երեք գիրք: Հայկական տպագրութիւն է սկզբնաւորուում Իտալիայի ուրիշ քաղաքներում՝ Հոմում (1584 թ.), Լիվոնոյում (1644 թ.): Յովհաննէս Քարմատանեցը 1616 թ. հայկական տպարան է հիմնում Լվովում: Նոր Ջուղայում տպագրական գործը սկզբնաւորուում է Սաչատուր Կեսարացու կողմից՝ 1636-1638 թուականներին:

Հայ տպագրութեան զարգացման յաջորդ փուլը կապուում է արդէն Հոլանդիայի հետ: Ամստերդամում հայկական տպարան է հիմնուում 1660 թուականին, էջմիածնի պատուիրակ Մատթէոս Ծարեցու կողմից: Վերջինիս գործը յաջողութեամբ շարունակում է Ոսկան Երեւանցին: 1685 թ. Ամստերդամում սկսւում է հայկական տպագրութեան մի նոր փուլը, որը կապուում է վանանդեցիների (Թովմաս, Ղուկաս, Մատթէոս) անուան հետ: Նրանք մինչեւ 1717 թ. հրատարակում են կրթական-լուսաւորական եւ գործնական նշանակութեան 17 անուն գիրք: Մինչեւ դարի վերջը հայկական տպարաններ են հիմնուում նաեւ Փարիզում, Պերլինում, Լոնտոնում, Լայպցիգում, Պադուայում, Զմիւռնիայում եւ ուրիշ քաղաքներում: Հայ տպագրութեան զարգացման այս առաջին շրջանում ընդհանուր առմամբ լոյս է տեսնում 1000 անուն հայերէն գիրք:

Հայաստանում մինչեւ 18-րդ դարի վերջը, անգամ մինչեւ 19-րդ դարի 20-ական թուականները հիմնուում է միայն էջմիածնի տպարանը (1771 թ.): Այսինքն, հայկական տպագրութիւնը սկզբնաւորուելուց 260 տարի անցնելուց յետոյ միայն այդ գործը սկզբնաւորուում բուն Հայաստանում: Մինչեւ դարի վերջը էջմիածինում տպագրուում է ընդամէնը 10 գիրք:<sup>13</sup>

Այսպիսով, հայրենիքի համար ստեղծուած դժուարին պայմաններում, երբ այնտեղ ոչ մի հնարաւորութիւն չկար ստեղծագործական աշխատանքի, Եւրոպայի եւ Ասիայի հայ համայնքներն են իրենց վրայ վերցնում հայկական մշակոյթի մի կարեւոր բնագաւառի՝ տպագրութեան գործը: Դրանով իսկ նրանք ապահովում էին հայ մշակոյթի բնականոն զարգացման ընթացքը:

Համանման երեւոյթ կատարուում էր նաեւ պարբերական մամուլի եւ հայ հոգեւոր մշակոյթի այլ ասպարէզներում:

Հայրենի երկրի հետ հայ գաղթավայրերի կապերը առաւել մեծ չափերով դրսեւորուել է ազատագրական շարժումներում:

Դժուար է գերազանահատել ազատագրական շարժումների ու գաղափարա-

13- Հայկական սովետական հանրագիտարան, հ.6, էջ 191-193

խօսութեան դերը հայոց պատմութեան մէջ: Յիրաւի, ժողովուրդի կազմաւորման ժամանակաշրջանից մինչեւ 20-րդ դարը ազատագրական շարժումները եղել են հայ ժողովուրդի մշտական ուղեկիցը, նրա պատմական զարգացման բնորոշ առանձնայատկութիւններից մէկը:

Բնականաբար, ազատագրական գաղափարախօսութիւնը համակել է նաեւ հայրենիքի ճակատագրով ապրող գաղութահայութեանը: Պատմական տարբեր փուլերում տարբեր ուժգնութեամբ է արտայայտուել ազատագրական շարժումներին գաղութահայութեան մասնակցութիւնը: Դա կախուած է եղել հայրենի երկրի քաղաքական իրավիճակից, հայ զանգուածներին պատսպարած երկրի ռազմաքաղաքական դիրքորոշումից, հայ համայնքների կամ նրանց գործիչների հասարակական դերից եւ այլ հանգամանքներից:

Ուշ միջնադարում, 16-18-րդ դարերում, ինչպէս նշեցինք, Թուրքիայի եւ Պարսկաստանի երկարատեւ տիրապետութիւնը, սոցիալական, ազգային եւ կրօնական հալածանքները աննախադէպ ծանր վիճակ էին ստեղծել հայ ժողովուրդի համար: Հայաստանում ստեղծուած այդ ծանր ու մռայլ ժամանակաշրջանում հայկական գաղթավայրերը ջերմօրէն արձագանգում են հայրենի երկրի ազատագրմանը: Դա հայրենիքից հեռու գտնուող հայ զանգուածների հայրենասիրական ձգտումների, հայ ժողովուրդի ճակատագրի հանդէպ նախանձախնդիր վերաբերմունքի պերճախօս վկայութիւն է: Դեռ աւելին, նրանք չէին մնում գեղեցիկ գաղափարների հայեցողական համակիրների շարքերում, այլեւ գործնական քայլեր էին կատարում այդ ուղղութեամբ:

Այդ շարժումը ցայտուն դրսեւորուեց յատկապէս Արեւելեան Եւրոպայի, Հնդկաստանի եւ Ռուսաստանի հայկական գաղութներում: Ինչպէս արդէն նշեցինք, Լեհաստանի, Հունգարիայի, Մոլդովայի եւ արեւելաեւրոպական միւս երկրների հայերը ակտիւ մասնակցութիւն են ունեցել թուրքական արգեսիայի դէմ ծաւալուած պայքարին: Հայագրի գործիչները ջանացել են այդ երկրների ուժերը միաւորել եւ հակաթուրքական ընդհանուր ճակատ ստեղծել: Իրենց պատսպարած երկրի շահերին ծառայելուց զատ, նրանք այդ պայքարը, իրաւամբ, լծորդում էին հայրենի երկրի ազատագրման հետ: Հայ գործիչները Թուրքիայի պարտութեան ու թուլացման մէջ էին տեսնում Հայաստանի ազատագրման գրաւականը: Վերելում յիշատակուած դիւանագիտական ծառայութիւններ կատարող հայ գործիչներից ոմանք (Պետրու Վարդիկ, Եոհան Քաջը) եւ ուրիշներ իրենց կեանքը զոհեցին այդ պայքարում: Լեհահայերին այն աստիճան էր համակել հայրենիքի ազատագրութեան հարցը եւ հասարակական այնպիսի հասուն մթնոլորտ ստեղծուել այդ խնդրի շուրջը, որ անգամ պետութեան ղեկավարներն էին ընդգրկուում այդ պայքարում: Եան Սորեսկին դեռ մինչեւ Լեհաստանի թագաւոր դառնալը, 1669 թ. բանակցութիւններ էր վարում Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսի հետ հայկական անկախ պետութիւն ստեղծելու կամ հայկական պետականութիւնը վերականգնելու վերաբերեալ: Յետագայում թագաւոր Սորեսկու յանձնարարութեամբ Կոստանդին Դէ Սիրին (1686, 1688 թթ.) մեկնում է Իրան եւ շահին հաղորդում միանալու հակաթուրքական



դաշնագրութեանը: Նա Հայաստան է ուղարկում իր քարտուղար Շիմոն Բեղրոսովիչին հայկական թագաւորութիւն ստեղծելու մասին Հայոց Կաթողիկոսի հետ բանակցելու նպատակով: Սակայն՝ այդ նոյն տարում մահանում է Սորեսկին եւ այդ խնդիրը լեհական արքունիքի համար կորցնում է իր հետաքրքրութիւնը:<sup>14</sup>

Հայրենիքի ազատագրութեան հարցում, եթէ Արեւելեան Եւրոպայի հայկական զանգուածների ակտիւութիւնը դրսեւորւում էր յատկապէս 17-րդ դարում, ապա հնդկահայերի շարժումը մեծ թափ ստացաւ 18-րդ դ. երկրորդ կէսին: Եւրոպայի լուսաւորական առաջադէմ գաղափարներով սնուող Հնդկաստանի հայկական գաղութներում, յատկապէս Մաղրաս քաղաքում մի խումբ հայրենասէրներ լայն գործունէութիւն են ծաւալում հայ ժողովուրդի ազատագրման եւ Հայաստանի անկախութիւնը վերականգնելու գաղափարը քարոզելու ուղղութեամբ: Հնդկահայ առեւտրական բուրժուազիայի հայրենասիրական այդ խմբակի անդամներն էին Շահմիր եւ Յակոբ Շահամիրեանները, Մովսէս Բաղրամեանը, Գրիգոր Սոջամալեանը: 1772 թ. Մաղրասում իսկ 1796 թ. Կալկաթայում հիմնւում են հայկական տպարաններ, ուր հրատարակւում են հայրենիքի ազատագրութեանը նուիրուած մի քանի արժէքաւոր աշխատութիւններ: 1773 թ. լոյս է տեսնում Մ. Բաղրամեանի «Նոր տետրակ որ կոչի յորդորակ» աշխատութիւնը: Հեղինակը հայ երիտասարդութեան մէջ ազգային հպարտութիւն առաջացնելու միտումով նկարագրում է հայ ժողովուրդի փառաւոր անցեալը: Ապա նա դրան հակադրում է տիրալի առօրեան եւ կոչ է անում երիտասարդութեանը արթնանալ թմրութեան քնից, դուրս գալ օտար բռնակալների դէմ եւ զէնքի ուժով ձեռք բերել հայրենիքի ազատութիւնը:

Հեղինակը հայկական պետականութեան անկման եւ օտար լծի տակ ընկնելը բացատրում է հայերի անմիաբանութեամբ եւ տգիտութեամբ: Այդ պատճառով էլ Մ. Բաղրամեանը կոչ է անում ուսում եւ կրթութիւն ստանալ եւ այդ տեսակէտից նմանուել եւրոպացիներին: «Նոր տետրակի» օրինակները նրանք տարածում էին Ղարաբաղում եւ հայկական այլ շրջաններում:

Հայաստանի ազատագրութեան եւ վերականգնելիք հայկական պետութեան կառուցուածքին էր նուիրուած Ծ. Շահամիրեանի «Որոգայթ փառաց» աշխատութիւնը: Գրքում տրւում է ապագայ Հայաստանի օրէնսդրութիւնը եւ պետական ամբողջ կառուցուածքը: Հնդկահայերի երազած պետական կարգը պառլամենտական բուրժուական հանրապետութիւնն էր:

Հայրենի երկրի կենսունակ ուժերի վրայ յենուած, Վրաստանի հետ դաշնակցած, շահագրգիռ Ռուսաստանի օգնութեամբ Հայաստանի ազատագրման հնդկահայ գործիչների առաջ քաշած գաղափարները ժամանակի համար խիստ առաջադիմական հայեացքներ էին: Դրանք հասարակական-քաղաքական կեանքի հասունացման որոշակի առաջընթաց քայլեր էին եւ նկատելի ազդեցութիւն թողեցին հայ իրականութեան մէջ:

Ռուսաստանի հայկական գաղութները աշխարհագրական պայմանների

14. Հայ ժողովրդի պատմութիւն, Կ-4, էջ 374

բերումով աւելի սերտ կապերի մէջ էին եւ աւելի քան լաւատեղեակ հայրենի երկրի իրավիճակին: Այդ պատճառով, ինչպէս նաեւ ռուսական պետութեան դրական վերաբերմունքի շնորհիւ նրանք առաւել ակտիւ էին արձագանգում հայ ազատագրական շարժումներին: Այդ տեսակէտից յատկանշական է հետեւեալ փաստը: Ազատագրական շարժման հնդկահայ նշանաւոր գործիչ Յովսէփ Էմինը 1762 թ., երբ ժամանում է Աստրախան, նրան են միանում մի քանի տասնեակ զինուած հայ երիտասարդ կամաւորներ, որոնք պատրաստ էին մեկնել հայրենիք եւ կռուել նրա ազատագրման համար: Ղզլար քաղաքի մօտ նրան, որպէս հայրենիքի ազատագրութեան նուիրեալի, խանդավառութեամբ դիմաւորում են ընդամէնը մի քանի տասնամեակ առաջ հիմնադրուած հայկական գաղութի զինավառ երիտասարդները եւ հանդիսաւորութեամբ ուղեկցում քաղաք:

Ռուսաստանի հայկական համայնքները ջանացել են բարձր պահել ազատագրական շարժման ոգին: Նրանք պարարտ հող եւ համապատասխան միջոցներ էին ստեղծում Հայաստանի ազատագրման նպատակով ռուսական կառավարութեան հետ տարուող բանակցութիւններում: Ամենեւին էլ պատահական չէ, որ հայրենի երկիրը ազատագրելու եւ հայկական պետականութիւնը վերականգնելու բոլոր ծրագրերը (բացառութեամբ հնդկահայերի ծրագրի) մտայղացել եւ առաջադրուել են Ռուսաստանի հայկական շրջանների կողմից:

Աստրխանի առեւտրաարդիւնաբերական շրջանների նշանաւոր ներկայացուցիչ Մովսէս Սարաֆեանը 1769 թ. Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիա է ներկայացնում Հայաստանը ազատագրելու եւ Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ հայկական պետութիւնը վերականգնելու ուշադրաւ մի նախագիծ: Այդ նախագիծի մշակմանը հաւանաբար մասնակցել են ռուսահայ ճանաչուած դէմքերից Գ. Կամպանեանը, Յ. Լազարեանը եւ ուրիշներ:

Ծրագրի հեղինակը առաջարկում էր ռազմական գործողութիւններ սկսել Թուրքիայի դէմ: Դրան ակտիւ մասնակից դարձնել Վրաստանին, Ղարաբաղի մելիքներին եւ Ռուսաստանում ապրող հայ զանգուածներին: Ազատագրել ամբողջ Հայաստանը եւ այնտեղ թագաւոր կարգել Ղարաբաղի մելիքներից ռեւէ մէկին: Յատկանշական է, որ նախագիծում Հայաստանի ազատագրման գործում մեծ տեղ էր յատկացւում հայերին, այդ թւում եւ Ռուսաստանի հայ համայնքների հայութեանը:

Պարսկական արշաւանքների նախապատրաստման շրջանում 1783 թ. ռուսահայ նշանաւոր գործիչներ Յ. Արղութեանը եւ Յ. Լազարեանը կառավարութեանն են ներկայացնում հայկական պետականութիւնը վերականգնելու մէկ այլ նախագիծ: Տասնութ կէտից բաղկացած այդ ծրագիրը, փաստօրէն, ապագայ Հայաստանի քաղաքական կառուցուածքի, հայկական պետութեան եւ ռուսական կայսրութեան փոխյարաբերութիւններին նուիրուած մի դաշնագրութիւն էր:

Հարկաւ, ռուսական արքունիքում հայկական պետականութիւնը վերականգնելու այդ երկու նախագիծերն էլ առանձին ուշադրութեան չար-

2935



ժանացան: Այդուհանդերձ դրանք արտայայտում էին Ռուսաստանի հայ գաղթավայրերի բնակչության հայրենասիրական ձգտումները, հայրենիքի բախտով ապրելու նրանց մշտական հետաքրքրությունները:

\*\*\*

Այսպիսով, հայկական գաղութների պատմությունը սոսկ հայ ժողովուրդի մի հատուածի, տարբեր երկրներում սփռուած նրա առանձին զանգուածների ինքնարաւ պատմութիւնն է: Այն միաժամանակ հայ ժողովուրդի, աշխարհի այլեւայլ ժողովուրդների հետ ունեցած պատմական կապերի պատմութիւնն է:

Գաղթավայրերում հայ զանգուածները շփուել են հիւրընկալող երկրների ժողովուրդների հետ: Հայերը ակտիւ դեր են կատարել իրենց ապաստան տուած երկրների տնտեսական կեանքում, ներքին ու միջազգային առեւտրում, արդիւնագործութեան ու արդիւնաբերութեան մէջ: Նրանք նշանակալից մասնակցութիւն են ունեցել հիւրընկալ երկրների հասարակական-քաղաքական ու մշակութային կեանքում: Հայ մշակոյթը բեղմնաւորուել է այդ երկրների կուլտուրայի բարերար ազդեցութեամբ եւ փոխադարձաբար ներգործել դրանց վրայ:

Հայկական գաղութները նպաստել, աւելին, նշանակալի դեր են կատարել հայ եւ հիւրընկալ երկրների ժողովուրդների յարաբերութիւնների, փոխմտնման ու համագործակցութեան մէջ: Եւ դրանով էլ, ի վերջոյ, հարստացրել ու բազմեցրել են դարձրել հայ հոգեւոր ու նիւթական մշակոյթը:

Հայ գաղթավայրերը բազմաթիւ թելերով կապուած են եղել Մայր հայրենիքի հետ: Նրանք օտար երկրներում, նոր միջավայրի անխուսափելի ազդեցութիւնը կրելով հանդերձ, պահպանել են հայրենի երկրի բարքերը: Դա վերաբերում է ոչ միայն ազգային սովորութիւններին ու կենցաղին, այլ կեանքի գրեթէ բոլոր կողմերին: Նրանք իրենց հետ տարել են եւ սերնդից սերունդ փոխանցել նախնիներից ժառանգած կենսահաստատ շատ աւանդներ: Աւելին, գաղթաշխարհում ոչ միայն պահպանուել, այլեւ առաջադիմել ու զարգացել է հայկական մշակոյթը: Բաւական է թէկուզ նշել որ առաջին հայկական տպարանները հիմնուել, առաջին տպագիր գրքերն ու պարբերականները հրատարակուել են Հայաստանից դուրս՝ գաղթաշխարհի տարբեր հանգրուաններում:

Այնպէս, որ հայկական գաղթավայրերը հայ ժողովուրդի պատմութեան մի անքակտելի մասն են կազմում: Հնարաւոր է հայ ժողովուրդի ամբողջական, գիտական պատմութիւնը տալ առանց հայկական գաղութների: Ամենեւին պատահական է, որ հայ գաղթավայրերի կարեւորութիւնը, դրա նշանակութիւնը յաճախ ընդգծուել է ճանաչուած հայ գործիչների կողմից:

Մեծ գրող եւ մտածող Յովհաննէս Թումանեանը հայ ժողովրդի պատմութեան հանգուցային շատ փրոպլեմների վերաբերեալ արտայայտել է մտքեր, որոնք զարմացնում են իրենց լայնախոհութեամբ ու խորաթափանցութեամբ: Նրա համար էական է եղել նաեւ հայկական գաղթավայրերի պատմութիւնը

լուսարանելու խնդիրը: 1910 թ. Ալ. Շիրվանզադէի յորելեանի առթիւ Թումանեանը գրում էր. «Կը ցանկանայինք, որ գրական այս տօնին յայտնուէին եւ ռուսահայը եւ տաճկահայը եւ պարսկահայը, եւ Հնդկաստանի, եւ Ամերիկայի ու Պուլկարիայի գաղթական հատուածները, եւ ոչ միայն այս տօնին, այլեւ միշտ նման տօներին, եւ դա դառնար սովորութիւն»: Ապա դրուատանքով նշելով Պետերբուրգի հայ գաղութի կողմից հայագիտութեան յատուկ ֆոնդ ստեղծելու փաստը եւ խօսելով ֆոնդի խնդիրների մասին, աւելացնում է. «Որովհետեւ այս ամէնը երկար տարիների կատարելիք գործեր են՝ առանձին ուշք զարձնել ըստ կարելոյն շուտով տալու վերջին դարերի պատմութիւնը՝ հայերը Ռուսաստանում, հայերը Տաճկաստանում, հայկական գաղթականութիւնը (ընդգծումը մերն է - Վ.Բ.) եւ հայկական խնդիրը»: <sup>15</sup>

Անուանի պատմաբան Լէոն գրում է. «Հայոց ժամանակակից պատմութեան ամենախոշոր, ամէն ինչ վճռող եւ բացատրող յատկութիւնն այն է, որ նա կազմուել է հայ գաղութների հզօր ազդեցութեան տակ, համարեա նրանց ձեռքով միայն: Բուն Հայաստանն ապրել է սկսում իր գաղութներում ստացած գաղափարներով, ցուցումներով, ներշնչուած շարժումներով... Հասկանալ եւ բացատրել այն ամէնը ինչ 19-20-րդ դարերում կատարուեց բուն Հայաստանում այնպիսի արագասահ ուժեղութեամբ, որպիսին չի տեսել հայոց պատմութիւնն իր առաջին օրերից, երբեք չի կարելի, եթէ նրանից անջատենք գաղութները: Այս բոլորովին անհնարին է, որովհետեւ ժամանակակից պատմութեան ընթացքում գաղութների եւ մայր երկրի կեանքը միախառնուած, ամբողջացած է (ընդգծումը մերն է - Վ.Բ.), եւ անկարելի է բաժանարար գծեր դնել երկու կողմերի մէջ»: <sup>16</sup>

Ահա թէ ինչու, եթէ հայ ժողովուրդի աշխարհասփիւռ հատուածի նշանակութեան տեսանկիւնից ենք դիտարկում կատարուած հետազօտական աշխատանքներն, ապա պարզորոշ գծազրուել է այն իրողութիւնը, որ հայկական գաղութների անցեալն ու ներկան հայոց պատմագիտութեան թոյլ ուսումնասիրուած ասպարէզներից է: Եւ դա հասկանալի է: Միայն վերջին տասնամեակներում հնարաւոր դարձաւ չրջադարձ կատարել դէպի պայմանների բերումով պատմագիտութեան կողմից անտեսուած այս բնագաւառը: Հետեւաբար, որքան էլ դրուատանքով խօսենք կատարուած աշխատանքների մասին, այսուհանդերձ դրանք դեռեւս անբաւարար են, թէ ընդգրկման, եւ թէ յարուցուող փրոպլեմների խորագնին քննարկելու առումով:

Տարակոյս չի կարող լինել, որ առաջիկայում գաղթավայրերի պատմութեան խոր ու մանրախոյս, միաժամանակ լայն յետախորքի վրայ հետազօտական աշխատանքների ծաւալումը արգասաւոր արդիւնքների կը յանգեցնի եւ մեզ անձանօթ նոր ծալքեր կարող է բացել ու նոր երանգներով կը հարստացնի հայոց պատմութիւնը:

15. Յ. Թումանեան, Երկերի ժողովածու, հ.4, Երևան, 1951, էջ 156

16. Լեօ, Երկերի ժողովածու, հ.4, Երևան, 1984, էջ 73:



## BEGINNINGS AND IMPORTANCE OF ARMENIAN SETTLEMENTS

VLADIMIR BARKHOUDARIAN

### SUMMARY

The term "settlement" in the science of history defines the presence of part of a nation in a foreign country, which creates its own community and keeps its native language, religious beliefs and national customs. In other words, it is the preservation of national characteristic features by a certain national unit within a foreign environment.

The Armenian nation is one of those few peoples (small in number) which because of numerous and repeated invasions of foreigners and having been under foreign yoke has been obliged to leave its native land for foreign countries. Thus, numerous settlements were formed in different parts of the world as from the early Middle Ages.

Some of them (in Poland, the Ukraine, India, Italy, New Julfa, etc.) noticeably developed in the late Middle Ages. Others (in France, the Northern Caucasus, Nor Nakhitchewan, Grigoriopol, Saint Petersburg, etc.) formed and developed later.

Some settlements emerged in the Middle Ages (e.g. in the Crimea, Bulgaria, Greece, Romania, Egypt, Syria, etc.) and remained in existence until the XIXth-XXth centuries.

Armenian settlements played an active part in social and political cultural, especially, in the trade and economy of their host countries.

On the other hand they were closely linked with and well-informed on the situation in their Motherland. Armenian communities have never been deaf or indifferent to their native country. Furthermore, they have always tried to be useful and help improve its situation. Armenians living in communities in foreign countries have especially tried to assist their compatriots in Armenia to liberate their country from the yoke of foreigners. It is not mere coincidence that all programmes to liberate Armenia from the Turkish and Persian yoke were elaborated and proposed by Armenian settlements.

The Armenian communities have kept up their native language, beliefs and customs, not only protecting but even significantly developing Armenian culture. It is important to mention that the first printing houses were established and the first Armenian periodicals and books published outside Armenia, in different locations throughout the Diaspora.

Armenian communities have played significant roles in reciprocal relations between Armenia and their host countries. In fact, the history of the Armenian settlements in different foreign countries is that of the links between Armenia and the host countries, an inseparable part of the history of Armenia. It would be impossible to expound the History of Armenia scientifically, if the history of the Armenian settlements were to be omitted.

## ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՏԱԳԱՂԹԵՐԸ

(6 - 19-ՐԴ ԴԴ.)

Վ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Հայ ժողովուրդի պատմությունը, խորը միջնադարից սկսած, նաև գաղութահայ զանգուածների կամ հայ գաղթականության պատմություն է: Առանց վերջինիս ըստ արժանույն լուսարանման խօսք չի կարող լինել հայ ժողովուրդի ամբողջական պատմության ստեղծման մասին: Բայց հայ գաղթականության կամ գաղթահայ աշխարհի պատմությունը ինքնին պահանջում է խոր լուսարանության առարկայ դարձնել գաղթաշխարհի առաջացումը պայմանաւորող երեւոյթի՝ հայկական արտագաղթի պատմությունը:

Ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովուրդի վերաբնակումներն ու արտագաղթերը սահմանորոշում են երկու գործոններով, որոնք կարելի է բնորոշել որպէս շարժիչ եւ ուղղութիւն ցոյց տուող ուժեր. մի դէպքում գործ ունենք արտագաղթի մղող, իսկ միւսում՝ նրա ուղղութիւնը մատնանշող պատճառների հետ: Վերջիններս միմեանցից տարբեր են. կայ պատճառների մի խումբ, որը տուեալ երկրի կամ մարզի բնիկներին ստիպում է թողնել հայրենի տարածքները, բայց կայ պատճառների բոլորովին այլ խումբ, որը գաղթի դիմած բնակչութեանը մղում է ընտրելու իր շարժընթացի յատկապէս այս, բայց ոչ այլ ուղղութիւնը: Սակայն քիչ չեն նաև դէպքերը, երբ գաղթի ուղղութիւնը, այսինքն այն տարածքը, ուր պէտք է գնայ-հանգրուանի գաղթականական հոսանքը, մարդկանց գոյատեւման համար իր ունեցած քիչ թէ շատ նպաստաւոր պայմաններով ինքն է դառնում արտագաղթը խթանող գործոն: Այլ կերպ ասած՝ որպէս կանոն արտագաղթի դիմած բնակչութիւնը ինչ որ չափով նախապէս գիտէ նաև իր շարժի ուղղութիւնը: Սա, իհարկէ, պարտադիր կանոն չէ:

Ժողովուրդների արտագաղթերը իրենց նպատակամիտութեամբ լինում են խստիւ տարբեր: Միջնադարից յայտնի են ժողովուրդների գաղթների շատ օրինակներ, որոնք ընթացել են այլ ժողովուրդներ կողոպտելու, նրանց



տարածքները բռնագրավելու նպատակով: Որպէս կանոն նման բովանդակութիւն ունէին վաչկատուն ժողովուրդների տեղաշարժերը Ալթայից ու Միջին Ասիայից դէպի Փոքր Ասիա եւ առհասարակ Արեւմուտք:

Իրենց բովանդակութեամբ եւ դրդիչ ուժերով բոլորովին այլ պատկեր ունէին հայկական արտագաղթները: Սրանց օբյեկտիւ պատճառները թաքնուած էին ինչպէս երկրի արտաքին քաղաքական դրութեան, այնպէս էլ նրա ներքին, սոցեալ-տնտեսական զարգացման մէջ:

Հանդիսանալով հայ ժողովուրդի պատմութեան իւրօրինակ կողմերից մէկը, նրան հաղորդելով բոլորովին այլ երանգ ու բովանդակութիւն, հայկական արտագաղթներն ու գաղթավայրերի առաջացումը, որպէս համազգային ընդգրկման երեւոյթներ, յատկապէս ուժգնօրէն ծաւալուեցին քրիստոնէութեան ընդունմանը յաջորդած դարերում, մանաւանդ արաբական արշաւանքներից ի վեր: Հաւանաբար, արտագաղթի հիմնական պատճառներին զուգընթաց, որոնք կը նշուեն ստորեւ, կարեւորուել է նաեւ այն հանգամանքը, որ դրան դիմած հայ զանգուածները իրենց հայեացքը յառել են դէպի հարեւան քրիստոնեայ երկրները (Բիւզանդիա, Սլաւոնական աշխարհ, Վրաստան)՝ որպէս քիչ թէ շատ ապահով հանգրուանի:

Հայկական արտագաղթների եւ գաղութների առաջացման իսկական պատմութիւնը սկսւում է, իրօք, քրիստոնէութեան ընդունումից յետոյ: Մի որեւէ երկրում հայ գաղութի հիմնադրման, ամփոփման եւ գոյատեւման նախապայմանը գաղափարաբանական ընդհանրութիւնն է. առանց նրա ցեմենտող ուժի ոչ մի ազգային ընդհանրութիւն երկար գոյատեւել չի կարող: Գաղթահայ համայնքների համար այդ ուժը հանդիսանում էր քրիստոնէական ուսմունքը եւ եկեղեցին՝ որպէս այդ ուսմունքը ջատագովող եւ պահպանող հաստատութիւն: Ահա թէ ինչու մինչեւ քրիստոնէութեան ընդունումը Հայաստանից հեռացած բազմահազարանոց եւ ոչ մի գաղթականական հոսանք չստեղծեց Հայկական գաղութ եւ կուլ գնաց օտար միջավայրին (տուեալ դէպքում պարսից միջավայրին):

Մեր ասածի ապացոյցն այն է, որ միջնադարեան եւ նոր շրջանի բոլոր քիչ թէ շատ աչքի ընկնող հայ գաղութները ունէին իրենց եկեղեցին՝ նրա բոլոր հաստատութիւններով, որոնք ազգապահպանման խնդրին համեմատ, ազգային շունչ ու ոգի էին հաղորդում տուեալ գաղութին, իրականացնում նրա մշտատեւ կապը հայրենիքի հետ:

Հայկական արտագաղթները խթանող հիմնական պատճառների մէջ առաջին հերթին պէտք է առանձնացնել օտար նուաճողների դէպի Հայաստան պարբերաբար կատարած արշաւանքները (որոնք իրենց հերթին պայմանաւորուած էին Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ Հայաստանի զբաղեցրած բուֆերային աշխարհագրական դիրքով), ազգային պետականութեան կորուստը, երկրում օտարերկրեայ անտանելի տիրապետութեան հաստատումը, ֆէոդալական երկպառակութիւնները, արտաքին աշխարհի հետ ունեցած առեւտրատնտեսական սերտ կապերի առկայութիւնը, սոցիալական եւ դաւանաբանական պայթարը, ինչ որ չափով նաեւ՝ տարբերային աղէտները:

Նշուած պատճառներից իւրաքանչիւրն իր կապակցութիւնների մէջ բազմերանգ է եւ լայն քննարկման խնդիր, մանաւանդ, որ այդ պատճառները միշտ չէ եւ յաճախ չէ, որ դրսեւորուել են միատեսակ:

Հայկական արտագաղթները նկատելիօրէն մեծ չափեր ընդունեցին արդէն արաբական արշաւանքների եւ մանաւանդ երկրում արաբների տիրապետութեան հաստատման շրջանում: Բիւզանդական շրջաններում, Բալկաններում, Հիւսիսային Կովկասում, Մերձաւոր Արեւելքում եւ այլուր 7-11-րդ դարերում հայ բնակչութեան յայտնուելը եւ հայկական գաղթավայրերի առաջացումը առաջին հերթին միահիւսուած էին այդ դարերում Հայաստանում տեղի ունեցած ռազմաքաղաքական անցքերի՝ արաբների, բիւզանդացիների եւ սելջուկների այստեղ ձեռնարկած արշաւանքների ու վարած քաղաքականութեան հետ:

Բիւզանդիայի եւ Արաբական խալիֆայի միջեւ գրեթէ 300 տարի (7-11-րդ դարեր) Հայաստանի, Փոքր Ասիայի եւ Կիլիկիայի համար մղուած պատերազմները եւ ապա թուրք-սելջուկների արշաւանքները անլուր կոտորածների եւ աննկարագրելի զրկանքների հետ միաժամանակ հայ ժողովուրդին բերեցին իր յետագայ հետեւանքներով թերեւս աւելի ծանր արհաւիրք՝ զանգուածային արտագաղթները, որոնք դրսեւորուում էին բռնի կամ կամովին ձեւերով: Սակայն կամովին բառը այստեղ զուտ պայմանական իմաստով է գործածական, քանի որ կամաւոր գաղթող հայութիւնն էլ այդ քայլին դիմում էր ակամայից՝ օտար բռնակալի ճնշումից ու վայրագութիւններից հարկադրուած:

Արաբական տիրապետութիւնը Հայաստանում երկրի բնակչութեան համար նշանակում էր տնտեսական ու մշակութային կեանքի փլուզում, դառը զրկանքներ, մարդկային անհամար զոհեր: Հայաստանի ամբողջ ունեցուածքը յայտարարուել էր խալիֆայի սեփականութիւն: Հարկադրուել էր ողջ բնակչութիւնը, հարկադրուել էին անգամ մեռելները: «Եւ տիրէ ընդ նորա Աբդլայ (սա Աբասեան դինաստիայի վերջին խալիֆն էր - Վ.Մ.), եւ առաքէ զեղբայր իւր զմիւս Աբդլայ շրջել ընդ ամենայն աշխարհս իշխանութեան իւրոյ: Որ նախ ելեալ յաշխարհս Հայոց՝ բազում վշտօք եւ նեղութեամբք վտանգէր զամենեսին եւ հասուցանէր ի չքաւորութիւն տնանկութեան, մինչեւ պահանջել հարկս եւ ի մեռելոցն: Եւ զամենայն բազմութիւն որբոց եւ այրեաց չարալլուկ տառապեցուցանէր. վտանգէր զքահանայս եւ զպաշտօնեայս աստուածային խորանին խոշտանգանօք եւ քօք այպանութեան եւ գանիւք՝ ի յայտ ածել զանուանս վախճանելոցն եւ զընտանիս նոցուն: Սոչտանգէր եւ զբնակիչս աշխարհիս բռնագոյն եւ զառն հարկապահանջութեամբ, առնուլ ըստ գլխոյ բազում զուգէս արծաթոյ, եւ դնել կնիք կապարեայ յամենեցուն պարանոցս»:<sup>1</sup>

Անգամ մելեոների դիմաց հարկ պահանջող տիրակալներից փրկուելու համար բնակչութիւնը ստիպուած հեռանում էր երկրից՝ Փիզիքապէս գլխովին վերանալու վտանգին դէմ-յանդիման, մանաւանդ որ արաբական տիրապետու-

1. «Ղեւոնդեայ վարդապետի պատմութիւն», Ս. Պետրոպոլս, 1887, էջ 127:



թեան դէմ ուղղուած նրա պայքարը ըստ մեծի մասին անյաջող աւարտ էր ունենում՝ թշնամու զինական ուժի գերակշիռ լինելու եւ հայ նախարարների անմիաբանութեան հետեւանքով:

Գաղթականական առաջին հոսանքները 7-11-րդ դարերում քայլ առ քայլ անցնում էին բիւզանդական շրջաններ, մասամբ նաեւ Վրաստան եւ Աղուանք: Սակայն, որպէս կանոն, աւելի հոծ գաղթականութիւն տեղափոխուեց Բիւզանդիայի փոքրասիական եւ անգամ եւրոպական շրջաններ, քանի որ Վրաստան եւ Աղուանք գնալը այնքան էլ նպատակայարմար չէր, որովհետեւ վրացիներն ու աղուանական ցեղերը որպէս արաբական «Արմենիա» փոխարքայութեան մէջ մտնող ժողովուրդներ, նոյնպէս ենթակայ էին արաբական ճնշմանը: Ամէնից յարմարը մնում էր Բուզանդիան եւ յետագայում նրա վրայով նաեւ՝ Բալկաններ ու սլաւոնական երկրներ: Սկիզբ առնելով 7-րդ դարից, հայերի տեղաշարժերը դէպի բիւզանդական շրջաններ այնուհետեւ դար առ դար ոչ միայն չեն նուազում, այլեւ ուժգնանում են, իսկ 10-11-րդ դարերին արդէն ընդունում են աննախընթաց մեծ ծաւալ:

Արաբական արշաւանքների արդէն իսկ սկզբնական շրջանում հայ գաղթականները սկսում են անցնել Բիւզանդիայի կայսրութեանը ենթակայ փոքրասիական շրջաններ եւ անգամ Կ. Պոլիս: Որպէս կանոն այս շրջանում նրանք այստեղ տակաւին չէին կարող յարատեւել եւ ընդունելով ուղղափառութիւն՝ դաւնում էին «հայ-հոռոմ» ու ձուլուում: Եւ այնուամենայնիւ, նոյնիսկ 6-7-րդ դարերում ոչ քիչ թուով հայեր գերծ էին մնացել ձուլումից: 6-րդ դարի կէսերից Կ. Պոլսում կար ամփոփ մի հայ գաղութ: Հաւանաբար, սրանք այն հայերից էին, որոնց Յուստինեանոս կայսրը 6-րդ դարում Մելիտինէից բերել էր Կ. Պոլիս եւ մասամբ էլ տեղափոխել թրակիա:<sup>2</sup> Սերէոսի հաղորդմամբ, Մորիկ կայսրը նոյն դարում թրակիական շրջաններ է բերում հոծ թիւով հայ գաղթականներ եւ նրանցից կազմուած զնդերով պատերազմում աւարների դէմ: «Հրաման ետ դարձեալ ժողովել զամենայն այր եւ ձի ի Հայաստանեայց եւ զիշխանս նախարարացն, որք հմուտ էին եւ կարող զդէմ ունել՝ կռուել ուզմ ի նիզակամուխ ճակատի: Եւ հրաման ետ դարձեալ վերստին զաւր հանել յաշխարհէն Հայոց բազում յոյժ, զամենեսեան կամով եւ ընտրով հասակի՝ կազմել գունդս զարդու եւ զինու վառեալ եւ անցուցանել զամենեսեան յաշխարհն թրակացւոց ընդդէմ թշնամոյն»<sup>3</sup>:

6-րդ դարում Մորիկ կայսրը հակահայկական գործարքի մէջ է մտնում իր հակառակորդ պարսից շահի հետ՝ Հայաստանը հայերից դատարկելու նենգ առաջարկութեամբ: «Յայնմ ժամանակի թագաւորն Յունաց Մաւրիկ հրամայէ գրել առ թագաւորն Պարսից գիր ամբաստանութեան վասն իշխանացն ամենայն Հայաստանեայց եւ զաւրաց իւրեանց: «Ազգիւ մի խոտոր եւ անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում եւ պղտորեն: Բայց ե՛կ, ասէ, ես զիմս ժողովեմ եւ ի

2. «Փորձ», Թիֆլիս, 1877-1878 թթ., գիրք 4-րդ, էջ 167:  
3. «Պատմութիւն Սերէոսի», աշխատասիրութեամբ Գ. Վ. Արգարեանի, Երևան, 1979, էջ 90:

թրակէ գումարեմ. եւ դու զքոյդ ժողովէ եւ հրամայէ յԱրեւելս տանել: Զի եթէ մեռանին՝ թշամիք մեռանին. եւ եթէ սպանանեն՝ թշնամիս սպանանեն. եւ մեք կեցցուք խաղաղութեամբ: Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին՝ մեզ հանգչել ոչ լինի:

Միաբանեցան երկոքին: Եւ սկսաւ կայսրն հրաման տալ, զի ժողովեցեն զամենեսեան եւ ի թրակէ գումարեցեն. եւ սաստիկ տագնապէր՝ հրաման կատարեր»: Սակայն հայերի մի մասը փախչում է Բիւզանդիայից եւ գալիս «ի ծառայութիւն Պարսից, մանաւանդ որոց երկիրն ընդ նորա իշխանութեամբ էր»:<sup>4</sup> Եւ չնայած դրան, ինչպէս վերը տեսանք, Մորիկին այնուամենայնիւ յաջողում է մեծ թուով հայերի բերել թրակիա, որտեղ մասամբ իրականանում է նրա իդժը, որովհետեւ ի վերջոյ հայոց մի մասը հեռուոր Դանուբի ափերին կնքում է իր մահկանացուն. «եւ բազմութիւն նախարարացն եւ զաւրացն Հայաստանեայց յաւուր յայնմիկ կործանեալ սատակեցան»:<sup>5</sup>

Եթէ մինչեւ 7-րդ դարը Բիւզանդիա անցած հայերը հիմնականում ձուլուում էին, ապա դրանից յետոյ պատկերը նկատելիորէն փոխուում է: Խնդիրն այն է, որ մինչեւ 7-րդ դարը Բիւզանդիա անցած հայերը համեմատաբար մեծ թիւ չեն կազմել եւ դժուարութեամբ են դիմակայել ձուլումի միջավայրին: Այնինչ 7-րդ դարի վերջերից, երբ արաբական հալածանքները Բիւզանդիա են քշում հայ ժողովուրդի աւելի մեծամեծ զանգուածներ, որոնք սկսում են զբաղեցնել ամբողջական շրջաններ եւ բնակավայրեր կայսրութեան մանաւանդ փոքրասիական տարածքներում եւ գոյատեւել որպէս ինքնուրոյն հայ համայնքներ, գաղթական հայութիւնը շատ տեղերում կարողանում է պահպանել իր ազգային ինքնութիւնը: Դրան նպաստում է այն, որ սրանց կապերը հայրենիքի հետ աւելի կենդանի էին եւ շարունակական՝ մի կողմից հայկական շրջաններում բիւզանդական բանակաթեմերում հայ զինուորների նշանակալից թիւ կազմելու, իսկ միւս կողմից՝ դէպի Բիւզանդիա եկող հայ բնակչութեան նորանոր խմբերի հետեւանքով:

8-րդ դարի հենց սկզբներին հայ նախարարների մի մասը, նշանակալից չափով հպատակ ժողովուրդով, գաղթեց Բիւզանդիա: Դա տեղի ունեցաւ 706 թուականի յայտնի անցքերից յետոյ, երբ Դրչապետ գիւղի մօտ (Նախճաւանի Վանանդ գաւառ) հայ եւ բիւզանդական միացեալ ուժերը պարտուեցին արաբներից, եւ վերջինները բազում հայ նախարարների ու ազատների այրեցին Նախճաւանի եւ Խրամ աւանի եկեղեցիներում:

Արաբական տիրապետութեան սաստկացմանը համաքայլ աճում էր Բիւզանդիա քաջուող հայութեան թիւը՝ մանաւանդ, որ մինչեւ 10-րդ դարը բիւզանդական վարչակազմի վերաբերմունքը հայերի նկատմամբ դեռեւս հանդուրժողական էր եւ տանելի: 8-րդ դարի 50-60-ական թուականներին Կոստանդին Կոպրոնիմոս կայսեր թոյլտուութեամբ, որը զօրքով մտել էր Կարնօ նահանգ, հազարաւոր հայեր հատուածաբար տեղափոխուում են բիւզանդական շրջաններ:

4. Նոյն տեղը, էջ 86-87:  
5. Նոյն տեղը, էջ 91:



«Եւ նորա (Կոստանդին Կոպրոնիմոս կայսրը-Վ.Մ.) տուեալ հրաման, վաղվաղակի հանդերձեալ զաղխս իւրեաց՝ խաղացին յառաջ, ապաւինեալք ի զօրութիւն տէրունեան խաչին եւ ի փառս արքային. թողին զերկիր ծննդեան իւրեանց, եւ հատուածեալք անկան ի կողմն արքային...»:<sup>6</sup>

Մի երկու տասնամեակ անց արտագաղթը դէպի Բիւզանդիա աւելի ծաւալուն է դառնում, որն արդէն կապուած էր արաբների դէմ 774-775 թթ. բարձրացած ապստամբութեան պարտութեան հետ: Այս արտագաղթը փաստօրէն գլխաւորում էին Մամիկոնեան, մասամբ էլ Բագրատունիների ընտանիքները: Լքելով իրենց շատ կալուածքներ, նրանք, նկատելի թուով հպատակ ժողովուրդով հանդերձ, անցնում էին Բիւզանդիա, մասամբ էլ՝ ամուր լեռնային շրջաններ: 790 թուականին նոյն քայլին են դիմում 12 հազար հայեր Շապուհ Ամատունու գլխաւորութեամբ:<sup>7</sup> Առհասարակ 775 թ. ապստամբութեան պարտութիւնը առաջ բերեց հայ նախարարական տների քայքայում. նախարարների մի մասը գերազասեց տեղափոխուել բիւզանդական շրջաններ, իսկ մի մասն էլ հարկադրուած բռնեց արաբներին համակերպուող ուղի: Երկու երեւոյթն էլ խթանում էին հայերի արտահոսքը:

Նշուած ապստամբութեան պարագլուխներից մէկը՝ Արտաւազդ Մամիկոնեանը, շուտով դառնում է Անատոլիկոն թեմի ստրատեգ եւ կառավարիչ: Առհասարակ բիւզանդական վարչակարգի քաջալերիչ վերաբերմունքը հայ աւագանու նկատմամբ պակաս դեր չխաղաց հայերին արտագաղթի մղելու գործում: Աւելի ուշ, 18-րդ դարում, նոյն երեւոյթը մենք տեսնում ենք այս անգամ արդէն հայերի՝ դէպի ռուսական շրջաններ տեղաշարժուելու շարժառիթներում: Բիւզանդիայի այդ քաջալերիչ վերաբերմունքի եւ իրենց ձիրքի վրայ յենուելով՝ հայ աւագանու (եւ ոչ միայն նրա) շատ ներկայացուցիչների յաջողում է կայսրութեան մէջ հասնել քաղաքացիական եւ զինուորական բարձր պաշտօնների: «Բիւզանդիան, - գրում է նշանաւոր բիւզանդագէտ Շառլ Դիլը, - իր լաւագոյն զօրահրամանատարներից, գերազանց վարչապետներից շատերին ստացել էր Հայաստանից: Հայաստանից էին սերում նոյնիսկ որոշ կայսրեր՝ Հերակլը՝ 8-րդ դարում, Լեոն Հայկը՝ 9-րդ դարում, Ռոման Լեկապինը եւ Յովհաննէս Չմշկիկը՝ 10-րդ դարում: Բիւզանդիան Հայաստանին պարտական էր իր հիանալի զինուորների համար, քանի որ հայկական զօրաջոկատները 10-րդ դարում համարում էին բիւզանդական բանակի լաւագոյն ստորաբաժանումները: Այդ պատճառով էլ հեշտ է հասկանալ, թէ ինչու կայսերական կառավարութիւնը երազում էր այդ բնակչութիւնը վերածել իր հպատակների, բնակչութիւն, որն ամբողջութեամբ ներծծուած էր բիւզանդական ազդեցութեամբ: Կայսերական զիւանագիտութիւնն այդ նպատակով դիմում էր ամենարագմազան միջոցների»:<sup>8</sup>

8-րդ դարում Բիւզանդիայի լաւագոյն զօրահրամանատարներից էին

6. Դեւոնդ, էջ 129:  
7. Նոյն տեղը, էջ 169:  
8. Ш. Диль, Основные проблемы византийской империи, м., 1947, с. 140-141.

Տաճատ Անձեւացին, Վարազտիրոցը, Գրիգորիսը, որոնց հրամանատարութեան ներքոյ 778 թ. բիւզանդական բանակները փայլուն յաղթանակ տարան արաբների դէմ, Գերմանիկէի մօտ: Հենց այս յաղթանակից յետոյ էր, որ մեծ թուով հայերի Մարաշից տեղափոխեցին Թրակիա: Հաւանաբար, սրանք պաւլիկեաններ էին, որովհետեւ Գերմանիկէն նրանց կենտրոնն էր: Բալկաններ անցած պաւլիկեանները սկսեցին այստեղ եւս տարածել իրենց ուսմունքը: 765 թ. Թրակիայում կար հայկական մի զօրամաս, որը կազմուած էր Կոստանդին 5-րդի կողմից 755 թ. Կարինից եւ Մելիտինէից տեղափոխած հայերից: Բիւզանդական ժամանակագիր Թէոփանէսի հաղորդմամբ՝ սրանք էին, որ սկսեցին տարածել պաւլիկեան աղանդը:<sup>9</sup>

8-11-րդ դարերում Բիւզանդիայից հայ գաղթական խմբերը անցնում են Բուլղարիա եւ Մերձդանուբեան տարածքներ: Կրում (803-814) եւ Օմուրթաք (814-831) խաների նախապուլկարական շրջանի մի արձանագրութեան վկայութեամբ, նրանց մօտ Բիւզանդիայից Բուլղարիա էին եկել հայ զինուորականներ Վարդանը, Գեարջոյլը եւ Տրդատը:<sup>10</sup>

Այս շրջանում Բիւզանդիայից Բուլղարիա անցած հայերի մէջ աւելի ստուար թիւ էին կազմում մանաւանդ արհեստաւորները: Նոյն խաների օրօք բուլղարական մայրաքաղաքներ Պլիսկայի եւ Պրեսլաւայի պալատների ճարտարապետութիւնը նմանութեան շատ գծեր ունէր Դուինի, Արուչի եւ հայկական այլ վայրերի, քան Կոնստանդնուպոլսի պալատների հետ: «Բուլղարների անմիջական շփումները հայերի եւ սիրիացիների հետ, - նշում է Ա. Յակոբսոնը, - կարող էր տեղի ունենալ (եւ, անկասկած, տեղի է ունեցել) հենց բուլղարական մայրաքաղաք Պլիսկայում կատարուող բուռն շինարարական շրջանում: Այդ շինարարութեան մէջ հայ եւ սիրիացի ճարտարապետների մասնակցութիւնն աւելի քան հաւանական է:<sup>11</sup> Վասիլ 1-ին կայսեր օրօք, մանաւանդ, Թրակիայում հայերի թիւը մեծ չափերի է հասնում, եւ, հայազգի Սուրբ Մարիամ նախավկայի վարքի համաձայն, նրանց մի մասն արդէն դարձել էր «հայ-հոռոմ», այսինքն քաղքեղոնիկ:<sup>12</sup>

9-րդ դարում, Բագրատունեաց Հայաստանը ռազմական հզօր ուժ ունէր, եւ առաջաւոր Ասիայում այդ ուժը Բիւզանդիայի համար լուրջ յենարան էր:<sup>13</sup> Հաւանաբար դա էր գլխաւոր շարժառիթը, որը Բիւզանդիային մղել էր ակտիւօրէն նպաստելու հայկական թագաւորութեան վերականգնմանն ուղղուած գործընթացներին: Սակայն որքանով թուլանում էին արաբների դիրքերը, այնքանով Բիւզանդիայի նուաճողական նկրտումները աւելի սակաւ էին ուղեկցւում սիրաշահող դիւանագիտութեամբ: Ընդհակառակը, տասնամեակ առ տասնամեակ սաստկանում էր Հայաստանի նկատմամբ

9. ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1960, թիւ 7-8:  
10. (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» 1981, թիւ 4, էջ 65-77):  
11. «Византийский современник», Т. 28, 1968, с. 206:  
12. «Պատմա-քաղաքագիտական հանդէս», 1980, թիւ 3, էջ 244-250:  
13. Н. Gelzer, Abriss der byzantinischen Kaisergeschichte (K. Krumbeker, Geschichte der byzantinischen Literature, Munchen, 1897, S. 979, 981, 1010).



վարուող քաղաքականությունը: Կայսրներ Յովհաննէս Չմշկիկը (969-976) եւ Վասիլ Բ.-ը (976-1025) հայկական շրջանների օպուկացումը ուղեկցում էին բնակչության տեղահանմամբ: Օգտագործելով հայ նախարարական տների երկպառակություններն ու կենտրոնախոյս ձգտումները, նրանք հեշտութեամբ իրականացնում էին հայ բնակչության տեղահանումը եւ նրա տեղափոխումը կայսրության արեւմտեան շրջաններ: Հայաստանը դատարկելու եւ զինական ուժից զրկելու բիւզանդական քաղաքականությունը ի վերջոյ նպաստեց սելջուկների առաջխաղացմանը՝ դառնալով թէ՛ հայկական եւ թէ՛ բիւզանդական պետականութեան հիմքերի խարխուման պատճառներից մէկը: Որո՞նք էին Հայաստանի նկատմամբ բիւզանդական կայսրության վարած այսօրինակ քաղաքականության միտումները.

- ա) Հայերին դաւանափոխելու եւ յոյների մէջ ձուլելու ձգտումը.
- բ) Կայսրության շատ շրջանների եւ մանաւանդ եւրոպական մասի բնակեցման ու տնտեսական զարգացման անհրաժեշտությունը.
- գ) Հայերի զինուորական ուժը Արեւմուտքում կայսրության թշնամիների դէմ ուղղելը, մանաւանդ որ Արեւելքում արարներն այլեւս նախկին վտանգը չէին ներկայացնում.
- դ) Հայ ազնուական դասի չէզոքացումը եւ ի վերջոյ վերացումը՝ հակաբիւզանդական որեւէ պայքար ղեկավարելու հնարաւորությունից նրան զրկելու համար:

Տակաւին 964-968 թթ. դէպի Արեւելք ձեռնարկած արշաւանքի ժամանակ Նիկեփորոս Բ.-ը, օգտուելով Տարօնի իշխան Աշոտ Պատրիկի մահից, Տարօնը միացրեց կայսրությանը, իսկ նրա յաջորդ Յովհաննէս Չմշկիկ մեծ թուով հայեր, հիմնականում թոնդրակեցիներ, գաղթեցրեց Ֆիլիպոպոլ, նպատակ հետապնդելով թուլացնել գնալով հակաբիւզանդական ազգային ազատագրական պայքարի ընթացք ձեռք բերող այդ շարժումը եւ նրա մասնակիցներին օգտագործել բուլղարներից, ռուսներից եւ հունգարացիներից պաշտպանուելու համար: Գրիգոր Մագիստրոսի հաղորդման համաձայն, թոնդրակեցիները գործում էին կայսրության ողջ տարածքում, իսկ ըստ բիւզանդական որոշ աղբիւրների՝ հանդէս էին գալիս Փունդագեցիների (թափառական ժողովուրդի) անուան տակ:<sup>14</sup> Սակայն հայազգի Չմշկիկը, ելնելով արտաքին թշնամու դէմ մղուող պայքարում հայերին օգտագործելու խնդրից, «մոայլ մոլեռանդութեամբ չէր վերաբերում դէպի հայ համայնքները, ինչպէս խստապահանջ օրթոդոքսները»:<sup>15</sup> Նա գաղթեցուած հայերին օգտագործում է նաեւ մայրաքաղաք Կ. Պոլսի պաշտպանութեան համար:

Հայերին տեղահանելու գործում ամէնից շատ ակտիւություն ցուցաբերեց Վասիլ Բ.-ը: 1001 եւ 1021-1022 թթ. դէպի հայկական մարզեր ձեռնարկած իր արշաւանքների ժամանակ Վասիլ Բ.-ը շատ հայերի տեղահանեց հայրենի

14. P. Бартикан, Движение Тондракидов в Влзантии («Вестник» АН. РА, 1980, No. 9, с. 69):  
 15. Հ. Գեղեքեր, Համառոտութիւն բիւզանդական կայսրների պատմութեան, Վաղարշապատ, 1901, էջ 334:

օջախներից եւ վերաբնակեցրեց Մակեդոնիայում: «Այլ յորժամ էր ի Պաղտատ թագաւորն Վարդ եւ խաղաղանայր թագաւորութիւն Վասիլն՝ կամեցաւ յազգէն Հայոց, որ ընդ իւրով թագաւորութեամբն՝ անցուցանել ի Մակեդոնիա ընդդէմ Բուլղարացն, զի շինեսցեն զերկիրն: Որ եւ տարեալ բնակեցոյց զյորովս յաշխարհն յայն»:<sup>16</sup>

Վասիլ Բ.-ի ահաբեկմամբ Բագրատունիների Յովհաննէս Սմբատ թագաւորն իր թագաւորութիւնը կտակեց կայսրութեանը, որը այնքան ճակատագրական եղաւ Հայաստանի համար, մեծապէս նպաստելով նաեւ արտագաղթի ուժեղացմանը: Վասիլ Բ.-ի ժամանակ Վասպուրականի Սենեքերիմ թագաւորը հարկադրուած Բիւզանդիային թողեց իր աշխարհը՝ 72-բերդ, 4000 զիւղ եւ 8 քաղաք եւ փոխարէնը ստանալով Սեբաստիան՝ իրեն ենթակայ բնակչութեամբ տեղափոխուեց այնտեղ:<sup>17</sup> 1041 թուականին, Բագրատունեաց թագաւորութեան վերացման նախօրէին, մի շարք բիւզանդամէտ հայ իշխաններ լքում են հայրենի տիրոյթները եւ անցնում Բիւզանդիա եւ «եղեն շինանիստ աւանք՝ բնակութիւն գազանաց, եւ անդաստանք նոցա՝ յարօտ երէնց»:<sup>18</sup> Սրանք այն իշխաններն էին, որոնք Բագրատունիների թագաւորութեան թուլացմանը ի տես՝ աճապարում էին ապահով ու յարմար վիճակ ձեռք բերել Բիւզանդիայում: Նրանց այդ քայլը Բագրատունիների թագաւորութեան վերացման նախօրեակին էր, 1045 թ., եւ Գագիկ Բ.-ին նենգաբար կոստանդնուպոլիս հրաւիրելը եղաւ այդ թագաւորութեան վերջնաբերը:

Արեւելքում արարների թուլացմանը համաքայլ իրենց յաջողութիւններից արբած՝ բիւզանդական իշխանութիւնները կարծես թէ չէին ուզում նկատել այն, որ քայքայելով հայկական եւ վրացական դիմադրողական ուժը, ողբերգական վիճակ են ստեղծում նաեւ բուն կայսրության համար: Հիմնական վտանգը տեսնելով կայսրութեան արեւմտեան սահմաններում, Բիւզանդիան փաստօրէն Արեւելքում դարպասները բաց էր թողել ներխուժող վաչկատուն յորդանների առաջ:

Բագրատունեաց թագաւորութեան վերացմանը շուտով յաջորդեց թուրք-սելջուկների ներխուժումը Անդրկովկաս եւ փոքր Ասիա: Սրանց Հայաստանն այլեւս ի վիճակի չէր լրջօրէն դիմադրել, քանի որ կորցրել էր պետականութիւնը, իսկ նրա մարտունակ ուժերը երկրից հեռու մարտնչում էին բիւզանդական սահմանների պաշտպանութեան կամ ընդլայնման համար: 1045 թուականի համար Ա. Լաստիվերտցին նկատում է, որ երկիրը մարդաթափ է դարձել, իսկ հայկական զօրքերը թափառում են Վրաստանում, Պարսկաստանում եւ Բիւզանդիայում. «Հեծելազօրն անտէրունչ չըջեալ ոմն ի Պարսս, ոմն ի Յոյնս, ոմն ի Վիրս, - բողոքում է պատմիչը: - Սեպուհ գունդն ազատաց ելեալ ի հայրենեաց,

16. «Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 201:  
 17. «Սամուէլի Բահանայի Անեցոյ հաւաքմունքի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 104:  
 18. «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցոյ», Երևան, 1963, էջ 55:



անկեալ ի ճոխութենէ, մոնչէն ուր եւ են իրրեւ զկորիւնս առիւծոց ի խշտիս իւրեանց: Արքունական ապարանքն աւերակ եւ անմարդի: Մարդաբնակ աշխարհն թափուր ի բնակչուց»: <sup>19</sup> Հայերին տեղահանելու եւ Հայաստանը պաշտպանական ուժից զրկելու հարցում բիւզանդացիներին տուած իր գնահատականում աւելի խիստ է Մ. Ուռհայեցին: «Սակայն Հոռոմք, - գրում է նա, - յայն ջանս ջանացան, որ լուր (զուր) զպարիսպ ամրութեան տանս Հայոց քակեալ կործանեցին... եւ զՊարսիկք (սելջուկ թուրքերը- Վ.Մ.) անտէր տեսին զամենայն արեւելք. եւ յայնժամ մեծաւ զօրութեամբ զօրացան այլազգիքն, որ ի մէկ տարւոյ հասն մինչ ի դուռն Կոստանդնուպոլսի եւ առին զամենայն աշխարհն Հոռոմոց»: <sup>20</sup>

Սելջուկները առաջին անգամ Հայաստան մտան 1048 թ.: Վասպուրականի վրայով անցնելով Բասէն՝ նրանք քարուքանդ արեցին 24 գաւառ եւ ապա մեծ աւարով ու գերիներով ետ դարձան Պարսկաստան: <sup>21</sup> Երկրորդ արշաւանքի ժամանակ (1048-1049 թթ.) սելջուկների աւերածութիւնները տարածուեցին մինչեւ Խաղտեաց գաւառ՝ արեւմուտքում, մինչեւ Սպեր եւ Տայք՝ հիւսիսում, մինչեւ Տարօն եւ Հաշտենից գաւառ եւ Խորձայնի անտառ՝ հարաւում: Այս երկրորդ արշաւանքի ժամանակ մոխրակոյտերի է վերածուում Արծնը՝ կորցնելով 150․000 մարդ: <sup>22</sup>

1054 թ. Հայաստան է ներխուժում Տուղրիլը՝ «զազանն մահաշունչ արիւնարբու եւ մարդախոշոչն» (Լաստիվերտցի): Կողոպտելով երկրի հիւսիսային եւ կենտրոնական շրջանները, Տուղրիլի զօրքերը մեծաթիւ գերիներով եւ աւարով ետ քաշուեցին: Ամենաճակատագրականը, թերեւս առաւել սահմուկեցուցիչը, Ալփ-Արսլանի արշաւանքն էր 1064 թուականին: Սելջուկները գրաւեցին Անին եւ հիմնադրեցին այն: «Անդ էր տեսանել զվիշտս եւ զտանգնապս իւրաքանչիւր հասակի, - ասում է Ա. Լաստիվերտցին. - զի՛ր գրկաց մարցն յափշտակեալ լինէին մանկուք անողորմաբար զքարի հարեալ, եւ մարքն արեամբ եւ արտասուօք զմանկունս իւրեանց թանային. զհայր եւ զօրդի մի սուր խողխողէր... զի լցաւ քաղաքն լի ծայրիւ եւ ծայրիւ, եւ ճանապարհ էր մարմին սպանելոցն. զի ի բազմութենէ կոտորելոցն եւ յանթուելի դիականացն՝ վտակն մեծ, որ անցանէ առ քաղաքաւն, ներկանէր արեամբ. եւ գազանք վայրի եւ ընտանի՝ եղեն գերեզման դիականացն, վասն զի ոչ գոյր որ թաղէր եւ հարկաւոր հողովն ծածկէր զխողխողեալսն»: <sup>23</sup>

Սելջուկեան արշաւանքների հետեւանքով առաջացած ծանր դրութեան հետեւանքով հայերի՝ դէպի Բիւզանդիա կատարուող աւանդական գաղթ նոր չափերի է հասնում: Ս. Անեցու վկայութեամբ, 1064 թ. Անիի եւ շրջակայքի

19. Լաստիվերտցի, էջ 60:  
 20. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 135-136:  
 21. Լաստիվերտցի, էջ 65:  
 22. Ուռհայեցի, էջ 102-103:  
 23. Ա. Լաստիվերտցի, էջ 136:

կենդանի մնացած բնակիչները կամովին փախչում են դէպի Բիւզանդիա: <sup>24</sup> 1064 թ. Վասպուրականի Սենեքերիմ թագաւորի օրինակին է դիմում Կարսի Գագիկ թագաւորը, որը բիւզանդական կայսր Դուկասին գիջելով իր թագաւորութիւնը, փոխարէնը ստանում է Մամադաւը (Կիլիկեան Տաւրոսում), Լառիան, Ամասիան, Կոմնանը եւ հարիւր գիւղ եւ իր ժողովուրդով հանդերձ տեղափոխում է այնտեղ: <sup>25</sup>

9-11-րդ դարերում Հայաստանից հեռացած բնակչութեան մի հատուածը աստիճանաբար անցաւ Կիլիկիա եւ այնտեղ հաստատուած իր ազգակիցների հետ հիմք դրեց հայկական պետականութեանը: Գաղթական հայութեան ստուարաթիւ հոսանքներ շարժուեցին Կ. Պոլիս, Բալկաններ, Մերձդանուբեան տարածքներ, Պոնտոսի եւ Կովկասի վրայով՝ Ղրիմ, ինչպէս նաեւ Պարսկաստան, Միջին Ասիա եւ անգամ Զինաստան: Նկատելի թիւ էին կազմում նաեւ այն հայերը, որոնց արարները աստիճանաբար քշել էին Եգիպտոս, Պաղեստին եւ Ասորիք: Սրանց մի մասն էլ, 11-րդ դարից սկսած, կամովին, տնտեսական կապերի ազդեցով, գաղթել էր Վերին Եգիպտոս: Նշուած շրջաններում 11-րդ դարում հայերի թիւն այնքան էր մեծացել, որ Գրիգոր Բ. Վկայասէր Կաթողիկոսը անհրժեշտ համարեց Պաղեստինի, Ասորիքի եւ Եգիպտոսի հայերի համար առանձին եպիսկոպոսութիւններ հիմնել: <sup>26</sup>

Սակայն բիւզանդական կղերը կայսրութեան տարածքներն անցած հայերի նկատմամբ եւս շարունակում էր հետապնդման քաղաքականութիւնը: Թէ կղերը եւ թէ պետական վարչակազմը կառուած էին մնացել հակահայկական իրենց նախկին քաղաքականութեանը նոյնիսկ առաջացած խստիւս անբարենպաստ քաղաքական պայմաններում, երբ սելջուկները սկսել էին շարժուել կայսրութեան փոքրասիական տարածքների խորքերը: Այդ քաղաքականութեան կորստաբեր հետեւանքները նաեւ հենց բուն կայսրութեան համար իրենց երկար սպասել չտուեցին եւ նպաստեցին սելջուկների առաջնադասումը: Յենուելով բիւզանդական իսկ աղբիւրների վրայ, Հ. Գելցերը այս աղբրով նկատում է. «Եօթերորդ եւ յետագայ դարերի բոլոր տխուր հետեւանքները ոչ մի ազդեցութիւն չունեցան յոյն հոգեւորականութեան վրայ, որը ոչինչ չէր սովորել եւ ոչինչ չէր մոռացել: Բնորոշ է, որ տակաւին շարաբաստիկ Ռոման Դիոգենեսը (1067-1071 (Արեւելք) կատարուելիք իր արշաւանքի նախօրեակին երզում տուեց վերադառնալուց յետոյ ոչնչացնել ամբողջ հայկական հաւատը, եւ այդ պատճառով էլ բոլոր հայ վարդապետները աղբրսագին աղօթում էին Աստծուն, որպէսզի կայսրը զլիսովին ջախջախուի, ինչպէս անհաւատ Յուլիոսը, որին անիծել էր սուրբ Վասիլիոսը: Հայոց այդ յուսահատ վիճակը, որը զրգուել էր յունական անմիտ կրօնական կառավարչութեան կողմից, մեզ հնարաւորութիւն է տալիս հասկանալու սելջուկների յաջողութիւնների պատճառները»: <sup>27</sup>

24. Սամուէլ Անեցի, էջ 109:  
 25. «Հատումն պատմութեան Վարդանայ վարդապետի յուսարանեալ», 1862, Վենետիկ, էջ 102:  
 26. «Հայրենիք», 1926 մայիս, էջ 33, յուլիս, էջ 123:  
 27. Gelzer. նշուած աշխ., էջ 1004-1005:



1071 թ. Մանազկերտի ճակատամարտը փաստորէն բիւզանդական կայսրութեան կարապի երզը հանդիսացաւ. «Թէեւ նրա (ճակատամարտի - Վ.Մ.) արդիւնքները իրենց բոլոր սարսափներով դեռեւս չէին զգացուած, սակայն Փոքր Ասիայի արեւելեան մասերը կայսրութեան համար ընդմիշտ կորած էին, եւ թափառաշրջիկ թուրքը հին հռոմէական փառքի փլատակների վրայ խփել էր իր վրանը»:<sup>28</sup>

Հայաստանից 7-11-րդ եւ նոյնիսկ 12-13-րդ դարերին կատարուած արտագաղթի առաջնորդ ուժերից մէկը, թերեւս օտար ներխուժումներից ոչ պակաս զօրութեամբ, կրօնական հակամարտութիւնն էր հայ քաղքեղոնականների եւ հակաքաղքեղոնականների միջեւ: 8-9-րդ դարերում եղան պահեր, երբ դժուար էր կռահել, թէ կողմերից ո՞րն է յաղթելու, որովհետեւ երկուսն էլ յաղթանակի հասնելու համար օգտագործում էին բոլոր միջոցները, այդ թուում նաեւ օտար դաւանակիցների՝ յոյների, վրացիների եւ ասորիների աջակցութիւնը:<sup>29</sup> Սակայն աստիճանաբար հակաքաղքեղոնականութիւնը տեղական եկեղեցական աւանդոյթների շնորհիւ յաղթեց եւ վերածուեց ազգային եկեղեցու: Աւելի ուշ հայ հակաքաղքեղոնական եկեղեցու ազգայնացման հետեւանքով հայ քաղքեղոնականների մօտ գնալով զօրանում է հակառակ երեւոյթը՝ ապազգայնացումը, որը հայ ժողովուրդին մեծ հարուած հասցրեց թէ քանակական եւ թէ բարոյական առումով: Յանուն իրենց դաւանանքի հայ քաղքեղոնականները բռնում են գաղթի եւ ձուլման ուղին, դադարում իրենց հայ համարել:<sup>30</sup> Անջատուելով ազգակիցներից, նրանք շարժում են երեք ուղղութեամբ՝ Վրաստան, Բիւզանդիա եւ Ասորիք՝ իրենց դաւանակիցների մօտ: Կորցնելով ոտքի տակ հայրենի հողը, հայ քաղքեղոնականները վերջիններիս հետ տեղափոխուում էին նրանց նախընտրած շարժման վայրերը. վրացիների հետ՝ Բուլղարիա, յոյների հետ՝ Պաղեստին, սիրիացիների հետ՝ Արեւելք: Հայ քաղքեղոնականները նախընտրում էին անգամ Հռոմը, որովհետեւ քաղքեղոնականութիւնը կաթոլիկութեան հետ մերձեցման աւելի շատ աղբրաներ էր տեսնում:

Երկրի ներսում իրենց իսկ ազգակիցների կողմից ապազգային դիտուած քաղքեղոնիկ հայ մասսան զգալիապէս խթանեց արտագաղթը: Դեռ Անիի անկումից առաջ սրանք բռնել էին դէպի ուսական շրջաններ, Վուլգա, Բուլղարիա, Միջին Ասիա ու Կիլիկիա տանող գաղթի ուղին:

Ինչպէս բոլոր ժողովուրդների, այնպէս էլ հայերի մօտ արտագաղթերը յարուցում էին ժողովրդա-հասարակական հոգեբանութեամբ, որն այն ժամանակներում որոշում էր կրօնական գործերով, եւ դաւանաբանական իտէալների իրականացմանը զոհաբերում էր ազգային բարօրութիւնը, կրօնական շահախնդրութիւնները վերջ էին դասուում ազգային պատրիոտիկայից: Եթէ դաւանանքի պահանջները հայրենիքում ոտնահարում

28. Նոյն տեղը, էջ 1010:

29. Н. Марр, Аркаун, Мангольское название христиан, СПб, 1905, с. 5:

30. Նոյն տեղը, էջ 28:

էին, ապա կրօնական բարոյականութիւնը լիովին արտօնում էր թողնել այդպիսի հայրենիքը եւ մեկնել դաւանակից կամ հանդուրժող երկրներ:<sup>31</sup> Կրօնաբարոյական նման մտայնութիւնը լիովին արդարացնում էր արտագաղթի երեւոյթը նման պարագաներում, այն դարձնում էր հիմնաւորուած պահանջ՝ յանուն «իսկական» քրիստոնէական հաւատի, ընդ որում «իսկականը» իրարարանչիւր կողմ մեկնում էր իւրովի: Տակաւին Ղազար Փարպեցին էր նման ողով յանձնարարականներ տալիս. «Այնուհետեւ կա'մ կեանք, ծառայելով ճշմարիտ հաւատոյն Քրիստոսի, իւր ծնունք առաջին նորոգութեամբ ի ձեռն ամենասուրբ վարդապետութեան նահատակին Գրիգորի եւ նորին զաւակի, եւ կա'մ թողեալ զաշխարհ՝ գնամք իւրաքանչիւր յօտարութիւն կնաւ եւ որդւոք, ապաւինեալք եւ հաստատեալք ի բուն կենարարի Փրկչին, որ ասէ թէ՛ «Յորժամ հալածեսցեն զձեզ ի քաղաքէս յայսմանէ՛ փախձիք ի միւսն»:<sup>32</sup>

Հայոց արտագաղթի ուղիները որպէս կանոն համընկնում են առեւտրական մեծ ճանապարհներին՝ Դերբենդի կիրճով դէպի հիւսիս բուլղարների մօտ, դէպի Արեւմուտք՝ Ազովի ծովի մօտ եւ նաեւ՝ դէպի Արեւելք՝ Չինաստան: Մոնղոլական շրջանում Ոսկէ Հորդանով Չինաստան տեղափոխուած քրիստոնէաների մէջ նկատելի թիւ էին կազմում յունադաւան հայերը: Սրանք Միջին Ասիա եւ Չինաստան էին անցնում նաեւ Պարսկաստանի վրայով՝ թէ մոնղոլների ժամանակ եւ թէ մինչ այդ: Խնդիրն այն է, որ Պարսկաստանը չէր հանդուրժում հայ քաղքեղոնականներին իրեն ենթակայ Հայաստանում՝ Բիւզանդիային սահմանակից լինելու հետեւանքով, բայց նրանց լիովին ազատութեամբ էր օժտում ոչ միայն իր տարածքով շարժուելու Միջին Ասիա ու Չինաստան, այլեւ հաստատուելու իր իսկ արեւելեան շրջաններում: Այդ առիթով Յովհաննէս Դրասխանակերտցին գրում է. «Ընդ որ զօրացեալ Խոսրովայ՝ յաւէտ իմն հաճոյանայր Սմբատ յաչս նորա, եւ բազմօք ոմամբք, ընծայական օժտութեամբք գնա պատուասիրեալ՝ տա նմա զմարգպանութիւն Վրկանայ: Իսկ Սմբատայ երթեալ հասեալ յաշխարհն յայն՝ գտանէ անդ զգիտեալ ազգս ի Հայաստանեայց եւ բնակեցուցեալս ի Թուրքեստան կողմանէ մեծի անապատին, որ Սագաստան անուանի, զլեզու իւրեանց մոռացնեալ եւ դպրութիւն նուազեալ յոյժ: Որոց եւ տեսեալ զՍմբատ՝ յաւէտ իմն խրախ լինէին, եւ ի հրամանէ նորան դարձեալ աշակերտեալ ըստ հայերէն հազագացս սիդորայիցն զլեզուն նորոգէին. եւ ասեալ դպրութիւն հայերէն՝ հաստատէին ի հաւատս: Եւ ապա գերէցումն ի նոցունց իսկ՝ Արէլ անուն, եպիսկոպոս նոցա հրամայէ կացուցանել մեծի հայրապետին մերոյ Մովսէսի: Եւ այսպէս վիճակի մեծի աթոռոյ Սրբոյն Գրիգորի ի հեռաստան երկրի գնոսա կազմէ մինչեւ ցայսօր ժամանակի»:<sup>33</sup>

Ուրեմն, 10-րդ դարում Պարսից պետութեան հիւսիս-արեւելեան շրջաններում գոյութիւն ունէր հայկական եկեղեցական թեմ, որը ենթարակում էր

31. Նոյն տեղը, էջ 47:

32. «Ղազար Փարպեցոյ պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1904, էջ 50:

33. «Յովհաննէս Կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 69-70:



ազգային եկեղեցուն: Այդ ժամանակների մասերը Հայկական եկեղեցի կար խորասանում:<sup>34</sup> Վրկանաց երկիր (Հիւսիսային Պարսկաստան) հայերը աքսորուել էին բիզանդական սահմաններից ու ասորական երկրամասից եւ նրանք բոլորը քաղքեղոնականներ էին, որոնց գոյութիւնը իր արեւմտեան սահմաններում Պարսկաստանը համարում էր վտանգաւոր:<sup>35</sup>

Հաւանաբար, 9-11-րդ դարերում Հայկական արտագաղթների առաջնեկները Հայ քաղքեղոնականներն էին, եւ քանի դեռ սրանք չէին կորցրել իրենց կապերը Հայրենիքի հետ, նրանք շարունակում էին խաղաղ միջնորդի դեր՝ իրենց հայրենակիցներին Ձինաստանի հետ ծանօթացնելու գործում:

Հայկական արտագաղթերը չընդհատուեցին նաեւ սելջուկեան եւ մոնղոլական ներխուժումների միջեւ ընկած ժամանակաշրջաններում, 11-13-րդ դարերում: Այդ շրջանում կատարուած արտագաղթերը նկատելիորէն պատճառաբանուում էին նաեւ առեւտրատնտեսական նկատառումներով: Հայաստանից տարբեր երկրներ առեւտրական ուղիներով ընթացող բնակչութեան տեղաշարժերի ուղեցոյցը նաեւ Հայ վաճառականութեան արտագնայ գործունէութիւնն էր, երբ նրա ետեւից, նրա բացած ուղիներով երկրից հեռանում էին նաեւ արհեստաւոր ու երկրագործ դասերը եւ հաստատուում նրա իսկ ընտրած տեղերում՝ իրենց գործունէութեան կիրարկման առաւել նպաստաւոր պայմաններ գտնելու ակնկալութեամբ:

13-րդ դարի 30-ական թուականները Հայաստանի համար բնորոշ են նաեւ Հայկական նոր արտագաղթերով, որոնք իրենց ընդգրկմամբ եւ ծաւալով գերազանցում էին բնակչութեան՝ անգամ սելջուկեան շրջանի արտահոսքին: Դա արդէն անմիջականորէն կապուած էր Հայաստանում մոնղոլական արշաւանքների հետ: Մոնղոլների աշխարհաւեր եւ տարածածաւալ յաջողութեան պատճառը ոչ այնքան նրանց ուժի մէջ էր, որքան նրանց նուաճած երկրների ներքին թուլութեան եւ մասնատուածութեան մէջ: Մոնղոլական զօրաբանակը Չարմաղանի գլխաւորութեամբ, բաժանուելով մի քանի մասի, սկսեց Հայաստանի նուաճումը, որը նրանք իրականացրին 1236-1243 թուականների ընթացքում եւ իրականացրին ամենադաժան միջոցներով: «Անդ էր տեսանել զսուրս յանխնայ կոտորել զարս եւ զկանայս, զբրիտասարդս եւ զմանկունս, զծերս եւ զպառաւունս, զբախկոպոսունս եւ զբրիցունս, զսարկաւազունս եւ զղպրիս: Մանկունք ստնդիայք զքարի հատեալ, եւ կուսանք գեղեցիկք խայտառակեալք եւ գերեալք...»:

Լցաւ երկիրն ամենայն դիակամբք մեռելոց... երկիր թափուր մնաց ի բնակչաց իւրոց, եւ չրջէին ի նմա որդիք օտարաց», - բողոքում է դէպքերին ականատես Կ. Գանձակեցին:<sup>36</sup> Այնուհետեւ հարկադրման եւ ռազմական նկատառումներով 1254 թ. մոնղոլները Հայաստանում անցակցրին աշխարհագիր, զանազան հարկեր նշանակելով 16-60 տարեկան մարդկանց

34. Ն. Մառ, նշուած աշխ., էջ 49:  
 35. Նոյն տեղը, էջ 50:  
 36. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1961, էջ 239-240:

վրայ, միաժամանակ երկրի ընդերքի ամբողջ հարստութիւնը վերցնելով իրենց ձեռքը:

Մոնղոլների ռազմական հատուածները, նրանց օրով գնալով սաստկացող բռնութիւններն ու հարկերը, ֆիզիկական ոչնչացման վտանգը խթանեցին բնակչութեան փախուստն ու տեղաշարժը Հայաստանից: Միաժամանակ մոնղոլներն իրենք եւս իրականացնում էին Հայ բնակչութեան արտագաղթեցում: Ոսկէ Հորդայի խաները, օրինակ, Արեւմտեան իլխանութեան դէմ մղած երկարատեւ պայքարում, որը շարունակուեց գրեթէ մի ամբողջ հարիւրամեակ (1252-1350 թթ.), քանիցս կատարեցին հայերի բռնագաղթեցումներ եւ նրանց բնակեցում Ոսկէ Հորդայում՝ տեղում արհեստների ու առեւտրի զարգացումը խթանելու համար: Հայ բնակչութեան մի մասը հիւսնաւորուեց Վուլգայի ափերին, իսկ 13-րդ դարի վերջերին - 14-րդ դարի սկզբներին հեռացաւ այնտեղից՝ սկզբում անցնելով մերձագոլեան շրջաններ, իսկ 14-րդ դարի 30-ական թուականներին՝ Ղրիմ: Հայաստանից հեռացած բնակչութեան մի մասն էլ ուղղութիւն վերցրեց դէպի գաղթի աւանդական երկրներ՝ Փոքր Ասիա, Բալկաններ, մերձաւոր արեւելեան եւ հիւսիսկովկասեան շրջաններ, ինչպէս նաեւ էգէեան կղզիներ:

Նայած քաղաքական իրավիճակին եւ առեւտրատնտեսական հանգամանքներին՝ հայերը արտագաղթում էին ոչ միայն բուն Հայաստանից. նրանք վերաբնակուում էին նաեւ իրենց կողմից խիտ բնակեցուած մի վայրից միւսը: 14-17-րդ դարերին ղրիմահայ գաղութը այն կապող օղակն էր, որի վրայով Հայկական գաղթականական շատ համայնքներ անցնում էին Մուղուվա, արեւմտաուկրահինական եւ լեհական, ինչպէս նաեւ ռումինա-հունգարական տարածքներ: 14-րդ դարի երկրորդ կէսին, Կիլիկեան Հայկական պետութեան անկման եւ լեւանտեան առեւտրի վերելքի կապակցութեամբ, առեւտուր, որն արդէն ընթանում էր սեւծովեան նեղուցներով, պատկառելի թուով հայեր անցան միջերկրածովեան երկրներ, Ղրիմ, Իտալիա եւ այլուր:

Հայկական արտագաղթերին առիթ ու պատճառ են դարձել նաեւ այնպիսի գործօններ, ինչպիսիք էին տարբերային աղէտները, հողագործութեան, արհեստների եւ առեւտրական ձեռնարկութեան զարգացման համար երկրում ամենատարրական պայմանների վերացումը եւ այլն: Այդ պատճառով էր նաեւ որ արտագաղթն ընդգրկում էր բնակչութեան բոլոր խաւերն անխտիր՝ երկրագործից մինչեւ խոշոր վաճառականը, որոնց առաջացած իրավիճակը դնում էր գրեթէ միեւնոյն սոցիալական աստիճանի վրայ՝ այնպիսի մարդկանց դրութեան մէջ, որոնք զրկուել էին գոյամիջոցներից:

17-րդ դարի սկզբներին Թուրքիան ու Հայաստանն ալեկոծած ջելալիների շարժումը եւ ծայր առած տեւական ու մահաշունչ սուլը ստիպեցին տասնեակ հազարաւոր հայերի, մանաւանդ Արեւմտեան Հայաստանից, նորից դիմել օտարութեան: Հայաստանի բազմաթիւ գաւառներն ընդգրկած այս շրջանի արտագաղթերը հիմնականում ընթանում էին դէպի Արեւմուտք՝ Արեւմտեան Ուկրահինա, Լեհաստան, Ռումինիա, Մուղուվա, Ղրիմ, Պոնտոս եւ այլուր: Առաքել Դաւրիժեցին այս առթիւ գրում է. «Արդ՝ եթէ յայսմ պատճառէ եւ թէ



կանխաւ պատմեալ մեծ սովին եւ Զալալոց պատճառէն, ամենայն ազգն Հայոց ելեալ վտարանդիք եղեն յիւրաքանչիւր տեղաց, ի հայրենի բնակութեանց եւ յաշխարհաց, եւ տարադէմ գնացեալ ընդդէմ երեսաց՝ ցիր եւ ցան եղեալ սփռեցան ընդ ամենայն յաշխարհ, ի Կիպրոս, ի Կոստանդուպօլիս, ի քաղաքս, որք շուրջ են զնովաւ, յՈւռումէլի, ի Բուղղան, յերկիրն Իլախաց, ի կղզին Կաֆայու, ի ծովեզերան Պոնտոսի»<sup>37</sup> Զալալիների սարսափից փախած հայերի թիւը շատ էր մանաւանդ Ղրիմում, ուր նրանք անցել էին Պոնտոսի եւ Պոլսի վրայով՝ 1605 թուականին<sup>38</sup>։

Թուրք-պարսկական պատերազմների շրջանում հայ բնակչութեան արտագաղթները պարբերական բնոյթ էին ընդունել, իսկ 17-րդ դարի սկզբին դրանց հետեւանքով ուղղակի ամայացան մի շարք գաւառներ։ Շահ-Աբասի զօրքերը բռնագաղթեցրին հարիւր հազարաւոր հայերի եւ նրանց քչեցին Պարսկաստանի խորքերը։ Դա մեծ սուրբիւնի ժամանակաշրջանն էր։ Բայց հենց այդ հայերն էին, որ շուտով հիմնեցին նշանաւոր Նոր Զուղան եւ մի քանի տասնեակ հայկական գիւղեր բուն Պարսկաստանում եւ Պարսկահայքում։ Տասնամեակներ անց տնտեսապէս զօրացած պարսկահայ վաճառականութեան ծաւալած գործունէութեան հետեւանքով Հնդկաստան գաղթած հայերն էին, որ սկզբնաւորեցին եւ տնտեսական ու ազգային մշակութային հզօր ազդակ հաղորդեցին հնդկահայ գաղթօջախներին։

18-րդ դարը հայ ժողովուրդի պատմութեան մէջ նշանաւոր էր նաեւ հայ բնակչութեան տեղաշարժերով, ընդ որում՝ ոչ միայն բուն Հայաստանից, այլեւ այլ երկրներից։ Յատկապէս աչքի էր ընկնում հայ բնակչութեան ներհոսքը ուսական կայսրութեան տարածքները՝ Հիւսիսային Կովկաս, Աստրախան, Մոսկուա, Պետերբուրգ, Նովոռոսիա։ Ռուսաստան գաղթող այս հայութեան մի զգալի մասը գալիս էր պարսկական եւ թուրքական շրջաններից։ Այս հարիւրամեակում հայ բնակչութեան արտագաղթը կապուած էր ոչ միայն Արեւելեան եւ Արեւմտեան Հայաստանի քաղաքական ու սոցիալ-տնտեսական ծանր դրութեան հետ. այն անմիջական աղբրսներ ունէր նաեւ Ռուսաստանի, Թուրքիայի եւ Պարսկաստանի արտաքին քաղաքական շահախնդրութիւնների, նրանց միջեւ տեղի ունեցած ռազմական հակամարտութիւնների հետ։

18-րդ դարի 30-40-ական թուականներին, նոյն դարի 20-ական թուականներին երկրորդ կէսից հայ ազգագրական շարժումների անկմանը զուգընթաց, թուրք-պարսկական ճնշման սաստկացման պայմաններում բազում հայ ընտանիքներ հարկադրուած էին թողնել իրենց հայրենի օջախները եւ վերաբնակուել նորերես Ռուսաստանին անցած կովկասեան տարածքները։ Դրան մեծապէս նպաստում էր հայ ժողովուրդի նկատմամբ Ռուսաստանի կողմից վարուող հովանաւորական քաղաքականութիւնը, որի սկիզբը դեռ դրել էր Ալեքսէյ Միխայլովիչ Ռոմանովը՝ 17-րդ դարում։ Հայաստանից եւ Անդրկովկասից կատարուած այդ գաղթականութիւնների հետեւանքով Կովկասում

37. «Պատմութիւն Առաքել վարդապետի Գարիժեցոյ», Վաղարշապատ, 1896, էջ 88:  
38. Գրիգոր Գարանդեղի, Ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1915, էջ 51:

սկզբնաւորուեցին Կիզլեարի, Մոզդուկի, Սուրբ Խաչի հայկական գաղութները։

Հայ բնակչութեան մեծ տեղաշարժ կատարուեց 1768-1774 թթ. ուս թուրքական պատերազմից յետոյ։ Որպէս հետեւանք պատերազմին յաջորդած այն դիւանագիտական պայքարի, որ մղուած էր Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ Ղրիմի թերակղզու համար, 1778 թ. հայերը դուրս բերուեցին Ղրիմից։ 1779 թ. նրանք Դոնի ափերին հիմնադրեցին նշանաւոր Նոր Նախիջեւան քաղաքը՝ իր շրջակայ գիւղերով։ Շատ չանցած նոյն բախտին արժանացան Բեսարաբիայի հայերը. այս անգամ արդէն 1787-1791 թթ. ուս-թուրքական պատերազմից յետոյ։ Ռուսական կառավարութեան նիւթական օգնութեամբ նրանք հեռացան Թուրքիային ենթակայ տարածքներից եւ 1792 թ. հիմնադրեցին Գրիգորիոպոլ հայկական գաղութ-քաղաքը։

Գրեթէ ամբողջ 18-րդ դարում հայերը մեծ ու փոքր գաղթականական հոսանքներով Անդրկովկասից եւ Պարսկաստանից տեղափոխուած էին Աստրախան։ Այդ վերաբնակումների հիմքում առեւտրատնտեսական գործունէութեան համար նպաստաւոր պայմանների առկայութիւնից զատ ընկած էին նաեւ Ռուսաստի հետ քաղաքական մերձեցման, նրա օգնութեամբ թուրք-պարսկական լծից ազատագրման ակնկալութիւնները։ Միաժամանակ նշուած ժամանակաշրջանում հայերի թիւը գնալով շատանում էր Մոսկուայում եւ Պետերբուրգում։

Իւրաքանչիւր հարիւրամեակ հայկական արտագաղթերում մտցնում էր իր «ուղղումներն ու կերպափոխութիւնները», երեւոյթի էութիւնը, սակայն, թողնելով նոյնը՝ Հայաստան աշխարհի մարդաթափ դառնալը։ Այս առումով բացառութիւն չկազմեց նաեւ 19-րդ դարը, թէեւ պիտի նշել, որ այս հարիւրամեակում եղան նաեւ պահեր, երբ կատարուեց հակառակ շարժընթացը՝ Հայաստան վերադարձան իր նախնի բնակիչները՝ պարսկահայերը, որ հետեւանք էր 1826-1828 թթ. ուս-պարսկական պատերազմի։ Նոյնը չի կարելի ասել 1830 թ. արեւմտահայերի՝ դէպի Արեւելեան Հայաստան եւ Անդրկովկասի մի շարք շրջաններ կատարած գաղթի մասին, որովհետեւ այդ գաղթի պատճառով ամայանում էին արեւմտահայկական շրջանները՝ արտաքուստ նոյնական թուացեալ երեւոյթները իրենց էութեամբ բոլորովին այլ հետեւանքներ էին թողնում։

Խնդիրն այն է, որ այս հարիւրամեակում տեղի ունեցած չորս ուս-թուրքական եւ երկու ուս-պարսկական պատերազմները անմիջական ազդեցութիւն էին գործում նաեւ հայ բնակչութեան տեղաշարժների վրայ՝ թէ արտագաղթելու եւ երկրում մնալու եւ թէ Հայաստանի մի հատուածից միւս վերաբնակուելու առումով։ Այս հանգամանքը պայմանաւորուած էր նրանով, թէ ուսական զէնքի եւ նրան նեցուկ դարձած հայ կամաւորական ջոկատների յաղթանակը կամ ժամանակաւոր անյաջողութիւնները քաղաքական ինչպիսի իրադրութիւն էին ստեղծում բուն Հայաստանում՝ առաջին հերթին ժողովուրդի ֆիզիկական գոյութեան ապահովուածութեան, ապա նաեւ նրա գոյատեւման տնտեսական միջոցների հնարաւորութեան առումով։ Եւ այսուհանդերձ՝ անցած հարիւրամեակում Հայաստանից կատարուած արտագաղթերի մէջ



առանձնացնենք երկու երեւոյթ՝ պանդխտութիւնը եւ 1890-ական թուականների ջարդերի հետեւանքով ծայր առած փախստականութիւնը:

Պանդխտութեանը ծնունդ տուողն ու սնուցողը տնտեսական ծանր վիճակն էր: Սակայն այդ ընդհանուր պատճառը նոյնական չէր Արեւելեան եւ Արեւմտեան Հայաստանի համար: Վերացական առումով վերցրած՝ նիւթական ծանր պայմանները ստիպում էին հայ ժողովուրդի թէ մէկ եւ թէ միւս հատուածին դիմել պանդխտութեան՝ ընտանիքի գոյատեւման համար միջոցներ որոնելու եւ երկիր վերադառնալու անհողողով վճռով: Բայց որպէս կանոն այդ վճիռը, պարագաների հարկադրմամբ, մնում էր անկատար:

Արեւմտահայկական գաւառներում, տնտեսական ծանր պայմաններից առաւել, պանդխտութիւնը կապուած էր քաղաքական անապահով վիճակի, այն արհաւիրքների ու կոտորածների հետ, որոնք դարձել էին արեւմտահայ գիւղացիութեան կեանքի առօրեայ ուղեկիցը: Այդ պատճառով էլ արեւմտահայոց պանդխտութիւնը մեծ մասամբ ստանում էր փախուստի բնոյթ՝ որպէս թուրք հարկահաններից եւ քրտական աւազակային յարձակումներից փրկուելու միջոց: Այս իրողութեան մէջ էին թաքնուած արեւմտահայ պանդխտութիւնը արդարացնող պատճառները, որոնք, սակայն, ամենեւին տարածելի չէին արեւելահայոց պանդուխտների նկատմամբ, որտեղ որպէս պանդխտութեան շարժառիթ մնում էին տնտեսական ծանր պայմանները, ինչպէս նաեւ օտար ակերտում նիւթապէս բարւոքուելու ձգտումը:

Սակայն երկու դէպքում էլ պանդխտութիւնը մնում էր իբրեւ երկրաւեր մի շարժում, որը իր յարաճուն միտումների մէջ սպառնում էր ամայացնել հայկական ամբողջ գիւղեր եւ գաւառներ: Պանդխտութիւնը սկսուեց հիմնականում 19-րդ դարի 30-40-ական թուականներին՝ Ռուսաստանում եւ Թուրքիայում ապրանքադրամային յարաբերութիւնների զարգացմանը համաքայլ, երբ նրանց նշանաւոր քաղաքներում առաջանում էր դրսեկ էժան ֆիզիկական աշխատանքի կիրառման պահանջ: Պանդխտութեան դիմած հայերը Կ. Պոլսում, Օդեսայում, Սեւաստոպոլում, Պաքում, Բաթումում, Մարսելում կատարում էին ամենածանր, սեւ ու չարքաշ աշխատանքները՝ ինչ որ չափով ապրուստի միջոցներ ճարելու յոյսով, որը որպէս կանոն ի դերեւ էր ելնում, եւ պանդուխտների մեծամասնութիւնն այլեւս չէր վերադառնում հայրենիք, իսկ այնտեղ թողած նրանց ընտանիքները պարզապէս քայքայւում էին: Հայրենիք վերադառնալու առթիւ Կ. Պոլսի պատրիարքի եւ այլոց յորդորները պարզապէս մնում էին ձայն բարբառոյ յանապատի:

1877-1878 թուականից յետոյ պանդխտութիւնն աւելի մեծ չափեր ընդունեց, ընդգրկելով Վանի, Բաղէշի, Տիգրանակերտի, Քարաբերդի, Բալուայի, Քղիի, Երզնկայի, Կարինի եւ այլ հայկական գաւառներ: 1877 թ. միայն Վանից Կ. Պոլիս անցած հայերի թիւը հասնում էր 20 հազարի:<sup>39</sup> Տարիքային սանդղակով պանդուխտները բնակչութեան ամենաառողջ եւ

39. «Մշակ», 1877, քիւ 61:

աշխատունակ հատուածն էին կազմում՝ հիմնականում 20-25 տարեկան տղաներ, հազուադէպ դէպքերում՝ 35 տարեկան:

1877-1878 թթ. ուսու-թուրքական պատերազմից յետոյ Կարսի մարզի կազմուելով՝ աննախընթաց չափեր է ընդունում արեւմտահայ այլ շրջանների բնակչութեան ներհոսքը մարզ, ինչպէս նաեւ նրա վրայով տեղաշարժը դէպի Արեւելեան Հայաստան, Կովկաս եւ այլուր:

Շատ պանդուխտներ Բաթումի եւ Կ. Պոլսի վրայով անցնում էին Մարսէլ, իսկ այնտեղից էլ՝ Ամերիկա: 20-րդ դարի սկզբներին Ամերիկա եւ Կանադա գաղթող հայերի մէջ սկսում են նկատելի թիւ կազմել նաեւ արեւելահայերը: Այս շրջանում արդէն չկար հայկական որեւէ գաւառ, որը զերծ մնար պանդխտութիւնից. այն դարձել էր համազգային աղէտ թէ իր ընդգրկմամբ եւ թէ մանաւանդ վարակիչ հետեւանքներով: Եթէ Զանգեզուրից եւ Ղարաբաղից պանդուխտները հիմնականում մեկնում էին Բաքու կովկասեան եւ միջինասիական այլ քաղաքներ, ապա Շիրակից 1908 թուականին սկսուեց բնակչութեան մեծ արտահոսք դէպի Ամերիկա, արտահոսք, որը շարունակուեց մինչեւ 1914 թ.: Դրա հետեւանքով տասնեակ հազարաւոր շիրակցիներ տեղափոխուեցին Ամերիկա: Նրանք Ամերիկա էին մեկնում մեծ զրկանքների գնով, հիմնականում Մերձբալթիայի վրայով. գնացքով հասնում էին մինչեւ Լիէպայա նաւահանգիստը, իսկ այնտեղից մեկնում Ամերիկա:

Թուրքական կառավարութիւնն անցեալ դարի վերջերից միտում է հայ պանդխտութիւնը ծառայեցնել իր հակահայկական պլաններին. 1895-1896 թթ. կառավարութիւնը ջանում է իւրովի օգտագործել պանդխտութիւնը՝ Հայաստանը առանց հայերի թողնելու իր ծրագրերի կենսագործման համար: 1896 թ. սուլթանական կառավարութիւնը ընդունում է մի որոշում, ըստ որի Թուրքիայից հեռանալ ցանկացող հայերը պարտադիր կարգով՝ երաշխաւորով եւ պատրիարքարանի վաւերացմամբ, պէտք է ստորագրութիւն տային այլեւս Թուրքիա չվերադառնալու պարտաւորութիւն ստանձնելու մասին: Այդ ստորագիր փաստաթղթից երկու օրինակ յանձնւում էր իրաւասու յանձնա-ժողովին: «Այս պայմանով գաղթելու արտօնացեալներուն տրուելու անձագրին մէջ բացորոշօրէն դրուելու է սա խօսքը, թէ ետ այսորիկ պիտի չվերադառնան Օսմանեան երկիրները»:<sup>40</sup> Միաժամանակ, Թուրքիայից հեռացող հայերը համապատասխան մարմիններին այդ թւում նաեւ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանին պարտաւորագրեր էին տալիս թուրքական հպատակութիւնից հրաժարուելու մասին:

90-ական թուականների ջարդերը հարկադրեցին տասնեակ ու տասնեակ հազարաւոր հայերի դառնալ փախստականներ: Սրանց մի զգալի մասը, մարդկային մեծ կորուստների գնով, հասաւ Կովկաս, Բաթում եւ Սեւ Ծովի հիւսիս-արեւելեան եզերքները: Արեւմտահայաստանից հայերի արտագաղթը շարունակուեց ընդհուպ մինչեւ առաջին համաշխարհային պատերազմը եւ Մեծ

40. «Մշակ», 1896, քիւ 121:



Եղեռնը: 1915-1920 թթ. հարիւր հազարաւոր հայ փախստականներ, որոնց յաջողուել էր փրկուել կոտորածից, շարժուեցին երկու ուղղութեամբ՝ Մերձաւոր Արեւելք, արաբական երկրներ եւ Արեւելեան Հայաստան ու Կովկաս՝ իսկ վերջինիս վրայով ուկրաինական եւ ռուսական շրջաններ:

## EXODUS OF THE ARMENIAN PEOPLE IN THE VIth-XIXth CENTURY

VARDGES MICHAELIAN

### SUMMARY

As from the early Middle Ages the history of Armenia has become that of the many Armenians who emigrated from their Motherland. This requires deep study of the Armenian exodus, which throws light upon the phenomenon of Armenian settlements abroad.

The reason for the Armenian people's exodus can be followed both through external political situations and also socio-economic developments in Armenia itself.

The history of the Armenian exodus and the emergence of settlements began with the adoption of Christianity. Ideological unity is also a mainspring for the creation and existence of any settlement. For the Armenian settlements this kind of a mainspring was the Christian doctrine and the Church. Only after the adoption of Christianity did streams of Armenian refugees create united and viable settlements.

One of the main reasons why the Armenian people migrated was the invasion of foreign tribes into Armenia. Consequently, as a rule, groups migrated in their largest numbers during invasions by Arabians, Byzantines, Turks, Tartar-Mongolians, etc.

The exodus of Armenian people in XVIIIth to the XXth century was caused by the anti-Armenian policy composed and implemented by the Ottoman Government of Turkey in West Armenia. Besides foreign invasions there were a series of other reasons for this, such as vulnerable situations in the economy, religious contradictions, etc.



## ՈՒՐՈՒԱԳԾԵՐ ՀԱՅ-ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ

(7-18-ԲԴ ԴԴ.)

**Ռ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ**

Բրիտանական կղզիները տակաւին վաղ միջնադարում հայերին ծանօթ լինելու հարցը մինչեւ այժմ մնում է ոչ բաւարար ուսումնասիրուած: Մի շարք հեղինակներ (Ռ. Կիւպենկեանը, Ա. Ալպոյաճեանը, Ա. Աբրահամեանը, Ֆ. Հենրին) վկայակոչում են որոշ փաստեր, որոնք հաւաստում են, որ այդ ժամանակաշրջանում հայերի եւ կղզիների բնակիչների միջեւ տեղի են ունեցել որոշ շփումներ: Սակայն այդ փաստերը խիստ մեկուսի բնոյթ ունեն: Այդ կապերի մասին վստահելի հետեւութեան կարելի է գալ միայն պահպանուած բոլոր տուեալների համադրութեան միջոցով: Ուստի, անհրաժեշտ է քննարկել ոչ միայն այն սակաւթիւ յիշատակութիւնները, որոնք վկայում են հայերի Բրիտանական կղզիներում գտնուելու մասին, այլ նաեւ լուսաբանել Իրլանտիայի եւ Հայաստանի վաղ միջնադարեան ճարտարապետական յուշարձանների եւ մանրանկարչութեան որոշ կողմերի առնչութիւնները: Այդ համադրումը հնարաւորութիւն կը տայ աւելի ստոյգ որոշել դրանց միջեւ գոյութիւն ունեցած պատմական առնչութիւնների ժամանակաշրջանը:

Արեւմտեան Եւրոպայում հայերը յիշատակում են 7-րդ դ. ֆրանսիական ժողովրդական վիպերգութիւններում, որտեղ նրանք ներկայանում են որպէս Ֆրանսիայով եւ Իսպանիայով շրջագայող վաճառականներ:<sup>1</sup> Վերջիններս, որոնք յայտնուեցին Արեւմտեան Եւրոպայում 7-րդ դ. էլ աւելի վաղ պէտք է, որ իրենց ուշադրութիւնը դարձրած լինէին Բրիտանական կղզիների վրայ: Չէ որ դրանից շատ աւելի վաղ Իլլանտիան յայտնի էր որպէս Եւրոպայի կարեւորագոյն ոսկի արտահանող երկիր: Միեւնոյն ժամանակ 650 թ. սկսած ներկայիս Լոնտոնի տարածքում ծաղկում էր ապրում Լանդենուիկ քաղաքը:

1. «Էրեբունի» Լոնտոն, 38, Նոյեմբեր 1983, էջ 7:



Կարելի է ենթադրել, որ հայ վաճառականների այցելութիւնները Բրիտանական կղզիներ 7-րդ դ. եւ աւելի վաղ ժամանակաշրջանում կղզիների աշխարհագրութեան մասին տուել են իր ժամանակի համար այն իսկապէս գիտական տեղեկութիւնները, որոնք մէջ է բերում 7-րդ դ. հայ գիտնական Անանիա Շիրակացին իր նշանաւոր «Աշխարհացոյց» աշխատութեան մէջ: Նա գրում է. «Բրիտանիան երկու կղզիներ են, որոնք գտնւում են Հիւսիսային Ուկրանոսում, Իսպանիայից վերեւ: Արեւմտեան կղզու անունն է Եուբաոնիա (Heberinia): Նա ունի ճիւղաւորուած գարեհատի ձեւ: Այդտեղ կան 16 խոշոր գետեր եւ բազմաթիւ ժողովուրդներ: Իսկ արեւելեան կղզու անունն է Ալվիոն (Albion), որն աւելի մեծ է, քան առաջինը: Նա ունի բազմաճիւղ տղրուկի ձեւ: Կան այնտեղ 25 խոշոր գետեր եւ խիտ անտառներ: Այս կղզու շուրջը կան քառասունմէկ մանր կղզիներ, ինչպէս եւ Թունիս մեծ կղզին»:<sup>2</sup>

Կարելի է ենթադրել, որ շնորհիւ հայ վաճառականների այցելութիւնների եւ «սրբերի ու գիտնականների կղզու» մասին իրենց հաղորդած տեղեկութիւնների, այնտեղ յայտնւում են թափառաշրջող հայ վանականները: Իրլանտիայում քրիստոնէութիւն քարոզող հայ վանականների մասին կայ յիշատակութիւն իրլանտական հնագոյն աղօթքներից մէկում: «Իռլանդական սրբերի աղօթքում» յիշատակւում են Կորկախ Մոռի 717 եպիսկոպոսների եւ քահանաների անունները: Սել Աշիդի եպիսկոպոսներն էին «Սենհիլլի՝ բրետոնացիներ էին Բրիտանիայից, Հերրուիմը՝ Արմենիայից»:<sup>3</sup> Այս աղօթքի լատինական բնագիրը վերցրած է «Լեինստերի գրքից» մի ձեռագիր, որը վերաբերւում է 7-րդ դ.:

Ֆ. Հենրին, յետագայում նաեւ Հ. Խանամիրեանը Իրլանտիայում 7-րդ եւ 8-րդ դդ. հայ վանականների ներկայութիւնը կապում են վերը նշուած Սել Աշիդի վանքի հետ: Ըստ Ֆ. Հենրու, դա մի հայկական վանք էր, որը իր եկեղեցական նշանակութեամբ երկրում զբաղեցնում էր երրորդ տեղը:<sup>4</sup>

Եթեբրորդ դարից յետոյ հայերը Եւրոպայում յիշատակւում են ոչ միայն իրրեւ վաճառականներ, այլ նաեւ իրրեւ զինւորներ: Այսպէս, Օրինակ «Երգ Ռուանդի մասին» ֆրանսիական հերոսական վիպերգութեան մէջ, (11-12-րդ դդ.), որը պատմում է 778 թ. տեղի ունեցած իրադարձութիւնների մասին, հայերը անուանւում են «խիզախ մարտիկներ»:

Պէտք է ենթադրել, որ հայերի, մասնաւորապէս հայ վանականների ակտիւ գործունէութիւնն է պատճառ դառնում, որ Արմենիա անուանումը յիշատակւում է «Անգլիական ժողովուրդի եկեղեցական պատմութիւն» անուն կրող աշխատութեան մէջ: Դա առաջին նշանակալից աշխատութիւնն է անգլիական պատմագրութեան մէջ: Ձեռագիրը կազմել է անգլո-սաքսոնական վանական Բեդա Յարգարժանը թուագրւում է մօտաւորապէս 731 թ.:

2. Ա. Գ. Արրահամբան, «Համառոտ ուրուագիծ հայ գաղթավայրերի պատմութեան», հատ. 2-րդ, Եր., 1967, էջ 179:

3. «Massis» London, Vol. VI, No. 49, March-April 1934, էջ 42:

4. Ա. Ալպոյանեան, «Պատմութիւն հայ գաղթականութեան» մաս «Բ», Գաիիրէ, 1955, էջ 624:

Ժամանակագիրը պատմելով Բրիտանիա կղզին բնակեցնող հինգ ժողովուրդների մասին, գրում է, որ «առաջին բնակիչներն էին բրիտոնացիները, որոնք գաղթել էին Արմենիայից»:<sup>5</sup> Նոյնատիպ տեղեկութիւններ են յիշատակւում նաեւ աւելի ուշ 9-րդ դ. վերջին ստեղծուած «Անգլո-սաքսոնական ժամանակագրութիւն» աշխատութեան մէջ: Այդ ժամանակագրութիւնը սկսեցին կազմել Ալֆրեդ Մեծ Թագաւորի օրօք (871-մօտ 900 թ.): Գիտնականները վերոյիշեալ փաստը բացատրում են անուանման մէջ ձեռագիրը արտագրողների թոյլ տուած սխալով՝ Արմենիա, Արմորիկայի փոխարէն:

Արդէն իսկ 8-րդ դ. հայերը յայտնի էին Եւրոպայում որպէս զինւորներ: Այդ հանգամանքը պայմանաւորուած էր նրանով, որ ընդհուպ մինչեւ 10-րդ դ. երկրորդ կէսը նրանք կարեւոր դեր էին կատարում բիւզանդական բանակում: Այդտեղ, ռազմական ասպարէզում հայերը նորից հանդիպում են անգլո-սաքսերին եւ իրլանտացիներին, երբ վերջիններս, իրրեւ վարձկաններ գալիս էին իրենց փոխարինելու:

Շնորհիւ այդպիսի հանդիպումների, հայ վանականներ Պետրոսը, Արրահամը եւ Ստեփանոսը 11-րդ դարի 20-30-ական թթ. հասնում են մինչեւ Իսլանդիա եւ այնտեղ քարոզում քրիստոնէութիւն: Մի փոքր աւելի վաղ Միմէնոն եպիսկոպոսը, որը մէկն էր այն երեք հայ եպիսկոպոսներից, որոնք մեծ հռչակ էին վայելում Եւրոպայում, Երուսաղէմից գալիս է Եւրոպա եւ քրիստոնէութիւն քարոզելով այցելում Բրիտանական կղզիներ Իտալիա վերադառնալուց յետոյ նա 1016 թ. վախճանւում է եւ յետագայում Հռոմի պապ Բենեդիկտոս 8-րդի օրօք դասւում է սրբերի շարքը:<sup>6</sup>

Հայաստանի եւ Իրլանտայի վաղ միջնադարեան մանրանկարչութեան եւ մեմորիալ յուշարձանների որոշ ազգակցութեան հարցը որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում մեզ համար: Այդ խնդրին վերաբերող տուեալները մեզ կ'օգնեն ոչ միայն առաջ քաշելու նոր վարկածներ, այլ նաեւ սահմանել բրիտանական կղզիներում հայերի երեւան գալու ստոյգ ժամանակաշրջանը:

Հայաստանի վաղ միջնադարեան մանրանկարչութեան ուսումնասիրութիւնը կապուած է մեծ դժուարութիւնների հետ: Պարսկական եւ ապա արաբական նուաճումների հետեւանքով արուեստի այդ ճիւղը գրեթէ ամբողջութեամբ ոչնչացաւ եւ միայն շատ աննշան նիւթեր են փրկուել: Համեմատօրէն լաւ են պահպանուել յետարաբական եւ մասնաւորապէս 9-11-րդ դդ. հայ մանրանկարները, որոնք հանգամանօրէն ուսումնասիրուել են Տ. Ա. Իզմայլովայի կողմից: Անհրաժեշտ է նշել, որ այդպէս կոչուած «Իրլանտական մանրանկարչութիւնը, ունի իր ուրոյն տեղը համաշխարհային մշակոյթի արժէքներում: Նրա առանձնայատկութիւններն են. «...երկրաչափական ձեւերը

5. «Ararat», N.Y., Vol. I, No. 4, 1960, էջ 52:

6. Ա. Ալպոյանեան, նշ. աշխ., մաս «Ա» 1941, Գաիիրէ, էջ 340:



եւ ֆիգուրների դժա-մակերեսային մեկնարանումը, ինչը տարածուել է նաեւ մարդու պատկերման ձեւերի վրայ»:<sup>7</sup>

Տ. Ա. Իզմայլովան այսպէս կոչուած «Կարմիր աւետարանի» (909 թ. այն մանրանկարի մասին, որը պատկերում է Յիսուսի ծնունդը, գրում է. «Մանրանկարը առանձնանում է իր ծայրայեղ հնամենիութեամբ, հազուադիւս պատկերագրական տիպի: Ֆիգուրները, որոնք կատարուած են գրաֆիկօրէն, դարչնագոյն եզրագծով մագաղաթի ֆոնի վրայ, զուրկ են որեւէ ծաւալից:

...Աստուածամօր ֆիգուրը վերացուած է բուսական զարդանկարի: Ծայրագոյն ոճագարդութիւնը ստիպում է մտաբերել իրլանտական մանրանկարը»:<sup>8</sup>

Վաղ միջնադարեան հայ եւ իրլանտական մանրանկարչութեան համար յատկանշական է խորհրդանիշ-սկզբնատառի օգտագործումը, որոնց մասին պատկերացումը ի յայտ է եկել դեռեւս 3-րդ-4-րդ դդ.: 1053 թ. «Աւետարանը» իրլանտական մանրանկարչութեան հետ իր զուգահեռներով ամէնից աչքի ընկնողն է: Տ. Ա. Իզմայլովան գրում է. «1053 թ. Աւետարանի Մարկոս եւ Ղուկաս աւետարանիչների պատկերագրական մեկնարանութեան ամէնի մօտ զուգահեռներ կարելի է գտնել միմիայն անգլօ-իրլանտական, մինչեւ կառոլինգեան եւ մի շարք կառոլինգեան հին ձեռագրերում»:<sup>9</sup>

Այսպիսով, վաղ քրիստոնէական հայկական եւ իրլանտական մանրանկարների յատկանիշների ինչպիսիք են արեւելեան զարդանկարի առկայութիւնը, ծաւալից զուրկ պատկերները, գծանկարչութիւնը եւ զարդանկարչութիւնը, կիսաշրջանաձեւ խորանների եւ խորհրդանիշ-սկզբնատառերի օգտագործումը, աւետարանիչների պատկերագրական մեկնարանական զուգահեռութիւնը, վկայում է այդ զարդանկարի համանմանութեան մասին:

Անհրաժեշտ է նշել, որ վերոյիշեալ մանրանկարչական բոլոր ձեւերը օգտագործուում էին Հայաստանում քրիստոնէութեան ընդունման առաջին դարերի ընթացքում եւ դրանց մեծագոյն մասը յատկանշական չէ 11-րդ դարի հայ մանրանկարչութեանը: Այստեղ, իսկապէս մեծ դեր է խաղում Արեւմտեան Եւրոպայի մանրանկարչութեան վաղ նմուշների ուսումնասիրութիւնը, որը հակառակ հայկականի աւելի լաւ է պահպանուել: Ահա թէ 20-րդ դ. սկզբին ինչ է գրում Ի. Ստրժիգովսկին այդ մասին: «Կառոլինգեան ձեռագրերի արեւելեան զուգահեռները շարունակում են բազմանալ...: Եւ տեսնում եմ աւելի պարզօրէն, որ այդ արեւմտեան մանրանկարները կարող են օգտակար լինել այն ամէնի վերականգնման համար, ինչը որ կորստի է մատնուած Արեւելքի քրիստոնէական արուեստում»:<sup>10</sup>

Ի. Ստրժիգովսկին առաջինն արտայայտեց այն կարծիքը, որ իրլանտայի վաղ միջնադարեան ճարտարապետական յուշարձանները, այդպէս կոչուած է

7. «Всеобщая история искусств», КНІ, М, 1960, էջ 212  
8. Т.А. Измайлова, «Армянская Миниатюра XI века» м 1979 էջ 12  
9. Նոյն տեղում, էջ 117:  
10. Նոյն տեղում:

«քարէ խաչերը» իրենց ծագումը ստանում են Արեւելքի վաղ քրիստոնէական եկեղեցիներից (Եգիպտոս, Սիրիա, Հայաստան: Այդ յուշարձանները կոչուում են նաեւ «կելտական խաչեր»: Դրանք իրենցից ներկայացնում են քարից կտրած ծաւալային խաչեր, որոնք ունեն օղակ թեւերի միացման հատուածում: Յուշարձանների երեսային կողմերը, ինչպէս նաեւ պատուանդանները ունեն պլաստիկ եւ երկրաչափական զարդարանք:<sup>11</sup> Յուշարձանները իրլանտայում երեւան են գալիս 7-րդ դ. երկրորդ կէսին եւ իրենց տարածման ժամանակաշրջանը շարունակում մինչեւ 10-րդ դ.:

«Կելտական խաչերի» արեւելեան ծագման թէզը ծնուել է իրենց զարդաքանդակի արեւելեան լինելու փաստի ճանաչման հիմքի վրայ: Մի շարք գիտնականներ անդրադարձել են այդ հարցին մերժելով կամ ընդունելով իրլանտական յուշարձանների հայկական ծագումը:<sup>12</sup> Մասնաւորապէս, Ֆ. Հենրիին եկաւ այն եզրակացութեան, որ եօթերորդ դարի իրլանտական ճարտարապետները եւ փորագրիչները պէտք է, որ շատ լաւ ընկալած լինէին քրիստոնէական Արեւելքի եւ մասնաւորապէս Հայաստանի արուեստը:

Հաւանական է, որ տուեալ տարածայնութիւնները կապուած են երկու երկրների վաղ միջնադարեան մեմորեալ յուշարձանների ոչ սիստեմատիկ ուսումնասիրութեան հետ: Ս. Մնացականեանը իր աշխատութեամբ, որը կոչուում է «Հայկական վաղ միջնադարեան մեմորեալ յուշարձանները» բացայայտեց մի շարք ոչ բաւարար ուսումնասիրուած ասպեկտներ: Մասնաւորապէս նա հիմնաւորեց մի թէզ, ըստ որի Հայաստանում 4-7-րդ դդ. գոյութիւն ունէր փոքր մեմորեալի ինքնուրոյն մի ձեւ՝ «կռնաւոր խաչ»: Այդպիսի խաչարձաններն ունէին երկու մեթր բարձրութիւն եւ սկզբնական շրջանում պատրաստուում էին փայտից:<sup>13</sup> Յետագայում, 4-7-րդ դարերի թեւաւոր խաչերի ճարտարապետական եւ դեկորատիւ պլաստիկ լուծումը հիմք դրեց 9-րդ դարի հանդէս եկած խաչքարի, որը տարածուեց Հայաստանում 9-18-րդ դարերում: Թեւաւոր խաչերը դրուում էին խորանարդաձեւ հիմքերի վրայ, ինչին ամրացուում էին «ատամի» միջոցով, այնպէս ինչպէս կանգնեցուում էին յուշարձանները անտիկ Հայաստանում:

Ինչպէս եւ «կելտական խաչը» Հայաստանի յուշարձանները ունէին երեսային կողմ: Թէեւ այն զուրկ էր քանդակազարդից, սակայն այլ փոքր մեմորեալները, ինչպիսիք են սիւները, ունեն հարուստ քանդակազարդեր, որոնք կրկնում են իրլանտականները, որտեղ նոյնպէս առկայ են երկրաչափական եւ բուսական զարդեր: Նոյնատիպ զարդաքանդակ է ի յայտ գալիս խաչը ծաղկած վիճակում պատկերման մէջ, ինչը պարզ երեւում է «կելտական խաչի» վրայ, որը գտնուում է Կարնդոնում (8-րդ դ.): Զարդաքանդակը կազմուած է

11. "Documents of Armenian Architecture Khatchkar (the Stone Crosses)", Milano, 1970, էջ 61:  
12. "Khachkar", Armenian Cross-Stones", Venezia, 1981, էջ 19:  
13. Ս. Մնացականեան «Հայկական վաղ միջնադարեան մեմորիալ յուշարձանները» Եր., 1982, էջ 41-42:



երեք մասերից եւ յիշեցնում է Արեւելքում քաջ ծանօթ «կեանքի, ծառը»:<sup>14</sup>

Երկու երկրներում մեծ տարածում է գտել խաղողի վազերի թեման: Երկու երկրների մեմորեալ յուշարձանների եւ մասնաւորապէս խաչարձանների վերոյիշեալ բնութագիրները մատնացոյց են անում այդ յուշարձանների ընդհանրութիւնը:

Վերը նշուած փաստերը մեզ թոյլ են տալիս համաձայնուել Տ. Ա. Իզմայլովայի այն ենթադրութեանը, որ հայ եւ իրլանտական մանրանկարչութեան մէջ զուգահեռներ կարող էին ծագել միմիայն շնորհիւ միսիոներների մասնաւորապէս հայ վանականների, որոնք բերել էին հայկական մանրանկարչութեան նմուշներ Իրլանտիա: Պէտք է ընդունել այն փաստը, որ դա կատարուել է այն ժամանակաշրջանում, երբ ձեւաւորուում էր իրլանտական մանրանկարչական դպրոցը: Նոյնը պէտք է ասել նաեւ խաչարձանների մասին: Իրլանտական վաղ միջնադարեան մշակոյթը ընդգրկում է 6-8-րդ դդ. եւ այդ նոյն ժամանակահատուածին էլ պէտք վերագրել հայ վանականների առկայութիւնը կղզում: Այդ կապերը պէտք է մասնաւորապէս տեղի ունեցած լինէին 7-րդ դ., երբ երկու երկրները գտնուում էին համեմատաբար բարօք վիճակում:

Վաղ միջնադարից յետոյ հայերի կապերը Բրիտանական կղզիների ժողովուրդների մասնաւորապէս անգլիացիների հետ շարունակուում են արդէն 11-րդ դ., որոնք երեւան են գալիս ցամաքային Եւրոպայում հայ առաքելական եկեղեցու սրբերի պաշտման ժամանակ: Տասնմէկերորդ դարի Իտալիայում, իսկ այնուհետեւ Արեւմտեան Եւրոպայի մի շարք երկրներում լայն տարածում է գտնում հայկական սուրբ Մինասի պաշտամունքը, որը այդտեղ ստանում է Մինիաթո կամ Մինիաթիոս անունը: Մ. Նուրիկեանի կարծիքով սուրբ Մինասի պաշտամունքի տարածման գործում հիմնական դերը կատարել են Եւրոպայում յայտնուած հայ գաղթականները:<sup>15</sup> Միեւնոյն ժամանակ եւրոպացիների ուխտատեղի է դառնում Ս. Յակոբ եկեղեցին, Փորթուկալիայում՝ Սանթիագո դէ Կոմպոստելը: Ս. Յակոբին նուիրուած գրքում, որը գրի է առնուել 1139-1173 թթ. այդ սրբին նուիրուած մի երգում, ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների շարքում յիշատակուում են ուխտագնացներ նաեւ Հայաստանից եւ Անգլիայից:<sup>16</sup>

Թէեւ Անգլիան ակտիւ մասնակցութիւն չէր ունեցել առաջին երկու խաչակրաց արշաւանքներին, սակայն անգլիացիների փոքրաթիւ ջոկատներ միանում էին խաչակիրների զօրքին: Այսպէս, օրինակ, առաջին խաչակրաց արշաւանքի ժամանակ 1098-1099 թթ. Բիւզանդիա եկաւ անգլո-սաքսերի մի ջոկատ՝ էդգար Աթելինգի գլխաւորութեամբ:<sup>17</sup> Ուշակիրները շարժուում էին դէպի Պաղեստին Կիլիկիայի տարածքով, որտեղ նրանք ստանում էին մեծ օժանդակութիւն

տեղական հայկական իշխանութիւնների կողմից: Մաթեոս Էդեսացու վկայութեամբ նրանց պարէնով օգնում էին Օշին, Կոնստանտին եւ Բագրատ իշխանները:<sup>18</sup>

Անգլիական թագաւոր Ռիչարդ Ա. առիւծասիրտը իր մասնակցութիւնն է բերում երրորդ խաչակրաց արշաւանքին եւ 1191 թ. Մայիս ամսին գլխաւորելով անգլիական ռազմական նաւերը ժամանում է Կիպրոսի Լիմասոլ նաւահանգիստը: Մի քանի օր անց այդտեղ են հաւաքուում Միջերկրական ծովի արեւելեան դօտու ջրիստոնէական պետութիւնների տիրակալները: Վերջիններին միացել էր նաեւ հայկական Կիլիկիայի տիրակալ Լեւոն Բ.ն, որտեղ նա դառնում է պատուաւոր հիւրերից մէկը Ռիչարդ Ա. թագաւորի նավարրայի արքայադուստր Բերենգարիայի հարսանքին: Այդ փաստը յիշատակում են Ռիչարդ Ա. թագաւորի (1189-1199 թթ.) ժամանագիրներ ժոֆրէյ Դէ Վինսօֆը (Վինսոսալվօ)<sup>19</sup> եւ արքահայր Բենեդիկտոսը՝ Պիտերբորոյից: Անգլո-կիլիկեան քաղաքական կապերը, որոնք անմիջականօրէն իրենց դրոշմը դրեցին նաեւ 13-րդ-14-րդ դդ. մշակութային կապերի վրայ, սկիզբ են առնում երկու տիրակալների այդ հանդիպման ժամանակուանից:

Եւրոպայի եւ Ասիայի միջեւ 13-րդ-14-րդ դդ. առեւտրական գլխաւոր միջնորդներն էին Վենետիկը եւ Ջենովան: Վերջիններս իրենց գործունէութեան ոլորտը տարածում են նաեւ Կիլիկիայում: Իտալական քաղաքները Կիլիկեան թագաւորութեան հետ 1200-1201 թթ. կնքում են առեւտրային պայմանագրեր, որի համաձայն Այաս նաւահանգիստը սկսում է կարելու դեր կատարել այդ առեւտրում:<sup>20</sup>

Այդ նոյն ժամանակ զարգացում է ապրում Անգլիայի արտաքին առեւտուրը, որի հիմնական ճիւղն է դառնում բրդի արտահանումը: Սկզբնական շրջանում իտալական եւ ֆլամանդական վաճառականների ձեռքում էր գտնուում այդ առեւտրի մենաշնորհը:

Միայն վերոյիշեալ վաճառականների ակտիւ մասնակցութեամբ, Անգլիայի ներքին եւ արտաքին առեւտրի եւ Եորկչիրի բրդի մատակարարողների հետ ունեցած անմիջական կապերով կարելի է բացատրել Անգլիայում Հայ եկեղեցու Ս. Բարսեղի պաշտամունքի տարածման փաստը: Հայ առաքելական եկեղեցու եպիսկոպոս եւ մարտիրոս Ս. Բարսեղը դառնում է Անգլիայում մեծարուող սրբերից մէկը, որտեղ ընդունում է Բլազիոս անունը, թէեւ Օքսֆորտի եկեղեցական ժողովը 1222 թ. արգելում է եկեղեցիներում ժամերգութիւններ կատարել ի պատիւ այս սրբի: Սակայն աղօթագրքում հաստատում է Փետրուարի 3-ը այս սրբի օր: Ս. Բարսեղի պաշտամունքը կապուած էր բրդագործական արհեստի հետ: Նրան յատկապէս պաշտում էին Եորկչիրում, որտեղ իր անուան հետ էին կապում բրդի գզման յայտնագործութիւնը:<sup>21</sup>

14. Նոյն տեղում, էջ 169:

15. Ռ. Վ. Կիւպնիկեան, «Հայ-պորտուգալական յարաբերութիւնները» Եր., 1986, էջ 18-19:

16. Նոյն տեղում, էջ 33:

17. G. Finlay, "History of the Byzantine and Greek Empires", Vol. II, Edinburgh, 1854-1856, էջ 135:

18. Г.Г. Микаеэян «История Киликийского Армянского государства» Е, 1952 с. 91

19. Y. Yoinville "Chronicles of the Crusades", L., 1903, p. III.

20. Ռ. Վ. Կիւպնիկեան, նշ. աշխ., էջ 22-23:

21. E.A. Dowling, "The Armenian Church" L. 1910, էջ 98:



Տասներեքերորդ դարում հայերն առաջին անգամ յիշատակում են Անգլիայում 1228 թ., երբ այդ երկիր է գալիս մի հայ եպիսկոպոս, որը հարկադրուած էր լքել Հայաստանը մոնղոլների աւերիչ արշաւանքի պատճառով: Մի փոքր աւելի ուշ 1252 թ. Հենրիկ Գ (1216-1272 թթ.) անգլիական թագաւորի հետ նամակագրական կապ է հաստատում Հայկական Կիլիկիայի թագաւոր Հեթում առաջինը:<sup>22</sup> Վերջինս, Կիլիկիայի առաջին թագաւորն էր, որ դիմեց անգլիական թագաւորութեանը օգնութիւն հայցելով ընդդէմ նոր գաւթիչների՝ եգիպտական մամելուքների: Մոնղոլների ռազմական ուժի թուլացմամբ 14-րդ դ. սկզբին հայկական թագաւորներն իրենց յոյսերը կապել էին եւրոպական տէրութիւնների հետ: Այստեղ կարելի էր էլ խաղում Կիլիկեան թագաւորութեան բանակցութիւնները եւրոպական արքունիքների եւ Հռոմի պապերի հետ, ինչը տեւում է 7-րդ խաչակրաց արշաւանքի ժամանակաշրջանից (1270 թ.) ընդհուպ մինչեւ Կիպրոսի Փիէն թագաւորի մահը (1369 թ.):

Հեթում Բ. թագաւորի (1289-1296 եւ 1299-1305 թթ.) տիրակալութեան առաջին տարիները համընկնում են մամելուքների արշաւանքների հետ: Ակրայի անկումից յետոյ (1291 թ.) նա իր պատուիրակի միջոցով անգլիական թագաւորին ուղարկում է մի նամակ, որտեղ տեղեկացնում է քաղաքի անկման եւ Կիլիկիայի վրայ կախուած վտանգի մասին:<sup>23</sup> 1298 թ. Հեթում Բ. թագաւորի եղբայր Թորոսը դեսպաններ է ուղարկում Հռոմի պապի եւ Անգլիայի էդուարդ Ա. թագաւորի մօտ եւ յայտնում մամելուքների կողմից ածող վտանգի մասին:

Յատուկ մի պատուիրակութիւն, որի կազմում էին Կոնստանտին Մեծի թոռ Բողվինը, Թրազարկ վանքի խմբավար Թորոսը եւ սպայ Լեւոնը, 1307 թ. ճանապարհ է ընկնում Անգլիայի էդուարդ Ա. թագաւորի մօտ: Սակայն մինչ պատուիրակութիւնը հասնում է Անգլիա, էդուարդ Ա. թագաւորը մահանում է, իսկ նրա յաջորդը 1308 թ. Մարտ ամսին ուղարկած իր պատասխանում մերժում է օգնութեան խնդրանքը, պատճառ բռնելով անյետաձգելի գործերը:

Ճոն Մանթելլը 1322 թ. սկսում է իր երկարատեւ եւ հեռաւոր ճանապարհորդութիւնները: Շուրջ 34 տարի նա շրջագայում է Արեւելքի երկրներում: Վերադառնալով Անգլիա, նա գրի է առնում իր «Չարմանալի արկածախնդրութիւնները»: Այդ յուշերում նա համառօտակի նկարագրում է նաեւ իր ճանապարհորդութիւնը Հայաստանում, ինչպէս Փոքր, այնպէս էլ Մեծ Հայքում:<sup>24</sup> Հերեֆորդի մայր տաճարում պահպանուող 14-րդ դ. քարտէզը մի անգամ եւս վկայում է, որ անգլիացիները այդ ժամանակ արդէն քաջատեղեակ էին Հայաստան երկրին:

1321 թ. սկսած թուրքերի եւ մամելուքների պարբերաբար կրկնուող ասպատակութիւնների պատճառով Հայկական Կիլիկիայի դրութիւնը դառնում է կրիտիկական: Այդ պայմաններում, 14-րդ դ. 30-40-ական թթ. Կիլիկիայի եւ

եւրոպական տէրութիւնների միջեւ վարում են լայնածաւալ դիւանագիտական բանակցութիւններ: Այդ են վկայում Անգլիայում պահպանուող փաստաթղթերը:

1332 թ. Լեւոն Ե. թագաւորը (1320-1342 թթ.) բանակցութիւններ վարելու նպատակով Եւրոպա է ուղարկում Ստեփանոս Եպիսկոպոսին: Լոնտոնի պետական արխիւում պահպանուել է 1335 թ. Դեկտեմբերի 12-ի ամսաթուով թուագրուած մի փաստաթուղթ, որտեղ էդուարդ Գ. թագաւորը հրամայում է Լոնտոնի առաջին դատաւորին դրամ տրամադրել հայ պատուիրակ Գէորգին:<sup>25</sup>

Յաջորդ օրը, էդուարդ Գ. թագաւորը գրում է մի նամակ Կիլիկիայի Լեւոն Ե. թագաւորին, որտեղ կայ հետեւեալ արտայայտութիւնը. «սիրելի բարեկամ էդուարդի կողմից»: Մէկ ուրիշ նամակում, որը գրուած է 1342 Սեպտեմբերի 1-ին էդուարդ Գ. թագաւորը փորձում է յուսադրել Լեւոն Ե. թագաւորին:

Լուսինեան հարստութեան օրօք Փրանսիական եւ անգլիական արքունիքների հետ բանակցութիւնները ստանում են աւելի լայն բնոյթ: Այսպէս Գվիդոն Լուսինեանը (1342-1345 թթ.) իր թագադրուելուց անմիջական յետոյ ասպետ Կոնստանդինին ուղարկում է Անգլիա: Այդ են վկայում 1343 թ. Մարտի 8-ի թուագրութեամբ պահպանուած հաւատարմագրերը: Նոյն թուականի աշնանը Գվիդոն թագաւորը ստանում է Անգլիայի թագաւորից մի յուսադրող նամակ:<sup>26</sup> Բանակցութիւնները անգլիական արքունիքի հետ շարունակուել են նաեւ Կոնստանդին թագաւորի (1345-1363 թթ.) օրօք, երբ Լոնտոն է գալիս (1349 թ.) Կոնստանդին զօրավարը:

Կիլիկեան պետութեան դրութիւնն աւելի է վատթարանում, երբ 1360 թ. Հալէպի էմիրութիւնը գրաւում է Դաշտային Կիլիկիան: Նոյն թուականի գարնանը Անգլիա են հասնում Բարձր Հայքում գտնուող Մետէն վանքի Ստեփանոս եւ Յակոբ վանականները: 1360 թ. Ապրիլի 28-ին անգլիական թագաւորը նրանց շնորհում է հրովարտակներ, որով թոյլատրուել էր նրանց շրջագայելու Անգլիայում եւ միջոցներ հաւաքելու իրենց վանքի վերականգնման համար: Պէտք է ենթադրել, որ վերը նշուած վանականները միջոցներ հանգանակելու համար պատահականօրէն չէին ընտրել Անգլիան: Նրանց վանքը պատկանում էր Ս. Բարսեղի միաբանութեանը եւ իրենք, հաւանական է, քաջ տեղեակ էին Անգլիայում այդ սրբի պաշտման փաստին:

Ժամանակագիր Թոմաս Ուոլսինհեմի հաղորդագրութեան համաձայն 1362 թ. Լոնտոնի Սմիտ Ֆիլդ հրապարակում տեղի է ունենում մի ասպետական գինախաղ: Այդտեղ իրենց մասնակցութիւնն են բերում նաեւ հայ հեծեալները, որոնք հմուտ ձիավարութեամբ իրենց վրայ են գրաւում խաղերին ներկայ գտնուող թագաւորի եւ թագուհու ուշադրութիւնը:<sup>27</sup> Անգլիական թագուհի Ֆիլիպպայի ժամանակագիր Ժան Ֆրուասարը իր ժամանակագրութեան մէջ

22. Ա. Ալպոյանեան, նշ. աշխ., մաս «Բ», էջ 623:

23. "Ararat", London, Vol. IV, No. 44, February 1917, էջ 369:

24. «Նոր Կեանք» Լոնտոն, 18, 15 Սեպտեմբեր, 1898, էջ 284:

25. «Հայաստան» Լոնտոն, 15, Յունիս, 1891, էջ 4:

26. Armenia, Boston, Vol. I, No. 7, April 1905, էջ 6:

27. Նոյն տեղում:



նշում է, որ 1362 թ. Լոնտոն է գալիս Կիպրոսի թագաւորը:՝<sup>28</sup> Պէտք է ենթադրել, որ հայ ասպետները նրա շքախմբի հետ ժամանել էին Անգլիա:

Յակոբ վանականի հետ 1364 թ. սկզբին Անգլիա է գալիս Ս. Գէորգ վանքի վանահայր, Եպիսկոպոս Ներսէսը: Նոյն թուականի Փետրուարի 7-ին էդուարդ Գ. թագաւորը նրանց տալիս է յանձնարարական նամակներ եւ թոյլատրում ամբողջ երկրի տարածքում մէկ տարի կատարել ուխտազնացութիւն: Այդ նամակներում նա կոչ է անում իր հպատակներին լաւ ընդունելութիւն ցոյց տալ հայերին նշելով այն արհաւիրքները, որոնց արժանացել է նրանց երկիրը:

Անգլիայում 14-րդ դ. 60-ական թթ. գործունէութեան բոլոր ոլորտներում, սկսում է տարածուել անգլիականացման պրոցեսը, մասնաւորապէս անգլերէն լեզուով է սկսում կատարուել պառլամենտի եւ դատարանի ողջ գործունէութիւնը: Միայն այդ գործընթացով եւ Հայկական Կիլիկիայի նկատմամբ մեծ հետաքրքրութեամբ կարելի է բացատրել այն փաստը, որ 14-15-րդ դդ. լատիներէն լեզուից անգլերէն է թարգմանւում Կիլիկիայի պետական գործիչ, զօրավար եւ ժամանակագիր Հեթումի «Արեւելքի պատմութիւն» աշխատութիւնը:<sup>29</sup>

Աւելի սերտ կապեր էին հաստատուել երկու երկրների տիրակալներ Անգլիայի թագաւոր Ռիչարդ Բ.-ի (1377-1399) եւ հայկական թագաւոր Լեւոն Զ. Լուսինեանի (1374-1375 թթ.) միջեւ: Լեւոն Զ. թագաւորը գերութեան ժամանակ կարողանում է իր թարգմանիչ Մանուէլին ուղարկել Եւրոպա: Վերջինս գալով եւրոպական պետութիւնների արքունիքներ անյաջող փորձ է կատարում շահագրգռել նրանց իր տիրոջը օգնելու գերութիւնից ազատուելու համար:<sup>30</sup>

Լեւոն Զ. թագաւորը ազատութիւն ստանալով (1382 թ.) 1384 թ. ամրանը բնակութիւն է հաստատում Փարիզում: Այստեղ նա առաջարկում է իր ծառայութիւնները Ֆրանսիայի թագաւորին՝ Անգլիայի հետ խաղաղութեան պայմանագիր կնքելու գործում: Ստանալով համաձայնութիւն Լեւոն Զ. թագաւորը կապ է հաստատում Ռիչարդ Բ. թագաւորի հետ: Վերջինս նրան ուղարկում է պահպանագիր Անգլիա այցելելու համար: Հայկական թագաւորը երբ գալիս է Անգլիա (1385 թ. վերջին) ջերմ ընդունելութիւն է գտնում Լոնտոնում: Այդ մասին վկայում է ժամանակագիր Ֆրուասարը եւ ըստ Ուոլտէր Բեսանի հաղորդագրութեան նրա տրամադրութեան տակ էին դրել թաուէրը,<sup>31</sup> որը այդ ժամանակ ծառայում էր որպէս հիւրանոց՝ բարձրաստիճան հիւրերի համար:

Ժամանելուց չորս օր անց Լեւոն Զ. թագաւորը ելոյթ ունեցաւ Վեստ մինստրում ժողոված թագաւորական խորհրդում, որտեղ կոչ արեց

28. Sir John Froissart, "Chronicles of England, France, Spain..." N.Y. & L. 1901, էջ 77:

29. «Էրեբունի» Լոնտոն, 30-31, Մարտ-Ապրիլ, 1983, էջ 5:

30. Կ.Ս. Բասմաջեան «Լեւոն Ե. Լուսինեան, վերջին թագաւոր հայոց» 1908, Փարիզ, էջ 63:

31. S. M. Gregory, "The Land of Ararat", London, 1920, էջ 121:

անգլիացիներին բանակցութիւններ սկսել Ֆրանսիայի հետ խաղաղութիւն հաստատելու համար: Դա հնարաւորութիւն կ'ընձեռէր համատեղ ուժերը ուղղել Կիլիկեան հայկական պետութեան վերականգնմանը:

Ի պատասխան այդ կոչի 1386 թ. Յունուարի 22-ին Ռիչարդ Բ. թագաւորը հրամանագիր է արձակում, որի համաձայն ստեղծում է Ֆրանսիայի հետ բանակցելու դեսպանութիւն, որի միջնորդ եւ նախագահող է նշանակում Լեւոն Զ. թագաւորը: Փաստաթղթերը վկայում են, որ մինչեւ 1386 թ. Մայիս ամիսը Լեւոն Զ. թագաւորը հիմնականում գտնւում էր Լոնտոնում:

Պահպանուած երկու հրովարտակների համաձայն Լեւոն Զ. թագաւորը պատրաստում էր այցելել Անգլիա նաեւ 1392 թ. վերջին, սակայն չեն պահպանուել որեւէ վկայութիւն այդ երկրորդ այցելութեան մասին: Ա. Ալփոյաճեանը անդրադառնալով Լեւոն Զ. թագաւորի Անգլիա կատարած այցի պատմութեանը, նշում էր, որ հայկական թագաւորի Լոնտոնում գտնուելը համընկնում է այն արարողութեան հետ, երբ քաղաքի Լորդ մայորին (քաղաքպետին) ներկայացնում են թագաւորին: Այդ արարողութեանն էին հրաւիրուած մասնակցելու քաղաքում գտնուող օտարագգի իշխանները, նրանց թւում նաեւ հայկական թագաւորը: Մեր օրերում, ամէն տարի, Լոնտոնի լորդ մայորի տօնախմբութեան ժամանակ, որը կատարւում է Նոյեմբեր ամսուայ երկրորդ շաբաթ օրը, քաղաքի փողոցներում կատարւում է տօնական շքերթներ: Շքերթի մասնակիցները հազնում են միջնադարեան զգեստներ, դրանց մէջ է լինում նաեւ Լեւոն Զ. թագաւորին պատկերող մի անձ:<sup>32</sup>

Հայ անգլիական կապերը խիստ նուազում են Կիլիկեան պետութեան անկումից յետոյ: Այդ կապերի մասին տեղեկութիւններ չի պահպանուել 15-16-րդ դդ. թէեւ դրանք պէտք է, որ տեղի ունեցած լինէին: Յայտնի է, որ 14-րդ դ. առաջին կէսից սկսած հայ վաճառականները հաստատուել էին Հոլանդիայում եւ իրենց առեւտրական գործունէութեան մէջ շատ հաւանական է, որ կապեր ունենային Անգլիայի հետ: Արդէն 16-րդ դ. վերջին այդ կապերը զարգանում են Ամստերդամի հայ գաղութի միջոցով: 1580 թ. յետոյ, երբ կնքուեց անգլո-թուրքական առեւտրային պայմանագիրը, հոլանդական նաւերը սկսեցին ուղեւորուել Թուրքիա՝ անգլիական դրօշի տակ: 16-րդ դ. վերջին Եւրոպայի եւ Առաջաւոր Ասիայի միջեւ կանոնաւոր առեւտրային կապերի հաստատումը չյանգեցրեց Անգլիայում հայ գաղութի առաջացմանը, ինչպէս դա տեղի ունեցաւ Իտալիայում, Ֆրանսիայում եւ Հոլանդիայում: Այդ հանգամանքը Ա. Սարուխանը բացատրում է. անգլիական առեւտրային ծովագնացութիւնը հոլանդականի համեմատութեամբ աւելի ուշ հիմնադրուելու փաստով:<sup>33</sup>

Անգլո-թուրքական առեւտրային պայմանագիրը հիմք ծառայեց հայ անգլիական կապերի մասնակի վերականգնման եւ յետագայ ընդլայնման

32. Ա. Ալփոյաճեան, նշ. աշխ., էջ 624:

33. Ա. Սարուխան «Հոլանդիան եւ հայերը» ԺՁ-ԺԹ դարերում» Վիեննա, 1926, էջ 39:



համար: Անգլիական ճանապարհորդները աւելի յաճախ են սկսում յայտնուել ասիական երկրներում եւ մասնաւորապէս, Հայաստանում: Անգլիական ճանապարհորդ Նիպրին, որը 1581 թ. գրի է առել իր ճանապարհորդական գրառումները համարում է առաջինը նրանցից ով այդ ժամանակաշրջանում այցելութեան էր եկել Հայաստան:

Լոնտոնում 1611 թ. լոյս է տեսնում ճոն Կարթրայտի ուղեւորութեան վերնագրուած «Քարոզիչների ճանապարհորդութիւնները դէպի Արեւելեան Հնդկաստանի սահմանները, Սիրիա, Միջագետք, Հայաստան, Միզիա, Հիբրկանիա եւ Պարթեւստան մեծ երկրներով, որտեղ գրի է առնուել ճշմարիտ օրագիրը»: Կարթրայտի օրագիրը Անգլիայում լոյս տեսած առաջին տպագիր գիրքն է Հայաստանի մասին: Իր օրագրում հեղինակը 1600 թ. Արեւելքում կատարած ճանապարհորդութեան մասին, խօսելով, նշում է, թէ Հայաստան հասնելով նկատեցի, որ «երկրի գիւղերի մեծամասնութիւնը բնակեցուած էր բացարձակապէս հայերով... մի ժողովուրդ, որը շատ աշխատասէր է աշխատանքի բոլոր ոլորտներում»: 34 Ճ. Կարթրայտի աշխատութիւնն ունի նաեւ կարեւոր նշանակութիւն այն առումով, որ պատկերում է արտասահմանցու աչքերով հայ ժողովուրդի կենցաղը 17-րդ դարի սկզբներին: Այդտեղ հեղինակը տալիս է Վան, Էջմիածին եւ որ խիստ կարեւոր է հին հայկական առեւտրային քաղաք Ջուղայի նկարագրութիւնը: Վերջինիս նկարագրութիւնը էլ աւելի արժէքաւոր է, քանի որ արդէն 1604 թ. քաղաքը վերացել էր երկրի երեսից:

Հայ անգլիական կապերը 17-րդ դ. սկզբին ստանում են իրենց զարգացումը Հոլանդիայի, Պարսկաստանի, Հնդկաստանի հայ գաղութների միջոցով Մ. Սեթը, որը ստեղծել է Հնդկաստանի հայ գաղութների պատմութեանը նուիրուած արժէքաւոր աշխատութիւն, վկայում է, որ անգլիացիները Հնդկաստանի գաղութացման սկզբնական շրջանում գիտակցում էին տեղացի հայերի հետ բարեկամական յարաբերութիւններ հաստատելու անհրաժեշտութիւնը եւ բաւական երկար ժամանակ վարում էին հայասիրական քաղաքականութիւն: 35 Դա ստանում է իր անմիջական արտացոլումը 17-18-րդ դ. Հայ անգլիական կապերի զարգացման գործում:

Պարսկաստանի հայ վաճառականները 17-րդ դ. սկզբին ստանալով շահի հովանաւորութիւնը, սկսեցին առեւտուր անել եւրոպական երկրների հետ: Հիմնականում զրանք ջուղայեցիներն էին, թէեւ նրանց շարքերում կային նաեւ զարաբաղցիներ, զանգեզուրցիներ: Առեւտուրը տարւում էր ոչ միայն պարսկական, այլ նաեւ եւրոպական ապրանքներով: Այսպէս, օրինակ, հայ վաճառական Բարա Պաշատուրը 1647 թ. Անգլիա է բերում մի շարք ապրանքներ, զրանք թւում եւ վենետիկեան ապակի եւ հայելիներ: 36

Ամստերդամ քաղաքում 1660 թ. հայ գաղութը ստանում է իր վերջնական

34. "Massis", L. Vol. II No. 5, March 1930, էջ 103:

35. M. Y. Seth, "Armenians in India", Calcutta, 1937, էջ 228-229:

36. Ա. Ալպոյաճեան, նշ. աշխ., էջ 175:

ձեւաւորումը: Սակայն որոշ տուեալների համաձայն, մի փոքր աւելի վաղ, հայերի մի փոքրաթիւ խումբ, որոնք զբաղւում էին ոսկերչութեամբ, գաղթում են Ամստերդամից Անգլիա եւ հաստատուում են Պլիմուտ քաղաքում: Հայերը բնակւում էին առանձին թաղամասում, որտեղ հիմնում են մի աղբիւր, որը ունէր հայերէն արձանագրութիւն: Ըստ աւանդութեան անգլիական բուրժուական յեղափոխութեան ժամանակ Օլիվեր Կրոմվելը անցնելով հայկական թաղամասով հետաքրքրւում է, թէ ում կողմից են ելոյթ ունենում հայերը եւ որպէս պատասխան լսելով Աստուածաշնչից մի իմաստալից խօսք մնում է դժգոհ եւ պահանջում է իր վերադարձի ժամանակ տալ ստոյգ պատասխան: Հայերը վախենալով եւ Կրոմվելի եւ Ռոյալիստների գայրոյթից շուտափոյթ լքում են Անգլիան եւ վերադառնում Հոլանդա: 37

Օստ-Հնդկական ընկերութեան ակտիւ առեւտուրը Հնդկաստանի եւ Պարսկաստանի հետ սկսում է 17-րդ դ. կէսից: 1664 թ. Հնդկաստանի Միլապոր քաղաքի հայ կառավարիչ Մարկ Երիզազը նուէրներ եւ նամակ է ուղարկում Կարլ Բ. թագաւորին (1660-1685 թթ.) որում խնդրում է նուիրել իրեն մի նաւ, որպէսզի ինքը կարողանայ գնել թագաւորի համար պերճանքի արեւելեան ապրանքներ: 1667 թ. Դեկտեմբեր ամսին Օստ-Հնդկական ընկերութեան տնօրէնների վարչութիւնը հայ վաճառական Խոջա Կիրակոսին թոյլ է տալիս ընկերութեան նաւով հոլանդական ապրանքներ տանել, որը գնել էին շահի անձնական օգտագործման համար: Տնօրէնների վարչութիւնը Սուրատի իր խորհրդին եւ նախագահին ուղարկում է մի նամակ, որտեղ յայտնում է այն կարեւորութեան մասին, որը այդ վարչութիւնը տալիս է այդ հայ վաճառականին: 38

Հայ վաճառականների ակտիւ գործունէութիւնը Պարսկաստանի եւ Հնդկաստանի առեւտրում անգլիացիներին բերում է այն եզրակացութեան, որ անհրաժեշտ է ուսումնասիրել հայ առեւտրականների գործունէութեան ձեւերը: 1669 թ. Ե. Կաստելոսը հրատարակում է Լոնտոնում մի բառարան, որտեղ ընդգրկուած էին նաեւ հայերէն բառեր: Աճում է նաեւ հայ գաղութների քաղաքական նշանակութիւնը, ինչը կապուած էր Օստ-Հնդկական ընկերութեան եւ Եթովպիայի միջեւ դիւանագիտական յարաբերութիւնների հաստատման փաստի հետ, այն բանից յետոյ, երբ Եթովպիայի ազգութեամբ հայ դեսպան Մուրադը 1673 թ. գալիս է Բաթավիա պայմանագիր կնքելու համար: 39

Մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում տաղերգու Յակոբ Գրիգորենցի «Գովք Պրիթանիօ» ստեղծագործութիւնը: Այս իշխանութեան մէջ Յ. Գրիգորենցը նկարագրում է 1674 թ. կատարած իր ճանապարհորդութիւնը Անգլիա: Նա արտայայտում է այդ երկրի մասին իր հիացմունքը եւ նկարագրում անգլիացիների կեանքի զանազան կողմեր: Այդ աշխատութիւնը՝

37. Ա. Գ. Արրահամեան, նշ. աշխ., էջ 181:

38. M. Y. Seth, նշ. աշխ., էջ 246:

39. Ռ. Վ. Կիւլպենկեան, նշ. աշխ., էջ 46:



հայերէն լեզուով գրուած առաջին գործն է, որը տալիս է անգլիացիներին կենցաղի նկարագրութիւնը:

Անգլիացիները 17-րդ դ. վերջին ձգտում էին ամբողջութեամբ տիրապետել հնդկական շուկային, ուստի անհրաժեշտ դարձաւ սահմանափակել հայ վաճառականների գործունէութիւնը եւ նրանց ներգրաւել Օստ-հնդկական ընկերութեան հովանու տակ: «Ընկերութեան» եւ հայ վաճառականների միջեւ պայմանագիր կնքելու նպատակով հայ վաճառականներ Փ. Քալանթարը եւ իր բարեկամ Ի. Սարհազը 1688 թ. գալիս են Լոնտոն: Նոյն թուականի Յունիս ամսին կնքուեց պայմանագիր կամ խարտիա, որում նշուեց, որ «...նրանք (անգլիացիները) ելնելով հայ ժողովուրդի շահերից ներկայացրեցին իրեն (Փ. Քալանթարին) մի շարք մանրամասնութիւններ, որպէսզի հայկական առևտրի մեծագոյն մասը, որը ուղղուեց է դէպի Հնդկաստան եւ Պարսկաստան եւ այնտեղից Եւրոպա, կատարուի Անգլիայի միջով, ինչը կը նպաստի Ձերդ գերագանցութեան մաքսատուրքերին եւ անգլիական ծովագնացութեան աճին»:<sup>40</sup>

Խարտիան կազմուած էր մի շարք կէտերից, որտեղ մասնաւորապէս նշուեց էր, որ «առաջին հայերը այսուհետեւ եւ բոլոր ժամանակներում պէտք է ունենան հաւասար շահ այս ընկերութեան ունեցած բոլոր ներկայիս արտոնութիւններից կամ կ'ունենան եկամուտներ նրանցից, որոնք ապագայ բոլոր ժամանակներում կը շնորհուեն ընկերութեան ցանկացած սեփական-ձեռնարկատիրոջ կամ ցանկացած անգլիական վաճառականի»:<sup>41</sup> Վերը նշուած պայմանագիրը իրենից ներկայացնում է աւելին, քան առևտրային պայմանագիր, քանի որ իր մէջ ներգրաւում է հայ գաղթականների կեանքի եւ գործունէութեան բազմաթիւ ասպեկտներ: Ընկերութեան տնօրէնների խորհուրդը 1692-93 թթ. սկսում է կազմակերպել հայ վաճառականների փորձի ուսումնասիրութիւնը եւ յանձնարարում է իր Պարսկաստանի գործակալին գտնել մի քանի անգլիացի երիտասարդների, որոնք կը սովորէին պարսկերէն եւ հայերէն լեզուները եւ վարէին ընկերութեան առևտրային շահերը այդ երկրում:

Նշուած ժամանակաշրջանում զարգացում են ապրում նաեւ հայ անգլիական մշակութային կապերը: Թովմաս Վանանդեցին, որը 17-րդ դ. վերջին վերականգնում է Ամստերդամի հայկական տպարանը, Ղուկաս Նուրիջանեանի հետ 1707 թ. գալիս է Լոնտոն: Նոյն թուականի Մարտի 28-ին նրանց ներկայացնում են անգլիական թագուհի Աննա Աթոլարտին: Երկու արքեպիսկոպոսի ձոն Շարպի յանձնարարականով Թովմաս Վանանդեցուն շնորհուեց է աստուածաբանութեան դոկտորի պատուաւոր գիտական կոչումը: Այդ կապակցութեամբ նա նուիրաբերում է Վանանդեցի ընտանիքի կողմից Ամստեր-

40. M.Y. Seth, "History of the Armenians in India", Calcutta, 1895, էջ 49:  
41. Նոյն տեղում:

դամում տպագրուած գրքերի մի ամբողջ ժողովածու՝ Օքսֆորտի համալսարանի Բողլիան գրադարանին:<sup>42</sup>

Հնդկաստանի հարուստ հայերի ընտանիքները 18-րդ դ. սկզբից սկսում են հրաւիրել անգլիացիներին որպէս տնային ուսուցիչներ: Անգլիացի Գուլելմոս Վիստոնի (որը ուսուցիչ էր Մադրասում Գ. Աղապիրեանի ընտանիքում) որդիները Ուիլիեմը եւ Ճորճը լաւ տիրապետելով հայերէն լեզուին եւ յաղթահարելով մեծ դժուարութիւններ քրտնաջան աշխատանքով զբառարից լատիներէն են թարգմանում հինգերորդ դարի պատմիչ Մովսէս Խորենացու «Հայոց պատմութիւն» աշխատութիւնը: 1736 թ. Լոնտոնում նրանք հրատարակում են «Հայոց պատմութիւն» եւ Անանիա Շիրակացու «Աշխարհացոյցը» եւ մի շարք այլ հատուածներ հայկական սկզբնաղբիւրներից: Մ. Խորենացու աշխատութեան հայերէն լեզուով բնագիրը նոյնպէս տեղ էր գտել գրքում:

Անգլիացիների գիտատեխնիկական զարգացումը մեծ հետաքրքրութիւն էր առաջացնում Հնդկաստանի հայերի մօտ: Ահա ինչ էր գրում այդ մասին հայ ժողովուրդի ազատագրական շարժման ճանաչուած դէմքերից մէկը՝ Յովսէփ Էմինը, որը հետեւեալ կերպ էր բացատրում իր Լոնտոն գալու փաստը: «Ես տեսայ եւրոպացիների ամբողջ եւ գինուորների վարժութիւնները եւ առևտրական նաւաւորմը եւ այն, թէ ինչպէս ճարպիկ եւ անբասիր են նրանք բոլոր գործերում... Ես պէտք է մեկնեմ Եւրոպա, որպէսզի սովորեմ ռազմական արուեստը եւ այլ գիտութիւններ, որոնք նպաստում են այդ արուեստին: Ես համոզուած էի, որ եթէ ես գամ Հայաստան իբրեւ եւրոպական սպայ, ես ի վիճակի կը լինեմ թէկուզ եւ փոքր չափով օգտակար լինել իմ երկրին»:<sup>43</sup>

Յ. Էմինը (1726-1809 թթ.) գալիս է Լոնտոն 1751 թ. իր ընկերոջ Յ. Մասսեսի հետ:<sup>44</sup> Նա յաճախում է մի մասնաւոր դպրոց Լոնտոնում 18 ամսուայ ընթացքում, որից յետոյ 1753-1755 թթ. յաճախում է գինուորականների ռազմական ուսուցմանը, Լոնտոնի Սենթ Ճէյմս Պարկում:

Կոմս Խյու Սմիթսոնի հետ պատահական ծանօթութիւնից յետոյ, նա Լոնտոնի բարձր խաւերում ձեռք է բերում բազմաթիւ բարեկամներ: Մասնաւորապէս դուքս Կամբերլենդը օգնում է նրան ընդունուել Վուլվիչի թագաւորական գինուորական ուսումնարանը: Եօթնամեայ պատերազմին մասնակցելուց յետոյ նա վերադառնում է Լոնտոն 18-րդ դ. 50-ական թթ. եւ մեկնելով Հայաստան, վերադառնում է միայն 1761 թ.: Շուտով նա մեկնում է Ռուսաստան, ընդմիջտ թողնելով Անգլիան: Նոյն դարի 80-ական թթ. Յ. Էմինը իր մտերիմ ընկեր սըր Ու. Ճոնսի պնդմամբ գրի է առնում իր յուշերը, որոնք լոյս են տեսնում Լոնտոնում 1792 թ.:

Հնդկաստանի հայ վաճառականների դրութիւնը բարդանում է, երբ Մեծ

42. V. Nersessian, "Early Armenian Printing (1512-1800)", London, 1980, էջ 3:  
43. Joseph Emin, "Life and Adventures of Emin Joseph Emin, 1726-1809", Calcutta, 1918, Vol. I, էջ 58-59:  
44. A.P. Иованнисян, «Иосиф Змин», Ер, 1945 էջ 15



Բրիտանիան յաղթանակ է տանում եօթամեայ պատերազմում: Օստ- Հնդկական ընկերութիւնը նրանց դէմ յարձակման է անցնում: Ազդեցիկ Հայ վաճառականներն առաջինն են ենթարկուում 1768 թ. տեղի ունեցած հալածանքներին: Նրանցից երկուսը Նոր Զուղայի առեւտրական տների ներկայացուցիչներ Յովհաննէս Ռաֆայէլը եւ Գրիգոր Խոջամալ Խալդարեանը գալիս են Լոնտոն եւ 1769 թ. մի բողոք են ներկայացնում ընկերութեան տնօրէնների վարչութեանը, բայց ապարդիւն:<sup>45</sup>

Այս վաճառականները Լոնտոնում մնում են բաւականին երկար ժամանակ: Մասնաւորապէս, Գ. Խալդարեանը ապրում է Լոնտոնում շուրջ տասը տարի, որտեղ նա զբաղուում է ոչ միայն իր ֆինանսական գործերով այլ նաեւ ձգտում է հիմնել Հայկական տպարան: Իր մտադրութիւնը իրականացնելու գլխաւոր բարդութիւնը կայանում էր տպատուերի պատրաստման մէջ: Երկարատեւ եւ ապարդիւն որոնումներից յետոյ, վերջապէս, 1780 թ. անգլիացի մի արհեստաւորի օգնութեամբ յաջողուում է պատրաստել տալ Հայերէն տառատեսակներ: Նոյն թուականին նա տպագրում է իր առաջին գիրքը, որը Վիստոն եղբայրներից յետոյ Լոնտոնում տպագրուած երկրորդ Հայերէն գիրքն է:

Ներսէս Ծնորհալու «Հաւատով խոստովանիմ» ստեղծագործութեան Հայերէն, լատիներէն, ֆրանսերէն եւ անգլերէն գրուած տարբերակները տեղ են գտել գրքում:<sup>46</sup> Սակայն չգտնելով Անգլիայում Հայերէն լեզուով լոյս տեսած գրքերի պահանջարկ, 1781 թ. նա տեղափոխուում է Ս. Պետերբուրգ, որտեղ շարունակում է իր սկսած գրատպութեան գործը:

Հայ-անգլիական կապերի նոր շրջանը, որը աչքի է ընկնում հնդկահայերի եւ անգլիացիների միջեւ գիտական եւ մշակութային կապերի բուռն զարգացմամբ, սկսում է 18-րդ դ. վերջին տասնամեակներին: Դա կապուած էր այն հանգամանքի հետ, որ Հայերի մի զգալի մասը իրենց ակտիւ գործունէութիւնը ծաւալում են բժշկութեան եւ իրաւաբանութեան ասպարէզում: Նոյն դարի վերջին Հայերը Հնդկաստանում հիմնում են առաջին անգլիական դպրոցը, իսկ 19-րդ դ. կէսին դրանց թիւը հասնում է հինգի:

Նշուած ժամանակաշրջանում կրթութիւն ստանալու նպատակով Անգլիա են մեկնում առաջին Հայերը: 18-րդ դ. 80-ական թթ. Վենետիկի Ռաֆայէլեան վարժարանի հիմնադիր, է. Ռ. Կարամեանը ուղարկում է իր երկու որդիներին Լոնտոն ուսում ստանալու նպատակով: Նրա աւագ որդին Ալեքսանտր Ռաֆայէլեանը հաստատուելով Անգլիայում 1829 թ. նշանակում է Լոնտոն քաղաքի շերիֆ, այսինքն կառավարութեան գլխաւոր ներկայացուցիչ: Նա նոյնպէս առաջին Հայն է, որ ընտրուել էր անգլիական պառլամենտի Համայնքների պալատ: Ա. Ռաֆայէլեանը սերտ կապեր ունէր Վենետիկի Մխիթարեանների հետ, որոնց օգնութիւն էր ցոյց տալիս հին Հայկական ձեռագրերի հրատարակման գործում:<sup>47</sup>

45. M. J. Seth, "History...", էջ 89:

46. V. Nersessian, Աշխ., էջ 4:

47. A. Basil, "Armenian Settlements in India", West Bengal, 1969, էջ 50:

Հայ մտաւորականութեան առաջացումը յանգեցրեց Հայ անգլիական գրական կապերի հաստատմանը 18-րդ դ. վերջին, երբ Հայ ազատագրական շարժումը նոր վերելք էր ապրում: Վ. Փարթամեանը, որը ուսումնասիրել է Հայ անգլիական գրական կապերի հարցը, նշում է, որ «Ազդարարը» Հայ պարբերական մամուլի անդրանիկ ամսագիրը, որը լոյս էր տեսնում Մադրասում 1794-1796 թթ. կազմուած էր անգլիական ամսագրերի ընդօրինակմամբ:<sup>48</sup>

Անգլերէնից Հայերէն կատարած առաջին գրական թարգմանութիւնը կատարուում է Մադրասում՝ 1783 թուականին: Այնտեղ լոյս է տեսնում Հանուէ Անգլիացու «Պատմութիւն վարուցն եւ գործոց Նաղիր շահ թագաւորին պարսից» Հայերէն թարգմանութիւնը: Գրքի թարգմանութիւնը իրականացնում է Պօղոս Միրզայեան Ամիրեցին:

Յովհաննէս Աւդալեանն իր գրական գործունէութեան համար ընտրուում է «Բենգալիայի ասիական ընկերութեան» անդամ, ընկերութեան ստեղծման ժամանակից՝ 1784 թ.: Անգլիացիները ստանում են նորանոր տեղեկութիւններ Հայերի եւ Հայաստանի մասին: Դրա վառ ապացոյցն է 1774 թ. Լոնտոնում լոյս տեսած մի աշխատութիւնը, որը վերնագրուած է «Նոր աշխարհագրական» պատմական եւ առեւտրային ներածութիւն եւ մի շարք թագաւորութիւնների ժամանակակից դրութիւնը»: Աշխատութեան մէջ հանգամանօրէն նկարագրուում է քրիստոնեաների անտանելի վիճակը Թուրքիայում:<sup>49</sup>

Այսպիսով, ինչպէս սոյն յօդուածում համառօտակի նշեցինք, Հայ անգլիական կապերն ունեն դարաւոր արմատներ: Դրանք ստանում են աւելի լայն բնոյթ 19-րդ դ. 60-80-ական թթ. Մանչեստրի եւ Լոնտոնի Հայ գաղութների հիմնադրմամբ: Յետագայում 19-րդ դ. վերջին եւ 20-րդ դ. սկզբին լայն զարգացում են ապրում մասնաւորապէս մշակութային կապերը, որոնք նկատելի հետք են թողել Հայ գրականութեան եւ թատրոնի վրայ:

48. Վ. Լ. Փարթամեան, «Հայ-անգլիական գրական առնչութիւնները» Եր., 1975, էջ 36:

49. P. Tonapetian, "Turkey and her British Friends", L. 1919, էջ 2:



## FEATURE ARTICLES ON ANGLO-ARMENIAN HISTORICAL RELATIONS (VIIth-VIIIth CENTURY A.D.)

RUBEN EGHEIAZARIAN

### SUMMARY

Contact between the Armenians and the inhabitants of the British Isles began as early as the VIIth century A.D. when Armenian monks appeared in Ireland. It left its mark on the early Irish Medieval miniature and monumental architecture.

During the Crusades the Armenians and the English established political relations between Armenian Cilicia and England. The Armenians began to visit Britain more often, where they were made heartily welcome.

These relations reached their climax in the XIVth Century A.D. when the Armenian king of Cilicia, Levon the VIth went to London in order to put an end to the Hundred Year's war.

Anglo-Armenian relations continued and develop during the New Age through Armenian settlements in the Netherlands, India and Persia. In 1688 A.D. a Trade Charter was made between the Armenian merchants of India and the East-India Company. Important cultural contacts were made in the XVIIIth century and in 1736 A.D. the first Armenian text was translated into Latin and published in London. Armenian intellectuals went to England for their education and the first Armenian printing house was founded in London in 1780 A.D.

## ՓԻԼԻՊՊՈՊՈԼՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅ-ԲԻՒՋԱՆԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԺԲ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԷՍԻՆ

Ա. ԲՈԶՈՅԵԱՆ

Հայկական առաջին բնակավայրերը Բալկաններում յայտնուել են վաղ միջնադարում: Արդէն Քրիստոսի ծննդին յաջորդած առաջին դարերում նկատելի է հայ բնակչութեան որոշակի, արձանագրուած գաղթ դէպի Հռոմէական կայսրութեան տարածք, սակայն սկսած Զ. դարից, Բիւզանդիան ծրագրաւորում եւ իրագործում էր հայկական լեռնաշխարհի բնակչութեան բռնի եւ կամաւոր տեղահանումը Թրակիա եւ կայսրութեան միւս արեւմտեան նահանգներ: Բիւզանդական վարչակարգի նման նկրտումների մասին տեղեկացնում է է. դարի պատմիչ Սեբէոսը, որն իր պատմական երկում հատուած է բերում Մորիկ կայսեր նամակից՝ ուղղուած իրանի շահնշահ Սոսրովին. «Ազգ մի խոտոր եւ անհնազանդ են, կան ի միջի մերում եւ պղտորեն: Բայց ե՛կ, ես զիմս ժողովեմ եւ ի Թրակի գումարեմ, եւ դու զքոյդ ժողովէ եւ հրամայէ յԱրեւելս տանել»:՝ Յետագայում հայերի տեղահանութիւնը Բիւզանդական կայսրութեան արեւմտեան նահանգներ շարունակուեց աւելի մեծ չափերով: Այդ իրողութեան շարժառիթները եւ պատճառները բազմաթիւ են եւ այս հրապարակման մէջ ես չեմ անդրադառնալու դրանց: Արդէն շատ վաղուց հայագէտները եւ բիւզանդագէտները զբաղւում են այդ խնդիրներով: Այդ հարցերին վերաբերող վերջին աշխատանքը պատկանում է գերմանացի բիւզանդագէտ Հանս Դիտտենին, որը հիմնուելով գիտական գրականութեան եւ քրիստոնեայ ու մուսուլմանական արեւելքի միջնադարեան սկզբնադրերների վրայ, կարողացել է ստեղծել Զ-թ դարերում Բիւզանդական



կայսրուժեան մէջ հայերի տեղափոխութիւնները ժամանակագրական ընդհանուր պատկերը:<sup>2</sup>

Բալկանեան թերակղզու բիւզանդական գաւառներում առաջին հայկական գաղութները յայտնուում են սկսած 2. դարից:<sup>3</sup> Մեծ ու Փոքր Հայքերից գաղթող վերաբնակիչների խմբերին որպէս կանոն զխաւորում էին տեղացի հայ աւատակէրերը ծառաների եւ զինուած ջոկատի ուղեկցութեամբ: Այդ խմբերի դաւանական պատկանելութիւնը եւս անհամասեռ էր: Ժամանակ առ ժամանակ Բալկանեան թերակղզի էին գաղթում ինչպէս Հայոց առաքելական եկեղեցու ներկայացուցիչներ (այսպէս կոչուած միաբնակներ), այնպէս էլ քաղկեդոնականներ (բիւզանդական օրթոդոքս եկեղեցու հետեւորդներ) եւ հերետիկոսներ՝ սկսած Ը. դարից հիմնականում պաւլիկիաններ,<sup>4</sup> որոնք հաւասարապէս հալածուում էին յիշատակուած երկու եկեղեցաքաղաքական կազմակերպութիւնների կողմից: Այդ բնակչութիւնը է-ժ դարերի ընթացքում դարձաւ բիւզանդական ռազմական ուժերի հիմնական յենարաններից մէկը Բալկանեան տարածաշրջանում, ուր հարկ էր առաջացել պաշտպանել կայսրութիւնը հիւսիսային սահմաններում հաստատուած քոչուոր ցեղերի յարձակումներից, որոնք ժամանակ առ ժամանակ ներխուժում էին Դանուբ գետի հիւսիսային ափից, ամայացնելով Բալկանեան թերակղզու բնակավայրերը: Այդ տարածաշրջանում բնակեցուած հայ ազգաբնակչութիւնը դարերի ընթացքում յարմարուել էր նոր բնակութեան վայրում ապրող ժողովուրդների սովորոյթներին, իսկ մի շարք վայրերում, ժամանակի ընթացքում, կորցրել էր արդէն նաեւ ազգային դէմքը: Այդ բնակչութեան ծոցից են դուրս եկել Բիւզանդական կայսրութեան բազմաթիւ պետական գործիչներ, գինուորականներ եւ աստուածաբան-հոգեւորականներ:<sup>5</sup> Չնայած դրան, ժամանակ առ ժամանակ կայսրութիւնը դաւանաբանական հողի վրայ հալածանքներ էր սկսում պաւլիկեան եւ այսպէս կոչուած միաբնակ համայնքների դէմ, որոնց յաճախ վտանգի պահին Բիւզանդիան օգտագործում էր կայսրութեան հիւսիսային սահմանների պաշտպանութեան գործում: Այդ երկու հակամէտ համայնքների նկատմամբ վարուող բիւզանդական

2. Այդ տեղահանութիւնների մասին ստեղծուել է բաւական ստուար գրականութիւն, որոնց մէջ այսօր անշուշտ ամենակարեւորներն են P. Charanis, The Armenians in the Byzantine Empire, Lisboa, 1963 (Calouste Gulbenkian Foundation Armenian Library) եւ Համս Դիտտեն, Հայերի տեղաշարժերը Բիւզանդական կայսրութեան մէջ Յուստինիանոս I-ից մինչեւ IX դար, Պատմա-բանասիրական հանդէս, 1988, ք. 1, էջ 23-36:  
3. Բալկանեան թերակղզում հայկական բնակավայրերի մասին տե՛ս այս հարցի մասին գրուած ամենավերջին յօդուածը ուր յղուած է նաեւ հարցի շուրջ եղած հիմնական գրականութիւնը (B.L. Zekian, The Armenian community of Philippopolis and the bishop Ioannes Atmanos imperial legate to Cilicia, - Between the Danube and Caucasus (BDC)/ed. by Gyorgy Kara, Budapest 1987 p. 365-368).  
4. Այս խնդրի շուրջ հիմնական մատենագիտութիւնը տե՛ս B.L. Zekian, նշւ. աշխ., էջ 365, ծան. 7:  
5. Աւելի մանրամասն տե՛ս N. Adontz, Etudes armeno-byzantines, (Biblioteque Armenian de la Fondation Caloust Gulbenkian), Lisboa, 1965. А.П. Каждан, Армяне в составе господствующего класса Византийской империи в XI-XII вв., Ереван, 1975; G. Dedeyan, Les Armeniens soldats de Byzance (IVe-XIe siecles) .- Բազմավեպ, 1987, էջ 162-193:

քաղաքականութեան շարժառիթներն ու պատմութիւնը, կարօտ են մանրագնին քննութեան: Դեռեւս հաշուառուած չեն մինչեւ ժԲ դարը եւ դրանից յետոյ խնդրոյ առարկայ հարցի շուրջ պատմող սակաւաթիւ սկզբնաղբիւրները: Բալկաններում հաստատուած յիշեալ համայնքների նկատմամբ վարուող պետական քաղաքականութիւնը կարօտ է լուրջ եւ մանրակրկիտ մենագրական ուսումնասիրութեան:

Վերջին տարիներին Վ. Հեխտի, Հր. Բարթիկեանի, Վ. Արութիւնովայ-Տիդանեանի եւ մասնաւորապէս հայր Լեւոն Աէքիեանի ջանքերով բաւական աշխատանք է կատարուել վեր հանելու եւ դասակարգելու ժԲ դարում Բալկանեան թերակղզում հաստատուած հայկական բնակավայրերի մասին վկայութիւնները: Յիշեալ հեղինակների աշխատանքներում ընդհանուր առմամբ պատկերուած է մեզ հետաքրքրող գաղութի վիճակը եւ նրա կշիռը Բիւզանդիայի քաղաքական եւ մշակութային կեանքում: Այնուամենայնիւ փորձենք եւս մէկ անգամ մասնագէտների ուշադրութիւնը սեւեռել այդ հարցերի վրայ:

\*\*\*

Բալկանեան թերակղզում, մասնաւորապէս նրա մարդաշատ քաղաքներից մէկը հանդիսացող Փիլիպոպոլիսում (այժմ՝ Պլովդիւ) հայկական բնակավայրերի դերի ու նշանակութեան բացայայտման գործում անփոխարինելի են ժԲ դարի, Կոմնենոսների կառավարման դարաշրջանի, բիւզանդական սկզբնաղբիւրները, որոնք աւելի համապարփակ են ներկայացնում հայկական գաղութի գործունէութիւնը: Մատենագրական այդ երկերը աւելի յաճախ անդրադառնում են հայոց ուղղափառ եկեղեցուն (միաբնակ) եւ հերձուածողներին, գրեթէ իրարից չտարբերակելով այդ երկու հակամէտ դաւանական խմբերը:

Բալկաններում բնակուող հայոց ուղղափառ եկեղեցու, պաւլիկեանների ու բողոքիչների մասին իր պատմական երկում ճշմարտապատում եւ մանրամասն տեղեկութիւններ է հաղորդում ժԲ դարի առաջին կէսի հեղինակ, կայսր Ալեքս Ա. Կոմնենոսի (1080-1118) դուստր Աննա Կոմնենէն: Նա իր հօր կառավարման դարաշրջանը գովերգող, «Ալեքսիադայ» անուանուած պատմական երկում յաճախ է անդրադառնում Բիւզանդական կայսրութեան դաւանաբանական քաղաքականութեանը, գովերգելով իր հօր աստուածասիրութիւնն ու աստուածավախութիւնը, որի համար նոյնիսկ նրան անուանում է «տասներեքերորդ առաքեալ»:<sup>6</sup> «Ալեքսիադայի» մի շարք հատուածներում բիւզանդական պատմագրուհին պատմում է հերետիկոսական շարժումների (պաւլիկեաններ, բողոքիչներ եւ միաբնակ հայեր) դէմ կայսեր պայքարի մասին, որոնց կենտրոնն էր դարձել Փիլիպոպոլիս քաղաքը եւ նրա շրջակայքը:

6. «καὶ ἔγωγε τοῦτον τρισκαίδεκατον ἀν ἀπόστολον ὀνομάσαιμι» տե՛ս Annae Comnenae Alexiadis, Libri, XV, ed. Ludovicus Schopen, vol. II, Bonnae, 1878, p. 300 (այստեղիւ՝ A.C.):



Քաղաքի բնակչության դաւանական եւ էթնիկական խմորումներին Աննա Կոմնենէն աւելի հանգամանօրէն է անդրադառնում իր գրքի ԺԴ մասում. «Այդ քաղաքը միմեանց միջեւ էին բաժանել հայերը, այսպէս կոչուած բողոմիւնները, որոնց եւ իրենց հերձուածի մասին կը խօսեմ աւելի ուշ, իր ժամանակին եւ աստուածամերժ պաւլիկեանները, մանիքեականների ճիւղերից (սերունդներից), ինչպէս այդ մասին վկայում է նաեւ նրանց անունը՝ առաջացած (սերուած) Պաւլոսից եւ Յոհանից: Նրանք իրենց ամբարշտութիւնը ուսանել են Մանիից եւ մաքուր վիճակով այն փոխանցել իրենց հետեւորդներին»: 7 Մէջբերուած հատուածում բիւզանդական պատմագրուհին տեղեկացնում է, որ քաղաքը իրար միջեւ էին բաժանել հերձուածող հայերը, այսպէս կոչուած բողոմիւնները եւ մանիքեացիներից սերող պաւլիկեանները: Իր տեղեկութիւնները մասնաւորեցնելով մանիքեացիների վրայ, Աննա Կոմնենէն յայտնում է, որ նշուած հերետիկոսներին. «Ասիայից՝ Նալիքների (երկրից) եւ Արմենեակից Թրակիա է բերել եւ ստիպել է բնակուել Փիլիպպոսի շրջակայքում» 8 կայսր Յովհաննէս Չմշկիկը: Իհարկէ կարելի է աւելի ճշգրիտ թուազրել առաջին մանիքեական-պաւլիկեանների բնակեցումը Թրակիայում, սակայն ներկայ յօդուածում ցանկանում ենք մասնագէտների ուշադրութիւնը հրահրել այն հանգամանքի վրայ, որ նրանց, ըստ Աննա Կոմնենէի, բիւզանդացիները տեղահանել են Արմենիակոնից եւ Նալիքների 9 երկրից:

Բիւզանդական պատմագրուհին անդրադառնում է նաեւ նրանց Բալկաններում բնակեցնելու Յովհաննէս Չմշկիկի ծրագրերին, ըստ որոնց կայսրը Փոքր Ասիայում նրանցից խլել է ամուր պաշտպանուած քաղաքներ եւ ամրոցներ, որոնց նրանք տիրել են որպէս անսահմանափակ իշխողներ, միւս պատճառն էլ այն է, որպէսզի նրանց օգտագործի Թրակիան պաշտպանելու համար, որը ենթարկուած էր սկիւթների (այսինքն՝ արեւելեան սլաւոնների) ռազմարշաւներին. «ἀμα μὲν τῶν ἐρυμνοτάτων πόλεων καὶ φρουρίων, ἃ κατείχον τυραννιώντες, ἀπαγαγόν, ἀμα, δὲ καὶ φύλακας ἐπιστήσας ἀσφαλεστατοῦς τῶν Σκυθικῶν ἐκείνων διεκδωρῶν, ἄς ὑποσύχνωσ ὑπὸ βαρβάρων τὰπὶ Θράκης ἐπεπόνθει Χωρία<sup>10</sup>»: Այս հատուածից կարելի է ենթադրել նաեւ, որ Աննա Կոմնենէի դարաշրջանից դեռ ոչ այնքան հեռու ժամանակներում Բիւզանդական կառավարութիւնը շարունակում էր օգտագործել հերձուածների եւ հերետիկոսների գինական ուժերը:

7. A.C., p. 297 ( Ἀρμένιοι τε γὰρ διενείμαντο τὴν πόλιν ταύτην καὶ οἱ λεγόμενοι Βογόμιλοι, περὶ ὧν ὕστερον καὶ αὐτῶν καὶ τῆς τούτων αἰρέσεως ἐροῦμεν κατὰ καιρὸν, καὶ οἱ δυσθεώτατοι Παυλικιάνοι, τῆς Μανιχαϊκῆς ἀποσπάσαι τυγχάνοντες, ἐκ Παύλου καὶ Ἰωάννου, ὡς καὶ τοῦνομα λέγει, γεγεννημένοι, οἱ τῆς ἀσβεβείας τοῦ Μάνεντος ἐπισπασάμενοι ἄκρατον τοῖς ἀπ' ἐκείνων μεταδεδώκασιν ) :  
 8. Նոյն տեղում, էջ 298 (... ἐκείθεν ἀπὸ τῶν Χαλύβων καὶ τῶν Ἀρμενιακῶν τόπων εἰς τὴν Θράκην μετένεγκε καὶ τὰ περὶ τὴν Φιλιππούπολιν αὐλιζέσθαι κατηγάκασεν ) :  
 9. Պատմագրուհին կայսրի օգուում է անտիկ պատմագրութեան տեղանունացանկից: Նշուած երկրաւար գոմում էր Փոքր Հայքի Հիւսիսում (տե՛ս Paulis Realencyclopaedie der classischen Altertumwissenschaft, neuε bearb. von George Wissowa, Bd., 1112, Stuttgart 1970, S. 2099—2100).  
 10. A.C., p. 298.

Շարունակելով նոյն թեմայի շուրջ ծաւալուած խօսակցութիւնը բիւզանդական պատմագրուհին գրում է. «Փիլիպպոսի բնակիչները, բացառութեամբ քչերի, մանիքեականներ էին, որոնք բռնանում էին տեղի քրիստոնեաների վրայ, նրանց ունեցուածքը թալանելով, եւ քիչ հոգ տանելով կամ բանի տեղ չդնելով կայսեր կողմից ուղարկուածներին: Միաժամանակ նրանք բազմանում էին եւ Փիլիպպոսի շրջանում բոլորը հերձուածող էին դարձել: Այնուհետեւ նրանց խառնուեց հայերի միւս դասը հոսանքը, որ սկիզբ էր առնում Յակոբի պղտոր ակունքից: Եւ ինչպէս ասում են, այն (քաղաքը) ամենայն կեղտի կիրճ էր: Եւ եթէ դաւանանքով տարբերում էին, ապա ապստամբութիւնների (ուրացութեան) ժամանակ համաձայնում էին մանիքեականների հետ»: 11

Վերոյբերեալ տեղեկութիւններից յայտնի է դառնում, որ Բիւզանդական կայսրութեան համար Փիլիպպոսում եւ նրա շրջակայքում բնակչութեան մեծագոյն մասը հերետիկոսներ էին, եւ որոնց հայրենիքը գտնուում էր հայկական լեռնաշխարհում: 12 Բիւզանդական պատմագրուհու դիրքորոշումից երեւում է նաեւ, որ գրեթէ տարբերութիւն չի տեսնում բողոմիւնների, պաւլիկեանների եւ Հայոց առաքելական եկեղեցու ներկայացուցիչների միջեւ, քանի որ նրանց հաւասարապէս թշնամի է համարում բիւզանդական եկեղեցուն եւ պետութեանը, չնայած ընդգծում է նրանց մէջ եղած դաւանական տարբերութիւնը: Այսպէս կոչուած հերետիկոսներն ու հերձուածողները ճշմարիտ ուղուց շեղում էին օրթոդոքս-բիւզանդական դաւանանքի քրիստոնեաներին, այդ պատճառով էլ Ալեքս Ա. Կոմնենոսը մեծագոյն հետեւողականութեամբ էր պայքարում նրանց դէմ. օգտագործելով իր հսկայական զինուորական փորձը, ոմանց բռնում էր առանց մարտի, միւսներին գէնքի ուժով ստրկութեան էր տանում: 13 Այլախոհների նկատմամբ հալածանքները եւ նրանց ստիպողաբար կրկնակի «սուրբ մկրտութեան» պարտադրումը, տարածում էր ոչ միայն մանիքեական ուսմունքի հետեւորդներ պաւլիկեանների եւ բողոմիւնների վրայ, այլ նաեւ այսպէս կոչուած միաբնակ հայերի նկատմամբ: 14 Նմանատիպ քաղաքականութիւն Բիւզանդական կայսրութիւնը վարում էր ե՛ւ Բալկաններում, ե՛ւ Փոքրասիական նահանգներում:

11. Նոյն տեղում, էջ 299—300 ( πᾶσα γὰρ ἡ φιλιππούπολις πλὴν ὀλίγων ὄντες Μανιχαῖοι τῶν τε αὐτόθι Χριστιανῶν ἐτυράνουν καὶ τὰ τούτων διήραζον μικρὰ φροντίζοντες ἢ οὐδὲν τῶν ἀποστελλομένων παρὰ βασιλέως. ηῦΞανοὶ τοῖνον καὶ τὰ κύκλῳ φιλιππουπόλεως πάντα ἦσαν αἰρετικοί, συνεισέβαλε δὲ καὶ τούτοις ἕτερος ποταμὸς ὁ τῶν Ἀρμενίων ἀλμυρὸς καὶ ἄλλος ἀπὸ τῶν θολερωτάτων πηγῶν Ἰακώβου. καὶ ἦν, ὡς οὕτω γε φάναι, κακῶν ἀπάντων μισγάγκεια καὶ τὰ μὲν δόγματα διεφώνουν, συνεφώνουν δὲ ταῖς ἀποστασίαις οἱ ἄλλοι τοῖς Μανιχαῖοις ) :  
 12. ԺԲ դարում Փիլիպպոսի հայկական գաղութի խայտարհետ պատկերը ներկայացուած է Հրաչ Բարթիկեանի (Գրիգոր Բակուրեանի «կանոնադրութեան» մէջ յիշատակուող «ἀνίδρυτον ἔθνος»-ի («անկայուն ժողովրդի») մասին, Լրաբեր, 1980 թ. 7, էջ 72—78) յօդուածում:  
 13. A.C., vol. II, p. 300.  
 14. Այդ մասին քաղաքի վկայութիւններ են պահպանուել հայ մտեւագրութեան մէջ: Հայոց եկեղեցին միշտ մեծարել է «սուրբ մկրտութիւնը» եւ միջնադարեան արեւելի միւս եկեղեցիների հետ միասին պայքարում էր բիւզանդական, իսկ ապա մաւր պապական եկեղեցու դէմ, որոնք ստիպում էին կոստանդնուպոլսեան օրթոդոքս կամ Հռոմի կաթոլիկ եկեղեցու գիրկը մտնելու կրկին ընդունել «սուրբ մկրտութիւնը»:



Հետաքրքիր է նաև, որ բիզանդական դաւանաբանական գրականութեան մէջ եւս անջրպետ չի դրուում հայ առաքելական եկեղեցու հետեւորդներին եւ միւս հերձուածողներին միջեւ: Ուշադրութեան արժանի է, որ Եւթիմիոս Զիգաբենոսը իր դաւանաբանական «Πανοπλία δογματική» երկում (գրուած հաւանաբար ԺԱ դարի վերջում եւ ԺԲ դարի սկզբին), գիտակցելով հաւատաբանական տարբերութիւնը, այնուհանդերձ, Հայոց առաքելական եկեղեցու ներկայացուցիչներին եւս համարում է նոյնպիսի հերձուածողներ, ինչպիսիք են մանիքեական-պալիկեաններն ու բողոքականները: Եւթիմիոս Զիգաբենոսը այդ հարցին անդրադառնում է յիշատակուած գրքի ԻԳ գլխում:<sup>15</sup> Բիզանդական այս աստուածաբանի դրոյթների հետ ամբողջովին համամիտ է Աննա Կոմնենէն:<sup>16</sup> Հայկական եկեղեցու միաբնակութեան կամ հերետիկոսական բնոյթի մասին կարծիքը Բիզանդական կայսրութեան սահմաններում գրեթէ շատ անուշ մինչեւ ԺԲ դարի 60-ական թուականները, երբ կայսրութիւնը երկար ընդհիւմմից յետոյ կրկին բանակցութիւններ սկսեց վարել Հռոմկլայի Կաթողիկոսարանի հետ Հայոց եւ Բիզանդական եկեղեցիների միութեան շուրջ:<sup>17</sup> Հռոմկլայի Կաթողիկոսարանի հետ առաջ քաշելով եկեղեցիների միութեան ծրագիրը Բիզանդական կայսրութիւնը փորձում էր իր կողմը գրաւել Բաղկանեան թերակղզու, Փորք Ասիայի, Կիլիկիայի եւ Հիւսիսային Ասորիքի հայ բնակչութեանը: Հայ ուղղափառ եկեղեցու հալածանքների հետեւանքով մեզ թւում է բաւական թուլացել էին Բիզանդական կայսրութեան դիրքերը նշուած տարածաշրջանում, քանի որ գրեթէ անհնար էր դարձել հայկական

15. Sb'u J.-P., Minge, Patrologiae graecae (այսուհետեւ՝ PG), t. 130, p. 1174-1190. Բնագրազէտ մասնագէտների ուշադրութիւնը կարելի է հրաւիրել այն համագամմէի վրայ, որ այս երկի հնագոյն ձեւագրերից մէկը պահպանում է Մոսկուայի պատմութեան քանդակարանի ձեւագրական հաւաքածոյում: Այս հեղինակի մատենագրական ծառանգութեան մասին տե՛ս H.-G. Beck, Kirche und theologische Literatur im byzantinischen Reich, München, 1959, S. 614-615.  
 16. Աննա Կոմնենէի եւ Եւթիմիոս Զիգաբենոսի վկայութիւնները Փիլիպոպոլսում հաստատուած Հայոց եկեղեցու եւ աղանդաւորների գոյութեան մասին իրենց աշխատանքներում կարեւորել են Պ.Մ. Մուրադեանը (Եւթիմիոս Զիգաբենոսի «Πανοπλία δογματική» երկի հին վրացերէն թարգմանութիւնը, «Մառը եւ հայագիտութեան հարցերը», Երեւան, 1968, էջ 266-304, յատկապէս՝ էջ 268-277) եւ Վ.Ա. Յարութիւնովան (Գրիգոր Պակուրեանը (Բակուրեան) եւ Պետրիժիոնում վանքի հիմնելու նրա նպատակները, «Մառը եւ հայագիտութեան հարցերը», Երեւան, 1968, էջ 167-192): Այս աշխատանքներում հաւաքուած են հարցի շուրջ եղած գրեթէ բոլոր սկզբնաղբիւրները եւ վկայութիւնները:  
 17. ԺԲ դարի հայ-բիզանդական բանակցութիւնների մասին աւելի համապարփակ տե՛ս Լ. Զէֆինեան, Համամիութեանական տրամախօսութիւն մը ԺԲ դարում, Բագմավէպ, 1977, էջ 591-639, Ա. Բոգոյեան, Հայ-բիզանդական դիւանագիտական յարաբերութիւնները XII դարի 60-70-ական բուականներին, ՊԲՀ, 1981, ք. 2, էջ 150-163, Bishop Aram Keshishian. The problem of Church Unity in twelfth century. Հասկ հայագիտական տարեգիրք, նոր շրջան, Ա. տարի, Անթիլիաս 1980, էջ 91-106:

գիւնական ուժի օգտագործումը կայսրութեան սահմաններում:<sup>18</sup>

Բիզանդական կողմի Հռոմկլա ուղարկած մեզ յայտնի երեք պատգամաւորութիւններից երկուսի (1170, 1171-1172) կազմում եւ մեզ հասած վաւերագրերում (ե՛ւ հայերէն, ե՛ւ յունարէն բնագրեր) յիշատակուում է նաև «զհայր վանաց Հայոց՝ որ ի Փիլիպոպոլսեաց աշխարհէն զՅովհաննէս, մականունն Ութման»: Հայ-բիզանդական բանակցութիւնների նշուած երկու փուլերին բիզանդական պատգամաւորութիւնը ղեկավարում էր կայսերական գրասենեակի պաշտօնեայ եւ աստուածաբան՝ մագիստրոս Թէորիանոսը, որը հիմնուելով բանակցութիւնների վաւերագրերի եւ սեփական գրառումների վրայ, շարադրել է յիշատակուած երկխօսութիւնների արձանագրութիւնը յունարէն լեզուով:<sup>19</sup> Բիզանդական կայսերական նամակներից, Թէորիանոսի «Տրամախօսութիւնից» եւ հայ-բիզանդական բանակցութիւնների հայկական վաւերագրերից դուրս բերենք Յովհաննէս Աթմանին (Ութման) վերաբերող բոլոր հաստուածները, աւելի ակնառու դարձնենք նրա մասին վկայութիւնները.  
 ա) Մանուէլ Ա. Կոմնենոսի 1169 թ. նոյեմբերին գրած թղթում. «τῷ καθηγουμένῳ τῆς Ἀρμενικῆς μονῆς τῆς ἐν φιλιππουπόλει τῷ Ἀτμάνῳ»: (P.G., t. 133, p. 120)– «զհայր վանաց Հայոց՝ որ ի Փիլիպոպոլսեաց աշխարհէն զՅովհաննէս, մականունն Ութման» (Թ.Ը., 1871, էջ 144):

բ) Ներսէս Շնորհալու պատասխանը գրուած 1170 թ. Հոկտեմբերին. «համազգի մեր եւ համակրօն Յովհաննէս հայր վանաց» (Թ.Ը., 1871, էջ 146)– «καὶ ὁ ὁμόφυλος καὶ ὁμοσχίμων ἡμῶν ἰωάννης ὁ ἡγούμενος, ὅς καὶ Ἀτμάνος ἐπονομάζεται»: (P.G., t. 133, p. 213).

գ) 1171 թ. գրուած Մանուէլի գաղտնի թղթում. «τὸν μοναχὸν Ἀτμάνον»: (P.G., t. 133, p. 234).

դ) 1171 թ. գրուած Մանուէլի բաց նամակում. «ὁ καθηγουμένος τῆς ἐν Φιλιππουπόλει Ἀρμενικῆς μονῆς μονῆς ὁ Ἀτμάνον»: (P.G., 133, p. 236) – «հայրդ որ ըստ Փիլիպոպոլսեաց՝ հայր (sic հա՞յ – տե՛ս Հր. Բարթիկեան) վանից Յովհաննէս անունն» (Թ.Ը., 1871, էջ 155):

ե) Թէորիանոսի Բ. Տրամախօսութեան մէջ Միքայէլ Թարգմանիչը Ներսէս Դ. Շնորհալուն ներկայացնում է Մանուէլ Ա. Կոմնենոսի գաղտնի թուղթը: Հայոց կաթողիկոսը երկմտում է, երբ նամակում հանդիպում է Աթմանի անունը. «Ταύτης τῆς γραφῆς ἀνὰ γνωσθείσης τῷ Καθολικῷ περὶ τοῦ ἐρμηνέως Μιχαήλ, ἐπεὶ εἶχε τὸ ὄνομα τοῦ Ἀτμάνου ἐν αὐτῇ, ἀκούσας ὁ Καθολικὸς εἶπε· Τὸ μυστήριον ὁ Ἀτμάνος ἡγνῶει, πῶς οὖν κεῖται τὸ ὄνομα αὐτοῦ ἐν τῇ γραφῇ»: (P.G., t. 133, p.

18. Այս լոյսի ներքոյ հետաքրքիր է նաև Յովհաննէս Կրննամոսի այն վկայութիւնը, ըստ որի բիզանդական բանակում կարող էին ծառայել միայն այն բարբարոսները (նկատի ունի ոչ օրթոդոքս ժողովուրդներին), որոնք ընդունում էին կայսրութեան պաշտօնական եկեղեցու դաւանաբանութիւնը (տե՛ս Ա.Ա. Բոգոյեան, Բիզանդիայի արեւելեան քաղաքականութիւնը եւ Կիլիկեան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական բուականներին, Երեւան, 1988, էջ 56, ծան. 23):  
 19. Ներսէս Շնորհալի, Ընդհանրական թուղթ, Երուսաղէմ, 1871 (այսուհետեւ՝ ԹԸ), էջ 144: Այդ վաւերագրերի վերջին յունարէն հրատարակութիւնը տե՛ս PG, t., 133.



236)-հայերէն թարգմ. «Յընթեոնու Միքայէլի թարգմանչի զթուղթս զայս առաջի Կաթողիկոսի, իրրեւ լուաւ նա զանուն Ատմանայ գրեալ, ասէ, խորհուրդն ծածկեալ էր յԱտմանայ. առի՞մէ անուն նորա ի թղթին գտանիցի» (Պալճեան, էջ 238):

զ) Բ. Տրամախօսութեան մէջ Աթմանը եւ Ներսէսը բանակցութիւններ ժամանակ բախուած են, նրանցից առաջինը ներողութիւն է խնդրում Կաթողիկոսի գաղտնիքը յայտնի դարձնելու համար եւ ինքն իր մասին ասում է. «εμου του όμοφύλου και όμοπίστου σου»: (P.G., t. 133, p. 248):

Հետաքրքիր է, որ պատգամաւորներ ի անունները չեն յիշատակուած Միքայէլ Գ. Անքիալոսի նամակում: Այս հանգամանքը թոյլ է տալիս մտածել, որ պատգամաւորութիւնը ներկայացնում էր Բիւզանդական պետութեան շահերը, իսկ Կոստանդնուպոլսի Պատրիարքութեան դիրքերը արտայայտում էր լոկայնքանով, որքանով այդ բանակցութիւններում շօշափուում էին եկեղեցական եւ դաւանաբանական խնդիրներ:

Սակայն ներկայ դէպքում մեզ հետաքրքրում է Յովհաննէս Աթմանի ազգութեան եւ դաւանաբանական պատկանելութեան հարցը: Այս խնդրին անդրադարձել են մի շարք հետազոտողներ: Նրանց մի մասը Յովհաննէս Աթմանին համարում է ե՛ւ ազգութեամբ, ե՛ւ դաւանանքով հայ, համարելով, որ նա Հայոց առաքելական (միաբնակ) եկեղեցու ներկայացուցիչն է, իսկ միւս մասը նրան համարում է քաղկեդոնական (երկաբնակ):<sup>20</sup> 1984 թ. այս հարցի կապակցութեամբ յօդուած հրատարակեց Հր. Բարթիկեանը,<sup>21</sup> ուր հեղինակը փորձ էր կատարում հիմնաւորել այն թէզը, ըստ որի մեզ հետաքրքրող Մանուէլ Ա. Կոմնենոսի պատգամաւոր-վանականը իր դաւանութեամբ երկաբնակ-քաղկեդոնական էր: Բիւզանդագէտի հիմնական փաստարկը հիմնուում է Ներսէս Գ. Շնորհալու նամակում այդ եկեղեցական գործչի յիշատակման նորովի ընկալման վրայ: Խօսքը վերաբերում է հետեւեալ հատուածին. «...համազգի մեր եւ համակրօն Յովհաննէս հայր վանաց»,<sup>22</sup> որը նոյն երկի յունարէն թարգմանութեան մէջ ունի հետեւեալ տեսքը. «και ό όμόφυλος και όμοσχήων ήμών Ιώάννης ό ήγούμενος, ός και Ατμάνος έπονομάζεται»<sup>23</sup>: Իհարկէ ճշմարիտ է Հրաչ Բարթիկեանը, նկատելով, որ «համակրօն» բառը հայերէն բնագրի չի համապատասխանում յունարէնի άμοσχήμων-ին, որը բառացի նշանակում է «մեր նման հոգեւոր սքեմ հագած», այսինքն՝ մեր նման եկեղեցական, ի

20. Այս վէճը ժամանակին սկսել է Պ.Մ. Մուրադեանը, գրելով. «Փիլիպոպոլսում յունադաւան (Բաղկեդոնական) հայոց եպիսկոպոսութիւն է եղել, որի ներկայացուցիչը (՞) քիզանդական կայսեր կողմից առ Շնորհալին է ուղարկուել՝ եկեղեցական միութեան շուրջ միջնորդութիւն կատարելու (տես նշու. աշխ., էջ 274): Հակառակ կարծիքը նոյն ժողովածոյում փորձել է հիմնաւորել քիզանդագէտ Վ. Արուստյանովա-Ֆիդանեանը (տես նշու. աշխ., էջ 187):

21. Роль и гумена филиппопольского армянского монастыря Иоанна Атина в армяно-византийских церковных переговорах при католикосе Нерсес IV Благодатном (1165-1173) - Լրաբեր, 1984, քիւ 6 էջ 78-88:

22. Թ.Լ., 1871, էջ 146:

23. P.G., t. 133, p. 213.

տարբերութիւն թէորիանոսի, որն աշխարհիկ անձնաւորութիւն էր:<sup>24</sup> Այնուհետեւ յարգարժան բիւզանդագէտը հաւաստիացնում է, որ Ներսէսի նամակի յունարէն բնագրում Յովհաննէս Աթմանն է կատարել վերոյիշեալ իմաստային փոփոխութիւնը:<sup>25</sup> Սակայն թէորիանոսի Տրամախօսութիւններում որեւէ յիշատակութիւն չկայ այն մասին, թէ ո՞վ է այս թղթի բնագիրը թարգմանել յունարէն: Աւելին, բիւզանդական հեղինակի նոյն երկում խօսուում է Ներսէս Գ. Շնորհալու հետ Յովհաննէս Աթմանի խօսակցութեան մասին, որի ընթացքում բիւզանդական պատուիրակը ասում է. εγώ μάλλον όφείλο δικαίως λυπείσθαι κατά σου, ότι απέκρυψας τούτο άπ έμου του όμοφύλου και όμοπίστου σου, και άπεκάλυψας αυτό άλλογενεί άνδρί»<sup>26</sup> (Ապա ընդ վայր գփղմնիս ընդ իս, ինձ առաւել անկ էր խոժոռել եւ քստմնել, զի ծածկեցէր զիրսն յինէն յազգակցէ եւ ի հաւա(տա)կցէ քումէ, եւ յայտնեցէր առն օտարի):<sup>27</sup> Իհարկէ այս հատուածն էլ է յայտնի եղել բիւզանդագէտ Հրաչ Բարթիկեանին, սակայն նա մտածում է, որ Յովհաննէս Աթմանը Մանուէլ Ա-ի յանձնարարութեամբ, թաքցնում է հայ հոգեւորականներից եւ անձամբ Ներսէս Շնորհալուց իր պատկանելութիւնը քաղկեդոնական դաւանանքին: Բիւզանդագէտը ենթադրում է, որ «Յովհաննէս Աթմանը, եղել է ոչ այլ ոք, քան մի հասարակ, Ներսէս Կաթողիկոսի վստահութիւնը շահած, բիւզանդական կառավարութեան գործակալ (агент): Նրա խնդիրը կայանում էր նրանում, որպէսզի պարզի կաթողիկոսի մտադրութիւնները, եւ տեղեկացնի դրանց մասին թէորիանոսին, որպէսզի նա աւելի հիմնաւոր կարողանայ պատրաստել իր հակախաղը Կաթողիկոսի հետ վիճաբանութիւններում»:<sup>28</sup> Իհարկէ կարելի է համաձայնուել կամ մերժել Հր. Բարթիկեանի այն ենթադրութիւնը, թէ Յովհաննէս Աթմանը, որն ընդգրկուած էր բիւզանդական պատգամաւորութեան կազմում, եղել է կայսեր գործակալը: Հնարաւոր է նաեւ, որ նա լինելով հայկական (այն է միաբնակ) վանքի վանահայր, կողմնակից լինէր բիւզանդական եկեղեցու հետ Հայոց եկեղեցու միութեան կամ թէ նախընտրէր ընդունել բիւզանդական (երկաբնակ) եկեղեցու բոլոր պահանջները: Սակայն Հր. Բարթիկեանի բերած փաստարկներն անբաւարար են, որպէսի ապացուցուի, որ Յովհաննէս Աթմանը Փիլիպոպոլսի շրջանի հայկական քաղկեդոնական վանքի վանահայր<sup>29</sup> է, որովհետեւ «համակրօն» եւ όμοσχήμων տերմինների տարբերութեան կողքին նոյն թէորիանոսի բնագրում նրա բերանում գրուած խօսքը հակասում է այս ենթադրութեանը:

24. Р. Бартикан, Լրաբեր, 1984, քիւ 6, էջ 81:

25. Նոյն տեղում, էջ 81:

26. P.G., t. 133, p. 248.

27. Տես Ա. Պալմեան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս եւ միութեան նոցա ընդ Հոմմէական եկեղեցւոյ ի Փիլորնետեան սիւննոցոսի, Վիեննա, 1878, էջ 244:

28. Լրաբեր, 1984, քիւ 6, էջ 84:

29. Յօդուածի վերջում Հր. Բարթիկեանը Յովհաննէս Աթմանին յայտարարում է Բաղկեդոնի Պետրիժոն վանքի վանահայր (տես Լրաբեր 1984, քիւ 6, էջ 88):



Մեզ հասած սկզբնաղբերները դեռևս չեն հաստատում նաև այն վարկածը, որ Յովհաննէս Աթմանը յետագայում դարձել է Փիլիպոպոլիս քաղաքի եւ գաւառի հայկական միաբնակ եկեղեցու եպիսկոպոս: Այդ վարկածը 1967 թ. առաջ է քաշել գերմանացի գիտնական Վինֆրիդ Հելտը,<sup>30</sup> որին հետեւելով, այդ տեսակէտը մասնաւորեցրել է Վենետիկի Մխիթարեան միաբանութեան վարդապետ, փրոֆ. Լ. Չէքիեանը:<sup>31</sup>

Իհարկէ պահպանուած սկզբնաղբերները մեզ թոյլ չեն տալիս ճշգրիտ տեղադրել այն վանքը, ուր վանահայր է եղել Յովհաննէս Աթմանը, սակայն նրա մասնակցութիւնը հայ-բիւզանդական բանակցութիւններին վառ ապացոյց է այն միտումի, որ ժԲ դարի Բ կէսին Բիւզանդական կայսրութիւնը սկսում է հաշուի նստել Փիլիպոպոլիսի եւ նրա գաւառի միաբնակ հայ բնակչութեան հետ:

Թեորիանոս մագիստրոսի դէպի Հռոմկլայ կատարած երկրորդ դեսպանագնացութիւնից գրեթէ մէկ եւ կէս տասնամեակ անց հայկական, յունական եւ լատինական սկզբնաղբերները կրկին սկսում են յիշատակել Փիլիպոպոլիսի գաղութը: Այս գաղութի յիշատակման առիթը հայկական կաթողիկոսարանի փոխարարբերութիւններէն էին Հռոմի պապութեան հետ եւ դրանց յաջորդած երրորդ խաչակրաց ռազմարշաւը, որի ընթացքում ուրոյն տեղ էր վերապահուած Փիլիպոպոլիսին եւ նրա շրջակայքի հայ բնակչութեանը: 1184-1185 թ. Հռոմկլայի հայոց կաթողիկոսի յանձնարարականով Հռոմ է այցելում Փիլիպոպոլիս քաղաքի հայկական եկեղեցու եպիսկոպոս Գրիգորը եւ բանակցութիւններ է վարում Հռոմի կաթողիկ եկեղեցու առաջնորդի հետ:<sup>32</sup> Պահպանուել է Լուկիոս Գ-ի (1181 Սեպտ.-1185 Սեպտ.), նամակը ուղղուած Հայոց Կաթողիկոս Գրիգոր Դ. Տղային (1173-1193):<sup>33</sup> Ահա այս բանակցութիւնների մասին սկզբնաղբերներն են միայն, որ յիշատակում են Փիլիպոպոլիսի հայկական եպիսկոպոս Գրիգորին: Ինչո՞վ կարելի է բացատրել Հայաստանից այդքան հեռու՝ Բալկաններում գտնուող եպիսկոպոսական աթոռի ղեկավարի այցելութիւնը, որպէս Հռոմկլայի Հայոց Կաթողիկոսի նուիրակ՝ կաթողիկ եկեղեցու գլխաւոր նստավայր:

Մանուէլ Ա. Կոմնենոսի եւ նրա միակ ժառանգ Ալեքս Բ-ի մահից յետոյ (1183 թ.) Բիւզանդական կայսրութեան ներսում տարեց տարի խորանում է քաղաքական ճգնաժամը: Այդ պայմաններում, կրկին վերսկսւում են «հերձուածող» հայերի նկատմամբ հալածանքները Բիւզանդական կայսրութեան ներսում: Վինֆրիդ Հելտը այդ հալածանքների սկսման թուական է համարում Անդրոնիկոս Կոմնենոսի իշխանութեան տարիները:<sup>34</sup> Բիւզանդա-

30. Sb'u Winfrid Hecht, Byzanz und die Armenier nach dem Tode Kaiser Manuel I. (1180-1196).- Byzantion, t. 37, (1968), S. 70.  
 31. Bogos Levon Zekian, The Armenien community..., Budapest, 1987, p. 363-373.  
 32. Այցելութիւնն այսպէս է բուագրում գերմանացի գիտնական Վ. Հիլտը (տե՛ս նրա Die byzantinische Aussenpolitik sur Zeit der letzten Komnenenkaiser (1180-1185), Neustadt/Aisch, 1967, S. 58, Anm. 169).  
 33. Byzantion, t. 37, S. 68. Sb'u Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռագիր, քիւ 1026:  
 34. Byzantion, t. 37, p. 67-68.

գէտն իր տեսակէտն ամրապնդում է Նիկետաս Խոնիատէսի պատմութեան մէջ յիշատակուող Անդրոնիկոս Կոմնենոսի եւ Պատրիարք Թէոդոսիոս Ա. Բորողիոտէսի՝ հակամարտութեան շարադրանքով, ուր կայսրը դիմելով Պատրիարքին անուանում է նրան «βαθὺς Ἀρμένιος» (թաքնուած հայ). ըստ Նիկետաս Խոնիատէսի նկատի ունենալով այն հանգամանքը, որ նա հայրական կողմից հայկական ծագում ունէր:<sup>35</sup> Երրորդ խաչակրաց ռազմարշաւի նախորդէին Հռոմի կաթողիկ եկեղեցու հետ Հայոց կաթողիկոսարանի բանակցութիւնները ժԳ դարի պատմիչ Վարդան Արեւելցին կապում է Բիւզանդական կայսրութեան ողջ տարածքում հայ միաբնակների դէմ սկսուած հալածանքների հետ. «Իսկ ի վերայ Յունաց թագաւորեաց Փիսիկն որ եւ Սահակ, եւ յարոյց հալածանս եւ շարչարանս հայադաւան ազգաց, զի դարձցին յաղանդ նոցա. վասն որոյ գրէ առ նա աղբրսանս Պատրիարզն Գրիգոր (նկատի ունի Գրիգոր Դ. Տղայ Կաթողիկոսին - Ա.Բ.) խաղաղանալ ընդ ժողովրդեանն Աստուծոյ. եւ ոչ լուաւ նմա, այլ գյուղովս դարձոյց ի կրօնս իւր. եւ զայլս հալածականս արար. ուր կային երեք եպիսկոպոսի աթոռք եւ հազար եւ վեցհարիւր քահանայք. զորս ի մի հաւաքեալ բռնադատէր, յորոց սակաւք զերծան ամբողջ հաւատով: Եւ զայսպիսի աղէտս գրեաց յարեւելս տէր Գրիգոր. եւ խոշորեալ սրտիւ. ոչ ինչ կարացին առնել: Առաքէր եւ նոյն Պատրիարք եպիսկոպոս մի Գրիգոր անունի Պապն Հռոմմայ վասն վտանգին, որ ի Յունաց կրէին Հայք, եւ զի խնդրեսցեն աղօթս եւ օրհնութիւնս, որպէս եւ առաջինքն, զոր կարի մեծարեաց Պապն, եւ ետ պատարագ առնել եւ հաղորդեցաւ (sic), եւ զգեցոյց նմա զիւր քահանայապետական հանդերձ»:<sup>36</sup> Գրիգորի Փիլիպոպոլիս արքեպիսկոպոս լինելու փաստը հաւաստուած է միայն Լուկիոս Գ-ի թղթով:<sup>37</sup> Ուրեմն՝ Փիլիպոպոլիս Գրիգոր արքեպիսկոպոսը Հռոմում կարող էր լինել մինչեւ 1185 թ. Սեպտեմբերը, այսինքն՝ Անդրոնիկոս Կոմնենոսի իշխանութեան տարիներին:

Ժամանակագրական յաջորդ վկայութիւնը պահպանուել է Իսահակ Անգելոսի թղթով, որը պէտք է գրուած լինի 1185-1188 թթ. միջեւ, այն է շատ աւելի վաղ, քան երրորդ խաչակրաց բանակի ջոկատները կը ներխուժէին Բալկաններ: Իսահակ Անգելոսի գահակալման առաջին տարիներին Բիւզանդական կայսրութեան ողջ տարածքում եւ մասնաւորապէս Փիլիպոպոլսում Հայոց եկեղեցու հետեւորդների դէմ ձեռնարկուած հալածանքների մասին է վկայում յունարէն լեզուով պահպանուած Իսահակ Բ. Անգելոսի թուղթը

35. N.Ch., p. 253. Նոյն ձեւակերպումը հանդիպում է նաեւ ժԲ դարի մատենագիր Եւստաթէոս արքեպիսկոպոս թեսալոնիկցու «Պատմութիւն վասն առմանն թեսալոնիկեայ» երկում (տե՛ս Leonis Grammatici Chronographia/ex recognitione Immanuelis Bekkeri. Accedit Eustathii de capta Thessalonica Liber, Bonnae, 1842, p. 400.5-8). Եւստաթէոս թեսալոնիկցու մօտ եւս զգացում է բացայայտ բշխման վերաբերումը դէպի միաբնակ հայերը: Այս հեղինակի մօտ գրեթէ հաւասարութեան նշան է դրում հայերի եւ հրեաների մէջ (տե՛ս նոյն տեղում, էջ 400.14, նաեւ 481.1 եւ այլն):  
 36. Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսարանալ, Վենետիկ, 1862, էջ 133-134:  
 37. Sb'u Մաշտոցի անուան Մատենադարան (ՄՄ), ձեռագիր ք. 1026, քղ. 175 ք.:



ուղղուած Հայոց Կաթողիկոս Գրիգոր Դ. Տղային:<sup>38</sup> Այս նամակը, որն անկասկած գրուած է Գ. Խաչակրաց ռազմարշաւի նախօրէին, մինչեւ 1188 թ., հաստատում է Վարդան Արեւելցու այն տեղեկութիւնը, ըստ որի Հայոց Կաթողիկոսը նամակով դիմել է բիզանդական կայսերը, խնդրելով դադարեցնել հայերի դէմ սանձազերծած հալածանքը: Իսահակ Բ. Անգելոսի նամակը վկայում է, որ Գրիգոր Դ-ին մասնաւորապէս մտահոգել է Փիլիպպոսի շրջանում ապրող հայազգի բնակչութեան ճակատագիրը. «Պատուականութիւնը (իմա՛ Գրիգոր Դ. Տղան- Ա.Բ.) գրեց նաեւ, որ Փիլիպպոսի շրջանում ապրող հայերին իրենց կամքին հակառակ այնտեղի եպիսկոպոսը<sup>39</sup> թագաւորութեանս հրամանին համաձայն հաւատաւորի է անում»:<sup>40</sup>

Հետաքրքիր է նաեւ այն փաստը, որ այս վաւերագրում եւ դարաշրջանի միւս յունարէն փաստաթղթերում եւ սկզբնաղբիւրներում արդէն չեն յիշատակուում Փիլիպպոսի եւ նրա շրջակայքի պաւլիկեան եւ մանիքեական հայերը, որոնց մասին իր աշխատութեան մէջ մանրամասն խօսում էր Աննա Կոմնենէն:

Բացի Նիկեոսա Խոնիատէսի «Պատմութեան» մէջ եղած վերոբերեալ ակնարկներից, ԺԲ դարի 80-ական թթ. բիզանդական սկզբնաղբիւրների մէջ ուրոյն նշանակութիւն են ձեռք բերում Նիկեոսա Խոնիատէսի պատմութիւնը եւ ճառերը: Այս մատենագիրը Գ. Խաչակրութեան նախօրէին նշանակուել է Փիլիպպոսի եւ շրջակայքի կառավարիչ<sup>41</sup> եւ իր պատմութեան մէջ եւ առանձին եկեղեցական ու քաղաքական գործիչների գրած իր նամակներում անդրադառնում է քաղաքի եւ նրա շրջակայքի դաւանական իրավիճակին եւ Ֆրիդրիխ Պարպարոսայի գլխաւորած բանակի հանդէպ բնակչութեան վերաբեր-

38. Թղթի յունարէն բնագիրը ձեռքի տակ չունենք: Օգտուում ենք այս թղթի թարգմանութեան առիթով քիւզանդագէտ Հր. Բարթիկեանի հրատարակած երկու յօդուածներից (տե՛ս Հր. Բարթիկեան, Նոր միւրեք Կիլիկիայի հայկական պետութեան եւ Բիզանդիայի փոխարարքերու թիւնների մասին, Բանբեր Մատենադարանի, թիւ 4, 1958, էջ 285-290, P.M. Бартикан, К истории взаимоотношений между Византией и Киликийским армянским государством в конце XII в. -Византийский Временник (ВВ). Том XVII М.-л. 1960 с. т. 53-56, ուր հեղինակը բերում է նաեւ իր կողմից հատուածաբար թարգմանուած վաւերագրի հրատարակման մատենագիտական տեղեկանքը:

39. Հր. Բարթիկեանը որեւէ փաստարկ չբերելով պնդում է, որ Հայոց առաջնական եկեղեցու ներկայացուցիչ - հաւատացեալներին հաւատաւորի էր անում Փիլիպպոսի «հայ միաբնակների» եպիսկոպոսը (տե՛ս Լրաբեր, 1984 թ. 6, էջ 85): Սակայն եթէ հետեւեմք նամակի եւ միւս վկայութիւնների տրամաբանութեանը, խօսքը վերաբերում է քաղաքի յոյն-օրթոդոքս եկեղեցու առջնորդին (ἀρχιερέως), որն այդ ժամանակ Կոստանդին Պանտիսենս եպիսկոպոսն էր (տե՛ս W. Hecht, Byzanz und die Armenier nach dem Tode Kaiser Manuels I (1180-1196), Byzantion, t. XXXVII (1967), Bruxelles, 1968, p. 73).

40. Տե՛ս Հր. Բարթիկեան, ԲՄ, թիւ 4 էջ 289: Ռուսերէն թարգմանութիւնը տե՛ս P. Бартикан, ВВ. t. XVII, с. 55). Այս մասին տե՛ս նաեւ W. Hecht, Byzantion, XXXVII, p. 73.

41. Նիկեոսա Խոնիատէսը Փիլիպպոսի կառավարիչ է նշանակուել 1189 թ. (տե՛ս Herbert Hunger, Die hochsprachliche profane Literatur der Byzantiner, I. Bd., Munchen, 1978, S. 430).

մունքին: *Ըստ բիզանդական այս պատմիչի տեղեկութեան*. «Τὴν δὲ φιλιπούπολιν εἰσιῶν κεκενωμένην εὖρε τῶν πλεόνων καὶ ἐπιφανεστέρων αὐτῆς οἰκητόρων· εἰ γὰρ τις καὶ ὑπολέλειπτο, πτωχεύων ἦν οὗτος καὶ τὴν οὐσίαν πᾶσαν ἐν οἷς ἐνεδέδυτο ἀριθμῶν ἢ τοῖς Ἀρμενίοις καταλεγόμενος· οὗτοι γὰρ μόνοι τῶν ἀπάντων οὐκ ἐπιδρομὴν ἐθνῶν, ἀλλὰ παρουσίαν τὴν τῶν Ἀλαμανῶν διέλευσιν ἤγγητο, ἐπειδὴ καὶ συγχρῶνται Ἀρμενίοις Ἀλαμανοὶ καὶ κατὰ τῶν αἰρέσεων τὰς πλείστας ἀλλήλοις συμφέρονται. Ἀρμενίοις γὰρ καὶ Ἀλαμανοῖς ἐπ' Ἰσης ἢ τῶν ἁγίων εἰκόνων προσκύνησις ἀπηγόρευται, καὶ τοῖς ἀζύμοις κατὰ τὰς ἱεροτελεστίας ἀμφότεροι κέχρηται καὶ ἄλλα ἄττα ὀρθοδόξοις χριστωνύμοις ἀπόβληται οὗτοι σφαλλόμενοι τοῦ ὀρθοτηροῦσιν ὡς ἔνομα»:<sup>42</sup>

Փիլիպպոսի հայկական դադարի եւ քաղաք ներխուժած Գ. Խաչակրաց ռազմարշաւի բանակների հետ հայերի բարեկամական փոխարարքերութիւնների մասին վկայում է նաեւ դէպքերին ժամանակակից գերմանացի պատմիչ Անսբրտը իր «Ֆրեդերիկ կայսեր ռազմարշաւի պատմութիւն» (Historia de expeditione Frederici imperatoris) երկում: Այս մատենագրական երկում հայերն անուանուում են յաղթական կայսեր հաւատարիմ բարեկամներ» (Per Armenios fideiiores victoriosimo imperatori):<sup>43</sup> Սակայն այս հարթութեան վրայ եւս անկարելի է բացատրել Նիկեոսա Խոնիատէսի այն խօսքերը, ըստ որոնց հայերը եւ գերմանացիները համաձայն են բազմաթիւ հերետիկոսական ուսմունքներում, եւ սովորութիւններ ունեն որոնք մերժում է բիզանդական եկեղեցին: ԺԲ դարի բիզանդական դաւանաբանական աշխատութիւններում յաճախ են հանդիպում երկեր, որոնք նուիրուած են Հայոց առաքելական եւ Հռոմի կաթոլիկ եկեղեցիներում պատարագի ժամանակ օգտագործուող բաղարջի խնդրին:<sup>44</sup> Սակայն միայն այս ծիսական նոյնութիւնը, իմ խորին

42. «(Ֆրիդրիխ Պարպարոսան) մտնելով Փիլիպպոսիս, գտաւ այն գրեթէ ամբողջովին դատարկ, քանի որ քիչ թէ շատ օրինաւոր բնակիչները փախել էին այնտեղից, իսկ եթէ որեւէ մէկն էլ մնացել էր, ապա կամ ինչ որ աղքատ էր, որի ունեցուածքը միայն իր հագուստն էր, կամ էլ հայ էր: Իրականում միայն հայերն էին համարում գերմանացիների գալուստը ոչ թէ ազգերի ներխուժում, այլ բարեկամների այց, քանի որ նրանք գերմանացիների հետ վարում են առեւտրական գործեր եւ փոխադարձաբար համաձայն են նրանց հետ բազմաթիւ հերետիկոսական ուսմունքներում: Այսպէս, հայերի եւ գերմանացիների կողմից հաւասարապէս մերժում է սուրբ պատկերների պաշտամունքը, թէ մէկը եւ թէ միւսները սրբազան պատարագի ժամանակ օգտագործում են բաղարջ, եւ շեղուելով ուղիղ ճանապարհից, որպէս կամոն, ունեն նաեւ ուրիշ այլ (սովորութիւններ), որոնք մերժում են օրթոդոքս քրիստոնեաները» (Nicitae Choniatae Historia, Recensuit Ioannes Aloysius van Dieten, pars prior praefationem et textum continens, Berolini et Novi Eboraci, 1975, p. 403.71-81): Փիլիպպոսի շրջանի եւ նրա շրջակայքի հայ «հերձուածողներին» Նիկեոսա Խոնիատէսը յիշատակում է նաեւ իր նառում, նուիրուած Փիլիպպոսի օրթոդոքս եպիսկոպոս Կոստանդին Պանտիսենսին: Մատենագրական այս երկը քիւզանդագէտ Վ. Հեյտը թուագրում է 1189 թուականով (տե՛ս Byzantion, XXXVII, p. 73-74).

43. Quellen zur Geschichte des Kreuzzuges Kaiser Friedrichs I., herausgegeben. Von A. Chroust, 1964, S. 48.

44. Կոմենենսների եւ Անգելոսների դարաշրջանում յիշեալ խնդրի շուրջ պահպանուած յունարէն սկզբնաղբիւրների հեղինակային պատկանելութեան հարցերի շուրջ տե՛ս H.-G. Beck, Kirche und theologische Literatur im byzantinischen Reich, Munchen, 1959, S. 609-629.



համոզմամբ, չէր կարող լրակատար հիմք հանդիսանալ Նիկեոսա Խոնիատեսին նման յայտարարութիւն կատարելու համար:<sup>45</sup> Բիւզանդական պատմիչն ունէր հաւանաբար աւելի ծանրակշիռ փաստարկներ: Այդպիսի փաստարկ եմ համարում Գ. խաչակրաց ռազմարշաւի բանակների վերաբերմունքը Փիլիպպոպոլսի հայերի նկատմամբ: Բիւզանդական պատմիչին ծանօթ էր հաւանաբար նաեւ Հռոմի պապ Լուսիոս Գ.-ի (1181-1185) նամակի գոյութեան փաստը, որը Հռոմկլայ էր տարել Փիլիպպոպոլսի Հայոց առաքելական եկեղեցու արքեպիսկոպոս Գրիգորը: Հռոմի պապն իր այս նամակում ընդծում է որ Հայոց կաթողիկոսը եւ նրա պատուիրակութիւնը գլխաւորած եպիսկոպոսը խոստովանում են «զամենայն ուղիղ դաւանութիւն հաւատոյ»,<sup>46</sup> սակայն առաջարկում է փոփոխել որոշ ծիսական սովորութիւններ:<sup>47</sup> Այս նամակով Հռոմի պապը իր վրայ է վերցնում նաեւ Հայոց եկեղեցու նկատմամբ հովանաւորութիւնը. «այսուհետեւ սիրով եւ ճշմարիտ ոգով եւ սրտիւ եկեղեցիս Հռոմայ տեսուչ է Ձեր եւ ժողովոյ Ձերոյ»: <sup>48</sup> Բացի այս թղթից մեզ են հասել նաեւ Հռոմի պապ Կղեմես Գ.-ի (1187-1191) նամակները ուղղուած Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ.-ին եւ Կիլիկիայի հայկական պետութեան ղեկավար Լեւոն Ռուբինեանին:<sup>49</sup> Վերջին երկու նամակները Կիլիկիա են իրենց հետ բերել Գ. խաչակրութեան ղեկավարները:<sup>50</sup> Այս նամակները թուագրուած են. «գրեցաւ ի Հռոմ ի լատրանն՝ նախ քան զչորս կաղանդաց յունիս ամսոյ՝ եւ յերկու ամն եպիսկոպոսութեան մերոյ»,<sup>51</sup> այսինքն՝ 1189 թ. Յունիսի 4-ին: Այս նամակներում Կղեմես Գ.-ը կոչ է անում աջակցել Գ. խաչակրաց ռազ-

45. Նիկեոսա Խոնիատեսը մաւի դաւանաբանական (Thesaurus orthodoxae fidei) երկի հեղինակն է, ուր ժէ գլխում, պատկերամարտներից (ԺՁ) անմիջապէս յետոյ եւ սակայն պաւլիկեաններից (ԺԸ) ու բոգոմիլներից (ԺԹ) անմիջապէս առաջ անդրադառնում է մաւի Հայոց դաւանանքին: Հետաքրքիր է, որ այս աշխատանքում հեղինակը դաւանական նոյնութիւն է տեսնում միայն հայերի եւ յակոբիկեանների միջեւ (տե՛ս P.G., 140, p. 101): Այս նոյնութիւնը ժամանակին ընդգծել էին մաւի Եւթիմէոս Ջիգարեանը (P.G., 130, p. 1173) եւ Աննա Կոմնենէն (տե՛ս վերելում ծան. 11): Բաղարջի ժգտագործման սովորութիւնը Եւթիմէոս Ջիգարեանը կապում է հրէականի հետ (տե՛ս P.G., t. 130, p. 1180-1184). Այս հանգամանքը հաւանաբար նկատի ունի Եւթիմէոս Թեսալոնիկացին, երբ իրար կողմ է դնում հրեաներին եւ հայերին (տե՛ս վերելում ծան. 33):

46. Տե՛ս Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռագիր ք. 1026, քղ. 173: Նոյն նամակում մի այլ առիթով Հռոմի պապը «անբիծ» է համարում այդ հաւատը (նոյն տեղում, քղ. 175):

47. Լուկիոս Գ.-ը իր նամակում պնդում է փոփոխել հետեւեալ սովորոյթները.  
 ա) գինու հետ ջուր խառնել (ՄՄ, 1025, քղ. 174ա)  
 բ) տօնել սուրբ ծնունդը Հռոմի եկեղեցու հետ նոյն օրը (ՄՄ, 1026, քղ. 175ա)  
 գ) յարմարացնել Հայոց եկեղեցական տարին Հռոմեականի հետ (ՄՄ, 1026, քղ. 175ա):

48. ՄՄ, 1026, քղ. 176ա:

49. Տե՛ս Ա. Տէր Միքէլեան, Միջին դարերի կաթողիկոսների ձգտումներն եկեղեցական խաղաղութեան համար, Արարատ, 1893, էջ 140-143:

50. Ն. Ակիմեան, Ներսէս Լամբրոնացի..., էջ 298-299, 301:

51. Արարատ, 1893, էջ 143:

մարշաւին: Հռոմի պապը որեւէ դաւանաբանական կամ ծիսական զիջում չի պահանջում եւ ընդգծում է, որ Գրիգոր Գ.-ին «որպէս ճշմարիտ քրիստոնեայ պատուեմք»:<sup>52</sup> Հռոմի յիշեալ պապերի, խաչակրաց բանակների եւ Կիլիկիայի կաթողիկոսների եւ Փիլիպպոպոլսի հայկական գաղութի նմանատիպ փոխադարձ բարեկամական տրամադրութիւններն էին մեր կարծիքով Նիկեոսա Խոնիատեսի վերոբերեալ տեղեկութեան պատմական հենքը:

Վերոբերեալ պատմական սկզբնաղբիւրները վկայում են, որ Փիլիպպոպոլսում եւ նրա շրջակայքում ԺԲ դարի 60-80-ական թթ. գոյութիւն ունէր մի հզօր հայկական գաղութ, որը ենթարկուած էր Հռոմկլայի Հայոց կաթողիկոսարանին եւ արդէն ԺԲ դարի 80-ական թուականներին ունէր եպիսկոպոսական աթոռ, որը բաւական լուրջ դեր էր կատարում Բալկանեան թերակղզու եկեղեցական եւ քաղաքական կեանքում:

52. Նոյն տեղում:



## ARMENIAN POPULATION OF PHILIPOUPOLIS AND ARMENIAN-BYZANTINE RELIGIOUS POLITICAL RELATIONS IN THE SECOND HALF OF THE XIIth CENTURY

AZAT BOZOIAN

### SUMMARY

Due to the scientific studies of W. Hecht, H. Bartikian and more especially those of Father Levon Zekian, who were all well-known for their works on Byzantium, sufficient study and classification work has been done to prove the existence of Armenian settlements within the territory of Balkan peninsula in the XIIth century.

In this article an attempt has been made to determine the significance of the Armenian Community of Philipoupolis (now Plovdiv) in Byzantine political and cultural life from the sixth to the eighth decade of the XIIth century.

Original sources testify to the fact that in the eighties the community's episcopacy was subject to the Armenian Catholicos of Romegla and played quite a significant role in the political life of the Balkan peninsula.

## ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ԵՒ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ

### Ջ. ԳԱԼՍՏԵԱՆ

Հազարաւոր քիւումեթրեր են բաժանում փոքրիկ Հայաստանը Ուկրաինայից եւ Լեհաստանից: Եւ թէեւ տարածքային տեսակէտից այդ երկրները հեռու են իրարից, սակայն դարեր շարունակ նրանք պատմականօրէն կապուած եւ մօտ են եղել միմիայնց: Ճակատագրի բերումով Հայերը յայտնուեցին Ուկրաինայի եւ Լեհաստանի տարածքներում եւ հիմնեցին յայտնի իրենց համայնքները: Նրանք հնարաւորութիւն ստացան ապրելու ստեղծագործական կեանքով, շարունակելու աւանդական զբաղմունքները, ունենալու ինքնակառավարող համայնքներ, ստեղծելու նիւթական եւ հոգեւոր արժէքներ: Բայց ինչու եւ երբ Հայերը յայտնուեցին Ուկրաինայում եւ Լեհաստանում, ինչ ուղիներով նրանք թափանցեցին իրենց պատմական հայրենիքից այդքան հեռու գտնուող երկրները: Այս եւ նման հարցերի պատասխանն է տալիս սոյն յօդուածը:

Հայերի ուղին դէպի Ուկրաինա եւ Լեհաստան դժուարին էր ու երկարատեւ: Սլաւոնական աշխարհի մասին Հայերը գիտէին դեռեւս հին ժամանակներից: Հին ռուսական պետութեան հետ Հայերի կապերը պահպանուել են զբաւոյր աղբիւրներում՝ սկսած 10-րդ դարից: Իրականում դրանք շատ աւելի վաղ են առաջացել եւ իրենց արտացոլումն են գտել հնագիտական, բանահիւսական նիւթերում, ճարտարապետական յուշարձաններում, տարեգրութիւններում եւ առասպելներում: Դրա ամենավառ վկայութիւններից է երեք եղբայրների՝ Կուառի, Մելթէյի եւ Սորիանի կողմից Հայաստանում Կուառ քաղաքի հիմնադրման մասին հնագոյն առասպելը: Հայ պատմիչ Ջենոբ Գլակի (7-րդ դ. վերջ- 8-րդ դ. սկիզբ) կողմից «Տարօնի պատմութիւնում»<sup>1</sup> յիշատակուած այս առասպելը շատ է յիշեցնում նոյնպէս երեք եղբայրների՝ Կիյի, Շչեկի եւ

1. Գիրք պատմութեանց երկրից Տարօնոյ, որ կոչի Ջենոբ, Կ. Պոլիս, 1719



Խորիվի մասին առասպելը, որը պատմում է Ռուսիայում Քիեւ քաղաքի հիմնադրման մասին: Ժամանակին տարածուած այս առասպելը գրի էր առել Քիեւի Պեչորեան վանքի վանական, 11-րդ դարի ռուսական ակնառու պատմիչ Նեստորը: Առասպելը մեզ է հասել «Անցած տարիների պատմութեան» շարադրմամբ: Առասպելներն առաջին անգամ հանգամանորէն ուսումնասիրեց ակադեմիկոս Ն. Մառը եւ յատուկ ուշադրութիւն դարձրեց նրանց բովանդակութեան, հերոս եղբայրների, պատմական իրադրութիւնների եւ այլ կողմերի արտասաւոր նմանութեան վրայ: Քիեւ քաղաքի հիմնադրման մասին առասպելը յատուկ հետաքրքրութիւն է առաջացնում, քանի որ նրա նմանորինակը պատմուել է 4-5-րդ դդ. Հայաստանում՝ Վանայ ծովի ափերին: Հին ռուսական եւ հայկական առասպելների միջեւ դրսեւորուող համանմանութիւնները կարելոր են նաեւ այն տեսակէտից, որ նրանք ամենավաղ ապացոյցն են հին ռուսական պետութեան կազմաւորմանը նախորդող ժամանակաշրջանի հայ-սլաւոնական կապերի առկայութեան մասին: Պատմական տուեալները վկայում են, որ սկզբնական շրջանում սլաւոնների հետ հայերի կապերը պատահական բնոյթ էին կրում: Նրանք հաղորդակցուել էին ոչ թէ իրենց բուն տարածքներում, այլ սահմանակից պետութիւններում: Այդ կապերը ոչ միայն առեւտրական, այլ նաեւ ռազմա-քաղաքական բնոյթի էին:

Մօտաւորապէս 9-րդ դ. վերջից - 10-րդ դ. սկզբից արեւելեան սլաւոնների հետ հայերի կապերը պարբերական բնոյթ են ընդունում: Ռուսների հետ հայերը 10-րդ դ. երկրորդ կէսից կապուել էին Բիւզանդիայի միջոցով, որտեղ այդ ժամանակ իշխում էր «Հայկական դինաստիան» (867-1057 թթ.): Այդ յարաբերութիւններում պակաս կարեւոր դեր չէին խաղում ինչպէս Բիւզանդիայի, այնպէս էլ բուն Հայաստանի հայերը: Հայ ազնուականութեան ներկայացուցիչներից շատերը յօժարակամ ծառայում էին բիւզանդական բանակում: Բիւզանդական լաւագոյն զորապետներից շատերը Հայաստանից էին: Անգամ Բիւզանդիայի կայսրերից մի քանիսը ծագումով հայեր էին: Բիւզանդական կայսրերը օգնութեան խնդրանքով յաճախակի դիմում էին նաեւ քիեւեան մեծ իշխաններին: Այսպէս, երբ բիւզանդական հայազգի կայսր Վասիլիյ Բ. ռազմական օգնութեան համար դիմեց քիեւեան մեծ իշխան Վլադիմիր Սվյատոսլաւովիչին՝ Փոքր Ասիայում ապստամբութիւնը ճնշելու նպատակով, Վլադիմիրը այդ միութեան համար պահանջեց իրեն կնութեան տալ կայսրի քոյր արքայազուստր Աննային: Հայուհի Աննայի հետ Վլադիմիրի ամուսնութիւնը չէր կարող չնպաստել հայերի հոսքին դէպի Քիեւ, դէպի Ռուսիա: Հենց այդ ժամանակ Ռուսիան ընդունեց քրիստոնէութիւն: Ռուսիայում քրիստոնէութեան ընդունումը, Բիւզանդիայի, Բալկանեան թերակղզու, Եւրոպայի, Անդրկովկասի երկրների հետ նրա մերձեցումը, ինչպէս նաեւ հայերի հետ դինաստիական կապերի հաստատումը նպաստեցին այդ

2. Н. Марр. Книжная легенда об основании Киева на Руси и Куара в Армении - Избранные работы, т.5  
 3. Ստեփանոսի Տարօնեցոյ Աստղկան պատմութիւն տիեզերական, ՍՊր, 1885

երկրների քաղաքական, մշակութային եւ տնտեսական զարգացմանը, նրանց մերձեցմանը, ինչպէս նաեւ արարական տիրապետութեան դէմ համատեղ պայքարի ուժեղացմանը:

Աղբիւրներից տեղեկանում ենք, որ 11-րդ դ. սկզբին ռուս իշխանների հրաւերով հայերը նրանց օգնութեան հասան թագաւոր Բոլեսլաւ Քաջի առաջնորդութեամբ լեհ Ֆէոդալների դէմ մղուող պատերազմում: Այստեղից էլ նրանք յետագայում ցրուեցին ամբողջ Ռուսիայում: Հայերը զգալիօրէն նպաստեցին Քիեւից զաւթիչների վտարմանը, որից յետոյ ընդմիջտ բնակութիւն հաստատեցին այստեղ: Դրանում զարմանալի ոչինչ չկայ, ինչպէս եւ այն բանում, երբ ռուսական զօրքերը օգնութեան էին հասնում անդրկովկասեան տիրակալներին: Հայ պատմիչ Արիստակէս Լաստիվերցին տեղեկացնում է, որ 1054 թ., երբ թուրք-սելջուկները յարձակուեցին Հայաստանի վրայ, նրանց դէմ դուրս եկաւ վարանգների (այսինքն «վայրագների») գունդը: Պատմաբան Կ. Եուզպաշեանը ցոյց է տուել, որ «վրանգ» («վայրագ») տերմինը նոյնական է «ռուս» բառին եւ որ այն ժամանակուայ յունական եւ հայկական աղբիւրներում նրանք օգտագործուել են որպէս միանշանակ տերմիններ: Հայերից շատերը վերաբնակուեցին Ռուսիայում 11-րդ դ. երկրորդ կէսին:

Հայկական յիշատակարաններում վկայութիւն է պահպանուել այն մասին, որ 1062 թ., երբ Հայաստանի մայրաքաղաք Անին գտնուել էր օտարի տիրապետութեան տակ, գալիցեան իշխան Ֆեդոր Դմիտրիեւիչը կոստիացի հայերին հրաւեր ուղարկեց զփշախների (պոլովցիների) հետ համատեղ պայքարին մասնակցելու համար: Իշխանը խոստացաւ նրանց երեք տարուայ ազատութիւն, որից յետոյ նրանք կարող էին մնալ այստեղ կամ հեռանալ: Իշխան Ֆեդոր Դմիտրիեւիչի հրաւեր-հրովարտակը իր ժամանակին թարգմանուեց ռուսերէնից հայերէն, իսկ 1641 թ. հաստատուեց լեհ թագաւոր Վլադիսլաւ Դ-ի կողմից: Հրովարտակում յիշատակուել է, որ հայերը Քիեւում բնակութիւն հաստատեցին 1062 թ.:

Մէկ ուրիշ պատմաբան այլ կերպ է ներկայացնում այս փաստը: 1062 թ. ռուս իշխան Իգյասլավը հրովարտակ ուղարկեց եւ Անի քաղաքից 20,000 հայերի գինակոչեց Ռուսիայում զփշախների դէմ պատերազմելու համար: Այստեղից հայերը այլեւս չվերադարձան եւ բնակութիւն հաստատեցին Քիեւում, կամենէց-Պոդոլսկում, իսկ աւելի ուշ՝ Ռուսիայի ամբողջ տարածքում:

Հայկական գաղթավայրերի մասին պատմական աղբիւրների քաջածանօթ լեհ պատմաբան Սադոկ Բարոնչը նոյնպէս գրում է քիեւեան իշխան Իգյասլավի մասին: Վերջինս 1062 թ. «օգնութեան կանչեց տարբեր ժողովուրդների, իսկ շատ բան լսելով հայերի ազնուաբարոյ արիւթեան մասին, նրանց մօտ պատգամաբերներ ուղարկեց օգնութեան խնդրանքով՝ իր իշխանութեան ոսոխներին հետ մղելու համար»: Ս. Բարոնչը նաեւ գրում է, որ գինուորական ծառայութեան

4. Մ. Բժշկեան, Գաղթականութիւնը ի Լեհաստան եւ յայլ կողման քննակալս ի հայկազանց, Վեմստիկ, 1830, էջ 84:  
 5. S. Bargcz. Rys driejów ormianskich, Tarnopol, 1869, s.60



ժամկետը լրանալուց յետոյ հայերը յետ չվերադարձան, նրանք հիմնուեցին Քիեւում, իսկ աւելի ուշ՝ Կամեննց-Պողոսկում եւ այլ քաղաքներում: Լեհ պատմաբաններից ոմանք էլ գտնում էին, որ հայերը հրաւիրուել էին Թաթարիայից (Ղրիմից) իշխան Ֆեդոր Դմիտրիեւիչի կողմից՝ իշխանների, եւ դիչախանների դէմ մղուող պայքարին մասնակցելու համար:

Այդ հրովարտակի նկատմամբ պատմական գրականութեան մէջ գոյութիւն ունեն տարբեր տեսակէտներ: Որոշ հեղինակներ 1062 թ. հրովարտակը կեղծիք են համարում: Միւսների համար նրա իսկութիւնը ոչ մի կասկած չի յարուցում: Հարկ է նշել, որ այդ հեղինակների մի մասը տեսել էր հրովարտակը: Աւելացնենք նաեւ, որ այդ պատմաբանների մեծ մասը հայազգի չէր, այլ օտարազգի՝ ռուս, ուկրաինացի, գերմանացի, լեհ, ռումինացի, հունգարացի, իտալացի:

Վերջին ժամանակներս Ֆեդոր Դմիտրիեւիչի հրովարտակի վաւերականութիւնը խիստ քննադատութեան ենթարկեց Լվովի պատմաբաններից Յա. Դաշկեւիչը:<sup>6</sup> Յա. Դաշկեւիչը իր յօդուածում կասկածի տակ է դնում հրովարտակի իսկութիւնը, հիմնուելով նրա վրայ, որ 11-րդ դ. Քիեւում չի եղել Ֆեդոր Դմիտրիեւիչ կամ Իգնասիւս անունով որեւէ մեծ իշխան: Դրանից նա եզրակացնում է, որ 11-14-րդ դդ. Գալիցիայի տարածքում հայեր չեն եղել: Ուրիշ խօսքով, բացառում են Ռուսիայի հետ հայերի կապը այդ ժամանակաշրջանում: Այնինչ, ինչպէս խոստովանում է Դաշկեւիչը, հրովարտակից պարզ է դառնում, որ հայկական համայնքներ գոյութիւն ունէին երեք դար առաջ մինչեւ լեհ եւ լիտուացի ֆեոդալների լծի տակ Գալիցո-Վոլինեան իշխանութեան յայտնուելը:<sup>7</sup> Դաշկեւիչի բերած փաստարկները համոզիչ կերպով հերքեց հայ գիտնական Վ. Միքայէլեանը «Իշխան Ֆեդոր Դմիտրիեւիչի հրովարտակի հարցի շուրջ» յօդուածում:<sup>8</sup>

Պէտք է նշել, որ 10-11-րդ դդ. Հայաստանում ստեղծուել էր քաղաքական եւ տնտեսական այնպիսի իրավիճակ, որը յանգեցրեց Մայր հայրենիքից բնակչու-թեան զանգուածային արտագնացութեանը եւ այլ երկրներում վերաբնակեցմանը: Հայերի արտագաղթը պայմանաւորուած էր Արեւելքում Բիւզանդիայի հակահայկական քաղաքականութեամբ, ինչպէս նաեւ թուրք-սելջուկների արշաւանքներով: Մօտ երկու դար հայ ժողովուրդը տառապում էր թուրք-սելջուկների ծանր լծի տակ, որոնց յետագայում փոխարինեցին մոնղոլ-թաթարները: Հայաստանի յետագայ ճակատագիրը նոյնպէս լաւագոյն ձեւով չդասաւորուեց՝ երկրի արեւմտեան շրջանները 15-րդ դ. գրաւեցին թուրք-օսմանական զաւթիչները, իսկ 16-րդ դ. Հայաստանը բաժանուեց Օսմանեան կայսրութեան եւ Սեֆեւեան Պարսկաստանի միջեւ: Այդպէս Հայաստանը դարեր շարունակ արիւնհեղ պատերազմների թատերաբեմ դարձաւ՝ հայ ժողովուրդի

6. Я. Дашкевич, Грамота Федора Дмитриевича 1062, «Научно-информационный бюллетень Архивного управления УССР», Киев, 1962, No. 4.  
7. Նշուած աշխատանք, էջ 10:  
8. В. Микаелян. К вопросу о грамоте князя Федора Дмитриевича - «Археографический ежегодник за 1964г.», М., 1965.

համար այստեղից բխող բոլոր ծանր հետեւանքներով, առաջին հերթին հարկադրական արտագաղթով: Արտագաղթը պայմանաւորուած էր տարբեր հանգամանքներով եւ ընթանում էր տարբեր ուղիներով: Ոմանք լքում էին երկիրը ելնելով իրենց առեւտրական շահերից: Արտագաղթը տեղի էր ունենում Հայաստանը աշխարհի տարբեր երկրների հետ կապող առեւտրական ուղիներով: Առեւտրականներին գրաւում էին գործարար յարաբերութիւններով իրենց քաջ յայտնի երկրները, նրանցից յետոյ այստեղ բնակութիւն էին հաստատում նաեւ հողագործները: Միւսները փախչում էին սելջուկ զաւթիչներից: Ոմանք էլ իրենցից անկախ յայտնուել էին այլ երկրների նորաբնակների շարքում, երբ բիւզանդական զօրքերի կազմում մասնակցում էին կայսրութեան թշնամիների դէմ մղուող ճակատամարտերին: Այդ տեսակէտից յատանշական է հայ պատմիչ Մաթեոս Ուռհայեցու վկայութիւնը: Թէկուզ եւ իրադարձութիւնները, որոնց մասին նա պատմում է, տեղի էին ունենում 1065 թ., այսինքն 1062 թ. երեք տարի անց, սակայն համանման դէպքեր կարող էին եւ մինչ այդ կատարուել: Իր ժամանակագրութիւնում նա գրում է, որ 1065 թ. Բիւզանդիայի կայսր Դուկան դիչախանների դէմ պատերազմ վարելու համար հաւաքեց բոլոր յոյներին եւ հայկական զօրքերին... եւ բազմաթիւ զօրքերով առաջ շարժուեց, կանգ առնելով Տօնավիս (այսինքն Դոն) կոչուող գետի մօտ: Ղիչախանների հետ ճակատամարտը աւարտուեց բիւզանդական եւ հայկական զօրքերի կատարեալ պարտութեամբ: Վերջիններիս մի մասը գերուեց, իսկ միւս մասը փախուստի դիմեց: Վ. Միքայէլեանը համարում է, որ նրանք այլեւս չունէին յետագարձ ճանապարհ դէպի Հայաստան: Ամէնից հաւանականն այն է, որ նրանք կարող էին միանալ իրենց հայրենակիցներին, որոնք բնակչութիւն էին հաստատել Ղրիմում կամ Հիւսիսային Կովկասում:<sup>9</sup> Դա հնարաւոր էր, քանի որ 11-րդ դ. սկսած Ղրիմի թերակղզին այն կամրջակն էր, որի վրայով հայ գաղթականները շարժուել էին դէպի Հարաւ-Արեւմտեան Ռուսիա: Այսպէս, ուրեմն, հայրենիքից հայերի արտագաղթը տրամաբանական շարունակութիւն էր երկրի քաղաքական եւ տնտեսական անկման, որն իր գագաթանկէտին հասաւ օտարի տիրապետութեան հաստատուելուց յետոյ:

Ակադեմիկոս Հ. Օրբելին իրաւացիօրէն գտնում է, որ «Գալիցիայում եւ Ռուսաստանի հարաւում հայերի յայտնուելու տարեթիւր պարզելու համար անհրաժեշտ է առաջին հերթին հնարաւորին շափ լիարժէք կերպով օգտագործել հայերի մասին այն սուղ տուեալները, որոնց հանդիպում ենք ռուսական գրական յուշարձաններում»:<sup>10</sup> Այդ տեսակէտից յատուկ ուշադրութեան է արժանի Քիեւի Պեչորեան վանքի «Հարանց վարքի» մէջ ընդգրկուած մի յուշարձան, որը ներկայացնում է վանքի նշանաւոր միաբաններից մէկի՝ երանելի Ագապիտի կեանքի պատմութիւնը: Այն վերաբերում է Վսեւոլոդ Յարոսլաւովիչի (1077, 1078-1093 թթ.) եւ, յատկապէս, Վլադիմիր Մոնոմախի

9. Վ. Միքայէլեան, նշուած աշխատանք, էջ 13  
10. И.А. Орбели. Два серебряных ковша 16в. с армянской и греческими надписями - «Христианский Восток», т.6. Птр., 1917, с.7



(1113-1125 թթ.) իշխանութեան ժամանակաշրջաններին: Վարքը պատմում է, թէ Քեւում ապրում էր մի հայ բժիշկ՝ բժշկութեան մէջ այնքան փորձառու, որ մինչ այդ ընդհանրապէս չի եղել: Հիւանդի վրայ նրա մի հայեացքն արդէն բաւական էր մահուան օրն ու ժամը որոշելու համար: Հայ բժիշկը ախտորոշում եւ կանխագուշակում էր հիւանդութեան ելքը: Բուժման ընթացքում նա շօշափում էր զարկերակը, դիմում էր Ալեքսանդրիայից բերուած դեղաբոյսերի օգնութեանը, որն ապացուցում էր արաբական աշխարհի հետ հայ բժշկութեան ներկայացուցչի կապերի առկայութիւնը: Կարելորն այն է, որ բժիշկը Քիւելում միայնակ չէր, նրա շուրջ համախմբուած էին նրա հայրենակիցները, որոնք վարքում յիշատակում են որպէս «հաւատակիցներ» կամ ուղղակի «իւրայիններ»: Հայ բժիշկի համբաւն այնքան մեծ էր, որ նա հրաւիրուած է Չեռնիգով՝ ծանր հիւանդութեամբ տառապող իշխան Վլադիմիր Մոնոմախի մօտ: Վարքագրութեան հիման վրայ կարելի է մօտաւոր ճշտութեամբ որոշել 11-րդ դ. երկրորդ կէսին Քիւելում հայկական գաղութի կազմաւորման տարեթիւը: Բացի դրանից «Հարանց վարք»-ից պարզուած է, որ հայերը Քիւելում բնակուել են յատուկ փողոցում կամ թաղամասում եւ ոմն վանական Ֆէոդոսին յաճախակի այցելում էր հայկական թաղամասը՝ դաւանութեան հարցերի շուրջ հայերի հետ վիճարանելու նպատակով: Այստեղից էլ ակադեմիկոս Մ. Տիխոմիրովը եզրակացնում է Քիւելում լիարժէք հայ համայնքի գոյութեան մասին:

Քիւելի Մայր Աթոռ եկեղեցում՝ 1037 թ. հիմնադրուած Սոփիայի նշանաւոր տաճարում, մինչ այսօր էլ պահպանւում է Յարոսլաւ Իմաստունի (1019-1054 թթ.) դամբարանի մեծ մարմարեայ քարադազաղը, որը կանգնեցուել էր 11-12-րդ դդ.: Քարադազաղի զարդաքանդակներով նախշուած կափարիչի վրայ հիւսիսային կողմում կան գրեր, այդ թւում նաեւ հայկական: Գրերի վատ պահպանուածութիւնը թոյլ չի տալիս պարզելու նրանց բովանդակութիւնը: Տեղ-տեղ յստակօրէն նշմարուած են Ա.Գ.Ն.Պ. հայկական տառերը:<sup>11</sup> Քարադազաղի դեկորատիւ զարդարանքը յիշեցնում է Հայաստանի 4-7-րդ դդ. ճարտարապետական յուշարձանների գեղանախշերը: Այդ նմանութիւնը, ինչպէս նաեւ հայկական տառերի առկայութիւնը ապացոյց են այն բանի, որ 11-12-րդ դդ. Քիւելում բնակուել են հայ յայտնի արհեստաւորներ, որոնք իրենց հետքն են թողել ճարտարապետութեան եւ կիրառական արուեստի յուշարձաններում: Աւելացնենք նաեւ, որ հին Ռուսիայում, ինչպէս օրինակ Քիւելի մօտակայքում, կանգնեցուել են սուրբ Գրիգորին նուիրուած տաճարներ: Իսկ Նովգորոդի յայտնի Ներեդիցան պահպանել էր (մինչեւ Փաշիստների կողմից նրա բարձրաստիակա աւերումը) սուրբ Գրիգորին, ինչպէս նաեւ սուրբ Հռիփսիմէին պատկանող որմնանկարներ: Հետաքրքիր է, որ Սուրբ Գրիգորը պատկերուած էր ոչ թէ բիւզանդական կերպարանքով, այլ հին Հայաստանի եկեղեցիների որմնանկարներին բնորոշ զգեստաւորմամբ:<sup>12</sup> Նովգորոդում

11. Վ. Հարութիւնեան, Մի հայատառ մակագրութեան մասին- Տեղեկագիր հասարակական գիտութիւնների, Սրբաւան, 1956, քիւ 5, էջ 119

12. Л.М. Меликсет - Бек. Из истории армяно-украинских отношений- «Исторические связи и дружба украинского и армянского народов», Ереван, 1961, с. 120-121

15-րդ դ. Հայաստանի Լուսաւորչի պատուին նոյնպէս եկեղեցի կանգնեցուեց, որի ճարտարապետութեան մէջ նշմարուած են հին հայկական ճարտարապետութեան հետքեր:

Քիւելում 12-րդ դ. հայկական գաղութի գոյութեան վերաբերեալ կան եւ ուրիշ վկայութիւններ: Այդ առումով նշանակալից է ուսական գրականութեան հնագոյն յուշարձաններից մէկի՝ «Բորիսի եւ Գլբրի վարքի» հին հայկական թարգմանութիւնը: Այդ յուշարձանում կան սրբերի հրաշագործութիւններ, որոնց «քաղուածք/ ի մերոյ աշխարհէս տեսողք եղեալ, պատմեն մեզ»: <sup>13</sup> Այլ կերպ ասած Հայաստանից «ի մերոյ աշխարհէս» շատ-շատերը լինում էին Քիւելում եւ հայրենիք վերադառնալով խմբագրին կամ թարգմանչին պատմում Բորիսի եւ Գլբրի հրաշագործութիւնների մասին՝ Քիւելում լսած առասպելները: Սակայն ինչպիսին էր Քիւելի հայերի թուաքանակը, ինչպիսին էին նրանց զբաղմունքները՝ դրանց մասին աղբիւրներում չկան տեղեկութիւններ:

12-րդ դ. երկրորդ կէսին սկսուած է հայերի աւելի ակտիւ եւ զանգուածային վերաբնակեցումը Ռուսիայի տարածքներում: Դա կապուած էր, ինչպէս արդէն նշել ենք, թուրք-սելջուկների լծի տակ գտնուող հայերի ծանր վիճակի, երկրի տնտեսական եւ քաղաքական անկման հետ: Միեւնոյն ժամանակ Արեւելեան Եւրոպայում նոյնպէս տեղի էին ունենում որոշակի քաղաքական եւ տնտեսական տեղաշարժեր: Հին Ռուսիան, երբեմնի հզօր պետութիւնը, 12-րդ դ. կէսից բաժանուեց առանձին իշխանութիւնների: «Վարյագներից դէպի Յունաստան» նախկին առեւտրական մայրիւղին կորցրեց իր առաջնայն նշանակութիւնը: Նրան փոխարինելու եկաւ նոր առեւտրական ճանապարհը, որը Վիսլայի, Արեւմտեան Բուգի, Դնեստրի միջոցով միմեանց էր կապում Բալթիական եւ Սեւ ծովերը: Նոր առեւտրական ուղու վրայ հիմնուեցին եւ ծաղկում ապրեցին առեւտրա-արդիւնաբերական կենտրոնների նշանակութիւն ունեցող նոր քաղաքներ: Դրանցից էր Ադքերմանը, Կամենեց-Պոդոլսկը, որով Ռուսիան կապուած էր Մոլդովայի եւ Հարաւային Եւրոպայի երկրների հետ, եւ յատկապէս Լվովը, որը երկու կարելոր առեւտրական ուղիներով կապուած էր Լեհաստանի եւ Կենտրոնական Եւրոպայի երկրների հետ: Կարելոր նշանակութիւն ունէին նաեւ Լուցքը եւ Վլադիմիրը (հայկական աղբիւրներում՝ Օլաթեմիր), որի միջոցով ապրանքափոխանակութիւն էր իրագործուած Լիտվայի, Հիւսիսային Լեհաստանի, Մագդեբուրգի եւ Հանզայի մէջ ընդգրկուած քաղաքների միջեւ: Հայ գաղթականները տեղաշարժուած էին դէպի Հարաւ-Արեւմտեան Ռուսիա, Գալիցիա, Լեհաստան, Ղրիմ, Մերձվոլգեան շրջաններ, որտեղ գտնուած էին կեանքի համար աւելի տանելի պայմաններ, ֆիզիքական գոյութեան երաշխիքներ: Այստեղ էլ նրանք հիմնում էին իրենց բնակավայրերը: Պրոֆեսոր Ի. Լիննիչենկոյի կարծիքով՝ Հարաւային Ռուսիայի հայերով բնակեցուած առաւել նշանակալից կենտրոնները՝ Լվովը, Լուցքը, Կամենեց-Պոդոլսկը, իրենց հարստութեամբ, ճոխութեամբ եւ շքեղութեամբ, մեծամասամբ պարտական էին հայերին: Հարաւային Ռուսիայի առեւտրական

13. Л.С. Хачикян. Армянские колонии на Украине в 16-17вв.- «Великая дружба», Ереван, 1954, с. 196.



կենտրոնները, շնորհիվ հայերի, միջնորդի դեր էին կատարում Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ տեղի ունեցող առեւտրում: Հարաւային Ռուսիայում եւ Լեհաստանում արեւելեան ապրանքներով առեւտրի մենաշնորհը պատկանում էր բացառապէս հայերին, հենց այդ էր պատճառը, որ արեւելեան ապրանքներից շատերը կրում էին «հայկական ապրանք» անուանումը:

Հայերի բնակութեան համար առաւել յարմարաւէտ գտնուեց Լվով քաղաքը, որը գտնուում էր կարեւոր առեւտրական ուղիների խաչմերուկում: Յայտնի է, որ Լվովում բնակութիւն հաստատած հայերը 1183 թ. (քաղաքի հիմնադրումից առաջ) կառուցեցին փայտեայ եկեղեցի, որը յետագայում փոխարինեցին քարէ եկեղեցիով: Լվովում կային նաեւ 1130, 1183, 1184, 1200 եւ 1245 թթ. թուագրուած հայկական տապանաքարեր:

Հին ռուսական պետութեան մայրաքաղաք Քիււր ֆեոդալական երկպառակտումների հետեւանքով 12-րդ դ. կորցրեց իր առաջուայ նշանակութիւնը եւ դադարեց ռուս իշխանների նստավայրը լինելուց: Քիււր հայերի թուաքանակի եւ, ընդհանրապէս, այստեղի հայ համայնքի մասին տեղեկութիւնները կցկտուր են: Սակայն յայտնի է, որ Քիււր եւ նրա շրջակայքի հայ բնակչութեան թիւն այնպիսին էր, որ յատուկ թեմ ստեղծելու անհրաժեշտութիւն ծագեց: Դրա մասին է տեղեկացնում 17-րդ դ. կաթողիկ գործիչ Ալոիզ Պիդուն «Համառօտ տեղեկութիւններ Լեհաստանի, Վալախիայի եւ մօտ երկրների հայերի մօտ առաքելական քարոզչութեան տարածման սկզբնաւորման մասին» յիշողութիւնների գրքում: «Անցեալում Քիււր հայերի Արքեպիսկոպոսի Մայր Աթոռ քաղաքն էր, ուր Արքեպիսկոպոսը Հայրապետ էր անուանուում եւ ենթարկում էր Կաթողիկոսի իշխանութեանը... Նրան շնորհուած էր անգամ եպիսկոպոսի ձեռնադրութեան իրաւունքը»: <sup>14</sup> Իսկ Լեհահայ մշակոյթի ներկայացուցիչ Սիմէոն Լեհացու ժամանակ Քիււրում 17-րդ դ. բնակուում էր ընդամէնը 4 հայ ընտանիք: Այդուհանդերձ, դեռ թարմ էին յիշողութիւնները հայկական գաղութի առաջուայ բարեկեցութեան մասին: Ակադեմիկոս Լ. Պաշիկեանը համոզիչ կերպով ապացուցեց, որ հայկական աղբիւրները, սկսած 15-րդ դ., տեղեկութիւններ են պահպանել Քիււրի մասին, Մանկերման անուան տակ: Սիմէոն Լեհացու «Ուղեգրութիւններում» հետաքրքիր փաստերի ենք հանդիպում Քիււրի անցեալի վերաբերեալ: «Եւ մեծն Մանքերման ասին թէ յորժամ սէֆէր լինէր, հինգհարիւր հոգի կելէր Հայոց ի պատերազմ, եարար պահատուրնի եւ այժմ չորս տուն հայի մնացել է, բայց շատ խանութներ, վախրֆ տներ, ջաղաքք, արտեր, պախչանի եւ այլք դեռ հայոց ձեռքն է»: Լվովի պարոնայք նշանակել են այստեղ, ինչպէս նաեւ Լուցքում, քահանայի, որին վարձատրում են եւ պահպանում են եկեղեցիները բարեկարգ վիճակում: <sup>15</sup> Այս տեղեկութիւնները լրացնում են մեր գիտելիքները Քիււրի հայերի թուաքանակի, զբաղմունքների, ինչպէս նաեւ իրենց երկրորդ

հայրենիքը դարձած երկրի պաշտպանութեանը մասնակցելու մասին: Գաղութի ծաղկման ժամանակաշրջանում, եթէ Քիււրի հայերը ի վիճակի էին 500 արի մարտիկներ տրամադրել քաղաքի պաշտպանութեանը, հետեւաբար, նրանց ընդհանուր թիւը պէտք է հասնէր 3-4 հազարի: Լեհական աղբիւրներում տեղեկութիւններ են պահպանուել այն մասին, որ 1410 թ. Գրիւնվալդեան ճակատամարտում լեհական բանակի կազմում Տեւտոնեան միաբանութեան ասպետների դէմ մարտնչել են նաեւ հայ զինուորներ, այդ թւում եւ Քիււրից:

Հարաւային եւ Հարաւ-Արեւմտեան Ռուսիայի հայ համայնքները զգալիօրէն համալրուեցին 13-րդ դ.: Այդ ժամանակաշրջանի հետ են պատմաբանները կապում հայերի գաղթի մի նոր ալիքը: Դա կատարուեց, երբ 1236 թ. Անդրկովկասի վրայ յարձակուեցին թաթար-մոնղոլները, որոնք աւիրեցին եւ ամայեցրին հայկական հողերը: Տեղի բնակչութեան զգալի մասը հարկադրուած էր տեղափոխուել հիւսիսային Կովկաս, իսկ յետոյ արդէն ներքին Մերձվոլգեան աւազան՝ դէպի Ակ-Սարայ, թաթարների մօտ: Թաթարների հետ աւելի քան կէսդարեան բնակեցումը բնականաբար չէր կարող չանդրադառնալ հայերի ապրելակերպի վրայ: Նրանք յաջողութեամբ իւրացրին հարեւանների լեզուն, ուսումնասիրեցին նրանց կենցաղն ու բնաւորութիւնը, սակայն նրանց համատեղ կեանքը այդքան էլ երկար չտեւեց: Վոլգեան հայերը, Ղրիմի հիւպատոսի հետ պայմանաւորուած, 13-րդ դ. վերջին տեղափոխուեցին թերակղզի, ուր սկսած 11-րդ դ. արդէն բնակութիւն էին հաստատել բաւականին թուով հայեր: Պատահական չէ, որ եւրոպական հեղինակները Ղրիմը յաճախակի անուանում էին «Մովսային Հայաստան»: Մօտաւորապէս այդ նոյն ժամանակ թաթարական հորդաները գրաւեցին նաեւ Ղրիմը: Նրանք թալանում էին տեղի բնակչութեանը, աւիրում քաղաքներն ու գիւղերը: Ղրիմում բնակուող հայերից շատերը ստիպուած էին լքել թերակղզին եւ ուղեւորուել դէպի Մոլդովա, Պոդոլիա, Գալիցո-Վոլինեան իշխանութիւն, որն առաջացել էր հին ռուսական պետութեան կազմալուծման հետեւանքով: Հայերին հանդիպում ենք գալիցեան իշխան Լեւ Դանիլովիչի զօրքերում, որը նրանց հրաւիրել էր մասնակցելու հարեւանների դէմ մղուող պատերազմներին: Լվով քաղաքում, որը 13-րդ դ. կէսերին հիմնել էր նրա հայր իշխան Դանիլը, Լեւ Դանիլովիչը քաղաքի հիւսիսային մասում հայերի համար յատուկ տարածք յատկացրեց: Այդտեղ հայերը յետագայում եկեղեցի կանգնեցրին, «հայկական» անուանուող փողոցներ, կամրջակներ եւ հրապարակ հիմնեցին: Այդ մասին է տեղեկացնում 17-րդ դ. հայագրի Լվովի պատմաբան Յու. Չիմորովիչը: <sup>16</sup> Մէկ այլ պատմաբան՝ Ֆ. Չախարիաշելիչի տուեալներով, հայերը հաստատուեցին Լվովում քաղաքի հիմնադրման հենց սկզբից: <sup>17</sup>

Որոշ հեղինակներ, հիմնուելով բանաւոր աւանդուած տեղեկութիւնների վրայ, պնդում են, որ այս տեղերում հայերն աւելի վաղ են երեւան եկել: Այսպէս, լեհ հետազօտող Չ. Լեխիցկին յայտնում է, որ աւանդութեան համաձայն, Լվովի առաջին հայկական եկեղեցին, որը կրում էր սուրբ Աննայի

14. Насильственная уния армян Польши с армянской церковью. Современные памятные записи, СПб., 1884, с. 16.

15. Սիմէոն դպրի Լեհացոյ Ուղեգրութիւններ. Ուսումնասիրեց եւ հրատարակեց Ն. Ակիմեան, Վիեննա, 1936, էջ 345-348

16. Y. B. Zimorowicz. Historia miasta Lwowa, królestw Galicji, Lodomerii stolicy, Lwów, 1835, s. 69

17. F. Zacharyasiewicz, Wiadomości o ormianach w Polsce, Lwów, 1842



անունը, գոյութիւն էր ունեցել 1183 թ., Լվովի արուարձան Պողոսմէջում: Սկզբից փայտեայ է եղել, յետագայում, ըստ երեւոյթին, այրուել է, քանի որ վերականգնուել է 1240 թ., իսկ աւելի ուշ՝ 1363 թ. փոխարինուել է քարէ եկեղեցիով:<sup>18</sup> Լվովի հայերի թիւը յետագայում այնքան աւելացաւ, որ արդէն 14-րդ դ. նրանք ունէին երկու եկեղեցի (սուրբ Յակոբի եւ սուրբ Սաշի) եւ մէկ վանք: 1264 թ. հայկական եպիսկոպոսութեանը կից շատրուան է կառուցուել համապատասխան հայկական մակագրութիւնով:<sup>19</sup>

Դէպի Ռուսիա թաթար-մոնղոլական հորդանների արշաւանքը, 1240 թ. Քիելի գրաւումը ծանր հարուած հասցրեցին քաղաքին: Ուքրաինայում ստեղծուեց գրեթէ նոյնպիսի սոցեալ-տնտեսական, ազգային-կրօնական իրավիճակ, ինչպիսին եւ Հայաստանում: Անհանդուրժելի ճնշումը, ծանր հարկային համակարգը, ազգային եւ կրօնական հալածանքը հնարաւորութիւն չէին տալիս հայերին ապրելու խաղաղ, ստեղծագործ աշխատանքով: Ուստի նրանցից շատերը հարկադրուած էին տեղափոխուել Գալիցիա, Պոդոլիա, Վոլին, Լեհաստան: Դա չէր նշանակում, սակայն, որ Քիելի հայ համայնքը վերանում է: Յետագայ տարիներին Քիելի հայերը ոչ միայն պահպանում են իրենց գոյութիւնը, այլ շարունակում են նաեւ ապրել լիարժէք կեանքով: Նրանք ունէին ինքնավար համայնք, զբաղւում էին աւանդական զբաղմունքերով՝ հողագործութեամբ, առեւտրով, ռազմական ծառայութեամբ եւ այլն: Սակայն բնակչութեան քանակով համայնքն Արեւմտեան Ուկրաինայի եւ Լեհաստանի համայնքների համեմատ աւելի փոքրաթիւ էր:

13-րդ դ. հայկական համայնքներ կազմաւորուեցին նաեւ Պոդոլիայում: Ըստ աւանդութեան հայ նորարնակները հիմնուեցին Մեծ Հայեր եւ Փոքր Հայեր գիւղերում՝ Սմոտրիչ գետի ափին, Կամենեց-Պոդոլսկից ոչ հեռու: Այդ գիւղերը գտնւում էին Մոլդովան Լեհաստանի եւ Ուկրաինայի հետ կապող առեւտրական ուղու մօտ եւ ունէին կլիմայական բարենպաստ պայմաններ: Լեհ հեղինակ Յու. Ռուլլէի կարծիքով, 1280 թ. գիւղերը հայերին նուիրել էր իշխան Լեւ Դանիլովիչը՝ հայերի կողմից իրեն մատուցած ծառայութիւնների դիմաց: Ս. Բարոնչը գտնում է, որ 13-րդ դ. հէնց հայերն են հիմնել այդ գիւղերը: Ծուտով հայերը տեղափոխուում են Կամենեց-Պոդոլսկ, որը նոյնպէս գտնւում էր թաթարական լծի տակ: Ս. Բարոնչը յիշատակում է բանաւոր աւանդութիւն, որի համաձայն 1250 թ. Կամենեցում գոյութիւն ունէր հայկական եկեղեցի:<sup>20</sup> Արդէն 13-րդ դ. կէսերին Կամենեցում հայերի թիւն այնքան ստուար էր, որ քաղաքի պատմութեան երկարատեւ մի ժամանակահատուած (1240-1373 թթ.) կոչուել է «թաթար-հայկական»: Մօտաւորապէս 1250 թ. հայերը Յազլովցում նոյնպէս ունէին իրենց եկեղեցին:<sup>21</sup> 13-րդ դ. հայերը բնակութիւն են հաստատում Գալիցո-Վոլինեան իշխանութեան նաեւ այլ քաղաքներում՝ Լուցքում եւ

18. Cz. Lechicki, Kósciol otmiański w Polsce (zarys historyczny), Lwów, 1928, s. 33  
 19. Л.М. Меликсет-Бек. Указ: работа, с. 50  
 20. Bargcz. Rys driejow ormiańskich, Tarnopol, 1869, c. 92.  
 21. S. Bargcz. նշվ. աշխատանքը, էջ 88:

Վլադիմիրում Սիմէոն դպիր Լեհացու տեղեկութիւններով Լուցքը, Լվովից առաջ հայ եպիսկոպոսութեան կենտրոնն էր (Լվովը դարձաւ 14-րդ դ. վերջին) թէկուզ եւ Լուցքի հայերի մասին գրաւոր տեղեկութիւնները վերաբերում են միայն 15-րդ դ. սկզբին:<sup>22</sup> 15-րդ դ. կէսին իշխան Սվիդրիգայլոն Յեպերով անուամբ գիւղ է նուիրատուում սուրբ Ստեփանի անունը կրող հայկական եկեղեցուն: Մէկ այլ խոշոր առեւտրական քաղաք Վլադիմիրը, մինչեւ Լվովի որպէս տրանզիտային առեւտրական կենտրոնի ձեւաւորումը, նոյնպէս դէպի իրեն էր ձգում Հարաւ-Արեւմտեան Ռուսիայի քաղաքներում հաստատուած հայերին: Յայտնի է, որ 14-րդ դ. երկրորդ կէսին Լուցքում եւ Վլադիմիրում հայ կաթողիկոսների կոնդակներով թեմեր կազմակերպուեցին: Այստեղից կարելի է եզրակացնել այս քաղաքներում հայերի աւելի վաղ յայտնուելու, ինչպէս նաեւ նրանց բաւականին մեծ թուաքանակի մասին:

Թագաւոր Կազիմիր Մեծի (1333-1370 թթ.) օրօք լեհ ֆեոդալները զաւթեցին գալիցեան իշխանութեան հողերը (1340 թ.) եւ այստեղի հայ գաղթավայրերը յայտնուեցին լեհական պետութեան կազմում: Քիչ աւելի ուշ, 1362 թ. լիտուացի մեծ իշխան Օլգերդը պարտութեան մատնեց Պոդոլիայում իշխող թաթարական խաներին եւ Պոդոլիան յանձնեց լիտուացի ֆեոդալներ Կորիատովիչներին: Նրանք ամրապնդեցին լեհական քաղաքներն ու նուաճեցին ամբողջ Պոդոլիան: Հենց այդ ժամանակ էլ Քիելը յայտնուեց Լիտուական Մեծ իշխանութեան տիրապետութեան տակ (1362-1471 թթ.), իսկ յետոյ 16-րդ դ., մինչեւ Ուկրաինայի եւ Ռուսաստանի միաւորուելը (1654 թ.) ուկրաինական հողերի մեծ մասի հետ միասին յայտնուեց Լեհաստանի իշխանութեան տակ: Աւելացնենք նաեւ, որ 15-րդ դ. 30-ական թուականներին լեհական շլյախտան Պոդոլիայի համար պայքար մղեց լիտուացի ֆեոդալների հետ եւ, գրաւելով նրա արեւմտեան մասը, 1434 թ. ստեղծեց այստեղ Պոդոլեան վոյեւոդութիւն՝ Կամենեց-Պոդոլսկ կենտրոնով: Իսկ Պոդոլիայի արեւելեան մասը գտնւում էր լիտուական տիրապետութեան տակ:

Այսպիսով, ուկրաինական հողերի հետ միասին լեհ ֆեոդալների իշխանութեան տակ յայտնուեցին նաեւ հայ գաղթավայրերի մի զգալի մասը: Հայերի առեւտրական գործունէութիւնը ձգտելով ենթարկել իշխող դասակարգի շահերին, լեհական պետութիւնը հանդուրժողական վերաբերմունք էր ցուցաբերում նրանց նկատմամբ: Հարկ է նաեւ նշել, որ լեհական իշխանութիւնները հարկադրուած էին հաշուի առնել նաեւ այն հանգամանքը, որ Ռուսիայում բնակութիւն հաստատած հայերը, ինչպէս արդէն ասել ենք, օգտուում էին որոշակի արտօնութիւններից: Այդ հանգամանքը նրանք, բնականաբար, չէին կարող անտեսել: Այսպէս, Լեհաստանի թագաւոր Կազիմիր Մեծը 1356 թ. մագդեբուրգեան իրաւունք շնորհելով Լվով քաղաքին, թոյլատրեց այստեղի հայերին նոյնպէս օգտուել այդ իրաւունքից կամ էլ ունենալ իրենց ազգային ինքնավարութիւնը: 1367 թ. նրա կողմից եպիսկոպոս

22. Симеон дпир Леаци. Путевые заметки. Перевод с древнеармянского, предисловие и комментарии М.О. Дарбинян, М., 1965, с. 249.



Գրիգորին թոյլատրուեց հիմնուելու Լվովում,<sup>23</sup> հայերին երաշխաւորուեց դաւանանքի ազատութիւն եւ ազգային ինքնավարութիւն:

Լեհաստանից, Կամենեց-Պոդոլսկի, Լուցքի հայկական գաղութները համալրուեցին, երբ 1375 թ. մամլուկների հարուածի տակ ընկաւ Կիլիկեան հայ թագաւորութիւնը: Հենց այդ ժամանակ է սկսուում հայերի զանգուածային արտագաղթը՝ շուրջ 3000 հայ ընտանիք վերաբնակուեցին սկզբում Ղրիմում, եւ ապա Լեհաստանում:<sup>24</sup>

Լենկ թեմուրի արշաւանքներից յետոյ 15-րդ դ. սկզբին Հայաստանից նոր արտագաղթ սկսուեց: Այս անգամ հայերին Մոլդովա հրաւիրեց այնտեղի տիրակալ Ալեքսանդր Ա. Բարին: Գաղթողների մի մասը լեհ թագաւորի համաձայնութեամբ վերաբնակուեց Լեհաստանի սահմաններում:

Դէպի Լեհաստան հայ գաղթականների նոր հոսք տեղի ունեցաւ: Այն պայմանաւորուած էր 1475 թ. թուրքերի կողմից Ղրիմի ջննովեան գաղթօճախի՝ Կաֆա քաղաքի գրաւումով: Այդ ժամանակ այստեղի հայ գաղութը ծաղկում էր ապրում: Բաւական է միայն ասել, որ քաղաքում հայերն ունէին 24 հայկական եկեղեցի:<sup>25</sup> Թուրքերի կողմից հետապնդուող հայերը զանգուածաբար տեղափոխուում էին առեւտրական գործունէութեամբ իրենց ծանօթ Մոլդովայի, Վալախիայի, հին Լեհաստանի հարաւ-արեւելեան սահմանների քաղաքները, իսկ այնտեղից էլ՝ դէպի արեւմուտք: Այդ հոսքը այդպէս էլ չդադարեց մինչեւ դարի վերջը: Նորաբնակները հիմնուեցին գլխաւորապէս Կամենեց-Պոդոլսկում եւ Լվովում:

Եւ այսպէս, 11-15-րդ դդ. ոչ միայն Հայաստանի, Կիլիկեան թագաւորութեան, այլ նաեւ Ղրիմի, Վալախիայի եւ Մոլդովայի հայերը վերաբնակուում էին ուսական, արեւմտաուկրաինական եւ լեհական տարածքներում: Նրանք այնտեղ հիմնում էին իրենց բնակավայրերը, որոնք իրենց նշանակութեամբ կարեւոր դեր էին խաղում այդ երկրներում: Ինչու էին հայկական գաղութները հիմնուում եւ յաջողութեամբ զարգանում յատկապէս Լեհաստանում եւ Արեւմտեան Ուկրաինայում: Պատճառն այն էր, որ այստեղ հայերը հանդիպում էին գոյութեան համար համամատաբար հանգիստ պայմանների, երաշխաւորում էին նրանց կեանքի եւ ունեցուածքի անվտանգութիւնը, առեւտրով եւ արհեստով զբաղուելու հնարաւորութիւնները եւ ամենակարեւորը, դաւանանքի ազատութիւնը: Ինչու հենց յատկապէս Լվովը եւ Կամենեց-Պոդոլսկը դարձան հայ գաղթականների հիմնական բնակավայրերը: Հայ գաղթականները ընտրում էին աշխոյժ առեւտրական ուղիների վրայ գտնուող քաղաքներ: Այդ ժամանակ զբաղուելով հիմնականում առեւտրով, նրանք հաշուի էին առնում, առաջին հերթին, հենց այս հանգամանքը: Հայերը վերաբնակուում էին Արեւմտեան Ուկրաինայում եւ Լեհաստանում, քանի որ նրանք գտնուում էին Արեւմուտքը Արեւելքի, Հիւսիսը Հարաւի հետ կապող կարեւոր առեւտրական

23. T. Gromnicki, Ormianie n Polsce, ich historia, prawa i przywileje, Warszawa, 1889, s. 9  
24. D-r. Antoni Y. Zameczki podolskie na kresach multanskich, Warszawa, 1880, t. II, s. 112  
25. Վ. Միքայէլեան, Ղրիմի հայկական գաղութի պատմութիւն, Երեւան, 1964, էջ 83-117

ճանապարհների խաչմերուկում: Ինչպէս արդէն նշել ենք, դրան նպաստում էին նաեւ տեղական իշխանութիւնները: Քաղաքների տնտեսական բուռն զարգացման հետեւանքով, 13-րդ դ. սկսած Արեւելեան Եւրոպայում, այդ թւում նաեւ Լեհաստանում, նկատուում է միջազգային առեւտրական յարաբերութիւնների աշխուժացում: Մեծ նշանակութիւն են ձեռք բերում Լեհաստանը, Հարաւային Ռուսիան եւ Սեւ ծովը Արեւելքի հետ կապող առեւտրական ուղիները: Եթէ Վոլինիայի գլխաւոր քաղաք Վլադիմիրն էր 14-րդ դ. սկզբին կատարում Լեհաստանի արեւելեան առեւտրի կենտրոնի դերը, ապա լեհերի կողմից Գալիցեան իշխանութիւնը գրաւելուց յետոյ, այդ կենտրոնը տեղափոխուեց Լվով: Լվովի հայերը լայն առեւտուր ծաւալեցին Արեւելքի հետ՝ աստիճանաբար գրաւելով քաղաքի շուկան: Հարաւային Ռուսիայի, Պոդոլիայի միջոցով, այսպէս կոչուած թաթարական ուղիով, Լվովը աշխոյժ առեւտրական կապերի մէջ էր Ղրիմի, հիմնականում Կաֆայի հետ, որն այն ժամանակ խոշոր առեւտրական կենտրոն էր: Մոլդովայի միջով անցնող եւ Սեմիգրադ ու Թուրքիա տանող առեւտրական մայրուղին նոյնպէս կապում էր Լեհաստանը Արեւելքի հետ: Այդ ուղին երկու ճիւղաւորում ունէր: Ճանապարհներից մէկը Տրեմբովլի, Կամենեցի, Ոտտինի միջով տանում էր Սուչավա, միւսը՝ դէպի Գալիչ, Կոլիմեա, Մնիատին, Չեռնովցի, Սերեդ մինչեւ Սուչավա, այստեղից դէպի Պելկրատ եւ Կիլիա, այնտեղից արդէն ծովով դէպի Ղրիմ:

Լվովի միջով էր անցնում նաեւ այն առեւտրական ուղին, որը Կասպից ծովի միջոցով կապում էր Լեհաստանը Պարսկաստանի հետ, իսկ Արեւմուտքում Վրոցլաւի միջոցով՝ գերմանական քաղաքների հետ: Լվովի միջով էին անցնում նաեւ դէպի Տորունի եւ Գդանսկ տանող ճանապարհները: Այլ կերպ ասած, Գդանսկի միջոցով Լվովը կապուում էր նաեւ Բալթեան ծովի հետ:

Արեւելքից բերուող հայ վաճառականների ապրանքը առեւտրի առարկայ էր դառնում ոչ միայն Լեհաստանի շուկաներում, լեհ եւ գերմանացի վաճառականների կողմից այն արտահանում էր Գերմանիա եւ դէպի հիւսիս, հասնելով մինչեւ Ֆլանդրիա:<sup>26</sup>

Հայկական գաղթավայրերը հիմնականում հիմնադրուում էին (14-15-րդ դդ. եւ աւելի ուշ) Լեհաստանի հարաւ-արեւելեան ծայրամասերը Ղրիմի, Մոլդովայի եւ Վալախիայի հետ կապող առեւտրական ուղիների վրայ գտնուող քաղաքներում: Հայերը, լաւատեղեակ լինելով արեւելեան շուկայի պահանջարկներին, տիրապետելով տարածուած դփշախերէն լեզուին, որպէս բնակավայրեր ընտրում էին հենց այն քաղաքները, որոնք կապում էին Արեւմուտքը Արեւելքի հետ, իրենց վրայ վերցնելով առեւտրական միջնորդի դերը: Դա նպաստեց հայկական գաղթավայրերի տնտեսական կարողութիւնների զօրեղացմանը, որի շնորհիւ նրանք որոշակի կշիռ եւ նշանակութիւն ձեռք բերեցին երկրում: Բաւական է միայն ասել, որ հայերը Լվովում ամենահարուստ ազգային խաւն էին համարուում: Այսպէս, 1588 թ. Լվովի

26. Մ. Հովհաննիսեան, Ուրուագծեր Լեհաստանի եւ Արեւմտեան Ուկրաինայի հայկական գաղթավայրերի պատմութեան, Երեւան, 1977, էջ 57



խանութների ընդհանուր թուի երկու երրորդը պատկանում էր հայերին: Քաղաքի 24 կրպակներից 19-ը հայ վաճառականների սեփականությունն էին կազմում, 1600 թ. Լվովում հայերը ունեին 79 տուն: <sup>21</sup> Այդ էր պատճառը, որ կրակովեան ժամանակագիր Դեցիուշն արդեն 1519 թ. նկատում է, որ «Լեհաստանի մի մասը գրաւուած է հայերի կողմից»: Սակայն, չպէտք է կարծել, որ Կաֆայի անկումից յետոյ հայերի արտագաղթը դէպի Լեհաստան դադարեց: Այն շարունակուած էր նաեւ 16-17 եւ անգամ 18-րդ դդ. ընթացքում, երբ Լեհաստանը ընդհանուր տնտեսական ճգնաժամի մէջ էր գտնուած եւ գաղութները անկում էին ապրում: Սակայն, անգամ այդ պայմաններում, լեհական կառավարութիւնն ու լեհ մագսատները, գնահատելով հայերի կարողութիւնները, պատրաստակամ ընդունում էին նրանց իրենց քաղաքները, ընձեռելով արտօնութիւններ, ժամանակաւորապէս ազատելով հարկերից:

Այսպէս, Ս. Բարոնչը գտնում է, որ 17-րդ դ. սկզբին Լեհաստանը միանգամից համալրուեց 40 հազար հայերով: Այդ հոսքը անկասկած, պայմանաւորուած էր Անդրկովկասի քաղաքական իրադարձութիւններով, թուրք-պարսկական աւերիչ պատերազմներով: Բացի այդ, 16-րդ դ. գաղթականների մեծ հոսք էր նկատուած նաեւ Մոլդովայից եւ Վալախիայից, որի պատճառը հայերի հանդէպ դաւանական հետապնդումներն էին: Ս. Բարոնչը գտնում է, որ Լեհաստանում հայկական բնակավայրերի ամենամեծ թիւը 16-17-րդ դդ. էր, թէկուզ եւ նրանք արդէն չունէին այն նշանակութիւնը, որ յատուկ էր աւելի վաղ առաջացած գաղթավայրերին: Այսպէս, 16-րդ դ. հայկական գաղթավայրեր կազմաւորուեցին Բառում, Տիւմենիցայում, Պոդգայցիում, Յազլովցում, Չամոստէում, 17-րդ դարում ձեւաւորուեցին՝ Բարեկում, Բրոզիում, Բերեժանիում, Գորոզենկայում, Յարոսլաւում, Կազիմիր Ներքինում, Լիսեցում, Սամբորում, Մնյատինում եւ նրա արուածաններում, Ստանիսլաւում, Ստոլչենիցայում, Վարյաժում, Չոլոչեւում, Ժանցում: 17-րդ դ. հայերի առանձին խմբերու վերաբնակում են նաեւ Լեհաստանի այլ քաղաքներում՝ Լյուբլինում, Կրակովում, Վարշաւայում, Պոզնանում, սակայն նրանք չունէին ինքնավար համայնքներ: Ամէնից ուշ հայերը վերաբնակուեցին Պոդոլիայում, որի կենտրոն՝ Կուտի քաղաքը իր մօտակայքով 18-րդ դ. մտնում էր ռուսական վոեւոդութեան Գալիցեան երկրի կազմի մէջ: Դրանք թագաւորական կալուածքներ էին, որոնք թագաւորի անունից ղեկավարում էր տանուտէրը: Այդ երկրամասը գտնուած էր Մերձկարպատները Հունգարիայի, Պոլկարիայի, Աւստրիայի, Մոլդովայի քաղաքների հետ կապող գլխաւոր առեւտրական մայրուղու վրայ: Կազմաւորուելով նախ Ստանիսլաւում, իսկ յետոյ Լիսեցում, Տիւմենիցայում, Գորոզենկայում եւ Օրբերտինում, եւ վերջապէս, Կուտիում, հայկական բնակավայրերը այդ ամբողջ երկրամասը ծածկեցին համայնքների եւ գաղութների ցանցով, որով սեմիգորոզեան, մոլդովական եւ վերդնեստրովեան գաղթավայրերը

27. Cz. Lechicki. Աշուած աշխատանքը, էջ 17

միաւորուեցին որպէս ընդհանուր տարածքային ամբողջութիւն:

Ի տարբերութիւն նախորդների 16-18-րդ դդ. առաջացած հայկական գաղութները չէին հիմնուած լեհական պետութեան հարաւ-արեւելեան ծայրամասերում: Նրանք տեղափոխուած են դէպի Արեւմուտք՝ դէպի Դնեստրի աջ ափը, ուր հայերը գրաւուած էին ոչ միայն առեւտրով, այլ նաեւ արհեստներով: Բացի այդ, հայ բնակավայրերը հիմնուած էին ոչ թէ թագաւորական, այլ նաեւ մասնաւոր քաղաքներում:

Մի շարք գիտնականների կողմից փորձեր են արուել հաշուարկել Ուկրաինայի եւ Լեհաստանի հայկական բնակավայրերի թիւը: 17-րդ դ. կաթոլիկական գործիչ Ա. Պիդուն, եթէ միջնադարեան Լեհաստանում հաշուած էր 14 հայկական գաղութներ, իսկ հայ պատմաբան Մ. Բժշկեանը՝ 19-ը, ապա Ս. Բարոնչը ներկայացրել է Բեչ Պոսպոլիտայի 34 քաղաքների հայկական գաղութների պատմութիւնը: Յա. Դաշկեւիչը այդ թիւը հասցնում է մինչեւ 70-ի: <sup>22</sup> Անհրաժեշտ է նշել նաեւ, որ 1925 թ. Պ. Դոնիգեւիչի կողմից կազմուել է 13-20-րդ դդ. հայկական թեմերի քարտէզ, որը կցուած է Չ. Լեխիցկու «Հայ եկեղեցին Լեհաստանում» գրքին:

Արեւմտեան Ուկրաինայի եւ Լեհաստանի հայ բնակչութեան թուաքանակի որոշումը չափազանց դժուար է՝ ճշգրիտ վիճակագրական տուեալների բացակայութեան պատճառով: Այդպիսի տեղեկութիւններ չեն պահպանուել: Այն փաստերը, որոնք պահպանուել են ժամանակակիցների գործերում, կցկտուր են եւ ոչ ամբողջական: Հաշուի պէտք է առնել կարելոր այն հանգամանքը, որ հայ բնակչութեան թիւը մշտապէս փոփոխուել է: Մի կողմից, գաղութները անընդհատ համալրուած էին դրսեկ հայերի հաշուին, իսկ միւս կողմից՝ գրաւուելով գերազանցապէս առեւտրով, հայերը յաճախակի քաղաքից քաղաք էին տեղափոխուած: Կայ նաեւ մէկ այլ հանգամանք: Լեհաստանի հայ ժամանակագիրները յաճախ յիշատակում են տարբեր համաճարակների մասին, որոնք հազարաւոր կեանքեր էին խլում, դրանով իսկ կրճատելով բնակչութեան թուաքանակը:

Բերենք առանձին քաղաքներում հայերի թուաքանակի մասին գրականութեան մէջ տեղ գտած որոշ տուեալներ: Այսպէս, Լեհաստանի վենետիկեան դեսպան Հերոնիմ Լիպպոմանոյի տուեալներով, 1575 թ. Լվովում բնակուած էին 60 հայ ընտանիք, իսկ Կամենիցում՝ 300: <sup>23</sup> Միմէոն Լեհացին 17-րդ դ. սկզբին Լվովում հաշուարկել էր հայերի սեփականութիւնը կազմող 70 տներ, որոնցից իւրաքանչիւրում ապրում էին 2-3 ընտանիք: <sup>24</sup> Ըստ Ս. Բարոնչի, Լվովի հայերը կազմում էին 1000 ընտանիք: Ինչպէս տեսնում ենք, թուերի մէջ զգալի տարբերութիւն գոյութիւն ունի: Ուստի, նրանք ճշգրտման կարիք ունեն: Մ. Հովհաննէսեանը, յենուելով լեհ հետազոտող Ռ. Չուբիկի տուեալների վրայ,

28. Я. Дашкевич. Розселення вирменів на Україні в XI-XVIII ст. - «Український историко-географічний збірник», Киев, 1971, с. 150-151  
 29. Relacje nuncjuszow apostolskich i innych osob w Polsce od r. 1548 do 1690, Berlin - Poznan, 1864, t. 1, s. 249  
 30. М.О. Дарбинян. Симеон Леацци о странах Юго-Восточной Европы. «Восточные источники по истории Юго-Восточной и Центральной Европы» М., 1964, с. 262.



ըստ որի հայերը քաղաքների բնակչութեան 20 տոկոս էին կազմում, գտնում է, որ 17-րդ դ. 20-30-ական թուականներին Լվովի հայերի թիւը չէր անցնում 3500-ից:<sup>25</sup> Կամենիցում՝ հայկական առաւել հարուստ գաղութներից մէկում, մինչեւ թուրքերի կողմից 1672 թ. քաղաքի նուաճումը, կային 900 հայկական տուն, ուր ապրում էր 1200 ընտանիք:<sup>26</sup> Գրեթէ բոլոր հեղինակները մօտաւորապէս նոյն թիւն են բերում:

Ինչպէս նշում է Սիմէոն Լեհացին, Լուցքում նախկինում կային 800 տուն, այժմ մնացել են 2 հայ ընտանիք, սակայն քարէ եկեղեցին եւ դիւղը դեռ մնում են:<sup>27</sup> Այդ թիւը, որը փաստօրէն կազմում է 13 հազար հոգի, Մ. Հովհաննիսեանին չափազանցուած է թւում: Նրա կարծիքով այստեղ բնակւում էին 1000-1500 հայեր:<sup>28</sup> 1591 թ. Չամոստէում հայերի թիւը հասնում էր 1302-ի, 1678 թ.՝ 1347-ի, իսկ 17-րդ դ. վերջին՝ 2046-ի:<sup>29</sup> Բերեժաններում հայերն ունէին 200 տուն: Մինչեւ ժանտախտի համաճարակը 18-րդ դ. Գորոգենկայում հայերի տների թիւը հասնում էր մինչեւ 100-ի, իսկ համաճարակից յետոյ այն իջաւ մինչեւ 40-ի, 18-րդ դ. այստեղ ընդամէնը մօտ 400 հայ էր բնակւում: 17-րդ դ. Ստանիսլաւում ապրում էին մօտ 500 հայեր, իսկ 19-րդ դ. սկզբին հայերի տների թիւը հասնում էր 70-ի:<sup>30</sup>

Կուտի քաղաքում, որը 18-րդ դ. սկզբին հիմնել էին Մուլդովայից եկած հայերը, 18-րդ դ. վերջին մօտ 729 հայ էր բնակւում, իսկ 19-րդ դ. սկզբին Կուտիի եւ նրա մոտակայքի 20 գիւղերի հայերի թիւը բարձրացաւ մինչեւ 1800-ի:

Որոշ տեղեկութիւններ են պահպանուել Լեհաստանի հայ բնակչութեան ընդհանուր թուաքանակի մասին: Ճիշդ է, որանք վերաբերում են 18-րդ դ. վերջին 19-րդ դ., այսինքն՝ փաստօրէն գաղութների անկման ժամանակաշրջանին: Այսպէս, 1757 թ. մարդահամարի տուեալներով Գալիցիայի եւ Բուկովինայի 9 բնակավայրերում բնակուել են 6235 հայեր:<sup>31</sup> Լվովի հայ կաթոլիական արքեպիսկոպոսութեան տուեալներով 1884 թ. Գալիցեան Ռուսիայի հայ բնակչութեան քանակը Լվովի թեմում կազմում էր 180 հոգի, Բերեժանների՝ 180, Լիսեցի՝ 96, Ստանիսլաւի՝ 90, Գորոգենկայի՝ 395, Տիսմենիցի՝ 159, Կուտիի՝ 1800, Մնայտինի՝ 414, Չեռնովցիի՝ 1120, ընդամէնը 4444 հոգի:<sup>32</sup> Համեմատութեան համար բերենք տարբեր հեղինակների կողմից յիշատակուող որոշ թուեր՝ 18-րդ դ. Լեհաստանի հայերի ընդհանուր քանակի

31. Մ. Հովհաննիսեան, նշուած աշխատանքը, էջ 72  
32. Dr. Antoni Y. Nowe opowiadania historyczne, Lwow, 1883, s. 165, 166  
33. Սիմէոն դպիր Լեհացոյ Ուղեգրութիւնը, էջ 347  
34. Մ. Հովհաննիսեան, նշուած աշխատանքը, էջ 71  
35. M. Zakrzewska - Dubasowa. Ormianie zamojscy i ich rola w wymianie handlowej i kulturalnej miedzy Polska a Wschodem, Lublin, 1965, s. 57  
36. T. Gromnicki նշուած աշխատանքը, էջ 73-76  
37. F. Zachariasiewics, նշուած աշխատանքը, էջ 74  
38. T. Gromnicki, նշուած աշխատանքը, էջ 78

մասին: Այսպէս, 17-րդ դ. անանուն մի հեղինակ Լեհաստանում հաշուարկել է 3000 հայերի: Ուլրիկ Վերդումը, 1670-72 թթ. ճամբորդելով Լեհաստանով, Լեհաստանի տարածքում հաշուում է ոչ աւել քան 3-4 հազար հայ ընտանիք, այսինքն՝ հայերի ընդհանուր քանակը տատանւում էր 15-20 հազարի սահմաններում:

Ինչպէս համոզուեցինք, Լեհաստանի հայ բնակչութեան թուաքանակի մասին պահպանուած տուեալները, դժբախտաբար, թերի են եւ երբեմն էլ հակասական, հետեւաբար, ենթակայ են համակողմանի ուսումնասիրութեան: Այնպէս որ, անհնարին է ստոյգ կարծիք կազմել հայ բնակչութեան թուաքանակի մասին: Հայկական գաղութների ձեւաւորման հանգամանքները լուսաբանելուց այժմ անցնենք դրանց ժամանակաշրջանի հարցերին: Չնայած որոնց ժամանակագրական շեղումների, գրեթէ բոլոր հեղինակները միասնական են այն հարցում, որ հայերի գաղթի առաջին ակտը կատարուել է 10-11-րդ դդ.: Այդ առումով բացառութիւն են կազմում եկեղեցական հեղինակ Տ. Գրոմնիցկին եւ Օ. Բալցերը: Վերջինս ուսումնասիրել է լեհահայ «Դատաստանագիրքը», որը 1519 թ. հաստատուել էր լեհ թագաւոր Սիգիզմունդ Ա.-ի կողմից:<sup>33</sup> Այդ երկու հեղինակների կարծիքով, Լեհաստանում եւ Ռուսիայում հայերի վերաբնակեցումը սկսուել էր 13-րդ դ. ոչ շուտ, ընդ որում, հայ գաղթականները գալիս էին Ղրիմից: Նրանք գտնում էին նաեւ, որ լեհահայերը, ընդհուպ մինչեւ 17-րդ դ. վերջը, օգտուում էին ղփչախերէն լեզուից: Այդպիսի եզրակացութեան էին նրանք յանգում լեհահայերի լեզուի ուսումնասիրութիւնից:

Օ. Բալցերի կարծիքով, քանի որ հայերը բաւականին երկարատեւ ժամանակ բնակուել են թաթարների կողմից զբաղեցրած տարածքներում, ուստի եւ տիրապետել են թաթարերէնի եւ օգտագործել այն: Հայերը եթէ գաղթած լինէին անմիջականօրէն Հայաստանից, ապա, ինչպէս գտնում է Բալցերը, նրանք կը բերէին հենց իրենց լեզուն՝ իր իսկական տեսքով:

Այդ տեսակէտը քննադատութեան չի դիմանում: Ինչպէս համոզուեցինք սլաւոնների հետ կապերը հնագոյն պատմութիւն ունեն եւ արդէն 10-11-րդ դդ. բաւականին թուով հայեր բնակութիւն էին հաստատել հին Ռուսիայի Քիւե քաղաքում:

Հայերի արտագաղթի փուլերի Յա. Դաշկեւիչի կողմից<sup>34</sup> արուած յստակ սահմանազատումը (առաջին փուլը՝ 10-11-րդ դդ., երկրորդը՝ 14-րդ դ. երկրորդը - 15-րդ դ. առաջին կէսերը, երրորդը՝ 15-րդ դ. երկրորդ 17-րդ դ. երկրորդ կէսերը), մեր կարծիքով հիմնաւորուած չէ: Ինչպէս արդէն նշել ենք, տարբերուելով իր չափերով, հայերի արտագաղթը եւ ոչ մի դարում չէր ընդհատուում: Այն մէկ անհաստական բնոյթ էր կրում, մէկ հասնում էր զանգուածային չափերի: Այնպէս, որ կարելի է լիովին համաձայնուել Մ.

39. T. Gromnicki, նշուած աշխատանքը, էջ 9, O. Balcer, Statut ormianski w zatwierdzeniu Zygmunta I z r. 1519, Lwów, 1910  
40. Я. Дашкевич, նշուած աշխատանքը, էջ 178



Չակչեւակա-Դուբասովայի հետ, որի կարծիքով «հայ գաղութաբնակեցման առանձին փուլերի ժամանակագրութիւնը անմիջականօրէն կապուած է նրա պատճառների եւ այդ գաղթավայրերի առաջացման ուղղութիւնների հետ»:<sup>41</sup>

Արեւմտեան Ուկրաինայում եւ Լեհաստանում, հայկական գաղթավայրերի առաջացման խնդիրները սերտօրէն կապուած են այն հարցի հետ, թէ ինչ ուղիներով եւ որտեղից էին գալիս հայ գաղթականները: Հայկական արտագաղթի առաջին ալիքը, բնականաբար, անմիջականօրէն գալիս էր բուն Հայաստանից: Սակայն, ինչպէս ասել էինք, Օ. Բալցերի կարծիքով, հայերը Լեհաստան էին եկել ոչ Հայաստանից, քանի որ հայկական օրէնսգրքի բոլոր ձեռագրերը, որով իրականացուած էր Լեհաստանի հայերի դատավարութեանը, գրուած էին, ըստ իր արտայայտութեան, հայ ղփչախերէնով (հայկական տառերով ղփչախերէն լեզուով), որը վկայում էր թաթարների հետ հայերի երկարատեւ բնակուելու մասին:<sup>42</sup> Մ. Չակչեւակա-Դուբասովան էական ճշգրտումներ է մտցնում Օ. Բալցերի աշխատանքների մէջ: Նա ուշադրութիւն է հրաւիրում այն բանի վրայ, որ Լվովում, հայերի հետ մէկտեղ, բնակուած էին նաեւ այլ էթնիկական խմբեր, եւ մասնաւորապէս, թուրքալեզու քարաիմներ եւ թաթարներ: Հենց նրանք էին, հայերի հետ միասին, յիշատակուած 1365 թ. հրովարտակում: Այն հանգամանքը, որ հայերը օգտուած էին ղփչախերէնից, Մ. Չակչեւակա-Դուբասովան բացատրում է ոչ միայն թուրքալեզու ժողովուրդների հետ հայերի երկարատեւ բնակեցմամբ, այլ նաեւ նրանով, որ հայրենիքից կտրուած, թաթար-թուրքական ժողովուրդներով բնակեցուած ահռելի տարածքներում առեւտրով զբաղուող հայերի համար ղփչախերէն լեզուին տիրապետելը անհրաժեշտութեւն էր:<sup>43</sup> Այդ մասին է գրում նաեւ Տ. Գրունին. «Հայերը, որպէս այդ ժամանակաշրջանում աւելի բարձր մշակոյթ ունեցող ժողովուրդ, պոլովցիների մօտ առեւտրական միջնորդի դեր էին խաղում եւ սպասարկում նրանց մշակութային տեսակէտից: Այդ դերը տանելու համար նրանք, բնականաբար, պէտք է նաեւ տիրապետէին պոլովցիների լեզուին»:<sup>44</sup>

Ի հաստատումն վերը նշուածի, ծառայում է հետեւեալ փաստը. Փարիզի ազգային գրադարանում պահպանուող հայկական օրէնսգրքի ձեռագիր օրինակի յիշատակարանում գրուած է, որ այն թարգմանուել է հայերէնից լատիներէն, յետոյ լեհերէն, իսկ լեհերէնից՝ թագաւորի յանձնարարութեամբ, ղփչախերէնի:<sup>45</sup> «Օրէնսգրքի հայկական տարբերակի առկայութիւնը հաստատում է այն ենթադրութիւնը, որ նա անմիջականօրէն բերուել էր Հայաստանից»-, գրում է Մ. Չակչեւակա-Դուբասովան:

Հիմնուելով ժամանակակիցների բանաւոր պատմուածքների վրայ, դեռեւս

41. M. Zakzewska-Dubasowa, նշուած աշխատանքը, էջ 30

42. O. Balcer, նշուած աշխատանքը, էջ 141

43. M. Zakzewska-Dubasowa, նշուած աշխատանքը, էջ 20

44. Памятники половецкого языка XVІb. Академику В.А. Гордлевскому к его семидесяти пятилетию, М. 1953, с. 91

45. M. Zakzewska - Dubasowa, նշուած աշխատանքը, էջ 20

17-րդ դ. Սիմէոն Լեհացին հաստատում էր, որ Լվովի հայերը տեղափոխուել են այստեղ Անիից, թէկուզ եւ չեն տիրապետում հայերէնի, բայց խօսում են լեհերէն եւ ղփչախերէն, այսինքն՝ թաթարերէն:<sup>46</sup> Լեհ պատմաբան Եան-Ալմպեստը վկայում է, որ 16-17 դդ. Լվովի հայերից շատերը խօսում էին հայերէն:<sup>47</sup> Հետեւաբար, Արեւմտեան Ուկրաինայի եւ Լեհաստանի հայերի արտագաղթի առաջին ալիքը գալիս էր բուն Հայաստանից:

Միւս կողմից, ժամանակակից լեհ լեզուաբան-արեւելագէտները գտնում են, որ հայերը սկսեցին օգտուել ղփչախերէնից սկսած 14-րդ դ. Ղրիմում նրանց բնակուելուց յետոյ: Այլ կերպ ասած, 14-15-րդ դդ. Լեհաստան տեղափոխուած բոլոր հայերը գաղթել էին Ղրիմից:<sup>48</sup> Այդ նոյն տեսակէտն է պաշտպանում նաեւ Ռուսիանցի պատմաբան Ն. Յորգան: Նա յայտնում է, որ «Հարաւ-Արեւմտեան Եւրոպայի բոլոր հայերը գաղթել են Ղրիմից»:<sup>49</sup> Խօսելով գիտնականների այդ տեսակէտի մասին, ցանկալի կը լինէր ուշադրութիւն դարձնել այն հանգամանքի վրայ, որ մինչ այժմ յայտնի չեն որեւէ գրաւոր նիւթ, որ Ղրիմի հայերը թողած լինէին ղփչախերէն լեզուով: Սա էական փաստ է, որի հետ չի կարելի հաշուի չնստել: Կարելի է միայն ենթադրել, որ հայերի մի մասը ղփչախերէնը օգտագործել է առօրեայ կեանքում, գործնական նպատակներով: Անհրաժեշտ է քննադատաբար մօտենալ Ֆ. Ռուսնիցկու այն պնդմանը, որ հայերի մի մասը Լեհաստան է փոխադրուել Ղրիմից եւ սկզբնական շրջանում բնակութիւն է հաստատել թագաւորական քաղաքներում, իսկ միւս մասը՝ Վալախիայից եւ Մոլդովայից, վերաբնակուելով մասնաւոր քաղաքներում: Վարչաւայի Ազգային գրադարանում պահպանուող Չամյոսկիների ձեռագրերից մէկում յիշատակուած է հայկական եկեղեցի կառուցելու նպատակով կանցլեր Եան Չամոյսկու կողմից տեղ յատկացնելու մասին արձանագրութիւնը: Կանցլերի ստորագրութիւնից յետոյ թուարկուած են այն բնակավայրերը, որտեղից հրաւիրուել էին հայերը: Ուշագրաւ է, որ այդ ցուցակում յիշատակուած են միայն Ղրիմի եւ բուն Հայաստանի քաղաքները:<sup>44</sup>

Գրականութեան մէջ տեղ գտած կարծիքների եւ Լեհաստանում հայերէն լեզուի ուսումնասիրութիւնը արդիւնքների համեմատումը յայտնի լեհ արեւելագէտ է. Տրիարսկուն հիմք տուեց Լեհաստանի հայ գաղթականների բաժանել մի քանի խմբերի: Խմբերից մէկը ուշ ժամանակ գաղթած հայերը իրենց մայրենի լեզուն համարում էին հայերէնը, աւելի ճիշտ, մանկական տարիներից սովորած նրա տեղական բարբառը: Բարբառը առաջացել էր օտար երկրներում հայերի բնակուելու հետեւանքով: Այն մշտապէս ենթարկուել է դրսից հարեւան ուսերէնի եւ լեհերէնի ճնշմանը, իսկ ներսից այստեղ աւելի վաղ հաստատուած հայրենակիցների կենդանի թուրքաղփչախների բարբառի ազդեցութեանը: Երկրորդ խումբը կազմում էին աւելի վաղ եկած գաղթականները, որոնք որպէս

46. М.О. Дарбинян. Симеон Леацы о странах Юго-Восточной Европы, с. 263

47. Dr. F. Papée. Historia m. Lwowa, Lwow, 1894 с. 67

48. T. Kowalski, Wyrary kipczackie w języku ormian polskich, Wilno, 1938

49. Sb'u T. Mańkowski, Orient w, polskiej kulturze artystycznej, Wrocław - Kraków, 1959, s. 34

50. S. Barącz նշուած աշխատանքը, էջ 177



խօսակցական լեզու եւ գիր իրենց հետ բերել էին զփշախերէն բարբառը, որը իւրացրել էին զփշախական շրջապատի ազդեցութեան տակ: Հայ պանդուխտների համար թուրք բնակչութեան լեզու պիտանի էր դառնում առաջին հերթին գործնական նպատակներով:<sup>45</sup>

Դրա հետ մէկտեղ Լեհաստանի հայերը տիրապետում էին նաեւ դասական հայերէնին: Այն օգտագործւում էր հոգեւորականութեան միջավայրում եւ էջմիածնի հետ ունեցած յարաբերութիւններում:

Լեհահայերի լեզուին անդրադարձող լեհ գիտնականների տեսադաշտից դուրս է մնացել այն հանգամանքը, որ Լեհաստանի հայ գաղութներում 15-17-րդ դդ. ստեղծուել են դասական հայերէնով բաւական հարուստ գրականութիւն: Առաջին հերթին դա վերաբերում է Կամենեց-Պոդոլսկի պատմութեան ժամանակագրութեանը, որը բաւականին երկարատեւ ժամանակահատուած է ընդգրկում՝ 1430-1652 թթ.: Դա նոյն տոհմի մի քանի հեղինակների համատեղ աշխատանքների արդիւնք էր: Այն յայտնի է «Կամենից. Տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ հաւաստչեաց յաւելուութեովք» խորագրով: Տարեգրութեան առաւել ընդարձակ մասը, որը ընդգրկում է 1430-1610 թթ., գրուած է հայերէնով եւ միայն աննշան մի մասը, որը նուիրուած է 1611-1624 թթ. իրադարձութիւններին, գրուած է հայ զփշախերէնով: Հայերէն է գրուել նաեւ 1621 թ. «Պատմութիւն պատերազմի Սոթիսու»: Տեղի մշակութային միջավայրի հետ աւելի սերտ կապուելու նպատակով, կազմուեց հայ-լատիներէն ծաւալուն բառարան: 17-րդ դ. վերջին կազմուեցին նաեւ լատիներէն-հայերէն, հոմանիշների, չափածոյ խօսքում օգտագործուող հայկական դարձուածքների բառարաններ: Եւ վերջապէս, հայերէնով է գրուած 17-րդ դ. լեհահայ մշակոյթի ականաւոր ներկայացուցիչ Սիմէոն դպիր Լեհացու «Ուղեգրութիւնները», որը Մերձաւոր Արեւելքի եւ Հարաւ-Արեւելեան Եւրոպայի երկրներով նրա 12 տարուայ ճանապարհորդութեան նկարագրութիւնն է: Ուշագրաւ է, որ հեղինակը ծնուել է Չամոսոյ քաղաքում, ուր նրա ծնողները տեղափոխուել էին Կաֆայից: Լեհաստանի հայկական գաղութներում հայերէն լեզուով են գրուել նաեւ բանաստեղծական երկեր: Բանաստեղծներից մէկը՝ Մինաս Թոխաթեցին ծնուել էր Եւդոկիայում (Թոխաթում) Փոքր Ասիայի ամենախոշոր առեւտրական քաղաքներից մէկում: Նա Լեհաստան էր տեղափոխուել Մուդոլայից՝ հայերին հետապնդելու պատճառով: Հետաքրքիր է, որ Մինաս Թոխաթեցին (1570-1619 թթ.), լինելով Լվովի հայկական դատարանի նոտար, կտակների, ամուսնութիւնների եւ այլ պայմանագրերի գրառումները կատարում էր զփշախերէնով: Դրանից բացի, բանաստեղծը ժողովրդական տարեցոյց էր կազմել զփշախերէն լեզուով: Մէկ այլ բանաստեղծ՝ Յակոբ Թոխաթեցին (1573-1680 թթ.) Լեհաստան էր տեղափոխուել 17-րդ դ. սկզբին, ջալալիւրների շարժման պատճառով: 1603 թ. նա հիմնուեց Չամոստէում, որտեղ եւ ընթացաւ նրա գիտական գործունէութիւնը: Նա գրում էր հայերէնով: Մէկ ուրիշ բանաստեղծ՝ Լազար Թոխաթեցին (1550-1610 թթ.) 17-րդ դ. սկզբին

51. E. Tryjarski, Ze studiow nad rekopisami i dialektem kipczackim Ormian polskich - "Rocznik orientalistyczny", t. XXIII, l. II, Warszawa, 1960, s. 27-28

տեղափոխուեց Յազլովեց եւ այստեղ հայերէն լեզուով գրեց մի շարք բանաստեղծութիւններ: Նրանց հիմքում ընկած էին այն իրադարձութիւնները, որոնց նա ականատես էր եղել:

Ուշագրաւ է հետեւեալ փաստը: Վարչաւայում, ուր հայ բնակչութեան թիւը աննշան էր, 17-րդ դ. սուրբ Յացեկի դոմինիկեան եկեղեցում կենտրոնական մասում պատի մէջ շարուած էին հայկական երկու գերեզմանաքարեր: Դրանք Յակոբ Մինասովիչի եւ նրա կնոջ տապանաքարերն էին:<sup>46</sup> Ս. Բարոնչը գտնում է, որ Յակոբ Մինասովիչի հայրը ունեւոր հայ վաճառական Մինաս Սիրինովիչն էր, որը սկզբում ապրել է Յազլովեցում, իսկ թուրքերի կողմից 1672 թ. քաղաքը գրաւելուց յետոյ, տեղափոխուել է Լվով, ապա Զոլոն եւ Վարչաւ: Մինասը զգալի միջոցներ էր յատկացրել Յազլովցի հայկական եկեղեցու եւ քաղաքի վերանորոգման համար: Նա սկսել էր Հայկական Դարբասների շինարարութիւնը եւ յանձնարարել էր որդիներին շարունակելու այդ գործը: Նրա տոհմին էին պատկանում այնպիսի յայտնի անձնաւորութիւններ, ինչպիսին էին լեհ թագաւոր Աւգուստ Բ. քարտուղար Մինասովիչ Միկոլայը, լեհերէնով եւ լատիներէնով գրուած տասնեակ երկերի հեղինակ Եուզէֆ-Էպիֆանի Մինասովիչը (1718-1796 թթ.) տաղանդաւոր բանաստեղծ, Շիլլերի յայտնի թարգմանիչ Յուզէֆ-Դիոնիսիյ Մինասովիչը (1798-1849 թթ.):

Բերուած փաստերը ապացուցում են, որ չնայած դէպի Լեհաստան Ղրիմից եւ թաթարներին ենթակայ այլ բնակավայրերից հայերի մշտական հոսքին, հայկական գաղութներում կիրառոււմ էր հայերէնը, որը դեռ երկար ժամանակ պահպանուեց այնտեղ: Սակայն դրա հետ մէկտեղ բնակչութեան որոշ մասը օգտոււմ էր նաեւ զփշախերէնից: Հայկական գաղութների բնակչութիւնը, բնականաբար, խօսում էր նաեւ լեհերէնով: Հայերից ոմանք ընդունել էին կաթոլիկութիւնը, մինչեւ հռոմէա-կաթոլիկական եկեղեցու հետ պաշտօնական միացումը: Արդէն 17-րդ դ. կէսերին այդ միացումը նպաստեց հայ բնակչութեան ձուլմանը, լեհականացմանը եւ հայերէնի անհետացմանը: 18-րդ դ. մենք չենք հանդիպում հայերէնով գրող եւ ընթերցող հայերի:

Լեհաստանի քաղաքական եւ տնտեսական անկումը, չղաղարող պատերազմներով երկրի տնտեսութիւնը հասցուող ահռելի վնասները, 17-րդ դ. յանգեցրին հայկական գաղութների տնտեսական հզօրութեան քայքայմանը: Հայերի նախկին իրաւունքների վերականգնմանը ուղղուած լեհ թագաւորների ձեռնարկած միջոցներից եւ ոչ մէկը չէր կարող կասեցնել այդ ընդհանուր գործընթացը, որը լեհական քաղաքների հետ մէկտեղ ընդգրկել էր նաեւ հայկական գաղութները: Հենց այդ ժամանակներից է սկսոււմ հայկական համայնքների «վերենների», «չլախտացումը» եւ կաթոլիկացումը, իսկ յետագայում տեղի է ունենում նաեւ նրանց լիակատար «միաձուլումը» լեհ ֆեոդալական հասարակութեան հետ: 18-րդ դ. վերջին Լեհաստանի տարանջատումներից յետոյ հայկական գաղութները, որպէս ինքնավար միաւորներ, ընդհանրապէս դադարեցին գոյութիւն ունենալ:

52. A. Gligbocki, Plyty grobowe w kosciolce sw. Yacka w Warszawie - "Klosy", t 29, n 737, A. Plug, Yeszcze o plytach grobowych n kosciolce sw. Yacka w Warszawie - "Klosy", t. 29, n 739



## INCREASE OF ARMENIAN SETTLEMENTS IN THE UKRAINE AND POLAND

JULIETTA O. GALSTIAN

### SUMMARY

Due to political and economic conditions in Armenia, the Armenian people had to emigrate or move to foreign countries, as from the XIth century. Armenians went to the Ukraine and Poland, where they established settlements, institutions, made the continuation of their creative activity possible, busied themselves with their tradition-based arts and created material and cultural wealth.

However, the links between the Armenians and Slavonic races can be traced back to ancient times. In the early XIth century those links were systematically brought into evidence. In the XIth century, there was a large Armenian settlement in Kiev, in fact the earliest one in old Russia. From there Armenians moved to other cities of South-West Russia such as Lvov, Kamenets, Lytsk, Vladimir. During the period of the Polish invasion of Galician Russia, Armenian settlements were to be found within the borders of the State of Poland. New migrant Armenians from Armenia as well as from the Crimea, Moldova, Valakhia replenished the communities which emerged during this period.

From the XVIth to the XVIIth century the greatest number of Armenian communities emerged though they were not so influential as the older ones. In the XVth century settlements were formed in Bar, Tismenits, Podgajtsi, Jazlovts, Zamostje; in the XVIIth century in Braek, Brody, Berezhani, Gorodenko, Jaroslav, Kasimir Nizhni, Lisets, Sambor, Sniatin, Stanislav, Studenits, Varjash, Zolochov, Zhvants.

Political and economic stagnation in Poland which began in the first half of the XVIIth century undermined the power of Armenian communities. None of the measures undertaken by the Polish kings were able to reinstate the Armenians' rights of or even half the process in which Armenian communities found themselves involved together with Polish cities. This situation became much worse as a result of the forced union of the Armenian church with the Catholic churches which accelerated the process of turning the Armenians into Catholicism and the assimilation of the Armenians.

At the end of XVIIIth century as a consequence of the division of Poland the Armenian communities as self-governing units ceased their existence.

## ԱՆՏՈՆ ՍՈՒԼԹԱՆԻԷՑԻ՝ ԾԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՉԻՆԱՍՏԱՆ

### Հ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Միջազգային տնտեսական եւ մշակութային կապերի զարգացման պատմութեան մէջ 13-14-րդ դարերը նշանաւորուեցին նրանով, որ այդ ժամանակաշրջանում Արեւմուտքի եւ Արեւելքի «Մետաքսի ճանապարհով» քարաւանային առեւտուրը, որ ընդհատուել էր 8-9-րդ դդ.,<sup>1</sup> զգալի չափերով աշխուժացաւ, գրեթէ վերածնուեց: Այդ կապերի ընդլայնման գործում կարեւոր դեր խաղացին մոնղոլները: 13-րդ դ. 50-60-ական թուականներին Իրանի, Անդրկովկասի եւ Փոքր Ասիայի մարզերի մի մասի տարածքներում կազմաւորուած Հուլավեան<sup>2</sup> (Իլխանեան) պետութեան շնորհիւ մոնղոլական կայսրութիւնը տարածուեց մինչեւ Միջերկրական ծովի ափերը եւ անմիջական շփումների մէջ մտաւ Եւրոպայի երկրների հետ:

Սակայն դեռեւս մինչեւ Հուլավեան պետութեան ստեղծումը եւրոպական երկրները քայլեր էին ձեռնարկել մոնղոլների հետ կապեր հաստատելու ուղղութեամբ: Այդ քայլերը թելադրուած էին մոնղոլական զօրքի Փոքր Ասիա եւ Ռուսաստան (20-30-ական թուականներին), ինչպէս նաեւ 40-ական թուականներին Եւրոպա (Լեհաստան, Հունգարիա, Մորավիա, Սիլեզիա, մինչեւ Ադրիատիկի ափերը) թափանցելու հանգամանքով:

1. 7-8-րդ դդ. իրենց զարգացման գագաթնակէտին հասած «Մետաքսի ճանապարհով» իրագործուող տնտեսական եւ մշակութային փոխյարաբերութիւնները 8-9-րդ դդ. սկսեցին անկում ապրել: Դա ի վնաս ցամաքային կապերի աշխուժացած ծովային կապերի, ինչպէս նաեւ քաղաքական որոշ գործոնների հետեւանք էր:

2. Չինգիզ խանի բոռ ու մեծ խան Մանկէի կրտսեր եղբայր Հուլաուուն գրաւելով Իրանը, Անդրկովկասն ու Փոքր Ասիայի մի մասը այդ տարածքները ինքնավար կարգավիճակով որպէս բաժնեկալուածք ստացաւ: Դրանք անձամբ նուաճելով նա իլխանի (արաբերէն «ժողովուրդի տէր») տիտղոս ստացաւ: Տիրել է 1256-1265 թթ.:



13-րդ դ. կէսերից սկսած մէկը միւսի յետեւից Մոնղոլիա մեկնեցին մուրացող վանականների ֆրանցիսկեան եւ դոմինիկեան ուխտերի միսիաները: Ֆրանցիսկեանները Պլանո Կարպինիի գլխաւորութեամբ Եւրոպայի, Ռուսաստանի եւ ապա Միջին Ասիայի վրայով հասան Մոնղոլիա: Գույուք մեծ խանին (1246-1248) յանձնելով ինոկենտի 4-րդ պապի (1243-1254) նամակը Պլանո Կարպինին նրա պատասխան նամակը առած 1247 թ. վերադարձաւ Ֆրանսիա (Լիոն): 1253 թ. մոնղոլ մեծ խաների ռազմակայան՝ Կարակորում<sup>3</sup> հասաւ ֆրանցիսկեան վանական Գիլյոմ Ռուբրուկը:<sup>4</sup> Մեծ խան Մանկեն (1251-1259) նրան յանձնեց Լիւդովիկոս Գ-ին ուղղուած նամակը:

Դոմինիկեան ուխտի վանականները ֆրանսիացի Անտրէ տէ Լոնժիւմէն եւ իտալացի Ասցելինը ընտրեցին Սիրիայով, Միջագետքով, Իրանով եւ Անդրկովկասով անցնող հարաւային ուղին: Սակայն նրանք չհասան Կենտրոնական Ասիա: Ասցելինը գալով Հայաստան Սիսիան գիւղում (այժմ չրջկենտրոն) այցելեց Ոսկէ Հորդայի խան՝ Բաչու Նուխի ռազմակայան: Լոնժիւմէն Միջին Ասիայում Խորեզմից հեռու չգնաց:

Գրեթէ նոյն ժամանակաշրջանում Կարակորում այցելեց Կիլիկիայի հայկական պետութեան ներկայացուցիչ՝ Հեթում 1 եղբայր Սմբատ Սպարապետը: Նրանից յետոյ մոնղոլ մեծ խաների ռազմակայանը եկաւ ինքը՝ Հեթում 1:<sup>5</sup> Նա ստացաւ Մանկէից Ֆայցու՝ Կիլիկեան Հայաստանի տարածքների, հայկական եկեղեցու կալուածքների անձեռնմխելիութեան պահպանագիր:

Մոնղոլների հետ եւրոպական երկրների քաղաքական շփումների անմիջական արդիւնքը այսպէս կոչուած մոնղոլական խաղաղութիւնը (Pax Mangolica) եղաւ, որ տեւեց 13-րդ դ. կէսերից մինչեւ 14-րդ դ. կէսը:

Եւրոպացի պատուիրակները Արեւելքում 13-րդ դ. իրենց ճանապարհորդութիւնների ընթացքում նոր երկրներ չյայտնաբերեցին: Սակայն նրանք հետազոտման համար յայտնաբերեցին արդէն յայտնի երկրներ՝ որոնցից մէկը 1271 թ. մոնղոլների գրաւած Չինաստանն էր:

Չինաստանի հետազոտման առաջադնացները դարձան առեւտրի մարդիկ՝ վենետիկցի Պոլո ընտանիքի անդամները: Նիկոլոյ եւ Մաֆֆէօ Պոլոները՝ Մարկո Պոլոյի հայրն ու հօրեղբայրը 50-60-ական թուականներին, անցնելով Ղրիմը, Ոսկէ Հորդան, Միջին Ասիան եւ «Մետաքսի ճանապարհի» Չինաստանով գնացող հիւսիսային մասը հասան Կարակորում: Մեծ խան Խուբիլայը (1259-1294) տուեց նրանց իր պահպանագիրը, որը Պոլոները յանձնեցին պապական կուրիային (Կղեմես 4-րդի մահից յետոյ պապական

3. Հիմնել է Չինգիզ խանի ժառանգորդ Ուգեդէյը: Կարակորումը (Խարա-Խորին) գտնուում էր Սիբիրի վտակ Օրխոնու գետի մօտակայքում:

4. Карпини Джованинц дель Плано. История монголов. Гильом де Рубрук. Путешествие в восточные страны. Москва, 1957

5. Հեթում 1 այցի մանրամասնները քերուած են Հեթում Պատմիչի «Անդաստան Արեւելի երկրների պատմութեան» երկրում («La Fleur des estoires de la Terre d'Orient»): Այդ գրուած է հին ֆրանսերէնով: Հայերէն հրատարակուել է 1824 թ.: Գրքի հրատարակիչ Հ. Ավգերեանը աշխատութեանը կցել է Հեթում Պատմիչի հայերէն ժամանակագրութիւնը:

գահը թափուր էր): Նոր Պապը՝ Գրիգորիոս 10-րդը հաւատարմագիր եւ նամակ յանձնելով, Պոլոներին ուղարկեց Խուբիլայի մօտ: Պոլոները՝ այս անգամ երիտասարդ Մարկոյի հետ, սկսելով իրենց երկրորդ ճանապարհորդութիւնը 1271 թ. հասնում են Շանդու՝ մեծ խանի ամառային նստավայրը 1275 թ.: Չինաստանում 17 տարի մնալուց յետոյ նրանք ծովով՝ Հնդկաչինի եւ Հնդկաստանի ափերով գալիս են Պարսից ծոց, ապա Իրանի եւ Հայաստանի վրայով, Տրապիզոն, որտեղից նաւով հասնում են Վենետիկ (1295 թ.):

Մի քանի տարի անց իր այցելութիւնը Չինաստան կատարեց ֆրանցիսկեան վանական Պորզենոնցի Օդորիկոն: Կտրելով անցնելով գրեթէ նոյն ճանապարհը, ինչ Մարկո Պոլոն, միայն թէ հակառակ ուղղութեամբ, նա Տրապիզոնից գնում է Իրանով, Բաղդատով եւ Բասրայով Օրմուզ նաւահանգիստը, որտեղից նաւով Հնդկաստանի Մալաբարեան եւ Կարոմանդելեան ափերով հասնում է Ջոնդեան կղզիները, իսկ այնտեղից Չինաստան: Մնալով Չինաստանի մայրաքաղաքում՝ Խանբալըքում<sup>6</sup> (Պեկին) 1325-1328 թթ. Օդորիկոն Կենտրոնական Ասիայով, այցելելով Տիբեթը, վերջինիս մայրաքաղաք Լխասը (ի դէպ, Միջնադարում սա եւրոպացիների միակ այցելութիւնն էր աշխարհի այս մասը): Անցնելով Չինաստանով ձգուող «Մետաքսի ճանապարհի» մասը, Տիան-Շանի լեռները, Միջին Ասիան, Իրանը եւ Փոքր Ասիան, վերադառնում է Եւրոպա:

Եւրոպական միսիոներներն, Կիլիկեան Հայաստանի թագաւորական ընտանիքի անդամները, Մարկո Պոլոն եւ Օդորիկո Պորզենոնացին մոնղոլական կայսրութիւն եւ Չինաստան իրենց ճանապարհորդութեամբ Անտոն Սուլթանիեցու նախորդներն էին: Անտոն Սուլթանիեցու ճանապարհորդութիւնը Չինաստան կայացել է 14-րդ դարի 30-ական թուականներին եւ եղել է 13-14-րդ դդ. «արեւմտացիների» համանման վերջին ձեռնարկումներից մէկը:

\*\*\*

Անտոն Սուլթանիեցին, ինչպէս վկայում է նրա անուան նախածանցը, բնակուել եւ գործել է Սուլթանիէում,<sup>7</sup> որը 1313 թ. Հուլիական պետութեան մայրաքաղաք դարձաւ: Սուլթանիէի շինարարութիւնը աւարտելով, որ նախաձեռնողն էր դեռեւս հայրը՝ Արղուն Խանը, սուլթան (այստեղից էլ քաղաքի անուանումը) Օլջէյթուն (1304-1316) իլխանների գահը Թաւրիզից փոխադրեց այնտեղ: Նա Թաւրիզից եւ Իրանի այլ քաղաքներից տեղափոխեց հազարաւոր մարդկանց, նրանց մէջ կային շատ հայ ընտանիքներ, գլխաւորապէս արհեստաւորներ եւ առեւտրականներ:

6. Խանբալըք «Թագաւորական քաղաք» անուանումը Պեկինին տուել են մոնղոլները: Պեկինը դարձնելով իրենց մայրաքաղաքը նրանք նրա հիւսիս-արեւմտեան մատուցներում կառուցեցին նոր քաղաք՝ այն կոչելով Դադու «Մեծ պալատ»: Պեկինը մոնղոլական կայսրութեան կենտրոն դարձրեց մոնղոլ մեծ խան Խուբիլայը 1268 թ.:

7. Քաղաքը (այժմ քանդուած) Ջենջանի եւ Ղազուիսի միջեւ Իրանի հիւսիս-արեւելեան մասումն է ընկած:



Ինչպէս վկայում են հայկական ձեռագրերի յիշատակարաններն ու պատմական այլ սկզբնաղբիւրներ, Սուլթանիէի հայ գաղութն արագօրէն աճեց: Հայերի այնտեղ տեղափոխուելու առաջին իսկ տարիներին կառուցուեց սրբ. Աստուածածնի եկեղեցին: Սուլթանիէի հայ բնակչութիւնը ունէր երկու եպիսկոպոս՝ մէկը բուն Սուլթանիէ քաղաքում, միւսը՝ նրա արուարձանում, որ անուանում էր Օրտու-բազար (Օրդու-բազար): Օրտու-բազարում, ինչպէս ենթադրում են ուսումնասիրողները, ապրում էին արքունիքը, վերին աստիճանաւորներն, հոգեւորականութիւնը, արհեստաւորներն ու առեւտրականները, նրանց թւում նաեւ հայ արհեստաւորներն ու առեւտրականները: Օրտու-բազարում կազմում էին առեւտրական ուղիներ դուրս եկող վաճառականական քարաւանները: Օրտու-բազարը իշխանական արքունիքի հետ կապուած վաճառականների եւ արհեստաւորների բնակատեղին էր: Թուրքական «օրդու» բառը նշանակում է «խանի ռազմակայան»: Ա. Ալպոյաճեանի կարծիքով, «օրդու» տիտղոսը իր մէջ «գօրքային կամ այլ մեկնաբանութեամբ՝ մայրաքաղաքային» իմաստ է պարունակում:<sup>8</sup>

Տեղի հայկական գաղութը ընդհանուր առմամբ առաքելականն էր: Սակայն նրանում ժամանակի ընթացքում կազմաւորուեց նաեւ կաթոլիկական համայնք: Այդ մասին յիշատակում է դոմինիկեան վանական Ժուրդէն դէ Սեւերաքը, որը Հնդկաստան գալու ճանապարհին 1318 կամ 1319 թ. եղել է Սուլթանիէում: Նա, մասնաւորապէս, հաղորդում է. «Հինգ հարիւր կամ վեց հարիւր (կաթոլիկներ) կան Սուլթանիէում, եւ այն գտնւում է Թաուրիսից (Թաւրիզ-Հ.Մ.) ութօրուայ ճանապարհի վրայ եւ այստեղ մենք շատ գեղեցիկ եկեղեցի ունենք»:<sup>9</sup>

Ամենայն հաւանականութեամբ, Սուլթանիէի կաթոլիկ համայնքի վանահայրերից էր Անտոն Սուլթանիէցին: Տեղահայ կաթոլիկ համայնքի հոգեւոր առաջնորդի, որպէս նրա գործունէութեան մասին, ցաւօք, գրեթէ ոչինչ յայտնի չէ: Ստոյգ է միայն, որ նա արքեպիսկոպոսի կարգ է ունեցել Յովհանն 22-րդ պապի հովուապետութեան օրօք, այսինքն 1316-1334 տարեմիջոցում:

Անտոն Սուլթանիէցին միաժամանակ Սուլթանիէի տեղի դոմինիկեան ուխտի միսիայի գործիչներից էր: Իշխանական գահը Սուլթանիէ տեղափոխելուց անմիջապէս յետոյ այնտեղ հիմնաւորուեցին նաեւ արեւմտեան միսիոներները: 1314 թ. Սուլթանիէում հիմնադրուեց կաթոլիկ (դոմինիկեան) վանք: Իսկ 1318 թ. Հուլիան պետութեան մայրաքաղաքը դարձաւ «Արեւելեան Թաթարստանի» այսինքն ամբողջ մոնղոլական կայսրութեան

8. Ալպոյաճեան Ա. Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. 2, Գաիրիւ, 1955, էջ 312:  
 9. Mirabilia Descripta. The Wonders of the East by friar Jordanus. New York, 1963.  
 Արեւմտաւերոպական միսիոներների գլխաւոր նպատակը Իրանում, ինչպէս նաեւ ամբողջ Ասիայում, Բրիտանեաներին, եւ ոչ միայն նրանց, կաթոլիկական դաւանամբի բերելն էր: Ժամանակի ընթացքում նրանց գործունէութիւնը կենտրոնացաւ գլխաւորապէս տեղի հայ բնակչութեան շրջանում:

արքեպիսկոպոսութեան կենտրոնը: 1318 թ. Ապրիլի մէկին Յովհանն 22 պապը արձակեց «Redemptor noster» կտակը (կոնդակ), որով Սուլթանիէն ճանաչոււմ էր նորակազմ արքեպիսկոպոսութեան աթոռանիստ եւ զատորոշում էին դոմինիկեան եւ ֆրանցիսկեան ուխտերի միսիոնարական գործունէութեան տարածասահմանները:

Ըստ կտակի, դոմինիկեանների գործունէութիւնը ընդգրկում էր «Արարիօ (Արարատ-Հ.Մ.) լեռիցն եւ դրանից արեւելք ընկած տարածքը ներառեալ պարսից Թաթարստան (Հուլիան պետութիւն - Հ.Մ.) մեծ պետութեան... ամբողջ կայսրութիւնը, ինչպէս նաեւ Դոխի եւ Սայգօ Թագաւորութիւնը (Չաղաթայական ուլուսը<sup>10</sup> խան Սայգու եւ զօրապետ Դուվայի գլխաւորութեամբ, - Հ.Մ.) եւ նրանց ենթիշխան բոլոր հողերը: Նմանապէս Հնդկաստանը եւ Եթովպիան<sup>11</sup> պատկան են նշուած արքեպիսկոպոսութեան գաւառին, իսկ ինքը՝ Արքեպիսկոպոսը այսուհետեւ պէտք է նստի Սուլթանիէում, քանզի վայրն այս մեծ է եւ արժէքաւոր»:<sup>12</sup> Ֆրանցիսկեաններին յատկացուեցին «Չինաստանը» եւ «Սագարստանը»:<sup>13</sup>

Միաժամանակ Սուլթանիէն դարձաւ նաեւ Առաջաւոր Ասիայի հաղորդակցութեան հանգույց եւ առեւտրական կարեւոր խոշոր կենտրոն: Դրան նպաստեց Սուլթանիէի Փոքր Ասիայով, Միջագետքով, Իրանով Միջին Ասիա եւ Չինաստան տանող եւ Օրմուզից եկող ճանապարհների հանգուցակէտում գտնուելը: Իրանի տարբեր ծայրերից, Աֆղանիստանից, Պարսից Մոցի աւազանից, ինչպէս նաեւ Կիլիկեան Հայաստանից, Տրապիզոնից, Լիւմից, Փոքր Ասիայից, Միջագետքից եւ այլ վայրերից ժամանած վաճառականները Սուլթանիէ էին բերում բազմաթիւ մեծաքանակ ապրանքներ: Ըստ Օդորիկոյի, այդ քաղաքը «մեծ է, եւ այդ վայրերը ցուրտ է: Ջուրն այստեղ լաւն է եւ այստեղ են բերում բազմաթիւ ապրանքներ»:<sup>14</sup> 15-րդ դարի սկզբին Սուլթանիէի մասին պատմելիս Կաստիլայի (Իսպանիա) Թագաւորի դեսպան Ռյուի Գոնզալես դէ Կլաւիխոն, որ այդ քաղաքում եղել է 1403-1406 թթ. Թամերլանի Սամարղանդում գտնուող ռազմակայան իր այցի ճանապարհին, գրում է, որ այն «շատ է

10. Չաղաթայական ուլուսը կազմում էր Արեւելեան Թուրքեստանի (ներկայիս Չինաստանի Սինցզեան-Ույգուրական ինքնավար շրջան) եւ Արեւմտեան Թուրքեստանի (Միջին Ասիան մինչեւ Ամու-Դարիա գետը) տարածքներից: Այդպէս էր կոչուել Չինգիզի խանի երկրորդ որդու՝ Չաղաթայի (Չաղաթայի) անունով:  
 11. Այստեղ Եթովպիա անուն տակ նկատի են առնում Հնդկաստանի հարեւանութեամբ գտնուող տարածքները: Տարածքները, որոնք ընկնում էին բուն կամ Մեծ Հնդկաստանի հարաւ-արեւմուտք, համարում էին «Միջին Հնդկաստան»: «Փոքր Հնդկաստան» էր կոչուում Աֆղանստանը: Միջնագարի երոպական հրատարակութիւններում քանապարհորդութիւնները Արեւելք ոչ հազուադէպ անուանում էին քանապարհորդութիւն «Երեւ Հնդկաստանների» երկրներ:  
 12. Golubovich G. Biblioteca bibliografica della Terra Santa e dell'Oriente Franciscano. T. II. Quarachi, 1911, p. 571-572.  
 13. Խաղաղների երբեմնի թագաւորութեան տարածքները, որի մէջ էին մտնում Դրիմն ու Ոսկէ Հորդայի տիրոջները  
 14. Свет Я. После Марко Поло. Москва, 1968, стр. 172



բնակեցուած, բայց այնքան մեծ չէ, որքան Թուուսը (Թավրիզ- Հ.Մ.), փոխարէնը այդտեղ առեւտուրը աւելի շատ է, քանի որ ամէն տարի յատկապէս Յունիս, Յուլիս, Օգոստոսին այստեղ են ժամանում ուղտերի մեծ քարաւաններ, բերելով շատ մեծ քանակով ապրանքներ... Փոքր Հնդկաստանից (Աֆղանստան- Հ.Մ.) համեմունքներ... այդտեղ է բերում մետաքսի մեծ մասը... մետաքսեայ եւ բամբակեայ գործուածքներ, թափթա, սանդալ (անդուս- Հ.Մ.) ... նաեւ Օրմուզ քաղաքից... Շատ մարգարիտ եւ թանկարժէք քարեր: Որովհետեւ Չինաստանից ծովով նաւերը հասնում են գրեթէ տաս օրում... բերում են սուտակներ, որոնց նման լաւը գրեթէ ոչ մի տեղ չկայ, բացի Չինաստանից, նաեւ շատ համեմունք, որը յետոյ արտահանւում է աշխարհով մէկ»:<sup>15</sup>

Սուլթանիէն նաեւ Իրանի վրայով Արեւմուտք եւ Արեւելք տանող առեւտրական ուղիների հանգոյցն էր: Նրանով անցնում էին, ըստ Համդուլլա Ղազվինիի տեղեկութիւնների, Իրանի վրայով Հայաստան եւ Փոքր Ասիայի հարաւային մարզերը տանող այսպէս կոչուած «Արեւմտեան ճանապարհը»:<sup>16</sup> Այդ ճանապարհից բացի 13-րդ դ. վերջին ու 15-րդ դ. սկզբին գոյութիւն ունէր մի այլ առեւտրական կարեւոր ճանապարհ եւս՝ Այաս (Կիլիկեան Հայաստան)- Թավրիզ (Իրան): Այն նկարագրուած է Փլորենցիացի առեւտրական Ֆրանչեսկո Բալդուչչի Պեգոլոտտիի «Առեւտուր գործառնոյն» գրքում:<sup>17</sup>

Այդպիսին էր Սուլթանիէ քաղաքը, որտեղից 14-րդ դ. 30-ական թուականների սկզբին Չինաստան մեկնեց արքեպիսկոպոս Անտոն Սուլթանիէցին: Անտոն Սուլթանիէցու մասին իրագեկող են երկու հեղինակ. Կղեմես Գալանոսը՝ 17-րդ դ. իտալացի աստուածաբան, փիլիսոփայ, հայագէտ, եւ ուումին-մոլդովացի նշանաւոր քաղաքական գործիչ, գրող, գիտնական, դիւանագէտ եւ ճանապարհորդ Նիկոլայէ Միլեսկու Սպաֆարին (1638-1708):

Կղեմես Գալանոսը իր «Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ Մեծի սուրբ Եկեղեցւոյն Հոովմայ» գրքում նշում է, որ Անտոն Սուլթանիէցին (Dom. Fr. Antonio Episcopo de Soltanea) հեղինակ է մի աշխատութեան՝ “Liber contra Mahometanos” («Գիրք Ընդդէմ Մահմետականաց»):<sup>18</sup> Հ.Մ. Անասեանը՝ յենուելով Quetif. եւ Echard). “Scriptores Ordinis Praedicatorum recensit” երկի վրայ գրում է, որ նա հեղինակ է մի այլ աշխատութեան՝ «Տեղեկութիւններ Չինաստանի մեծ խանի պետութեան մասին՝ կազմուած Յովհան 22-րդ պապի կարգադրութեամբ արքեպիսկոպոս Սուլթանիէցու կողմից, լատին լեզուով, (“Notitia regiminis magni Caan Cathai Tartarorum imperatoris cum descriptione

15. Юрий Гонзалес де Клавиха. Дневник путешествия ко двору Тимура в Самарканд в 1403-1406гг.. С-Петербург, 1881, стр. 176-179  
 16. The Geographical Part of the Nuzhat al-Kulub. Composed by Hamdadllah Mustawfi of Qazwin, Leiden-London, 1919, p. 174-175  
 17. Pegolotti F. La Pratica della mercatura. Ed. by Evance, Mass, 1936, Yule H. Cathay and the Way thither. Vol. II. London, 1866:  
 18. Bibliotheque Nationale, Ms. Fr., 12202, p. 166r<sup>o</sup>-184r<sup>o</sup>, Galanus Clemens. Consiliatio Ecclesiae Armeniae cum Romana. T.I, Romae, 1650, p.527-528

vastissima ejus regni jussu Joannis XXII ab archiepiscopo Soltaniensi latine scripta”<sup>19</sup>:

Յետագայում այդ աշխատութիւնը քանիցս հրատարակուել է: 1351 թ. այն գրառումների ձեւով Ֆրանսերէնի է թարգմանուել Սան Բերտին վանքի արքայ ժան լէ Լոնդ Իպրացին, այն զետեղելով Արեւելք, մասնաւորապէս Չինաստան եւ Մոնղոլական կայսրութեան այցելած հեղինակների իր թարգմանած երկերի ժողովածուի մէջ: 1529 թ. ժան Սեն Դենին Անտոն Սուլթանիէցու այս երկի ժան լէ Լոնդի կատարած Ֆրանսերէն թարգմանութիւնը հրատարակեց մի նոր ժողովածուի մէջ՝ “L’Histoire du grand Caan de Cathai et des Tartares. Plus la peregrination de F. Ricult ex parties d’Orient et le traicte le Guillaume de bouldeselle d’lestat de la Terre Sante Les quelles traductions out este faites en l’abbaye de S. Bertin en S. Omer” etc. (Parissis, Joann, a S. Dionysio, 1529)”:

Անտոն Սուլթանիէցու (Անտոն- հայի) մասին մի քանի աւելի հական փաստեր է բերում Նիկոլայէ Միլեսկու Սպաֆարին: Նա 1671 թ. ծառայութեան անցնելով Մոսկովեան պետութեան մէջ, 1675-1678 թթ. գլխաւորել է Չինաստան ուղևորական դեսպանութիւնը: Միլեսկուն հետեւեալ յիշատակութիւն է տալիս իր գրքում. «Միայն չինական երկրում՝ Խեքեանգ անուանեալ, շատ աւելի մետաքս է արդիւնւում, քան ամբողջ աշխարհում, քանի որ որդերը տարենը երկու անգամ են մետաքս ծնում: Իսկ հին գրքերում գրում են, որ արդէն 1500 տարի է, որ այդ երկրում սկսել են արդիւնագործել այն եւ այն էլ ճիշդ է, թէ իսկական մետաքս արդիւնագործումը այլ երկները չինացիներից սովորեցին եւ ոչ միայն այդ, այլեւ թնդանօթներ ձուլելը եւ ծովում լաստով նաւարկելը, նմանապէս եւ գրքեր տպելը Եւրոպայում չինացիներից սովորեցին: Որովհետեւ երբ կալմիկները (խօսքը մոնղոլների մասին է- Հ.Մ.) եւ թաթարները Չինաստանն առան, նրանց հետ Չինաստան եկան հայր Օղորիկոն (Օղորիկո Պորդենոնացի- Հ.Մ.) եւ Անտոն հայր եւ Մարկո Պաւել (Մարկո Ղօղոս, Մարկո Պոլօ- Հ.Մ.) վենետիկցին եւ իրականում Չինաստանից այդ արհեստները ու արուեստները նրանք Եւրոպա բերին»:<sup>20</sup>

Փաստերը ցոյց են տալիս, որ Միլեսկուն լաւատեղեակ էր Անտոն Սուլթանիէցիի Չինաստան կատարուած ճանապարհորդութեան մասին: 17-րդ դ. 60-ական թուականներին Կոստանդնուպոլսի յունական պատրիարքարանի դպրոցում ուսած, նա թուում է, հնարաւորութիւն ունէր ծանօթանալ Կղեմես Գալանոսի աշխատութեանը: Սակայն ակներեւաբար, Միլեսկուն չի սահմանափակուել միայն այդ գրքով: Անտոն Սուլթանիէցու 13-րդ դ. վերջի եւ 14-րդ դ. սկզբի Չինաստանի երեք հետազոտողներից մէկի մասին՝ նրա ծանրակշիռ դատողութիւնները պէտք է որ աւելի լայն տեղեկութիւնների վրայ հիմնուած լինէին: Ի դէպ, հարկ է նշել, որ Միլեսկուն սերտ կապերի մէջ է եղել 17-18-րդ դդ. սկզբին Օսմանեան կայսրութիւնում եւ Եւրոպայում ծաւալուած

19. Bibliotheque Nationale, Ms. Fr., 1380, 2810, Անասեան Յ.Ս., Հայկական Մատենագիտութեան, հ. Ա. Երեւան, 1959, էջ 983  
 20. Николай Милеску-Спафарий Сибирь и Китай, Кишинев, 1960, стр. 184



հայ ազատագրական պայքարի ներկայացուցիչների հետ: <sup>21</sup>

Այսպիսով, 14-րդ դ. 30-ական թուականների սկզբներին Անտոն Սուլթանիէցին ընկաւ ճանապարհ դէպի Չինաստան: Քիչ բան է յայտնի նրա դէպի այս երկիրը ուղու մասին: Միայն նրա աշխատութեան մէջ Ուզբեկ խանի <sup>22</sup> տիրոջ թերթի, «չինական մեծ գետերի եւ մեծ ջրերի», ինչպէս նաեւ Կասսայ <sup>23</sup> եւ Կամբալըք (Պեկին) քաղաքների յիշատակութիւնը հիմք է տալիս պնդելու, որ նա անցել է այսպէս կոչուած «Հիւսիսային ուղիով»: 14-րդ դ. 20-ական թուականների վերջին 30-ականների սկզբին այդ ճանապարհը դարձել էր Չինաստան տանող ցամաքային գլխաւոր մայրուղին: Նա Տանից (Ազով) Սարայով (Վոլգա գետի աւազան) անցնում էր Սարայիկ (Ուրալ գետի ափերի մօտ նոդայական Հորդայի գլխաւոր քաղաքը): Միջին Ասիայում այդ ուղին Ուրգենչ (Ամու-Դարիայի աւազան), Օթրար (Սիր-դարիայի աւազան), Ալմալըք քաղաքներով ձգւում էր Տիան-Շանի լեռները եւ ապա «Մետաքսի ճանապարհի» հիւսիս-արեւմտեան՝ Չինաստանի տարածքով անցնող հատուածով: 1305 թ. այդ ճանապարհը նկարագրել է Ջովաննի Մոնտեկորվինոն: <sup>24</sup> «Ինչ վերաբերում է ճանապարհին, ապա յայտնում եմ, որ Կոտայով (Թուրքա)՝ հիւսիսային թաթարների կայսեր (Ոսկէ Հորդայի խանը, տիրել է 1291 մինչեւ 1321 թթ.- Հ.Մ.) հողերով ճանապարհը ամենակարճն ու անվտանգն է, այսպէս որ դեսպանների հետ այն կարելի է անցնել հինգ վեց ամսում, թերեւս աւելի կարճ ժամանակում»: <sup>25</sup>

14-րդ դ. 20-ական թուականներին այդ ուղին նկարագրել է նաեւ Ֆրանչեսկո Բալդուչչի Պեզոլոտտին իր Libro de Divisamenti di paesi e di Misure di Mercantanzie աշխատութեան մէջ, հաւանաբար ըստ այն վաճառականների եւ միսիոներների պատմածների, որոնց հետ նա հանդիպել էր Թավրիզում: <sup>26</sup> Պեզոլոտտին մասնաւորապէս գրում է. «Օթրարից (Օթրար-Հ.Մ.) Արմալըք (Քուլջայից մօտ) ճանապարհորդութիւնը բեռնակիր աւանակներով տեւում է 45 օր... Արմալըքից Կամբասու - (Գանչժոու) բեռնակիր աւանակներով 70 օրուայ ճանապարհ է, իսկ Կամբասուից մինչեւ գետը անունով (անընթեռնելի բառ: Հենիգը յենուելով Հ. Շուլի վրայ, այստեղ ենթադրում է Չինական Մեծ ջրանցքը, Գանչժոու-Չժանյէն նոյնացնելով Չինաստանի հարաւի նոյնանուն քաղաքի հետ: Իրականում այստեղ խօսքը կարող է միայն Եանցզի գետի մասին

21. Յրվհաննիսեան Ա.Գ. Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, հ. 2, Երեւան, 1958 թ.:  
22. Ուզբեկ խանը կառավարել է 1312-1340 թթ.: Նրա տիրոջ թերթը մտնում էին Չաղաթայի ուլուսի մէջ:  
23. Կասսայ քաղաքը այժմեան Խանչժոու է: Մարքո Բոլոն այն կոչում է Կիսսայ: Եղել է մետաքսի գործուածքի աւանդական արդիւնաբերական քաղաք եւ նախահանգիստ Եանցզի գետաբերանում  
24. Կաթոլիկ եկեղեցու նշանաւոր գործիչ: 1291 թ. Նիկոլայ 4 (1288-1292) պապի առաջադրանքով մեկնել է Չինաստան: Եղել է, 1307 բուականից, «ամբողջ Չինաստանի կայսրութեան» արքեպիսկոպոսը: 36 տարի շարունակ գտնուել է Պեկինում որտեղ եւ վախճանուել է  
25. Хенинг Р. Неведомье земли. Перевод с английского. Т. III. Москва, 1962, стр. 140 (Richard Henning. Terrag In-cognite. In 4 volumes, London, 1953)  
26. Յայտնի է, որ Պեզոլոտտին Թավրիզից հեռու չի գնացել

լինել) - 45 օր ճիւղով: Ապա կարելի է գետով վար գնալ Կասսայ (Կինասայ, խանչ-ժոու)... ճանապարհորդութիւնը Կասսայից դէպի Կամալըք (Պանբալըք, Պեկին)՝ Չինաստան երկրի գլխաւոր քաղաքը, տեւում է 30 օր...»: <sup>27</sup>

Անտոն Սուլթանիէցու ճանապարհորդութիւնը չի կարող համեմատուել Մարկո Պոլոյի եւ Օդորիկո Պորզենոնացու ճանապարհորդութիւնների հետ: Տեւողութեամբ եւ աշխարհագրական ընդգրկումով դրանք ժամանակի համար աննախադէպ էին: Այնուամենայնիւ, Անտոն Սուլթանիէցու անցած ճանապարհը սովորական երեւոյթ չէր՝ հարիւրաւոր քիլոմետրեր անցնելով կտրելով Խորասանն ու Միջին Ասիան, Տիան-Շանով, Չինաստանի հիւսիս-արեւմուտքով, Խուանխէ եւ Եանցզի գետերով, Խանչժոուլից Չինական Մեծ ջրանցքով հասել է Պեկին (նա յիշատակում է «մեծ գետեր եւ մեծ ջրեր», նշում է «թագաւորութեան եւ երկրի կէսը ջրեր են», «ջրերի վրայ ապրող նոյնքան մարդ կայ, որքան գետնի վրայ» եւ այլն):

Կարելի է ենթադրել, որ որոշակի հատուածներում Անտոն Սուլթանիէցու ճանապարհը համընկել է Օդորիկո Պորզենոնացու ուղուն: Յայտնի է, որ վերջինիս տունդարձին նոյնպէս անցել է հիւսիս-արեւմտեան Չինաստանի ճանապարհներով, Տիան-Շանով, Միջին Ասիայով եւ Իրանով:

Վերադառնալով Սուլթանիէ, Անտոն Սուլթանիէցին գրի առաւ իր տպաւորութիւնները Չինաստանի մասին: Այն ժամանակ Սուլթանիէում հոգեւոր կենտրոնի արքեպիսկոպոսն էր Ժան դէ Կորան: <sup>28</sup> Սուլթանիէում հոգեւորականների գաղափարախօս գործունէութեան արդիւնքներից մէկն էլ Չինաստան իր այցելութեան մասին Անտոն Սուլթանիէցու գրած հաշուետուութեան լատիներէն հրատարակութիւնն էր: Ամենայն հաւանականութեամբ այդ հրատարակութեան գործը գլխաւորուել է Սուլթանիէի արքեպիսկոպոս Ժան դէ Կորան: Պատմական գրականութեան մէջ նրան է վերագրւում Անտոն Սուլթանիէցու աշխատութեան հեղինակութիւնը: Այսպէս, Ռ. Հենիգը, վկայակոչելով Հ. Շուլին, նշում է, որ «Սուլթանիէի արքեպիսկոպոս Յովհան դէ Կորան, որը, ճիշդ է, ապրել է ոչ թէ Չինաստանում, այլ Պարսկաստանում, իր «Գիրք Մեծ խանի կայսրութեան մասին» երկում նոյնիսկ մի քանի տարի անց, անշուշտ թոյլ տալով մեծ չափազանցութիւններ, գրել է, որ կարելի էր կաթոլիկ հաւատի բերել ամբողջ չին ժողովուրդին, եթէ չլինէր քրիստոնեայ նեստորականների նախանձը, որոնց թիւը նա որոշել է 30 հազար»: <sup>29</sup> Ակնյայտ է, որ այդ տեսակէտները հիմնւում են մի անգամ թոյլ տրուած սխալմունքի վրայ, որը երկար ժամանակ է մի աշխատութիւնից միւսն է շրջում:

Անտոն Սուլթանիէցու աշխատութիւնը ամբողջութեան մէջ կառուցիկ շարադրանքով արքեպիսկոպոսի կարգ ունեցողի գրչին վայել գործ է: Այն ազատ է անէական փաստերից ու մանրամասներից, առաւել եւս առասպելներից

27. Yule H. Cathai and the Way thither, Vol. III. London, 1863, p. 143, Хенинг Р. Неведомье земли. Т. III. стр. 231-232  
28. Свет Я. После Марко Поло, стр. 99, 107  
29. Хенинг Р. Неведомье земли. Т. III. стр. 154



ու հնարաբանութիւններից, որոնք հազուադէպ չեն 13-14-րդ դդ. Արեւելքի ճանապարհորդների, այդ թւում եւ Օդորիկո Պորդենոնացու երկերում:

Ոչ ծաւալուն (ընդամէնը տպագիր տաս էջ) այդ տեղեկութիւնները գրւում են թեմատիկ բաժանումներով եւ վերաբերում են երկրի բնակչութեանը, անտեսական վիճակին, ապրանքատեսակներին, դրամական շրջանառութեան համակարգին, կրօնին եւ այլն:

Նախ եւ առաջ, Անտոն Սուլթանիէցին որոշ տուեալներ է հաղորդում Մոնղոլական կայսրութեան վարչա-տերիտորեալ բաժանման մասին: Նա նշում է, որ այդ կայսրութեան մէջ էին մտնում բուն Չինաստանը՝ Կամբալըքի կայսերը, Մանջուրիան՝ Բուսսայի կայսրը- եւ Ուզբեկի խանութիւնը՝ Ուզբեկ կայսրը:<sup>30</sup> Անշուշտ այս տուեալներն ամբողջական չեն, քանի որ Անտոն Սուլթանիէցին մոնղոլների տիրոյթների մէջ չի յիշատակում Չաղաթայի ուլուսը, որի մի մասն էր Ուզբեկի խանութիւնը, մի կողմ թողած «արմատական եուրոը»՝ Մոնղոլիան: Ժամանակի աշխարհագրական գիտելիքների տեսակէտից, ճանաչողական մեծ արժէք ունէին Անտոն Սուլթանիէցու տուած այն տեղեկութիւնները, որ Չինաստանը «շարունակուած է մինչեւ մեծ Հնդկաստան եւ ուղիղ գծով տարածուած է դէպի արեւմուտք այնքան, որքան կարելի է ճամբայ գնալ վեց ամսում»:<sup>31</sup> Էական է եւ Անտոն Սուլթանիէցու այն դիտարկումը, թէ Չինաստանը սկսւում է «ուղղակի արեւելքում» այսինքն անմիջապէս Խաղաղ ովկիանոսից: Պէտք է ասել, որ ժամանակին այդպիսի դիտարկումը յայտնադործութեան արժէք ունէր, թէեւ այս հարցում, ինչպէս յայտնի է «առաջնութեան դափնին» պատկանում է Գիլեոմ Թուրքուկին: Հենց նա է առաջինը նշել, որ Չինաստանը արեւելքից յարում է ովկիանոսին:

Ցաւօք, իր դիտարկումների մեծ մասը Անտոն Սուլթանիէցին շարադրում է ընդհանուր արտայայտութիւններով («...կան շատ քաղաքներ՝ բաւականին աւելի մեծ, քան Փարիզը կամ Յլորենցիան, եւ շատ կան լաւ բնակեցուած վայրեր, եւ կան նաեւ անթիւ քաղաքներ, շատ կան գեղեցիկ մարգագետիններ եւ լաւ արօտավայրեր եւ անուշ բոյր արձակող խոտեր»): Թէեւ ժամանակի Չինաստանի քաղաքներից ամենամեծի թւում նա առանձնացնում է Կամբալըքը (Պեկին) եւ Կասայը (Սանչժու), սակայն նրանց վերաբերեալ փոքրիշատէ մանրամասն տեղեկութիւններ չի բերում: Սահմանափակելով միայն նրանց

30. Կամբալըքի կայսրը կամ կայսրութիւնը (Թաթարների կայսրութիւն կամ Մեծ Թաթարստան)՝ Եուանեան կայսրութիւն էր, (1271-1368), որի մէջ էին մտնում Կատայը (Հիւսիսային Չինաստանը) եւ Մանգոլի (Հարաւային Չինաստանը): Մանջուրիայի եին անունն էր Բոհայ (բնագրում՝ Բուսայ): Ուզբեկ կայսրը կամ խանը (1312-1340) մոնղոլների օրօք եղել է Միջին Ասիայի տիրակալներից մէկը:

31. Վեցամսեայ տեւողութեան քանապարհը հաւասար է մօտաւորապէս 7 հազար ֆիլոմբրի, եթէ նկատի առնուի օրը 40 ֆիլոմբր արագութեամբ շարժուելու հնարաւորութիւնը: Ինչպէս նշում է հոռմէացի, արար եւ այլ քանապարհորդների ուղեցոյցներում, այդպիսի քանապարհները՝ նայած պայմաններին եւ տեղանքին, ձիերից եւ ուղտերից կազմուած էարաւանը կարող էր անցնել մէկ ցերեկ օրում

չափերը նշելով: Անտոն Սուլթանիէցին, մասնաւորապէս, գրում է «Կամբալըք եւ Կասայ երկու քաղաքները շատ մեծ են եւ շատ յայտնի: Նրանցից իւրաքանչիւրը երեսուն մղոն շրջափոք ունի եւ ամբողջովին շրջապատուած է պարիսպով»: Կասայի մասին նա նշում է, որ «այնտեղ աւելի շատ բնակչութիւն կայ, քանի որ սա շատ առեւտրական քաղաք է, այս քաղաքն առեւտուր անելու են գալիս երկրի բոլոր վաճառականները, եւ այն շատ առատ է ամէն տեսակի ապրանքներով»:

Անտոն Սուլթանիէցու հաղորդումներից կարելի է, ճիշդ է ոչ այնքան ընդարձակ, պատկերացում ստանալ Չինաստանի կեանքի մասին մոնղոլների օրօք: Ըստ նրա նկարագրումների, Չինաստանի պետական կառուցուածքի կենտրոնական դէմքը մոնղոլ մեծ խանն էր: Անտոն Սուլթանիէցին նրա մասին ասում է, որ «մեծ եւ շատ հզօր տիրակալ է աշխարհի բոլոր թագաւորների եւ տիրակալների թւում»: Այդ եզրակացութեան է բերում, մասնաւորապէս, միապետի<sup>32</sup> յայտնուելու արարողութեան նկարագրութիւնը. «Վերոյիշեալ կայսրը յայտնուած է իր ժողովուրդին՝ զարդարուած ոսկեգօծ եւ արծաթագօծ ծիրանիով եւ թանկագին քարերով, այդ ժամանակ ամբողջ ժողովուրդը նրա առջեւ ծնկի է գալիս, պաշտում նրան եւ ասում: Ահա այստեղ մեր աստուածն է երկրի վրայ, որը ողորմածաբար մեզ տալիս է լիութիւն եւ մեծ հարստութիւն եւ որը մեզ պարգեւում է խաղաղութիւն եւ արդարադատութիւն»: Այս արարողութիւնը, ըստ Անտոն Սուլթանիէցու, տեղի է ունենում «տարին մի անգամ՝ առաջին լուսնի առաջին օրը, որը տարուայ առաջին օրն է» այսինքն լուսնային օրացոյցի կարգով:

Հենթիշխան կառավարիչներից կայսրը ստանում էր նուէրներ, «կենդանի ընծառիւծներ, ուղտեր, կերբազէներ»<sup>33</sup> եւ շատ մեծ առատութեամբ այլեւայլ թանկարժէք զարդեր... քանի որ նրանք նրան ընդունում են որպէս իրենց միապետ եւ տիրակալ»:

Մոնղոլ մեծ խաների անսահմանափակ իշխանութիւնը, ինչպէս երեւում է Անտոն Սուլթանիէցու աշխատութիւնից, տարածուած էր նաեւ ժամանակի չինական հասարակութեան հոգեւոր կեանքի վրայ: Նրան էր ենթարկուած նաեւ մեծ տոնցիուսը՝<sup>34</sup> երկրի գերագոյն հոգեւոր դէմքը: Սակայն Չինաստանում, այնուամենայնիւ գոյութիւն է ունեցել աշխարհիկ եւ հոգեւոր իշխանութեան որոշակի բաժանում: Դա են հաստատում Անտոն Սուլթանիէցու

32. Այդ ժամանակ Չինաստանի եւ ամբողջ Մոնղոլական կայսրութեան տիրակալը Թոգայմուրն էր՝ Շույն-դի չինական անունով

33. Ընծառիւծները, աւելի ճիշդ ընտելացուած յովազաները միջին դարերում բարձր էին գնահատուում: Արագաւազ այդ գազանները յատկապէս գնահատուի էին որսի, մասնաւորապէս այծֆաղների որսի ժամանակ: Բերում էին Հնդկաստանից, Աֆղանիստանից, Միջին Ասիայից, Իրանից, Սիրիայից եւ այլ երկրներից: Տիրբթի, Չինաստանի հիւսիս-արեւմտեան շրջաններից առաքուում էին ուղտեր: Կերբազէները՝ Տիրբթից, Մոնղոլիայից, Քորէայից, Միջին Ասիայից եւ այլ վայրերից (Տիւ Յ. Շեֆեր. Золотые персики Самарканда. Перевод с английского. Москва, 1981, стр. 18 (Ed. Shafer. The Golden Peaches of Samarland. Berkley, Los Angeles, 1963)

34. Այդ տիտղոսը ծագում է բոլիւ կամ դոլիւ՝ դատաւոր բառից



գրառումներում եղած տեղեկություններն այն մասին, որ «...բարձրագոյն եպիկոպոսը, ինչպէս մեզ մօտ պապն է... տիրակալը նրան դասում է միւսներից բարձր: Երբ նրանք ձիավարում են միասին, կայսրը նրան ձիավարել է տալիս ուղիղ իր կողքին... նա իշխանութիւն ունի յիշեալ ողջ թագաւորութեան եւ իր հաւատի կրօնաւորների վրայ»:

Ինքը հոգեւորական լինելով, Անտոն Սուլթանիէցին բաւականին էական մանրամասներ է հաղորդում չինացիների՝ ժամանակին եւ ներկայումս երկրում առաւել տարածուած կրօնի՝ բուդդայականութեան<sup>35</sup> մասին, նկարագրում է այդ կրօնի հետ կապուած որոշ սովորութիւններ: Նա մասնաւորապէս գրում է. «Նրանք կուսպաշտ են եւ պաշտում են մի շարք կուռքերի: Բոլոր կուռքերից վեր նրանք դասում են չորս աստուածներ: Նրանք ասում են, որ կայ մի աւելի մեծ աստուած, որը վեր է բոլոր մեծ եւ փոքր աստուածներից»: Յայտնի է որ «Չորս աստուածներ» բուդդայականութեան մէջ «չորս սուրբ ճշմարտութիւնների» մարմնաւորումներն են, որոնցից գլխաւորը «փրկութեան» կամ «ազատութեան» գաղափարն է: Ի տարբերութիւն քրիստոնէութեան եւ իսլամի, բուդդայականութեան մէջ չկայ արարիչ-աստծոյ եւ փրկիչի գաղափարը: «Աւելի մեծ աստուածը»՝ Բուդդան է: Որպէս բարձրագոյն էակ, այդ աստուածը համեմատում է Նիրվանայի՝ կատարեալ հանգստութեան երանելի վիճակի հասած մարդկանց հետ:

Անտոն Սուլթանիէցին նկարագրում է բուդդայական ծէսերից մէկը՝ հանգուցեալների թաղման ծէսը. «Եւ երբ նա (մարդը - Հ.Մ.) մահանում է բարեկամները եւ մտերիմները նրան դնում են թղթէ դազաղի մէջ... հանգուցեալի հետ զմուռս եւ խունկ են դնում եւ յետոյ դնում են սայլի վրայ, եւ նրա տոհմակիցները պարաններով քաշում են այդ սայլը դէպի դրա համար յատկացուած մի յատուկ վայր, եւ այնտեղ վառում են դիակը դազաղի եւ սայլի հետ միասին...»: Այդ մասին տեղեկութիւններ են տալիս նաեւ 13-14-րդ դդ. Չինաստան եւ Հնդկաստան այցելած այլ հեղինակներ: Անտոն Սուլթանիէցու բերած մանրամասները զգալի լրացնում էին նրանց տեղեկութիւնները:

Ուշագրաւ է Անտոն Սուլթանիէցու տեղեկութիւնները ժամանակի մոնղոլական կայսրութեան փոխադրամիջոցի համակարգի մասին: Իր գրառումների մէջ կան այսպիսի տողեր. «Իր թագաւորութեան մէջ տարբեր տեղերում նա (կայսրը - Հ.Մ.) ունի նաեւ տներ,<sup>36</sup> որտեղ մնում են ձիաւոր եւ հետիոտն սուրհանդակներ: Նամակատարներն ունեն կրծքին կամ փոկից

35. Ծագած լինելով մ.թ.ա. 6-5 դդ. Հնդկաստանում բուդդայականութիւնը մ.թ. 1 դ. թափանցեց Չինաստան: Չինական բուդդայականութիւնը երեք միլիոնի, մանդալայական (կամ հանցի) միլիոն յարում են չինացիները, տիրեթական (լամայականութիւն) եւ բալի, որը դաւանում են երկրի մի քանի էթնիկական խմբեր: Բուդդայականութիւնը դառականութեան հետ մէկտեղ Չինաստանում տարածուած կրօններից մէկն է  
36. Կայարան - փոստատարներ (թիւրք. «եամը» այստեղից էլ ռուս. «եամըշիկ» բառը) էին ստեղծուած ինչպէս բուն Չինաստանում, այնպէս էլ մոնղոլական կայսրութեան բոլոր տարածքներում

կախած զանգակներ, այնպէս, որ երբ ունէ սուրհանդակ գալիս է՝ նամակներ բերելով կայսրից եւ մօտենում է այդ տներից որեւէ մէկին, նա հնչեցնում է զանգակը: Եւ այդ ձայնի վրայ նրան է հաւասարում մի այլ սուրհանդակ եւ վերցնում է նամակները եւ տանում առաջ՝ մինչեւ մի այլ տուն: Եւ նոյն ձեւով միւսները, որոնք անդադար ընթանում են օր ու գիշեր այնքան ժամանակ, մինչեւ նամակները կը հասնեն այնտեղ, ուր ուղարկուած են: Եւ այսպէս, կայսրը տասնհինգ օրուայ ընթացքում լուրեր է ստանում մի երկրից, որ նոյնքան հեռու է, որքան երեք ամսուայ ճանապարհը»:<sup>37</sup>

Անդրադառնալով երկրի առեւտրի պայմաններին, Անտոն Սուլթանիէցին նշում է, որ Չինաստանում «կարելի է գտնել աւելի բազմատեսակ ապրանքներ, քան Հռոմի եւ Փարիզի կողմերում: Նրանք (չինացիները - Հ.Մ.) ունեն մեծ քանակութեամբ ոսկի եւ արծաթ եւ թանկարժէք քարեր: Քանի որ երբ դրսի վաճառականներ են գալիս այնտեղ առեւտուր անելու, նրանք թողնում են ոսկիէ եւ արծաթէ եւ թանկագին քարերը եւ տանում են երկրի ապրանքները՝ համեմունքներ, մետաքսէ, ոսկէ դիպակներ, որոնց լայն շուկայ են նրանք այնտեղ գտնում: Վերոյիշեալ կայսրն ունի այնպիսի մեծ գանձեր, որ զարմանք է, եւ դրանք բոլորն ապահովում են թղթադրամը»:

Չինաստանը ուսումնասիրողներից շատերը կասկածի տակ են առնում մինչեւ Անտոն Սուլթանիէցին հանդէս եկած հեղինակների այն պնդումները, թէ թղթադրամները ապահովում էին մետաղով: Յայտնի է, որ Խուբիլայը, առաւել եւս նրա յաջորդ Թոքթամուշը ձգտելով երկրի բնակչութեանը սովորեցնել թղթադրամ ընդունելուն, նոյնիսկ արգելել են մետաղադրամների գործառնութիւնը: Որոշ ժամանակ թղթադրամները երաշխաւորում էին համապատասխան մետաղարժէքով: Բայց երբ դրանց պաշարները սպառուեցին թղթադրամները չըջանարում էին առանց որեւէ երաշխիքի: Սրա հետեւանքով դրանք չափազանց արժէզրկուեցին»:<sup>38</sup>

Անտոն Սուլթանիէցու գրառումներից չի կարելի պատկերացնել, թէ ծովում չինացիները կողմնորոշւում էին աստղերի միջոցով կամ թէ կողմնացոյց ունէին: Յայտնի է, որ ծովային առեւտրի ճանապարհները Չինաստանում ձգւում էին երկու ուղղութեամբ: Դրանցից մէկը Շանդուն թերակղզուց հասնում էր Քորէա, այնտեղից՝ Ճապոնիա: Միւսը Կանտոնից գնում էր Մալայեան արշիպելագ եւ Սումատրա, ապա Հնդկաստան, Պարսից ծոց:<sup>39</sup> Ինչպէս էին չինացիները նաւարկում ծովով: Անտոն Սուլթանիէցու այն արտայայտութիւնը, թէ «բոլորն իրենց տների (նաւերի, որտեղ ապրում էին - Հ.Մ.) մէջ գնում են երկրից-երկիր՝ առեւտուր անելու» մտածել է տալիս չինացիների նաւագնացութեան այդպիսի որեւէ միջոց ունենալու մասին,

37. Եռամեայ ցամաքային, այսինքն 3,5 հազար ֆիլոմեթրը, կարելի էր անցնել օրական 230-240 ֆմ. արագութեամբ: Այդ ապահովում էր անընդհատ շարժուելու եւ ձիերն ու սուրհանդակներին պարբերաբար հերթափոխելու միջոցով  
38. Хенниг Р. Неведомые земли. Т. III, стр. 146-147  
39. Ма Юн. «Шелковый путь» с Востока на запад. «Курьер Юнеско». июль 1984, стр. 25



այլապէս շատ անապահով պիտի լինէր յաճախ առանձին անձանց պատկանող խարխուղ նաւերով ճամբորդելը:

Անտոն Սուլթանիէցու գրառումներում չի խօսուում նաեւ Չինաստանում գրքի<sup>40</sup> տպագրութեան մասին: Վերջինիս վերաբերեալ անուղղակի վկայութիւն կարող է դիտուել նրա այն նշումը, թէ Չինաստանում թուղթն<sup>41</sup> օգտագործուում է փաստաթղթեր կազմելիս, մի կողմ թողած դրամանիշների թողարկումը: Երկու դէպքում էլ, հաւանաբար տպագրական միջոցների գործադրումն է առկայ: Ինչպէս յայտնի է, Չինաստանում տպագրական գործի, մասնաւորապէս գրքի տպագրութեան մասին, ուղղակի տեղեկութիւններ չի տալիս նաեւ Մարկո Պոլոն: Այս առթիւ ուսումնասիրողները միայն այն ենթադրութիւնն են անում, թէ Չինաստանում տպագրութեան համար գործածուող տախտակների մասին Մարկո Պոլոյի պատմածը նպաստել է գրքի տպագրութեան Եւրոպա մուտք գործելուն: Հարկ է աւելացնել, թէ Մարկո Պոլոյի ժամանակներում այդ փայտէ տախտակների վրայ տառատեսակները դեռեւս պատրաստուում էին թրճուած կաւից: Սկսած 14-րդ դ. այսինքն Օղորիկո Պորդենոնացու եւ Անտոն Սուլթանիէցու օրօք, դրանք արդէն պրոնզից էին ձուլուում:

Ինչպէս յայտնի է, աշխարհում առաջինը Չինաստանում են պատրաստուել թղթադրամներ:<sup>42</sup> Այս տեսակէտից չինական թղթադրամների գոյութեան մասին Անտոն Սուլթանիէցու հաղորդածը Եւրոպայում նորութիւն չէր: Այդ երկրում նրանց գոյութեան մասին ժամանակին տեղեկացնում էին Գելեոմ Ռուբրուկը, Մարկո Պոլոն, Օղորիկո Պորդենոնացին, ինչպէս նաեւ արաբ ճանապարհորդ Իբն Բատտան: Սակայն Անտոն Սուլթանիէցին որոշ մանրամասներ է բերում Չինաստանում դրամաշրջանառութեան կարգի մասին: Նա մասնաւորապէս նշում է մաշուած թղթադրամները նորերով փոխանակելու կարգը. «Եւ երբ թղթադրամը չափազանց հին է եւ վնասուած, այսպէս, որ հնարաւոր չէ ինչպէս հարկն է արժէքն անուանել կամ ճանաչել, այն տանում են թագաւորի դրամատների մօտ՝ դրա համար յատկացուած թագաւորական սենեակը, եւ եթէ դրամի նշանը կամ թագաւորի անունը երեւում են նրա վրայ, թագաւորի դրամատները հնի փոխարէն տալիս են նորը, ամէն հարիւրի համար երեքով պակաս՝ նորացման համար»: Ուրիշ խօսքով, դրամատունը փոխանակման համար վերցնում էր երեք տոկոս: Հաւանաբար այդ պայմանը

40. «Սուտրա Պրաջնա» աշխարհում ամենաինքն գիրքը, մ.թ. 868 թ. ստեղծել է չին տպագրիչ Վան Զգնն: Այն յայտնաբերուել է 1907 թ. Հիւսիս-Արեւմտեան Չինաստանի Դունխուան քաղաքի գաղտնաբերում: («Курьер Юнеско», январь 1972, стр. 20)

41. Թուղթը Չինաստանում յայտնագործուել է մ.թ.ա. 2-րդ դարում: Թղթի հնագոյնի պատահիկ է գտնուել վերջերս Շենսի նահանգի Բացաո վայրում եզած դամբարանում: Աւելի ուշ մ.թ.ա. 105 թ. բղթի պատրաստման Ցայ Լուի մշակած տեխնոլոգիան առաջընթաց քայլ էր տուել քնագաւառում («Курьер Юнеско» декабрь 1972, стр. 6)

42. Չինացի գիտնականների կարծիքով, բղթադրամներ Չինաստանում պաշտօնապէս շրջանառութեան մէջ են դրուել մօտ 650 թ.: Դրանք անուանում էին «թուղթ փողեր» («Ֆէյ ցեան»): 11-րդ դ. եւ յետագայ ժամանակաշրջանում, յատկապէս Խուիլայ մեծ խանի օրօք, դրանք աւելի լայն տարածում ստացան

խանական գանձարանի հարստացման աղբիւրներից մէկն է եղել:

Ուշագրաւ է, որ չինացիները որպէս դրամանիշ էին օգտագործում նաեւ ոսկեզօծ կլորակները: Դրանք սովորաբար ի զոհարեւումն հանգուցեալ նախնեաց հոգիների այրում էին: Մարկո Պոլոն հաղորդում է, որ դրամապատկերները ունեցել են խորհրդանշանական իմաստ: Այդ մասին հեռաւոր ակնարկ կայ նաեւ Անտոն Սուլթանիէցու հանգուցեալների թաղման ծէսի նկարագրութեան մէջ. հանգուցեալի դագաղը, ըստ նրան, զարդարուած էր «ոսկով եւ արծաթով»:

Բերուած նկարագրութիւններում առաւել ուշագրաւ է թղթադրամների վրայ, կենտրոնում դրոշմուած, պանքատոմսի արժէքը ցոյց տուող «կարմիր նշանը» եւ այն բոլորող եւ տիրակալի անունը ցուցող «սեւ տաւերը» եւ այլն: Ընդհանուր գծերով դրանք յիշեցնում են այժմեան դրամական միաւորների վրայի նշանակումները: Սակայն ուշագրաւ էր Անտոն Սուլթանիէցու նկարագրութեան մէջ եղած մի մանրամասն. այն է, որ Չինաստանում նրա գտնուելու տարիներին, այսինքն 14-րդ դ. 30-ական թուականներին, թղթադրամները, առաջին անգամ լինելով, թողարկուում էին երկու՝ կարմիր եւ սեւ գոյնով: Մանրամասն այս կարեւորում է այն առումով, որ պատմական վաւերագրերի վկայութեամբ եւս այդ տարիներին Չինաստանում գործնական քայլ է միայն արւում գունաւոր տպագրութեան ստեղծման ուղղութեամբ: Ինքնին կարեւոր այլ յայտնագործութիւնը չինական «արհեստներից ու արուեստներից» մէկը դարձաւ: Յայտնի է, որ առաջին երկգոյն գիրքը Չինաստանում տպագրուել է 1340 թ.:

Պէտք է ենթադրել, որ Չինաստանի երկգոյն թղթադրամի տպագրութեան գործառնիւթի մասին Անտոն Սուլթանիէցու հաղորդումը կարող էր նպաստել Եւրոպայում գունաւոր տպագրութեան զարգացման:

Այս ենթադրութիւնների հիմնաւոր լինելն են հաստատում Անտոն Սուլթանիէցու մասին կողմնակի աղբիւրներից քաղած տեղեկութիւնները: Դրանցից պարզում է, որ նա 16-17-րդ դդ. արեւմտաեւրոպական գրականութեան մէջ Անտոն-հայ անունով յայտնի է եղել որպէս Չինաստան ճանապարհորդած անձնաւորութիւն եւ այնտեղից Եւրոպա բերող չինական տպագրութեան զարգացիչը: Այդ մասին, մասնաւորապէս, պատմում է Կլոդ Դիւրէ Բուրբոնուայի «Աշխարհի լեզուների պատմութեան գանձերը» գրքում, որը հրատարակուել է 1613 թ. հաւանաբար Փարիզում:<sup>43</sup> Կլոդ Դիւրէն իր աշխատութեան մէջ այլ ժողովուրդների այբուբենի կողքին գետեղել է հայոց այբուբենը, որը նա ընդօրինակել է 15-րդ դ. 70-ական թուականների Իրանում կենտրոնիկ դեսպան Իոսաֆաթ Բարբարոյի ժողովածուներից: 16-րդ դ. արեւմտաեւրոպայի հեղինակներ Գիլեոմ Պոստելաի (Postellus) եւ Ամվրոսիուս Թեզէոսի (Theseus) հայերէնի քերականութեան եւ հայ գրքի տպագրութեան պատմութեան շարադրանքին անդրադարձած աշխատութիւնների յղումներ

43. Իշխանեան Ռ. Հայ գրքի պատմութիւն, հ. 1, Երեւան, 1977 թ. էջ 389: Գիլյոմ Պոստելաի Linguarum (Փարիզ, 1538) եւ Ամվրոսիուս Թեզէոսի introductio (Բավիա, 1539) գրքերը իրենց տեսակի մէջ առաջինն էին



կան: Այդ յղումներում յիշատակում է նաև «Վենետիկցի» Անտոն-Հայր- (Haythou Armenian)\*, որը, ըստ գրքի հեղինակի, նրանցից մէկն է, ով Եւրոպա բերեց «գրքատպութեան» չինական գաղտնիքը:

Անտոն Սուլթանիէցու աշխատութեան մէջ տեղ է գտել եւրոպացիներին, եւ ոչ միայն նրանց, անյայտ բոյսերի, պտուղների, մթերքների, ինչպէս նաև գործուածքների եւ ապրանքների նկարագրութիւնը: Նրա խօսքերով, Չինաստանում «չատ առատ են ցորենը, բրինձը, գարին եւ այլ հացահատիկներ... նրանք (չինացիները- Հ.Մ.) բրինձի բերքահաւաք են անում տարին երկու անգամ... ունեն այնքան մեծ քանակութեամբ շաքար, որ գարմանք է...» Անտոն Սուլթանիէցին ապա նկարագրում է երկրի բոյսերի տեսակները, ընդկեղեզը «ծառեր, որոնց կեղեւից դուրս է գալիս սպիտակ կաթնաման հեղուկ՝ քաղցր եւ համեղ... երբ այդ ծառերը կտրում են որեւէ տեղից՝ լինի դա ճիւղերից կամ այլ տեղից, նրանց կտրուածքից առատորէն դուրս է գալիս մի տեսակ հիւթ, որն ունի գինու գոյն եւ համ», քորէական սոճին, «այլ ծառեր էլ կան, որոնք տալիս են կաղինի կամ ընկոյզի նման պտուղներ: Երբ այդ պտուղը հասունանում է, երկրի բնակիչներն այն քաղում են, եւ աղում ինչպէս հացահատիկը՝ ցորենի նման, դրանցից պատրաստում են հաց, խմոր եւ այլ ուտելիքներ...»:

Պատմելով չինացիների ապրելակերպի մասին, Անտոն Սուլթանիէցին անդրադառնում է չինական մետաքսին:<sup>44</sup> Նա գրում է, որ «մետաքսի մեծ առատութեան, ինչպէս եւ այն պատճառով, որ նրանք վուշ չունեն, բոլորն ունեն մետաքսէ շապիկներ, եւ նրանց հագուստները կամոկայից<sup>45</sup> են եւ այլ հարուստ դիպակներից<sup>46</sup> եւ գարդարուած են ոսկով, արծաթով ու թանկարժէք քարերով»: Դիպակը համեմունքների, մետաքսի հետ միասին 13-14-րդ դդ. Չինաստանից Եւրոպա արտահանուող գլխաւոր ապրանքներից մէկն էր:

Իրրեւ հոգեւորական, Անտոն Սուլթանիէցին մեծ տեղ է յատկացնում Ֆրանցիսկեանների՝ «կրտսեր եղբայրների» (մինորիտներ) գործունէութեանը: Նրա պատմածից իմացում է, որ Անտոն Սուլթանիէցին Չինաստանում Հռոմի պապի պատուիրակ (լեգատ) արքեպիսկոպոս Ջովաննի Մոնտեկորվինոյին ողջ շտեմաւ: Նա տալիս է Ջովաննի Մոնտեկորվինոյի կեանքի վերջին

\* Պետք է նշել, որ որոշ պատմաբանների աշխատութիւններում Haythou բառը շփոթում է Հեթում պատմիչի անուան հետ: Haythou բառը նշանակում է Հայ, Հայկազն, Հայկազուն, մի խօսքով «Հայ», «Armenian» ինքնանունն է:

44. 1968 թ. Զծեցցեան նահանգի Ուսիմա շրջանի Մեանշանեան բնակավայրում հնագէտները յայտնաբերել են մետաքսէ գործուածքի պատուիրակներ, որոնք մինչեւ այժմ աշխարհում գտնուածներից ամենահինն են: Դրանք 2750 տարուայ վաղեմութիւն ունեն (100 տարի աւելի կամ պակաս) («Курьор Юнеско», июль 1984, стр. 22):

45. Կամկա (Կամչա)-մետաքսէ գործուածքի տեսակ: Այն արդիւնագործում էր հումքի գանազան տեսակներից՝ չինական եղինջի, կանաչի, պանանի, հնդկեղեզի եւ այլ մշակաբոյսերի ցողունը: Ելքային նիւթը մետաքսն էր՝ հում-մետաքսը: Կամչան, ինչպէս նաեւ չեսուչան, ցանցկէն կտորը, գազը եւ այլ գործուածքներ Չինաստանում պատրաստում էին հնուց ի վեր:

46. Դիպակ (փարչա) հիւսում էր մետաքսեային փաթարուած ոսկեգոյն փայլաբերից: Օգտագործում էր նաեւ արծաթագոյն փայլաբերքը:

որերի մասին որոշ տեղեկութիւններ: Այդ տեղեկութիւնների մէկ տեղ Անտոն Սուլթանիէցին պատմում է տեղի նեստորականների մասին, մասնաւորապէս նրան հակակաթոլիկ գործունէութեան մասին:

Ի միջիայլոց, Ջովաննի Մոնտեկորվինոյի, թէեւ ճշտուած մահուան տարեթոււմ մօտաւորապէս պարզում է Անտոն Սուլթանիէցիու Չինաստան կատարած ճանապարհորդութեան ժամանակը: Ըստ գիտնականների տուեալների, Ջովաննի Մոնտեկորվինոն մահացել է կամ 1328 թ. կամ մի քանի տարի ուշ: Քանի որ Անտոն Սուլթանիէցին Ջովաննի Մոնտեկորվինոյին ողջ չի տեսել, ապա պէտք է ենթադրել, որ նա Չինաստան է ժամանել մօտաւորապէս 30-ական թուականների սկզբին:

Անտոն Սուլթանիցու գրառումները որոշ չափով լրացնում են Մարկո Պոլոյի գիրքը եւ Օդորիկո Պորզենոնացու պատմւմը, ընդլայնում Չինաստանի մասին առկայ գիտելիքների շրջանակը, հարստացնում նրա «արհեստների ու արուեստների» մասին պատկերացումները: Հենց դրանով կարելի է բացատրել այն փաստը, որ Անտոն Սուլթանիէցու աշխատութիւնը չկորաւ, նա պահպանուեց Եւրոպայի թանգարաններում ու գրադարաններում:

Պէտք է նշել, որ Անտոն Սուլթանիէցու աշխատութիւնը հայ հեղինակների առաջին տպագիր հրատարակումներից մէկն է: Այն լոյս է տեսել սկսած 1501 թ. գրատողութեան մէջ մտցուած նոր գրքաձեւի ժողովածուով: Այս տեսակէտից Անտոն Սուլթանիէցու գիրքը անկասկած ուշագրաւ է հայ գրքի հրատարակութեան պատմութեան առումով:<sup>47</sup>

1830 թ. Անտոն Սուլթանիէցու աշխատութիւնը «Գիրք Մեծ Խանի մասին» վերնագրով հրատարակուեց «Journal asiatique» ամսագրում:<sup>48</sup> Նիւթը վերցուած էր ազգային գրադարանում պահպանուող «Աշխարհքի հրաշալիքները»<sup>49</sup> վերտառութեամբ ձեռագրից: Յօդուածի նախաբանում հեղինակը՝ Մ. Ժաքէն, նշում է, որ այդ գիրքը պատկանում է «Մարկո Պոլոյից յետոյ» ստեղծուած պատմական վաւերագրերի թուին: Դրանք ժողովուած են եղել Յովհան 22 պապի կարգադրութեամբ եւ ընդգրկում են միսիոներների, վենետիկցի եւ ճենովացի վաճառականների ճանապարհորդութիւնների նկարագրութիւններ: Ինչպէս այնուհետեւ նշում է Մ. Ժաքէն, ի տարբերութիւն Մարկո Պոլոյի, Մանդեւիլի, Հայտոնի (Հեթում Պատմիչ) եւ այլոց ուղեգրութիւնների, «Մեծ Խանի մասին» գրքում «Յովհան երէցի» առասպելի նման յօրինուածքներ չկան: Այն «կոմպենդիում» է, ճանապարհորդութեան նկարագրութեան կրճատ տարբերակ: Մի ուրիշ հեղինակ՝ Հ. Բաքերը «Մեծ Խանի մասին» գրքին անդրադառնալով, կարծիքն է յայտնում, որ այն Մարկո Պոլոյի եւ Հեթում պատմիչի երկերի

47. Հայերէն առաջին գիրքը «Ուրբաքագիրքը» լոյս է տեսել 1512 թ. Վենետիկում, հայ առաջին տպագրիչ Յակոբ Մեղապարտի տպարանում:

48. Jacquet M. de Livre du Grand Caan, extrait d'un manuscrit de la Bibliotheque de Roi. "Journal asiatique", Ser. 2, t. VI, Paris, 1830

49. Նկատի ունի «Ջարմանայի պատմութիւն հաճելի ու հետաքրքրական՝ Մեծ Խան կոչուած Քաթարստանի մեծ կայսեր՝ քաթարների տիրակալի մասին» ուր գետնդուած են Անտոն Սուլթանիցու գրառումները «Ջարմանայի պատմութիւն Մեծ Խանի մասին»:



հիման վրայ գրուած բանաբաղուծիւն է: Այս կարծիքն, անշուշտ, անհիմն է, քանի որ հակասում է Մ. Ժաքէի այն եզրակացութեանը, թէ «Մեծ Խանի մասին» գիրքը գրուած է «Մարկո Պոլոյից» յետոյ:

Յատկանշական է, որ ոչ Մ. Ժաքէն եւ ոչ էլ Լ. Բաքերը մի բառով իսկ չեն յիշատակում «Մեծ Խանի մասին» գրքի հեղինակին: Սա հիմք է տալիս եզրակացնել, որ նրանք այն դիտում են որպէս անանուն աշխատութիւն: Այսպէս, գրքի տեքստը միջին Փրանսերէնից ժամանակակից Փրանսերէնի թարգմանելիս, Մ. Ժաքէն «Saltansis» բառին հական նշանակութիւն չի տուել կամ թէ չի պարզել դրա իմաստը: Այսինքն, չի կռահել, որ այն տեքստում չյիշատակուած հեղինակի անուան նախածանցն է: Այդ պատճառով էլ, նա եզրակացրել է, թէ «Մեծ Խանի մասին» գիրքը կազմուած է Չինաստան այցելած ճանապարհորդներից ու վաճառականներից ստացած տեղեկութիւնների հիման վրայ:

Մ. Ժաքէին եւ Լ. Բաքերին կարելի է հասկանալ, այդ՝ գիտելիքների ոչ այնքան մատչելի ժամանակներում, Եւրոպայում մեծ չէր Փրանսերէնին եւ լատիներէնին՝ ժամանակի դիւանագիտութեան եւ գրականութեան լեզուին տիրապետողների, առաւել եւս քաջագիտակների թիւը: Յաճախ, ինչպէս ցոյց են տալիս պատմական վաւերագրերը, նրանք գիտէին Փրանսերէնի, իտալերէնի եւ կամ եւրոպական որեւէ այլ լեզուի որեւէ բարբառ: Այդ պատճառով էլ նրանց պատմաճանաչող գրի էին առնում լատիներէնի կամ Փրանսերէնի գիտակ հոգեւոր կամ աշխարհիկ անձինք: Յայտնի է, որ այդպէս են կազմուել Մարկո Պոլոյի, Օդորիկո Պորդենոնացու, ինչպէս նաեւ այլ միսիոներների եւ վաճառականների ուղեգրութիւնները:

Հաւանական է, որ «Մեծ Խանի մասին» գիրքը 13-14-րդ դդ. Արեւելքի երկրներ այցելած միսիոնարների եւ վաճառականների նիւթերից ժան լէ Լոն-գէի կազմած յայտնի ժողովածուի մի մասն է: Ըստ ուսումնասիրողների, ժողովածուն Մարկո Պոլոյի գրքից բացի ընդգրկում էր նաեւ «չատ այլ գրքեր»: Չի բացառում, որ «չատ այլ գրքերից» մէկը «Մեծ Խանի մասին» գիրքն է եղել:

Ինչպէս երեւում է, 13-14-րդ դդ. աշխարհագրական ուղեւորութիւններին առնչուող բոլոր կամ գրեթէ բոլոր հեղինակները յիշատակում են «Մեծ Խանի մասին» գիրքը՝ Անտոն Սուլթանիէցու աշխատութիւնը: Եւ նրանք բոլորը բացառութեամբ Կղեմես Գալանոսի, չեն յիշատակում, աւելի ճիշդ, լրիւ չեն յիշատակում հեղինակի անունը: Մինչդեռ Անտոն Սուլթանիէցու աշխատութեան առանց հեղինակի նշելու սոսկ «Սուլթանիէցի», մականուան բերումով յիշատակումը ստուերի մէջ էր թողնում 14-րդ դ. Չինաստանի պատմութեան այդ հետազոտողի անձը: Ստուերում, քանի որ «Սուլթանիէցի» մականունը Եւրոպայում շատերին ոչինչ չէր ասում:

Անտոն Սուլթանիէցու մասին տեղեկութիւններ չկան նաեւ հայկական աղբիւրներում: Հայոց առաքելական եկեղեցու նուիրակ պատմիչների եւ ժամանակագիրների երկերում նրա անուան բացակայութիւնը կարելի է բացատրել վաղուց 13-րդ դ. ի վեր, նրանց եւ հայ-կաթոլիկների միջեւ գոյութիւն ունեցած հակամարտութեամբ: Միաժամանակ հարկ է նշել, որ Ան-

տոն Սուլթանիէցու գիրքը լոյս աշխարհ եկաւ հայ-կաթոլիկների համար դժուար ժամանակներում՝ Կիլիկեան Հայաստանի գոյութեան վերջին տարիներին:

Այս եւ այլ, մեզ անյայտ պատճառներով է, որ «Մեծ Խանի մասին» գրքի հեղինակը եւ իր անունը մոռացութեան են մատնուել: Անտոն Սուլթանիէցու անունը «յայտնաբերելու» ուղղութեամբ Կղեմես Գալանոսի ջանքերը ցանկալի արդիւնքը չունեցան, քանի որ նա փոքրիշատէ հանգամանորէն չէր նկարագրել անձնական կեանքը եւ իբրեւ ճանապարհորդի գործունէութիւնը: Միակ բանը, որ նրան յաջողուել, Անտոն Սուլթանիէցու հայագի լինելը հաստատելը եւ նրա աշխատութեան վրայ ուսումնասիրողների ուշադրութեան գրաւելն էր:

Առ այսօր Անտոն Սուլթանիէցու անձի եւ Չինաստան նրա ճանապարհորդութեան վերաբերեալ տեղեկութիւնների միակ աղբիւրը իր գրառումներն են: Քանի որ դրանք նրա հաշուետուութեան լատիներէն բնագրի համառօտած տարբերակն են, ապա, իհարկէ, չեն կարող Չինաստանի մասին քիչ թէ շատ ամբողջական պատկերացում տուող վաւերագրերի դեր խաղալ: Այս առումով նրանք նշանակալից չափով զիջում են Օդորիկո Պորդենոնացու պատումին եւ, առաւել եւս, Մարկո Պոլոյի գրքին: Միեւնոյն ժամանակ, Կղեմես Գալանոսի, Նիկոլաէ Միլեսկուի եւ անուղղակի այլ աղբիւրների Անտոն Սուլթանիէցու մասին պարունակած տեղեկութիւնների համատեքստից կարելի է եզրակացնել, որ նրա գրառումներում չի արտացոլուած այն ամէնը, ինչ նա տեսել եւ լսել է Չինաստանում: Այս հանգամանքը մեզ մէկ անգամ եւս համոզում է, որ Անտոն Սուլթանիէցին կարող էր Սուլթանիէի արքեպիսկոպոսութեանը եւ ապա Ավինիոնի<sup>50</sup> պապական Կուրիային իր ճանապարհորդութեան մասին աւելի ընդարձակ հաշուետուութիւն ներկայացրած լինել:

Այս կապակցութեամբ հարկ է յիշել, որ Անտոն Սուլթանիէցու աշխատութեան լատիներէն բնագիրը դեռեւս չի յայտնաբերուել: Ի դէպ, Ֆ. Մակլերը վկայում է, որ Ավինիոնի պապական նստավայրում պահպանուած էին հայերին վերաբերող մեծաթիւ վաւերագրեր: Դրանց մի մասը ոչնչացուել է, միւսը՝ փոխադրուել Հռոմ:<sup>51</sup> Հնարաւոր է, որ Անտոն Սուլթանիէցու հաշուետուութեան լատիներէն բնագիրը վատիկանի պապական գրադարանի պահոցներում, մասնաւորապէս Յովհան 22 պապի ֆոնտում է գտնուում:

Անտոն Սուլթանիէցու մասին վաւերագրերը կարող են պահպանուել նաեւ Վենետիկ քաղաքի արխիւներում, որտեղ նա, ամենայն հաւանականութեամբ, բնակութիւն է հաստատել 14-րդ դ. կէսերից ի վեր: Անտոն Սուլթանիէցին, հաւանաբար տեղափոխուել է Վենետիկ դոմինիկեան միսիոներների հետ միասին, երբ Հուլաւեան պետութեան անկման հետեւանքով Իրանում Եւրոպայի երկրների հիւպատոսութիւնների, վաճառականների եւ դոմինիկեան ուխների

50. Անտոն Սուլթանիէցու ժամանակներում պապի նստավայրը գտնուում էր Ավինիոնում (1309-1377 թթ.): Այդ տարիները պատմութեան մէջ յայտնի են որպէս «պապերի ավինիոնիան գերիութիւն» շրջան  
51. Macler F. Notices des manuscrits arméniens ou relatifs aux arméniens vus dans quelques bibliothéques de la péninsule Ibérique et du sud-est de la France. Paris, 1923



միսիանների գործունեությունը ճշմարտացիորեն պարզելու համար Անտոն Սուլթանիէցու վենետիկ տեղափոխման մասին ստորագրված տեղեկություններ չկայ սակայն նրա, Եւրոպայում հաստատուելու փաստը անուղղակի վկայում է այն իրողությունը, որ 16-17-րդ դդ. հրատարակություններում նրա Անտոն հայ անունը մշտապես ուղեկցում է «վենետիկցի» մականունը: Իրանից մեկնելուց յետոյ Անտոն Սուլթանիէցու վենետիկում հաստատած լինելու հաւանականությունը մեծ է, քանի որ այդ ժամանակներում վենետիկում եւ Իտալիայի այլ քաղաքներում գոյություն ունէին հայկական համայնքներ:<sup>52</sup>

Հաւանական է, որ վենետիկում կամ Եւրոպայի այլ քաղաքներում Անտոն Սուլթանիէցին ստեղծել է իր միւս աշխատությունը՝ 1347 թ. գրուած «Ընդդէմ մահմեդականաց» խորագրով: Այդ երկը, ինչպէս վկայում են արեւմտաեւրոպական հեղինակները, եւրոպական երկրներում ճանաչողություն էր վայելում: Այն առաջին անգամ յիշատակող Կղեմես Գալանոսը առանց որեւէ մանրամասն բերելու սոսկ արձանագրում է աշխատութեան գոյութեան փաստը:<sup>53</sup>

\*\*\*

Այսպիսով, Անտոն Սուլթանիէցու աշխատությունը՝ «Մեծ Խանի մասին» գրառումները դարերով մնում էին անանուն: Նրա անունը յայտնուել է 13-րդ դ. վերջի 14-րդ դ. առաջին տասնամեակների այն ճանապարհորդների շարքում, որոնց անունները, ինչպէս իրաւամբ նկատում է Եւ. Սվետը. «անյայտնի պատճառներով միայն հարեւանցի, անցողակի են յիշատակուած աշխարհագրական յայտնագործությունների պատմաբանների աշխատություններում, իսկ այդ գործիչների երկերին տրուած յղումները թաղուած են տողատակային նշումների մանրատարերում»: <sup>54</sup> Վերջերս պատմաբանների ջանքերի շնորհիւ գիտական լայն շրջանակներին եւ ընթերցող հասարակայնութեանը յայտնի դարձան 13-14-րդ դդ. աշխարհագրական ճանապարհորդությունների դարաշրջանի մի շարք գործիչների անուններ: Ժամանակն է հրապարակայնացնել նաեւ Անտոն Սուլթանիէցու անունը եւս:

Նախ եւ առաջ պէտք է արժանին մատուցել Կղեմես Գալանոսին եւ Նիկողայ Միլեակու Սպաֆարին, որոնք մոռացութեան վիճից դուրս բերին Անտոն Սուլթանիէցու անունը:

52. Վենետիկի հայ համայնքը կազմակերպւորէն ձեւաորուել է 13 դ.: Այն ստեղծուել էր յարդիւնս ժամանակի Կիլիկիան Հայաստանի եւ Իտալական քաղաք-պետութիւնների միջեւ հաստատուած առեւտրական եւ մշակութային աշխոյժ կապերի: 1348 թ. յիշատակուում է Վենետիկում հայ եղբայրների սուրբ Յովհաննէս Մկրտիչի եկեղեցու գոյութիւնը

53. Կղեմես Գալանոս, Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյ ընդ Մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ. Ա. հատոր, Հռովմ, 1650, Fontana V.M. Monumenta Dominicana. Rome, 1675, p. 217; Jean Richard, la Pape et les missions d'orient au moyen age (XIII e-XVe siecles). Ecole Francaise de Rome. Palais Farnese, 1977, p. 182 (footprint 48)

54. Свет Я. После Марко Поло, стр. 3

Նիկողայ Միլեակու Սպաֆարին բոլոր հիմքերն ունէր այդքան բարձր կարեւորելու Անտոն Սուլթանիէցու անձն ու գործը: Բանն այն է, որ այդ ժամանակաշրջանում աշխարհագրական ճանապարհորդությունների պատմութեան մէջ միայն երեք հոգի՝ Մարկո Պոլոն, Օդորիկո Պորզենոնացին եւ Անտոն Սուլթանիէցին են գրաւոր նկարագրութիւն թողել Չինաստանում իրենց ճանապարհորդությունների մասին: Ինչպէս յայտնի է, Ջովաննի Մոնտեկոր-վինոն նամակներից բացի, որ գրել է 1305 եւ 1307 թուականներին, որեւէ յուշագրութիւն կամ այլ պատմողական նիւթեր չի ստեղծել այդ երկրում իր երկարամեայ գործունեութեան մասին: Չինաստանի վերաբերող փոքրիշատէ հական տեղեկություններ չկան նաեւ Անտոն Սուլթանիէցուց յետոյ, 14-րդ դ. 30-ական թուականների վերջին 40-ականների սկզբին Բենեդիկտ 12 պապի կողմից այդ երկիր ուղարկուած Ֆրանցիսկեան վանական Ջովաննի Մարինելլիի հաշուետուութեան մէջ:

Անտոն Սուլթանիէցու, ինչպէս նաեւ նրա նախորդների տեղեկությունները նորոյթ էին, նոյնիսկ գաղտնիքի համարում ունէին: Այդ նորոյթների եւ գաղտնիքների լոյսի ներքոյ էլ աւելի է կարեւորում դրանք հաւաքողների մատուցած ծառայությունը պատմագրութեանը, մասնաւորապէս համաշխարհային առեւտրա-տնտեսական եւ մշակութային կապերի պատմութեանը, այն մարդկանց ծառայութիւնը, որոնք կարողացան վեր հանել եւրոպական եւ չինական աշխարհները բաժանող վարագոյրը, նրանց միջեւ եղած սահմանները դարձնել փոխթափանցելի:

Անտոն Սուլթանիէցին իր շօշափելի ներդրումը ունի Չինաստանի ուսումնասիրութեան գործում: Նա արիասիրտ, քննախոյժ մտքը այն առաջադեմացներից մէկն է, որոնք նպաստեցին Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ նիւթական եւ մտաւոր արժէքների փոխանակմանը, ժամանակների եւ ժողովուրդների մերձեցմանը:




# ANTHON OF SULTANIYE — A JOURNEY TO CHINA HEMAYAK MARDIROSSIAN

## SUMMARY

The topic focuses on the journey of the Armenian Catholic Archbishop Anthon of Sultaniye (the capital of Persia in the reign of the Mongol Khan - Sultan Oljeytue) to China in the third decade of the XIVth century. On his return home, by order of Pope John XXII (1316-1334), Anthon of Sultaniye composed notes on China. In 1351 these notes were translated from Latin into French and in 1529 were printed in the collection "The History of Caan Cathai" (now deposited at the Bibliotheque Nationale).

Details of Anthon of Sultaniye and his work have been preserved in the books of Clement Galanius, the Italian philosopher and scholar on Armenian studies (the XVIIth century), and Nicolae Milesku Spafariy, the Romanian-Moldavian statesman, writer and traveller (from the XVIIth to the XVIIIth century).

Anthon of Sultaniye, together with Marco Polo and Odorico of Pordenone, was one of the three visitors to China between the XIIth and the XIVth century to have left their descriptions and notes on this country.



Faint, illegible text or markings at the bottom of the right page, possibly bleed-through or a secondary stamp.





*Cibus Jilumci clarus, tenuisque Canept  
 Mosco. • Invenit non tero artu heno.  
 D. 1714. hic ille est: quem quo sua pucula nocuit:  
 Gygis sic melius pucis ab ipse fuit est.*  
 J. H. B. H. H. H.

ԿՈՌՆԵՅ ԼԸ ԲՐԻՒՆԻ ԻՆՔՆԱԳԻՄԱՆԿԱՐԸ

**ԿՈՌՆԵՅ ԼԸ ԲՐԻՒՆԻ  
 «ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆԸ» ՈՐՊԷՍ ՀԱՅ  
 ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ  
 ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՂԲԻՐ**

Է. ԹԱՋԻՐԵԱՆ

Հոլանդացի նկարիչ Կոռնեյ լը Բրիւնը (1652-1726 թթ.)<sup>1</sup> 1677 եւ 1701-1708 թթ. երկու ուղեւորութիւն կատարեց Արեւելք: Առաջին ուղեւորութեան ընթացքում նա անցաւ Փոքր Ասիայով, Կիպրոսով, Սիրիայով, Պաղեստինով մինչեւ Եգիպտոս: Երկրորդ ուղեւորութեան երթուղին Մոսկովեան պետութեան տարածքով անցնում է Կովկասով Պարսկաստան, այնտեղից էլ Հնդկաստան: Մեզ առաւել հետաքրքրող նրա երկրորդ ուղեւորութեան երթուղին անցնում էր Հաագայից դէպի Արխանգելսկ, այնտեղից էլ Մոսկուա: 1703 թ. նա Պետրոս 1-ի հետ ժամանեց Վորոնէժ ծանօթանալու Դոնի նաւաշինական արդիւնաբերութեանը: Նորից վերադառնալով Մոսկուա նա այնուհետեւ Վոլգայով իջաւ հարաւ՝ Սարատով այնտեղից անցաւ Աստրախան-Շամախի-Նիզարադ-Թավրիզ-Արզերիլ-Սպահան երթուղով դէպի Հնդկաստան: Նա յետադարձ ճանապարհը եւս անցաւ նոյն երթուղով 1707-1708 թթ. եւ վերադարձաւ Ամստերդամ, ուր 1711 թ. հոլանդերէնով հրատարակեց իր ուղեգրութիւնը, զարդարուած իր կողմից արուած մօտ 300 գծանկարներով (գրաւիւրներով):<sup>2</sup>

Իր ողջ ճանապարհորդութիւնը Կոռնեյ լը Բրիւնը անցաւ մի քանի

1. Նրա մասին տե՛ս Մ.Ա. Полиевктов. Европейские путешественники XIII-XVIII вв. по Кавказу. Тифлис, 1935, с. 83-85.  
 2. Կոռնեյ լը Բրիւնի «Ուղեւորութիւնը» վերահրատարակուեց 1714 թ. 1718 թ. (Ամստերդամ) եւ 1725 թ. (Ռուսն, հինգ հատորով) այն երկու անգամ լոյս տեսաւ Փրանսիայում, 1820 եւ 1737 թթ.՝ անգլիերէնով: Շատ անլի ուշ՝ 1829-1830 թթ. եղաւ մաւր մասնակի ռուսերէն թարգմանութիւն: Մեմֆ օգտուել ենք հետեւեալ հրատարակութիւնից՝ "Voyages de Corneille Le Brune, par la Moscovie, CB եւ համապատասխան հատորը եւ էջը):



ջուղահայ վաճառականների ուղեկցութեամբ: Եթէ որոշ դէպքերում դրանով է պատճառաբանուած հայերի վերաբերեալ լը Բրիւիւնի տեղեկութիւնների առկայութիւնը, ապա հայ գաղթօջախների վերաբերեալ նրա հիմնական վկայութիւնների համար պարտական ենք առաջին հերթին հեղինակի դիտողականութեանը:

Լը Բրիւիւնը իր ուղեկից ջուղահայ վաճառականներից, որոնց լեզուն իր իսկ հաղորդմամբ, նա «հասկանում էր» (CB, III, 284), յակնէ յանուանէ յիշատակում է Հոլանդայից Նոր Զուղայ վերադարձող Յակոբ Դաւիդովին (Jacob Davildof) եւ Պետրոս Արխանգելին (Pierre Archangel):

Ուղեկիցներից առաջինը՝ Յակոբ Դաւիդովը (Яков Давыдов), յայտնի է Մոսկուայի ռուսական Մաքսատնային գրանցման մատեաններից, մի քանի անգամ 1691-1696 թթ. Նոր Զուղայից Աստրախանով-Վոլգայով-Մոսկուա, իսկ այնտեղից Շվեդիա-Հոլանդիա հում մետաքս փոխադրելիս:<sup>3</sup>

Լը Բրիւիւնի երկրորդ ուղեկիցին՝ Պետրոս Արխանգելին հակուած ենք նոյնացնելու Մոսկուայի Մաքսատնային գրանցման մատեաններից յայտնի մէկ ուրիշ ջուղահայ առեւտրականի՝ Առաքել Պետրովի (Аракел Петров կամ Ракеп Петров) հետ, որը եւս 1690-ական թթ. Շվեդիա («Свейский рубеж») եւ Հոլանդիա հում մետաքս արտահանող յայտնի վաճառականներից էր:<sup>2</sup> Անհաւանական չէ նաեւ այն, որ Պետրոս Արխանգելը կարող էր լինել մէկ այլ ջուղահայ վաճառական՝ Աւետիք Պետրովը, կամ Աւետիք Պետրոսովը:<sup>3</sup>

Լը Բրիւիւնին ուղեկցող այս ջուղահայ վաճառականները, փաստօրէն, օգտուելով ռուսական արքունիքի եւ Նոր Զուղայի առեւտրական ընկերութեան միջեւ 1667 թ. կնքուած (1673 թ. վերահաստատուած) պայմանագրից, որով նրանց Ռուսաստանի վրայով տարանցիկ առեւտրի արտօնութիւններ էր տրուած, հում մետաքսի հերթական քանակութիւնն էին տարել Հոլանդիա եւ Շվեդիա:

Լը Բրիւիւնը իրան էր մեկնում մի խմբի հետ, որը տասնամեակներ շարունակ օգտուելով Ռուսաստանի տարածքով անցնող Վոլգա-Կասպեան տարանցիկ երթուղուց, իւրացրել էր այդ ճանապարհի բոլոր դժուարութիւնները եւ ձեռք էր բերել այն յաղթահարելու որոշակի հմտութիւններ:<sup>6</sup>

3. Армяно-русские отношения в ХУІ веке. Сборник Документов под ред. В. Парсамяна. Т. I, Ереван, 1953, с. 209-210, 213, 215, 220. Հմմտ. Н.Г. Куканова. Очерки по истории русско-иранских торговых отношений в XVII- первой половине XIX века (по материалам русских архивов), Саранск, 1977 Գրքում գտնուած յաւելումը՝ «Հայ առեւտրականների այցելութիւնները ռուսական քաղաքները 1673-1697 թթ.» (էջ 87, 99):

4. Армяно-русские отношения, т. I, с. 213, 217, 221, 224.

5. Նոյն տեղում, էջ 237, 238, 240:

6. Բազմաթիւ դէպքեր են յայտնի, երբ եւրոպացի ճանապարհորդները դիմել են հայ վաճառականների միջնորդութեանը՝ իրենց գործերը կարգադրելու եւ ճանապարհային գանազան դժուարութիւններ յաղթահարելու համար: Յիշատակելի է, օրինակ, լը Բրիւիւնից մօտ 30 տարի առաջ Աստրախանից Մոսկուա ուղեւորուող կաթոլիկ հայր Ֆիլիպ Արիլի դէպքը, որին միայն հայ վաճառականների միջոցով է յաջողում ձեռք բերել ճանապարհը շարունակելու համար անհրաժեշտ համապատասխան անձնագրեր: (Sb'u Philippe Avril. Voyage en divers etats d'Europe et d'Asie. Paris. MDCXCII 1692), p. 114.

ճանապարհորդութեան ընթացքում լը Բրիւիւնը յաճախ օգտուելով հայ վաճառականների հեղինակութիւնից, լեզուների եւ ճանապարհների նրանց իմացութիւնից, անընդհատ շեշտում է իր յարգալից վերաբերմունքը նրանց նկատմամբ, վերջիններիս անուանելով «իմ հայերը» (CB, III, 284): Տպաւորիչ է յատկապէս լը Բրիւիւնի յուզմունքը եւ վիշտը, երբ Սարատովում հիւանդանում եւ երկու օրից մահանում է Պետրոս Արխանգելը: Նաեւ ողջ անձնակազմը մասնակցում է նրա յուղարկաւորութեանը: Պետրոս Արխանգելի դին Սարատովի բլուրներից մէկի վրայ հողին յանձնելու արարողութիւնը լը Բրիւիւնը հանգամանօրէն նկարագրում է «Հայկական թաղման ծէս» վերնագրի տակ (CB, III, 264-267):

1703 թ. Մայիսի 20-ին լը Բրիւիւնը ուղեկցող խմբի հետ միասին ժամանում է Աստրախան: Իր «Ուղեգրութեան» մէջ նա մանրամասն նկարագրում է քաղաքը, ամրոցը, պարիսպները, շուկաներն ու խանութները:

Եթէ տեղի հայկական համայնքի մասին 17-րդ դ. ճանապարհորդները (Ստրիւիս, Աւրիլ եւ այլն) յիշատակում էին անցողակի, ապա լը Բրիւիւնը անդրադառնում է հայկական թաղամասի տեղադրութեանը, հայերի թուին, նրանց խանութների ու առեւտրական տան գործունէութեանը: Նա խօսում է քաղաքային դարպասներից մէկի մասին «որ կոչում են Priestmiskinske կամ Nette, որը ամրոցի երեք դարպասներից մէկն էր եւ բացուում էր քաղաքի վրայ, շուկայի («Bazar») կամ Մեծ փողոցի («Bolsjaulists») դէմ դիմաց, ուր եւ գտնուում էին ռուսների եւ հայերի հիմնական կրպակները (CB, III, 288): Ըստ լը Բրիւիւնի, Աստրախանում 1703 թ. կային շուրջ քառասուն հայ ընտանիքներ, որոնք բնակուում էին հայկական թաղամասում, որի ծայրին էր գտնուում հայերի քարանսարան («Caravanserai»), որը մի ընդարձակ վայր էր՝ շրջափակուած մի քանի դռներ ունեցող քարաշէն պարսպով: Դռները պահպանուում էին պահակների կողմից: Ներսում էին գտնուում վաճառականների կրպակները, պահեստները, բնակելի կացարանները, ինչպէս նաեւ գլխաւոր շինութիւնը՝ երկյարկանի, երկար միջանցքներով: «Երթեւեկող հայ վաճառականները այստեղ սննեակներ են վարձում, կան նոյնիսկ այնպիսիք, որոնք այստեղ ապրում են եւ կրպակներ ունեն, ես եւս նրանց հետ մնացի»- հաղորդում է լը Բրիւիւնը (CB, III, 297): Խօսելով այն մասին, որ հայ վաճառականների հետ մրցակցութեան մէջ գտնուող հնդիկները, զգուշանալով հրդեհներից, կառուցել են տուել մի քարաշէն առեւտրական տուն, Բրիւիւնը աւելացնում է, որ «Հայերը եւս կառուցել էին տալիս նմանատիպ մի առեւտրական տուն, որի հիմքերն արդէն վեց ոտնաչափ բարձրացել էին» (CB, III, 297):

1706 թ. հայկական առեւտրատան մօտ կառուցուեց նաեւ մի քարաշէն եկեղեցի:<sup>7</sup>

7. Sb'u Н.В. Голикова. Очерки по истории городов России конца ХУІІ начала ХУІІІ вв., Москва, 1982, с. 14. Աստրախանի հայկական գաղութի հիմնադրման մասին մանրամասն տես Վ. Ա. Պաշտորեան. Աստրախանի հայկական գաղութի առաջացումը, - ՊԲՀ, 1983, 4, էջ 44-57:



Աստրախանից նաևով դուրս գալով Կասպից ծով, լը Բրիւիւնը իր խմբով 1703 թ. Յուլիսի 23-ին ափ է իջնում Նիզովայա կամ Նիզարադ («Nisavvacy») նաևահանգստում, ուր նրա ուշադրութիւնն են գրաւում զէպի Աստրախան միաժամանակ ուղեւորուող 6 նաւեր, «որոնց վրայ բազմաթիւ հայ վաճառականներ կային իրենց ապրանքներով» (CB, III, 476):

1703 թ. Օգոստոսին լը Բրիւիւնը ժամանում է Շամախի, ուր հայերը նորաբնակներ չէին եւ փոքրամասնութիւն չէին կազմում: Դեռեւս 15-րդ դ. աղբիւրները հաղորդում են, որ Շիրվանի կենտոնում՝ Շամախում բնակչութեան մեծամասնութիւնը հայեր են: Այսպէս, 1474 թ. այցելելով Շամախի, վենետիկեան դիւանագէտ Ջ. Բարբարոն հաղորդում է, որ Շամախին, որն ունէր չորսից հինգ հազար տուն, «գտնուում է Մեծ Հայքում եւ բնակիչները մեծ մասամբ հայեր են»: 8

1561 թուականին է վերաբերում անգլիացի Ա. Ջենկինսոնի վկայութիւնը, ըստ որի Շամախին «գլխաւորապէս բնակեցուած է հայերով»: 9

Շամախու հայերի, նրանց սովորութիւնների ու բարքերի մասին են պատմում Հոլշտինեան դեսպանութեան անդամներից Ադամ Օլեարիուսը (1637 թ.) Մանդելսոն, Յ. Ստրիւիսը (1671 թ.) եւ այլոք: Օլեարիուսի հաղորդմամբ նոյնիսկ տեղի խանի զօրքերը բաղկացած էին «մեծ մասամբ հայ քրիստոնեաներից»: 10

1686 թ. Շամախի այցելած Փրանսիացի Յիսուսեան քարոզիչ Ֆիլիպ Աւրիլը Շամախու մօտ 50-60-հազարանոց բնակչութեան մասին յայտնում է. «Բացի հայերի մեծ թուից, որ կարելի է հասցնել մօտ 30000-ի, կան նաեւ հնդիկներ, մոսկովիտներ, վրացիներ, յոյներ, թուրքեր, չերքեզներ եւ բազմաթիւ այլ ժողովուրդներ...»: 11

8. Յովհ. Յակոբեան, Ուղեգրութիւններ, Հ. Ա. (1253-1532), Երեւան, 1932, ք. էջ 199: Ուշագրաւ է, որ «Путешественники об Азербайджане» (составил Ямпольский З.), Баку, 1961, т. I, с. 74) գրքում Ջ. Բարբարոյի տեքստից այս հատուածը առանց որեւէ մեկնաբանման, դուրս է բողմուել:

9. Английские путешественники в Московском государстве в XVII в. Перевод с английского Ю.В. Готье, Ленинград, 1938, с. 205. Հմմտ. Յովհ. Յակոբեան, Ուղեգրութիւններ, Կ. Ա., 372:

«Путешественники об Азербайджане» ժողովածուի կազմողները համարելով այս հաղորդումը սխալ, միաժամանակ այն ծանօթագրել են հետեւեալ կերպ. «այսպիսի սխալի պատմական արմատները կարող են լինել այն փաստը, որ 10-րդ դ. արաբ հեղինակների մօտ յայտնի խալիֆաթի վարչական միաւորներից մէկը (Հայաստան) ընդգրկում էր նաեւ հայերով չբնակեցուած տարածքները: Շամախիում հայերի մէջ կարող էին դասուել հայացուած աղուանները եւ քաթ-Գրիգորեանները, որոնք մինչ այժմ բնակուում են Ատրպէյճանական ՍՍՀ Շամախու շրջանի Մադրասա գիւղում» (Նոյն տեղում, էջ 476, ծանօթ. 124): Հետաքրքիր է, որ այդպիսի եզրակացութիւնը ժողովածուի մէջ չի հիմնաւորուում ոչ մի փաստական նիւթով:

10. Олеарий А. Подробное описание путешествия голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 годах. Москва, 1870, с. 526. Այս հաղորդումը եւս դուրս է բողմուած, «Путешественники об Азербайджане» ժողովածուում:

11. Ph. Avril, op. cit., p. 84. Հետաքրքրական է, որ ատրպէյճանցի պատմաբան Ս. Աչուրբէյլի իր «Վարքիլի միսիոներները Ատրպէյճանում 17-րդ դ.» աշխատութեան մէջ («Средневековый Восток. История, культура, источниковедение», Москва, 1980, с. 25), անդրադառնալով Հայր Արիլի հաղորդմանը գրում է. «Հայր Արիլի հաղորդմամբ, Շամախիում, 17-րդ դ., բացի տեղաբնակ ատրպէյճանցիներից (?-է.թ.) եւ հայերից, համդիպում էին նաեւ հնդիկներ, ռուսներ, վրացիներ, յոյներ, բուրքեր, չերքեզներ եւ այլոք...»:

Եթէ սրան աւելացնենք նաեւ էնգելբերտ Կեմպֆերի տեղեկութիւնները քաղաքի հրէական թաղամասի մասին, ապա կարելի է համեմատաբար լիակատար պատկերացում ունենալ քաղաքի էթնիկական եւ դաւանական կազմի մասին: 12

Մէկ այլ կաթողիկ քարոզչի՝ Մոնիէի հաղորդմամբ, Շամախու շրջանում 18-րդ դարի սկզբին արդէն կային մօտ 60 հայաբնակ գիւղեր: 13

Ճիշդ նոյնանման հաղորդում էր անում Իսրայէլ Օրին, երբ 1701 թ. ոուսական իշխանութիւններին յայտնում էր, թէ Շամախու բնակիչները «աւելի շատ քրիստոնեաներ են, քան անհաւատներ եւ գաւառում էլ քսան վերստ տարածութեամբ մէկ անհաւատների գիւղ կայ եւ 10 քրիստոնեաների եւ այստեղից քրիստոնէական օգնութիւնն աւելի շատ է, քան անհաւատների թշնամանքը»: 14

Այսպիսին էր Շամախու էթնիկ պատկերը, երբ 1703 թ. Օգոստոսին լը Բրիւիւնը իր խմբով մտաւ քաղաք եւ անցնելով մաքսատունը, իր հայ ուղեկիցների հետ միասին իջեւանեց հայկական քարվանսարայում, ուր մի հայ վաճառական առատօրէն հիւրասիրեց նրանց (CB, III, 284):

Ուրիստ ուշագրաւ տեղեկութիւններ է հաղորդում լը Բրիւիւնը զէպի Շամախու շրջակայքում գտնուող Յեղիգումբէթ, կամ եօթ աշտարակ կոչուող սրբավայրը կատարած իր այցելութիւնից: «Մենք անցանք մի քանի գիւղերով՝ բնակեցուած հիմնականում հայերով եւ ժամը իննի մօտերը հասանք Քերքենջ («Kirkins») 15՝ բերդի բարձունքի վրայ գտնուող մի գիւղ, որը ծածկուած է խաղողատունկերով: Այստեղ քարաչէն մի վանք կայ՝ սրբի գերեզմանով, որին կոչում էին Սահակ վարդապետ («Sahach Viartapeet»): Տեղացիներն ասում են, որ նա թուրք մահմետական ծագում ունի եւ հաւատափոխուելով այնքան է կապուել իրենց դաւանանքին, որ դարձել է իրենց սրբերից մէկը: Ապա, դժբախտութիւն է ունեցել թուրք մահմետականների ձեռքն ընկնելու, որոնք նրան այրեցին Շամախիում. Այստեղ տօն օրերին մոմ են վառում եւ ճաշում գերեզմանի կողքին: Քանի որ ես այստեղ էի Կիրակի օրով, այնտեղ շատ մարդ գտայ եւ ինձ շատ քաղաքավարի ձեւով ճաշի հրաւիրեցին: ...Այս գիւղը շուրջ 200 ընտանիք ունի, վանքի կենտրոնում մի փոքրիկ մատուռ կայ, ուր գտնուում է այդ գերեզմանը եւ այն առանձնանում է մի փոքրիկ պատով, որի կողքին մի մեծ

12. Die Reisetagebücher Engelbert Kaempfers. Wiesbaden, 1968, S. 45  
13. Lettres édifiantes et curieuses, écrites des missions étrangères. Nouvelle édition. Mémâres le Levant. T. III, Paris, 1780, p. 14.  
14. Армяно-русские отношения в первой трети XVIII в. Сборник Документов. Под ред. А. Иоаннисяна. Е. П. часть I. Ереван, 1964, с. 209.  
15. Քերքենջ գիւղի սուրբ Սահակ վարդապետի ուխտատեղիի մասին տե՛ս Սարգիս Ջալալեանց. Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան. Մասն Բ, Տփլիս, 1858, էջ 401: Մ. Սմբատեանց. Նկարագիր սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց... որք ի Շամախույ բեմի. Տփլիս, 1896, էջ 162-168, Յ. Քիւրտեան. Շահեկան վիճակագրական ուղեգրութիւն մը Շամախիի հայոց մասին, - «Հասկ», 1960, քիւ 11-12, էջ 448:



ընկուզենի է աճում, որի շուքին էլ մարդիկ նստում են: Այս նոյն տեղում առաջներում փոքրիկ մզկիթ է եղել, որը 35 տարի առաջ փլուել է երկրաշարժի պատճառով, որի տեղում էլ կառուցել են այս վանքը» (CB, III, 502-503):

1703 թ. Հոկտեմբերի 6-ին լը Բրիւիւնը իր խմբով Շամախուց ժամանում է Արդերիլից կէս լիօ հիւսիս գտնուող Քելգերան գիւղը («Kelgeran»), որն ըստ լը Բրիւիւնի մեծ մասամբ հայերով էր բնակեցուած: Գիւղն ունէր երկու «շատ խաւար եկեղեցի» (CB, IV, 31): Լը Բրիւիւնը այստեղ հաճոյքով դրամական օգնութիւն է ցոյց տալիս հանգանակութիւն հաւաքող տեղի հայ քահանաներին՝ Արդերիլի մօտ գտնուող գիւղերից մէկում Ս. Յովհաննէս անունով եկեղեցի կառուցելու համար (CB, IV, 34): Համաձայն լը Բրիւիւնի, այս գիւղի բնակիչները շատ հպարտ ու վրէժխնդիր բնաւորութիւն ունեն եւ տեղի կառավարիչն արդէն քառասուն տարի է չի կարողանում նրանց հախից գալ: Ստիպուած է եղել նոյնիսկ նրանց մի մասին Սպահան արտաքսել:

Քելգերանում Սեֆեան շահերի դամբարանները այցելելուց յետոյ, լը Բրիւիւնը իր խմբով շտապում է Նոր Զուղայ՝ ներկայ գտնուելու ջրօրհնէքի արարողութեանը:

Հաղորդելով Շահ Աբասի կողմից Նոր Զուղայի հիմնադրման մասին, լը Բրիւիւնը հանգամանօրէն կանգ է առնում քաղաքի եւ նրա թաղամասերի տեղադրութեան նկարագրման վրայ: Ըստ նրա, Նոր Զուղան կազմուած էր հին ու նոր գաղութներից: Հինը, որ կոչւում էր Soeg-ga եւ բնակեցուծ էր յայտնի վաճառականներով, որոնց նախնիները այստեղ էին տեղափոխուել Շահ Աբասի օրօք: Նոր Զուղան իր դիրքով աւելի բարձր էր եւ կազմուած էր հետեւեալ թաղերից՝ 1) Գեափուբադ, կամ Գոէջ (Gaif-rabaet կամ Koetz)՝ բնակեցուած, հիմնականում, տների եւ գերեզմանների վրայ աշխատող քարտաշներով. 2) Թավրիզի թաղը բնակեցուած էր ջուհիներով եւ կերպասագործներով, որոնց մէջ հանդիպում էին նաեւ ֆրանսիացիներ. 3) Դաշտ (Toest) կամ Շամշաբադ (Samsja-baet) թաղը բնակեցուած էր վաճառականներով եւ բանուորներով. 4) Երեւանի թաղը հասարակ ժողովրդի բնակատեղին էր. 5-6-7-րդ թաղերը կոչւում էին Նախիջեւան (Nagt-siewan), Շիախաբան (Siachsa-baen) եւ Գասկեցի (Kasketsie): նոյնպէս բնակեցուած հասարակ ժողովուրդով, որոնցից իւրաքանչիւրը կոչւում էր իր իսկ թաղի անունով (CB, IV, 220-221):

Ըստ լը Բրիւիւնի Հին Զուղայի թաղը շատ աւելի մեծ էր, քան մնացած բոլոր թաղերը միասին եւ ունէր մօտ 2000 ընտանիք, որոնց մէջ էին նաեւ ամենահարուստ եւ ամենանշանաւոր վաճառականները (CB, IV, 221):

Եկեղեցիները. Լը Բրիւիւնի կողմից տրւում են Հին Զուղայի թաղի ամենանշանաւոր եկեղեցիների նկարագրութիւնը: Ըստ նրա հաղորդման, ամենագլխաւոր եկեղեցին «Անապատն էր՝ եպիսկոպոսանիստը»: Խօսքը Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի մասին է, որի առաջնորդը լը Բրիւիւնի այցելութեան ժամանակ Ալեքսանդր եպիսկոպոս Զուղայեցին էր, յետագայում՝ էջմիածնի Կաթողիկոս: <sup>16</sup>

16. Sb'u B. S'ter Bn'vahanbaneg. նշվ. աշխ., հ. 2, էջ 34-48:

Ըստ լը Բրիւիւնի նկարագրութեան, եօթ եպիսկոպոսներ էին բնակուում վանքի շրջակայ մենաստանում, որը բաղկացած էր փոքրիկ կացարաններից, որոնց պատերի մէջ փորուած խցերը ծառայում էին որպէս գրապահոցներ: Գրքերից բացի այս կացարաններում մի բարձր գրակալ կայ, որի առջեւ եկեղեցականները յատակին են նստում՝ աղօթելու համար: Կացարանները խիստ կոկիկ ու մաքուր են, սպիտակեցրած պատերով, որոնց վրայ 2-3 փոքրիկ ապակեպատ լուսամուտներ կան: Մենաստանի բաւական երկար սրահում ճաշի ժամանակ աւետարանից հատուածներ են ընթերցւում: Մենաստանն ունէր մատուռ, վերելից ներքեւ զարդարած «անարուեստ սրբապատկերներով» (CB, IV, 88-89):

Ուղեգրի կողմից յիշատակուող երկրորդ եկեղեցին սուրբ Յակոբն էր՝ զարդարուած սրբապատկերներով: Սա աջ կողմում ունէր մի քանի կացարաններ, ուր կրօնաւորներից զատ ապրում էին միանձնուհիները: Խօսքն ամենայն յաւանականութեամբ, գնում է Նոր Զուղայի Միրաղենց սուրբ Յակոբ անունով եկեղեցու մասին, որն ըստ Նոր Զուղայի յայտնի նկարագրող Յ. Տէր Յովհաննէսեանցի «մինն էր ի փառագարդ եկեղեցեաց Զուղայու, թէ ըստ շինուածոյ մեծութեան բարձրութեան եւ վայելչութեանն՝ եւ թէ ըստ ներքին պատկերազարդ եւ ծաղկափթիթ նկարուցն»: <sup>17</sup> Կարծում ենք, որ լը Բրիւիւնի հաղորդումը չի կարող վերաբերել Նոր Զուղայի սուրբ Յակոբ Բաղաթայ անունով առաւել փոքր ու համեստ եկեղեցուն:

Լը Բրիւիւնի յիշատակած երրորդ եկեղեցին, որ ամենամեծն էր՝ սուրբ Թովմասն էր: Վերջինս աւելի երկար էր եւ ամէն կողմից պահուում էր երեքական սեան վրայ: Պատերը սպիտակ էին, առանց սրբապատկերների: Գմբէթը շատ ցածր էր եւ խորան կարելի էր բարձրանալ երեքական աստիճաններով: <sup>18</sup>

Այս երեքից զատ, լը Բրիւիւնը յիշում է «եւս 11, կամ 12 եկեղեցիներ, առաւել փոքր եւ քիչ զարդարուած»: Իսկ Նոր Զուղայի թաղում եղած 13-14 եկեղեցիները «շատ փոքր են եւ նշանակալից ոչինչ չունեն» (CB, IV, 222): <sup>19</sup>

Խոջայակամ տները. լը Բրիւիւնի կողմից մանրամասնօրէն նկարագրուել են Հին Զուղայի թաղի մի քանի մեծահարուստների բնակարանները, որն անկասկած ունի ազգագրական նշանակութիւն:

Ըստ նրա, ամենանշանաւորը Խոջա Մինասի տունն էր, որի մեծ սրահն ամբողջովին ոսկեգօծուած էր, պատուած ծաղկանկարներով ու զարդանախշերով: Պատերը հայելազարդ էին, իսկ յատակը կամարակերպ՝ բաժանուած չորս

17. Նոյն տեղում, էջ 161-162:  
18. Ըստ Յ. Տէր Յովհաննէսեանցի (հ. 2, էջ 163) սուրբ Թովմայ Եկեղեցին «կառուցեալ է ի վերայ վեց սեանց, երկայնութիւնն է 82 ոտնաչափ սկսեալ ի ստորոտէ սեղանոյն, եւ լայնութիւնն՝ 60 ոտնաչափ: Ունի գմբէթ բաւական բարձրութեամբ ի մէջ առաստաղի երկրորդ դասուն: Զունի նկարէն պատկերս կամ ծաղիկս ինչ, այլ սպիտակացեալ է բոլով: Ծիմութիւնն եկեղեցւոյ յարտաքին կուտ է շատ վայելչաշէն վասն գոյնզգոյն յախճապակեացն գետեղիոց յորմունս»:   
19. Նոր Զուղայի բոլոր եկեղեցիների ու նրանց արձանագրութիւնների մասին տե՛ս Յ. Տէր Յովհաննէսեանց. նշվ. աշխ., հ. 2, էջ 1154-252, J. Carswell. New Julfa. The Armenia Churches and other Buildings. Oxford, 1968, p. 19-62. Nor Djulfa (Documenti di architettura armeni, 21). Venezia, 1991.



մասի, որոնցից իւրաքանչիւրի կենտրոնում ոսկեայ բազմագոյն աստղ կամ վարդ էր քանդակուած: Պատերը մօտ 2-3 ոտնաչափ բարձրութեամբ երեսպատուած էին մարմարով: Այս սրահի երկու կողմերում մեծ քանակութեամբ տերեւազարդ նախշերով փորագիր որմնախորշեր կային: Այս տան առաջնամուտքից կարելի էր մտնել բակը, ուր գեղեցիկ շրջանաձեւ ծաղկաթումբ կայ: Ծիշղ այդպիսին կարելի էր տեսնել տան ետեւում՝ երկրի սովորութեան համաձայն, կանանց համար առանձին կառուցուած գեղեցիկ բնակարանով:

Ըստ լը Բրիւիւնի, Նոր Զուղայի քաղանթարի՝ Խոջա Ղուկասի տունը «թէեւ իր մեծութեամբ չէր զիջում նախորդին, սակայն աւելի քիչ էր զարդարուած եւ նուազ գեղեցիկ»:

Արժիէթ Աղայի («Arjiet Aga») տունը, որի առջեւ աւելի մեծ պարտէզ կար, շատ աւելի մեծ էր եւ ունէր բազմաթիւ գեղեցիկ սենեակներ:

Խոջա Սաֆրազի տունը, եւս ունէր մեծ պարտէզ: Տան բոլոր պատերը նկարազարդուած էին եւ լի չափերով բնականին շատ մօտ մեծ պատկերներով: Լը Բրիւիւնը այս պատկերների մէջ յիշում է «մի թուրքի եւ թրքուհու, ինչպէս նաեւ բազում այլ նկարներ՝ պարսկական ու իսպանական տարազներով, իրարից որոշակի հեռաւորութեան վրայ» (CB, IV, 224): Ուղեգրի հաղորդմամբ, այս տան վրայ եղած մեծ պատշգամբում, «որտեղից բացուած էր աշխարհի ամենագեղեցիկ տեսարանը, սիրով իր ազատ ժամանակն էր անցկացնում Շահ Արասը» (CB, IV, 224):

Խոջա Աղամալու (Hodjie Agamael) տունը Բրիւիւնի կողմից առանձնացուած է որպէս «ամենաբարձրն ու ամենազարդարուածը», որն ունէր նաեւ մեծ ու գեղեցիկ պատուհաններով մեծ պատշգամբով մի կառոյց, որը բացուած է փողոցի վրայ:

Համաձայն լը Բրիւիւնի հաղորդման, նախորդներին իրենց գեղեցկութեամբ ու շքեղութեամբ չէին զիջում նաեւ Խոջա Յովհաննէսի ու Խոջա Միրզայի տները, չնայած այդ տների նկարազրութիւնը չի տրուում:

Նրա իսկ հաղորդմամբ «քիչ չէին այն տները, որոնք մարմարէ շատ զուլալ ցայտաղբիւրներով աւազաններ ունէին իրենց ամենաշքեղ սենեակներում, կամ մուտքի առջեւ: ... Այս տները շատ մաքուր են եւ լաւ խնամուած: Սենեակները ծածկուած են գեղեցիկ գորգերով եւ սալիկներով՝ ծածկուած ոսկեգօծ կամ արծաթագօծ ծածկոցներով» (CB, IV, 224):

Յիշեալ տների առաջնամուտքը սովորաբար շատ ցածր է լինում «որպէսզի արգելեն պարսիկներին ձիերով ներս մտնել, ինչպէս նաեւ նրա համար, որպէսզի դրսից չերեւայ ներսի ողջ շքեղութիւնն ու հարստութիւնը» (CB, IV, 224):<sup>20</sup>

20. Պուլէի կողմից յայտնուել են մի քանի նկատառումներ, կապուած Նոր Զուղայի հայերի բնակարանի վերաբերեալ: Ըստ նրա, տները բոլորը հողից են, ինչպէս Սպահանում եւ աւելի գեղեցիկ, քան Բաղաթում, քանի որ համաժամանակեակ աւելի լաւ է պահպանուած: Բոխարիկը պատի մէջ 2,5-3 ոտնաչափ լայնք ունեցող շրջանաձեւ ներս ընկած խորաբնակ է: Ապակու փոխարէն լուսամուտներին 2 մատ հաստութեամբ փայտէ նաղբի են, որոնց արանքից դուրսը լաւ է

Տարազը. Ըստ լը Բրիւիւնի հաղորդման, Զուղահայերի տարազն առանձնապէս չէր տարբերուում պարսկականից,<sup>21</sup> չնայած որ հագուստը «այնքան էլ մաքուր չի եւ չալմաների ծալքերն այնքան էլ խնամքով չեն արուած: Բացի դրանից հայերին չէր թոյլատրուում չալման կրել պարսկական ձեւով, ինչպէս նաեւ կանաչ մաշիկներ կրել»:<sup>22</sup>

Հաշուի առնելով լը Բրիւիւնի դիտողականութիւնը, ստորեւ մանրամասն բերում ենք հայկական տարազի նրա նկարագրութիւնը: Առաւել եւս, որ 17-18 դդ. պարսկահայ տարազը շատ համառօտ է ուսումնասիրուած հայագիտութեան մէջ:<sup>23</sup>

Ըստ լը Բրիւիւնի, հարուստ հայուհիների հագուստը շատ թանկարժէք է: Նրանք իրենց գլխին կրում են թանկագին քարերով ու մարգարիտներով զար-

բեւում: Որոշ տներ ապակի էլ ունեն, եւ դրանք դրուած են տան ներսում, ինչպէս Եւրոպայում: Տների վրայ դրսից երեւացող գմբէթները ներսից համարեայ չեն երեւում եւ կառուցուած են այնպէս, որպէսզի ապահովեն անօրեաջրերի հոսքը, որը կը վնասէր այս տներին եւ նրանց հողէ ծածկը: «Ես վստահաբար կարող եմ ասել, որ Փարիզի շրջակայքում այս գաղութի տեսարանները գերազանցող ոչինչ չէի գտնի եւ այս ամէնը աւելի քան գերազանցում են Պարսկաստանում եղող ամենագեղեցիկ տեսարանները...»- աւելացնում է Պուլլեմ (տե՛ս Pouillet. Nouvelles relations du Levant. Paris, II partie, MDCLXVIII (1668), p. 237).

Ըստ Ֆիգուերոայի «հայերի տները ի մեծի մասամբ շատ գեղեցիկ են եւ հրաշալի կառուցուած, ներսից նկարազարդուած, ոսկեգօծ պատերով ու առաստաղներով» (L'ambassade de D. Garcias de Silva Figueroa en Perse. Paris, 1667, p. 285) Նրա հաղորդման համաձայն, այս գեղեցիկ տների մի մասը կառուցուած է նրանց ամենահարուստ բնակիչների կողմից, միւս մասը՝ շահերի, նախարարների ու նրանց ծառայողների կողմից, քանի որ գիտէին, որ «շահը մեծ բաւականութիւն էր ստանում գործն աւարտուած տեսնելով, եւ քանի որ այստեղից էր բացուած աշխարհի ամենագեղեցիկ տեսարաններից մէկը» (նոյն տեղում, էջ 193)

21. Այսպիսի դիտողութիւն կարելի է գտնել համարեա բոլոր Եւրոպացի հեղինակների մօտ: Նոր Զուղայի յայտնի հետազօտող Յ. Տէր Յովհաննեսնը այս կապակցութեամբ գրում է. «Տարազ գգեստուց արդի արանց Զուղայու է ըստ ամենայնի մամուլեան պարսկական հանդերձից, այլ ըստ պատկերացն վկայելոյ՝ նախնիք շուղայեցոյ ունեցեալ են զհանդերձս այլատարազ քան զպարսկականն, զի մամուլիւնն ունին զգեստք մոցա Գուռչի կամ վրացի գգեստուց. զգօտի հաստ ի մէջս, եւ զփակեղ ունեւոյ ի գլուխ: Տարազ կամացի գգեստուցն ըստ բազմաց վկայելոյ մոյն է գորբերին ի Հայաստանայ: Վերին հանդերձս կամացի կոչի քակալայ, որոյ լանջն եւ գոգ քան է, եւ քանցք կամ վերին գոգ ծածկեն զայն: Մածկեալ են գլուխք մոցա չորիւք փաթութեանք, որոյ վերայ դնեն զկօտ, կապեն զքնակալ, արկանեն զլանջածակոցն՝ որ մանդիլ կոչի, եւ յամառան՝ բօռն, եւ շղարշապատեն զգլուխն» (նշվ. աշխ., հ. 2, էջ 289):

22. Հայերի տարազի նկատմամբ կրօնական խտրականութիւնը շատ աւելի դաժան ձեւերով դրսեւորուում էր հարեւան Թուրքիայում: Գոլիէ-Դեյանի 1664 թ. վերաբերող հաղորդման համաձայն, հայերը «առաւել ազատ են ամբողջ Պարսկաստանում, նրանք կարող են հագնուել այնպէս, ինչպէս ուզում են, մի քան, որ չեն կարող անել Թուրքիայում, ուր նրանց արգելուած է հարուստ կերպասներ հագնել եւ կամաչ գոյն կրել» (Les Beautez de la Perse... par le sieur A.D.D.V., Paris, MDCLXIII, 1673, p. 50). 16-18-րդ դդ. Օսմանեան կայսրութիւնում հայերի ազգային տարազի արգելման վերաբերեալ սուլթանական ֆերմանների մասին տե՛ս Ա.Յ. Փափազեան. Արեւմտահայութեան վիճակը ըստ Օսմանեան սուլթանական ֆերմանների (XVI-XVIII դ.դ.), - ՊԲՀ, 1988, 2, էջ 124-136, նոյնի, Օսմանեան կայսրութեան ոչ մահմեդական ժողովուրդներին վերաբերող բուրժուական մի շարք վաւերագրեր, - ՊԲՀ, 1983, ), էջ 201-211:

23. Տե՛ս Վ. Հացուեի. Պատմութիւն հին հայ տարազին. Վեներտիկ, 1923, էջ 276-279:



դարուած ժապաւէն, իսկ նրա տակ՝ երկու մատ լայնութեամբ, նոյնպէս ոսկեգօծ՝ շամբարայ: Իսկ այտերի շուրջը աւելի քան քսան՝ մարգարիտներով ընդմիջուող, ոսկէ դուկատներ եւ այլ զարդեր, որոնք անցնում են կզակի տակով:

Հայուհիները երեք տեսակի քոյ են կրում, որոնք ամրացւում են գլխի ետեւի մասում: Առաջինը՝ «երեսանոցը» («Jeries-annoots») ծածկում է նրանց դէմքի ներքեւի մասը՝ մինչեւ քիթը, երկրորդը՝ «եագմա» («Jas-mg») ոսկեկար եւ արծաթով ասեղնագործ՝ կրում են պարանոցի շուրջը: Այս երկու քոյերը երբեք չեն հանւում:<sup>24</sup> Երրորդը՝ «լաշակը» («Letsiek») եւս ասեղնագործ է եւ այս երկու քոյերի տակից, ետեւի կողմից, թիկնոցաձեւ իջնում է մինչեւ հագուստի ներքեւի մասը:

Կանայք հագնում են ձեռագործ տափտայից, կամ մի այլ հարուստ կերպասից շապիկ, որը բաճկոնից քիչ կարճ է: Դրա վրայից հագնում են մինչեւ ծնկները հասնող մի «արխալուղ» («Argalog»), իսկ դրա վրայից՝ ծաղկաւոր կերպասից մի բաճկոնակ («Takala»): Այս բոլորի վրայից հագնում են ոսկեկար կերպասից՝ սրբիբան սամույրի մորթով երկտակուած բաճկոն («Katebie»):

Կանայք գծաւոր, կարմիր-ճերմակ սաթինից անդրավարտիքներ («ոտաց շոր» - «Wotaets-sjoor») են կրում, ապա նաեւ կարմիր կամ դեղին մաշիկներ («բափուջներ» - «Paepoet-sjes»), քանի որ, ինչպէս տղամարդկանց, հայ կանանց էլ արգելուած էր կանաչ մաշիկներ կրելը:

Գօտին, որ 3-4 մատ լայնութիւն ունի, գործուած է ոսկէ, կամ արծաթէ փորագրուած թաղանթներով եւ զարդարուած է թանկագին քարերով: Այս գօտին նրանք կապում են աւելի լայն մետաքսէ գօտու վրայից: Հարուստ կանայք վզից կախում են 2-3 ոսկէ շղթաներ, որոնցից մէկից կախուած է լինում անուշահոտով լի մի սրուակ, իսկ միւսներից՝ ոսկէ դուկատներ: Սրանց հետ միասին նրանք կրում են նաեւ մարջանէ մի վզնոց, որը 2-3 հատիկը մէկ ընդմիջուած է մէկ կամ զոյգ ոսկէ դուկատներով: Սրանցից բացի կանայք կրում են նաեւ ոսկէ ապարանջաններ ու մատանիներ:

Ամրանը մորթէ բաճկոնի փոխարէն նրանք անթեւ, մինչեւ ծնկները հասնող մի այլ բաճկոն (Koer-toek) էին կրում:<sup>25</sup>

24. Լը Բրիւիմի ժամանակակից, յիսուսեան կրօնաւոր Յակոբ Վիլլոտի հաղորդմամբ հայ կանանց քնորոշ է այն, որ «փաթաթուած իրենց ֆոյերով նրանք ոչինչ չեն ցուցադրում իրենց հագուստների հարուստ արդուզարդից ոչ փողոցում եւ ոչ իսկ եկեղեցում: Միայն տանն են հանում ֆոյը՝ ներկայանալով իրենց ողջ փայլով, նշելու համար, որ հաճոյանում են միայն իրենց ամուսիններին, որով էլ լա դաս են տալիս մեր եւրոպացի կանանց» (տե՛ս (Villote J.). Voyages d'un missionnaire de la compagnie de Jesus. Paris. MDCCXXX (1730), p. 496). Լը Բրիւիմի հաղորդումը մասամբ հաստատուած է նաեւ 1664 թ. վերաբերող Թեվենոտի այն հաղորդմամբ, թէ «հայ կանանց դէմքը միշտ կիսով չափ փակ է մի ֆոյով, որը բթից իջնում է մինչեւ նրանց կզակը, բացի այդ ազգի օրհորդներից, որոնք, մինչեւ ամուսնանալը, ծածկում են միայն իրենց կզակը» (տե՛ս "Suite du voyage de mr. Thevenot au Levant. Amsterdam, T. III, MDCCXXXVII (1727), p. 320).

25. Տեղին է մէքերբել ջուդահայ տարագի վերաբերեալ 1618 թ. վերաբերող Գարսիա դէ Սիլվա Ֆիգուերոայի դիտարկումը. «Հայ կանանց մեծ մասը պարսկուհիների նման սպիտակ ֆոյ չեն կրում, այլ մի տեսակ սեւ կամ սրնագոյն կերպաս, որն իջնում է մինչեւ նրանց ծնկները եւ

ի տարբերութիւն կանանց, օրհորդներն այնքան էլ քողարկուած չեն: Հիմնական տարբերութիւնը գլխի յարդարանքի մէջ է: Նրանք միայն պարանոցի շուրջն են քոյ կրում, իսկ գլխին՝ ոսկուց ու արծաթից ձեռագործուած մարգարտազարդ ապարոշ են կրում:<sup>26</sup>

Լը Բրիւիմի եզրակացութեամբ, փողոց դուրս եկող հայուհին գրեթէ ոչընչով չէր տարբերուած պարսկուհիներից:

Հոգեւոր եւ աշխարհիկ ծէսեր եւ սովորոյթներ.

Ջրօրհնէ՛ք. Հայոց մէջ ընդհանրապէս եւ ջուղահայոց մէջ մասնաւորապէս, ջրօրհնէքի արարողութեան նկարագրութեան կարելի է հանդիպել 17-18-րդ դդ. Հայաստան եւ Իրան այցելած բազմաթիւ եւրոպացի ուղեգիրների մօտ (Ֆիգուերոա, Տավերնիէ, Թեվենո, Գ. Շինոն, Պուլէ եւ այլն): 17-րդ դ. 30-ական թթ. սկզբին շամախահայոց մէջ ջրօրհնէքի արարողութեան մանրամասն նկարագրութիւնը հաղորդում են Օլեարիուսը, Մանդելսոն, Ստրիւսը:

Լը Բրիւիմի հաղորդմամբ, նա շտապում էր հասնել Նոր Ջուղա, ականատես լինելու այս արարողութեանը, որ պիտի կատարուէր եպիսկոպոսանիստ Անապատ (իմա՝ ս. Ամենափարկիչ) եկեղեցում: Լը Բրիւիմի կողմից մանրամասնօրէն նկարագրուած է դեռ առաւօտեան ժամը 3-ից սկսած պատարագը, որն անցկացնում էին սեւազգեստ հանդերձանքի վրայից ոսկեկար կերպասից կարուած տօնական զգեստներ հագած կրօնաւորներն ու ականակու ու մարգարտազարդ վեղար հագած եպիսկոպոսը: Պատարագից յետոյ, պատարագիչ եպիսկոպոսը, երկու ձեռքում ասեղնագործ սպիտակ թաշկինակների մէջ ականակու խաչերով,<sup>27</sup> իր շքախմբով շարժուեց դէպի հան-

սանրուած են մօտաւորապէս իսպանիայի գիւղացի կանանց նման, չնայած որ բոլորն էլ երկրի սովորութեամբ՝ ինչպէս պարսկուհիներն ու արաբ կանայք, անդրավարտիք են կրում: Նրիտասարդ կանայք կապում են գլուխը եւ նակատը փակում են բարակ՝ բազմազոյն տափտայից ժապաւէնով. առաւել հարուստներն այդ ժապաւէնները զարդարում են կամ բարակ ոսկեայ թաղանթներով, կամ էլ այն նոյն կերպասի մասնիկներով, որից նրանց ժապաւէններն են պատրաստուած. վերջիններս իջնում են նրանց այտերի երկայնքով մինչեւ նրանց պարանոցը, ինչպէս կարելի է տեսնել մեր արձայադուստրների օճիկների (morions) վրայ, այնքան պինդ կապելով դրանք, որ ողջ մագերն ու դէմքը կտր եւ ուռած տպաւորութիւն են թողնում՝ որն իրենց գեղեցկութեան մի մասն է կազմում, չնայած որ նրանք ամբողջովին ծպտուած եւ այլափոխուած են...» (տե՛ս L'ambassade de D. Garcias de Silva Figueroa en Perse. Traduit de l'espagnol, par m. De Wicqfort. Paris. MDCLXVII (1667), p. 201-222).

26. Լը Բրիւիմի մէկ այլ ժամանակակից՝ իտալացի Ջեմելի-Կարերիի 1694 թ. վկայութեամբ, «հայ կանայք շատ գեղեցիկ են, արուեստը ոչինչ չի խնայել նրանց գեղեցկութեան համար: Նրանք իրենց գլուխը ծածկում են սպիտակ նուրբ ֆոյով, որը կապում է կզակի տակ: Նրանք իրենց մագերը հիւսելով հաւաքում են թաւշէ մի ծամկալի մէջ եւ թողնում են ուսերի վրայ: Մինչդեռ ամենահարուստները, ինչպէս այստեղ, այնպէս էլ այլուր, իրենց գեղեցկութիւնը պառնում են ոսկու ու ակնեղէնի մէջ» (Gemelli-Careri. Voyage du tour du monde. Traduit de l'italien. Paris, T. II, MDCCXIX (1719), p. 139).

27. Դեռ 1618-1619 թթ. Նոր Ջուղա այցելած իսպանացի Գարսիա Ֆիգուերոան խիստ զարմացել էր, թէ «ինչպէս էին այս խնդը հայերը փրկել այս հարստութիւնը, որ բաւական նշանակալի էր, քանի որ այդ խաչերը 100-ից աւելի էին, փոքրերը՝ արծաթից, չհաշուած նոյն այդ նիւթից պատրաստուած սկիւնները, որոնք նոյնպէս բուով էին էին» (L'ambassade de Gracias de Silva Figueroa, p. 284).





ՀԱՅՈՒՆՆԻ ՏԱՐԱԶ (ՆՈՐ ԶՈՒՂԱ)

դիպակաց զարդաքանդակներով ու երկու զանգ ունեցող զանգակատունը: Այստեղ շինութեան կենտրոնում դրուծ ջրով լի մի սկահակի մօտ մէկ ժամ եւս արարողութիւն կատարելուց յետոյ, եպիսկոպոսը իր խաչը երեք անգամ ընկղմեց ջրի մէջ եւ նրա մէջ լցրեց մեռունով սկիհի պարունակութիւնը, որով էլ աւարտուեց հոգեւոր արարողութիւնը: Վերջում նախ պատարագի մասնակցող կրօնաւորներ թրջելով իրենց ձեռքը սկահակի մէջ քսեցին իրենց դէմքին, ապա այն բոլոր հայերը, որոնց յաջողուեց մօտենալ սկահակին, սրբեցին իրենց դէմքը սուրբ ջրով: Նրանց մէջ կային մարդիկ, որոնք սրուակներ էին բերել իրենց հետ այդ ջրից տուն տանելու նպատակով:

Լը Բրիւնը նշում է նաեւ, որ ջրօրհնէքի արարողութիւնը անցկացուեց նաեւ Նոր Զուղայի միւս եկեղեցիներում եւ նոյնիսկ Զուղայի կողքով անցնող գետակում (CB, IV, 86-88):<sup>28</sup>

Նրա վկայմամբ, այս արարողութեան կատարման համար Նոր Զուղայի քաղաքը նախօրօք ստանում էր շահի թոյլտուութիւնը, որի համար վճարում էր մօտ 200 դուկատ հարկ:<sup>29</sup> Շահի կողմից ուղարկւում էր պահակախումբ այս բազմամարդ արարողութիւնը հսկելու եւ կարգ ու կանոն պահպանելու համար, քանի որ յաճախ մասնակցում էին նաեւ բազում մահմեդականներ: Յաճախ պահակախումբը ստիպուած էր դազանակներով ճանապարհ բացել բազմութեան միջով՝ կղերականների համար (CB, IV, 88):

Հարսանեաց ծէս. Այն, որ լը Բրիւնի վրայ հայկական հարսանեաց ծեսը թողել է մեծ տպաւորութիւն, երեւում է նրանից, որ բոլոր եւրոպացի հեղինակներից, որոնք անդրադարձել են այս ծէսին, նա տալիս է դրա առաւել հանգամանալից նկարագրութիւնը:

Բրիւնին զարմացրել է այն հանգամանքը, որ ամենեւին էլ պարտադիր չէր, որ ամուսնացող-զոյգը նախօրօք ծանօթ լինէին իրար հետ: Նրա ասելով, հայերի մօտ իրեն ոչինչ այնքան տարօրինակ չի թուացել, ինչքան այն, որ նրանք իրենց երեխաներին ամուսնացնում էին ամենավաղ հասակում. «այն-

28. Հայոց մէջ որոշ վայրերում սովորութիւն է եղել այս արարողութիւնը գետի, լճի, կամ ծովի վրայ կատարելու, չնայած Մ. Օրմանեանի դիտողութեամբ այսպիսի սովորութիւնը աւելի տարածուած էր յոյների մօտ (տե՛ս Մ. Օրմանեան. ծիսական քառարան. Երեւան, 1992, էջ 38):

Լը Բրիւնի հաղորդումից առաջ, հայերի կողմից Ջենդերուղ գետի վրայ այս արարողութեան կատարման մասին են վկայում Գարսիա Ֆիգուերոան՝ 1618-1619 թթ. (op. cit, p. 282-286), բոկոսն կարմեյիտները՝ 1620-ին (A Chronicle of the Carmelites in Persia..., London, Vol. I, 1939, pp. 245-246), հմմտ. Յ. Քիրտեան. Զուղայեցի Խօճայ նազար եւ իր գերդաստանը, - «Հայրենիք», 1943, թիւ 4 (Յուլիս-Օգոստոս), էջ 77-78), Ժ. Բ. Տավերնիէն՝ 1632 թ. (տե՛ս J.B. Tavernier, Les six voyages..., Paris, t., 1692, pp. 502-503), Գ. Շինոնը՝ 1650 թ. (տե՛ս G. de Chinon. Relations nouvelles du Levants. Lyon, MDCLXXI (1671), pp. 296-297). Զեմեյի-Վարբիւն՝ 1694 թ. (տե՛ս Gemelli-Careri, op. cit, p. 144-145) եւ ուրիշներ:

Շամախու հայերի կողմից ջրօրհնէքը գետի վրայ կատարելու մասին հաղորդում են Ադամ Օլբարիուսը՝ 1637 թ. (A. Олеарий. соч., с. 531-534), եւ Յ. Ստրիւսը՝ 1671 թ. (Jean Struys. Les voyages en Moscovie, en Tartarie, en Perse..., T. II, Lyon, MDCLXXXII (1682), pp. 262-264).

29. Օլբարիուսի հաղորդմամբ, Շամախում եւս հայերը տեղի խանին վճարում էին 1000 բալիք՝ ջրօրհնէքի արարողութեան կատարման համար (տե՛ս A. Олеарий. указ. соч., с. 533).



պէս, որ համարեա չկան տղայ երեխաներ, որոնք 8, 10 տարեկանում արդէն ամուսնացած չլինեն»։ Լը Բրիւիւնը հաղորդելով, որ յաճախ երեխաներին ամուսնացնում են մէկ տարեկանում եւ յաճախ էլ դեռ չծնուած, սա բացատրում է նրանով, որ այն աղջիկները, որոնք դեռ ամուսնացած չէին, ենթակայ էին շահի հարեմի համար հաւաքագրման եւ հայերը այս ամուսնութիւնները իրագործում էին դրանից խուսափելու նպատակով։ «Չնայած, - նշում է Լը Բրիւիւնը, - քիչ չեն օրինակները, երբ այս օրէնքն էլ է խախտւում»<sup>30</sup> (CB, IV, 244)։

Լը Բրիւիւնի վկայմամբ, ծնողները պայմանաւորւում են ամէն ինչի մասին եւ պայմանագիր են կնքում (CB, IV, 229)։

Հարսանիքի օրը<sup>31</sup> փեսան, որ նախապէս խնամք էր տարել երաժշտութեան մասին, իր ազգականներին եւ հիւրերին հրաւիրում է իրենց տուն։ Այնուհետեւ յայտնւում են մի խումբ աղջիկներ, որոնք փողոցներում, երգում ու պարում են դափերի ու փողերի նուագակցութեամբ եւ ուղեկցում են մի քանի կանանց, որոնց ձեռքին հագուստներ եւ թանկարժէք զարդեր կան։ Աղջիկները, հասնելով փեսայի տուն, նրա մէջքին կանաչ սաթինից մի խաչ են կապում, եւ ապա տղամարդիկ ու կանայք առանձնանում են տարբեր կացարաններում, ուր հիւրասիրւում են անուշեղէններով ու խմիչքով։ Ապա սկուտեղէնի մէջ բերում են հարսի ու փեսայի հագուստները, որոշ նուէրներով, որոնք նախատեսուած

30. Նոր Ջուդայում հայոց մէջ վաղ ամուսնութիւնների մասին են վկայում մի շարք եւրոպացի հեղինակներ։ Այսպէս, ըստ Գ. Շինոնի «հայերը եւ յատկապէս ջուդայեցիները սովորութիւն ունեն շատ վաղ ամուսնացնել իրենց երեխաներին, այդպիսով պահելով նրանց եւ արգելք հանդիսանալով, որ նրանք չցրուեն բուրբերի մէջ» (G. Chinon. Op. cit., p. 274)։ Համաձայն Ժ. Բ. Տաւերնիէի վկայութեան «հայերը սովորաբար իրենց երեխաներին ամուսնացնում են առանց երկու կողմերն իրար տեսնելու եւ նոյնիսկ առանց հայրերի եւ եղբայրների իմացութեան։ Հարկ է, որ ամուսնացողները կատարեն իրենց ծնողների ասածը... Յաճախ ծնողները երեխաներին ամուսնացնում են դեռ 2-3 տարեկանում եւ նոյնիսկ եթէ երկու ընկերուհիները միաժամանակ յղիանում են՝ նրանք պայմանաւորւում են ամուսնացնել նրանց, եթէ աղջիկ եւ տղայ ծնուեն։ Այս պայմանաւորութիւնից յետոյ, նրանց ծնուելուց յետոյ, անմիջապէս պսակում են նրանց» (Tavernier. Op. cit., p. 505)։ Թեւեռնոյի հաղորդմամբ (1664 թ.) «Հայերը իրենց երեխաներին հաղորդութիւն են տալիս շատ փոքր հասակում՝ բանի որ նրանց ամուսնացնում են շատ վաղ տարիքում։ Յաճախ ծնողները նրանց նշանում են ծնուելուց անմիջապէս յետոյ եւ պսակում՝ 7-8 տարեկան հասակում։ Չնայած բահանան կատարում է պսակի արարողութիւնը, երիտարդներն ամուսնանում են տարիքը հասնելու պէս» ("Suite du voyage de mr. de Thevenot au Levant. T. III, p. 392).

31. Համաձայն Գ. Շինոնի հաղորդման «ամուսնացողին տալիս են բազաւոր անուր, որը հարսանիքի նախորդ օրը, հարսանիքին երաւիրուած բազում երիտասարդների հետ միասին, որոնցից իւրաքանչիւրին նա մէկական բանկոն էր նուիրել, եթէ այդ հնարաւորութիւնն ունէր, ձիերով գնում են քաղաքից դուրս գրասնիք՝ իրենց բարուկներով, դափերով։ Ուշ երեկոյեան՝ վերադարձին, կանգ են առնում կառավարչի (բալանթարի) դռանը եւ ողջունում նրան։ Ապա հարսանիքի բազաւորը, ինչպէս նրան կոչում են, իջնում է իր ձիուց, իր շխմբի անդամներից մէկի հետ մտնում է խոջայի տուն եւ համբուրում նրա ձեռքը։ Խոջան նրան ամէն տեսակ օրհնամբներ ու մաղթանքներ է տալիս՝ որպէսզի երջանկանայ իր գոյգի հետ միասին։ Ապա մի բեքբե հիւրասիրում է նրանց, որից յետոյ նորապսակը միանալով իր ընկերներին՝ վերադառնում է տուն» (տե՛ս G. Chinon. Op. cit., p. 274-276).

են հարսանիքին մասնակցող երիտասարդների համար։ Քահանաների կողմից հագուստների օրհնումից յետոյ, հենց տեղում նորապսակները հագնում են դրանք։ Այնուհետեւ փեսան մի քանի ընկերների եւ երկու-երեք ազգականների հետ միասին գնում է իր ապագայ կնոջ սենեակը, ուր հարսի հայրը, եղբայրը եւ այլ ազգականներ նրան ընդունում են բազում գովաբանութիւններով եւ մաղթանքներով։ Այստեղ փեսայի մէջքին մի կանաչ գօտի էլ են կապում եւ տալիս են մի ասեղնագործ թաշկինակ, որի մի ծայրից ինքն է բռնում, միւս ծայրից՝ հարսը։ այս թաշկինակը նրանց ուղեկցում է պսակադրութեան ողջ ծէսի ընթացքում։

Հարսը հագնուած է լինում շատ շքեղ։ Նրա դէմքը ծածկուած է լինում կարմիր տափտայով, որն իջնում է մինչեւ ոտքերը, ինքն էլ ամբողջութեամբ ծածկուած է լինում գեղեցիկ ասեղնագործ քօղով, որն ամենեւին էլ չի սքօղում նրա գեղեցիկ հանդերձանքը։ Հարսն այս տեսքով, չըջապատուած ուրիշ, քօղածածկ կանանցով, թաշկինակի ծայրը բռնած, հետեւում է իր ամուսնուն մինչեւ եկեղեցի։

Լը Բրիւիւնի վկայմամբ, արարողութեան սկզբում հարսն ու փեսան խոստովանում են, որից յետոյ քահանան նրանց ուղեկցում է ներս, ուր եւ տեղի է ունենում պսակադրութեան արարողութիւնը։ Քահանան հարցնում է փեսային, թէ ցանկանո՞ւմ է նա որպէս կին ունենալ հարսնացուին, նրան սիրել ու յարգել, եթէ վերջինիս նոյնիսկ վատ բան պատահի՝ կորցնի տեսողութիւնը, նրա ձեռքերն ու ոտքերը չաշխատեն, կամ էլ այլ փորձանք պատահի։ Փեսայի դրական պատասխանից յետոյ, քահանան նոյն հարցերը հարսնացուին ուղղելուց յետոյ, միացնում է նրանց ձեռքերն ու գլուխները, որոնք հարսանքաւոր տղաներից մէկը այդպէս միացած պահում է մի թաշկինակով, որի վրայ մի խաչ է բռնում։ Այս ընթացքում ընթերցւում է սուրբ գիրքը։<sup>32</sup> Ապա քահանան նրանց գլխի վրայից վերցնելով խաչը նրանց հաղորդութիւն է տալիս։ Այնուհետեւ հարսանքաւորները դուրս են գալիս եկեղեցուց եւ դափերի, փողերի ու թմբուկների նուագակցութեամբ, քահանաների առաջնորդութեամբ ուղեւորւում են դէպի փեսայի տուն, ուր տան շէմին նրանց հիւրասիրում են օշարակներով եւ օծում վարդաջրով։ Ապա տղամարդկեանց ու կանանց առաջնորդում են տարբեր կացարաններ, ուր, ճաշով հիւրասիրուելու համար, ըստ կարգի, նստում են հիւրերը։

Ճաշը սկուտեղների վրայ դնում են յատակին, մի մեծ գորգի վրայ, որի վրայ էլ տեղաւորւում են արեւելեան ձեւով։ Սկզբից անուշեղէնն են հիւրասիրում, խմիչքով, յետոյ՝ մսեղէնը։

Լը Բրիւիւնը չի մոռանում նշել, որ եթէ նորապսակները պսակադրութեան ժամանակ հաղորդութիւն են ստանում՝ 3-4 օր նրանց առանձնացած են պահում, իսկ եթէ չեն ստանում՝ հենց նոյն երեկոյ նրանց առաջնորդում են իրենց ննջարանը՝ վարդաջրով օծելուց յետոյ (CB, IV, 232)։

32. Տաւերնիէի սրամիտ նկատողութեամբ, նորապսակների գլխին դրուող Աւետարանը «յաճախ քաւականին ծանր էր լինում...» (J.B. Tavernier, op. cit., p. 506).



Բրիւիւնի վկայմամբ, յաճախ եկեղեցի են գնում ձիերով, յաճախ էլ նրանց ամուսնացնում են գաղտնի, գիշերով, քիչ թուով ազգականների ներկայութեամբ:

Օժիտ. Լը Բրիւիւնը յատուկ ուշադրութիւն է դարձրել ջուղահայոց օժիտին: Նրա հաղորդմամբ, հարսանիքից մի քանի օր անց նորահարսին են տանում նրա օժիտը, որը հիմնականում բաղկացած է լինում նրա հագուստեղէնից, ոսկեղէնից ու թանկարժէք քարերից, այնքան, որքան թոյլ է տալիս նրա հօր հնարաւորութիւնները: Այս ամէնը տեղաւորուած է լինում փայտէ սնդուկների մէջ՝ համեմուած անուշեղէններով ու մրգերով: Օժիտը բերում են դափերի ու ծնծղաների նուազակցութեամբ:

Լը Բրիւիւնի հաղորդմամբ, յաճախ օժիտը ուշացնում են մինչեւ առաջին երեխայի ծնունդը: Այս դէպքում, օժիտին են միացնում նաեւ երեխայի սպիտակեղէնն ու օրօրոցը (CB, IV, 232):<sup>33</sup>

Մանկան ծնունդ, մկրտութիւն, մանկական դաստիարակութիւն. Լը Բրիւիւնի հաղորդմամբ, հայերի մօտ մանկան ծնունդից յետոյ, ծնողներն անպայման կնքահայր են ընտրում եւ մի քանի օր անց մի կին այդ երեխային եկեղեցի է տանում կնքելու: Այնտեղ քահանան մերկացնելով երեխային, երեք անգամ ընկղմում է սուրբ ջրով գուռի մէջ եւ մկրտութեան աղօթքներ է արտասանում, որից յետոյ երեխային օծում է մեռոնով: Նախ գլուխը, յետոյ յաջորդաբար՝ բերանը, վիզը, ձեռքերն ու ոտքերը, որից յետոյ արդէն փաթաթուած երեխային խորանի մօտ հաղորդութիւն է տալիս: Այնուհետեւ քահանան երեխային յանձնում է կնքահօրը, որը նրան փաթաթում է իր կողմից որպէս նուէր պատրաստուած թանկարժէք կերպասի մէջ: Ապա մկրտութեան թափօրը, որի առջեւից մի մեծ խաչ են տանում, իսկ մասնակիցների ձեռքին մոմեր կան, քահանաների երգեցողութեամբ շարժում է դէպի նորածնի տուն: Այստեղ կնքահայրը երեխային յանձնում է մօրը, իսկ մկրտութեան արարողութեան մասնակիցները հիւրասիրում են:

Լը Բրիւիւնի նկատողութեամբ, յետագայում, սովորաբար, նոյն կնքահայրն էր կնքում այդ ընտանիքի բոլոր երեխաներին: Բացի այդ, կնքահօր երեխաները իրաւունք չունէին ամուսնանալ նրա սաների հետ եւ ոչ էլ նոյնիսկ նրա մօտ ազգականների երեխաների հետ՝ մինչեւ ազգակցութեան չորրորդ աստիճանը: Եւ նոյնիսկ, տարբեր ընտանիքներից սերուած տղան ու աղջիկը, ունենալով նոյն կնքահայրը, իրար հետ չեն կարող ամուսնանալ:

Լը Բրիւիւնի հաղորդմամբ, «ըստ հայկական սովորութեան», եթէ երեխան ծնւում էր որեւէ հոգեւոր տօնի (գատիկ, վարդավառ, բարեկենդան եւ այլն) նախօրէին, ապա նրան կնքում էին տօնական օրերին (CB, IV, 228-229):

Լը Բրիւիւնը հետաքրքրութեամբ եւ մասամբ քամահրանքով նշում է, որ չնայած հայերը շատ ուշադիր են արտաքին աշխարհի նկատմամբ, սակայն բազմիցս շրջանցում են այնպիսի կարեւոր հանգամանքներ, ինչպիսին է, օրինակ,

33. Օժիտի այս նկարագրութեան աղբյուրները հայկական այլ ազգագրական շրջանների հետ տե՛ս Է.Տ. Կարապետեան. Օժիտը հայոց մէջ. Երևան, 1978, էջ 9-28:

մանկան դաստիարակութիւնը, որոնք «յաճախ հասնելով հասուն տարիքի, չեն իմանում հասարակ դոմինիկեան փղօթարանը»: Յետագայում, ինքն իսկ այս հանգամանքը բացատրում է նրանով, որ երեխաներին շատ վաղ են ամուսնացնում, եւ նրանք յաճախ երեխայ են ունենում, մինչդեռ իրենք մանկական տարիքից դեռ դուրս չէին եկել: Նրանք, ընդհանրապէս, այնքան խրուած են լինում առօրեայ հոգսերի մէջ, որ անհնար է լինում ուսում ստանալ, - նշում է Բրիւիւնը, - «ի՞նչ երեխայ կարող է դաստիարակել մայրը, երբ ինքը եւս ոչ մի կրթութիւն ու դաստիարակութիւն չի ստացել» (CB, IV, 234-235):

Թաղման ծէս եւ «Սուրբ Խաչ»: Թաղման ծէսին լը Բրիւիւնը անդրադառնում է իր գրքի սկզբում, հայ վաճառական Պետրոս Արխանգելի մահուան կապակցութեամբ: Նրա հաղորդմամբ, վերջինիս մահով վշտացած իրենց ուղեկիցները նրան ծածկեցին սպիտակ մաքուր սաւանով, որ փաթաթեցին հանգուցեալի ոտքերի շուրջը, ինչպէս նաեւ մի գիրք դրեցին գլխի վրայ, մի խաչ՝ փորին եւ գլխավերեւում խունկ վառեցին: Ապա մինչեւ ուղեկցող վաճառականներից երկուսը մինչ երկու ժամ ընթերցում էին հանգուցեալի հոգու հանգստութեան համար, միւսները պատրաստեցին պատանք, մի նոր շապիկ եւ անդրավարտիք: Այնուհետեւ կրկին կարդալով ու երգելով, հանգուցեալին մերկացնելով, լուացին գլուխն ու ողջ մարմինը եւ դնելով մի տախտակի վրայ՝ հազցրին սպիտակեղէնը, վզին մի խաչ կապեցին, աջ ձեռքին մի տէրողորմեայ, իսկ ձախին՝ մի փոքրիկ մօմ: Յետոյ աչքերին, ականջներին ու բերանին սպիտակ կտորներ դնելով, ձեռքերը խաչեցին: Այս բոլորից յետոյ, նրան փաթաթելով պատանքի մէջ եւ դնելով մի թիակի վրայ, որը ծածկուած էր գորգով, տարան Սարատովին մօտ գտնուող մի լեռան վրայ, ուր նախօրօք փոս էին փորել: Այստեղ, կրկին երգելուց ու կարդալուց յետոյ, ուղեկիցները համբուրեցին հանգուցեալի ճակատը եւ նրան հողին յանձնեցին՝ իւրաքանչիւրը խաչակնքելով ու մի բուռ հող նետելով նրա վրայ: Յետոյ գերեզմանը լցրին հողով ու քարերով, գլխավերեւում կանգնեցրին մի մեծ փայտէ խաչ, իսկ շուրջը՝ երեք փոքր խաչեր եւ մեծ քարերով շրջապատեցին գերեզմանը: Այնուհետեւ բոլորը համբուրեցին գերեզմանի հողը եւ խունկ ծխեցրին ու մէկական բաժակ օղի հրամցրին:

Սարատովում մահացած եւ այնտեղ էլ թաղուած նորջուղայեցի այս վաճառականի, որին «անհամբեր սպասում էին կինն ու երեխաները» թաղումից զատ, լը Բրիւիւնը, նոր Ջուղայում եւս մասնակից լինելով թաղման արարողութեան, լրացրել է իր դիտարկումները: Ըստ նրա, կանայք եւս, ինչպէս տղամարդիկ, մասնակցում էին այս արարողութեանը: Թաղման թափօրը առաջնորդում էին քահանաներն ու սարկաւազները թաղման օրհներգեր կատարելով: Հանգուցեալի դագաղը տանող չորս հոգին յաճախ դառնում էր ութ՝ կապուած վերջինիս երկարութեան հետ: Դիակը հողին էր յանձնւում առանց դագաղի, գլուխը մի քիչ բարձր եւ քահանան երեք անգամ, խաչածեւ, հող էր նետում նրա վրայ: Այնուհետեւ նոյնը անում էին յուղարկաւորները:

Ըստ լը Բրիւիւնի, վերադառնալով յուղարկաւորութիւնից, հանգուցեալի տանը հիւրասիրում են ճաշով ու ընթրիքով: Նոյնը կրկնւում է նաեւ քառասուն



օր յետոյ, երկու քահանայի եւ երկու սարկաւազների մասնակցութեամբ, որոնց վճարում էին հանգուցեալի գերեզմանի վրայ աւետարանից որոշ հատուածներ կարդալու եւ Դաւթի սաղմոսները երգելու համար: Կրօնաւորները իւրաքանչիւր օրուայ համար 10 սուլ են ստանում, որն էլ լը Բրիւնի կարծիքով, ցոյց է տալիս, թէ թաղման ծէսին ինչ յարգանքով են վերաբերում ջուղահայերը (CB, IV, 233-234):

Լը Բրիւնի հաղորդմամբ, 1704 թ. Օգոստոսի 26-ին Նոր Զուղայում նա մասնակցում է հայերի «Սուրբ Խաչի» արարողութեանը: Ըստ նրա, օրն սկսելուց երկու-երեք ժամ առաջ, հայ կանայք գալիս են Նոր Զուղայի գերեզմանատուն, իրենց հետ բերելով մոմեր, փայտ, ածուխ ու խունկ: Ապա իրենց հանգուցեալ ազգականների գերեզմանների կողքին խարոյկ են վառում, իսկ գերեզմանների վրայ վառուող մոմեր են դնում եւ կրակի մէջ անընդհատ խունկ են լցնում՝ ստեղծելով մեծ բոցավառութիւն եւ ողբալով դիմում են իրենց հանգուցեալներին: Լը Բրիւնը, որի վրայ մեծ տպաւորութիւն էր թողել մթան մէջ գերեզմանոցում վառուող կրակները, աւելացնում է. «Դրանք ինձ թուացին հրդեհից աւերուած քաղաքի աւերակներ, որոնց մէջ մարդիկ, որոնք փրկուել էին հրդեհից, ողբալով իրենց դժբախտ ճակատագիրը, գիշերային խաւարի մէջ ճրագներով եկել էին որոնելու իրենց ազգականներին ու բարեկամներին եւ գտնելու իրենց ունեցուածքի մնացորդները» (CB, IV, 260-261):

Ճիշդ է, ըստ լը Բրիւնի վկայմամբ, արարողութեանը մասնակցում էին միայն կանայք, այնուամենայնիւ նա գերեզմանոցում տեսնում է մի քանի տղամարդկանց եւ քահանաների, որոնք աղօթում էին այն գերեզմանների վրայ, որոնց տէրերը իրենց վճարում էին: Բրիւնի հաղորդմամբ, այս ծառայութեան համար նրանք ստանում էին 5, ոմանցից՝ 10, իսկ առաւել ունեւոր մարդկանցից՝ մինչեւ 20 սուլ:

Լը Բրիւնը, իր իսկ հաղորդմամբ, շատ էր ազդուել գերեզմանոց այցելած մօտ 3000 սպիտակազգեստ կանանց եւ սեւազգեստ քահանաների բազմութիւնից, վառուող կրակներից ու դէպի Սպահան տարածուող խունկի հոտից, նկատում է, որ մինչեւ ցերեկուայ ժամը 2-ը շարունակուող արարողութեանը մասնակցելու զնացողների թիւը օրը բացելուն պէս աւելի ստուարացաւ եւ կային կանայք, ովքեր երկրորդ անգամ էին գնում գերեզմանոց (CB, IV, 261-262):

Հայերի դաւանանքը, դաւանափոխութիւն, «Իմամ Զաֆարի» օրէնքը: Հաշուի առնելով այն հանգամանքը, որ լը Բրիւնը Նոր Զուղա էր այցելում Շահ Հիւսէյնի իշխանութեան ժամանակ, երբ Պարսկաստանում թափ էր ստացել կրօնական անհանդուրժողականութիւնը, ապա այս երեւոյթի վերաբերեալ նրա վկայութիւնները ստանում են կարեւոր աղբիւրագիտական արժէք: Թէ ինչ թափ էր ստացել հայերի մահմեդականացման գործընթացը Նոր Զուղայում այդ ժամանակ, թերեւս կարելի է դատել նրա իսկ բերած մի ցայտուն օրինակից: Այսպէս, ըստ նրա վկայման, հայերից շատ նշանաւոր անձինք ուրանալով քրիստոնէական հաւատքը, մահմետականացել էին՝ «հարստանալու եւ մեծ ունեցուածք կուտակելու նպատակով»: «Այսպիսի հաւատուրացներից մէկը, որ



«ՍՈՒՐԲ ԽԱՉԸ» ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ



ուխտազնացութիւն էր կատարել զէպի Մեքքա եւ Մեդինա՝ Մուհամէզի գերեզմանն այցելելու, երբ ես դեռ Սպահանում էի, հայերից շատերը շտապեցին նրան ընդառաջ գնալ եւ հազար գովարանութիւն անել, բայց դրա փոխարէն ոչ ոք չի դիմաւորել Երուսաղէմից վերադարձող որեւէ քրիստոնեայի եւ ոչնչով չի գովարանել նրա արարքը» (CB, IV, 239-240):<sup>34</sup>

Խօսելով պարսկական օրէնքների ու սովորութիւնների մասին լր Բրիւիւնը յիշում է այդ օրէնքներից մէկը, որը պատմագրութեան մէջ յայտնի է որպէս «Իմամ Ջաֆարի» օրէնք: Համաձայն սրա, մահմեդականութիւն ընդունած նախկին քրիստոնեան իրաւունք է ստանում լիովին ժառանգելու իր քրիստոնեայ ազգակիցների ողջ ունեցուածքը՝ անկախ ազգակցութեան աստիճանից: <sup>35</sup> «Եթէ որեւէ քրիստոնեայ, կամ այլ հաւատքի կրող, ընդունում է պարսկական հաւատքը, նա ժառանգում է իր ազգականների ողջ ունեցուածքը, ի տարբերութիւն միւսների, որոնք չեն հաւատափոխուել, ինչպէս ինքը: Այն դէպքում, երբ միաժամանակ երկու քրիստոնեաներ են ընդունում պարսկական հաւատքը, երկուսի ժառանգներից ամէնամօտը միակ ժառանգորդն էր համարւում իր քրիստոնեայ բոլոր ազգականների, որոնք վախճանուած են» (CB, IV, 194): Շահ Հիւսէյնի իշխանութեան ժամանակ, Ջուղայում, յատկապէս ունեւոր խաւի մէջ այս օրէնքի աւերիչ գործունէութեան մասին է հաղորդում նաեւ Գանձասարի հայոց կաթողիկոս Եսայի Հասան Ջալալեանը. «Նմանապէս եւ այլ բազմահոյ չարիս յորդեցին. ուստերս եւ դստերս ուժգին քարչելով, զարս եւ զկանայս բռնի ուրացուցանելով, եւ զյետամնացելոց զինչսն եւ զստացուածսն եւ զգանձս յափշտակելով՝ եւ ուրացողացն տալով. որպէս եւ որքան տօլլաթաւորս եւ մեծատունս աչօք մերովք տեսաք ի Ջուղայ...»: <sup>36</sup>

Գրիգոր Ասատուրի նահատակութիւնը. Լր Բրիւիւնը իր «Ուղեգրութեան» մէջ մանրամասնօրէն պատմում է 1703 թ. Յուլիսի 20-ին Նոր Ջուղայում

34. 17-րդ դ. վերջին, 18-րդ դ. սկզբին Նոր Ջուղայում հայերի բռնի կամ կամաւոր հաւատափոխութեան մասին վկայութիւններ կան բազում աղբիւրներում: Այսպէս, ըստ հայ ժամանակագրի «Քուիմ ՌՃԼԲ (1683) շահ Սուլէյմանն ջրաւրնեաց օրն Ջուղայու Հայոց Իէ (27) հարսն եւ աղջիկ քաջեց եւ ուրացոյց զնոսա» (տե՛ս Մանր ժամանակագրութիւններ. կազմեց Վ. Յակոբեան, Երեւան, 1951, հ. 1, էջ 303): Համաձայն Ջաֆարի Ագուլեցու վկայութեան «Քուիմ ՌՃԻ (1671) Մայիսի ԻԲ (22) Ըսպիանայ Ջուղայ մին Ոհան անուն չի վարդապետ ջուղեցի, սայ բուրդացաւ (իմա՝ մահմեդականացաւ - է.թ.), շատ զարար տուեց Ջուղու, եւս առաւել հաւատի պակասութիւն: Անուն էղին Շիւ-Մումին» (Ջաֆարի Ագուլեցու օրագրութիւնը. Երեւան, 1933, էջ 103): Ժամանակագիրը լրացնում է այս վկայութիւնը. «Եւ սոյն ամին թուրքացաւ Շիւմումինն եւ վատ ասաց Շիւայի խանին եւ եղ հարկ ի մերայ եկեղեցեացն Ջուղայու» (Մանր ժամանակագրութիւններ, հ. 1, էջ 303):

35. Այս օրէնքի գործունէութեան մասին Արեւելեան Հայաստանում տե՛ս Յ. Գ. Փափազեան. Սեֆեան Իրանի ասիմիլիատորական քաղաքականութեան հարցի շուրջը, - Բանբեր Մատենադարանի, հ. 3. Երեւան, 1956, էջ 88-91, Կարապետեան Մ.Մ. «Իմամ Ջաֆարի» օրէնքը եւ արեւելահայերը (17-18-րդ դդ.), - ՊԲՀ, 1988, 1, էջ 219-221:

36. Եսայի Հասան Ջալալեանց. Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի. Երուսաղէմ, 1868, էջ 18: Շահ Հիւսէյնի օրօք Նոր Ջուղայում մահմեդականացած հայերի մասին հիմնտ. Թ. Տէր Յովհաննէս. Պատմութիւն Նոր Ջուղայում հ. 1, էջ 201-209:

մահմեդականների ձեռքով նահատակուծ Երեւան թաղի բնակիչ Գրիգոր Ասատուրի սպանութեան հանգամանքները: Այս նկարագրութիւնը զգալի տարբերութիւններ ունի հայագիտութեանը յայտնի «Լոյս Գրիգորի» նահատակութեան այն տարբերակից,<sup>37</sup> որի բնագիրը, ըստ Նոր Ջուղայի տարեգիր Տէր Յովհաննէսեանցի, «էր տետրակ մի փոքրիկ, որոյ պատմողն ոչ էր յայտնի, այլ էր ժամանակակից, եւ թերեւս ականատես նոյն հայն էր, որ ներկայ էր ի ժամ նահատակութեանն Գրիգորի: Շարադրութիւնն էր խառն ու չփոթ»:<sup>38</sup>

Լր Բրիւիւնը, որը Նոր Ջուղայում էր գտնուում այս իրադարձութիւնից մօտ մէկ տարի յետոյ, ամենայն հաւանականութեամբ, հայերից լսելով այս դէպքի մասին պատմում է հետեւեալը. մի անհամաձայնութեան պատճառով իրար հետ թշնամացան մի անգլիացի վաճառականի ծառաներն ու մի քանի ցածր ծագում ունեցող պարսիկներ: Վերջիններս, վրէժխնդրութեամբ լցուած, շշուկներ տարածեցին, թէ այդ վաճառականի հայազգի ծառայողը սպանել է իրենց հայրենակիցներից մէկին եւ այդ պատճառով փակեցին իրենց թաղի բոլոր կրպակները: Ենթադրեալ սպանութիւնից յուզուած ժողովուրդը բողոքեց մեծ թաշիֆին, որը մահմեդականացած վրացի էր: Վերջինս, որեւէ հրամանի չսպասելով, իր մօտ կանչեց վաճառականի հայ թարգմանչին եւ նրան մի թուղթ ստորագրել տուեց, որով նա կամ ստիպուած էր ընդունել սպանութիւնը, կամ էլ որոշակի գումար վճարել: Ըստ լր Բրիւիւնի, ոչ մի դժուարութիւն չկար այստեղ, մանաւանդ որ թարգմանիչը լաւ գիտէր, որ ծառայողը մարդասպան չէ եւ նոյնիսկ մեղադրեց իր հայրենակցին: Դա նրա համար այնքան դիւրին էր, որ նոյնիսկ հարկ չեղաւ դիմել անգլիացի տիրոջը, որն իր հեղինակութեամբ կարող էր ամէն ինչ հարթել եւ այդ ժամանակ էլ հիւանդ էր:

Այդ պահին ամբողջ աղմուկ բարձրացրեց մի ցածր ծագում ունեցող պարսիկի մահուան համար, որին մի քանի հարուած էին հասցրել գաւազանով վատ արարքի համար. նրանք մարդասպան էին կոչում բոլոր Ֆրանկներին (ինչպէս կոչում էին բոլոր եւրոպացիներին): Այս գործի վերաբերեալ բողոք ներկայացուեց արքունիք:

Ջրաւարարուելով սրանով, Չարբախ տարուեց մի հանգուցեալի մարմին՝ ամբողջ երեւակայութիւնը բորբոքելու նպատակով: Անգլիացի վաճառականը, միաժամանակ, հրաման ստացաւ ազատուել իր բոլոր մահմեդական ծառաներից:

Մեղադրուող հայը այդ ընթացքում գնաց Նոր Ջուղա, ուր նրան դաւաճանեց նաեւ թարգմանիչը եւ նրան մատնեց արդարադատութեան սպասաւորների ձեռքը, որոնք էլ նրան բանտարկեցին: Այս որոշումից դժգոհ, ամբողջ պահանջեց եւ ի վերջոյ՝ իր ձեռքը գցեց նրան: Մաղրուծանակից յետոյ, նրան առաջարկեցին մահմեդականութիւն ընդունել՝ խոստանալով

37. Հայոց նոր վկաները (1155-1843). աշխատութեամբ Յ. Մանանդեանի եւ Լ. Անտոնեանի. Վաղարշապատ, 1903, էջ 538-551:

38. Թ. Տէր Յովհաննէս, նշվ. աշխ., հ. 1, էջ 221, ծանօթ. 3:



կեանք ու ազատութիւն, նաեւ խոշոր գումար եւ ձեռնտու ամուսնութիւն: «Բայց նա վեհանձնարար հրաժարուեց նրանց պարգեւներէ՛ց՝ չնայած որ մահն աչքի առջեւ էր: Նա նոյնիսկ մի քանի դաւանափոխ հայերի, որոնք նրան թախանձում էին մահմեդականանալ, ասաց, որ երբեք չի ուրանայ իր Փրկչին ու իր Աստծուն: Սրա վրայ կատաղած պարսիկների ատելութեամբ լցուած ամբոխը յարձակուեց նրա վրայ եւ սպանեցին նրան, որից յետոյ նրա դիակը քարշ տուեցին արքունի մեծ հրապարակը, ուր նոյնիսկ կանայք դաժանօրէն անարգեցին այն: Այսպէս մահացաւ այս հերոս քրիստոնեան... նրա անունը Գրիգոր Ասատուր (Gregoire Assadoer) էր եւ քսան տարեկանը ղեռ չէր լրացել» (CB, IV, 250-253):

Նահատակի մարմինը տեղափոխուում է Նոր Զուղա եւ թաղուում է Սուրբ Ամենափրկչի եկեղեցու բակում, ուր մի հայ վաճառական նրա շիրմի վրայ սեփական ծախսերով տապանաքար կառուցեց «այս գեղեցիկ մահուան յուշը յաւերժութեանը յանձնելու նպատակով, ինչպէս նաեւ հանգուցեալի հետ իր ընկերութեան վկայութեան համար»: <sup>39</sup>

Համաձայն լը Բրիւինի, ահաւոր էր այն մթնոլորտը, որ առաջացաւ օտարերկրացիների մօտ այս բարբարոսական մահուանից յետոյ Սպահանում: Նրանք մի քանի օր չէին համարձակուում երեւալ, վախենալու կրկին հանդիպել վրդովուած ամբոխի կատաղութեանը, որի անպատեղիութիւնը նրան անկառավարելի էր դարձնում:

Ամփոփելով վերոյիշեալ ողջ նիւթը, վստահօրէն կարելի է ասել, որ լը Բրիւինի հաղորդումներն ու վկայութիւնները, նրանց դասակարգումն ու համեմատական ուսումնասիրութիւնը կարելոր արժէք են ներկայացնում գաղութահայոց պատմութեան ու ազգագրութեան հետազօտման գործում:

39. Տապանագրի հրատարակութիւնը տե՛ս Թ. Տէր Թովհանեանց. Աշխ., հ. 1, էջ 219-220: Հմմտ. Հայոց նոր վկաները, էջ 549-550:

## “TRAVEL NOTES” BY CORNEILLE LE BRUYN AS A SOURCE FOR STUDYING THE HISTORY OF ARMENIAN SETTLEMENTS

ELIZABETH TADJIRIAN

### SUMMARY

Corneille le Bruyn, a Dutch artist, traveller and writer, escorted by Jacob Davidov and Peter Arkhanguel - Armenian merchants from Julfa - travelled in Russia, following the route Astrakhan - Ispahan, via Shamakhi and Ardebile. He wrote a detailed description of what he saw.

“Travel Notes” by le Bruyn is one of the most valuable sources of study on the Armenian settlements situated on this route.

If, in his “Travel Notes”, the author simply minutes the existence of Armenian settlements in Astrakhan and Shamakhi, describes the areas populated by Armenians, and narrates the transit role of the Armenian settlements in Armeno-Russian trade, then there is considerably more evidence on the Armenian settlements in New Julfa. The town, the mansions of opulent Armenians, all the sites of the Armenian churches in use at the time are described in detail.

Le Bruyn’s writings on the political structure, self-governing principles, and taxation policy implemented by the Persian Government in Armenian settlements in New Julfa are supported by both Armenian and foreign sources of the time.

Le Bruyn’s factual reports on Armenian folk customs, traditions and ways, on spiritual and folk fetes (christening, wedding, dowry, blessing of the waters, “Holy Rood”, funeral, etc.) are of extreme interest.

Of equally extreme importance are the etchings by le Bruyn (“Astrakhan”, “Shamakhi”, “Sight of forcible Islamization”, “New Julfa”, “Fête of Holy Rood”, “Portrait of Armenian women”, etc.).



## ՀԱՅԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԵՒՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔՈՒՄ

(18-րդ դարի երկրորդ կես)

Վ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Վաղնջական ժամանակներից հաստատուելով Վրաստանում՝ հայերը դործուն մասնակցութիւն են ունեցել այդ երկրի տնտեսական, հասարակական-քաղաքական եւ մշակութային կեանքին:

Վրաստանի, յատկապէս Արեւելեան Վրաստանի քաղաքներում կար զգալի թուով հայ բնակչութիւն, որը երկրի տնտեսական կեանքում իր որոշակի տեղն ունէր: Տփղիսում ուսական կառավարութեան ներկայացուցիչ, գնդապետ Ս. Բուռնաշեւը գրում է, որ տեղի հայերը 18-րդ դ. 80-ական թուականներին բաժանուում էին հետեւեալ դասերի. ազնուականներ, առետրականներ, արհեստաւորներ եւ երկրագործներ:<sup>1</sup> 18-րդ դ. Տփղիսը հիմնականում մանր ապրանքային արտադրութեան եւ արհեստագործութեան կենտրոն էր: Իշխան Ա. Մուրաւուովի 1770 թ. վկայութեամբ՝ քաղաքում բնակուում են բաւական մեծ քանակութեամբ արհեստաւորներ:

Կապիտան Ն. Եազիկովի զեկուցագրում (1770 թ.) եւս շեշտուած է Տփղիսի արհեստաւորների բազմաքանակութիւնը:<sup>2</sup> Այդ արհեստաւորների մեծ մասը հայեր էին, որոնք միաւորուած էին համաքրութիւնների մէջ: Նրանց արտադրանքը հայ վաճառականներն արտահանում էին Պարսկաստան, Թուրքիա, Ռուսաստան եւ այլուր: Գնդապետ Ս. Բուռնաշեւի վկայութեամբ՝ Տփղիսի հայ վաճառականները «առետուր են անում Պարսկաստանի եւ Հնդկաստանի հետ՝ Ռուսաստանից բերած ոչ մեծ քանակով ապրանքներով, իսկ այնտեղից՝ (Պարսկաստանից եւ Հնդկաստանից՝ Վ.Մ.) քարաւաններով ստանում են

1. С.Д. Бурнашев, картина Грузии или описание политическое состояния царств карталинского и кахстииского, Тифлис, 1896, стр. 1

2. А. Цагорели, грамота и уругие, исторческие документы XVIII столетия, относящиеся к Грузии, вып. I, Т. I, СПб. 1891 стр. 2., 217, 188



մետաքսեայ, բամբակեայ հնդկական եւ պարսկական գործուածքեղէն, կերպասներ, ինչպէս նաեւ ճենապակեայ սպասեղէն, համեմունքներ: Նրանք աշխոյժ առեւտուր են անում լեռնականների եւ պարսկահայատակ մերձակայ հարեւանների հետ՝ արհեստագործական ապրանքներով, այսինքն՝ պղնձէ սպասեղէնով, բամբակեայ դաջուած, ներկուած եւ ճերմակ գործուածքեղէնով, ձիու սանձով եւ թամբով, սրերով եւ դաշոյններով, երկաթեայ մանր իրերով, հագուստեղէնով, գլխարկներով եւ կօշկեղէնով, քանի որ կովկասեան գրեթէ բոլոր ժողովուրդները եւ դրացի միւս ժողովուրդները իրենց նման կարիքները հոգալու համար օգտուում են տփղիսաքնակ հայերի աշխատասիրութիւնից: Տփղիսում կայ թանկարժէք եւ արհեստագործական ապրանքների, նպարեղէնի մօտ 500 խանութ»:<sup>3</sup> Գորիում, Սղնախում, Անանուրում, Քութախում եւ այլուր բնակուող հայ վաճառականները եւս մեկնում էին Ռուսաստան, Պարսկաստան, Թորքիա եւ Հնդկաստան ու այնտեղից կանխիկ զրամով ապրանք գնում:<sup>4</sup>

1812 թ. կազմուած պաշտօնական զեկուցագրի համաձայն՝ Տփղիսը կանոնաւոր առեւտրական կապեր ունէր Կարինի, Բայազետի, Ախալցխայի, Կարսի, Կոստանդնուպոլսի, Ալեքսանդրիայի, Երեւանի, Խոյի, Թաւրիզի, Նախիջեւանի, Թեհրանի, ինչպէս նաեւ Պաղտատի, Սպահանի, Բենդերբուշիրի եւ այլ քաղաքների հետ:<sup>5</sup> Այսպէս, օրինակ, 1783 թ. Դեկտեմբերի 25-ին Կաթողիկոս Ղուկաս Կարնեցին Տփղիսի մելիք-տանուտէր Աւետիք Բեհրու-թեանին գրում է, որ ինքը կատարել է վերջինիս խնդրանքը եւ թուղթ է գրել Պաղտատ, որպէսզի տեղի հայերը օժանդակեն եւ հովանաւորեն Աւետիքի եղբոր որդուն՝ Իվանէին, որն առեւտրական գործերով գնացել է «Ի Պաղտատ եւ Ի Շամ»:<sup>6</sup> Նոյն 1783 թ. Յունուարին նա Պասրայում գտնուող Ստեփանոսին եւ Բեթղհեմեան Յովհաննէսին գրում է, որ «Թիֆլիզցի Աֆթանդիլի որդի Բէջան անուամբ այր մի, որ շատ ժամանակ յայդ կողմունսդ է եղեալ, զոր եւ դուք թերեւս ճանաչեցէք: Իսկ այժմոյս է ի Թիֆլիզ: Սոյն Բէջանս եկն ի սուրբ աթոռս եւ առ մեզ, եւ իւր յօժար կամօքն ուխտեաց եւ ի ներկայութեամբ արհիեպիսկոպոսոսաց սրբոյ աթոռոյս եւ առաջի մեր գրեաց զկտակ, զի իւր բոլոր կայից եւ ընչից տասնէն մէկն սրբոյ աթոռոյս լիցի: Եւ յետ այսորիկ, զթիֆլիզցի Գասպարի որդի պարոն Կարապետն վէքիլ արարին ինքեան հաստատուն գրով, որ գայ յայդ (Պասրայի - Վ.Մ.) կողմունսդ, եւ ուր որ առնելիք գոն իւրեան, առնուցու: Եւ նախապէս չորս հարիւր թուման նոյն վէքիլ պարոն Կարապետն վեր առնուցու, զի ինքն Բէջանն տալուցէ նմա»:<sup>7</sup>

Այս վաւերագիրը եւս վկայում է Հնդկաստանի հետ տփղիսաքնակ հայերի

3. Ս. Գ. Բուրմաշեւ, նշւ. աշխ., էջ 2-3

4. Պ. Գուգուշվիլի, Վրաստանի եւ Անդրկովկասի տնտեսական զարգացումը 19-րդ-20-րդ դդ., Թբ. 1949, հ.1, էջ 110-111 (վրացերէն)

5. Акты кавказской археографической комиссии (այսուհետեւ ԱԿԱԿ) Т. V., док. 396 стр. 332-340

6. Մ. Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 2803, ք. 193 ա

7. Մ. Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռ. 3738, ք. 242 ք

ունեցած առեւտրական կապերի մասին: Նոյն Խաղակենց Գասպարի որդի Կարապետը, որն առեւտրական գործերով մեկնում էր Հնդկաստան, 1790 թ. Մարտի 21-ի իր լիազօրագրի համաձայն մինչեւ վերադառնալն իր ունեցուածքի լիազօր է կարգում իր փեսայ Դեմետրէին:<sup>8</sup>

18-րդ դ. վերջերին կազմուած մի վաւերագրի համաձայն տփղիսեցի վաճառական Խանդակենց Դեմետրէն Հնդկաստանից 1400 թումանից (14.000 ո.) ճոթեղէն եւ մի քանի տասնեակ հազար ռուպլու ակնեղէն է բերել:

1800-ական թուականների մի պաշտօնական զեկուցագրի վկայութեամբ Տփղիսում Վրաստանի հայերը նշանակալից առեւտուր էին անում:<sup>9</sup> Ուշագրաւ է, որ քաղաքի վաճառականների համաքրութիւնը մրցակցութիւնից խուսափելու նպատակով օտարերկրացի վաճառականներին պարտադրում էր իրենց ապրանքն ամբողջական կամ հակերով վաճառել: 1808 թ. կազմուած վրացական մաքսային սակազնի համաձայն հայ առեւտրականները Հնդկաստանից ներմուծում էին ակնեղէն, բրդեայ եւ մետաքսեայ գործուածքներ, ներկեր, պողպատ, դաշոյնների եւ սրերի սայրեր, համեմունքներ, սառնաշաքար, թէյ, սուրճ, թուղթ, վառօդ, լեղակ, պղնձարջասպ, ասեղներ, քորոցներ, թել, հովանոցներ, ապակէ ու յախճապակէ սպասեղէն եւ այլն:<sup>10</sup>

Վրաստանում բնակուող հայ վաճառականները վաղուց ի վեր առեւտրական կապեր ունէին Պարսկաստանի հետ, եւ պարսկական շահերից ձեռք էին բերել իրենց ապրանքներից գանձուող մաքսի 50 տոկոս զեղչի արտօնութիւն:<sup>11</sup> Պարսկաստանից հայ վաճառականները ներմուծում էին բրդեայ գործուածքներ, դիպակ, ոսկեայ եւ արծաթեայ թելերով ասեղնագործուած բազմբանգ մետաքսեայ կերպասներ, շալեր, մետաքսեայ եւ բրդեայ նուրբ գործուածքներ, գօտիներ, բարձրի թաւշեայ երեսներ, բազմոցների ծածկոցներ, կտաւ, չիթ, մոմլաթ, մորթեղէն, շաքար, չամիչ, դեղորայք, անուշադր, զանազան ներկեր, համեմունքներ, գորգեր եւ կարպետներ, ակնեղէն, սպասեղէն, բամբակ, աղ եւ այլն:

Թուրքիայից նրանք ներմուծում էին ծածկոցներ, գլխաշորեր, ոսկեկար եւ արծաթակար դիպակներ, մետաքսեայ գործուածքներ, խունկ, սուրճ, շաքար, թէյ, զանազան համեմունքներ, յակինթ, մարջան, երկաթ, պողպատ, անագ, ձիթապտուղ, վարդի եւ ձիթապտղի իւղ, ծծումբ, սելիտրա, ծխախոտ, լիմոն, ծխամորճեր, ապակեայ ու բիրեղապակեայ սպասեղէն, հայելիներ, ապակի, օճառ, աղ, սեկ, բամբակ, բամբակեայ գործուածքեղէն եւ այլն:<sup>12</sup>

8. Վրաստանի ԳԱ ակադ. Կ. Կեկելիձէի անուան Ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, Ֆ. Hd. վաւ. 7752

9. ԱԿԱԿ. Т. V. гок. 396. сmp. 332-340

10. Ձ. ձիւնիմատ, Վրաստանի առեւտուրը եւ արդիւնաբերութիւնը հնում, Թբ., 1905, էջ 19-20 (վրացերէն):

11. Ռուսաստանի արտաքին բաղաձայնութեան արխիւ (այսուհետեւ՝ ՌԱՔԱ), ֆոնդ Ռուսաստանի յարաբերութիւնները Պարսկաստանի հետ, 1777-1778 թթ. գ. 484, ք. 14 ք:

12. Պ. Գուգուշվիլի, նշւ. աշխ., հ.1, էջ 116



Վրաստանի հայ վաճառականներն առևտրական կապեր ունեին նաև Ռուսաստանի հետ: Նրանք իրենց ապրանքներն առաքում էին ոչ միայն Աստրախան, Մոսկուա, այլև Արխանգելսկ եւ թերեւս այնտեղից էլ արտասահման: 1712 թ. Փետրուարի 5-ին տփղիսեցի վաճառականներ Մամաջանը, Աւթանդիլն ու Յարութիւնը դիմում են Պետրոս 1-ին եւ խնդրում թոյլ տալ օգտուելու Նոր Ջուղայի հայ վաճառականներին տրուած արտօնութիւններից: Նրանց խնդրանքը բաւարարոււմ է որոշ պայմանով: Սենատի 1712 թ. Փետրուարի 12-ի հրամանագրով նրանց թոյլատրոււմ է «ինչպէս Մոսկուայում, այնպէս էլ Արխանգելսկում ազատ առևտուր կատարել այնպէս, ինչպէս՝ պարսկահայերը: Իսկ եթէ նրանք զգալի քանակով հում մետաքս չեն բերի, այլ միայն դիպակ եւ այլ մանր ապրանքներ, ապա նրանցից մաքս գանձել նոյն կարգով, ինչ կարգով, որ գանձոււմ է օտարերկրեայ վաճառականներից՝ առևտրական կանոնադրութեան համաձայն»:<sup>13</sup>

Հայ վաճառականների առևտրական կապերը Ռուսաստանի հետ առանձնապէս աշխուժացան 18-րդ դ. երկրորդ կէսին, երբ վերստին բացուեց «օսեթական ճանապարհը», որն անցնում էր Դարիալի կիրճով: Քարթլիի թագաւոր Թեհմուրազ 2-րդն այդ առթիւ 1755 թ. իր հրովարտականներից մէկում գրել է. «սրանից առաջ երբեք չի պատահել, որ Օսեթիայի միջով քարաւանի ճանապարհ անցնէր եւ լեռնային ճանապարհով քարաւան, վաճառական ու սովորաբար ժամանէր եւ այդ ճանապարհով քաղաք (Տփղիս-Վ.Մ.), վաճառելիք ապրանք առաքուէր:

Եւ այժմ Աստուած մեր թագաւորութեան օրօք անսահման ողորմածութիւն ցուցաբերեց մեր նկատմամբ եւ այս ճանապարհով այժմ վաճառականներ ու քարաւաններ են գալիս քաղաք»:<sup>14</sup> Նոյն հրովարտակով Թեհմուրազ Բ.-ն այդ ճանապարհով առաքուող ապրանքների վրայ ցածր մաքս սահմանեց, որպէսզի այդ ճանապարհով էլ աւելի շատ վաճառականներ ու քարաւաններ երթեւեկեն:<sup>15</sup> Սակայն, ինչպէս նշում է վրաց պատմաբան Շ. Մեսխիան, շուտով «օսեթական ճանապարհով» սկսեցին այնքան մեծ քանակութեամբ ապրանքներ ներմուծուել, որ այլեւս խրախուսող միջոցառումների կարիքը չէր զգացոււմ, ուստի 1771 թ. Հերակլ Բ.-ը վերացրեց վերոյիշեալ արտօնութիւնները:<sup>16</sup> Այդ ճանապարհը, որ շուտով «Ռուսեթի ճանապարհ» անուանոււմ ստացաւ, արդէն 18-րդ դ. վերջին քառորդին հայ առևտրականների կանոնաւոր երթեւեկի ուղին էր:<sup>17</sup>

Մանուշար Սահակովի տուած ցուցումից երեւում է, որ Գորիի հայ

13. «Հայ-ռուսական յարաբերութիւնները 18-րդ դարի առաջին երեսնամեակում» փաստաթղթերի ժողովածու, հ. 2 մաս 1, Երեւան, 1964, էջ 60-61 (ռուսերէն)  
 14. Շ. Մեսխիա, Դ. Գվրիաշվիլի, Մ. Դուրբաճ, Ա. Սուրգուլաճ, Թրիլիսիի պատմութիւնը, Թր., 1958, էջ 229 (վրացերէն)  
 15. Մ. Մ. Месхиа «Города и городской строй феодальной Грузии, Тбилиси 1969 стр. 14  
 16. Նոյն տեղում, էջ 114  
 17. Վրաստանի պատմութիւնը, Թր., 1949, էջ 386-387 (վրացերէն)

վաճառականները եւս աշխոյժ առևտուր էին անում Ռուսաստանում: Ահա թէ ինչ էր ասել յիշեալ Մ. Սահակովը. «Գորիից գնացել եմ Թիֆլիս, իսկ Թիֆլիսից առևտրական քարաւանի հետ Ղզլար՝ իմ սեփական ապրանքը... վաճառելու համար»:<sup>18</sup>

Ինչպէս յայտնի է, Թեհմուրազ Բ.-ը Ռուսաստանից ռազմա-ֆինանսական օգնութիւն հայցելու նպատակով 1760 թ. մեծ շքախմբով մեկնել է Պետերբուրգ: Ռուսական իշխանութիւններին նրա ներկայացրած ցուցակից երեւում է, որ շքախմբի կազմում կային նաև հայ վաճառականներ, որոնք առևտրական գործերով մեկնում էին Աստրախան, Մոսկուա, Պետերբուրգ: Նրանք միաժամանակ հոգում էին Թեհմուրազ Բ.-ի շքախմբի նիւթականը: Այդ է վկայում նաև հետեւեալ փաստաթուղթը. «Այս պարտաւորագիրը մենք մոքալաքներս մելիք Սահակը եւ տանուտէր Պապան, Տէր-Շմաւոնեց Օհանը, Բաստամեց մղզսի Մելքոնը, մղզսի Աւետիքի որդի Գասպարը, Տէր Ղազարի որդի Շաքարը, Շերգիլեց Յովսէփի որդի Պապան, Լիոնեց խնչատուրի որդի Պապան, Ենոքի որդի Մկրտումը, Ալեքսանի որդի Եսային, Չիթախեց Մելքոնի որդի Չիթախը, Չոհրաբեց Պետրոսը, Չիթախեց Պապայի որդի Փարսազանը, Տուլոնեց Փահիի որդի Գիորգիին եւ խնչատուրի որդի Սունրաթը համատեղ, տուեցինք ձեզ՝ Պաղտատեց Գէորգիին, Փիրղուլեց Նազարին եւ Բուձգուլեց Մելիքին առ այն, որ դուք մեր քաղաքի եւ երկրի գործով երջանիկ արքայից արքայ տէր Թեհմուրազի ծառայութեանն անցաք: Եւ եթէ նա (Թեհմուրազ Բ.-ը Վ.Մ.) այնտեղ (Ռուսաստանում-Վ.Մ.) կարիք ունենայ, դուք պատշաճ ծառայութիւն եւ հոգատարութիւն ցուցաբերէք եւ այնտեղի գործը առաջ մղէք: Իսկ եթէ այդ գործում ձեզ որեւէ վնաս հասնի եւ դրամական ծախսեր ունենաք, ապա մենք բոլորս պարտաւորոււմ ենք քաղաքից (Տփղիսից-Վ.Մ.) ժողովել (դրամ-Վ.Մ.) եւ տալ ձեզ, դրանով իսկ հատուցել ձեր կրած վնասը եւ ձեզ զերծ պահել վնասից, իշխողների եւ երկրի օժանդակութեամբ:

Գրուեց քաղաքում Ապրիլի 1-ին, քրոնիկոնի 448 թ. (1760 թ.):<sup>19</sup> Մեզ է հասել նաև Հերակլ 2-րդի եւ նրա հօր՝ Թեհմուրազ 2-րդի պարտաւորագիրը՝ Պետերբուրգից վերադառնալուց յետոյ յիշեալ անձանց ծախսերը հատուցելու մասին»:<sup>20</sup> Ըստ երեւոյթին, վրաց արքունիքում ընդունուած կարգի համաձայն թագաւորին կամ արքայազնին օտար երկիր ուղեկցելու եւ նրանց նիւթական հոգալու պարտականութիւնը դրւում էր տփղիսաբնակ հայ ունեւոր վաճառականների վրայ: Այսպէս, օրինակ, երբ 1771 թ. դարձեալ քաղաքական ակնկալութիւններով Ռուսաստան է մեկնում արքայազն Լեւանը, այդ պարտականութիւնը դրւում է Ջանդագեց Ղվթիսավարի եւ քաղաքի երեք այլ հայազգի քեղխուղանների վրայ»:<sup>21</sup>

18. Ռ.Ա.ՔԱ, ֆոնը՝ Ռուսաստանի յարաբերութիւնները Վրաստանի հետ, 1756 ք. գ. 6: ք. 2  
 19. Վրաստանի ԳԱ ակադ. Կ. Կեկելիձէի անուան Ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, ֆ. Իժ վաւ. 13114  
 20. Նոյն տեղում, ֆ. Իժ վաւ. 13114  
 21. Նոյն տեղում, ֆ. Իժ վաւ. 13710



Ինչպէս արդէն նշուեց, 18-րդ դ. երկրորդ կէսին Դարիալի կիրճով դէպի Ռուսաստան տանող ճանապարհի բացումը աշխուժացրեց առեւտրական կապերը Ռուսաստանի հետ, որոնց մասնակից դարձան նաեւ Գորիի, Դուշեթի, Անանուրի, Արեւմտեան Վրաստանի՝ Իմերէթի կենտրոն Գուլթախի քաղաքի հայ վաճառականները: Այսպէս, 1783 թ. Մարտի 28-ին Մոզդոկում տփղիսեցի տէր Ասատուրի որդի Առաքելը եւ զուշեթցի Ազիզի որդի Յակոբը պայմանաւորուում են իրենց ղրամագլուխը միաւորել եւ ապրանք տանել Տփղիս՝ վաճառելու:

Քանի որ համեմատաբար քիչ են տուեալները Իմերէթի տարածքում բնակուող հայերի առեւտրական գործունէութեան մասին, ուստի այդ մասին վկայող փաստերից մէկը մէջ ենք բերում քաղուածաբար. 1787 թուականի Ապրիլին Պաւել Պոտեոմկինին է դիմել՝ Աստրախան գնալու թոյլտուութիւն ստանալու համար Գուլթախի բնակիչ Ասատուր Միկիրտումովը «խսկ այժմ ես՝ նուաստս, կամենում եմ մեկնել Աստրախան քաղաքը առեւտրական գործառութեան համար իմ որդի Իվանի հետ միասին...»: <sup>22</sup>

Տփղիսի հայ վաճառականները մասնակցում էին նաեւ ռուս-պարսկական առեւտրին: Այդ մասին է վկայում, օրինակ, այն, որ 1775 թ. Հոկտեմբերի սկզբներին Դերբենդի մօտ խորտակուած նաւի վրայ, որը պատկանում էր ռուս վաճառական Գաւրիլ Սկորցովին, գտնուում էին տփղիսեցի հայ վաճառականներ, որոնց ինչքը իւրացնում է Դերբենդի Ֆաթալի խանը: Հերակլ 2-րդը 1775-1776 թթ. դիմում է Եկատերինա 2-րդին, Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիայի պրեզիտենդ Ն. Պանինի եւ այլոց միջնորդութեանը՝ նաւաբեկութեան ենթարկուած Տփղիսի հայ վաճառականների ինչքը նրանց ընտանիքներին վերադարձնելու համար: <sup>23</sup> «Այն հանգամանքը, որ Հերակլ 2-րդ արքան որոշել էր հայցել Եկատերինա 2-րդ կայսրուհու օժանդակութիւնը՝ ապրանքները վերադարձնելու խնդրում, հիմք է տալիս ենթադրելու ապրանքների մեծ (հազարաւոր ռուբլիների հասնող) արժէքի մասին»: <sup>24</sup> 1788 թ. Փետրուարի 14-ին Մոզդոկի պարետ Վ. Ֆրամգոլդին Շերգիլենց Փարսաղանի որդի Յովհաննէսի յղած դիմումում մասնաւորապէս նշուած էր, որ լեռնականները կողոպտել էին 10 հազար ռուբլու արժողութեամբ ապրանք: <sup>25</sup> Ուշագրաւ է, որ Հերակլ 2-րդը եւս միջամտել է այդ գործին եւ կովկասի լեռնականներից պահանջել վերադարձնել կողոպտած ապրանքները:

Մոզդոկ ժամանած եւ այնտեղից մեկնած անձանց ցուցակներից (1780 թ. Մայիս) երեւում է, որ Տփղիսի հայ վաճառականները առեւտրական կապեր ունէին նաեւ Աստրախանի հետ: Յուշակը վկայում է, որ «Տփղիսի բնակիչներ Եսայի Յարութիւնովը, Պետրոս Բաղդասարովը եւ Յովսէփ Յարութիւնովը երկու վարձած սայլով ապրանք են բերել, Մոզդոկում էլ 100 աղուէսի մորթի

22. Ռուսաստանի հիմն ակտերի կենտրոնական պետական արխիւ, ֆ. 23, գործ 13, մասն 28, ք. 208  
 23. ՌԱՔԱ, ֆոնդ՝ Ռուսաստանի յարաբերութիւնները Պարսկաստանի հետ, 1776-1777 թթ., գ. 478, քք. 76-77, 93-99  
 24. В.Н. Гамрекели, торговые связи Восточной Грузии с северным кавказом в XVIII в. Тбилиси, 1968, стр. 70-71  
 25. В. Н. Гамрекели, Документы по взаимоотношениям Грузии с Северным Кавказом, Тбилиси, 1968, стр. 217

գնել եւ մտադիր են եղել Ղզլարով Աստրախան գնալ»: <sup>26</sup> Այդ ցուցակում յիշատակուած են նաեւ բազմաթիւ այլ տփղիսեցի հայ վաճառականներ, որոնք Մոզդոկ-Ղզլար-Աստրախան առեւտրական ուղիով յաճախ էին երթեւեկում: <sup>27</sup>

1785 թ. Հոկտեմբերին Հերակլ 2-րդը տփղիսեցի Գրիգոր Քեթխուղեանին ուղարկում է Աստրախան Պաւել Պոտեոմկինի մօտ, որպէսզի վերջինս որպէս Ռուսաստանի հարաւում տեղակայուած զօրքերի անմիջական հրամանատար, Գրիգոր Քեթխուղեանին թոյլատրի Աստրախանից Պաքուի վրայով պարբերաբար երկաթ առաքել Տփղիս՝ հրետանու եւ այլ կարիքներ հոգալու համար: <sup>28</sup>

Աստրախանում վրացահայ վաճառականների առեւտրական աշխոյժ գործունէութեան մասին է վկայում նաեւ հետեւեալ փաստը. 1792 թ. տփղիսաբնակ հայ վաճառականներ Մղղսենց Զուրաբը, Մուրադենց Զաւլը, Բոխորենց Գէորգը, Մանդինենց Գարրիէլը եւ Ռոստեւանը նաւով Աստրախանից մեկնելիս փորձել են տանել մօտ 20,000 ռ. (ոսկով): Այդ ոսկէ դրամը Աստրախանի նաւահանգստային մաքսատունը բռնագրաւել է, քանի որ ոսկէ դրամի արտահանումը Ռուսաստանից արգելուած էր: Հերակլ 2-րդը եւ թագուհի Դարեջանը 1792 թ. Սեպտեմբերի 26-ի եւ 29-ի նամակներով արտաքին գործերի կոլեգիայի պրեզիտենդ Ալեքսանդր Բեզբորոդկոյին եւ Եկատերինա 2-րդին խնդրել են բռնագրաւած ոսկէ դրամը վերադարձնել հայ վաճառականներին: <sup>29</sup> Այդ խնդրանքը յարգուել է:

Այն իրողութիւնը, որ Հերակլ 2-րդը եւ Դարեջան թագուհին հովանաւորում էին յիշեալ հայ վաճառականներին հիմք է տալիս կարծելու, որ վերջիններս սերտ կապերի մէջ են եղել վրաց արքունիքի հետ եւ արտաքին առեւտրական խոշոր գործարքներ են կատարել:

Իրաւացի է վրաց պատմաբան Մ. Ի. Տիկաձէն, երբ գրում է, որ «Անդրկովկասի եւ մասնաւորապէս Վրաստանի արտաքին առեւտուրը 16-րդ-18-րդ դարերում գրեթէ ամբողջովին հայ վաճառականների ձեռքին էր գտնուում» եւ որ «Վրաստանում բնակուող հայ վաճառականները պահպանել էին իրենց ազգային լեզուն եւ լուսաւորչական կրօնը»: <sup>30</sup>

Այսպիսով, բերուած փաստերը վկայում են, որ Վրաստանի քաղաքներում բնակուող հայ արհեստաւորները եւ վաճառականները 18-րդ դ. երկրորդ կէսին

26. Նոյ տեղում, էջ 222  
 27. Նոյն տեղում, էջ 222-228: Ուշադրութեան արժանի է նաեւ այն, որ Իմերեթիայում բնակուող հայերը եւս մասնակցում էին ռուս-վրացական առեւտրատնտեսական կապերին (նոյն տեղում, էջ 251, 253)  
 28. Ռուսաստանի կենտրոնական պետական ռազմա-պատմական արխիւ, ֆ. 52, ց. 193, գ. 20, ք. 17  
 29. ՌԱՔԱ, ֆոնդ Ռուսաստանի յարաբերութիւնները Վրաստանի հետ, ց. 110-2, 1774-1807 թթ., գ. 18, քք., 167-171  
 30. Մ. Տիկաձէ, Անդրկովկասի քաղաքների առեւտրական առնչութիւնները Սիրիայի քաղաքների հետ եւ Լեւանտի առեւտուրը 16-18-րդ դարերում, Մերձաւոր Արեւելի քաղաքների պատմութեան ակնարկներ, Թբ., 1970, էջ 219, 223 (վրացերէն)



զգալի մասնակցություն էին ցուցաբերում երկրի տնտեսական զարգացմանը:

Ներկայացնելով Վրաստանում հայերի առեւտրատնտեսական գործունեության պատկերը, այն փոքր ի շատ է ամբողջական դարձնելու նպատակով հարկ է խօսել նաեւ նրանց արտադրական-տնտեսական գործունեության մասին, առաջին հերթին նկատի առնելով Տփղիսում եւ այլուր բնակուող հայ արհեստաւորներին,<sup>31</sup> որոնք կազմում էին յատկապէս Արեւելեան Վրաստանի քաղաքների համաքրութիւնների հիմնական տարրը: Վրաց հետազօտող Ն. Արեսաձէն նշուած ժամանակաշրջանի մասին իրաւացիօրէն գրում է. «Արեւելեան Վրաստանի քաղաքների համաքրութիւններում արհեստաւորների հիմնական զանգուածը գերազանցապէս հայկական տարրով է ներկայացուած»:<sup>32</sup>

18-րդ դ. երկրորդ կէսին Տփղիսը, Գորին, Թելաւը, Սիղնաղը, Քութաիսը մանր ապրանքային արտադրութեան, արհեստագործութեան կենտրոններ էին, որոնցից գլխաւորը, անշուշտ, Տփղիսն էր:

Իշխան Մոռուրաւելը 1770 թ. նշել է, որ այստեղ «գոյութիւն ունի այլեւայլ արհեստաւոր մարդկանց բաւական մեծ քանակ»:<sup>33</sup> Կապիտան Եազիկովը նոյն թուականին կազմած զեկուցագրում նշում է Տփղիսի արհեստաւորների բազմաքանակութիւնը, ինչպէս եւ այն պարագան, որ արհեստաւորները ըստ իրենց արհեստների տեսակների առանձին-առանձին թաղերում (փողոցներում) էին տեղաբաշխուած:<sup>34</sup> «Այստեղ հենց շուկաներում, ինչպէս ընդհանրապէս Ասիայում, սովորաբար այլեւայլ արհեստանոցներ կան, մի փողոց զբաղեցնում են միայն մուճակագործները, երկրորդը՝ գլխարկագործները, երրորդը՝ դարբինները, միւսը՝ փականագործները, ոսկերիչները, մետաքսագործները, կաթսայագործները. այս բոլորը ժողովուրդի աչքի առաջ են աշխատում, օտարերկրացու համար սա այնքան հետաքրքրական տեսարան է, որ շուկայում զրօսնելը ամէնից հաճելի զրօսանքն է Տփղիսում»:<sup>35</sup>

Հարկ է նշել, որ տփղիսեցի արհեստագործներն աշխատում էին ոչ միայն ներքին, այլեւ արտաքին շուկաների համար: Իրանէ արքայազնի «Կալմասորա» հանրազնիտարանային երկի մէջ Տփղիսի շուկան նկարագրելիս թուարկուած են երկու տասնեակից աւելի արհեստներ:<sup>36</sup> «Տփղիսի միայն մէկ իջեւանատանը այդ ժամանակաշրջանում աշխատել են մօտ երեսուն տեսակի արհեստագործեր»:<sup>37</sup>

31. Լեւոն Մելիքեթ-Բեկ, Գարեջի «Մրաւամբայի» հայերէն վիմագրութիւնը եւ վրացերէն-հայերէն-ուիդուրերէն բազմալեզու արձանագրութիւն: Լեզուի, պատմութեան եւ նիւթական մշակոյթի պատմութեան ինստիտուտի լրարբեր 5-6-րդ, Թր., 1940, էջ 163 (վրացերէն)  
32. Վրաստանի ԳԱ «Լրարբեր» պատմութեան, հնագիտութեան, ազգագրութեան եւ արուեստի պատմութեան մատենաշար, 1, 1975, էջ 165 (վրացերէն)  
33. А. Цагарели, грамоты и другие исторические документы, относящиеся к Грузии, вып. II. СПб. 1898, стр. 27  
34. Նոյն տեղում, էջ 108  
35. Մ. Պոլիբեկովի եւ Գ. Նաթաձէ, Հին Տփղիսը, Թր., 1929, էջ 69 (վրացերէն)  
36. Ի. Բատոնիշվիլի, Կալմասորա, Թր., 1940, էջ 193-196 (վրացերէն)  
37. Իվ. Ջավախիշվիլի, Քաղաքները, Բաղաբային նիստուկացը եւ կեանքի ընթացքը Վրաստանում 17-18-րդ դդ. («Պրոմբեիւս» ամսագիր, 1918, 1, Թր., էջ 55 (վրացերէն))

Տփղիսի հայ ազգաբնակչութիւնը զբաղւում էր հետեւեալ արհեստներով, մուշտակագործութիւն, դերձակութիւն, ժամագործութիւն, մետաքսագործութիւն (մետաքսէ առասաններ պատրաստելը), թամբագործութիւն, մաշիկագործութիւն, գլխարկագործութիւն, ներկարարութիւն, ոսկերչութիւն, արծաթագործութիւն, զինագործութիւն, կաշեգործութիւն, մոմագործութիւն (չամչիութիւն), գործուածքի զարդագործութիւն, հացագործութիւն, լապտերագործութիւն, դարբնութիւն, փականագործութիւն, ջուլհակութիւն, մանածագործութիւն, հիւսնութիւն, ատաղձագործութիւն, աղիւսագործութիւն, որմնաղիրութիւն, պարանագործութիւն, տկագործութիւն, կաթսայագործութիւն, թաղիքագործութիւն, անագագործութիւն եւ այլն:<sup>38</sup>

18-րդ դ. 80-ական թուականների Տփղիսին քաջատեղեակ զնդապետ Ս. Բուռնաշելը նշում էր, որ տփղիսահայերը «...աշխոյժ առեւտուր են անում լեւոնականների եւ պարսկահպատակ մերձակայ հարեւանների հետ արհեստագործական ապրանքներով... քանզի կովկասեան գրեթէ բոլոր ժողովուրդները եւ դրացի միւս ժողովուրդներն իրենց նման կարիքները հոգալու համար օգտուում են տփղիսաբնակ հայերի աշխատասիրութիւնից»:<sup>39</sup>

Առեւտրի եւ արհեստագործութեան շնորհիւ Քարթլ-Կախեթի հայ ազգաբնակչութեան վերնախաւի ձեռքին կուտակւում էին որոշակի դրամական միջոցներ, աճում էր, այսպէս կոչուած «պատուաւոր» քաղաքացիների (մոքալաքների) թիւը, որոնք երկրի քաղաքական եւ տնտեսական կեանքում նշանակալից դեր էին խաղում»:<sup>40</sup>

18-րդ դ. 60-ական թուականների սկզբից Քարթլ-Կախեթի միացեալ թագաւորութեան գահին բազմած Հերակլ Բ.-ը քաջ գիտակցում էր, որ երկրի քաղաքական կայունութիւնը եւ պաշտպանունակութիւնը մեծապէս պայմանաւորուած են երկրի տնտեսական զարգացման մակարդակով: Այդ իսկ պատճառով, նա ամբողջ եռանդով հովանաւորում ու խրախուսում էր առեւտրի եւ արդիւնագործութեան զարգացումը: Ահա թէ այդ առթիւ ինչ է գրում Ս. Բուռնաշելը «...ոչ մի բանի սակայն (Հերակլ Բ.-ը) այնպէս չի ձգտում, ինչպէս իր ժողովրդին եւրոպական ձեւով վերափոխելուն»:<sup>41</sup>

18-րդ դ. երկրորդ կէսին հիմնւում են համեմատաբար խոշոր արտադրական ձեռնարկութիւններ, որպիսիք, թէեւ արքունի սեփականութիւն էին համարուում, սակայն յանձնւում էին կապալով: Որպէս կապալառուներ հանդէս էին գալիս հայ մեծահարուստները: Այդպիսի ձեռնարկութիւններից էին թնդանօթի գործարանը, օճառի, ապակու, վառօղի գործարանները, արքունի փողերանոցը (զարափխանան), տպարանը, մի շարք ներկատներ եւ այլն: Այդ

38. Պ. Գուգուշվիլի, նշ. աշխ., հ. 5-րդ, Թր., 1962, էջ 127 (վրացերէն)  
39. Ս. Գ. Բուրնաշել, նշ. աշխ., էջ 23  
40. Գ. Գոգոլաձէ, Վրաստանում մինչ ռեֆորմեան ժամանակաշրջանի կապիտալիզմի սկզբնաւորման հարցի շուրջ, Մնաքորի, Թր., 1959, էջ 115 (վրացերէն)  
41. Ս. Գ. Բուրնաշել, նշ. աշխ., էջ 10



ժամանակաշրջանում Տփղիսում չընդգայած մի եւրոպացի ճանապարհորդ գրել է.

«Տփղիսում կայ զէնք ձուլելու գործարան, որտեղ փոքր քանակով թնդանօթներ են նաեւ պատրաստում, մորտիրներ եւ արկեր... թնդանօթների համար այստեղ պատրաստող վառօդը լաւորակ է: Հայերը այս քաղաքում հիմնադրել են այն ամէն արդիւնագործութիւնը, որով նրանց հայրենակիցները հուշակուած են Պարսկաստանում: Այստեղ նրանք առանձնապէս ծաղկեցրին ներկած գործուածքեղէնի արտադրութիւնը: 42 Թնդանօթների արտադրութիւնը կատարելագործելու եւ թնդանօթների որակը բարձրացնելու նպատակով Հերակլ 2-րդը 1794 թ. Ստեփան Մելիքեանին, որը մինչ այդ ապրել էր Ռուսաստանում, տիրապետում էր ռուսերէնին, ուղարկում է Պետերբուրգ՝ ինժեներական կորպուսում հրետանային գործը սովորելու եւ երկրին պիտանի դառնալու համար»: 43

Տարբեր արհեստի հայ վարպետներ էին աշխատում թնդանօթի գործարանում: Այդ է վկայում 1795 թ. Նոյեմբերի 18-ին Տփղիսի տանուտէրին Հերակլ 2-րդի տուած հրամանը: 44

18-րդ դ. Տփղիսում հայ արհեստաւորները արտադրում էին նաեւ վառօդ եւ այն վաճառում: Հերակլ 2-րդը 1770 թ. արգելեց վառօդի եւ սելիտրայի պատրաստումն ու վաճառքը: Այդ իրաւունքը նա շնորհեց միայն մի անձի՝ Թաղոյնց Եսայուն, 45 որի «գործարանը» լիովին բաւարարում էր պետական կարիքները: 1796 թ. Հերակլ 2-րդը Թաղոյաններին հողամաս է շնորհում, նրանց իրաւունք վերապահելով այդտեղ խանութներ բացելու եւ վառօդ վաճառելու: 46 Եսայու վառօդի «գործարանը» գտնւում էր Հաւլաբարի բերդի (Մետեխի) մօտ: Այն գոյութիւն է ունեցել մինչեւ 1806 թ., որտեղ կիրառուել է վարձու աշխատանք:

Արեւելեան Վրաստանի արտադրական ձեռնարկութիւնների շարքում 18-րդ դ. երկրորդ կէսին կարեւոր տեղ ունէին ներկատները, որոնց թիւը հասնում էր 50-60-ի: 47 Ներկատները սովորաբար կապալով էին յանձնւում, իսկ կապալառուները հիմնականում հայեր էին: Սրանք ներկարար վարպետներ կամ դրամատէր վաճառականներ էին, որոնք առեւտրից շահած իրենց կապիտալը ներդնում էին զանգուածային, ինչպէս եւ աւատատիրական հասարակութեան վերնախաւի գործածութեան համար արտադրանք թողարկող շահաւէտ այդ

42. Մ. Պոլիբեֆտով եւ Գ. Նաթաձէ, Եւր. աշխ., էջ 49-50  
43. Ա. Կլիմիաշվիլի, Հրետանագործութիւնը Արեւելեան Վրաստանում 18-րդ դ. երկրորդ կէսին, Վրաստանի ԳԱ Կ. Կեկելիձէի ան. Ձեռագրերի ինստիտուտ, Լրաբեր, 4-րդ, Թր., 1962, էջ 268 (վրացերէն)  
44. Նոյն տեղում, ֆ. 71, ձեռ. 13230, տես նաեւ Ա. Կլիմիաշվիլի, Եւր. աշխ., էջ 265  
45. Ա. Կլիմիաշվիլի, Եւր. աշխ., էջ 272  
46. Նոյն տեղում, էջ 272  
47. Ն. Բերձեմիշվիլի, Վրաստանի պատմութեան հարցեր, հ. 1, Թր. 1967, էջ 324, 325, (վրացերէն), տես նաեւ Գ. Գոգոյաձէ, Եւր. աշխ., էջ 115-116

ձեռնարկութիւններում: Այսպէս, 1796 թ. Մարտի 1-ին Դարեջան թագուհին Եսայի վարպետին կապալով յանձնել էր մի ներկատուն եւ այդ առթիւ պայմանագիր կնքել նրա հետ: 48

Եթէ ներկատան կապալառուն ներկարար չէր, ապա համապատասխան վարպետ էր վարձում: Այդ է վկայում 18-րդ դ. մի ուշագրաւ վաւերագիր, որտեղ նշուած է, որ Տփղիսի ներկատների պետ Փիթոյնց էլիզբարը վարձել էր ներկարար Աւագին եւ նրան համապատասխան «ռոճիկ» վճարել: 49 Ուրեմն այստեղ գործ ունենք մանուֆակտուրային ձեռնարկութեան հետ, որտեղ կիրառւում էր վարձու աշխատանքը: Ներկատների գործունէութեան մէջ այդ ժամանակ աւելի ցայտունօրէն էին նկատուում բուրժուական յարաբերութիւնների ձեւաւորման նշանները: 50

Սոչոր ներկատներ կային Տփղիսում, Գորիում, Թելաւում, Սագառէջոյում, Անանուրում, Յիւինաւում եւ այլուր: Ներկատների կապալառուների թւում էին դրամատէր վաճառականներ Մ. Սուրբուհեանը, Ա. Միրիմանեանը, որոնք կապալով վերցրած ներկատներում կիրառում էին վարձու աշխատանք: 51

18-րդ դ. երկրորդ կէսին Քարթլ-Կախեթի համեմատաբար խոշոր արտադրական ձեռնարկութիւններից էր արքունի փողերանոցը: Արքունիքը այն սովորաբար յանձնում էր կապալով: 18-րդ դ. կէսերին այդ փողերանոցի կապալառուն էր մեծահարուստ վաճառական (խոջա) Բեհբուդեանների գերդաստանի ներկայացուցիչը, իսկ 1792 թ. այն 500 թուման կապալով վերցրել էին Մելիքեանց Շաքարի որդի Գասպարը եւ իր գործընկերները, որոնք ունեւոր մոքալաքներ էին: 52

Ներկատները, վառօդի գործարանը եւ փողերանոցը կապալով վերցնող անձինք ճորտատէր ֆէոդալներ չէին, որ կարողանային իրենց ձեռնարկութիւններում սեփական ճորտեր աշխատացնել: Ուրեմն, նման ձեռնարկութիւններում կիրառուել է վարձու աշխատանքը: Հետեւաբար, այդ արտադրական հաստատութիւնները կարելի է դասել մանուֆակտուրային բնոյթի ձեռնարկութիւնների շարքը, թէեւ պիտի նկատել, որ արհեստաւորական արտադրութեան համեմատ մանուֆակտուրան աւելի նուազ նշանակութիւն ունէր: 53 Մանուֆակտուրային բնոյթի ձեռնարկութիւններ էին նաեւ Յովսէփ Ղորղունեանի ձէթի գործարանը, Պենտելեանց Յովհաննի կաւէ ամանեղէնի ձեռնարկութիւնը, արքունի տպարանը:

48. Թագուհու հետ էր կնքուած պայմանագիրը, քանի որ ներկատների մեծաշնորհ սեփականատէրը Քարթլիում քաղուհին էր համարւում: Ներկատները հսկելու համար քաղուհին համապատասխան պաշտօնեայ ուներ՝ որը կոչւում էր ներկարարների պետ (մոքարարութուցեսի)  
49. Ն. Բերձեմիշվիլի, Եւր. աշխ., էջ 437  
50. Գ. Գոգոյաձէ, Եւր. աշխ., էջ 116  
51. Ն. Բերձեմիշվիլի, Եւր. աշխ., էջ 319-329  
52. Ակնարկներ Վրաստանի պատմութեան, հ. 5-րդ, Թր., 1973, էջ 552 (վրացերէն)  
53. Նոյն տեղում, էջ 553



Ինչպէս յայտնի է Վրաստանում տպարան հիմնադրուել է 1709 թ., սակայն թուրք-պարսկական զաւթիչների ներխուժումը, Տփղիսի զաւթումը եւ կողոպտումը 18-րդ դ. 20-ական թուականների սկզբներին խափանեցին մշակութային այդ կարեւոր հաստատութեան գործունէութիւնը: 18-րդ դ. երկրորդ կէսին այն վերականգնուեւ, ընդարձակուեւ եւ տեխնիկապէս բարելաւուեւ է: Մեզ է հասել այն պայմանագիրը, որ 1781 թ. Մայիսի 23-ին կնքուել է Հերակլ 2-րդի ներկայացուցիչ Մահտեսի Մելիտոնի եւ Պօղոս դպիր Արապեանի միջեւ, որին կոստանդնուպոլսից այդ նպատակառոյ (ըստ երեւոյթին կաթողիկոս Ղուկաս Կարնեցու միջնորդութեամբ) հրաւիրել էին Տփղիս: 54 Պօղոս դպիրը յաջողութեամբ գլուխ է բերել տպարանը վերաստեղծելու գործը: 1783 թ. Ղուկաս Կարնեցին այս առթիւ իր շնորհաւորանքներն էր յղել Հերակլ 2-րդին:

Քաղաքաբնակ հայերից շատերը զբաղուեւ էին նաեւ այգեգործութեամբ եւ բանջարագործութեամբ: Այսպէս, Սեյիդաբաղում (Տփղիսի շրջաններից մէկը -Վ.Մ.) պտղատու այգիներ ունէին Բեհրուդեանները: 55 «Տփղիսի գլխաւոր գեղեցկութիւնը, - գրում է ուս գրող Զուբովը, - կազմում են բազմաթիւ այգիները, որոնք լի են բոլոր տեսակի հիանալի պտուղներով»: 56

Ի մի բերելով վերը շարադրածը, կարող ենք եզրակացնել, որ 18-րդ դ. երկրորդ կէսին Վրաստանում բնակուող հայերը գործուն մասնակցութիւն ունէին երկրի տնտեսական կեանքի բոլոր ոլորտներին: Գնալով տնտեսապէս աւելի էր հզօրանում քաղաքաբնակ առեւտրա-արհեստաւորական դասի վերնախաւը: Այդ շերտի հզօրացմանն աջակից էր լինում վրաց կենտրոնական իշխանութիւնը՝ իր օրէնսդրական միջոցառումներով: Դրանք էին քաղաքային կեանքի կարգաւորումը, առեւտրի եւ արդիւնագործութեան համար նպաստաւոր պայմանների ստեղծումը, մեծահարուստ հայազգի առեւտրականների սոցիալական սանդուղքով վեր բարձրացնելը՝ նրանց ազնուականի եւ իշխանի տիտղոսի շնորհումը, պետական կառավարմանը նրանց մասնակից դարձնելը: Այդ ձեռնարկումները ուղղուած էին առեւտրա-արհեստաւորական խաւի սոցիալական եւ տնտեսական դրութեան ամրապնդմանը: Որպէս այս ամէնի արդիւնք 18-րդ դ. վերջերին Վրաստանում արդէն կար բաւականին ազդեցիկ հայ առեւտրական բուրժուազիա, որն իր առաջին քայլերն էր անում նաեւ արտադրութեան ոլորտում:

54. Պայմանագրի տեքստը հրատարակել է Ա. Աղամբալը («Բանբեր Մատենադարանի» 3, 1956, էջ 115-120)  
 55. А.С. Хаханов, Полпожение армян в грузимском царстве (сборник статей «Братская помощь армянам, пострадавшим в Турции») М. 1897, стр. 660  
 56. Մ. Պոլիբիտով եւ Գ. Նաբաձէ, նշւ. աշխ., էջ 90

### ARMENIANS IN THE COMMERCIAL-ECONOMIC LIFE OF GEORGIA (SECOND HALF OF XVIIIth CENTURY)

V. M. MARTIROSIAN

#### SUMMARY

In the second part of the XVIIIth century a great number of Armenians lived in the towns of Georgia (Tbilisi, Goris, Sgnakh, Ananour, Douchet, Kutaisi), who sponsored by the Georgian authorities, played a visible role in the economic and commercial life of the country. It should be noted here that this group of Armenian citizens in turn, provided economic support during the diplomatic action of the Georgian leaders.

Armenian craftsmen's goods not only ratified the internal market, but were also exported to other countries. Most of the Georgian exported goods were produced by the Armenians. Georgia had economic relations with such regions as North Caucasus, Iran, Turkey, Syria, India and more especially Russia (Astrakhan, Moscow) through the new Danial canion road.

During the second half of the XVIIIth century the latter part of Armenian tradesmen and craftsmen became refugees and the role they played in the political life of the country became more important.

By then there was already an Armenian bourg in Georgia taking its first steps in industry.



**ՀԱՅ—ՎՐԱՑ—ՌՈՒՍԱԿԱՆ  
ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ  
(18-ՐԴ ԴԱՐԻ 90-ԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ)**

**Պ. ՉՈՒԱՆԵԱՆ**

Ռուսաստանի արտաքին քաղաքականության ակտիւացման հետեւանքով 18-րդ դ․ երկրորդ կեսին աշխուժացան նաեւ հայ-ռուսական քաղաքական ու տնտեսական յարաբերութիւնները, աւելի ուժեղացաւ ինչպէս հայ, այնպէս էլ այսրկովկասեան միւս ժողովուրդների ձգտումը՝ Ռուսաստանի օժանդակութեամբ ազատագրուելու արեւելեան բռնապետութիւնների լծից: Պատմական ճակատագրի ու քաղաքական խնդիրների նոյնութիւնը օրյեկտիւօրէն բերում էր այդ ժողովուրդների քաղաքական գործիչների համագործակցելու անհրաժեշտութեանը: Այլ բան է անշուշտ, որ նման համագործակցութեան մասին վկայող փաստերի քիչ մասն է պահպանուել, սակայն եղած փաստերն էլ բաւական են արձանագրելու, որ այսրկովկասեան ժողովուրդների քաղաքական ու հոգեւոր առաջնորդները ոչ միայն հետեւում էին միմեանց գործունէութեանը, համաձայնեցնում իրենց քայլերը, այլեւ յաճախ փորձում էին սատար կանգնել միմեանց՝ այլ պետութիւնների հետ յարաբերութիւնների ժամանակ: Այդ առումով խօսուն են ինչպէս Իսրայէլ Օրու եւ Արչիլի հանդիպումները Մոսկուայում, Վախթանգ Ե-րդի եւ Արցախի ու Սիւնիքի ազատագրական շարժման առաջնորդների համագործակցութիւնը 1720-ական թուականներին, Յովսէփ Էմինի եւ Հերակլի բանակցութիւնները Թիֆլիսում, այլեւ Յակոբ Շամախեցի Կաթողիկոսի 1760 թ. Ելիզաւետա թագուհուն գրած նամակի փաստը, որտեղ խնդրում էր ընդառաջել վրաց Թէյմուրազ թագաւորի առաքելութեանը եւ նրա խնդրանքը դիտել նաեւ որպէս հայ ժողովուրդի կողմից առաջադրուած խնդրանք: Չի բացառուում անշուշտ, որ այդ նամակը գրուել է Թէյմուրազի խնդրանքով, որն էլ իրազեկ էր դարձրել Հայոց Կաթողիկոսին Ռուսաստան կատարելիք իր առաքելութեան բուն նպատակների մասին: Յայտնի է, որ Վրաստանում Թէյմուրազի առաքելութեան մասին միայն ապակողմնորոշիչ լուրեր էին տարածում՝ պարսկական վրէժխնդրութիւնից խուսափելու



համար: Առաքելութիւնը ներկայացում էր որպէս հօր եւ որդու՝ Թէյմուրազի եւ Հերակլի, միջեւ գոտութեան հետեւանք: Ամէն դէպքում ուշագրաւ է, որ Կաթողիկոսը գիտէր առաքելութեան բուն նպատակը եւ յատուկ նամակով փորձում էր օժանդակել այդ նպատակների իրականացմանը: Քաղաքական ակնկալութիւնների նոր հորիզոններ են բացում 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի բռնկումով եւ ռուսական զորքերի Վրաստանում ծաւալած ռազմական գործողութիւնների շնորհիւ: Պատերազմի աւարտն ու Քիւչուկ Կայնարջիում կնքուած պայմանագիրը որքանով ամրապնդում էր Ռուսաստանի դիրքերը հիւսիսային մերձսեւեծովեան շրջանում, այդքանով էր միայն գոհացնում հայ քաղաքական գործիչներին: Հայաստանը աւելի ոչինչ չստացաւ, թէեւ պատերազմի սկզբներին իսկ Մովսէս Սարաֆեանի միջոցով ծրագիր էր ներկայացուել ռուսական արքունիք՝ Ռուսաստանի ուշադրութիւնը բեւեռելով Այսրկովկասի եւ մասնաւորապէս Հայաստանի ազատագրութեան խնդրին:

Հայ-վրաց-ռուսական յարաբերութիւնները նոր որակ ստացան 1780-ական թուականների սկզբից: Հայ գործիչների համար յստակ էր, որ հայ-ռուսական յարաբերութիւնները մեկուսի, առանց Վրաստանի մասնակցութեան չեն կարող ձեւաւորուել Այսրկովկասում, Վրաստանը էական դեր պիտի խաղար ինչպէս իր աշխարհագրական դիրքի, այնպէս էլ ռազմա-քաղաքական ու տնտեսական շահերի առումով: Ամէն դէպքում չրջանցել Վրաստանը հայ-ռուսական յարաբերութիւններում հնարաւոր չէր: Աւելին, հայ-ռուսական յարաբերութիւնների սերտացման համար անհրաժեշտ էր աւելի լայնօրէն օժանդակել ոչ միայն վրաց-ռուսական յարաբերութիւնների բարելամանն ու խորացմանը, այլեւ հայ-վրացական փոխյարաբերութիւնները: Այդ է պատճառը, որ հայ հասարակական-քաղաքական գործիչները հայ ազատագրական ծրագրերում էական տեղ էին յատկացնում Վրաստանի դիրքորոշմանը եւ փորձում օժանդակել նրա հզօրացմանը: Պօսուն է այդ առումով նաեւ Շահամիր Շահամիրեանի օրինակն ու նրա՝ վրաց արքունիքի հետ կապերի պատմութեան փաստը:

18-րդ դ. հայ-վրաց-ռուսական յարաբերութիւններում ակտիւ գործունէութիւն էր ծաւալել Յովսէփ Արղութեանը:<sup>1</sup>

1. Յովսէփ Արղութեանը 18-րդ դարի վերջին Բաղրդի հայ խոշոր հասարակական-հաղափական գործիչներից մէկն է: Նա թէեւ աշխատել է բացառապէս Ռուսաստանում եւ 1773 թուականից յետոյ մինչեւ իր մահը (1801 թ.) Հայաստան այլեւ չի վերադարձել, կարողացել էր ճշգրիտ տեսնել իր ժողովուրդի պատմական ճակատագրի մէջ Ռուսաստանի ունեւալիք վեճական դերը եւ փորձում էր կազմակերպել հայ ժողովուրդի մէջ Ռուսաստանի արտաքին հաղափականութեան իրագործմանը յենարան լինելու պատրաստակամութիւն եւ այդ հաղափականութեան միջոցով ազգային անկախութեան վերականգման հնարաւորութիւն: Իր գործունէութեան նպատակներն ու հետեւանքները ձեւակերպել էր շատ խօսուն ձեւով. «Յուսամ յաստուած, թէպէտ ես մեռանիմ, բայց այսօրիկ գործք մեր ընդ մեզ ոչ եմ մեռանից, այլ կենդանի լինից եմ վասն հասարակ ազգին մերոյ օրինեցելոյ» (ԴՂՊ, Թ, էջ 102):

Ռուս-վրացական յարաբերութիւնները միջպետական բանակցութիւնների մակարդակով առաւել ինտենսիւօրէն սկսեցին զարգանալ 1782-1783 թուականներին եւ աւարտուեցին Գէորգիեւսկ ամրոցում ստորագրուած դաշնագրի ընդունումով: Դաշնագրի նախապատրաստական աշխատանքներին եռանդուն մասնակցութիւն էր ունեցել նաեւ Յովսէփ Արղութեանը, որը մեծ յոյսեր էր կապում այդ դաշնագրի կնքման հետ:<sup>2</sup> Դաշնագրի որոշ կէտեր հայ ժողովուրդի ազատագրական շարժումներին օժանդակելու համար օգտագործելու միջոցներ էր փնտրում նաեւ Շահամիր Շահամիրեանը: Վերջինս մասնաւորապէս շեշտում էր դաշնագրի Ծ-րդ կէտը եւ կոչ անում յենուելով այդ կէտի վրայ ընդարձակել Հայաստանի նկատմամբ Վրաստանի իրաւունքների ու հայ-վրացական պետութեան ձեւաւորման հարցը:

Այդ իր հերթին ապացուցում է, որ ոչ միայն գոյութիւն ունէր պայմանագրի հայերէն թարգմանութիւնը, այլեւ այն ուղարկուել էր նաեւ Հնդկաստան, որից պիտի օգտուած լինէր Շահամիր Շահամիրեանը: Առաւել կարեւոր է, սակայն, նաեւ այն հանգամանքը, որ այդ պայմանագրով երկու պետութիւնները (Վրաստանն ու Ռուսաստանը) իրաւունք էին ստանում փոխանակել դեսպանութիւններ: Վրացական դեսպանութիւնը 1784 թ. ճանապարհւում է Պետերբուրգ Գարսեւան ճաւճաւաձէի գլխաւորութեամբ, իսկ Վրաստանում ռուսական լիազօր ներկայացուցիչ նշանակում է Ստեփան Բուռնաչեւը: Վրացական դեսպանութեան կազմում էր նաեւ երիտասարդ դիւանագէտ եւ գրական գործիչ Գէորգի Աւալիշվիլին:<sup>3</sup>

1784 թ. Պետերբուրգ է ժամանում նաեւ հայ ժողովուրդի լիազօր ներկայացուցիչ Ստեփան Դաւթեանը: Ղուկաս Կաթողիկոսի խնդրանքով Հերակլ Երկրորդը 1784 թ. Օգոստոսի 13-ին յանձնարարական նամակ է գրում Պ. Ս. Պոտեոմկինին եւ խնդրում «բարեհաճ լինել նրա նկատմամբ եւ օժանդակել նրան»:<sup>4</sup> Հայ եւ վրաց ժողովուրդների քաղաքական համագործակցութեան համար Պետերբուրգում եւս ստեղծում է կապող օղակ: Այդ կապերի առաւել եռանդուն կազմակերպիչ կրկին հանդէս էր գալիս անխոնջ Յովսէփ Արղութեանը, որը ռուսահայոց հոգեւոր առաջնորդի պաշտօնով այնտեղ էր գտնւում 1773 թուականից: Վրաց դեսպանութեան եւ Ստեփան Դաւթեանի

Յ. Արղութեանը իր եռանդազին գործունէութեան հետեւանքով յայտնուել էր հայ-ռուսական փոխյարաբերութիւնների հանգուցակետում: Նա ուշի ուշով հետեւում էր Այսրկովկասում իրադարձութիւնների ընթացքին, ռուսական արտաքին հաղափականութեան ելուէլուններին՝ այն հայ ժողովուրդի ձգտումների իրականացման համար օգտագործելու նպատակով:

2. Վ. Մարտիրոսեան, 1783 թ. Գէորգիեւսկի դաշնագիրը եւ հայերը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.» 1978, 9, էջ 92-100: Վ. Մ. Մարտիրոսեան, նոր վաւերագրեր Գէորգիեւսկի 1783 թ. դաշնագրի մասին, ՊԲՀ, 1978, 3, էջ 235-243

3. Վերջինիս գործունէութիւնը ուշագրաւ կապերով գուգորդուել է հայ ժողովուրդի մշակոյթի եւ պատմութեան հարցերին: Տես Պ. Ա. Զոպանեան, Վրաց ուղեգրութիւնները եւ նրանց տեղեկութիւնները հայերի մասին, Երեւան, 1981, էջ 107-131:

4. В.Н. Гамрекели, Межкавказские политические и торговые связи, т6, 1986, стр. 204



Պետերբուրգ ժամանման իսկ պահից Արղութեանը փորձում է կոորդինացնել նրանց գործունեությունը՝ այդ նպատակով ցուցումներ տալով ինչպես Ս. Դաւթեանին, այնպես էլ Գարսեւան Ճաւաւաճէին: Այսպէս, 1784 թ. Հոկտեմբերի սկզբներին Ստեփան Դաւթեանին (նոյն ինքը՝ Ստեփան Տէր Սահակեան) նա գրում էր. «Ահա դու գիտես, թէ զինչ ես առնելոց յայդը (իմա՝ ՍՊԲ-ում): Բաւական մխիթարութիւն է լինելոց քեզ ընդ ազնիւ աղա Յովհաննէսին եւ պարոն Մանչարեանց: ...Արքայազունքն եւս, քնեազ Գարսեւան էչկաղասարաչին, որք եկեալք են, նոքա եւս են քեզ մխիթարութիւն, ունիցիս առ նոսա երթեւեկութիւն, որպէս իւրեանց սեպհական այր, որ ի ժամ յետ դարձմանդ գրեսցեն արքային զհաւատարմութենէ քումմէ»:<sup>5</sup>

1783 թ. գարնանը ռուս-վրացական դաշնագրի նախապատրաստական աշխատանքների ժամանակ Յովսէփ Արղութեանը գրել էր (անշուշտ ռուսական իշխանությունների գիտություններ) նաեւ հայ-ռուսական դաշնագրի մի նախագիծ: Ստեփան Դաւթեանին ուղղուած վերոյիշեալ նամակում նա գրում է. «Յանցեալ ամին, մինչդեռ սոքա յոյժ ջերմ էին ի փրկութիւն մերազնէիցն եւ երկրին, մեք դաշնադրութեան տեսակ եւ կամ նիւթ ինչ պատրաստեալ էաք, որոյ սաւատն այժմ ուղեւորեմ առ քեզ՝ ցուցանել ում պատշաճ տեսանես մերազնէիցն եւ կամ էչկաղասարաչուն»:<sup>5ա</sup>

Հետաքրքիր է Յ. Արղութեանի մի նամակը, որ գրուած է Աստրախանից 1785 թ. Յունուարի 13-ին: Այդ նամակով Յ. Արղութեանը խնդրում է Յակոբ Ռէյնեգսին, որ նա յայտնի Գարսեւան Ճաւաւաճէին, թէ էջմիածնի կաթողիկոսը իրաւունք ունի նրա միջոցով եւս դիմելու կայսրին: Մեզ չյաջողուեց յայտնաբերել որոշակի գրաւոր վկայութիւն, սակայն միանգամայն տրամաբանական է ենթադրել, որ Յ. Արղութեանի առաջարկը պէտք է նախապէս համաձայնեցուած լինէր Հերակլ Երկրորդի հետ: Ուշագրաւ է, որ Յ. Արղութեանի այդ նամակները գրուած են վրացերէն:<sup>6</sup>

Հայ-ռուս-վրացական յարաբերությունները նոր երանգ են ստանում ռուս-թուրքական 1787-91 թթ. պատերազմի ժամանակ: Թէեւ պատերազմական գործողությունները տեղի էին ունենում Այսրկովկասի սահմաններից հեռու, սակայն հայ եւ վրաց ժողովուրդների ներկայացուցիչները որոշակի յոյսեր էին կապում Ռուսաստանի կողմից պատերազմի յաղթական աւարտից յետոյ կնքուելիք պայմանագրի հետ եւ գտնուում էին Եաշոււմ, որտեղ եւ պէտք է կնքուէր հաշտութեան պայմանագիրը: Եաշոււմ էին հաւաքուել ինչպէս ռուսական բանակի գլխաւոր հրամանատարութիւնն ու պալատական ներկայացուցիչները, այնպէս էլ խնդրին առնչուող ժողովուրդների ներկայացուցիչները, այդ թւում Յ. Արղութեանը, Ստեփան Դաւթեանը, Արեւմտեան Վրաստանից Բեսարիոն Գաբաշվիլին եւ Սիմէոնը, Արեւելեան Վրաստանից Գայոզ վարդապետն ու հայազգի Սուլխան Թումանեանը եւ այլք:

5. «Армяно-русские отношения в XVIII веке», 1700-1800. т. IV, Ер 1990, стр. 323  
 5ա. Նոյն տեղում: Հմմտ. А. Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ер., 1990, с. 45-48.  
 6. Վրաստանի ԳԱ Կ. Կեկելիձէի ամս. ձեռագրերի ինստիտուտ, ձեռ. 609, ք. 109:

Եաշոււմ էր գտնոււմ նաեւ Ի. Գեղեւանիշվիլին<sup>7</sup> որի տեղեկութեամբ ինքը մի շարք հանդիպումներ է ունեցել Յովսէփ Արղութեանի հետ եւ նրանք միասին են հրաւիրուել մասնակցելու հաշտութեան պայմանագրի ստորագրումից յետոյ տրուած ճաշկերոյթին, որտեղ ներկայ էին նաեւ օտարերկրեայ ներկայացուցիչներ եւ թուրքական պատուիրակութիւնը:

Պայմանագրում ուղղակիօրէն չարտացոլուեցին Այսրկովկասին առնչուող հարցեր: Պատուիրակութիւնները վերադարձան առանց որոշակի յաջողութիւնների: Էականը սակայն այն էր, որ Թուրքիան պայմանագրի հինգերորդ կէտով ձեռնպահ էր մնում Գարթլիի նկատմամբ թշնամական քայլերից:<sup>8</sup>

1795 թ. Աղա Մահմադ խանի կողմից Թիֆլիսի աւերումից յետոյ Յովսէփ Արղութեանը Նոյեմբերի 27-ին Գրիգորիուպոլից նամակով դիմում է Հերակլ Երկրորդին եւ յայտնելով իր դառն ապրումները այդ դէպքերի առթիւ, գրում է. «...յոյս Հայաստանեայց աշխարհի եւ թագաւորութիւն ձեր էր, ողբասցէն ընդ ձեզ ամենայն ազգ եւ ազինք հայոց՝ որք սփռեալք են ի ծագս աշխարհի»:<sup>9</sup> Յ. Արղութեանը յայտնում է նաեւ, թէ ինքը մինչեւ փորձանքի գալը շատերին է գրել եւ յայտնել, սակայն նրանք «ոչ հաւատային հաւատարմութեանն տանն Վրաց»:<sup>9</sup> Կատարուածն արդէն փաստ էր եւ Յովսէփ Արղութեանը յուսադրում է Հերակլին, թէ Ռուսաստանն անպաշտպան չի թողնի Վրաստանին: Աղա Մահմադ խանին պատժելու պատրուակով 1796 թ. Ռուսաստանը իրօք կազմակերպում է լայնածաւալ արշաւանք դէպի Այսրկովկաս: Յատուկ շրջաբերականով կայսրուհին դիմում է այսրկովկասեան բոլոր ժողովուրդներին՝ օժանդակելու ռուսական զօրքերին ազատագրելու Աղա Մահմադ խանի կողմից նրանց սպառնացող վտանգից: Յովսէփ Արղութեանը հրաւիրում է մասնակցելու արշաւանքին՝ օժանդակելու եւ ուղեկցելու ռուսական բանակին:<sup>10</sup> Յ. Արղութեանը ձեռնամուխ է լինում մի կողմից արշաւանքի իր պլանները մշակելուն եւ ռուսական հրամանատարութեանը ներկայացնելուն<sup>11</sup> եւ միւս կողմից Արցախի մելիքներին ու Հերակլ Բ-ին յորդորում աւելի հասատատակամօրէն օժանդակել ռուսական զօրքերին՝ յուսադրելով նրանց մօտակայ ազատութեան հեռանկարով: Մեզ է հասել մի հետաքրքիր վաւերագիր՝ Յ. Արղութեանի Շամախիից Հերակլ Բ-ին 1796 թ. Սեպտեմբերի 14-ով թուագրուած նամակը,<sup>12</sup> որը արժէքաւոր է մի շարք առումներով: Այն պատասխանն է Հերակլի՝ Յ. Արղութեանին գրած նամակի, որը պէտք է ներկայացուէր նաեւ Վալերիան Զուբովին: Դատելով Յ. Արղութ-

7. Յովհան Գեղեւանիշվիլու ուղեգրութեան մէջ հայերի մասին եղած տեղեկութիւնների բնութիւնը: Տե՛ս Պ. Ա. Չոպանեան, Վրացական ուղեգրութիւնները՝ եւ նրանց տեղեկութիւնները հայերի մասին, 1981, էջ 66-78:  
 8. Г. Г. Пайчадзе, Историческое значение Георгиевского трактата. «Из истории вековой дружбы», Ереван, 1983, с. 85.  
 9. «Армяно-русские отношения» IV, стр. 413  
 10. Նոյն տեղում, էջ 414, 418  
 11. Նոյն տեղում, էջ 435-439  
 12. Նոյն տեղում, էջ 439-440: Հմմտ. ՊԲՀ, 1977, թիւ 1, էջ 237-238



եանի պատասխան նամակից, Հերակլը խնդրել էր շուտափոյթ օգնութիւն ցուցաբերել ինչպէս դրամական, այնպէս էլ զինական առումով, սպառնալով հակառակ դէպքում նման օգնութեան համար դիմել այլ ուղիներէ: <sup>13</sup> Ակնարկելով այդ մասին Հերակլը կցել էր նաեւ թուրքական սերասկարից իր ստացած նամակը: Յովսէփ Արղութեանը ոչ առանց ռուսական հրամանատարութեան ցուցումի, պատասխանում է Հերակլ Բ-ին. «Ձեր ցանկութեան կատարումը կը լինի շուտով, երբ գնեցրալը զօրքով կը ժամանի ձեր մօտ: Մինչ այդ Վրաստանին օգնութիւնը եւ պաշտպանութիւնը հնարաւոր չէ: <sup>14</sup> Յ. Արղութեանը այնուհետեւ խորհուրդ է տալիս համբերատար ու հեռատես լինել եւ օժանդակութիւն չփնտռել թուրքերի մօտ. «չխմել այն պղտոր ջրից, որն արդէն բազմիցս... աննկարագրելի շարիքներ է բերել»:

Ռուսական հրամանատարութիւնը աշխատում է Յ. Արղութեանի ներկայութիւնը օգտագործել ինչպէս խաների հետ բանակցութիւնների ժամանակ, այնպէս էլ բանակը պարէնով ապահովելու համար միջոցներ հայթայթելու գործում: <sup>15</sup> Ռուսական զօրքերը 1796 թ. գրաւում են Դերբենտը, Պաքուն, Շամախին, Շաքին, Գանձակը: 1796 թ. Նոյեմբերի 6-ին մահանում է Եկատերինա Բ-ը եւ գահ բարձրացած Պաւել Ա-ի հրամանով արշաւանքը դադարեցւում է: Ռուսական զօրքերը բռնում են տունդարձի ճանապարհը եւ 1797 թ. վերադառնում Աստրախան: Ռուսական զօրքերի հեռանալուն հետեւում է Աղա Մահմատ խանի երկրորդ արշաւանքը դէպի Արցախ, որտեղ եւ նա կնքում է իր մահկանացուն: Հերակլ Բ-ը դի հրաւերով ու ռուսական իշխանութիւնների պահանջով Յովսէփ Արղութեանը անցնում է Վրաստան: Վրաստանի տնտեսական ու հասարակական - քաղաքական ծանր վիճակի պայմաններում Արղութեանի ներկայութիւնը պէտք է մեղմէր սոցիալական լարուածութիւնը: Բանն այն է, որ մեծացել էր արքունիքի քաղաքականութեան նկատմամբ դժգոհութիւնը եւ աճել էր պարսկական կողմնորոշումն ունեցող աւատատէրի դիրքը: <sup>16</sup> Դժգոհութիւնը մեծ էր յատկապէս առեւտրական կապիտալի ներկայացուցիչների, այն է՝ հիմնականում հայազգի բնակչութեան, մօտ, որն աւարտուեց 1797 թ. թագաւորական իշխանութեան վարկի խիստ անկումով եւ թագաւորի դէմ կազմակերպուած դաւադրութեամբ: <sup>17</sup> Հրաւիրելով Յովսէփ Արղութեանին Վրաստան Գ. Նելիզովը գրում էր 1797 թ. Ապրիլի 10-ին. «Վրաստանում գործերի ներկայ հանգամանքների բերումով ձեր ներկայութիւնը թիֆլիսում ինձ համար աւելի քան անհրաժեշտ է, որովհետեւ մի ողջ ազգի վստահութիւնը ձեր նկատմամբ պահպանում է, եւ ես դրանից

13. Տե՛ս Ա. Գ. Ղուկասեան, Յովսէփ Արղութեանը ռուսական զօրքերի 1796 թ. Անդրկովկասեան արշաւանքի ժամանակ, - ՊԲՀ, 1987, քիւ 3, էջ 91  
 14. «Армяно-русские отношения», IV, стр. 439-440  
 15. Նոյն տեղում, էջ 443-445  
 16. «Վրաստանի պատմութեան ակնարկներ», IV, էջ 774 (վրացերէն)  
 17. Г. Натадзе, Крестьяне «Сахасо» в восточной грузии в конце XVIII века, мск, 1937, 4. V, с 364-365

սպասում եմ, որ եթէ կրկին որեւէ անհանգստութիւն տեղի ունենայ թիֆլիսում եղածի նման, ձերը բարձր սրբազնութիւն կարող էք կանխել ձեր խորհուրդներով, որում ինձ համոզում է եւ անցեալ դէպքը, որի մասին ես չեմ զլանայ հաղորդելու բարձր հրամանատարութեանը»: <sup>18</sup> Մինչեւ 1797 թ. Յունիս ամիսը մնալով Վրաստանում Արղութեանը Արցախի Յրիզոն եւ Ջիմշիդ մելիքների հետ ճանապարհուում է Ռուսաստան: Բարձր գնահատելով Արղութեանի գործունէութիւնը Վրաստանում Հերակլը իր նոյն թուականի Յունիսի 10-ով թուագրուած նամակով յանձնարարում է նրան Վրաստանի վիճակի մասին հաղորդել ռուսական արքունիքին եւ հաւաստել Ռուսաստանի նկատմամբ Հերակլի հաւատարմութեան մասին: Նման նամակներ նա յղում է նաեւ Ի. Վ. Գուրգովիչին եւ Ա. Ա. Բեզորոդկոյին: <sup>19</sup> 1798 թ. Յունուարի 11-ին թելաւում մահանում է Հերակլ Բ-ը: Այդ մասին տեղեկանալով 1798 թ. Մարտի 8-ին Յ. Արղութեանը անմիջապէս Պետերբուրգից գրում է Մոսկուայում գտնուող Դաւիթ արքայազնին. «փութալ եւ փութալ ի Վիրս, փոխեալ է արքայն...»: <sup>20</sup>

Ուշագրաւ է այն հանգամանքը, որ թիֆլիսից վերադառնալով Ռուսաստան, Արղութեանը չի այցելում էջմիածին: Այդ թելադրուած էր այն թշնամական վերաբերմունքով, որ ունէին մահմետական տիրակալները ռուսական արշաւանքի նկատմամբ եւ նրանց հետ համագործակցած Յ. Արղութեանի վերաբերմամբ, որին եւ զգուշացնում են իր այցելութեան վնասակար հնարաւոր հետեւանքների մասին: Պատահական չէ, որ 1798 թ. Մայիսի 27-ին թաղեւոս վարդապետին եւս Յ. Արղութեանը խորհուրդ է տալիս ձեռնպահ մնալ Ս. Աթոռ այցելելուց: Նա գրում է. «Վասն զնալոյդ ի Սուրբ Աթոռն այնպէս գիտացի զի չեմ անհամաձայն, բայց յայսմ ժամանակի յինէն առաքեցեալ այրն եւ թուղթն կործանման պատճառ է սուրբ Տանն»: <sup>21</sup> Նման զգուշաւորութիւնը անհիմն չէր եւ Ղուկաս Կաթողիկոսը իր գահակալութեան սկզբից ի վեր պահպանում էր այդ զգուշաւորութիւնը: <sup>22</sup>

Ուրմիայի քրիստոնեայ համայնքի առաջնորդները (մելիքները) Յովսէփ Արղութեանին եւ Հերակլ 2-րդ թագաւորին 1797 թ. Մայիսի 12-ին գրած նամակներում նկարագրում են այն ճնշումներն ու հալածանքները, որ կրում են իրենց քրիստոնեայ լինելու պատճառով. «Աղա Մահմադ խանը հրամայել է,

18. Авпр, ф. Сношения России с Арменией (СРА), оп. 100/3, 1764-1800гг., д. 462, п. 56-57 (44-46)  
 19. АВПР. СРА, оп 100/3, 1764-1800 д. 462 л 58-60 Յ. Արղութեանէն ուղղուած Հերակլ Բ.-ը դի նամակի ռուսերէն քարգմանութեան մէջ աւուած է. «Когда ваше высокопреосвященство с отрядом победоносного е.и.в. войска прыбыли в грузию к утешению здешнего христианского народа, ...тогда составили тем не менее всей области моей находящейся в нынешних горестных обстоятельствах, немалую отраду»  
 20. Մաշտոցի Անուան Մատենադարան (այսուհետեւ՝ Մատենադարան), ձեռ. 2951, ք. 161ա: Հերակլի մահուան լուրը Յ. Արղութեանը ստացել էր բաւական ուշացումով: Փետրուարի 14-ին, Հերակլի մահուանից մէկ ամիս անց, նա դեռեւս նամակ էր գրում Հերակլին: Տե՛ս նոյն տեղում, ք. 156 ք-157ա  
 21. Մատենադարան, ձեռ. 2951, ք. 180 ք.  
 22. А.Р. Иоаннисян, նշուած աշխ. էջ 66-67



որպէսզի մեզ տանջանքների ենթարկեն, ասելով «տեսնենք գուցէ նրանց հաւատակից ուսանորդ գան նրանց օգնութեան եւ մենք յաղթենք նրանց...»: Այդպէս տանջում են նրանք մեր ազգը... Այժմ բացի բարձրագոյն արարչից եւ ձեզնից ոչ ոքի վրայ յոյս չունենք... գթացէք այս քրիստոնեաներին, որոնք 15000 ընտանիք են, ծանուցէք այս մասին Հերակլ թագաւորին, եւ մենք նրա բոլոր ռազմական ծախսերը կը վճարենք, եթէ նա միայն շարժուի մեզ օգնութեան... գուցէ եւ ոչնչացնենք այս անհաւատին եւ եթէ ոչ այդպէս, ապա արդէն քրիստոնէութիւն (այստեղ) չի մնայ...»: <sup>23</sup>

Աւարտելով իրենց նամակը նրանք գրում են. «Լաւ կը լինէր, եթէ մենք ուսանորդ մասին ոչ մի տեղեկութիւն չստանայինք, այսքան հայեր չէին լինի գերութեան մէջ»: <sup>24</sup>

Նման տրամադրութիւններ գոյութիւն ունէին նաեւ Վրաստանում: Ռուսական օգնութեանը դիմելը համընդհանուր պաշտպանութիւն չէր վայելում, եւ այնտեղ եւս գտնում էին, թէ ռուսական կողմնորոշումն է Վրաստանի դէմ շրջակայ տիրողների կողմից յաճախացած թշնամանքի պատճառը: Իմանալով Հերակլի հիւանդութեան մասին, բայց դեռեւս տեղեկ չլինելով նրա մահուան մասին, Յ. Արղութեանը 1798 թ. Փետրուարի 14-ին գրած նամակում շտապում է խորհուրդներ տալ գահի օրինական ժառանգորդ Գէորգի արքայազնին ինչպէս ռուս-վրացական յարաբերութիւնների կարգաւորման, այնպէս էլ նրա գահակալութեան ժամանակ վարուելիք ներքին ու արտաքին քաղաքականութեան, ու հայ-վրացական յարաբերութիւնների հիմնահարցերի շուրջ: <sup>25</sup> Յետագայ ծրագրերի շուրջ հանգամանօրէն պայմանաւորուելով Ռուսաստան այցելած Դաւիթ արքայազնի հետ Յ. Արղութեանը այս նամակում խորհուրդ է տալիս Գէորգիին առաջնորդուել այդ ծրագրերով եւ կրկին Ռուսաստան վերադարձնել նրան «արժանաւոր պատասխանաւ», խոստանալով նման գործելակերպի դէպքում «մշտնջենական խաղաղութեան տանդ վրաց, եւ տոհմին ձերոյ՝ առիթ հաստատ կացութեան»: Յ. Արղութեանը խորհուրդ է տալիս Գէորգիին «Յորմէ դաւանութենէ եւ իցէ բնակողն ընդ հովանեաւ քով, ունիցիս ի վերայ նորա խնամ եւ վասն կրօնին մի ունիցէ ինչ որիչութիւն առաջի քոյ, ըստ որում հայր հայրենեաց էս ընդհանրապէս եւ բնակողացն որ ի նոսա»: Վրաստանում հնարաւոր երկպառակութիւններ թոյլ չտալու մտահոգութեամբ Յ. Արղութեանը խորհուրդ է տալիս Գէորգիին. «Ձքարթալն (իմա Գարթլին), զԿախէթն եւ զՍոմխիթն պահպանեսցես թարց իրիք ընտրութեան, զի մի իցէ ի նոսա ինչ առաւելութիւն եւ կամ նուազութիւն քոց խնամոց, այլ զամենեսին միապէս ջանասցես պահել ի շինութեան»:

Յ. Արղութեանը մտահոգուած է նաեւ Թիֆլիսում տիրող իրավիճակով:

23. АВРР, сра, он. 100/3, 1790-1800, г. 463, р. 5, նոյն վաւերագիրը փոքր տարբերքով ներկայացնում է АВРР, ф. СРГ, он. 110/3, 1798-1799, г. 4542 No. 96-97

24. Նոյն տեղում

25. Մատենադարան, ձեռ. 2951, ք. 157 ա-158ա

Առանց մանրամասնելու նա վրաց թագաւորին խորհուրդ է տալիս «Ձարքայանիստ քաղաքը զթիլֆիզ լնուցուս զանազան արհեստիւք եւ ուսմամբ եւ հոգասցես զչինուածս գեղեցիկս ի դմա կառուցանել, զի արքայական քաղաք կոչիլոյ իցէ արժանաւոր եւ հեռացեալ եւ զսպեալ իցէ յամենայն շարեաց՝ այս է յանիրաւութեանց, ի զրկանաց, ի մարտից եւ ի գողութեանց»: Նամակի յաջորդ կէտով տրուած խորհուրդը ունէր արդէն անձնական երանգ: Յովսէփ Արղութեանը իրեն թոյլ է տալիս մտերմօրէն պահանջել. «Մի հաճեսցի բարձրութիւն Ձեր թողուլ զօրն եւ ի գիշերի ի գործ մտանելն, թէ ի դատաստան եւ թէ ի հաշիւս, զի հրամայեաց փրկիչն, որ գնայ ի գիշերի գայթակղի, զի զլոյս աշխարհիս այսորիկ ոչ տեսանէ»: Այս իր հերթին համահունչ է Ալ. Ջամբակուր-Օրբելիանիի այն հաղորդմանը, թէ «Գէորգին 24 ժամուայ ընթացքում մեծամասամբ աղօթում էր, ուտում էր, քնում էր եւ միայն երեք ժամ հազիւ թէ տրամադրում էր աշխարհիկ գործերին»: <sup>26</sup> Վրաստանի խաղաղութեանը սպառնալիք կարող էր լինել նաեւ մահմետականների խռովութիւնները, ուստի այդ կանխելու համար առաջարկուում է «Ի տարին երկիցս առեալ լիցի հարկ ի տաճկացն Ձերոց եւ մի առաքեսցին ի պատճառս սնոտի ինչ իրաց թագաւորական հարկահանք ի նոսա որով եւ նոքա խռովեսցին»: Ուշագրաւ է քննարկուող նամակի նաեւ յաջորդ կէտը. «Ի բոլոր տէրութենէ ձերմէ մատուցին տասանորդքն հացին յարքունիս եւ ունելով Ձեր զշտեմարանս հացի ի տեղիս հարկաւորս, մի նեղիջիք ի ժամանակս պատերազմի ի ժողովելն զգորս, որով եւ պատճառեսցի զօրացն ցրուիլ, իսկ եթէ պատերազմ եւս ոչ ունիցէք ի պակասիլն հացին տրեսցի ժողովրդեանն ի փոխ, որով թարց իրիք վնասու ունիք օժանդակ լինել նոցա, բայց ասեմ, զի մի յաճախիցէք զհրամանագիրս ի վերա շտեմարանապահացն բաժանել զհացս արեղայից եւ երգեցողացն, այլ իւրաքանչիւր ոք բաւականացի իւրով ապրուստիւն»:

Անդրադառնալով Վրաստանի անվտանգութեան եւ արտաքին յարաբերութիւնների խնդրին Յովսէփ Արղութեանը խորհուրդ է տալիս Գէորգի թագաւորին ունենալ այնքան պատրաստի զօրք, որքան հնարաւոր է, որովհետեւ «թարց զօրաց սուտ են ամենայն ջանք, որոց եւ տացի ռոճիկ ի հանքացն»: Մշտական բանակի ծախսերը հոգալու համար անհրաժեշտ է աշխատանքային վիճակում պահել հանքերը, այլեւ «Ի չէն պահել չրջակայ գիւղորայս նոցին, առանց որոց ոչ գոյ ինչ հաստատութիւն հանքացն»:

Աւարտելով այն միջոցառումների թուարկումը, որոնք իր կարծիքով կարող էին նպաստել Վրաստանի քաղաքական ու տնտեսական կայունութեան ամրապնդմանը, Յ. Արղութեանը այնուհետեւ անցնում է հայ-վրացական յարաբերութիւնների բարելաւման անհրաժեշտութեան հիմնաւորումը: Ակնարկելով Գէորգիի 1790 թուականի համաձայնագիրը Լոռու գաւառը Շահամիր Շահամիրեանին ժառանգաբար տնօրինելու մասին շնորհելու հանգամանքը, Յ. Արղութեանը պահանջում է. «ՁԼոռին, զոր հաստատ գրով շնորհեալ էք աղայ Շահամիրին եւ նա եւս յանձնեալ է ի մէլիք Ապովն, հաստատ

26. «Վրաստանի պատմութեան ակնարկներ», IV, էջ 807 (վրացերէն)



պահանջէք զայն ուխտ, որով ոչ թէ ի հովանաւորութիւն ձեր հրաւիրէք միայն զհնդկաբնակ հայս, այլեւ Կարսն եւ Ախլցխայն դատարկեալ բնակչօք նոցա լնանելոց են Փանրակն եւ Բօրչալուն»։ Յ. Արղութեանը հայ-վրացական յարաբերութիւնների կարգաւորման կարեւոր հանգամանք է համարում նաեւ հաւատարմութեան ու պարտաւորութեան փոխադարձութեան պայմանը։ Նա ուղղակի պահանջում է Գէորգիից. «Որովհետեւ ի ձեզ պարծեն միշտ հայք եւ ուրախ են թէ՛ ունիմք մեք զթագաւոր ի սերնդոց թագաւորացն մերոց, պարտ է ձեզ եւս բանիւ եւ գրով զհայրական իմն խնամ ցուցանել նոցա, զի տեսանելով զայդ, որպէս եղեալք ընդ հովանեաւ ձերով հայք՝ ջերմեռանդաբար ծառայեսցեն ձեզ, նոյնպէս եւ արտաքինքն դիմեսցեն ի հովանաւորութիւն ձեր»։

Յովսէփ Արղութեանը Գէորգիից յատուկ վերաբերմունք է պահանջում էջմիածնի Կաթողիկոսական Աթոռի նկատմամբ։ «Զպատրիարքական Աթոռն Սուրբ էջմիածին եւ զսրբազան պատրիարք հոգեւոր տեառն ամենայն հայոց, միշտ ունիցիք ի պատուի եւ մի հատըիք ի նմանէ զնպաստ եւ զմխիթարութիւն, խնամելով զնա որպէս իսկական թագաւոր հայոց»։

Աւարտելով իր գրաւոր առաջարկութիւնները Յ. Արղութեանը տեղեկացնում է նաեւ, թէ ունի նաեւ բանաւոր յանձնարարութիւններ, որոնք «ի լուսաւորագունէ որդւոյն ձերմէ գիտասըիք զիմս վասն ձեր զխորհուրդ եւ զգիտաւորութիւն»։

Յովսէփ Արղութեանը 1798 թ. Մարտի 25-ին Պետերբուրգից գրած նամակում ցաւակցութիւն է յայտնում Գէորգիին հօր մահուան կապակցութեամբ եւ խորհուրդ տալիս գահակալական պայքարը թուլացնելու համար «չահելով զստահական ածել ի հնազանդութիւն» եւ ի վերջոյ «զյանձնարարութիւն բոլոր ազգին, որպէս իսկական թագաւորի հայոց, փութով զորդին ուղեւորել արժանաւոր պատասխանաւ ի դուռն կայսերական»։<sup>27</sup> Արղութեանի այս նամակը մեզ է հասել միայն համառոտագրումով եւ աւարտում է հետեւեալ գրառումով. «Զայլան ի յորդւոյն եւ ի քնեազ Գէորգուն գիտել»,<sup>28</sup> ասել է թէ, հանգամանօրէն բերանացի նրան կը հաղորդեն Պետերբուրգից Վրաստան վերադարձած Դաւիթ արքայազնը եւ վրաց դեսպանութեան քարտուղար Գէորգի Աւալիշվիլին։

Պարսկաստանում Աղա-Մահմադ խանին փոխարինած Բաբա խանը պահանջում է Գէորգի 12-րդից կապերը խզել Ռուսաստանից եւ որդուն պատանդ ուղարկել պարսից արքունիք, խոստանալով նրան յանձնել Երեւանի, Գանձակի, Շաքիի ու Շիրանի կառավարումը, իսկ հակառակ դէպքում սպառնում էր արշաւել Վրաստան։

Պետերբուրգից Վրաստան վերադարձած Դաւիթ արքայազնը Բաբա խանի պահանջի մասին անմիջապէս Յովսէփ Արղութեանին է հաղորդում 1798 թ. Յունիսի 28-ին գրած իր նամակով։ Նա գրում է. «Царь приказал, чтобы ты заявил

27. Մատենադարան, ձեռ. 2951, ք. 163բ

28. Նոյն տեղում։ «Քնեազ Գեորգին» անտարակոյս Գէորգի Աւալիշվիլին է

князям Безбородко и Куракину, что наше положение чрезвычайно тяжелое... Постарайся, пожалуйста, если дорожите Грузией и рассчитываете на её поддержку, то найдите для этого дела какое-нибудь лекарство»։<sup>29</sup>

Ստեղծուած քաղաքական իրադրութեան մէջ երաշխիքներ չունենալով Ռուսաստանից իրական օգնութիւն ստանալու Գէորգի ԺԲ-ը դը ժամանակ չահելու նպատակով հակուում է Պարսից արքունիքի հետ բանակցութիւնները շարունակելու մտքին։ Տեղեկանալով այդ ամէնի մասին եւ գիտակցելով ինչպէս Վրաստանի, այնպէս էլ Այսրկովկասի վրայ կախուած վտանգի իրական ու լուրջ լինելը, Յ. Արղութեանը շտապում է ինչպէս ռուսական իշխանութիւններին յորդորել միջամտելու այսրկովկասեան գործերին, այնպէս էլ անընդհատ շտապեցնում է Գէորգի ԺԲ-ը դին Ռուսաստան դեսպանութիւն ուղարկելու համար։ Յ. Արղութեանը նամակագրութեան բանակցութիւններ էր վարում ոչ միայն Գէորգի ԺԲ-ը դի հետ, այլեւ վրաց արքունիքի ազդեցիկ անձնաւորութիւնների ու նաեւ Թիֆլիսի հայ համայնքի՝ արքունիքին մօտ կանգնած գործիչների հետ։ Այդ առումով ուշագրաւ են Յ. Արղութեանի 1798 թ. Սեպտեմբերի 9-ին նամակները ինչպէս Դաւիթ արքայազնին, այնպէս էլ իր եղբորորդի Սուլումն Արղութեանին։ Ստանալով Դաւիթ արքայազնի նամակը Սեպտեմբերի սկզբներին, որտեղ յայտնուում էր Բաբա խանի մօտ Վրաստանից դեսպանութիւն ուղարկելու մասին, Արղութեանը իր պատասխան նամակում զայրոյթով գրում է. «Յուլիսի 21-էն զիրդ յամսոյսն ընկալաք ընդ պարոն Լաչկարովին եւ քնեազ Գարսեւեանին եւ զարմացաք, որ դուք աճապարէք Յիցի որդի թաւադ Գէորգին զրկել առ Բաբա խանն, իսկ աստ ոչ եթէ զոք առաքէք, այլ մեր զրկած Աւալի որդին եւս պահէք եւ մէկ օրինաւոր թուղթ չգրէք, ոչ առ ամենաողորմած կայսրն, ոչ առ լուսաւորագունեղ քնեազն եւ ոչ առ ձեր դեսպանն...»։<sup>30</sup> Շնորհակալութիւն յայտնելով իր եղբորորդի Սուլումնին հովանաւորելու համար, խորհուրդ է տալիս, որ «եթէ մարդ առաքեսցեն (ՍՊԲ-Պ.Չ.), նմա յղելն բարւօք առնեն»։<sup>31</sup> Սուլումնին ուղղուած նամակում եւս կրկնելով իր զարմանքը, Յ. Արղութեանը աւելի մանրամասն տեղեկութիւններ է տալիս ստեղծուած իրադրութեան մասին։ «Զարմանամ ես յոյժ ի յիմաստութիւնէ արքային մերոյ, որ պատրաստեալ է զաներն իւր առաքել ի պարսիկս եւ աստ մինչեւ ցայսօր ոչ եթէ զաներն, այլ մէկ ծառայ եւս ոչ առաքեաց եւ որպէս օրէնն էր, ոչ ծանոյց մեծի կայսերն զվախճան հօրն իւր եւ իւր յաջորդելն զաթոռ նորա, ոչ այս միայն, մէկ օրինաւոր եւ ըստ կարգի գիր ոչ գրեաց մինչեւ ցայսօր, ոչ առ թագաւորն, ոչ առ լուսափայլ քնեազն եւ ոչ այլ առ դեսպանն իւր»։<sup>32</sup> Զգիտեմ որպիսի անբախտութիւն է այդ երկրիդ տիրեալ ոչ իմ այնքան աշխատանքն եւ գրածն ազդեաց իւրեանց եւ ոչ այդքան տառապանքն, ահն եւ երկիւղն, զորս կրէք, եւ ոչ պարոնի որդի Դաւիթի աստ գալն եւ մեծամեծ

29. «Армяно-русские отношения» IV, 478  
 30. Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. 2951, ք. 215բ-216ա  
 31. Նոյն տեղում, ք. 216 ա  
 32. 1798 թ. Հոկտեմբերի 11-ով բուսագրուած Գէորգի ԺԲ-ը դի հաւատարմագրերը Գ. Ճաւեաւաճէին են հասել միայն նոյն բուսականի Դեկտեմբերին Գէորգի Աւալիշվիլու միջոցով



խօսելն եւ այդը լուելն, ո՞ւր է իւր խոստմունքն, որ ասէր շուտով գալ: Իսկ ողորմած կայսրն մեր սպասէ դոցա մարդոյն եւ կամ դարձին Աւալի որդի Գէորգու որ եթէ կամին մտանել ենթ հովանաւորութեան իւրոյ, յայնժամ ցուցցէ զիւր ողորմութիւնն մեծ, որ ասա ունի պատրաստեալ, աւելի քան, զոր ինքեանք կամէին. թագ, ծիրանի, թուր, կաւալէր, աստղ եւ այլն ամենայն իւրն եւ ժառանգին, եւս եղբարցն, զօրքն եւս պատրաստ է: Վասն ձեր՝ վերստին եւ այնց տեղեացն կամի տիրել, ուր մեք շրջեցաք: Կոտածի ժառանգին ծանոյց, որ զնոսա մերն գիտասցի եւ լուեսցի: Աւելի ի՞նչ առնէ, չգիտեմ, մինչեւ խոնարհեցաւ եւ ինքն գրեաց առ արքայն, առ ժառանգն եւ առ ձեզ, ողորմութիւն տեառն ընդ ձեզ է, մի երկնչէք»: <sup>33</sup> Յ. Արղութեանը Ռուսական արքունիքի նման պատրաստակամութիւնը բացատրում է իր թափած ջանքերով. «Այս ամենայն ծանուցես արքային եւ արքայ որդւոյն, ես իմ պարտուցս զերծայ, այժմ ինքեանք գիտասցեն»: <sup>34</sup> Բացատրելով իր ջանադրութեան դրդապատճառներն ու նպատակները, Յ. Արղութեանը յիշեցնում է. «Իմ կամքն է ծաղկեցուցանել զդոսա եւ կոչել ոչ միայն թագաւոր վրաց, այլեւ հայոց»: <sup>35</sup> Անդրադառնալով մելիքների ճակատագրի հարցին, Յ. Արղութեանը գտնում է, որ «մելիքների բանն կախեալ կայ ի դոցանէ եւ աստուծով լաւ են լինելոց, ասա նոցին ընտանեացն լինիլ միամիտ»: <sup>36</sup> Բերուած այս նամակը ցոյց է տալիս, թէ Յ. Արղութեանը, որ 80-ական թուականներին հնարաւոր էր համարում հայկական թագաւորութեան վերականգնումը, ապա 90-ական թուականների վերջերին միակ հնարաւորը համարում էր հայ-վրացական միացեալ թագաւորութեան ստեղծման հեռանկարը: Կասկածից վեր է, որ Յ. Արղութեանը միայնակ չէր իր այդ տեսակէտի մէջ նրան հետեւում կամ աջակցում էին նաեւ հայ հասարակական այլ գործիչներ:

1798 թուականի երկրորդ կէսին ինչպէս ռուսական արքունիքը, այնպէս էլ Յ. Արղութեանն ու Արցախի մելիքները սպասման մէջ էին: Յ. Արղութեանը Ստեփան Դաւթեանին ուղղուած նամակներում շեշտում էր սպասողական այդ վիճակը. «Ի վրացտանու սպասելն մարդոյ առաքեցելոյ ի նոցանէ եւ սոցա ըստ ամենայնի ձեռնտու պատրաստ լինիլն նոցա, վասն պահանջութեան իւրեանց», <sup>37</sup> գրում էր նա Ս. Դաւթեանին 1798 թ. Սեպտեմբերի 30-ին Պետերբուրգից, իսկ Դեկտեմբերի 2-ին «քնեազ Սոլումոնին եւ պարոն Եսայուն» գրած նամակում յիշեցնում էր «սպասել մեր գալստեան քնեազ Աւալովին»: <sup>39</sup> 1798 թ.

33. «Դիւան հայոց պատմութեան», IX, էջ 192-194: Մատենադարան, ձեռ. 2951, ք. 214  
 34. Մատենադարան, ձեռ. 2951, ք. 214 ք  
 35. Նոյն տեղում  
 36. Նոյն տեղում  
 37. Նոյն տեղում, ք. 218ա  
 38. Նոյն տեղում, ք. 234ա  
 39. Յ. Արղութեանի մէկ այլ նամակից, որ նա գրել էր Գէորգի թագաւորին 1798 թ. Դեկտեմբերի 16-ին, պարզում է, որ ստացուել էին նաեւ գաղտնի նամակներ, որոնց բովանդակութեան մասին Արղութեանը լուում է: Իր նամակներում նա գրանցել է միայն, որ ինքը պատասխան է ուղարկել թիֆլիս «առ Գիորկի արքայն, յարաւորդւոյն եւ մեր Սոլումոնին ընդ գաղտնի թղթոցն իւրեանց» (Մատ., ձեռ. 2951, ք. 238 ա)

Դեկտեմբերին Պետերբուրգում ի վերջոյ ստացւում է Գէորգի ԺԲ-որդի կողմից ռուսական արքունիքին ուղղուած դիմումը, որտեղ առաջարկւում էին այն պայմանները, որոնց ընդունելու դէպքում հնարաւոր էր համարում Ռուսաստանի հովանաւորութեանը ապաւինելը:

1798 թ. Դեկտեմբերի 15-ին Գրիգոր վարդապետին ուղղուած նամակում Յ. Արղութեանը ծանուցում է. «...վրաց Գօրկի արքայի բոլոր թագաւորութիւնն իւր մատուցանելն ի խնամակալութիւն կայսերն մերոյ» <sup>39</sup> եւ սոցա պատրաստիլն առաքել ամենայն շուք թագաւորական հաստատուն դաշամբ ...վրաց արքայի զբոլոր բանն իւր՝ մեզ յանձնելն ընդ քնեազ Գարսեւանին»: <sup>40</sup>

Պետերբուրգում Գէորգի ԺԲ-որդի նամակի ստացուելուց անմիջապէս յետոյ՝ Դեկտեմբերի 16-ին վրաստանի դեսպան Գարսեւան Ճաւճաւաձէն ռուսական արքունիք է ներկայացնում Գէորգի ԺԲ-որդի 11 կէտից բաղկացած պահանջները: Առաջարկւում էր վրաստան առաքել 3000-անոց մշտական զօրք՝ վրաստանի պահպանութեան համար, թոյլատրել Արցախի մելիքներին հպատակ ժողովուրդի հետ միասին եւ վրաստան ներգաղթելու ցանկութիւն յայտնած Ուրմիայի շրջակայքում ապրող քրիստոնեաներին (հայեր եւ ասորիներ) ընդունում եւ տեղափոխման արտօնում, վրաց-պարսկական յարաբերութիւնների բարելաւում եւ այլն: 1799 թ. Յունուարի 1-ին Պետերբուրգից Գրիգոր վարդապետին գրած նամակում Յ. Արղութեանը գոհունակութեամբ նշում է. «...վրաց բանն ընկալնուլն թագաւորին եւ պատրաստելն զամենայն ըստ խնդրոյ նորին. նոյնպէս եւ մելիքացն բան՝ լինիլն բարօք...»: <sup>41</sup>

Հայ հասարակական գործիչները հասկանում էին, որ Այսրկովկասում հայ ժողովուրդի ազատագրման հարցի լուծումը շաղկապւում է Ռուսաստանի քաղաքականութեան հետ, իսկ այն կառուցւում էր միջազգային յարաբերութիւնների բոլոր հանգամանքների հաշուառումով եւ պայմանաւորւում էր առաջին հերթին Ռուսաստանի հեռամէտ նամակների իրականացման հետ: Ըստ այդմ էլ Ռուսաստանում հայ գործիչները ստիպուած են լինում որոշակիանցնել իրենց պահանջները, դրանք իրական հողի վրայ դնել, միահիւսել այն Ռուսաստանի քաղաքականութեան հետ եւ որոշակի էտապներ սահմանել վերջնական նպատակին հասնելու համար:

Այսրկովկաս մուտք գործելու համեմատաբար անաղմուկ միջոցը վրաստանի հովանաւորի դերում հանդէս գալով այնտեղ ռուսական զօրք մտցնելու ուղին էր: Մելիքների ու Արցախի հարցը լծորդւում էր առաջին էտապում ռուս-վրացական յարաբերութիւնների զարգացման ընթացքի հետ եւ հայ գործիչները անհամբեր սպասում էին այդ յարաբերութիւնների զարգացմանը: Նշուած հարցերի պարզաբանմանն էր նուիրուած զրոյցը, որը կայացաւ Ս.Լ. Լաչկարյովի եւ հայ մելիքների միջեւ 1798 թուականի Դեկտեմբերի 21-ին: Զրոյցի մասին հաշուետուութեան մէջ նշում էր, որ մելիքները այն հարցին, թէ «куда охотнее желают быть переселены, в Грузию или

40. Մատենադարան, ձեռ. 2951, ք. 237ա-ք  
 41. Նոյն տեղում, ք. 241



Россию, отвечали, что для них все равно в России ли жить или в Грузии, поелику и сия так же подданна России как и сами россияне суть, но что предавая оное Высочайшему соизволению, и будучи переселены в Грузию удобнее будет другим армянам в Курдистане и Баязете живущим к ним от времени до времени переходить и умножать число и силы их, нежели когда будут они переселены в Россию, коей удобности курдистанские и баязетские армяне за отдаленностию пределов России лишатся, что и будет для сих последних, коих число простирается до 60 тысячь семей, несколько прискорбно, ибо и они стенают от ига агарян, под коим находятся, крайне желали бы соединены быть с ними меликами для управления и суда над ними, и чтоб будучи одной с ними нации и закона и оставаться с ними же, и что все оное они мелики предают Высочайшему Его Величеству соизволению, ожидая от него единого себе избавления.

1799 թ. Փետրուարի 11-ին Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիան պատասխան նոտա է յանձնում Գարսեւան Ճաւճաւաձէին՝ 1798 թ. Դեկտեմբերի 16-ին նրա առաջադրած պահանջների քննարկման արդիւնքների մասին: Գ. Ճաւճաւաձէին պատասխանում են, որ 3000-անոց զօրքի պահանջը կատարուում է, հայ մելիքները իրենց հպատակ ժողովուրդով կը դրուեն Վրաստանի ենթակայութեան ներքոյ, տակայն պէտք է իրաւունք ունենան անկաշկանդ փոխադրուելու Ռուսաստան:

Վրաց-ռուսական յարաբերութիւնների նման զարգացումը շուտով յայտնի է դառնում ինչպէս Այսրկովկասում, այնպէս էլ Պարսկաստանում: 1799 թ. Մայիսի 15-ին էնզելիում ռուսական հրապարտու Մ. Սկիրինսկիին գրում է Արտաքին գործերի կոլեգիա. «Бабахан получил известие от Ибрагим хана Шушинскаго, что Российския войски идут в Грузию с тем, дабы завладеть и Эриваном, а притом бы Карабагских армян перевести в Грузию и в Моздок: то по сей притчине приказал Бабахан Сулейман хану отрядить часть войска в Эриван. Вместо гарнизона и в крепости онаго города быть одному велможе из Каджаров, у коего и гарнизон сей был бы в команде, а Ибрагим хану писал, чтоб удерживать армян ласкою»: 42

Մ. Սկիրինսկու միջոցով Բարախանին առաջարկուել էր չմիջամտել Վրաստանի գործերին, որովհետեւ Վրաստանը գտնուում է Ռուսաց հովանաւորութեան ներքոյ: 43

Այսրկովկասում գործողութիւնների ծաւալման համար կարծես ամէն ինչ արդէն պատրաստ էր, սակայն ժամանակն անցնում էր, իսկ զօրքերը չէին շարժուում: Յ. Արղութեանի կարծիքով այդ դանդաղումը պայմանաւորուած էր Աւստրո-ռուսական յարաբերութիւններով. «Իմփերատորի եղբոր գալուստն աստ (իմա ՍՊԲ-Պ.Չ.) եւ նշանուելն ընդ Աղէքսանդրիա Պալովինն: Վասն այսմ եւ փոքր ինչ յամիլն զվրաց բանն»: 44

1799 թ. Փետրուարին Պետերբուրգում եւ Վրաստանում արդէն տեղեակ էին Պաւել Առաջինի կարգադրութիւնների մասին. «Արքայի ամենայն պարգեւքն, որպէս յառաջ գրեալ եմք, պատրաստի գոլն, զօրացն եւ թօփոցն, հրաման լինելն գնալ առ յինքեանս: ... Կաւալինցիկն՝ սկիզբն գնալն ի Թիֆլիս, որպէս չերեզւե-

42. АВВР, Ф. СРП, оп. 77/6, д. 490, л. 16-17  
43. Նոյն տեղում, ք. 34: Հմմտ. Չ. Յիտիշվիլի, Գարսեւան Ճաւճաւաձէի պետական գործունէութիւնը, Թր., 1982, էջ 154:  
44. Մատենադարան, ձեռ. 2951, ք. 252ա (Յ. Արղութեանի նամակը «Առ Բնեագն Սոյոմօն եւ Ջաֆարիայն ի Թիֆլիզ» 1799 թ. Փետրուարի 25)

չայնեայ պասլանինիկ, այսինքն՝ մեծ, որպէս պատկեր թագաւորի: Գալն կաւալինցիկուն՝ հանդէպ առաքել զմի արքայորդի, զայս ամենայն գրով պատրաստի լինելն: Մելիքներին՝ յանձնելն արքային՝ հետեւիլ եւ նոցա կամքն լցուցանել... Ունիլն մեր յոյս, որ արքայն սիրեսցէ եւ ժողովեսցէ զազգս մեր ընդ հովանեաւ իւրով...»: 45

Նրկար սպասուած յոգնած մելիքները 1799 թուականի Մարտի 29-ին կրկին գրաւոր դիմում են Պաւել Առաջինին եւ յայտնելով Բարախանի սպառնալիքների, Արցախում եւ Վրաստանում տիրող ծանր կացութեանը մասին խնդրում են արագացնել խոստացուած օգնութեան տրամադրումը եւ թոյլ տալ վերադառնալ հայրենիք: 46

Շարունակելով նախապատրաստական աշխատանքները եւ ընդառաջելով Գէորգի ԺԲ-ըդի խնդրանքին Պաւել Առաջինը 1799 թ. Ապրիլի 18-ին վրացական զահի ժառանգորդ է հաստատում նրա աւագ որդուն՝ Դաւիթ արքայազնին: 47 Մի քանի օր անց, Ապրիլի 22-ին հետեւում է նաեւ Պաւել Առաջինի հրամանագիրը գանձապետ Վասիլեւին՝ որպէս ամէնամեայ թոշակ Մելիք Ջիմչիդին յատկացնել 1400 ռուպլի, Մելիք Փրիդոնին՝ 1000 ռուպլի, իսկ Ջիմչիդի որդի Պօղոսին՝ 600 ռուպլի գումար: 48 Միաժամանակ պատուիրում է նաեւ ոսկէ ութ շքանշան հայ մելիքներին պարգեւատրելու համար: 49

Ուշադրաւ է նաեւ այն գրութիւնը, որը ներկայացուել է ռուսական արքունիք՝ մելիքների խնդրագրին ընդառաջելու անհրաժեշտութիւնը հիմնաւորելու համար: Այդ վաւերագիրը, որ կրում է «Замечания на прошения карабахских меликов» վերնագիրը պահպանուել է պատճէնով եւ չունի ստորագրութիւն: Հրատարակութեան ժամանակ ենթադրուել է, թէ այն պէտք է կազմուած լինի 1799 թուականի զարնանը, իսկ հեղինակը ամենայն հաւանականութեամբ Այսրկովկասի իրադրութեանը լաւատեղեակ Մ. Լաշկարյովն է: 50 Վաւերագրում նշուում է, որ «Нация армянская под игом врагов христианства от давных времен стенающая ...

45. Նոյն տեղում  
46. «Армяно-русские отношения», IV, с. 501. Ռուսերէն տեքստի տակ հայերէն ստորագրել են «Մէլիք Ջիմչիդ, մէլիք Փրիդոն, Պետրոս Մադաթով»: Ուշագրաւ է, որ դեռեւս Պետերպուրգում գտնուող մելիք Փրիդոն Բեգլարեանին Գէորգի ԺԲ-ըդի իր 1799 թ. Մարտի 22-ի հրովարտակով մելիքութիւն, կալուածներ ու հպատակներ է շնորհում Վրաստանում (տե՛ս Վրաստանի ԳԱ ձեռագրերի ինստիտուտ, Hd-3978)  
47. АКАК, II, No. 24, с. II477  
48. Армяно-русские отношения, IV, с. 503  
49. Նոյն տեղում  
50. Նոյն տեղում, էջ 552, ծան. 145: Մ. Լաշկարյովը ծագումով վրացի ռուսական պետական գործիչներից էր, որը սերտ կապի մէջ էր այսրկովկասեան ժողովուրդների ներկայացուցիչների հետ: Նա հաւաւաբար գիտէր նաեւ հայերէն: Այդ մասին վկայող փաստ է 1799 թ. Հոկտեմբերի 15-ին Ղուկաս Կարնեցի Կաթողիկոսի Վ. Կոչուրէյին գրած նամակի ռուսերէն թարգմանութեան վերջում արուած այն նշումը, թէ «բնագրի հետ համեմատել է գաղտնի խորհրդական Սերգէյ Լաշկարովը» (տե՛ս նոյն տեղում, էջ 513 եւ 553 ծան. 150): Ուշադրութեան արժանի փաստ է նաեւ այն, որ Գրիգորիուպոլից 1792 թ. Յունիսի 20-ին Յ. Արղութեանը Յովհ. Լազարեանին գրած նամակով խնդրում էր միջնորդել արժոււնիքի առաջ Լաշկարովին Լրիմի նահանգապետ նշանակելու համար: «Այսու գրով մատչիմ առ Բեգ յաղագս ստոյգ եւ նշմարիտ բարեկամիմ մերոյ եւ սրտացալիմ



горит желанием видеть себя в независимости и быть под управлением природного владельца. В области Карабагской, яко едином остатке древняя Армения сохранявшем чрез многие веки независимость свою под властью природных владельцев, полагала нация сия при помощи божией и неотъемлемом от нея сильном покровительстве Всероссийския империи ту только льстящую ей надежду. По настоящему же порабощению той области под иго могометан, не только заградилась для нации армянской перспектива сия, но утверждением в Карабаге персов, овладевших крепкими тамошними местами, естественном положении своим в ущелиях Кавказа почти неприступными, подвергается и самая Грузия, под высочайшим Всероссийскаго императорскаго двора состоящая, по обнажению пределов сей стороны частым и внезапным впадениям их беспокойство и разорение за собою влекущим. Уважение сие по одному только участию Всероссийския империи в благосостоянии и обеспечении целости царства грузинскаго есть уже столько убедительно, что нельзя не ожидать благоволительнаго на сию меликов просьбу разрешения...»<sup>51</sup>

*Մելիքների խնդրանքին ընդառաջելը Ռուսաստանի համար նախընտրելի էր նաև այլ առումով: Գրութեան հեղինակը համոզուած է, որ «учрежденное единожды под управлением природных начальников сие армян в собственном их отечестве поселение под сению мощнаго и одним именем в странах тех страшнаго Всероссийския империи покровительства составит свое на твердом положении сообщество, которое по вышеизъясненному толь сильно действующему над умами их патриотизму ежедневно возрастать, а по свойственной им предприимчивости и трудолюбию ... вяще и вяще преуспевать будет. Коликия важности дело сие произведет для России пользы дальновидность политики предусмотреть может явственно»:*<sup>52</sup>

*Ելնելով այս հեռահար նպատակների իրականացման անհրաժեշտութիւնից, գրութեան հեղինակը գտնում է, որ որպէս առաջին քայլ պէտք է ընդառաջել մելիքների խնդրանքին եւ նրանց բնակութեան վայր յատկացնել վրաց թագաւորութեան սահմանների մէջ մտած եւ մարդաթափ եղած Հայաստանի Ղազախ գաւառում:*<sup>53</sup> Հայկական այդ գաւառի վերակենդանացումը հաւասարապէս ձեռնտու պէտք է լինէր ե՛ւ հայ, ե՛ւ թէ վրաց թագաւորութեանը: Առաջարկուած է Արցախի հայ մելիքներին ոգեւորելու նպատակով:

բոլոր հասարակութեան ազգիս հայոց Սերգէյ Լազարիչ Լաշկարովին, որոյ անբաւ գործակարգութիւնն ոչ է կար մեզ պատմել, զի դու իմքն իսկ գիտես: Գիտես, որ ի Իրան Մեծէն եթէ ոք պաշտպան ոչ ունի, ոչ ինչ կարէ շինել վասն իմքեան, որպէս գրնութիւն դորա գիտես, վասն այլոց ի բոլոր սրտէ հետեւի գրարիս առնել եւ վասն իմքեան՝ ոչ երբեք: Դա իւր յոյսն յետ Աստուծոյ եղեալ է առ Քեզ, որ վասն դորա գրաֆ Բեգորտովուսն խօսեսցիս, որ նա տիրութիւն դմա առնելով մի կորիցէ աշխատանք դորա, այլ գտցէ զվարձս ծառայութեան իւրոյ եւ կտոր մի հաց յաղագս գաւակացն իւրոց, եթէ ըստ հանդիպմանն գուրեմնաք լինիցի ի Ղոխմ, յոյժ բարւոք լինի եւ կամ եթէ հանոյ երեւիցի գրաֆին, որ զդա կարգաւորեսցի ողորմած թագուհին, որ դա յատկապէս հետեւեսցի զազգս հայոց եւ այլ քրիստոնէից, յամենայն տեղեաց ժողովել աստ, կարի շուտով բազմանան եւ ազգ մեր լինի բախտաւոր: Այսքան ըստ խնդրոյ եւ ըստ խորհրդակցութեան իւրոյ գրեցի առ Քեզ, աղաչեմ մի անտես առնել զդա, այլ որպէս ազգ քոյ ընկալցիս, զի բարեբար է նոցա եւ մեզ...» (Մատենադարան, ձեռ. 2949, ք. 266բ):

51. Այդ համգամամբը հասկանում էր նաև Իրրահիմ խանը: 1796 թ. վայելիան Ջուրովին յղած նամակում նա գրում էր. «...когда город сей (իմա Մուշին Պ. 2) будет Вами сохранен, то можете обладать и вселенной...» (АВНР, Ф. СРА, оп. 100)3, 1764–1800 гг., д. 462, л. 48–49)

52. Նոյն տեղում, էջ 506

53. 18-րդ դարի վերջերին Ղազախ գաւառը տարածուած էր մինչեւ Դիլիջանի շրջանը, որտեղ եւ գտնուում էր գաւառի թեմի կենտրոնը Հաղարծնի վանքը (տես Մատենադարան կաթողիկոսական դիւան, քղթ. 4, վաւ. 9)

*ա. Նուէրներ ու շքանշաններ յանձնել մելիքներին:*

*բ. Վրաց թագաւորին համոզել նշուած տարածքը զիջելու հայ մելիքներին:*

*գ. Հայ եւ վրաց կողմերի միջեւ պայմանաւորուածութեանը ձեւակերպում տալ հանդիսաւոր պայմաններում:*

*դ. Մելիքներին թոյլատրել մշտական զօրք ունենալու եւ դրա համար նրանց տրամադրել վարկ:*

*Բացի այդ առաջարկուած է նաև «...в знак и память высочайшаго к нации армянской покровительства, пожаловать колонии сей несколько артиллерийских орудий с достаточною к оным принадлежностию и для обучения употреблению сих орудий позволить определить несколько человек из сей нации в состоящие в Грузии российские войски»:*<sup>54</sup>

1799 թ. Յունիսի 2-ին հրապարակուած է Պաւել Առաջին կայսեր հրովարտակը, որտեղ Արցախի մելիքներին յայտնուած է, թէ ընդառաջելով մինիստրութեան կողմից իրեն ներկայացուած զեկուցագրերին թոյլատրուած է նրանց հպատակ ժողովուրդի հետ միասին բնակուել կայսրութեան սահմաններում եւ կամ Ռուսաստանի հովանաւորութեան տակ գտնուող Գէորգի թագաւորութեան մէջ եւ ըստ մելիքների խնդրագրի նրանց վիճակը բարւօքելու նպատակով նշանակուած են թոշակներ եւ տրուած են շքանշաններ:<sup>55</sup> Այդ հրովարտակին յաջորդում է Պաւել Առաջինի նամակը վրաց Գէորգի ԺԲ-րդին (1799 թ. Յունիսի 3), որով ծանուցում է նրան իր որոշման մասին՝ մելիքների հպատակ ժողովուրդի հետ Վրաստանում բնակուելու թոյլտուութեան մասին, որտեղ պէտք է նրանց որոշակի արտօնութիւններ տրուէին:<sup>56</sup> Այս նամակը յանձնուած է մելիքներին, որոնք պէտք է ներկայացնէին Գէորգի ԺԲ-րդ թագաւորին իրենց վերադարձի ժամանակ: Մելիքներն այսպիսով Պետերբուրգում այլեւս անելիքներ չունէին եւ բռնում են տունդարձի ճանապարհը Պ. Կովալենսկու հետ միասին: Յայտնի է, որ 1799 թ. Օգոստոսին նրանք արդէն գտնուած էին Աստրախանում, որտեղ եւ մելիք Ջիմչիզի անունով ստացուել էր դեռեւս 1799 թ. Յունուարին գրուած Բաբա խանի նամակը նրա Պարսկաստան վերադառնալու եւ պարսկահպատակ մնալու առաջարկով եւ իր կողմից հովանաւորութիւն ստանալու խոստումներով:<sup>57</sup> Ստացուած նամակի մասին տեղեակ է պահուած Պ. Կովալենսկուն, որն այդ մասին իր հերթին հաղորդում է արքունիք: Նոյն օրն իսկ (Օգոստոսի 17) ռուսական արքունիք է առաքւում նաև Մելիք Ջիմչիզի նամակը, որտեղ վերջինս հաւաստիացնում է, թէ ինքը չի դրժի Ռուսաստանի նկատմամբ ունեցած իր հաւատարմութիւնը:<sup>58</sup>

*Մելիքները դեռեւս գտնուած էին Աստրախանում եւ չէին ճանապարհուել Թիֆլիս, երբ Յ. Արղութեանը 1799 թ. Սեպտեմբերի 1-ին Պետերբուրգից գրում է Գէորգի թագաւորին. «Յուսամ, զի եւ վեհազնեայ Պետր Իվանիչ*

54. Նոյն տեղում

55. Նոյն տեղում, էջ 597

56. Նոյն տեղում, էջ 507–508

57. АВНР, Ф. СРП, оп. 77/6. 1796–1800, д. 473, л. 307, 310

58. «Армяно-русские отношения», IV, с. 510



կառավարողներն եկեալ իցէ եւ ձեր արքայական բարձրութիւն միամտեալ վասն ամենայնի: Լսեմք զչինուամն կամրջաց, որ զօրքն գան»: 59 Նա յանձնարարութիւն ունէր հաղորդելու վրաց արքային, թէ «Բաթալ փաշայ (որ աստ էր եւ մեր ամենաողորմած թագաւորի բանին եւ հաճութեամբ սուլթանն թուրքաց շնորհեաց զանցանս նորա եւ յետ նմա զսերեսկերութիւնն Անատոլու), այժմ ի Ղոբու գնացեալ է ի Տրապիզոն եւ ինձ խնդրէ հաւատարմացուցանել ձերոյ բարձրութեանն, որ եւ ոչ է թողոց զլեզգի ի յԱխալցխայ, որպէս հարազատ երկուց կայսերացն աստուած տացէ այսպէս լինիլ»: 60

Ռուս-թուրքական մերձեցումը, որ պայմանաւորուած էր Նաբուլէոնի եգիպտական արշաւանքով ու ակարտուեց 1799 թ. Յունուարին կնքուած ռուս-թուրքական պայմանագրի ստորագրումով, նպաստաւոր պայմաններ էր ստեղծում Ռուսաստանի կողմից Այսրկովկասի նուաճումը իրականացնելու համար: Այդ հանգամանքը եւս չի վրիպել Յ. Արղութեանի ուշադրութիւնից: 1799 թ. Մարտի 3-ին Պետերբուրգից Թիֆլիս առաքած իր նամակում գեղարդակիր Յովհաննէս եպիսկոպոսին նա գրում է. «...Մեր ամենաողորմած կայսրն ունի յոյժ բարեկամական կապակցութիւն ընդ պետին հազարացուց եւ նա կայ առ հրամանս մեծութեան սորին՝ յոյժ խորին հնազանդութեամբ եւ այս յատուկ պարգեւ յաստուծոյ է՝ յաղագս քրիստոնէական ազգին...»: 61 Առաւել մեծ տպաւորութիւն պիտի գործեր այն լուրը, թէ «ամենաողորմած կայսեր զրօշակն յամենայն տեղիս յաղթող է եւ զօրաւոր: Մեր գրաֆ Սուվորովն բոլոր Եւրոպիայ ազատեաց ի լծոյ անհաւատ ֆրանցուսացն...»: 62

Աստրախանից մելիքներն ու Պ. Կովալենսկին 1799 թ. Սեպտեմբերի 9-ին ճանապարհւում են Ղզլար, 63 որտեղից Թիֆլիս են հասել միայն Նոյեմբերի 26-ին:

1800 թ. Փետրուարի 29-ին Գէորգի ԺԲ-ըզի հրամանագրով Մելիք Ջիմչիզին նրա պահանջած Ղազախ գաւառի փոխարէն շնորհուում է Լոռու գաւառը, պայմանով, որ եթէ Շահամիր Շահամիրեանի ժառանգներից որեւէ

59. Մատենադարան, ձեռ. 2951, ք. 292բ

60. Նոյն տեղում, ք. 293ա

61. Նոյն տեղում, ք. 253ա (ընդգծ. մտն. 1- Պ. 2.)

62. Նոյն տեղում, ք. 293ա

63. Մատենադարան, կար. դիւան, քղբ. 9, վաւ. 132, ք. 1: Պահպանուել է մելիք Ջիմչիզի Աստրախանից գրած մի նամակը, որ բուագրուած է 1799 թ. Սեպտեմբերի 22-ով: Նամակում նա խնդրում է բոլոր այս Աստրախանում գտնուող իր ազգակամներին, որպէսզի «...восприяли на себя все знаки приличья их породе и получа свое достоинство не именовались более Ивановыми, но князьями Аршакуньянскими... и употребляли везде герб рода своего» («Армяно-русские отношения», IV, с. 511).

Հետաքրքիր է, որ նամակը ստորագրուած է «Малой Арменни Шушинской и протчих провинций владелец мелик Чемшит Шахназаров князь Аршакуньянский» (Նոյն տեղում): Պէտք է նշել, որ Արցախի մելիքների այդ մտայնութիւնը, քէ իրենց տոհմը ծագում է Արշակունիներից, նոր չէր: Դեռեւս 1781 թ. Սեպտեմբերի 2-ին Աղամ եւ Բեգլար մելիքների Եկատերինա Երկրորդին ուղղած նամակում նշում էին. «մեք ի ազգաց հայոց ի տանիցն Արշակունեաց եւ Աղամից ի արժուական գահոյից մնացեալ ազնիւ զինաւորացէն ժառանգ մելիքներս եւ մեր բոլոր երկիրս իշխանօվն հանդերձ...» (Նոյն տեղում, էջ 131):

մէկը ներկայանայ, ապա Լոռու փոխարէն Մելիք Ջիմչիզին կը շնորհուի այլ տարածք: Նրան է յանձնուում նաեւ Արցախից Դսեղ գիւղում ապաստանած ժողովուրդը: 1799 թ. Դեկտեմբերին էջմիածնում վախճանուած Ղուկաս Կաթողիկոսից յետոյ կաթողիկոսական գահի շուրջ սկսուեց պայքար՝ իր մէջ ներառնելով հայ հոգեւոր ու աշխարհիկ հասարակութեան ուժն ու եռանդը ինչպէս Այսրկովկասում, այնպէս էլ Կ. Պոլսում եւ Ռուսաստանում: Ռուսաստանի միջամտութեան շնորհիւ ընտրուելով Կաթողիկոս, Յ. Արղութեանը 1801 թ. Փետրուարին ժամանեց Թիֆլիս: Թիֆլիսում նա մասնակցեց ինչպէս Գէորգի ԺԲ-ըզ թագաւորի թաղման արարողութեանը, այնպէս էլ դեռեւս թագաւորի կենդանութեան օրօք (1800 թ. Դեկտեմբերի 18) կազմուած եւ 1801 թ. Յունուարի 18-ին Պետերբուրգում հրապարակուած Վրաստանը Ռուսաստանին միացնելու մասին Պաւել Առաջին կայսեր մանիֆեստի Թիֆլիսում հրապարակման հանդէսին (1801 թ. Փետրուարի 16-17):

1801 թ. Մարտի 6-ին Պետերբուրգում մշակուեցին Քարթլ-Կախեթի նոր կառավարչութեան կանոնները, իսկ Մարտի 11-ին Ռուսաստանի պետական սենատը գնեցեալ նահանգապետ նշանակեց Կնորինզին: Պաւել Առաջինի մահից յետոյ գահ բարձրացած Ալեքսանտր Առաջինի հրովարտակով (1801 թ. Սեպտ. 11) Վրաստանը յայտարարուեց Ռուսաստանի նահանգ:

Վրաց պետականութեան վերացումից յետոյ բնականաբար հայ ժողովուրդը չէր կարող հայոց պետականութեան վերականգնման կամ ստեղծման պատրանքներ ունենալ, սակայն Ռուսաստանի յետագայ առաջխաղացման մէջ տեսնում էր իր ֆիզիքական, տնտեսական ու մշակութային գոյութեան պահպանման համար երաշխիքներ, ուստի ողջունելով Ռուսաստանի մուտքը Այսրկովկաս, ըստ ամենայնի աջակցում էր Ռուսաստանին՝ Այսրկովկասեան մնացած մարզերի նուաճման գործընթացին:



## ON THE HISTORY OF RELATIONS BETWEEN THE ARMENIAN, GEORGIAN AND RUSSIAN PEOPLES (NINTH DECADE OF THE XVIIIth CENTURY)

PAVEL CHOBANIAN

### SUMMARY

In the second half of the XVIIIth century as Russia's external policy became active, political and economic Armeno-Russian links became closer and the aspiration of Georgian and Armenian peoples to rid themselves of oriental tyrannies with the assistance of Russia was strengthened. The similarity of the historical fate and political objectives unbiassedly led to the need for cooperation between the political leaders of the two peoples. The Armenian political leaders assigned a considerable part of their liberation programmes to the position of Georgia and attempted to promote its development. For these purposes, as the letter was in Russian, H. Arkhutiun submitted it to Georghii the XIIIth, king of Georgia. It contained 14 provisions on the implementation of Georgia's external and internal policy.

A series of measures had taken to promote the process of stabilization of the politico-economic situation in Georgia, and improve Armeno-Georgian relations.

Armenian leaders thought of creating a united Armeno-Georgian kingdom as a transitional stage on the road to regaining or creating an independent state. Nevertheless, in the further development of Russia, the Armenian people saw guarantees for themselves in the upkeep of their physical, economic and cultural life; subsequently, they welcomed the presence of Russia in the Transcaucasus and promoted the conquest of the rest of the regions in the area near Russia in every possible way.

## ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

(17-ՐԴ Դ. ՎԵՐՋ — 19-ՐԴ Դ. ՍԿԻՋԲ)

Ժ. ԱՆԱՆԵԱՆ

Հայ ժողովուրդի պատմութեան մէջ մեծ տեղ են զբաղում, յայտնի հանգամանքների բերումով, աշխարհի տարբեր երկրներում դեռևս միջնադարից առաջացած հայ համայնքներն ու բնակավայրերը: Այդ համայնքների առանձնաշատկութիւններից մէկը այն էր, որ հէնց այնտեղ, պատմական Հայաստանի սահմաններից դուրս էր հիմնականում ընթանում հայ առևտրական բուրժուազիայի ձեւաւորումը:

Այդպիսի երկրամասերից էր նաեւ Ռուսաստանը: Ռուսական պետութեան սահմաններում հայ խոշոր վաճառականների եւ ձեռնարկատէրերի վերաբնակումը սկսուեց դեռևս 17-րդ դ. երկրորդ կէսին: Եւրոպայի եւ Ասիայի երկրներից դէպի Ռուսաստան հայ վաճառականութեան հոսքը պայմանաւորուած էր քաղաքական, գլխաւորապէս, տնտեսական բնոյթի մի շարք կարեւոր հանգամանքներով, որոնց վրայ հարկ է հրաւիրել ընթերցողի ուշադրութիւնը:

17-րդ դարում աշխարհի տարբեր մասերում, ուր կենտրոնացուած էր հայութիւնը, գրեթէ միաժամանակ տեղի են ունենում էական փոփոխութիւններ: Եւրոպայի երկրներում կապիտալիստական յարաբերութիւնների կազմաւորման գործընթացը, որն ուղեկցւում էր այլազգի վաճառականութեան դուրս մղումով, յանգեցրեց Եւրոպայի հայ համայնքների առաւել ունեւոր խաւի ձուլմանը: Միւս կողմից, Հնդկաստանում անգլիացիների լուրջ մրցակցութիւնը, եւ Արեւելքի երկրների մոլեռանդ տիրակալների անհանդուրժելի ազգային եւ կրօնական ճնշումը հենց Հայաստանում, պայմանաւորեցին այն, որ զարգացող հայ ազգային բուրժուազիան, ելնելով հօր եւրոպական առևտրական ընկերութիւնների կողմից կլանուելու կամ իր ազգային դիմագիծը կորցնելու եւ օտար կրօնում ձուլուելու վտանգից, իր հայեացքն ուղղեց դէպի քրիստոնէական Ռուսաստանը:



Հայ առեւտրական կապիտալի կողմնորոշումը դէպի Ռուսաստան ժամանակագրական առումով համընկաւ Ռուսաստանում ազգային շուկայի առաջացման եւ կապիտալիստական յարաբերութիւնների զարգացման միտումների ի յայտ գալու հետ: Հենց այդ ժամանակ, աւելի ճիշդ 17-րդ դ. 60-ական թուականներից սկսած, Ռուսաստանի թագաւոր Ալեքսէյ Միխայլովիչի եւ, յատկապէս, նրա որդու՝ Պետրոս Ա.-ի առեւտրական ակտիվ հաշուեկշիռի ապահովման եւ Ռուսաստանի տնտեսութիւնը արտաքին գործոններից անջրպետելու տարուող քաղաքականութեանը, 17—18-րդ դդ. ռուս վաճառականութեան եւ ձեռնարկատիրութեան ակնյայտ թուլութեան հետեւանքով, ելնելով Ռուսաստանի շահերից, ենթադրում էր հայ վաճառականութեան տնտեսական կարողութիւնների օգտագործումը, որի շնորհիւ ռուսական տնտեսութեան կարելոր զարկերակները՝ առեւտուրն ու արդիւնաբերութիւնը լրացուցիչ սնունդ էին ստանում: Միւս կողմից, այդ ժամանակաշրջանի ռուսական իշխանութիւնների տնտեսական քաղաքականութիւնը նախատեսում էր հայ վաճառականութեան օգտագործումը, որպէս կապող օղակ Արեւելքի, Արեւմուտքի երկրների եւ Ռուսաստանի միջեւ: Այնպէս որ հայ վաճառականութեան նկատմամբ ռուսական իշխանութիւնների հովանաւորական քաղաքականութիւնն ամէնից առաջ բխում էր ռուսական պետութեան շահերից: Այսպիսով, կողմերի շահերի զուգադիպութիւնը անհրաժեշտ նախապայման եւ միաժամանակ ամուր հիմք էր Ռուսաստանում հայ առեւտրական կապիտալի զարգացման համար:

Սկզբնապէս հայ առեւտրական կապիտալը կենտրոնացուած էր 17-րդ դ. Ռուսաստանի տարածքում ձեւաւորուած առաջին հայկական գաղթօջախում, որպիսին հանդիսանում էր Աստրախանը: Հենց այստեղ սկսեցին հաւաքուել հայ վաճառականները, այդ թւում նաեւ պարսիկ շահի հովանու տակ գործող Ջուղայի առեւտրական ընկերութեան ներկայացուցիչները: 17 եւ 18-րդ դդ. սահմանադժոււմ, Պարսկաստանում կենտրոնացուած հայ առեւտրական կապիտալի ռուսական կողմնորոշման հետեւանքներից մէկը ակամայից դարձաւ Աստրախանում հայերի բնակութեան աճը: Այստեղ բնակոււմ էին հիմնականում Պարսկաստանի տիրապետութիւններից եւ Արեւելքի այլ երկրներից գաղթած հայերը: 17-րդ դ. վերջում եւ, յատկապէս, 18-րդ դ. 30-40 թթ. Աստրախանի հայ բնակչութեան տեղաշարժը վկայում էր այն մասին, որ նրա աճը ընթանում էր, հիմնականում, նորաբնակների հոսքի հաշուին: Այնպէս որ Աստրախանում հայ բնակչութեան տեսակարար կշիռը բաւականին բարձր էր:

Աստրախանի հայ վաճառականութիւնը սկսեց մեծ դեր խաղալ Ռուսաստանի եւ Պարսկաստանի առեւտրական կապերում եւ, յատկապէս, Ռուսաստանով անցնող արեւելահարկաւոր տրանզիտային առեւտրում: Հայ վաճառականներին էր պատկանում ռուս-պարսկական առեւտրի շրջանառութեան ընդհանուր գումարի 70-75 տոկոսը: Այդ ժամանակաշրջանում Պարսկաստանի հետ առեւտրում քանի որ ռուս վաճառականութեան տեսակարար կշիռը բարձր չէր, ուստի հայ վաճառական կապիտալի մասնակցութիւնը, այն էական գործոններից էր, որը նպաստում էր Ռուսաստանի եւ Արեւելքի

երկրների միջեւ ապրանքաշրջանառութեան ընդլայնմանը:

Ինչ վերաբերում է Վոլգո-կասպիական ուղիով անցնող տրանզիտային առեւտրին, որը Ջուղայի ընկերութեան ներկայացուցիչների մասնակցութեամբ Արեւմտեան Եւրոպայի երկրների հետ վարում էին Աստրախանի հայերը, ապա նրանց բաժին էր ընկնում շրջանառութեան ընդհանուր գումարի 75-80 տոկոսը: Տրանզիտային առեւտրում հայերը փաստօրէն մենաշնորհային դիրքեր էին զբաւում: Այո առեւտրին Ռուսաստանի հայ վաճառականների մասնակցութիւնը նպաստում էր Արեւելքի եւ Եւրոպայի միջեւ ապրանքափոխանակութեան մէջ Ռուսաստանի միջնորդ դերի բարձրացմանը: Միւս կողմից, հայ վաճառականների ապրանքաշրջանառութեան աճը նպաստում էր ռուսական գանձարանի եկամուտների բարձրացմանը:

Ռուսաստանի հայ վաճառականները չէին զբաղւում միայն առեւտրով: Իրենց կապիտալի զգալի մասը Աստրախանի հայերը ներդնում էին ձեռնարկատիրութեան ոլորտում՝ իւրացնելով մանածագործական արտադրութիւնը եւ հիմնելով մետաքսի մանուֆակտուրաներ: Արտադրութեան իր ծաւալով մանածագործական արդիւնաբերութիւնը առաջատար դեր էր խաղում Աստրախանի հայերի շրջանում: 18-րդ դարի կէսերին Աստրախանի մանածագործական արդիւնաբերութիւնը հիմնականում կենտրոնացուած էր հայերի ձեռքերում, որոնց պատկանում էին մօտ 200 մանածագործական դաշգահներ:

Ռուս վաճառականներն ու ձեռնարկատէրերը, բախուելով հայերի մրցակցութեանը, դիմեցին կառավարութեանը՝ հայերի, ինչպէս նաեւ միւս օտարերկրացիների առեւտրա-արդիւնաբերական գործունէութիւնը սահմանափակելու խնդրանքով: Միւս կողմից, հայ վաճառականութիւնը ձգտում էր պահպանելու իրեն ընձեռած ազատութիւնները: Նկատի առնելով այն հանգամանքը, որ հայ վաճառականները վճող դիրքեր էին զբաւում ռուս-պարսկական եւ տրանզիտային առեւտրում, ուստի եւ նրանց առեւտրական գործունէութեան սահմանափակումը կարող էր բացասաբար ազդել ռուս-պարսկական առեւտրի զարգացման վրայ եւ զգալիօրէն պակասեցնել գանձարանի եկամուտները, ռուսական կառավարութիւնը բաւարարեց հայ վաճառականների պահանջները: 18-րդ դ. կէսերին նա հաստատեց հայերի առեւտրի եւ ձեռնարկատիրութեան ազատութեան իրաւունքը:

Ռուսաստանում հայ առեւտրական կապիտալի պատմութեանը հետեւելով դժուար չէր նկատել, որ այն ընդհանուրի հետ մէկտեղ, որը նրան միաւորում եւ ներկայացնում էր համառուսական շուկայում որպէս միասնական եւ զրա հետ մէկտեղ իւրայատուկ ազգային տնտեսական կազմուածք, հայկական կապիտալը իր զարգացման սկզբնական ժամանակաշրջանում ռուսական կայսրութեան տարբեր երկրամասում ունէր իր առանձնայատկութիւնները:

Ինչ վերաբերում էր Աստրախանին, ապա այդ երկրամասում իր զարգացման սկզբնական շրջանում հայ առեւտրական կապիտալի առանձնայատկութիւնն այն էր, որ այստեղ միահիւսոււմ եւ փոխադարձ գոյակցում էին երկու հակադիր միտումներ: Մի կողմից՝ ազգային տնտեսական միջավայրի



կանոնները նմանում էին Արեւելքի երկրների եւ տարբերում Արեւմուտքի երկրների կանոններից, միւս կողմից՝ հայ վաճառականների եւ ձեռնարկատէրերի վրայ ազդում էին սոցիալական եւ տնտեսական նոր պայմանները: Պայմաններ, որոնք բնորոշ էին 17-րդ դ. վերջի եւ 18-րդ դ. սկզբի ռուսական իրականութեանը:

Ռուսաստանի հայերի առեւտրա-տնտեսական գործունէութեան սկզբնական շրջանի համար բնորոշ այդ առանձնայատկութիւնն արտացոլուեց նաեւ Ռուսաստանի հայ գաղութների վարկային յարաբերութիւնների զարգացման մէջ:

Ձուղայի վաճառականների մի մասը, իր ճակատագիրը կապելով Ռուսաստանի հետ, փոխեց առեւտրական շահերի ոլորտը: Նրանց առեւտրական գործունէութեան զարգացման օրինակով մենք տեսնում ենք, որ հայ առեւտրական կապիտալը, ունենալով իր ուրոյն դէմքը եւ մինչեւ վերջ չխզելով Արեւելքի տնտեսական միջավայրի հետ իր կապերը, այնուամենայնիւ, հարկադրուած էր ենթարկուել Ռուսաստանի սոցեալ-տնտեսական զարգացման ընդհանուր ընթացքին: Միեւնոյն ժամանակ հայ վաճառականների վիճակը Պարսկաստանում այլ էր: Ֆէոդալական Պարսկաստանի քաղաքական եւ սոցեալ-տնտեսական զարգացման բնոյթը ինքնին բացառում էր հայ առեւտրական կապիտալի լիարժէք մասնակցութիւնը այդ երկրի տնտեսութեանը: Այդ էր պատճառը, որ շահի կառավարութիւնը ի վիճակի չէր «սանձահարելու» հայ վաճառականներին: Այդ այն դէպքն էր, երբ տոկոսաբեր կապիտալի նկատմամբ իրականում չէր գործադրուում միապետական յետամնաց ռեժիմի իշխանութիւնը: Այստեղից էր գալիս Պարսկաստանի հայ վաճառականների միջավայրում գործող փոխատուական տոկոսի մշտապէս բարձր չափը: Այդ հաշուեչափը հայ վաճառականները տարածեցին նաեւ Ռուսաստանում:

Սկզբնապէս, Աստրախանի հայ վաճառականները պարտք էին տալիս 12,24 եւ անգամ 40 տոկոսով: Սակայն, ինչպէս ամբողջ Եւրոպայում, այնպէս էլ Ռուսաստանում 18-րդ դ. ընթացքում նկատուում էր տոկոսադրոյթի բռնի իջեցման միտում: Ռուսական օրէնսդրութեամբ արգելուում էր վերցնել 6 տոկոսանոցից ակելի բարձր փոխատուութիւն: Բարձր տոկոսներ պահանջող վաճառականները յայտարարուում էին հանցագործներ: Այդ միտումը տարածուեց նաեւ Ռուսաստանի հայերի օրէնսդրութեան վրայ: Աստրախանի «Դատաստանագրքում» սահմանուած տոկոսի առաւելագոյն չափը կազմում էր 0,5 կամ տարուայ համար՝ 6 տոկոս: Այն պարտաւորագրերը, որոնցով նախատեսուում էին ակելի բարձր տոկոսներ, համարուում էին անվաւեր: Դա բացատրուում էր նրանով որ ռուսական գաղութների հայ վաճառականութիւնը, թէեւ համարուում էր ինքնուրոյն տնտեսական տարր, սակայն, միեւնոյն ժամանակ, չարունակում էր մնալ որպէս Ռուսաստանի տնտեսական կազմուածքի բաղկացուցիչ մաս եւ, բնականաբար, չէր կարող ընդդիմանալ նրա զարգացմանը:

Այն ժամանակ, երբ Աստրախանի հայերի առեւտրական կապիտալը դեռ նոր էր մտնում ռուսական պետութեան սոցեալ տնտեսական զարգացման ոլորտի

մէջ, Ռուսաստանի հայ վաճառականների վարկային գործունէութեան դրսեւորման ձեւերը բաւականին բազմազան էին: Դրանք որոշուում էին, ոչ միայն ռուսական, այլ նաեւ այն բազմազգ շրջապատով, որում գտնուում էր ինչպէս Պարսկաստանի, այնպէս էլ հենց Աստրախանի հայ վաճառականութիւնը: Աստրախանի վաճառականութեան, այդ թւում նաեւ հայ վաճառականների վարկային գործունէութեան կարեւորագոյն գործօններից էր Աստրախանում բնակուող հնդիկ վաճառականների վաճառական կապիտալի առկայութիւնը՝ իր դասական ձեւով: Ազատ միջոցների սղութիւնը յանգեցնում էր փոխառութիւնների պրակտիկային, որը կարեւոր նախապայման դարձաւ հայերի ինչպէս արտաքին, այնպէս էլ ներքին առեւտրի համար:

Հայ վաճառականների փոխատուութեան գործադրուող ձեւերից մէկը՝ երկու կամ ակելի վաճառականների կապիտալի միացումն էր, որը հնարաւորութիւն էր ընձեռում ընդլայնել առեւտրական գործառութիւնների ծաւալները, դիմանալ մրցակցութեանը, բարձրացնել շահոյթները: Դրանք յետագայում բաշխուում էին ըստ ներդրուած միջոցների կամ պայմանաւորուածութեան համաձայն: Միւս տարածուած ձեւը՝ դա այսպէս կոչուած առեւտրական վարկն էր: Այդ ձեւը կիրառուում էին ոչ միայն Ռուսաստանի հայկական գաղութների վաճառականները, այլեւ, ակելի վաղ ժամանակներից՝ Պարսկաստանի, Հնդկաստանի եւ միւս երկրների հայ վաճառականութիւնը: Այն, յատկապէս, տարածուած էր պարսկական մետաքսի հումքի առեւտրով զբաղուող հայերի, ինչպէս նաեւ արեւելեան այլ վաճառականների շրջանում: Առեւտրական վարկը ենթադրում էր ապրանքի ձեռք բերումը՝ որոշ ժամկէտից յետոյ վճարելու պարտաւորութեամբ, յաճախ ապրանքի գնի ակելացումով:

Հայ վաճառականութիւնն իր առեւտրական գործունէութեան մէջ հմտօրէն օգտագործում էր մուրհակային գործառնութիւնների առաւելութիւնները: Փաստօրէն հայ վաճառականները Ռուսաստանում առաջիններից էին, որ առեւտրում կիրառեցին մուրհակային գործառնութիւնները: Նրանք առաջներում էլ էին դիմում մուրհակային շրջանառութեանը (Պարսկաստանում, Ասիայի եւ Եւրոպայի երկրներում), այսինքն շատ ակելի վաղ, քան մինչեւ իրենց Ռուսաստան տեղափոխուելը:

Ռուսական կայսրութեան տարածքում հայերի մուրհակային գործառնութիւնների կարգը հաստատուած էր Աստրախանի հայերի «Դատաստանագրքում»: «Դատաստանագրքով» կանոնաւորուած այդ կարգը հիմնուում էր Ռուսաստանի, Պարսկաստանի, Անդրկովկասի եւ Եւրոպական երկրների տնտեսական կեանքին մասնակցող հայ վաճառականութեան պրակտիկ գործունէութեան եւ ռուսական օրէնսդրութեան զուգակցման վրայ: «Դատաստանագրքում» կան մուրհակների ձեւակերպման օրինակներ: Դրանցից երեւում է, որ Աստրախանում եւ Ռուսաստանի այլ շրջաններում հայ վաճառականութիւնը մուրհակային գործառնութիւնների մնջ էր մտնում այլ քաղաքների եւ երկրների վաճառականների հետ:

Սակայն, հայերի հետ մէկտեղ, մուրհակային գործառնութիւնների իրականացումը իրենց վրայ էին վերցնում նաեւ Ռուսաստանի որոշ վարչական



հաստատութիւններ: Պետական վարկաւորման առաջին փորձերի հետ զուգահեռ այդ պրակտիկան նպաստում էր 18-րդ դ. երկրորդ կէսին կենտրոնացուած վարկաւորման կազմակերպմանը, ինչպէս նաեւ բանկերի հիմնադրմանը: Ռուսաստանի բանկերի ծառայութիւններից հայ վաճառականութիւնը կարող էր օգտուել միայն ծայրայեղ դէպքերում: Ուստի, հաշուի առնելով Աստրախանի երկրամասի տնտեսական կեանքում հայերի կարեւոր դերը, ռուսական կառավարութիւնը հակուած էր դրականօրէն լուծել նրանց վարկաւորման հարցերը: 18-րդ դ. 70-ական թուականների վերջում հիմնադրուեց Աստրախանի հայկական բանկը:

Հայ համայնքների ներսում իրազօրծուող վարկային գործառնութիւնների բնոյթը վկայում էր, որ Ռուսաստանում հայ առեւտրական կապիտալը, ամբողջութեամբ վերցուած, վաշխաւարական չէր: Բանն այն է, որ 17-18-րդ դդ. ազատ միջոցների սղութիւնը կեանքի կոչեց փոխառութիւնների պրակտիկան, որը դարձաւ հայերի կողմից արտաքին եւ ներքին առեւտրի իրականացման կարեւոր պայմաններից մէկը: Այդ պատճառով էլ հայ առեւտրականները, ինչպէս եւ վաճառականները, հանդէս էին գալիս մէկ որպէս վարկատուներ, մէկ որպէս պարտապաններ: Այդ յարաբերութիւնների մէջ ներգրաւում էին հայ վաճառականութեան բոլոր շերտերը: Վարկատուների դերում միշտ չէ, որ հանդէս էին գալիս հարուստ վաճառականները: Երբեմն սակաւ հարուստ վաճառականները վարկի միջոցով մասնակցում էին խոշոր առեւտրական գործառնութիւններին՝ ստանալով որոշակի շահ: Կատարւում էր նաեւ հակառակը, ելնելով արտաքին առեւտրական գործառնութիւնների առանձնաշատկութիւններից, փոխատուութիւնների նկատմամբ պահանջ էր ներկայացնում նոյնիսկ խոշոր վաճառականութիւնը: Հետեւաբար, վարկային գործառնութիւնները պատահական բնոյթ չէին կրում: Դրանք օրգանապէս միահիւսուում էին ամբողջ հայ վաճառականութեան առեւտրական գործունէութեան կազմակերպման ընթացքին:

Այսպիսով, փոխադարձ վարկաւորման նման պրակտիկան հետեւանք էր նրա, որ 17-18-րդ դդ. առաջին կէսին պետական վարկաւորումը, փաստօրէն, դեռեւս գոյութիւն չուներ: Այդ ժամանակ վաշխառութիւնը դեռեւս զարգացած չէր, չկային մասնաւոր բանկեր եւ դրամափոխական զրասենեակներնր: Իրավիճակը հասկէս չփոխուեց նաեւ 18-րդ դ. երկրորդ կէսին, երբ հիմնուեց հայկական բանկը, քանի որ նրա ծառայութիւններից կարող էր օգտուել Ռուսաստանի վաճառականութեան միայն մի փոքր մասը: Դա մասամբ ըրացատրւում է նրանով, որ հայկական բանկը, որպէս այդպիսին, փաստօրէն, գոյութիւն չուներ: Այլ գոյութիւն ուներ 1779 թ. Աստրախանի առեւտրական բանկին կից ստեղծուած յատուկ մի ֆոնդ, որից կարող էին օգտուել միայն հայերը: Թէեւ պէտք է խոստովանել, որ այդ բանկից վարկեր ստանալու արտօնեալ պայմանները տարածւում էին նաեւ հայերի վրայ:

Ամփոփելով վարկաւորման ոլորտում հայ վաճառականների գործունէութեան արդիւնքները, հարկ է նշել, որ ճորտատիրական Ռուսաստանի պայմաններում իրենց ճանապարհը դժուարութեամբ հարթող կապիտալիստական

տնտեսավարութեան առաջաւոր ձեւերը աւելի արագ ընկալւում եւ լայնօրէն կիրառւում էին Ռուսաստանի յարաւի հայ գաղութների վաճառականների եւ ձեռնարկատէրերի կողմից: Այնտեղ նոր հասարակական-տնտեսական հասարակարգի ձեւաւորումը համեմատաբար վաղ էր սկսուել: Ներգրաւուած լինելով ռուսական հասարակութեան զարգացման միասնական սոցեալ-տնտեսական ոլորտի մէջ, հայկական առեւտրական կապիտալն արդէն 18-րդ դ. տարբերում էր արեւելեան, մասնաւորապէս, հնդկական կապիտալից, որը, ի տարբերութիւն հայկականի, այդպէս էլ չկարողացաւ միաձուլուել ռուսական տնտեսական միջավայրին:

Ռուսաստանի տնտեսութեան մէջ հայկական առեւտրական կապիտալի ներթափանցումն աւելի արագ էր ընթանում կենտրոնական Ռուսաստանի հայ համայնքներում, մասնաւորապէս Մոսկուայի եւ Սանկտ-Պետերբուրգի հայերի շրջանում: Հայ վաճառականները բնակւում էին այնտեղ աւելի վաղ ժամանակներից: Դեռեւս 17-րդ դ. առեւտրա-ձեռնարկատիրական գործունէութիւնը, 18-րդ դ. կէսերից միայն որակապէս նոր բովանդակութիւն ստացաւ: Դա կատարուեց, երբ կենտրոնական Ռուսաստանի հայ համայնքները համալրուեցին առաւել գործունեայ առեւտրական ձեռնարկատէրերով, որոնք զաղթել էին Պարսկաստանից եւ Արեւելքի այլ երկրներից: Նրանց թւում էին նաեւ Ջուղայի առեւտրական ընկերութեան ներկայացուցիչները՝ Լազարեանները, Սաստատովները, Իսախանովները եւ ուրիշներ:

Ռուսական տնտեսական միջավայրի մէջ հայ առեւտրական կապիտալի ներածման վառ դրսեւորումներից էր 18-րդ դ. կէսերին ստեղծուած հայ-ռուսական առեւտրական ընկերութիւնների գործունէութիւնը: Այդ ընկերութիւնների պատմութիւնը ինքնին ուշադրաւ է: Արեւելքի երկրների հետ առեւտուր անելու կոչուած խառը (հայերի հետ) վաճառական ընկերութիւնների ստեղծման գաղափարը առաջ էր քաշուել հենց ռուս վաճառականների կողմից: Հայերի հետ միատեղ ընկերութիւնների կազմակերպման մասին առաջարկութիւնները ռուս վաճառականները հիմնաւորում էին նրանով, որ հայ վաճառականները ուրիշներից լաւ էին կարողանում Արեւելքի երկրներում շահաւէտ առեւտուր անել: Աւելորդ չէ նշել, որ հայերի հետ տնտեսական համագործակցութեան հարցն առաջին անգամ բարձրացրեցին հէնց ռուս վաճառականները:

Սակայն, հիմնականում, ռուսական վաճառականութեան թուլութեան պատճառով 18-րդ դ. առաջին կէսին շատեղծուեցին ռուս-հայկական վաճառական ընկերութիւններ: Ի դէպ, ռուս վաճառականները ոչաւ էին գնահատում իրենց հնարաւորութիւնները: Դրա մասին է վկայում թէկուզ հետեւեալ փաստը: 18-րդ դ. 50-ական թուականների սկզբին, երբ ռուսական իշխանութիւնները դիմեցին մոսկովեան վաճառականներին օտարերկրեայ վաճառականների հետ Սեւծովեան առեւտրական ընկերութիւն կազմակերպելու առաջարկութեամբ, մոսկովցիները կտրականապէս հրաժարուեցին այդ գայթակղիչ գաղափարից: Այդ մերժման հիմնական փաստարկը նա էր, որ նախատեսուող առեւտրական ընկերութիւնը չէր կարող մրցակցել հայ



վաճառականների հետ: Ռուս վաճառականութիւնը, իրատեսօրէն գնահատելով իր պոտենցիալ հնարաւորութիւնները, բնականաբար, հրաժարոււմ էր Սեւ ծովով իրագործուող արեւելեան առեւտրում հայ վաճառականութեան հետ անհեռանակարային մրցակցութիւնից:

Ռուս-հայկական վաճառականական ընկերութիւնների ստեղծման գաղափարը գործնականում իրականացուեց միայն 18-րդ դ. երկրորդ կէսին, երբ որոշ չափով ամրապնդուեցին ռուս վաճառականութեան դիրքերը: 18-րդ դ. 50-ական թուականներին գրեթէ միաժամանակ ստեղծուեցին երկու հայ-ռուսական ընկերութիւններ, մէկը Թուրքիայի հետ առեւտրի համար (1757 թ.), միւսը՝ Պարսկաստանի հետ (1758 թ.): Վերջապէս, 1773 թ. ռուսական կառավարութիւնը հանդէս եկաւ նոր հայ-ռուսական Պարսկական ընկերութեան հիմնադրման նախագծով:

Գործող հայ-ռուսական ընկերութիւններից երկուսն էլ գլխաւորում էին հայերի կողմից: Տեմերնիկի նաւահանգստի միջոցով Սեւ ծովով առեւտուր անող ընկերութեան գլուխ կարգուեց Ռուսաստանի յայտնի վաճառական եւ ձեռնարկատէր Վասիլի-Բարսեղ-Սաստատովը: Պարսկական ընկերութիւնը գլխաւորեց Նոր Զուղայից գաղթած Սանկտ-Պետերբուրգում բնակուող Մանուէլ Իսախանովը:

Այդ ընկերութիւնների ի յայտ գալը հետեւանք էր տնտեսական եւ քաղաքական այն գործընթացների, որոնք տեղի էին ունենում 18-րդ դ. կէսերին ինչպէս Ռուսաստանում, այնպէս էլ, յատկապէս, Պարսկաստանում: Այդ ժամանակ Պարսկաստանում սկսուած քաղաքական եւ տնտեսական ճգնաժամը, որն աւելի սաստկացաւ 1747 թ. Նադիր-շահի մահից յետոյ, զգալի հարուած հասցրեց ռուս-պարսկական առեւտրին, մասնաւորապէս, ռուս վաճառականութեանը: Ուստի, եթէ Սեւ ծովի Տեմերնիկեան նաւահանգստի միջով առեւտուր անող հայ-ռուսական ընկերութիւնը կոչուած էր ինչ-որ չափով երկրնտրանքային դառնալու արեւելեան առեւտրի աջակցման եւ յետագայ զարգացմանը, ապա այլ խնդիր էր կանգնած Իսախանովի Պարսկական ընկերութեան առջեւ՝ վերականգնել զգալիօրէն խախտուած ռուս պարսկական առեւտրական կապերը:

Պարսկաստանի հետ առեւտրի համար ստեղծուած ընկերութեան առջեւ կանգնած էր նաեւ մէկ ուրիշ, առաջին հայեացքից ոչ այնքան ակնյայտ խնդիր: Բանն այն է, որ ռուս-պարսկական առեւտրում տիրող ճգնաժամը յանգեցրեց ռուս վաճառականութեան տեսակարար կշռի իջեցմանը Ռուսաստանի եւ Պարսկաստանի առեւտրական գործառնութիւններում եւ հայ վաճառականների կշռի բարձրացմանը: Հայ վաճառականները բոլոր հանգամանքներում դեռեւս պահպանում էին առեւտրական նախաձեռնութիւնը: Հետեւաբար, ինչպէս համարոււմ էր հենց ռուս վաճառականների շրջաններում, ռուս-պարսկական առեւտրի արգելքներից մէկը հայ վաճառականների մրցակցութիւնն էր: Այդ մրցակցութիւնը կանխորոշուած էր նրանով, որ ռուս վաճառականութիւնը առանց կառավարական աջակցութեան Պարսկաստանի տնտեսական քայքայման եւ անիշխանութեան պայմաններում չդիմացաւ, սկսեց տրտնջալ եւ զգաց

օտարերկրեայ վաճառականութեան (այդ թւում նաեւ հայկական) լուրջ մրցակցութիւնը: Հայերի հետ համատեղ առեւտրական ընկերութեան ստեղծումը, ռուսական իշխանութիւնների կարծիքով, կարող էր զգալիօրէն թուլացնել այդ մրցակցութեան սրութիւնը, իսկ միւս կողմից կը նպաստէր անգլիական վաճառականների հետ մրցակցական պայքարին:

Վերջապէս, պարսկական առեւտրական ընկերութիւնը պէտք է աջակցէր մի այլ, ոչ պակաս կարեւոր խնդրի լուծմանը՝ խոչընդոտել հայերի (հիմնականում ջուղայեցիների) կողմից մետաքսի հումքի փոխադրմանը դէպի Թուրքիա եւ Թուրքիայի միջով: Ռուսաստանի կառավարութիւնում գտնոււմ էին, որ Թուրքիայի միջով մետաքսի փոխադրումից հայերին հրաժարեցնելու միակ հնարաւորութիւնը հայ-ռուսական տնտեսական համագործակցութեան կարգաւորումն էր: Դա կարելի էր կատարել վաճառականական ընկերութիւններում հայերին ներգրաւելու միջոցով: Համարոււմ էր, որ ընկերութեան անդամ հայերը, ունենալով արդէն այլ կողմնորոշում, բնականաբար, կը հրաժարուեն թուրքական առեւտրական ճանապարհից: Այդպիսով, ինչպէս ծրագրոււմ էր Ռուսաստանի ղեկավար շրջաններում, ռուս-հայկական տնտեսական համագործակցութիւնը կը նպաստէր Արեւելքում ռուսական կայսրութեան տնտեսական քաղաքականութեան հանգուցային հարցերից մէկի լուծման: Մի խնդիր, որն ի վիճակի չէր իրագործելու ռուս վաճառականութիւնը 18-րդ դ. առաջին կէսին:

Այդպիսին էին այն քաղաքական եւ տնտեսական նախապայմանները, որոնք կանխորոշեցին Սաստատովի եւ Իսախանովի ընկերութիւնների ճակատագիրը: Սակայն այդ ընկերութիւնների գոյութիւնը երկարատեւ չէր: Ինչ վերաբերում է առեւտրական գործունէութեանը, ապա այն կայացաւ միայն Սաստատովի ընկերութիւնում: Չանդրադառնալով Սաստատովի ընկերութեան բաւականին նշանակալից առեւտրական գործունէութեան արդիւնքներին, կանգ առնենք այն դերի վրայ, որ կատարեց Սաստատովը եւ նրա ընկերութիւնը Սեւ ծովի վրայով Ռուսաստանի արեւելեան առեւտրի զարգացման գործում:

Այստեղ առաջին հերթին հարկ է նշել, որ Սաստատովի ընկերութեան հիմնադրումը էականօրէն փոխեց հարաւում նոր ստեղծուած Տեմերնիկի նաւահանգստի գործնական մթնոլորտը: Բանն այն է, որ մինչեւ Սաստատովի ի յայտ գալը, միջերկրեածովեան աւազանի արեւելեան եւ եւրոպական վաճառականների՝ Ռուսաստանի հարաւի շուկաների հանդէպ շահագրգռուածութիւնը իրենց կոնկրետ առեւտրական գործառնութիւնների հետ միասին լիովին չէր համապատասխանում այն հատուցմանը, որ կարող էր առաջարկել հակառակ կողմը, այսինքն հարաւի ռուս վաճառականութեանը: Ապրանքների ցածր որակը մի կողմից, Դոնի աւազանում կողակների կողմից կիրարկուող առեւտրի համարեա բարբարոսական ձեւերը միւս կողմից, բնականաբար, խրտնեցրին արեւելեան վաճառականներին՝ Սեւ ծովով Ռուսաստանի հետ առեւտուր անելուց:

Սաստատովի ընկերութեան հիմնադրումը բարենպաստ ազդեցութիւն ունեցաւ Ռուսաստանի հարաւային նաւահանգիստների գործնական մթնոլորտի



վրայ: Նախ եւ առաջ, վստահութիւն առաջացաւ Ռուսաստանի առեւտրականների հանդէպ: Դրանից բացի, համոզուելով, որ վերջ է տրուած Դոնում կողակների իշխանութեան օրօք տիրող կամայականութեանը, արեւելեան վաճառականութիւնը եւ հենց իրենք՝ թուրք վաճառականները, սկսեցին ուժեղացնել առեւտրական շրջանառութիւնները՝ աշխուժացնելով իրենց առեւտրական գործունէութիւնը Ռուսաստանի հարաւի ուղղութեամբ: Արեւելեան վաճառականներին, անշուշտ, վստահութիւն էին ներշնչում այն արտօնութիւնները, քաղաքակիրթ ձեւերն ու պայմանները, որոնք անմիջականօրէն Պաստատովի եւ ընկերութեան այլ անդամների կողմից ընձեռնուում էին Տեմերնիկում իրենց առեւտրի համար: Այստեղից էլ հետեւեց Սեւ ծովի միջով արեւելեան առեւտրի աշխուժացումը, ինչպէս նաեւ ռուսական պետութեան մաքսային եկամուտների բարձրացումը: Անգամ 18-րդ դ. 60-ական թուականների սկզբին, Պաստատովի ընկերութեան լուծարումից յետոյ, Տեմերնիկեան նաւահանգստի միջով կատարուող սեւծովեան առեւտուրը ռուսական գանձարանի համար որոշ ժամանակ դեռեւս շարունակում էր եկամտաբեր լինել:

Ինչ վերաբերում է երկրորդ հայ-ռուսական ընկերութեանը, որը գլխաւորում էր Իսախանովը, ապա այն մի շարք կողմերով տարբերում էր Պաստատովի ընկերութիւնից: Հիմնական տարբերութիւնը կայանում էր հետեւեալում: Իսախանովի ընկերութիւնը, ի տարբերութիւն Պաստատովի, ստեղծուել էր ոչ թէ ռուսական իշխանութիւնների նախաձեռնութեամբ, այլ միայն հայ վաճառականների խնդրանքով: Ամենակարեւորը, սակայն այն էր, որ Պարսկաստանի հետ առեւտրի համար ստեղծուած ընկերութեան գործունէութիւնը չտուեց այնչափ շօշափելի արդիւնքներ, ինչպիսին ունեցաւ Պաստատովի ընկերութիւնը:

Այն հարցը, թէ ինչու Իսախանովի պարսկական ընկերութիւնը անկենսունակ գտնուեց, ինչքան էլ տարօրինակ թուայ, ամբողջութեամբ առած, մնում է առկախ: Սակայն նախ եւ առաջ պարզենք, թէ ինչի եւ ում վրայ էր յոյս դնում ռուսական կառավարութիւնը՝ աջակցելով Պարսկաստանի հետ առեւտրի հայ-ռուսական ընկերութեան կազմակերպմանը:

Ռուսական իշխանութիւնների մտադրութեամբ այդպիսի վաճառականական ընկերութիւնը կոչուած պէտք է լինէր կարգաւորել Պարսկաստանում քաղաքական խռովութիւնների ընթացքում (18-րդ դ. կէսերին) խարխուլուած ռուս-պարսկական առեւտրական կապերը: Ռուսական արքունիկը հեռու գնացող նպատակներ էր հետապնդում: Խառը հայ-ռուսական առեւտրական ընկերութիւնը պէտք է ժամանակի ընթացքում թուլացնէր Ջուղայի ընկերութեան դիրքերը, նրանից խլէր Պարսկաստանից մետաքսի հումքի արտահանման նախաձեռնութիւնը, այդ ապրանքի տրանզիտային առեւտուրը լիովին փոխարկէր Վոլգո-Վասպիական ուղիով: Պետերբուրգի նման դիրքորոշումը միանգամայն բացատրելի էր, քանի որ Ջուղայեցիները այդպէս էլ չհրաժարուեցին Թուրքիայի միջով անցնող ցամաքային առեւտրական ճանապարհից: Ուստի յոյս դնել Ջուղայի ընկերութեան վրայ, որպէս ռուս-

հայկական առեւտրի վերականգնման մէջ շահագրգիռ կազմակերպութիւն, արդէն չէր կարելի: Ռուս-պարսկական առեւտրի զարգացման յաջորդ ժամանակահատուածի համար անհրաժեշտ էին նոր ազդակներ, որոնցից մէկը, ըստ ռուսական իշխանութիւնների հաշուարկների, կարող էր դառնալ նոր առեւտրական ընկերութիւնը, որը, այնուամենայնիւ, պէտք է գտնուէր պետութեան խնամակալութեան տակ:

Այսպիսով, ռուս-պարսկական առեւտրի ճգնաժամային շրջանում (18-րդ դ. կէսերին) առաջացած տնտեսական խնդիրներն իրագործելիս, ռուսական իշխանութիւնները, նկատելիօրէն կարիք ունէին հայ վաճառականութեան աջակցութեան: Փաստօրէն հենց դրանով էր պայմանաւորուած Պարսկաստանի հետ հայ-ռուսական խառը առեւտրական ընկերութեան ստեղծումը: Հարկ է այստեղ պատասխանել էական այն հարցին, թէ հայ վաճառականութեան որ մասին էր առաջարկուած այդ համագործակցութիւնը: Ռուսական իշխանութիւնները, ի վերջոյ, կանգ առան վաճառականութեան այն խաւի վրայ, որն աւելի սերտ էր կապուած Ռուսաստանի տնտեսութեան հետ, քան Աստրախանի հայերը: Դա, ինչպէս արդէն նշել ենք, Մոսկուայի եւ Պետերբուրգի հայերն էին:

Հետեւաբար, Պարսկաստանի հետ առեւտրի համար ստեղծուած հայ ռուսական ընկերութիւնների անկենսունակութիւնը կանխորոշուած էր արդէն նրանով, որ Ռուսաստանի կենտրոնական շրջանների հայ վաճառականները ընդհանուր առմամբ տարանջատուած էին Ռուսաստանի հարաւում բնակուող հայ վաճառականութեան հիմնական մասից: Ռուսաստանի հարաւում բնակուող հայերն էին, որ դեռեւս սերտօրէն կապուած էին Ջուղայի ընկերութեան հետ:

Ուստի, Ջուղայեցիների հետ իրօք մրցակցող առեւտրական ընկերութեան գոյութեան փաստը, անկասկած, պէտք է ուժեղ դիմադրութեան հանդիպէր Ջուղայի ընկերութեան կողմից: Յիրաւի, իր գործունէութեան առաջին օրերից Իսախանովի ընկերութիւնը հանդիպեց Ջուղայի եւ ընկերութեան մէջ չմտած Աստրախանի վաճառականութեան ուժեղ դիմադրութեանը: Այդ ընդդիմութիւնը (աւելի ճիշտ մրցակցութիւնը) սպառնալից բնոյթ էր ստանում այն պատճառով, որ Ջուղայի ընկերութիւնն իր տնտեսական ազդեցութեան ոլորտում էր պահում Աստրախանի եւ Կովկասի հայ վաճառականութեան մեծամասնութեանը:

Ջուղայի վաճառականների եւ նրանց միացած Աստրախանի հայ վաճառականութեան մի մասի դիմադրութիւնը, անշուշտ, իր որոշիչ դերը խաղաց Իսախանովի ընկերութեան առեւտրական գործունէութեան զաղարեցման գործում: Այսուհանդերձ, երկու ընկերութիւնների (եւ սեւծովեան, եւ պարսկական) լուծարման կարեւոր պատճառը այլ էր:

Ինչպէս արդէն նշուել է, ռուս հայկական առեւտրական ընկերութիւնների ստեղծմանը նպաստող պատճառներից մէկը ռուս վաճառականութեան տնտեսական հզօրութեան աճն էր: Այդ հանգամանքը, սակայն, ժամանակի ընթացքում դրսեւորուեց իր բացասական կողմով: Եթէ ռուս վաճառականութեան վերնախաւի մի մասը 18-րդ դ. երկրորդ կէսի սկզբին կարողացաւ



տնտեսական համագործակցութեան մէջ մտնել հայ վաճառականների հետ (խառը ընկերութիւնների ստեղծմամբ), ապա այդ նոյն ժամանակամիջոցում ամրապնդուած ռուսական վաճառականութեան հիմնական մասը հանդէս եկաւ այդ ընկերութիւնների դէմ: Ռուս վաճառականութիւնը, ընդհանուր առմամբ, պայքարում էր առեւտրական գործունէութեան ազատութեան համար: Սա, ըստ էութեան, հակամենաշնորհային պայքար էր: Այն չէր կարող որոշակի ազդեցութիւն չունենալ ռուսական իշխանութիւնների տնտեսական քաղաքականութեան վրայ, որոնք չէին կարող անտեսել իրենց վաճառականութեան շահերը: Ի վերջոյ, հայ-ռուսական առեւտրական ընկերութիւնների ճակատագիրը կանխորոշող հանգամանքը՝ Եկատերինա Բ-ի իշխանութեան գլուխ անցնելն էր: Այն նախապատուութիւն էր տալիս ազատ առեւտրի զարգացմանը: Կառավարութիւնը վաճառականական առեւտրական ընկերութիւնների հակառակորդն էր եւ անհրաժեշտ էր համարում ռուս վաճառականների համար ստեղծել հաւասար պայմաններ:

Այդ ընկերութիւնների գործունէութիւնը հնարաւորութիւն է տալիս յանգել որոշ եզրակացութիւնների: Ինտեգրացիոն գործընթացները (Ռուսաստանի տնտեսութեան մէջ հայ առեւտրական կապիտալի ներածումը, սկիզբ առան Աստրախանից եւ Պարսկաստանից գաղթած հայ վաճառականների շրջաններում, քանի որ հենց նրանք էին իրագործում պարսկական մետաքսի հումքի տրանզիտային առեւտուրը Ռուսաստանի այնպիսի տնտեսական կենտրոնների միջոցով, ինչպիսիք էին Մոսկուան եւ Արխանգելսկը: Ռուսական իշխանութիւնները, այդ վաճառականների նկատմամբ իրագործելով հովանաւորման քաղաքականութիւն, իրականում նպաստեցին այդ ինտեգրացիոն գործընթացների խորացմանը: Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում ընակութիւն հաստատած, Աստրախանից եւ Պարսկաստանից գաղթած հայ վաճառականութեան մի մասը, տնտեսապէս, իսկ աւելի շատ հոգեբանորէն դեռեւս կապուած էր Աստրախանի եւ Ջուղայի վաճառականների հետ: Սակայն առեւտրական գործունէութեան բազմաթիւ հարցերում նրանց շահերը այլեւս չէին համընկնում: Այդ պարագան սկիզբ դրեց Մոսկուայի եւ Պետերբուրգի հայ վաճառականների եւ ձեռնարկատէրերի տնտեսական մեկուսացմանը եւ դէպի ռուսական ազգային շուկայ նրանց վերակողմնորոշմանը:

Ռուսաստանի ուրիշ ծայրամասերի, մասնաւորապէս Սեւծովեան հիւսիսային աւազանի հայ առեւտրական կապիտալը այլ բնոյթ էր կրում: 18-րդ դ. վերջին երրորդում այդ երկրամասում՝ Նովորոսիայում տեղի ունեցած քաղաքական իրադարձութիւններով կեանքի կոչուած Նոր Նախիջեւան եւ Գրիգորիոպոլ հայկական գաղութները, իսկ ցետազայում նաեւ Քիչնեւի եւ Օղեսայի հայ համայնքները, այլ դեր խաղացին Ռուսաստանի ընդհանուր տնտեսական քաղաքականութեան մէջ: Պատմութիւնն այլ խնդիր էր դրել նրանց առջեւ: Այդ շրջանների հայ վաճառականութիւնը կոչուած էր առաջին ջուլթակի դեր խաղալու Ռուսաստանին նոր միացած երկրամասի տնտեսական իւրացման գործում: Ինտեգրացիոն գործընթացը այստեղ զիտուում է գաղութների հիմ-

նադրման հետ գրեթէ միաժամանակ: Եւ, վերջապէս, Մերձսեւծովեան հիւսիսային աւազանի հայ առեւտրական կապիտալը, ընդհուպ մինչեւ 19-րդ դ. կէսերը, թոյլ էր կապուած Ռուսաստանի կենտրոնական շրջանների հետ: Այդ պատճառով, ինտեգրացիոն գործընթացը, հիմնականում, ընթանում էր երկրամասի սահմաններում:

Այդ երկրամասում համակենտրոնացուած հայ առեւտրական կապիտալի ազդեցութեան հիմնական ոլորտում էին գտնուում Հիւսիսային Կովկասը, Ղրիմը եւ Բեսարաբիան: Հայերի առեւտրական գործունէութիւնը, փաստորէն, պարփակուած էր այդ երկրամասի սահմաններում: Մասամբ դա բացատրուում էր ինչպէս սեւծովեան աւազանի հայ վաճառականների համեմատաբար սակաւ տնտեսական կարողութիւններով, այնպէս էլ այն դերով, որը Ռուսաստանի տնտեսական ստրատեգիայում կանխորոշուած էր Մերձսեւծովեան հիւսիսային աւազանի հայերի առեւտրական կապիտալին: Հայ համայնքների տնտեսական կեանքն այստեղ ունէր իր առանձնայատկութիւնները: Չնայած այն բանին, որ այդ երկրամասի առեւտրական գործունէութիւնը եւ, ընդհանրապէս, ողջ տնտեսական կեանքը զարգանում էր տնտեսապէս դեռեւս չիւրացուած, հետեւաբար եւ անբարենպաստ պայմաններում, բայց, շնորհիւ հայ առեւտրական կապիտալի կենսունակութեանը, Նոր Նախիջեւանի եւ Գրիգորիոպոլի հայերը շատ շուտով հասան զգալի յաջողութիւնների:

Սեւծովեան հիւսիսային աւազանի հայ գաղութների տնտեսական արդիւնաւէտ զարգացման հիմնական պատճառը կայանում էր նրանում, որ հայկական գաղութներում բաւականին արագ էր ընթանում կապիտալիստական տարրերի հասունացումը: Դա իր հերթին պայմանաւորուած էր հայկական գաղութներում ֆէոդալական ճորտային յարաբերութիւնների բացակայութեամբ: Այդ գաղութները չէին զգում ճորտային այն ճնշումները, որ կրում էր ներքին Ռուսաստանի բնակչութիւնը: Ուստի, հիմնական սահմանափակումները հայերի մօտ լիակատար ուժով չէին գործում: Բոլոր վերոնշեալ գործոնները, միասին վերցուած, բարենպաստ պայմաններ ստեղծեցին Մերձսեւծովեան հիւսիսային աւազանի հայերի առեւտրի եւ ձեռնարկատիրութեան զարգացման համար: Դա իր հերթին, հանդիսացաւ այն ներդրումը, որ հայ առեւտրական կապիտալը կատարեց ռուսական կայսրութեան այդ երկրամասում կապիտալիստական արտադրանքային սաղմնաւորման եւ զարգացման, ինչպէս նաեւ ապրանքադրամային յարաբերութիւնների ծաւալման գործում:

Մերձսեւծովեան աւազանի հայերի ինչպէս ներքին, այնպէս էլ արտաքին առեւտուրը, ի տարբերութիւն Ռուսաստանի մնացած բոլոր շրջանների, հանդէս էր գալիս որպէս առաւել առաջաւոր տնտեսաձեւ: Դրան պէտք է աւելացնել այն, որ այդ երկրամասի հայ վաճառականութիւնն, ի տարբերութիւն Աստրախանի հայերի, իր արտաքին առեւտրական գործառնութիւններում հիմնականում օգտագործում էր իր շրջանի արտադրանքը, այսինքն օգտուում էր տեղական շուկայի առաջակներից:

Յատկանշական է, որ Նոր Նախիջեւանի եւ Գրիգորիոպոլի ար-



դիւնարբերութիւնը, այնպէս, ինչպէս նաեւ Մերձսեւծովեան աւազանի այլ կենտրոններում, զարգանում էր առետրի, որպէս գերիշխող գործօնի, ուժեղ ազդեցութեան տակ: Ի վերջոյ, հայկական քաղաքների արդիւնաբերական ձեռնարկութիւնների ճիւղային ուղղութիւնները կազմաւորւում էին ապրանքների վաճառահանման պահանջարկի ազդեցութեան տակ:

Այսպէս, Նոր Նախիջևեանի եւ Գրիգորիոպոլի ճարպահալ ձեռնարկութիւնների արտադրանքը, որոնց արտադրական ցուցանիշները Ռուսաստանի համանման ձեռնարկութիւնների համեմատ աւելի բարձր էին, հայ վաճառականների կողմից արտահանւում էր արտաքին շուկայ: Արտահանումը իրականացւում էր գերազանցապէս միջնորդների միջոցով: Գրիգորիոպոլի ճարպահալ ձեռնարկութիւնների արտադրանքն, օրինակ, հասնելով Օղեսա, հարաւային այդ երկրամասի ճարպահալ գործարանների արտադրանքի հետ միասին արտահանւում էր, ասենք, Անգլիա, անուանուելով այնտեղ «ռուսական ճարպ»:

Տեղում, արտադրուող եւ արտահանման առաքուող արժէքաւոր ապրանքներից էր նաեւ ցորենը: Սկսած 19-րդ դ. առաջին քառորդից, Սեւ ծովի հիւսիսային աւազանում որոշակիօրէն զարգանում է ապրանքային հողագործութիւնը: Ինչպէս ամբողջ հարաւային երկրամասում, այնպէս էլ հայկական գաղութներում, տեղացի վաճառականների արտահանման հիմնական ապրանքը հացահատիկն էր: Վիճակագրութիւնը վկայում է, որ աճեցրած ցորենի միայն մի փոքր մասն էր գնում տեղի բնակչութեան պահանջի բաւարարմանը, եւ բերքի մեծ մասը արտահանւում էր:

Դրանով էր, ըստ էութեան, բացատրւում աղետաբերական ցանքերի կիրառումը հայերի հողագործական տնտեսութիւններում: Այնուամենայնիւ, հայերի կողմից արտահանուող ցորենի զգալի մասը իրենց արտադրանքը չէր, այլ գնւում էր Ռուսաստանի կենտրոնական նահանգներում: Հացահատիկի առետրում հայ վաճառականների մասնագիտացումը յանգեցրեց հացահատիկի առետրով զբաղուող վաճառականների համաքարական կազմակերպութեան ստեղծմանը:

Հացահատիկի առետրուրը կատարւում էր, հիմնականում, ծովային ուղիներով: Առաւել խոշոր հայ վաճառականները նաւահանգստներում ունէին անգամ հացահատիկի պահեստներ: Հայ վաճառականները ծովային ուղիներով արտահանում էին նաեւ Արեւելքում բարձր պահանջարկ ունեցող այլ ապրանքներ: Այդ եւ ուրիշ փաստերը վկայում են, որ հայերը նշանակալից դեր էին խաղում Սեւ եւ Ազով ծովերի միջով իրականացուող արտաքին առետրում:

Նշանակալից էր յատկապէս Սեւ ծովի հիւսիսային աւազանի հայ վաճառականութեան դերը երկրամասի ներքին առետրում: Ի տարբերութիւն այլ երկրամասերի, հայ առետրական կապիտալին յատուկ տեղ էր վերապահուած Ռուսաստանին միացած այդ շրջաններում նոր, կապիտալիստական յարաբերութիւնների ձեւաւորման գործում:

Կապիտալիստական արտադրանքի սկզբնաւորումն ու զարգացումը, ինչպէս նաեւ ապրանքա-դրամային յարաբերութիւնների տարածումը մեծ վնաս հասցրեցին հայ եւ ոչ միայն հայ ձեռնարկատէրերի մանր արտադրութեանը:

Մանր արտադրութեան առաջընթացը եւ արդիւնաբերութեան մէջ կապիտալիստական յարաբերութիւնների սաղմնաւորումը մի կողմից, ռուսական կայսրութեան հարաւում ազատ տարրերի առկայութիւնը եւ ճորտատիրութեան բացակայութիւնը միւս կողմից, նպաստում էին աշխատանքի հասարակական բաժանմանը: Դա, իր հերթին, նպաստում էր ներքին եւ արտաքին շուկաների հարաւի հետ աւելի սերտ կապերի հաստատմանը: Յայտնի է, որ հենց այս կապերն էին նպաստում այդ շրջանների տնտեսական կեանքի առաջընթացի զարգացմանը:

Մերձսեւծովեան հիւսիսային աւազանի հայ գաղութները մեծ դեր խաղացին նշուած շուկայական կապերի հիմնադրման եւ ամպրապնդման գործում: Ի տարբերութիւն Ռուսաստանի հարաւի հայերի շրջանում՝ Ղրիմում, Նոր Նախիջևեանում եւ Գրիգորիոպոլում բաւականին ուժեղ էր զարգացած տոնավաճառային եւ մշտական ներքին առետրուրը: Հայ վաճառականները ակտիւ մասնակցում էին ոչ միէլն Ղրիմի, Նովոռոսիայի, Դոնի եւ Ազովի, այլ նաեւ Ռուսաստանի ներքին քաղաքների տոնավաճառային առետրին: Նրանք վաճառքի էին հանում, հիմնականում, Թուրքիայից եւ Պարսկաստանից բերուած արեւելեան ապրանքներ:

Հայ գաղութները համարւում էին ներքին առետրի յայտնի կենտրոններ: Եւ դա ոչ միայն այն պատճառով, որ մասնակցում էին Ռուսաստանի ներքին նահանգների եւ ծայրամասերի տոնավաճառային առետրին, այլ նաեւ նրանով, որ այդ գաղութներում ծաղկում էր նաեւ մշտական, գլխաւորապէս մանր առետրուրը: Ղրիմի, Հիւսիսային Կովկասի, Մերձսեւծովեան եւ Մերձազովեան աւազանի հայերը խանութներ եւ կրպակներ էին բացում եւ ամբողջ տարուայ ընթացքում վաճառքի էին հանում ամենազանազան ապրանքներ: Մանր առետրից բացի հայ վաճառականութիւնը Ռուսաստանի հարաւի սահմաններում զբաղւում էր նաեւ մեծածախ առետրով, որի ծաւալները բաւականին մեծ էին:

Նոր Նախիջևեանի եւ Գրիգորիոպոլի հայ վաճառականների ներքին առետրուրը, ինչպէս տեսնում ենք, ընդգրկում էր երկրի մի շարք շրջաններ: Հարկ է յատուկ նշել այն դերը, որ հայ առետրական կապիտալն ունեցաւ Հիւսիսային Կովկասում: Ռուսաստանի ներքին շուկաների հետ կապուած հայերի առետրական գործունէութիւնը զգալիօրէն նպաստեց Հիւսիսային Կովկասում լեռնաբնակների բնատնտեսութեան հիմքերի քայքայմանը եւ նրանց տնտեսութիւնների ներքաշմանը ապրանքա-դրամային յարաբերութիւնների համառուսական ոլորտի մէջ: Այդ պարագան նպաստում էր Կովկասում նոր, կապիտալիստական յարաբերութիւնների հաստատման համար նախապայմաններ ստեղծելուն:

Այլ խօսքով, մերձսեւծովեան հայերի ազատ առետրական ձեռնարկութիւնը բաւականին եկամտաբեր էր հայ վաճառականութեան համար եւ միաժամանակ նպաստում էր Մերձսեւծովեան հիւսիսային աւազանում ընթացող՝ կարեւոր տնտեսական գործընթացներին: Սակայն եթէ այստեղ 18-րդ դ. վերջին երրորդում առետրական կապիտալը դեռ նոր էր ուժ հաւաքում,



ապա Աստրախանի հայ վաճառականութիւնը աստիճանաբար զիջում էր, ռուս-պարսկական առեւտրում, գրաղեցրած իր դիրքերը: Այդ հանգամանքն այնքան դանդաղ էր ընթանում, որ իրականում նշմարուեց միայն 18-րդ դ. վերջին: Սակայն դարի կէսերին Աստրախանի հայ վաճառականները ամենաակտիւ, իր շատ կողմերով նաեւ առաջատար, դեր էին խաղում Աստրախանի բոլոր ուղղութիւններով կատարուող առեւտրում:

18-րդ դ. երկրորդ կէսին Աստրախանի հայ վաճառականներն էին վճռորոշ դեր կատարում Արեւելքի հետ առեւտրական կապերում: Հայ վաճառականները պարսկական մետաքսի առեւտրում շարունակում էին միջնորդ դեր կատարել Ռուսաստանի եւ Արեւմտեան Եւրոպայի երկրների միջեւ:

18-րդ դ. կէսերին հայերի տեսակարար կշիռը մետաքսի ներմուծման գործում, որպէս կանոն, 70 տոկոսից չէր իջնում: Դա շատ ակնյի բարձր էր, քան այլ ազգերի վաճառականների ներմուծումը: Ռուս վաճառականները երկրորդ դերերում էին: Ընդ որում, հայ վաճառականների շրջաններում մետաքսի առեւտուրն իրագործում էր գլխաւորապէս (70-90 տոկոս) ռուսաստանահայատակ հայերի, հիմնականում Աստրախանի հայերի միջոցով: Պարսկական մետաքսի մեծ մասը հայ վաճառականները ուղարկում էին Պետերբուրգ, իսկ այնտեղից արդէն՝ Անգլիա: Հայերի տեսակարար կշիռը բարձր էր նաեւ բամբակի առեւտրում:

Աստրախանի հայ վաճառականների գործունէութեանը ընդհանուր առմամբ յատուկ էին՝ նեղ մասնագիտական բացակայութիւնը, առեւտրական գործառնութիւնների երկկողմանի բնոյթը, ականդական երթուղիները, որտեղ կարելու էր էին խաղում արտաքին նաւահանիքստները: Հայերի տրանզիտային առեւտուրը հիմնականում մեծածախ բնոյթ էր կրում: Զուղայեցիների հետ կապուած վաճառականները օգտւում էին վարձու աշխատանքով ապրող մարդկանց ծառայութիւններից: Այդ եղանակով հայ վաճառականների այդ խմբի մօտ ի յայտ եկաւ ճիւղաւորուած առեւտրական վարչաապարատ:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ հայ վաճառականութիւնն ակնյի կազմակերպուած էր հանդէս գալիս, քան այլազգի, այդ թւում նաեւ ռուս վաճառականները: Այլ հանգամանքների հետ միասին, դրանով էր բացատրուում հայերի յաջողութիւններն ու առաջատար դերը ռուս-պարսկական առեւտրում: Սակայն, ինչպէս արդէն նշել ենք, 18-րդ դ. երկրորդ կէսին Աստրախանի հայերը սկսեցին աստիճանաբար զիջել իրենց դիրքերը: Արդէն 70-ական թուականներին նկատուում էր Ռուսաստանի հայերի առեւտրական գործառնութիւնների ծաւալների կրճատումը: Դրա կողքին բարձրանում էր ինչպէս ռուս, այնպէս էլ պարսիկ վաճառականների տեսակարար կշիռը: Դրա հիմքում ընկած էին մի շարք պատճառներ: Նախ եւ առաջ, 18-րդ դ. առաջին կէսին գծագրուեց ռուս վաճառականութեան հզօրացման միտումը, որի դիրքերը ռուս-պարսկական առեւտրում մի փոքր բարձրացան: Դրանից զատ, Պարսկաստանի ներքին քաղաքական եւ տնտեսական իրավիճակի որոշակի կայունացումը յանգեցրեց Ռուսաստանի միջով մետաքսի տրանզիտային

առեւտրում պարսիկ վաճառականների կշիռի բարձրացմանը: Ի լրումն թուարկածների ասենք, որ կար նաեւ մէկ այլ պատճառ, որը ցաւօք դուրս է մնացել հետազօտողների ուշադրութիւնից: Այն կայանում է նրանում, որ 18-րդ դ. երկրորդ կէսին Ռուսաստանի տնտեսութեան մէջ Աստրախանի հայերի առեւտրական կապիտալի ներաճման խորացուող ընթացքը նպաստում էր Աստրախանի վաճառականների վերակողմնորոշմանը դէպի ռուսական շուկայ: Դրա հետեւանքով, ռուս-պարսկական առեւտրում միջնորդի դերը լիովին վերցրեցին Զուղայի ընկերութիւնը եւ հենց իրենք, պարսիկ վաճառականները:

Մենք կրկին մերձեցանք ռուսական տնտեսութեան մէջ հայ առեւտրական կապիտալի ներթափանցման խնդրին: Այդ գործընթացը ընդգրկել էր հայերի բոլոր բնակավայրերը, սակայն ամէն երկրամասում ունէր զարգացման իր ժամկէտներն ու փուլերը: Այդ գործընթացների հիմքում ընկած էին ինչպէս օբյեկտիւ, այնպէս էլ սուբյեկտիւ գործօններ:

Հայ եւ ռուս առեւտրական կապիտալների միաձուլման ընթացքը առաջին անգամ երեւան եկաւ 18-րդ դ. սկզբին՝ Աստրախանում: Յետագայում այն տարածուեց Ռուսաստանի կենտրոնական շրջաններում՝ Մոսկուայում եւ Պետերբուրգում, ինչպէս նաեւ ընդգրկեց Հիւսիսային Կովկասը: Արդէն 18-րդ դ. վերջին այդ գործընթացին միացաւ նաեւ Մերձսեւծովեան հիւսիսային աւազանի, իսկ 19-րդ դ. սկզբին՝ Բեսարաբիայի հայերի կապիտալը:

Ռուսական առեւտրա-արդիւնաբերական շրջանների հետ հայ վաճառականութեան մերձեցումը, որպէս միտում, ինքնըստինքեան, հանդէս եկաւ որպէս Ռուսաստանում հայ վաճառականական կապիտալի զարգացման տրամաբանական հետեւանք: Հայ գաղութների վաճառականութիւնն այսպէս, թէ այնպէս ինչ-որ չափով կապուած էր իրեն շրջապատող տնտեսական միջավայրի հետ: Ռուսաստանի սահմաններում իրագործուող առեւտուրը եւ կայսրութեան խոշոր տնտեսական կենտրոնների հետ ռուսահայ վաճառականների կապերի հաստատումը նրանց դուրս բերեցին ազգային շրջանակներից, զգալիօրէն ընդլայնելով հայերի առեւտրական գործունէութեան ոլորտը: Միւս կողմից, ռուսական քաղաքների հետ հայ վաճառականների առեւտուրը լրացրեց արեւելեան ապրանքների նկատմամբ ռուսական տնտեսութեան պահանջարկները:

Մինչ այս, խօսքը գնում էր հայ գաղութների եւ բնակավայրերի տնտեսական կեանքի վրայ ազդեցութիւն ունեցող, այսպէս կոչուած, օբյեկտիւ գործօնների մասին: Նրանց հետ մէկտեղ կայսրութիւնում ի յայտ եկան նաեւ սուբյեկտիւ բնոյթ կրող սոցեալ-տնտեսական գործօններով պայմանաւորուած հանգամանքներ: Այդ գործօնները չէին կարող չանդրադառնալ Ռուսաստանում բնակուող հայ վաճառականների վրայ: Նկատի պէտք է առնել սակայն, որ վերոնշեալ գործօնները փոխկապակցուած եւ փոխպայմանաւորուած էին:

Սուբյեկտիւ գործօնների դրսեւորումը պայմանաւորուած էր հետեւեալ հանգամանքով: Յայտնի է, որ 18-րդ դարում Ռուսաստանի հայ վաճառականութիւնը օգտւում էր շնորհագրերով իրեն վերապահուած ազատ առեւտրի իրաւունքից: Ազատ ձեռնարկատիրութիւնը տնտեսապէս եկամտաբեր



էր ինչպէս հայ վաճառականութեան, այնպէս էլ ռուսական գանձարանի համար:

Ի տարբերութիւն հայերի, ռուս վաճառականութիւնը, ներգրաւուած լինելով գիւղիաների (յատուկ վաճառականական կազմակերպութիւն) մէջ, շատ խիստ կարգորոշուած էր իր գործունէութեան ոլորտում:

Հայ վաճառականութիւնը, որը սովոր էր բազմաբնոյթ եւ, հիմնականում, վարկային առեւտրին, գիւղականութեան շրջանակներում հնարաւորութիւն չէր ունենայ ծաւալելու ընդարձակ ձեռնարկատիրական գործունէութիւն: Հետեւաբար, միայն ազատ առեւտրի զարգացման պայմաններում առեւտրական շրջանառութիւնները եկամտաբեր կը լինէին հայ վաճառականութեան համար: Այդ պարագայում, ինչպէս արդէն նշել էինք, շահում էր նաեւ Ռուսաստանի պետական գանձարանը:

Ռուսական կենտրոնական իշխանութիւնները երկմտում էին հայ վաճառականութեան հանդէպ իրենց գործողութիւններում: Պատճառը հասկանալի էր, ռուս վաճառականութիւնը պահանջում էր կենտրոնական իշխանութիւններից հայերին զրկելու առեւտրի եւ ձեռնարկատիրութեան ազատութիւնից: 1785 թ. սկսած, հայերին արտօնութիւններից զրկելու եւ գիւղիաներում ստիպողաբար գրանցելու իշխանութիւնների փորձերը նախապէս ոչ մի արդիւնքի չյանգեցրին: Գանձարանի շահերը հարկադրեցին կառավարութեանը հայերին կրկին ազատ գործունէութիւն վերապահել, արգելուեց ռուսական դասային կարգերում նրանց ստիպողական գրանցումը եւ յետաձգուեց գիւղիաներում հայ վաճառականների գրանցումը: Այդ արտօնութիւնները վերաբերում էին, առաջին հերթին, Աստրախանի հայերին:

Ռուսաստանի եւ յատկապէս նրա հարաւային շրջանների սոցեալ-տնտեսական զարգացման մէջ 19-րդ դ. սկզբին նշմարուող միտումները հարկադրեցին կենտրոնական իշխանութիւններին հրաժարուելու անգամ այն տնտեսական եկամտներից, որ պետական գանձարանին բերում էին հայերի առեւտուրն ու ձեռնարկատիրութիւնը: Ռուս վաճառականութեան շահերը պահանջում էին վերացնել հայ վաճառականների բացառիկ կարգավիճակը: Առաւել եւս, որ զարգացող ռուսական բուրժուազիան, վաճառահանման շուկաներ փնտրելով, իր հայեացքն ուղղեց դէպի պետութեան սահմանային շրջանները, ուր օտարերկրեայ, մասնաւորապէս հայ վաճառականների ակտիւութիւնը պահանջում էր գերծ պահելու ռուս վաճառականութեանը նրանց մրցակցութիւնից: Ուստի կառավարութիւնը ստիպուած էր պաշտպանելու Ֆինանսների նախարար Ե. Տ. Կանկրինի առաջարկութիւնը եւ 1824 թ. նոյեմբերի 14-ի հրամանագրով պարտադրեց բոլոր ռուսահայ վաճառականներին գրանցուելու գիւղիաներում: Այդ որոշումը նպաստեց ռուսական տնտեսութեան մէջ հայ առեւտրական կապիտալի ներաճման արագընթացին:

Այսպէս հայ վաճառականութիւնը ներգրաւուեց ռուսական պետութեան տնտեսական զարգացման ընդհանուր ընթացքի մէջ, որի շնորհիւ ժամանակի ընթացքում գրեթէ լիովին կորցնելով իր ազգային դէմքը, ձուլուեց ռուսական առեւտրա-արդիւնաբերական բուրժուազիայի մէջ:

Այսպիսով հայ առեւտրական կապիտալը լրացրեց եւ հարստացրեց

ռուսական հասարակութեան առեւտրա-ձեռնարկատիրական շերտերը: Սակայն հայ վաճառականութիւնը կոշուած էր մէկ այլ կարեւոր դեր խաղալու: Արդէն 18-րդ դ. սկզբին Աստրախանի հայ գաղութում նկատոււմ էր արդիւնաբերական կապիտալի ձեւաւորման միտում, որի վկայութիւնն է մանածագործական արդիւնաբերութեան ծագումն ու զարգացումը: Այսատեղ ուրուագծոււմ են արդիւնաբերականի հետ առեւտրական կապիտալի միաձուլման սկզբնական ձեւերը, որը դրսեւորոււմ էր Աստրախանի ունեւոր հայ վաճառականների կողմից իրենց կապիտալը մանածագործական արդիւնաբերութեան մէջ ներդնելով:

Ռուսաստանի հարաւում առեւտրական վերաճումը արդիւնաբերականի, հիմնականում, տեղի էր ունենում դասական եղանակով: Յայտնի է, որ առեւտրական կապիտալը նախորդում է արդիւնաբերական կապիտալի ձեւաւորմանը եւ տրամաբանօրէն հանդիսանում է այդ ձեւաւորման անհրաժեշտ նախապայմանը: Ռուսաստանի հարաւի աշխարհաքաղաքական իրավիճակը, ուր զարգանում էր Աստրախանի հայերի առեւտրական կապիտալը, որոշակի ճշգրտումներ մտցրեց արդիւնաբերական կապիտալի ձեւաւորման մէջ: 18-րդ դ. առաջին կէսին Աստրախանի հայ վաճառական-ձեռնարկատէրերի շրջանում առեւտրական եւ արդիւնաբերական կապիտալների ձեւաւորումը ընթանում էին գրեթէ զուգահեռաբար: Դա շատ հազուադէպ երեւոյթ էր: Միւս կողմից, մենք տեսնում ենք, որ այստեղ հենց հայ ձեռնարկատէրերի տնտեսութիւններում աւելի վաղ, քան Ռուսաստանի որեւէ երկրամասում նկատոււմ է առեւտրական կապիտալի արդիւնաբերականի վերաճման գործընթացը:

Աստրախանի հայերի տնտեսական զարգացման այդ առանձնայատկութիւնները ունէին իրենց պատճառները: Աստրախանի զբաղեցրած կարեւոր դիրքը, որպէս մետաքսի հումքի, բամբակի եւ ներկող նիւթերի ռուս-պարսկական տրանզիտային առեւտրի փոխաբեռնման կէտի, ուր, առաջատար էին հայ վաճառականները, նպաստում էր Աստրախանի արդիւնաբերութեան մասնագիտացմանը՝ արեւելեան տիպի մետաքսէ եւ բամբակի գործուածքեղէնի արտադրման ուղղութեամբ: Կապիտալի դրսից բերուած հումքի առկայութիւնը, ջուլհակ վարպետների ներհոսքը, այդ գործուածքեղէնի նկատմամբ բարձր պահանջարկը այն գործօններն էին, որոնք նպաստեցին մետաքսագործական եւ բամբակագործական ձեռնարկութիւնների ստեղծմանը: Դրանց տէրերը դարձան Աստրախանի հայ վաճառականները:

Հարաւում ազատ ձեռքերի եւ եկուոր ջուլհակ-վարպետների առկայութեան փաստը պայմանաւորեց մանածագործական արդիւնաբերութեան եւ Աստրախանի ու հարաւի այլ իւրացուող տարածքների տնտեսական կառուցուածքի սկզբունքային տարբերութիւնը Ռուսաստանի արդիւնաբերութեան այլ ճիւղերում եւ երկրամասերում տիրող շահագործման ճորտատիրական եղանակներից: Այդ իմաստով, Աստրախանի մանածագործական արդիւնաբերութիւնը օրինակ էր ծառայում որպէս մասնագիտացուած տնտեսական շրջան, որը սերտօրէն կապուած էր շուկայի հետ ինչպէս հումքի ձեռքբերման, այնպէս էլ արտադրանքի վաճառահանման առումով: Աստրախանի շրջանի



առանձնաշատկույթիւններէց էին նաեւ նրա աշխարհագրական մեկուսացուածութիւնը եւ յարակից շրջաններում գիւղական խիտ բնակչութեան եւ ճորտատիրութեան բացակայութիւնը: Դա է պատճառը, որ վարձու աշխատանքի համակարգը, որն աւելի ու աւելի էր տարածուել գտնուել մանածագործական արդիւնաբերութիւնում, Աստրախանում իշխող դերերում էր:

Վերջապէս, Աստրախանում մանածագործական արտադրութեան զարգացման համար ոչ պակաս կարեւոր հանգամանք էր արդիւնաբերութեամբ զբաղուելու համար պետական կարգաւորումը: 18-րդ դ. դա իրականացուել էր Մանուֆակտուր-կոլեգիայի հրամանագրերով եւ չէր խոչընդոտուել Աստրախանի հայ ձեռնարկատէրերի նախաձեռնութեանը: Նրանք տարբեր միջոցներ էին գտնուել նորանոր մանածագործական ֆաբրիկաներ հիմնելու համար:

Ամփոփելով ասուածը, գալիս ենք հետեւեալ եզրակացութեան: Ռուսաստանի հարաւում տեղի ունեցող որոշ գործընթացները, որոնք օրինաչափ էին պետութեան տնտեսական զարգացման համար, այստեղ դրսեւորուել էին պատմական ժամկէտներից աւելի վաղ: Խօսքը գնում է արդիւնաբերական կապիտալի սկզբնաւորման եւ առեւտրական կապիտալը արդիւնաբերականի վերածման մասին: Այդ երկու գործընթացները իրենց զարգացման մէջ ոչ մի տեղ այդքան միաձուլուած չէին, ինչպէս վերոնշեալ երկրամասում:

Երկրորդ, հայ վաճառականները, որոնք, ինչպէս յայտնի է, Աստրախանում իշխող դիրքեր էին զբաղեցնում, փաստօրէն այն ռահվիրաներն էին, որոնց կապիտալը իր մասնակցութիւնն ունեցաւ Ռուսաստանի տնտեսութիւնում սկիզբ առնող կապիտալիստական արտադրանակի ձեւաւորման գործընթացում:

Վերը շարադրուած սոցեալ-տնտեսական զարգացման միտումները բնորոշ էին նաեւ Ռուսաստանի կենտրոնական շրջանների հայ վաճառականութեան համար, սակայն այստեղ այդ միտումները որոշ չափով ընթանում էին այլ կերպ: Եթէ Հարաւում հայ առեւտրականի կապիտալը արդիւնաբերականի վերածմանը, ինչպէս արդէն համոզուեցինք, նպաստում էին մի շարք օբյեկտիւ գործօններ, ապա կենտրոնում եւ Ուրալում նախապէս հայ վաճառականները ստիպուած էին անձամբ հնարաւորութիւններ որոնելու իրենց արդիւնաբերական ձեռնարկութիւնների զարգացման համար: Դրանով իսկ նրանք օբյեկտիւօրէն նպաստում էին արդիւնաբերական կապիտալի ակնառու կերպով ձեւաւորմանը:

Այդ լաւագոյնս երեւում է Ռուսաստանում առաւել ազդեցիկ հայ վաճառականներին՝ Լազարեան ընտանիքի օրինակով, որի առեւտրա-ձեռնարկատիրական գործունէութիւնը կապուած էր ինչպէս Մոսկուայի եւ Պետերբուրգի, այնպէս էլ Ուրալի հետ: Ճորտատիրական Ռուսաստանի պայմաններում Լազարեանները, առաջինը հասկացան, որ սեփականութեան ֆէոդալական ձեւերի առկայութեամբ չտիրապետելով տարածքների եւ բանուորական ձեռքերի, նրանք չէին կարող շարունակել իրենց արտադրու-

թեան զարգացումը: Այդ խոչընդոտի յաղթահարման կարեւորագոյն պայմանը ռուսական ազնուականի կոչում ստանալն էր:

Իր դասային անլիարժէքութիւնից նեղուածութիւնը եւ բոլոր միջոցներով ազնուականի կոչում ստանալու ձգտումը յատուկ էր նաեւ ռուս վաճառականութեանը: 18-րդ դ. երկրորդ կէսին ազնուականի կոչման վերականգնման միտքը առաջին անգամ համակեց ձեռներէջ հայ վաճառական Եղիազար Լազարեանին: 1774 թ. նրա ամբողջ ընտանիքը ստացաւ ազնուականի կոչում: Նրանք Ռուսաստանում ազնուականի կոչում ստացած առաջին վաճառականներից էին:

Ռուսական ազնուականի կոչումը Լազարեաններին թոյլ տուեց Պերմի նահանգում գնել լեռնարդիւնաբերական կալուածքներ՝ ճորտ գիւղացիների հետ միասին: Դա վաճառականների համար լիարժէք ձեռնարկատէր դառնալու առաւել հեշտ ուղի էր, քանի որ վաճառականները իրաւունք չունէին ձեռնարկատիրութեան համար ճորտեր գնել: Ձեռնարկատիրական գործունէութեամբ ազատօրէն զբաղուելու համար հայ վաճառականները ստիպուած էին ամէն անգամ ռուսական կառավարութեան յատուկ թոյլտուութիւնը խնդրել: Հանգամանք, որը զգալիօրէն թուլացնում էր իրենց նախաձեռնութիւնը:

Լազարեանների տնտեսական գործունէութեան էական նուաճումներից էր այն, որ Ուրալում գործարաններ ձեռք բերելով, թողարկուող արտադրանքը աւելացնելու նպատակով, նրանք կենսագործեցին մի շարք միջոցառումներ: Դրանցում ուրուագծուել էին արտադրութեան կապիտալիստական արտադրանքի նախանշանները: Շահագրգռուած լինելով գիւղացիներին գործարանային աշխատանքների մէջ լիովին ընդգրկելու, Լազարեանները կալուածատիրական հողերը բաժանեցին գիւղացիներին, վերացրեցին բնամթերքներով հարկերը, անասնապահութիւնը:

Լազարեանների արդիւնաբերական գործունէութեան յաջողութիւնները տպաւորիչ էին: Տիրելով աւելի քան տաս հազար գիւղացիների, նրանք հմտօրէն օգտագործում էին կալուածքային տնտեսութեան ռեզերվները՝ արդիւնաբերութեան զարգացման համար: Լազարեանների գործարանները տալիս էին Պերմի համակարգի 18 գործարանների ձուլած չուգունի մօտ 1/3-ը:

Լազարեանների ընտանիքի ձեռնարկատիրական գործունէութեան պատմութիւնը վկայում է, որ 18-րդ դ. երկրորդ կէսերից սկսուել է Ռուսաստանի կենտրոնական շրջանների եւ Ուրալի արդիւնաբերական ձեռնարկութիւնների հայերի տնտեսութիւններում արդիւնաբերական կապիտալի ձեւաւորումը: Սկսուել է հայ առեւտրական կապիտալի արդիւնաբերականի արագընթաց վերածման ժամանակաշրջանը: Եթէ այդ գործընթացը 18-րդ դ. առաջին կէսին միայն գծագրուել էր եւ ընդգրկուել էր առաւելապէս Ռուսաստանի հարաւի հայ զաղութները, ապա 18-րդ դարի վերջին երրորդում այն արդէն հասել էր իր աւարտին: Հայկական, ինչպէս վաճառականական, այնպէս էլ արդիւնաբերական կապիտալները դուրս եկան այն տնտեսական կենտրոններից, ուր աւանդաբար կենտրոնացուած էր հայերի ձեռնարկատիրական գործունէութիւնը:



Այսպիսով, Ռուսաստանում հայերի առևտրա-արդիւնաբերական գործունէութեան ուսումնասիրումը հետազօտողին յանգեցնում է մի շարք եզրակացութիւններ, որոնք վերաբերում են ինչպէս բուն հայկական առևտրական կապիտալին, այնպէս էլ Ֆէոդալական Ռուսաստանի տնտեսական զարգացման հիմնահարցերին՝ բացայայտելով եւ ընդգծելով նրանց փոխադամանաւորութիւնը: Առաջին հերթին լուսարանում է հայ վաճառական կապիտալի դերը Ռուսաստանի արեւելեան առևտրում՝ Ռուսաստանի տնտեսական կեանքի զարգացման ու ռուսական առևտրական եւ արդիւնաբերական կապիտալի ձեւաւորման համար այդ առևտրի նշանակութեան տեսակէտից: Սակայն, եթէ աւելի խոր վերլուծենք այդ գործընթացները, ապա կարող ենք պարզաբանել Ռուսաստանի սոցեալ-տնտեսական զարգացման նաեւ այլ հարցեր, որոնց հետ այսպէս թէ այնպէս առնչուել է հայ առևտրական կապիտալը: Դա եւ համառուսական շուկայի ձեւաւորման, եւ սկզբնական կուտակման եւ, իհարկէ, տեղական շուկաների մեկուսացուածութեան վերացման խնդիրներն են: Սակայն կայ մի ասպարէզ, որտեղ հայ առևտրական կապիտալի դերը յատկապէս նշանակալից է: Հայ վաճառականների եւ ձեռնարկատէրերի կապիտալը, մասնակցելով Ֆէոդալական Ռուսաստանի տնտեսական կեանքում տեղի ունեցող խոր տեղաշարժերին, զգալիօրէն նպաստում էր ռուսական կայսրութիւնում կապիտալիստական արտադրանական զարգացմանը: Միւս կողմից, հայ առևտրական կապիտալը Ռուսաստանի տնտեսական միջավայրի պայմաններում եւ նրա իսկ ազդեցութեան տակ հենց ինքն արդէն էական զարգացում ապրեց, որը եւ կանխորոշեց նրա յետագայ ճակատագիրը:

ARMENIAN MERCHANTS IN RUSSIA  
(END OF THE XVIIth — BEGINNING OF THE XIXth CENTURY)

JAURES H. ANANIAN

SUMMARY

Because of certain peculiarities in the history of the Armenian people Armenian trade capital increased to a larger extent outside Armenia than within its boundaries. In medieval times Armenian merchants held firm ground in a number of countries in Europe and Asia.

However, in the presence of factors such as competition with the national bourgeoisie in European countries and the English bourgeoisie in India, as well as the foreign occupation of Armenia, a considerable amount of the Armenian trade capital was redirected to Russia as from the beginning of the XVIIth century. The history of Armenian trade merchants and business activity in Russia leads to the drawing of certain conclusions concerning Armenian trade capital and the basic aspects of the economic development of southern Russia.

First of all, the role of Armenian trade capital in the context of relations between Russia and Eastern countries becomes clearer. Studying these problems other aspects of the socio-economic development of the Russian State come to surface. These are problems in the formation of the Russian market, accumulation of primary capital and, of course, unification of local and regional markets in Russia.

The capital, concentrated in the hands of Armenian merchants and businessmen promoted the development of capitalist production in the Russian Empire. On the other hand, the influence of Armenian trade capital in the Russian economic environment predetermined its destiny.

Effectively, Armenian merchants were involved in the overall flow of the economic development of the Russian State, and, having lost their national character gradually integrated into the Russian trade and industry bourgeoisie, thus forming a common economic mechanism.



## ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՍՏՐԱԽԱՆՈՒՄ

(18-րդ դ. վերջ—20-րդ դ. սկիզբ)

Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆ

Ռուսաստանի հայկական գաղթավայրերում 18-րդ դ. երկրորդ կեսին նախապայմաններ են ստեղծվում հասարակական եւ մշակութային ազգային ակտիւ գործունէութեան համար: Այդ խնդրում էական նշանակութիւն է ունեցել Ռուսաստանի հայերի տնտեսական եւ քաղաքական դերի աճը: Բացում են հայկական դպրոցներ, տպագրւում են հայերէն գրքեր:

Առաջին հայկական տպարանը Ռուսաստանում Գրիգոր Խալիպարեանի տպարանն էր, որը 1780 թ. Լոնտոնից Պետերբուրգ էր բերուել: Դա միաժամանակ երկրում այլալեզու առաջին տպարաններից մէկն էր: Այդ տպարանը Ռուսաստան փոխադրելու գործի նախաձեռնողը ռուսահայերի հոգեւոր առաջնորդ, արքեպիսկոպոս Յովսէփ Արղղութեանն էր: Նա հասարակական նշանաւոր գործիչ էր եւ լաւ էր հասկանում ազգային տպարանի նշանակութիւնը հայերէն գիրն ու գրականութիւնը պահպանելու եւ տարածելու գործում:

Պետերբուրգում գտնուելու ժամանակ (1780-1789 թթ.) տպարանը լոյս է ընծայել 14 գիրք, որոնք մեծ դեր են խաղացել հայ մշակութային կեանքում եւ կրթական գործում: Բաւական է յիշատակել «Տետրակ այբբենականը», «Եղիշէ. գիրք, որ կօչի Եղիշէ պատմագիրք (Պատմութիւն Վարդանանց)», Գրիգոր Խալիպարեանի «Գիրք, որ կօչի շաւիղ լեզուաբանութեան» (հայ-ռուսական բառարան), Կղէոպատրա Սարաֆեանի «Գիրք, որ կօչի բանալի գիտութեան» եւ այլն:<sup>1</sup>

1. Բոլոր այդ գրքերը գտնուում են Հայաստանի ազգային գրադարանում եւ Երեւանի մի շարք ուրիշ գիտական գրադարաններում: Դրանց մատենագիտական նկարագրումը տես «Հայ հմատիպ գրքի մատենագիտական ցուցակ» Երեւան, 1963, էջ 170 եւ յաջորդները, ինչպէս նաեւ Ն.Ա. Ոսկանեան, Բ.Ա. Կորկոտեան, Ա.Մ. Սաւոյեան, Հայ գիրքը 1512-1800 թուականներին (Հայ հմատիպ գրքի մատենագիտութիւն), Երեւան, 1988



1789 թ. Գ. Խալզարեանի մահից յետոյ, Յ. Արղութեանը Ռուսաստանի հայերի մէջ հանգանակութիւն կազմակերպեց՝ Խալզարեանի թողած բազմաթիւ պարտքերը հատուցելու եւ տպարանը Խալզարեանի ժառանգորդներից զնելու համար:<sup>2</sup> Նոյն տարին Արղութեանը այդ տպարանը տեղափոխում է Նոր Նախիջևան, ըստ երեւոյթին ցանկանալով մտեցնել այդ Ռուսաստանի հարաւի հայկական կենտրոններին, քանի որ Պետերբուրգում գտնուելով՝ տպարանը կտրուած էր Ռուսաստանի հայերի հիմնական զանգուածից եւ անջատուած էր բուն Հայաստանից:

Նոր Նախիջևանում գործելու 6 տարուայ ընթացքում այդ տպարանում, որն արդէն կոչւում էր «Տպարան Նորին բարձր սրբազնութեան Սուրբ Խաչ վանիցն», տպագրուեց մօտ 20 գիրք: Դրանցից բաւական է նշել Ստեփաննոս Օրբելեանի «Բան բարաոնական ոգեալ դեմաոնաբար», «Յովհաննէս Երզնկացու «Վիպասանութիւն յերկնային մարմնոց շարժմանէ», Յովսէփ Արղութեանի «Տետրակ համառօտ անուանեալ Դուռն ողորմութեան» եւ այլն:<sup>3</sup>

Բոլոր գրքերի վրայ նշուած էր տպարանի վերը բերուած նոր անուանումը: Արղութեանը տպարանի աշխատանքներում ընդգրկում է այնպիսի մարդկանց, որոնք աչքի էին ընկնում կրթութեամբ եւ լեզուների իմացութեամբ: Դրանցից էին Թադէոս վարդապետ Մարուքեանը, Մարգար Խոջենց Երեւանցին: Թադէոս վարդապետը հրահրուած էր 1787 թ. Կոստանդնուպոլսից, սկզբից աշխատել է որպէս Արքեպիսկոպոսի քարտուղար: Նա յայտնի էր որպէս լայն զարգացած մարդ եւ շուտով նրան յանձնարարուեց տպարանում հրատարակուող գրքերի սրբագրութիւնը:<sup>4</sup> Իր ժամանակի կրթուած մարդկանցից էր Մարգար Խոջենցը: Նա տիրապետել է եւրոպական եւ արեւելեան շատ լեզուների եւ եղել է լաւ թարգմանիչ, գրող եւ խմբագիր:

Մի շարք հանգամանքներից ելնելով Արղութեանը որոշում է տպարանը փոխադրել Աստրախան, որտեղ գտնուում էր նրա մշտական պաշտօնատեղին: Տպարանի այդ նոր տեղափոխութիւնը կատարուել է 1796 թ. կամ 1795 թ. վերջերին:

Արդէն 1796 թ. Մայիսին Աստրախանում տպագրուել է առաջին գիրքը: Դա կայսրուհի Եկատերինա Երկրորդի հրովարտակն էր Պարսկաստանին յայտարարուած պատերազմի կապակցութեամբ:<sup>5</sup> Գրքոյկը տպագրուել է երկու լեզուներով՝ հայերէն եւ ռուսերէն, եւ բաղկացած էր 18 երկսիւն էջից (զուգահեռ տեքստով): Ռուսերէն տեքստի համար հաւանաբար օգտագործուել է 1792 թուից Աստրախանում գործող նահանգային տպարանի տառատեսակը: Նոր սկսուած պատերազմը հայ ժողովուրդի ազատագրական պայքարը

2. Լեօ, Յովսէփ Կաթողիկոս Արղութեան, Թիֆլիս, 1902, էջ 196: Տես նաեւ «Դիւան հայոց պատմութեան» գիրք Թ, Թիֆլիս, 1911, էջ 14  
 3. Տպարանի նախնական տարիների մասին տես Վ. Բարխուդարեան, Ռուսահայերի առաջին տպարանը, (ՊԲՀ, 1967, թիւ 1)  
 4. Լեօ, Երկեր, հատոր 3, Եր., 1973, էջ 583:  
 5. Եկատերինա երկրորդ: Հրովարտակ: Հայ. եւ ռուս. լեզուներով: Աստրախան, տպ. Արղութեանցի, 1796, 18 էջ

յաջողութեամբ աւարտելու մեծ յոյս էր ներշնչում: Դրանով է բացատրուում հայ բնակչութեան հետաքրքրութիւնը կայսերական հրովարտակի նկատմամբ:

1796 թ. Ապրիլի 5-ին Ղզլարում տեղի է ունեցել քաղաքի հայութեան հանդիսաւոր մաղթանքը, նուիրուած ռուսական բանակի դէպի Կովկաս ձեռնարկուող նոր արշաւանքին: Արարողութիւնը կատարուել է գեներալ Ի. Վ. Գուղովիչի ներկայութեամբ: Ելոյթ է ունեցել Թեմական Առաջնորդ Յովսէփ Արղութեանը: Այդ քարոզի տեքստը տպարանը հրատարակել է առանձին գրքոյկով:<sup>6</sup>

Երեք ամիս անց՝ 1796 թ. Օգոստոսին լոյս է ընծայուել «Ժամանակագրութիւն հասարակաց աղօթից (ժամագիրք)»:<sup>7</sup> Տպարանը նորից կոչւում էր «Արղութեանցի» կամ «Նորին բարձր սրբազանութեան», միայն Ն. Նախիջևանի Ս. Խաչ վանքի փոխարէն նշուած էր «ընդ Յովանեաւ Ս. Աստուածածնայ եկեղեցւոյն»:

Տպարանը Աստրախանում գտնուելու առաջին տարում յաջողուել է հրատարակել եւս մի գրքոյկ՝ Յովսէփ Արղութեանի «Կոնդակ օրհնութեան»:<sup>8</sup> Բացի կոնդակից, գրքոյկի մէջ զետեղուել են Յ. Արղութեանի 1796 թ. գրած մի քանի նամակ, հասցէագրուած հայ եւ ռուս գործիչներին, ինչպէս նաեւ Պ. Զուբովի նամակը Յ. Արղութեանին: Հայ հնատիպ գրքի մատենագրութեան հեղինակները կարծիք են յայտնել, որ Պ. Զուբովի նամակը տպագրուել է առանձին եւ ուղղակի պահպանուել նոյն կազմի մէջ Յ. Արղութեանի գրքոյկի հետ:<sup>9</sup> Եթէ այդպէս է, ուրեմն 1796 թ. Աստրախանում լոյս է ընծայուել ոչ թէ չորսը, այլ հինգ հայերէն գիրք:

Տպարանի պատմութեան այդ շրջանի մասին ուշագրաւ սկզբնաղբիւր են հանդիսանում Թադէոս վարդապետի նամակները Յովսէփ Արղութեանին, որոնք գրուած են 1797-1800 թթ. եւ պահուում են Մատենադարանում:<sup>10</sup> Այս շրջանում տպարանը հիմնականում զբաղուած էր երկու գրքերի տպագրութեամբ: Դրանցից առաջինը՝ «Սաղմոսի մեկնիչ»-ն<sup>11</sup> էր, որը պարունակում էր 13-րդ դ. հայ հեղինակ Վարդան Բարձրաբերդցու

6. Nouf ասացեալ ի Յովսէփայ պսակագգայ Ս. արքեպիսկոպոսէ հիւսիսային կողմանս եղեալ ամեցան ազգիս հայոց, ի 1796 թուոյ, Ապրիլի 5-ին Ղզլար, Աստրախան, 1796, 9 էջ  
 7. Ժամանակագրութիւն հասարակաց աղօթից (ժամագիրք), Աստրախան, 1796, 535 էջ  
 8. Յովսէփ Արղութեանց: Կոնդակ օրհնութեան: Պատոն Զուբով. նամակ արքեպիսկոպոսին: Աստրախան, 1796, 34 էջ  
 9. Ոսկանեան Ն.Ա., Կորկոտեան Լ.Ա., Սաւանան Ա.Մ. Հայ գիրքը 1512-1800 թուականներին (հայ հնատիպ գրքի մատենագիտութիւն): Երեւան, 1988, էջ 728  
 10. Տպարանի գործունէութեան այս շրջանի մասին տես նաեւ «Տասնութերորդ դարի Աստրախանի հայերի մշակութային կեանքի պատմութիւնից» (ՊԲՀ, 1964, թիւ 2) մեր յօդուածը  
 11. Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի, որ յօրինեալ սբանչի Աստուածաբանութիւն սուրբ եւ երջանիկ Տառն մեծին Վարդանայ Բարձրաբերդցոյ՝ լեզուագէտ եւ բազմապատակ վարդապետին հայոց...» Աստրախան, 1797, 520 էջ



մեկնությունները: Երկրորդ գիրքը՝ «Էֆիմերտէ»<sup>12</sup> նոյնպէս բաւական լայն տարածում ունէր ժամանակի կրթուած խաւերի շրջանում եւ պարունակում է տոմարական զանազան տեղեկություններ, գուշակություններ, երազահան եւ այլն: Երկու գրքերի ընտրությունն էլ պատահական չէր, քանի որ իր ժամանակի ընթերցողները ունէին նրանց պահանջը: Աչքի է ընկնում նաեւ տպագրուող գրքերի մեծ ծաւալը՝ աւելի քան 20-30 տպագրական մամուլ:

Թաղչոս եարդապետի եւ Արղութեանի նամակագրությունից շատ պարզ երեւում են այն դժուարությունները, որոնք խանգարում էին տպարանի աշխատանքներին: Իր հէնց առաջին նամակում Թաղչոսը գանգատոււմ է թղթի պակասությունից եւ խնդրում է արագացնել թղթի առաքումը Ռուսաստանի յայտնի հայ ֆարքիկանտ Յովհաննէս Լազարեանի ձեռնարկություններից:<sup>13</sup> Շատ բարդություններ էին առաջանում տպարանում աշխատողների սակաւաթուիւթեան պատճառով: Բացի Թաղչոս վարդապետից եւ Մարգար Սոջնցից, որոնք պատասխանատու էին գրական աշխատանքների համար, տպարանում, ըստ մեզ հասած փաստաթղթերի, աշխատում էին մէկական գրաշար, տպագրիչ եւ կազմարար, ինչպէս նաեւ մի քանի օգնական ու աշակերտ: Բանուորների այս կազմը մշտական չէր, եւ հենց այդ էր ամէնից շատ հոգս պատճառում ու դժուարություններ ստեղծում:

Այդ ամէնի հետեւանքով 1798 թ. կէսերին հազիւ աւարտուել է «Սաղմոսի մեկնիչ»-ի տպագրությունը, չնայած որ գրքի տիտղոսաթերթի վրայ նշուած է 1797 թուականը եւ թէպէտ այն դեռ չէր կազմուած եւ նկարագարուած:<sup>14</sup> 1798 թ. վերջերին կանգ էր առել նաեւ «Էֆիմերտէ»-ի տպագրութեան գործը:<sup>15</sup> Տպարանի աշխատանքը վերսկսուեց միայն գարնանը<sup>16</sup> եւ «Էֆիմերտէ»-ի տպագրությունը աւարտուեց միայն 1799 թ. Օգոստոսին:<sup>17</sup>

Գրքերի տպագրությունը ուշանում էր նաեւ այն պատճառով, որ պատրաստի մամուլները ուղարկոււմ էին Պետերբուրգ, Յովսէփ Արղութեանին՝ գրախօսելու համար, քանի որ կայսերական հրովարտակով ինքը, Արղութեանը, նշանակուեց գրաքննիչ:<sup>18</sup> Մենք մտածուած մանրամասն նկարագրում ենք նշուած գրքերի տպագրութեան հետ կապուած բարդությունները, որպէսզի ցոյց

12. «Գրքոյկ կոչեալ էֆիմերտէ, յորում պարունակի նախ՝ շրջան մշտնջեմաւոր զեկուցմանց, ապա՝ գուշակութիւնք մամական եղանակացն փոփոխմանց ըստ օրօց, եւ աղիւսակի երկուտասան մամոցն, յորս տեսանի յիւրաքանչիւր աւուրս պատահեալ՝ եւ բազմադէմի ներգործութիւն յետ այսոց բան Տօմար Հայոց եւ Հոռոմայեցոց. կից նմին պարգատօմար, մարմնախաշաց, երագահան, եւ տղայական հանճարեղութիւնք եւ պէսպէս ըզրոնլի խաղք» Աստրախան, 1797, 354 էջ

13. Մեսրոպ Մաշտոցի անուան հիմն ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան). Ֆ. Կաթողիկոսական դիւան, քղր. 6, վաւ. 127

14. Նոյն տեղում, վաւ. 39 եւ 40

15. Նոյն տեղում, վաւ. 88 եւ 95

16. Նոյն տեղում, վաւ. 11, 27, 28 եւ 58

17. Նոյն տեղում, քղր. 9, վաւ. 116, 118 եւ 127

18. Полное собрание законов Российской империи, СПб, 1830, Т. XXV, No. 18.455

տանք, թէ Ռուսաստանում հայ տպագրութեան հիմնադիրները ինչ դժուարություններ էին յաղթահարում ամէն մի գիրք տպագրելիս:

1797 թ. Աստրախանում տպագրուել է նաեւ «Տարեցոյց եւ Օրացոյց», որը արտատպուել է էջմիածնում հրատարակուած տօնացոյցից եւ վերամշակուել է «Վասն թուին Քրիստոսի 1797 եւ թուականիս հայոց ՌՄՍԶ»:<sup>19</sup>

Չպէտք է մոռանալ, որ հայկական տպարանի կարեւոր խնդիրներից մէկն էլ այն էր, որ նա կոչուած էր փրփագանդելու կառավարական այն միջոցառումները, որոնք ուղղուած էին այլ երկրներից հայերին Ռուսաստան ներգրաւելուն: Յատկապէս, 1797-1799 թթ. Պաւել 1-ը հայերին վերաբերող մի շարք հրովարտակներ էր տուել: Հաւանաբար, հենց այդ պատճառով էլ միտք էր ծագել հայերէն մի առանձին գրքոյկ հրատարակել, որը պարունակէր բոլոր գործող հրովարտակների տեքստերը: Այդ գրքոյկը, որը կոչոււմ է «Թարգմանութիւն պրիվիւեկացն հայոց» լոյս տեսաւ 1800 թ. աշնանը:

Գրքոյկը լոյս տեսաւ այն օրերին, երբ Յովսէփ Արղութեանը (արդէն որպէս Կաթողիկոս) գտնոււմ էր դեռեւս Աստրախանում: Հոկտեմբերի 7-ին հայերի իրաւունքների ու առանձնաշնորհումների վերաբերեալ կառավարական հրովարտակը յանձնելու առթիւ գումարուած յատուկ ժողովում Կաթողիկոսը հանդէս եկաւ ճառով եւ ջերմ շնորհակալութիւն յայտնեց ռուսական կառավարութեանը: Նրա այդ ելոյթի տեքստը եւս շուտով հրատարակուեց:

Աստրախանի հայկական տպարանի մշակութային-քաղաքական դերը չէր սպառոււմ գրքերի հրատարակումով եւ ռուսական կառավարութեան հրամանագրերի թարգմանութեամբ: Տպարանը միաժամանակ կազմակերպում էր գրքերի առաքումը Հայաստան կամ հայկական այլ գաղութներ: Դեռեւս 1788 թ., երբ տպարանը գտնոււմ էր Պետերբուրգում, այդտեղից Աստրախանի վրայով Նոր Ջուղա, ինչպէս նաեւ Պաղտատ ու Պասրա ուղարկուել է աւելի քան հարիւր հայերէն գիրք (այբբենարան, աղօթագիրք եւ այլն):<sup>20</sup>

Տպարանը Աստրախան փոխադրելուց յետոյ տեղի գաղութի դերը հայերէն լեզուով գրականութեան տարածման գործում աւելի մեծացաւ: 1797 թ. Հոկտեմբերին Թաղչոս վարդապետը հաղորդում էր Յովսէփ արքեպիսկոպոսին, որ զզարցի մղզախ Գաբրիէլի միջոցով նրան է ուղարկում մի մեծ կապոց գիրք, որը պարունակում է 10 օրինակ «Սաղմոսի մեկնիչ», 6 օրինակ «ժամագիրք» եւ 100 աղօթներ «Տէրողորմեայք»:<sup>21</sup> 1798 թ. Յուլիսին նա հաղորդում է, որ Նոր Նախիջեւան է ուղարկուած երկու արկղ գիրք, այդ թուում 150 օրինակ ոսկեկազմ «Սաղմոսի մեկնիչ», ինչպէս նաեւ «Տէրողորմեայք» եւ այլ գրքեր: Այդ նոյն նամակով նա խնդրում է Կարապետ վարդապետին՝ գրքերը շուտափոյթ ուղարկել Կոստանդնուպոլիս:<sup>22</sup>

19. Ն. Ս. Ոսկանեան եւ ուրիշներ, ԱԶ. աշխ., էջ 736-737

20. Տես «Դիւան հայոց պատմութեան», գիրք Գ, Թիֆլիս, 1894, էջ 81-82

21. Մատենադարան, Ֆ. Կաթողիկոսական դիւան, քղր. 6, վաւ. 96

22. Նոյն տեղում, քղր. 8, վաւ. 54 եւ 60



1800 թ. Դեկտեմբերին Թաղէոս վարդապետի, ինչպէս եւ 1801 թ. Մարտին Յովսէփ Արղուիթեանի մահը (որոնք Ռուսաստանում առաջին հայկական տպարանի ղեկավարներն էին) ծանր հետեւանքներն ունեցաւ տպարանի գործունէութեան համար: Այդ ժամանակուանից սկսած տպարանը դադարեց աշխատելուց: Երկար ժամանակ ոչ ոք չկարողացաւ նախաձեռնութիւն հանդէս բերել տպարանի աշխատանքները վերսկսելու համար:

Այդուհանդերձ Աստրախանի հայերը չէին կորցնում հայկական տպարանը վերականգնելու իրենց յոյսերը: Քաղաքում հայերէն տպագրական գործի նոր փուլը կապուած է գիմնազիայի ուսուցիչ աստրիացի Վէյսկհոպֆէնի գործունէութեան հետ: Երգեֆ Փոն Վէյսկհոպֆէնը ժամանել է Աստրախան 1811 թ. սկզբներին՝ տեղի գիմնազիայում գերմաներէնի ուսուցչի տեղը զբաղեցնելու համար: Նա կարճ ժամանակաշրջանում կողմնորոշուել է քաղաքի հասարակական մշակութային կեանքում եւ շուտով տեղական իշխանութիւններին առջեւ հարց է դրել շարաթաթերթ հրատարակելու մասին: Ընդ որում նա միանգամից առաջարկել է հրատարակել թերթը երկու լեզուով՝ ռուսերէն եւ հայերէն, քանի որ հասկանում էր հայերի կարեւոր դերը քաղաքի տնտեսական եւ հասարակական կեանքում: Աստրախանի հայերը ունէին իրենց ինքնավարութիւնը, կառուցել են մի քանի եկեղեցիներ, իսկ 1810 թ. հիմնել են հայկական դպրոց, որ կոչուել է Աղաբաբեան եւ գոյատեւել է մի դարուց աւելի: Պարզ է, որ հայերին անհրաժեշտ էր ունենալ լրագիր՝ քաղաքական, տնտեսական եւ մշակութային լրատուութեան համար:

Թոյլատրութիւնը ստանալով, Փոն Վէյսկհոպֆէնը, երկու ուրիշ օտարերկրացի՝ Լիտկէի եւ Գրեւի հետ պայմանագիր է կնքել համատեղ ուժերով տպարան կազմակերպելու մասին, իր կողմից վճարելով 2800 ռուպլի<sup>23</sup> 1812 թ. վերջերին նրանք ձեռք են բերում ռուսական տպարանի սարքաւորումներ եւ բացում են «Վոստոչնիյէ իզվեստիա» թերթի գրասենեակ: Տպարանի հայերէն բաժինը կազմակերպելու համար Վէյսկհոպֆէնը դիմել է հայ կաթողիկ եկեղեցու երեսփոխան Կղեմես Շահվերդեանի օգնութեանը: Միաժամանակ, Կ. Շահվերդեանը եղել է Աստրախանի հայկական ճիզվիթական ուսումնարանի տեսուչ եւ Փոն Վէյսկհոպֆէնը որպէս կրօնակից շփումներ է ունեցել հիմնականում հայ հասարակութեան կաթողիկ շրջանների հետ:

Հայերէն տպագրութեան գործը ձեռնարկելիս Վէյսկհոպֆէնը եւ Շահվերդեանը ցանկանում էին ձեռք բերել Աստրախանի Հայոց Թեմին պատկանող (նախկին Խալդարեան) տպարանը: Սակայն, չնայած անգամ Աստրախանի նահանգապետի աջակցութեանը, հայկական կոնսիստորիայի ղեկավարութիւնը մերժել է տպարանը վաճառելու առաջարկութիւնները, պատճառաբանելով, որ դա էջմիածնի Կաթողիկոսի սեփականութիւնն է: Բայց իրական պատճառը այն էր, որ հայ-լուսաւորչական եկեղեցին բացասական վերաբերմունք ունէր ճիզվիթների նկատմամբ, որոնք հայերի մէջ ակտիւ տարածում էին

23. Т. Остроумов. Исторический очерк Астраханской I-й мужской гимназии за время с 1806 по 1914 год. Астрахань, 1916, с. 36

կաթողիկոսութիւն: Չնայած, որ Աստրախանի հայ կաթողիկներն իրենց ազգային եւ իրաւա-վարչական առումով հայերի հետ նոյն համայնքին էին պատկանում, սակայն տպարանի տէրերը չէին ցանկանում, որ տպարանի նման գաղափարական ազդեցիկ միջոցը ընկնէր ճիզվիթների ձեռքը:

Այդ պատճառով, Վէյսկհոպֆէնի ձեռնարկած «Վոստոչնիյէ իզվեստիա» շարաթաթերթը սկսել է լոյս տեսնել սկզբից միայն ռուսերէն լեզուով: Թերթի առաջին համարը լոյս է տեսել 1813 թ. Յունուարի 29-ին: Դա եղել է Ռուսաստանի երկրորդ (Կազանից յետոյ, չհաշուած Պետերբուրգը եւ Մոսկուան) գաւառային թերթը: «Վոստոչնիյէ իզվեստիա»-ն լոյս էր ընծայուած ամէն Չորեքշաբթի օրը: 1813 թ. լոյս է տեսել 49 համար, իսկ յետագայում՝ տարեկան 52-ական համար:

Թերթը շատ տեղ էր յատկացնում Աստրախանի եւ հարակից շրջանների, այդ թւում Կովկասի, այնտեղ բնակուող ժողովուրդների կենցաղի եւ զբաղմունքների նկարագրութեանը: Դրանցից էին «Աստրախանի առեւտրի մասին», «Շահ Աբասի ժամանակ հայերի կողմից քաշած տանջանքների մասին», «Արեւելեան ժողովուրդների առածները» յօդուածները եւ այլն: Թերթը տեղեկութիւններ էր տալիս Կասպից Մովով եւ Վոլգայով նաւագնացութեան, դրամական կուրսերի, տարբեր ձեւի առեւտրական նորութիւնների մասին: Թերթի գրական բաժնում բանաստեղծութիւնների կամ առակների մի մասը՝ հայերէնից թարգմանութիւններ էին: Այնպէս որ չնայած թերթը լոյս էր տեսնում ռուսերէն լեզուով, բայց բովանդակութիւնից երեւում է, որ այն նախանշուած էր հայ բնակչութեան պահանջմունքները բաւարարելուն:

Քանի որ Վէյսկհոպֆէնը եւ նրա հետ կապուած հայերը չկարողացան ձեռք բերել հայկական տպարանը, նրանք որոշում են ստեղծել նոր տպարան: «Վոստոչնիյէ իզվեստիա» թերթի 1815 թ. Մայիսի 19-ի համարում յայտարարուած է, որ վարպետ Կոնստանտին Սերբերեակեանի ջանքերով ձուլուած են հայերէն տառերը եւ հայկական նոր տպարանը կարելի է արդէն պատրաստ համարել: Այդ փաստը հաստատելու համար յայտարարութեան տեքստ է տպագրուել նոյն համարում նաեւ հայերէն, նշանաբանելով Աստրախանում հայ տպագրութեան վերսկսելը: Պէտք է շեշտել, որ դա եղել է հայկական առաջին տպարանը, որը ստեղծուել է հենց տեղում, Ռուսաստանում եւ ոչ թէ բերուել է Եւրոպայից, ինչպէս եղել է էջմիածնի կամ Խալդարեանի տպարանների հետ:

Նոր տպարանի առաջին գործն է եղել «Ռուսաց եւ հայոց այբբենական տետրակը» որի միակ պահպանուած յայտնի օրինակը գտնուում է Կազանի համալսարանի գիտական գրադարանում: Այդ այբբենարանը<sup>24</sup> կազմել է Կ. Շահվերդեանը ժամանակի ռուսական այբբենարանի հիման վրայ: Գրքի բովանդակութիւնը տպագրուած էր զուգահեռ երկու լեզուով՝ ձախ կողմի էջերը

24. Ռուսաց եւ հայոց այբբենական տետրակ, արարեալ յուսումն դեռահաս տղայոց Հայկազնեաց... Թարգմանեցեալ ի Ռուսաց լեզուէ ի հայկական բարբառ ի Կղեմայ Շահվերդեանց-վերատեսչէ հայկազն-կաթողիկաց եզուիտական ուսումնարանի: ՅԱստրախան, յամի տեառն 1815



ուսուցիչներ, իսկ աջ կողմինը՝ հայերէն: Դասագիրքը ամենայն հաւանականութեամբ նախատեսուած է եղել ճիզվիտական ուսումնարանի համար, որտեղ Կ. Շահվերդեանը աշխատում էր որպէս տեսուչ:

Նոր տպարանի գլխաւոր խնդիրը մնում էր հայերէն թերթ հրատարակելը: Վէյսկհոպֆէնը գրաքննչական կոմիտէին ուղղուած իր դիմումի մէջ (1815 թ. Ապրիլին), նշել է, որ Աստրախան գալու առաջին իսկ օրերից ինքը նկատել է, որ այդ քաղաքում պարբերական մամուլ կարող է գոյութիւն ունենալ միայն հայերէն թարգմանութեամբ:<sup>25</sup>

Վերջապէս երկրեզու «Արեւելեան ծանուցմունք» թերթը սկսել է լոյս տեսնել 1816 թ. Յունուարից: Առաջին համարը լոյս է տեսել Յունուարի 5-ին (17-ին): Ամէն համարի իւրաքանչիւր էջը բաժանուած է եղել երկու մասի՝ ձախ սիւնակը շարուած էր ուսուցիչներ, իսկ աջը՝ հայերէն: Թերթի ամբողջ բովանդակութիւնը ներկայացուած է եղել երկու լեզուով:

Հայերէն թերթի հրատարակելը մեծ իրադարձութիւն էր ոչ միայն տեղի, այլ նաեւ ամբողջ Ռուսաստանի հայերի հասարակական եւ մշակութային կեանքում: Թերթը եղել է Ռուսաստանի առաջին հայերէն պարբերականը եւ ընդհանրապէս հայերէն առաջին պարբերականներից մէկը (1794 թ. սկսած), իսկ Աստրախանը՝ հայ պարբերական մամուլի չորրորդ (Մադրասից, Վենետիկից եւ Կալկաթայից յետոյ) կենտրոնը:

Աստրախանում հայերէն տպագրութեան վերսկսելը վկայում էր տեղի տնտեսական ու հասարակական կեանքում հայկական գաղութի չթուլացող ազդեցութեան մասին: Աստրախանի յայտնի գաւառապետ Ն. Ֆ. Լէոնտելը գտնում էր, որ Փոն Վէյսկհոպֆէնի եւ Լիտկէի տպարանը փաստօրէն գտնուել է Կ. Շահվերդեանի ձեռքին:<sup>26</sup>

Ընդամէնը լոյս է տեսել թերթի 27 համար՝ 1816 թ. Յունուարի 5-ից մինչեւ նոյն թուականի Յուլիսի 5-ը: Հետաքրքիր է, որ մինչեւ ընթացիկ հարիւրամեակի կէսերը հայ մամուլի պատմութեան ուսումնասիրողները չեն տեսել հրատարակութեան ոչ մի օրինակ, չէին իմանում ոչ թերթի հրատարակման տեւողութիւնը, ոչ էլ նոյնիսկ ստոյգ վերնագիրը:

1955 թ. Հայաստանի Պատմութեան ինստիտուտի գիտաշխատողներ Վ. Ոսկանեանը եւ Վ. Գրիգորեանը Աստրախանի մարզային գրադարանում յայտնաբերել են «Վոստոչնիյէ իզվեստիա-Արեւելեան ծանուցմունք» երկրեզու թերթի 1816 թ. Յուլիսի 5-ի համարը: Դրանով վերջնականապէս հաստատուել էր հայերէն թերթի գոյութեան փաստը, ճշդուել էր լրագրի անուանումը: Համարում գետեղուած է եղել յայտարարութեան հրատարակիչ Վէյսկհոպֆէնի մահուան եւ թերթի յետագայ հրատարակումը դադարեցնելու մասին: Այսպիսով, որոշուել էր նաեւ պարբերականի դադարեցման ժամանակը:<sup>27</sup>

25. Նոյն տեղում, ք. 5  
26. Список книг, брошюр и периодических изданий, печатавшихся в астраханских типографиях с 1797 по 1868 год. Астрахань, 1869 с.4  
27. Ոսկանեան Վ., Գրիգորեան Վ., Ռուսահայոց առաջին պարբերական «Արեւելեան ծանուցմունք»-ը: «Սովետական գրականութիւն» 1957, քիւ 3:

Սակայն այդ տեղեկութիւններն ամէնեւին էլ չէին տալիս թերթի մասին լրիւ պատկերացում: Անցաւ եւս տաս տարի եւ 1966 թ. Կազանի համալսարանի գիտական գրադարանում մենք ուրախութեամբ իմացանք «Արեւելեան ծանուցմունք» թերթի հաւաքածուի այդտեղ պահպանուելու մասին: Մեզ յանձնեցին «Արեւելեան ծանուցմունքի» ամբողջ հաւաքածուն: Այնտեղ գտնուել է նաեւ 1815 թ. Աստրախանում հրատարակուած «Ռուսաց եւ հայոց այրբենարանի» օրինակը, որի մասին մենք արդէն նշել ենք եւ որը նոյնպէս համարուում էր կորած:

Եւ այսպէս, արդէն պարզ էր, որ ուսահայոց առաջին պարբերականը լոյս էր տեսել 1816 թ. Յունուարի 5/17-ին: Շարաթաթերթը գոյութիւն է ունեցել ուղիղ վեց ամիս, վերջին՝ 27-րդ համարը լոյս է տեսել նոյն թուականի Յուլիսի 5/17-ին: Թերթի գրական բաժնում ուսական բանաստեղծութիւններ հայերէն բերում էին թարգմանաբար, նոյնպէս բանաստեղծական ձեւով: Թերթը գետեղել է նաեւ մի քանի գիտահանրամատչելի յօդուածներ՝ «Սիրած կենդանիների մասին» (թիւ 1-8), «Չինգիզ-խանի եւ իր հզօրութեան մասին» (թիւ 20-21), «Մի քանի բան կովկասեան ժողովուրդների մասին» (թիւ 23-25), «Հին մոնղոլների գրադմունքների, բարքերի եւ սովորութիւնների մասին» (թիւ 26-27):<sup>28</sup>

Վերջին յօդուածը մնացել է անաւարտ հրատարակիչ Վէյսկհոպֆէնի Յուլիսի 2-ին մահուան պատճառով:

Ամենայն հաւանականութեամբ եղել են թերթի փակման նաեւ ուրիշ, աւելի խոր պատճառներ: Այսպէս, օրինակ, յայտնի է Ֆինանսական հողի վրայ Փոն-Վէյսկհոպֆէնի եւ Լիտկէի դատական գործի մասին: Չնայած որ թերթը եղել է Ռուսաստանի ամբողջ հարաւային մասի միակ պարբերականը եւ հետաքրքրական էր ոչ միայն Աստրախան քաղաքի, այլ նաեւ ամբողջ երկրամասի բնակչութեան համար, սակայն շատ սակաւաթիւ է եղել բաժանորդների քանակը: Այդ երեւոյթը շատ բացասական ազդեցութիւն է ունեցել թերթի ֆինանսական վիճակի վրայ: Ոչ պակաս նշանակութիւն են ունեցել Ռուսաստանում 1815-16 թթ. սկսուած ճիզվիտների նկատմամբ հետապնդումներ: Այդ ամէնը բարդացնում էր թերթի հրատարակման գործը եւ նման պայմաններում հրատարակչի մահը արդէն վճռական դեր է խաղացել հրատարակչութեան գործունէութիւնը անմիջապէս դադարեցնելու համար:

Սակայն Վէյսկհոպֆէնի եւ Շահվերդեանի հրատարակչութեան փակուելուց յետոյ հայերէն տպագրութեան գործը Աստրախանում չի դադարեցուել:

Երկու տարի անց՝ 1818 թուականից Աստրախանում վերսկսուել է հին («Նաղարեան») տպարանի գործունէութիւնը: Աստրախանում նորից սկսել են լոյս տեսնել հայերէն գրքեր: Թեմական ղեկավարութիւնը, տեսնելով ճիզվիտական միսիոներների ակտիւութիւնը, որոշել է չզիջել նախաձեռնութիւնը

28. «Արեւելեան ծանուցմունքի» բովանդակութեան մասին տե՛ս նաեւ Միխայիլեան Մ. Արեւելահայ առաջին պարբերաբերքը («Արեւելեան ծանուցմունք» շարաբարբերի հրատարակութեան 170-ամեակի առթիւ): ՊԲՀ, 1986, քիւ 4, էջ 63:



եւ թեմում հայ տպագրութեան գործը նորից վերցնել իր ձեռքը: Այդ նպատակով վերանորոգումից յետոյ գործարկել են հին տպարանը:

Շուրջ 20 տարուայ ընթացքում լոյս են տեսել 11 հայերէն գիրք: 1818 թ. հրատարակուեց «Ժամակարգութիւն հասարակաց աղօթից Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյն» գիրքը: Պարզ է, որ այդ գիրքը գործնական նշանակութիւն ունէր հայ եկեղեցիներում աստուածապաշտութիւն եւ ժամերգութիւն կատարելու համար: Յետագայ տարիներին լոյս ընծայուած գրքերը կրում են դասագրքերի բնոյթ եւ մեծ մասամբ ուսուցիչից թարգմանութիւններ են:

Հայ հնատիպ գրքի մատենագէտ Հայկ Դաւթեանը ուշադրութիւն է դարձրել գրքի վերջին էջում գետեղուած ոտանաւորի վրայ, որի սկզբնատառերը կազմում են «Ի Գաբրիէլէ այս» խօսքերը: Հ. Դաւթեանը ենթադրում է, որ հաւանաբար գիրքը թարգմանել եւ կազմել է Գաբրիէլ Պատկանեանը:<sup>29</sup> Նման ենթադրութիւնը հիմք ունի, քանի որ հենց այդ թուականից Աստրախանում ծաւալուում է 19-ամեայ Գ. Պատկանեանի գրական-լուսաւորչական գործունէութիւնը: Դրա մասին վկայում է նոյն՝ 1821 թ. Աստրախանում հրատարակուած Գաբրիէլ Պատկանեանի «Համառօտ վարդապետութիւն ուղղափառութեան: Ի պէտս աշակերտաց համօրէն դպրոցաց հայկազեան լեզուի եւ այլոց բանասէր անձանց»:

Նոյն թուականին լոյս է տեսել եւս մի գիրք՝ «Հրաւէր ի խորհրդարանէ Ռուսաց Աստուածաշունչ ժողովոյն»: Մատենագէտները պարզել են որ այդ 10 էջանոց թարգմանուած գրքոյկի աղբիւրը Եոզէֆ Վոլֆի առաքելական Քարոզիչն է:

Աստրախանի տպարանը իր գործունէութիւնը վերականգնելով խնդիր ունէր ծառայել բնակչութեան գործնական պահանջներին, հոգալ Ռուսաստանի հայ գաղթավայրերի հոգեւոր կարիքները: Քանի որ Աստրախանի տպարանը այդ ժամանակաշրջանում Ռուսաստանի հայկական միակ տպարանն էր, դա էլ կանխորոշում էր դրա ուղղութիւնը:

1823 թ. հրատարակուել է հայկական օրացոյցը: Բացի ընդհանուր օրացոյցային, աշխարհագրական եւ աստղաբաշխական տուեալներից, որոնք սովորական էին ժամանակաշրջանի նման հրատարակութիւնների համար, այդ գրքում երեւում են նաեւ տեղական յատկանիշները: Դրանք են՝ ուսական, լատինական, հրէական եւ նոյնիսկ մահմետական կրօնին վերաբերող տեղեկութիւնները՝ կրօնական տօների եւ օրացոյցի մասին: Օրացոյցի հրատարակիչները նկատի էին ունենում, որ Աստրախանի հայ բնակչութիւնն առօրեայ կեանքում շփուում է ուս, կաթոլիկ, թաթար եւ այլ բնակչութեան հետ: Օրացոյցի տուեալները հնարաւորութիւն էին տալիս մի կողմից՝ հաշուի առնել շրջապատի բնակչութեան սովորութիւնները, միւս կողմից՝ այդ բնակչութեանը հաղորդել եւ տարածել օրացոյցում բերուած տեղեկութիւնները, քանի որ հայ բնակչութիւնը յաճախակի հանդէս էր գալիս, որպէս համեմատաբար գրագէտ եւ զարգացած տարր:

29. Հայկ Դաւթեան. Հայ գիրքը 1801-1850 թթ. Մատենագիտութիւն, Երեւան, 1967, էջ 100

Նշենք միաժամանակ, որ նման օրացոյցներ Աստրախանի տպարանը լոյս է ընծայել նաեւ 1827, 1829 եւ 1837 թուականների համար:

1827 թ. լոյս է տեսել նաեւ Դիոդոր Սիկիլիացու «Պատմութիւն մեծին Ալեքսանտր Մակեդոնացւոյ» աշխատութիւնը՝ կրկին Գաբրիէլ Պատկանեանի թարգմանութեամբ: Երեւի այդ հրատարակութիւնը նախատեսուած է եղել որպէս պատմութեան դասագիրք: Իսկ 1829 թ. լոյս է ընծայուել եւս մի դասագիրք՝ այս անգամ նորից աստուածաբանութեան դասերի՝ «Համառօտութիւն քրիստոնէական վարդապետութեան՝ հաւաքեալ յամենէ բանասիրէ վասն նորավարժ մանկանց»: Հնարաւոր է, որ «ոմն բանասէր» նոյն Գ. Պատկանեանն էր, կամ մի ուրիշ դասատու, բայց գիրքը հաստատել է, որ այն ժամանակ, երբ հայկական միւս տպարանների արտադրանքի մէջ դեռ մտած էին «էֆիմերտէ»-ն կամ «Ներսէս Ծնորհալու աղօթք», Աստրախանի տպարանի սկզբունքը մնում էր՝ տպագրել միայն հրատապ նշանակութիւն ունեցող գրականութիւն՝ դասագրքեր եւ օրացոյցներ: Տպարանի այս շրջանի գործունէութիւնը դադարեցւում է հիմնականում 1829 թուականին, եթէ հաշուի չառնենք 1837 թ. լոյս տեսած օրացոյցը:

Աստրախանում հայ տպագրութեան գործը տակաւին կապուած է եղել մեծ դժուարութիւնների հետ, գրքերը լոյս էին ընծայուում երկար ընդհատումներով, իսկ 1837 թ. օրացոյցը հրատարակելուց յետոյ, տպարանը այլեւս չկարողացաւ շարունակել իր աշխատանքները: Բացի տեխնիկական եւ կազմակերպչական բարդութիւններից, դրանում ոչ պակաս կարեւոր դեր են խաղացել հայ իրականութեան եւ մշակութային կեանքում կատարուող փոփոխութիւնները:

1828 թ. Արեւելեան Հայաստանը մտել է Ռուսաստանի կազմի մէջ, սկսուեց հայ ազգային օջախի վերականգնումը: Բուն հայկական հողերը, այդ թւում կրօնական-գաղափարական կենտրոն էջմիածինը, արդէն պետական քաղաքական միասնութիւն էին կազմում Ռուսաստանի հայկական գաղթավայրերի հետ: Նոյն տարիներին բացուել են հայ տպագրութեան ուրիշ կենտրոններ Ս. Պետերբուրգում (1828 թուականին), Մոսկուայում (1829 թ. Լազարեան ձեմարանի տպարանը), Թիֆլիսում (1838 թ.):

Մոսկուայում, Նոր Նախիջևանում, Թիֆլիսում ստեղծուում եւ զարգանում են հայ հասարակական կեանքի կարեւոր նոր կենտրոններ: Այդ պայմաններում թուլանում է Աստրախանի հայ գաղութի հասարակական-մշակութային բացառիկ դերը: Արդէն պէտք էր մեծ ջանքեր թափել նախորդ դարի տպագրական սարքաւորումներ կեանքի կոչելու համար: Աստրախանի հայ բնակչութիւնը կայուն կապեր էր հաստատել Ռուսաստանի եւ Անդրկովկասի հայկական կենտրոնների հետ, որտեղից ստանում էր նաեւ հոգեւոր սնունդ՝ բնակչութեան եւ սովորող պատանեկութեան պահանջները բաւարարելու համար:

Նշենք նաեւ, որ 1838 թուականից Աստրախանում սկսուել են ուսական պետական տպարանի աշխատանքները: Լոյս է տեսնում «Աստրախանսկիէ գուբեռնսկիյէ վեդոմօստի» շաբաթաթերթը: Քաղաքի հայ բնակչութեան



գործնական մասը նույնպես այդ պարբերականից օգտուում էր իր պրակտիկ գործունեության համար: Ինչպես քառորդ դար առաջ «Վոստոչնիյէ իզվեզստիա» շաբաթաթերթը, այդպես էլ նահանգային նոր օրգանը հաշուի էր առնում տեղի հայ բնակչության տնտեսական ակտիվ մասի պահանջները: Թերթում զետեղուած էին համապատասխան նիւթեր Աստրախանի եւ երկրամասի տնտեսական կեանքի, առեւտրական նորութիւնների վերաբերեալ, տեղեկութիւններ էին հրատարակուում եղանակի, նաւագնացութեան մասին եւ այլն:

Նման դեր ունէին եւ ուրիշ պարբերականները, որոնք լոյս էին ընծայուում Աստրախանում յետագայ տարիներին՝ 19-րդ դարի երկրորդ կէսին: Դրա համար, հաւանաբար, հայերէն տպագրութիւնը քաղաքում չէր վերսկսուում շատ երկար ժամանակ՝ ամբողջ եօթ տասնամեակ:

Ազգային հասարակական կեանքի զարգացումը 19-րդ դ. վերջերին 20-րդ դ. սկզբներին նորից առաջ է քաշել Աստրախանում հայկական տպարանի անհրաժեշտութեան հարցը: 1905-1907 թթ. յեղափոխութեան ազդեցութեան տակ մամուլի համեմատաբար լայն եւ ազատ տարածումը բարենպաստ պայմաններ է ստեղծել նշուած խնդիրը իրականացնելու համար:

Երկար ժամանակ գոյութիւն ունէր այն կարծիքը, որ 20-րդ դարում հայերէն պարբերականների տպագրութիւնը Աստրախանում վերսկսուել է 1908 թ. կէսերից, երբ լոյս է ընծայուել «Լրաբեր» շաբաթաթերթը: Սակայն մի քանի տարի առաջ մեր ուսումնասիրութիւնների ընթացքում պարզուեց, որ 1907-1908 թթ. աստրախանեան ուսերէն «Վոլգա» թերթն ունեցել է «Հայկական բաժին»:

Այդ բաժինը շարուել է հայերէն եւ զետեղուել թերթի շատ համարներում: Այդ թերթը յայտնի չի եղել արդէ հայ հետազոտողներին, քանի որ լոյս է տեսել համեմատաբար կարճ ժամանակում (1907 թ. Յուլիսից մինչեւ 1908 թ. Մարտ ամիսը), եւ այն էլ մեծ ընդհատումներով: Այն եղել է «քաղաքական եւ հասարակական գրական թերթ», բայց ունեցել է նաեւ «մասնագիտական թերթիկ» («Փրոֆեսիոնալնի լիստոկ») յաւելուածը, որտեղ բարձրացուել են սոցիալական հարցեր:

Ամէնօրեայ այդ թերթի առաջին համարը լոյս է տեսել 1907 թ. Յուլիսի 1-ին: Սեպտեմբերի 11-ի համարից յետոյ հրատարակութիւնն ընդհատուել է աւելի քան երկու ամսով եւ վերսկսուել նոյն թուականի Նոյեմբերի 20-ին: Այդ պարբերաբար կրկնուող ընդհատումը բացատրուում է գրաքննութեան հալածանքներով: Առաջին իսկ համարներից թերթում գոյութիւն է ունեցել «Հայկական կեանք» յատուկ բաժինը, ուր ուսերէն լեզուով զետեղուել են նիւթեր ինչպէս տեղի հայերի, այնպէս էլ ուրիշ հայ գաղութների եւ բուն Հայաստանի հասարակական-քաղաքական եւ մշակութային կեանքի մասին: Բաժինը պահպանուել է նրա հրատարակութիւնը վերսկսելուց յետոյ:

1907 թ. Դեկտեմբերի 2-ից (63-րդ համարից) սկսած այդ բաժինը շարուել է հայերէն՝ «Հայկական բաժին» վերնագրով: Տպագրուած նիւթերը բաւականին ընդարձակ են: Թերթի խմբագրութիւնը յոյս ունէր աւելի ընդարձակել «Հայկական բաժինը»: Սակայն, Դեկտեմբերի 14-ին 72-րդ համարից նորից

ընդհատուել է թերթի հրատարակութիւնը, մինչեւ 1908 թ. Յունուարի 8-ը: Իսկ այդ օրուանից «Վոլգան» նախ դարձել է շաբաթաթերթ, իսկ հայկական բաժինը շաբաթաթերթի առաջին համարներում շարուել է նորից ուսերէն: Տպագրուել է սակայն յայտարարութիւն առ այն, որ հրատարակիչները մտադիր են վերստին «Հայկական կեանք» բաժինը տպագրել հայերէն լեզուով: Եւ իրօք, շաբաթաթերթի 4-րդ համարից այդպէս էլ լինում է, բայց, ցաւօք, ընդամէնը չորս համարում: Ութերորդ համարից հայերէն բնագրեր ալլեւս չեն տպագրուել, իսկ երեք շաբաթ անց՝ 1908 թ. Մարտի 17-ին լոյս է տեսել «Վոլգայի» 10-րդ, վերջին համարը: Տեղական իշխանութիւնները վաղուց առիթ էին փնտռում դադարեցնելու այդ առաջադէմ թերթի լոյս ընծայումը, եւ 1908 թ. Մարտի 19-ին մտացածին պատրուակելով Աստրախանի դատարանի որոշմամբ «Վոլգայի» հրատարակութիւնը վերջնականապէս արգելուել է:<sup>30</sup>

Այսպիսով, «Վոլգա» օրաթերթի, ապա եւ շաբաթաթերթի էջերում հայալեզու բաժինը լոյս է տեսել 1907 թ. Դեկտեմբերի 2(15)-14(27)-ը եւ 1908 թ. Փետրուարի 8(21)ից մինչեւ Փետրուարի 23 (Մարտի 7)-ը:

«Վոլգա» թերթում հայկական բաժնի գոյութիւնը վկայում էր Աստրախանի տնտեսական եւ քաղաքական հասարակական կեանքում հայ բնակչութեան ունեցած մեծ կշռի մասին: Մինչեւ ազգային տպարան ստեղծելը հայազգի նշանաւոր բնակիչները յաջողացրել են ստեղծել հայկական յատուկ բաժին ուսական թերթում: Յատկապէս բարենպաստ պայմաններ են ստեղծուել դրա համար 1905-1907 թթ. յեղափոխութեան տարիներին, երբ բացի պաշտօնական օրգաններից սկսել է լոյս տեսնել դեմոկրատական մամուլ: Այդպիսին է եղել նաեւ «Վոլգա» թերթը:

Ժամանակակցի կարծիքով Սեմիոնովի շոգեշարժ տպարանում, որտեղ տպագրուում էր «Վոլգան», օգտագործուել են հին ձեւի, բոլորովին մաշուած տառեր, շատ սահմանափակ քանակով, որոնք ըստ երեւոյթին եղել են հին («Սալդարեան») տպարանի մնացորդը:<sup>31</sup>

Երբ 1907 թ. Դեկտեմբերի 2-ին առաջին անգամ լոյս տեսաւ հայերէն բաժինը «Վոլգայում», արդէն յաջորդ օրը մի մասնաւոր բնակարանում հաւաքուել են վեց հայ տեղացի մտաւորականներ, որոնք խորհրդակցում էին ձեռնարկել առանձին հայերէն պարբերականի հրատարակումը:<sup>32</sup> Ինչպէս երեւում է, նրանց չէին բաւարարում «Վոլգայի» հնարաւորութիւնները, այդ պատճառով էլ որոշում են գործը դնել աւելի ամուր եւ լայն հիմքի վրայ: Նախ եւ առաջ վճուում են ձեռք բերել նոր տպագրական շրիֆտ: Այդ նպատակով դիմել են Թիֆլիս, որտեղ արդէն տասնեակ տարիներ գործում էին հայկական տպարաններ: Մաղերի ձուլարանում պատուիրել են երկու տեսակի 20 փուլի հայերէն տառեր: Անհրաժեշտ գումարը՝ 600 ռ. ստացել են Աստրախանի վաճառականների եւ մտաւորականների շրջանում հանգանակութիւն կազմակերպելու միջոցով:

30. «Астраханец» քերթը, քիւ 1, 24.03:1908  
 31. Գ.Ք. Մկրտումեան. Աստրախանի անդրամիկ «Լրաբեր» հայ շաբաթաթերթը- («Հայ գրի եւ տպագրութեան մեծ տօնը: Յորելեանական ժողովածու) Աստրախան, 1913), էջ 21  
 32. Նոյն տեղը, էջ 20, 21



Գրաչար նոյնպէս հրաւիրուած էր Թիֆլիսից: 1908 թ. սկզբներին աստրախանցի Կարապետ Սաչատրեանը դիմել է նահանգապետի գրասենեակին հայերէն «Լրաբեր» թերթի հրատարակելու թոյլտուութեան համար: Դիմումի մէջ նշուած է եղել ապագայ թերթի ծրագիրը՝ Ռուսաստանի եւ արտասահմանի կեանք, թղթակցութիւններ, ֆելիետոններ, առեւտրական բաժին, յայտարարութիւններ: Բաժանորդագրութեան գինը նախատեսուած է եղել 3 ռ. ամբողջ տարուայ համար:<sup>33</sup>

Համապատասխան թոյլտուութիւն ստացուել է 1908 թ. Փետրուարի 9-ին, իսկ 1908 թ. Ապրիլի 27-ին լոյս տեսաւ «Լրաբեր» թերթի առաջին համարը: Տպագրութիւնը կազմակերպուել է Ս.Ն. Սեմիոնովի տպարանում (որտեղ տպագրուել էր նաեւ «Վոլգա» թերթը):

«Լրաբեր»-ի հրատարակութիւնը տեւել է մէկուկէս տարի (1908 թ. Ապրիլից մինչեւ 1909 թ. Հոկտեմբերը): 1908 թ. լոյս են տեսել շաբաթաթերթի 34, իսկ 1909 թ. - 42 համար: Առաջ անցնելով նշենք, որ 1909 թ. Յունուարից լրագրի տպագրութիւնը ստանձնել է Ա. Ապրեսեանցի տպարանը:<sup>34</sup>

Թերթի անուանման մէջ նշուած չէր կուսակցական պատկանելիութիւնը կամ քաղաքական ուղղութիւնը: Ինչպէս «Վոլգայի» հետ կապուած վերը նշուած հանգամանքներից, այդպէս էլ թերթի բովանդակութիւնից կարելի է եզրակացնել, որ թերթի հրատարակիչները արտայայտում էին հայկական գաղութի բաւականաչափ լայն շրջանների շահերը եւ փորձում էին թերթը ներկայացնել որպէս ամբողջ համայնքի օրգան:

Թերթում գոյութիւն ունէր «Լուրեր» վերնագրով յատուկ բաժին, որտեղ զետեղուած էին տեղեկութիւններ Աստրախանի հայ բնակչութեան կեանքի մասին: Մի ուրիշ բաժնում թարգմանաբար նիւթեր էին տպագրուում Աստրախանի ուսական թերթերից: Բացի այդ «Լրաբեր»ի ամէն մի համարում առանձին բաժնով լուրեր էին հաղորդուում Կովկասից եւ հայաբնակ ուրիշ վայրերից: Թերթը սեփական թղթակիցներ ունէր Թիֆլիսում եւ Պաքուում:

Աստրախանի հայ բնակչութեան այդ ժամանակաշրջանի հասարակական կեանքում ամենահրատապ հարցերից էր՝ ազգային դպրոցի պահպանումը եւ զարգացումը: Այդ կապակցութեամբ «Լրաբերում» ստեղծուել է յատուկ «Դպրոցական բաժինը»: Նշուած տարիներին Աստրախանում թեմական դպրոցը բացելու հարց է բարձրացուել: Չնայած, որ Աստրախանն արդէն մօտ երկուհարիւր տարի թեմական կենտրոն էր, սակայն թեմական դպրոցի բացման հարցը տարիներ շարունակ հանդիպում էր ցարական իշխանութիւնների դիմադրութեանը: Յաջողուել է բացել միայն ուսումնարանի երկու նախապատրաստական դասարաններ: Միաժամանակ առաջարկութիւններ են եղել թեմական դպրոցը ուրիշ քաղաքում, Արմաւիրում կամ Վլադիկաւկազում, բացելու վերաբերեալ: Նման հարցադրումը արժանացել է Աստրախանի հայութեան բացասական վերաբերմունքին:

33. Российский государственный исторический архив (РГИА) ф. 776, оп.21, II, 1908 г., д. 37, лл. 1-2

34. նոյն տեղը, ք-3

Երիտասարդ սերնդի դաստիարակութեան հետ կապուած երկրորդ հարցը, որը յուզում էր Աստրախանի հայ հասարակութեանը, դա օրիորդաց դպրոցի վերակառուցման խնդիրն էր: Այդ դպրոցը 1903 թ. ցարական հրամանագրով անցել էր հոգեւորական գերտեսչութիւնից պաշտօնական մարմինների տրամադրութեան տակ: 1905 թ.՝ հայ եկեղեցու սեփականութիւնները վերադարձնելուց յետոյ, Աստրախանի հայ հասարակութիւնը պահանջում էր վերականգնել օրիորդաց դպրոցը ազգային հոգեւորական հաստատութիւնների համակարգի մէջ: Մի հարց, որը նոյնպէս արագ լուծում չէր գտնում: Այդ պատճառով ազգային դպրոցի խնդիրները հասարակական կեանքի առաջին պլանի վրայ են դրւում: Նորաստեղծ թերթում գոյութիւն է ունեցել դպրոցական բաժին, որտեղ քննարկում էին վերոյիշեալ փրոպլեմները:

Քաղաքի հայկական կեանքի էական հարցերից էր՝ ծխական ժողովների խնդիրը: Քսաներորդ դարի սկզբին, երբ վաղուց գոյութիւն չունէր հայկական դատարան, աստիճանաբար վերացուել էին նաեւ ազգային բանաւոր դատարանները: Այդ պայմաններում հայկական ինքնավարութիւնը թէկուզեւ չնչին ձեւով խորհրդանշում էին ծխական ժողովները, չնայած որ դրանք եղել են օժանդակ, խորհրդակցական բնոյթի մարմիններ:

«Լրաբերի» էջերում լուսաբանուել է այդ ժողովների գործունէութիւնը:

Քննարկելով հայ համայնքին յուզող հարցերը, թերթը անընդհատ քննադատում էր հասարակութեան ներկայացուցիչներին եւ յատկապէս կղերական գործիչներին՝ անգործութեան, անկարողութեան եւ շատախօսութեան համար:

Լուսաբանելով Ռուսաստանի ներքին քաղաքական հարցեր «Լրաբեր»ը քննադատել է պետական դուման եւ ռէակցիոն օրէնքները:

Բաւականաչափ մեծ է եղել թերթի գրական բաժինը: «Լրաբեր»ը զետեղել է յօդուածներ Խ. Աբովեանի երկերից եւ Վահան Տէրեանի բանաստեղծութիւններից:

Հետաքրքիր էին թերթում հրատարակուած ռեֆերտներ Խ. Աբովեանի, Մ. Նալբանդեանի, Ստ. Նազարեանցի մասին:

Ինչպէս վերը նշեցինք, «Լրաբեր»ը փակուել է 1909 թ. Հոկտեմբերին, նիւթական միջոցներ չունենալու պատճառով:

Աստրախանի հայ հասարակութեան համար ուղիղ մէկ տարի պահանջուեց, որպէսզի յաջողուի նոր պարբերականի հրատարակութիւնը: Չնայած որ Ա.Դ. Ապրեսեանցը դեռ 1910 թ. Մարտին դիմել էր «Մեր կեանքը» թերթի հրատարակութեան թոյլտուութեան համար, սակայն 1-ին համարը լոյս է տեսել, ինչպէս նշեցինք, միայն Հոկտեմբերին: Յայտարարուած էր նոր պարբերականի հետեւալ ծրագիրը՝ առաջնորդներ, լուրեր, խրոնիկա, տեղական կեանք, ֆելիետոններ, թատրոն եւ արուեստ, թարգմանութիւններ, թղթակցութիւններ, նկարներ եւ ծաղրանկարներ, յայտարարութիւններ: Թերթը նոյնպէս կոչւում էր «գրական-հասարակական շաբաթաթերթ»: «Մեր կեանքի» առաջին համարում զետեղուած էր յայտարարութիւն, որտեղ ասուած էր, որ հրատարակելով այդ համարը, թերթի հրատարակիչները ուզում են 1910 թ. Նոյեմբերից ձեռնարկել շաբաթաթերթի կանոնաւոր լոյս ընծայելը:



Հրատարակիչների այդ պլանները մնացին որպես բարի ցանկութիւններ: Նրանց այդպէս էլ չի յաջողուել հայթայթել անհրաժեշտ միջոցներ: Դրա համար 1910 թ. լոյս է տեսել «Մեր Կեանքը» թերթի ընդամէնը մէկ համար: Նոյն պատմութիւնը կրկնուեց նաեւ 1911 թ.:

Անցաւ եւս մէկ տարի եւ 1912 թ. Մարտի 11-ին նորից լոյս տեսաւ «Մեր Կեանքը» թերթի 1-ին համարը:<sup>35</sup>

Թերթի հրատարակիչները (խմբագիր-հրատարակիչ նոյն Ա. Ապրեսեանցը եւ «Ա. Ապրեսեանց եւ Ա. Օկուր» ընկերութեան տպարանը) արդէն շարաթաթերթը կանոնաւոր հրատարակելու յոյսեր ունէին: Իրօք, այս անգամ «Մեր Կեանքը» կանոնաւոր լոյս տեսաւ հինգ ամսուայ ընթացքում, 1912 թ. Մարտի 11-ից մինչեւ Օգոստոսի 5-ը: Ընդամէնը լոյս է տեսել թերթի 22 համար:

Համեմատած «Լրաբերի» հետ, թերթը քիչ ծախս ունէր՝ նա տպագրուում էր սեփական տպարանում, գրաշարը հրաւիրուած չէր ուրիշ քաղաքից: Թերթի նիւթերը խիստ քննադատական ոգով լուսարանում էին պետական դումայի գործունէութիւնը եւ ռէակցիայի շրջանի օրէնսդրութիւնը, իսկ տեղացի հայ հասարակական գործիչների նկատմամբ լի էին հեղնանքով եւ դժգոհութեամբ:

Լրագրի էջերում տեղ էր յատկացւում հայկական մշակութային կեանքի այնպիսի իրադարձութիւններին, ինչպիսիք էին հայ տպագրութեան 400-ամեակը, «Մշակ» թերթի 40-ամեակը, Գարրիէլ Սունդուկեանը մահը եւ այլն:

1911 թ. լրացել է հայ ազատագրական շարժման ակնաւոր գործիչ Իսրայէլ Օրու մահուան 200-ամեակը: Ինչպէս յայտնի է, Իսրայէլ Օրին մահացել է 1711 թ. Աստրախանում: Այդ առիթով Աստրախանում ստեղծուել էր յորելեանական յանձնաժողով: Այդ յորելեանի արձագանգն է եղել «Մեր Կեանքի» 1912 թ. 17-21 համարներում զետեղուած Թոմաս ստորագրութեամբ ընդարձակ յօդուածաշարը «Իսրայէլ Օրի» վերնագրով:<sup>36</sup> Հեղինակը աշխատութեան հիմք դնելով, ինչպէս ինքն է նշել, Կարապետ էգեանի «Պետրոս Մեծի առնչութիւնները հայ ժողովրդի հետ» գիրքը շարադրել է հայ ժողովուրդի պատմութեան այդ նշանակալից էջը:

«Մեր Կեանքը» վերջին՝ 22-րդ համարը լոյս տեսաւ 1912 թ. Օգոստոսի 5-ին: Ինչպէս եւ նախորդ դէպքերում, թերթի հրատարակիչները մտադիր չէին հրատարակութիւնը դադարեցնել: Թերթի փակման գլխաւոր պատճառը հաւանաբար կրկին նիւթական ծանր վիճակն էր: Դրանից յետոյ հայերէն թերթ հրատարակելու գործը Աստրախանում չէր վերսկսուում մինչեւ 1915 թ.: Այդ շրջանում Աստրախանի առանձին ուսերէն պարբերականներում երբեմն զետեղուում էր «Հայկական Կեանք» բաժինը:

Կենտրոնացնելով մեր ուշադրութիւնը Աստրախանի հայերէն պարբերականների վրայ (1907-1912 թթ.), մենք անտեսել ենք հայերէն գրքերի

35. Թերթի հրատարակիչներն ամէն կերպ աշխատում էին, որ համարների միջեւ ընդհատում չանցնէր մէկ տարուց, քանի որ հակառակ դէպքում, գոյութիւն ունեցող կարգի համաձայն, պարբերականը յայտարարում էր փակուած եւ անհրաժեշտ էր արդէն նոր թոյլտուութիւն:

36. «Մեր կեանքը», մ.ն. 17-21, 1912 թ.

տպագրութեան հարցը: Թեմական տպարանի 1837 թ. գործունէութիւնը դադարեցնելուց յետոյ հայերէն գիրք լոյս է տեսել Աստրախանում վաթսուն տարի անց՝ դա Աստրախանի հայոց աղքատների եկեղեցական հոգաբարձութեան կանոնադրութիւնն էր արհեստագործական արական դպրոցի կանոնների հետ միասին: Այդ կանոնադրութեան ուսերէն կարճ տարբերակը լոյս է ընծայուել դեռեւս 1884 թ.<sup>37</sup>, սակայն այն ժամանակ, ինչպէս երեւում է, Աստրախանում գոյութիւն չուներ հայկական տառերի շարուածք:

Դա ձեռք է բերուել միայն 19-րդ դարի վերջին տարիներին, երբ տպագրուեց «Կանոնադրութեան» հայերէն բնագիրը: Այդուհանդերձ հայերէն կանոնաւոր տպագրութիւնը վերսկսուել է միայն 1907 թ. Ս. Սեմիոնովի տպարանում, որտեղ 1907 թ. լոյս էր ընծայուում «Վոլգա» թերթը (հայերէն բաժիններով), իսկ 1908 թ. «Լրաբեր» շարաթաթերթը: Նոյն տպարանում 1908 թ. տպագրուեց Աստրախանի հայոց գրական գեղարուեստական ընկերութեան կանոնադրութիւնը:<sup>38</sup>

Իհարկէ, միայն կանոնադրութիւնների տպագրելը չէր կարող բաւարարել ընթերցողների իսկական պահանջները:

Այնուամենայնիւ Ապրեսեանի եւ Օկուրի տպարանը, որտեղ 1909 թ. տպագրուել են «Լրաբեր», իսկ 1910-1912 թթ.՝ «Մեր Կեանքը» թերթերը, նոյն 1912 թ. հրատարակել է աղօթագիրք, որը, ինչպէս երեւում է, օգտագործուել է որպէս կրօնի դասագիրք Ռուսաստանի հայկական ուսումնական հաստատութիւններում:<sup>39</sup>

Աստրախանի հայ հասարակութիւնը աշխոյժ արձագանգում էր հայկական մշակութային կեանքի իրադարձութիւններին: Դրանցից էր հայ գրի 1500-ամեայ եւ տպագրութեան 400-ամեայ յորելեանին նուիրուած տօնը, որը 1912 թ. լայնօրէն նշուել է Հայաստանում, ամբողջ Կովկասում եւ բոլոր հայաբնակ վայրերում, այդ թուում նաեւ Աստրախանում: Այդ կապակցութեամբ Աստրախանի հայկական գրական-գեղարուեստական ընկերութիւնը 1913 թ. լոյս ընծայեց յատուկ ժողովածու:<sup>40</sup>

Նոյն թուականին հրապարակուել է աստրախանցի հայ հասարակական գործիչ Գէորգ քահանայ Մկրտումեանցի գրական երկերի ժողովածու:<sup>41</sup>

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Աստրախանում

37. Положение о церковном попечительстве о бедных армянах г. Астрахани. Астрахань, Тип. В.Е.Лесникова, 1884, 8 с

38. Կանոնադրութիւն Աստրախանի հայոց գրական գեղարուեստական ընկերութեան: Гор. Астрахань. Типография С.К. Семенова против Окружного суда. 1908, 19 с

39. Մնացականեանց Սիմէոն, Հատընտիր աղօթքներ Հայաստանեայց սուրբ եկեղեցու, հանդերձ ուսերէն բարգմանութեամբ: Կազմեց Սիմէոն սարկաւազ (Պորէն Բահանայ) Մնացականեանց (23-րդ տպագր.): Աստրախան. Ապրեսեան եւ Օկուր ընկերութիւն, 1912, 79 էջ: (Հայերէն եւ ուսերէն լեզ.)

40. Հայ գրի եւ տպագրութեան մեծ տօնը: Յորելեանական ժողովածու: Աստրախան, Աստրախանի հայկական գրական-գեղարուեստական ընկերութիւն, 1913, 32 էջ

41. Մկրտումեանց Գէորգ Բահանայ: Ջրկուածները (վեպիկների, պատկերների ժողովածու), Աստրախան, 1913, 155 էջ



ստեղծուել է վիրաւոր զինուորներին նպաստող հայկական կոմիտէ: 1915 թ. հրատարակուել է առանձին գրքոյկով այդ կոմիտէի հաշուետուութիւնը:<sup>42</sup>

Արդէն 1917 թ. առանձին գրքոյկով հրատարակուել է վերոյիշեալ յօդուածաշարը Իսրայէլ Օրու մասին:<sup>43</sup> Չնայած որ այդ ստեղծագործութիւնը թերթում հրատարակելուց յետոյ անցել էր ամբողջ հինգ տարի, սակայն համաշխարհային պատերազմի տարիներին այդ ակնարկի բազմացումը արձագանքում էր հայ ժողովուրդի ազատագրական հայրենասիրական զգացմունքների վերելքին:

Դեռեւս 1915 թ. ձեռնարկուել էր վերջին (նախայեղափոխական շրջանում) Աստրախանում պարբերական թերթի հրատարակման գործը վերսկսելու փորձը: Թերթի խմբագիր-հրատարակիչ Վահան Ղուկասեանը դիմել է համապատասխան թոյլտուութեան համար 1915 թ. սկզբներին: «Բանբերի, ծրագրի մէջ նախատեսուել են հետեւեալ բաժիններ՝ առաջնորդողներ, Ռուսաստանի եւ արտասահմանի կեանք, մամուլի տեսութեան, Ֆելիետոններ, խրոնիկա, թղթակցութիւններ, քննադատութեան, գրական բաժին, քաղաքական բաժին, տնտեսական եւ առեւտրական բաժին, հեռագրեր, յայտարարութիւններ, նկարներ եւ ծաղրանկարներ:<sup>44</sup> Ինչպէս տեսնում ենք, հրատարակիչների ներկայացուած ծրագիրը եղել է բաւականին ընդարձակ, սակայն այն ամբողջովին իրականացնելը անհնարին եղաւ: 1915 թ. Մայիսի 24-ին լոյս է տեսել «Բանբեր» շաբաթաթերթի առաջին համարը: Տպագրութիւնը իրականացուել է նոյն հայկական տպարանում, որը պատկանում էր Ապրեսեանցը եւ ուրիշների ընկերութեանը: 1915 թ. այդ ընկերութիւնը անուանուել էր «Պեշատնոյէ դելօ», իսկ նրա տէրերի՝ Ապրեսեանց եւ Օկուր ազգանուններին աւելացուած էր նաեւ Վիննիկովի ազգանունը: Խմբագիր-հրատարակիչ Վահան Ղուկասեանն էր:

Մեծ տեղ էին զբաղեցնում թերթում համաշխարհային պատերազմին նուիրուած նիւթերը՝ եւ պատերազմական խրոնիկա եւ քաղաքական տեսութիւններ: Հէնց «Բանբերի» լոյս ընծայման օրերին (1915 թ. ամրան սկիզբը) տեղեկութիւններ են հասել Թուրքիայում կատարուած հայ ժողովուրդի Մեծ Եղեռնի մասին: Թերթի շատ նիւթեր նուիրուած էին Արեւմտեան Հայաստանի իրադարձութիւններին:

«Բանբերի» առաջին երկու համարներում մի քանի նիւթեր յատկացուած էին Գէորգ Մկրտումեանցի յիշատակին: Գ. Մկրտումեանցը մահացել է 1915 թ. Մայիսին Ալեքսանդրապոլում, որտեղ նա տարել է հայ կամաւորների եւ արեւմտահայ փախստականների համար Աստրախանի եւ հայաբնակ այլ տեղերից հաւաքուած միջոցները: Թերթը նուիրել է Գ. Մկրտումեանցին մի

42. Աստրախանի հայկական կոմիտէ վիրաւոր զինուորներին նպաստող հայկական կոմիտէի հաշուետուութիւնը: Հաշիւ վիրաւոր զինուորներին նպաստող Աստրախանի հայկական կոմիտէի Դեկտեմբերի 14-ին- 1914 թ. սկսած մինչեւ Յունիսի 14-ը 1915 թ.: Աստրախան, 1915, 32 էջ  
43. Թումաս. Իսրայէլ Օրի (մահուան 200-ամեակի առթիւ): Աստրախան: Ապրեսեանց Արիւ, 1917, 41. էջ: Արտատպութիւն, «Մեր կեանքը» լրագրից  
44. РТИА, ф. 776, оп.21, ч. II, 1915 г., д. 21, и. 1.

քանի յօդուած, նկարագրել է Աստրախանում նրա թաղման արարողութիւնը եւ ետմահու գետեղել է նրա մի քանի գեղարուեստական ստեղծագործութիւնները:

Թերթի 4-րդ համարում ուշադրութիւն է գրաւում փոքրիկ փաստաթուղթ՝ «Յուցակ հայկական 6-րդ գնդի վիրաւորների եւ սպանուածների (Յունիսի 18-ի կուում): Նշանակալից է, որ ցուցակում առաջին համարի տակ նշուած է Հայկ Բժշկեանի անունը, որը վիրաւորուած լինելով աջ ձեռքից, չթողեց շարքերը եւ մնաց մինչեւ մարտի վերջը:<sup>45</sup> Ինչպէս տեսնում ենք, ապագայ հռչակաւոր հրամանատարի հերոսական կենսագրութեան առաջին տողերին վերաբերուող տեղեկութիւնը գնաց հասաւ Աստրախանի հայկական թերթին:

Չորրորդ համարից յետոյ դադարում է «Բանբերի» հրատարակումը:

Յետագայում Աստրախանում հայկական պարբերական մամուլի վերսկսելու փորձը ձեռնարկուել է արդէն խորհրդային շրջանում: 1919 թ. այդտեղ լոյս է ընծայուել Ռուսաստանեան Կոմկուսի Աստրախանի կոմիտէի հայկական սեկցիայի օրգան՝ «Կարմիր Բանուոր» թերթը: Տպագրական բազայ հանդիսացաւ «Ապրեսեանց եւ Օկուր» նոյն տպարանը: Թերթի խմբագիրներ են եղել հայ բողշեւիկներ Աշոտ Խումարեանը եւ Հայկ Գիւլիքեւիսեանը: Լոյս են տեսել թերթի 20 համար:

Ամփոփելով Աստրախանի հայ տպագրութեան սոյն տեսութիւնը, հարկ է ընդգծել, որ Աստրախանի հայկական գաղութը, որը ապրել է գաղթավայրի պատմութեան բոլոր փուլերը, ունեցել է նաեւ ազգային հասարակական կեանքի այնպիսի յատկանիշ, ինչպիսին է սեփական տպարանը: Հայկական տպագրական գործը Աստրախանում ծաւալման երեք շրջան է ունեցել՝ 1796-1800, 1815-1837 եւ 1898-1919 թթ.: Գաղթավայրի պատմութեան բոլոր փուլերում ազգային տպարանը եղել է մայրենի լեզուի ուսումնասիրութեան, լուսաւորական-կրթական գործի կազմակերպման, գաղափարական պայքարի կարեւոր գործիք:

45. «Բանբեր», քիւ 4, 1915 թ., Յունիսի 12-ը



THE ARMENIAN PRESS IN ASTRAKHAN  
(END OF THE XVIIIth-BEGINNING OF THE XXth CENTURY)

VARTAN KHATCHATURIAN

SUMMARY

In the second half of the XVIIIth century the Armenian settlements were able to open national printing house in Russia. This was because of the increased role of the Armenians in economic, political and cultural life of Russia.

Grigor Khaldarian's printing house, transported from London to Saint Petersburg in 1780, was the first Armenian one in Russia. In 1795, after operating for 15 years in Saint Petersburg and Nor Nakhitchewan, this printing house moved to the Armenian eparchial centre Russia, in the town of Astrakhan. Six books were published there between 1796 and 1800. As in previous years the task of this printing house was to publish books needed for teaching in Armenian schools and to advocate Armeno-Russian links. The editions published were distributed both among Armenian communities in Russia and also in Armenia itself.

The printing house was out of operation, from 1801 to 1818, but in 1815-16 the Jesuits (including those of Armenian by nationality) living in Astrakhan took the great initiative of renewing the Armenian printing press and publishing the first Armenian newspaper in Russia called "Arevelian Tsanutsmunk" ("Eastern News"). The printing house reported in 1818 and until the end of 1837 more than ten books were published.

As a result of the unification of Transcaucasus and Russia and the opening of Armenian printing houses in Tiflis, Moscow and other cities, Astrakhan began to lose its exclusive role in supporting Armenian national culture. This printing house only began publishing books in Armenian again in the late XIXth century. In the early XXth century some Armenian papers, such as "Lraber" ("Herald" 1908-1909), "Mer Kiank" ("Our Life" 1910-1912), "Banber" ("Messenger" 1915), were published.

Armenian printing houses in Astrakhan, as those in other Armenian communities in Russia, played a tremendous role in organization the media, the propagation of the native language and culture and the formation of a public image.

ԶՄԻՒՌՆԱՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽԻ  
ՄՇԱԿՈՅԹԸ

Ա. ԽԱՌԱՏԵԱՆ

Զմիւռնահայ գաղթօջախը կազմաւորուել է Կիլիկիայի հայկական թագաւորութեան անկումից յետոյ (1375) եւ յարատեւել մինչեւ 1922 թ. Սեպտեմբեր, երբ քեմալականները յոյներից յետ նուաճելով այդ քաղաքը, հրի ու սրի մատնեցին նրա ոչ մահմետական ազգաբնակչութեանը՝ գլխաւորապէս յոյներին եւ հայերին: Դեռեւս 11-12-րդ դդ. Զմիւռնիայում՝ Արեւելքի եւ Արեւմուտքի առեւտրատնտեսական կապերի այդ խոշոր հանգուցակէտում գոյացել էր հայ առեւտրական գաղութ, կազմուած հայ վաճառականներից: Սելջուկների ժամանակներից հայ առեւտրականները, հատելով փոքրասիական առեւտրական խաչողիները, հասնում էին Էգէեանի ափերը եւ յաջողութեամբ առեւտուր անում Ճենովայի եւ Վենետիկի հետ: 13-րդ դ. այդ առնչութիւնները աւելի են ընդգծուում՝ ամրացնելով հայերի առեւտրական կապերը մի կողմից Իկոնիայի ումի սելջուկեան սուլթանութեան, եւ միւս կողմից՝ Նիկեայի եւ Տրապիզոնի յունական կայսրութիւնների միջեւ: Ա. Ալպոյաճեանը կարծում է, որ Զմիւռնիայում հայ գաղթօջախը ստեղծուել է 13-րդ դ. երկրորդ քառորդին, մոնղոլական արշաւանքների հետեւանքով հայ ազգաբնակչութեան մէջ ծայր առած գաղթերից յետոյ: 1 Յ. Մանանդեանը ընդգծում է, որ այդ նոյն դարում հայ առեւտրականները ստեղծել էին «համաշխարհային կապեր» եւ կայուն յարաբերութիւններ լեւանտական առեւտրական կենտրոնների հետ: 2 Պէտք է կարծել, որ իրականում զրանք եղել են առեւտրական գաղութներ, որոնք գոյանում էին առեւտրի պահանջմունքներով եւ եկուոր հայ վաճառականների առկայութեան շնորհիւ:

1. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. 2, Գահիրէ, 1955, էջ 543:  
2. Մանանդեան Յ., Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան, հ. 3, Երևան, 1952, էջ 166:



Զմիւռնիայում հայ գաղթօջախը էական համալրում ստացաւ Արեւելեան Հայաստանում Շահ Աբասի արշաւանքի հետեւանքով, 17-րդ դ. առաջին տասնամեակին, երբ բազմաթիւ հայեր գաղթեցին Արեւելեան Հայաստանից: 1608 թ. գրուած մի յիշատակարանում գաղթական հայերի ապաստաններից յիշուած է նաեւ Զմիւռնիային կից Եփեսոսը:<sup>3</sup> Այս ժամանակաշրջանում բազմաթիւ հայեր հանդրուանեցին ոչ միայն Զմիւռնիայում, այլեւ նրան մերձաւոր Մանիսա, Այտրն, շրջակայքի գիւղատնտեսական շատ բնակավայրեր: (Մենեմէն, Գուշատա, Պիրկի, Բայանդըր եւ այլն): Ըստ Փրանսիացի ճանապարհորդ Տաւերնիէի, զմիւռնահայերի թիւը 1631 թ. հասնում էր 8000-ի:<sup>4</sup> Այս գաղթականները հիմնականում եկել էին Սիւնիքից, Արարատեան դաշտի բնակավայրերից եւ Արեւելեան Հայաստանի այլ վայրերից:

Գաղթօջախի միւս խոշոր համալրումը տեղի է ունեցել 1720-1730-ական թթ.՝ պարսկա-թուրքական պատերազմների ժամանակներից եւ շարունակուել մինչեւ դարակէս, դարձեալ Արեւելեան Հայաստանի յիշեալ շրջանների հայու-թեան գաղթերի հետեւանքով: Զմիւռնիա եւ առհասարակ էգէեանի մերձափնեայ բնակավայրեր են գաղթել նաեւ բազմաթիւ հայ զանգուածներ՝ Օսմանեան Թուրքիայում ջալալիների ապստամբութեան (17-րդ դ. առաջին տասնամեակներ), Թուրքիայի եւ Իրանի միջեւ շարունակուող պատերազմների եւ այլ աղէտներով թելադրուած գաղթերի հետեւանքով՝ Եւզոկիայից, Կեսարիայից, Սեբաստիայից, Նարբերդից եւ այլն:

Չնայած իր ազգաբնակչութեան համեմատաբար սակաւութեանը (մինչեւ 20-րդ դ. սկիզբը Զմիւռնիայի հայութեան քանակը չի անցել 12,000-ից, իսկ նրա գոյութեան վերջին տարիներին՝ 20-21 հազարից),<sup>5</sup> զմիւռնահայութիւնը բաւական խոշոր ներդրում ունի ազգային հոգեւոր եւ մտաւոր մշակոյթի զարգացման մէջ: Այդ գաղթօջախի, որպէս հայութեան մշակութային կենտրոնի արժէքը պայմանաւորուած էր հայ ժողովուրդի քաղաքական ճակատագրի, որոշակի ազգային, տնտեսական ու հասարակական գործօնների հետ, որոնք բարենպաստ պայմաններ էին ստեղծում մշակոյթի զարգացման համար: Նրա ընդարձակ ու յարատեւ առեւտրատնտեսական կապերը հայրենիքի, արտասահմանի եւ մանաւանդ, եւրոպական երկրների ու այնտեղ ապրող հայրենակիցների հետ, ինչպէս եւ փոխադարձ առնչութիւնները էջմիածնի մայր աթոռի հետ, մշակութային մշտական սնուցումը այսպիսի ընդարձակ տարածքներից՝ մօտաւորապէս այն հիմնական պատճառներն էին, որ պայմանաւորեցին զմիւռնահայերի ազգային-հոգեւոր վերելքը, մասնաւորապէս 19-րդ դարի ընթացքում: Ունենալով վարչական-համայնքային կայուն հաստատութիւններ, որոնց կենտրոնում էին եկեղեցին եւ առաջնորդարանը, զմիւռնահայերը կարողացել են զարգացնել իրենց ազգային մշակոյթը, դպրոցն

3. Հայերէն ձեռագրերի ժէ դարի յիշատակարաններ (1601-1620 թթ.), կազմ. Վ. Յակոբեան, Ա. Յովհաննիսեան, Կ. Ա., Երեւան, 1974, էջ 289:  
 4. The six voyages of J.B. Tavernier, London, 1678, p. 289.  
 5. Մատենադարան, Ա. Ալպոյանեանի ֆոնդ, Բրթ. 8, վաւ. 213, էջ 4: «Արեւ» 1956, 2 Հոկտեմբերի:

ու լուսաւորութիւնը՝ յաջողութեամբ դուրս գալով տեղական, նոյնիսկ արեւմտահայ շրջանակներից եւ ստեղծել համազգային արժէքներ:

Գաղթօջախի ճարտարապետական ակնառու կոթողներից էր Ս. Ստեփաննոս եկեղեցին, որ գործել է 15-16-րդ դարերից: Այս եկեղեցին յիշատակող հնագոյն վաւերագիրը աւանդուած է 1625 թ., նախապէս այն կոչուել է Ս. Ստեփանոսի եւ Ս. Բարդուղիմէոսի եկեղեցի:<sup>6</sup> Եկեղեցին քանիցս աւերուել է Զմիւռնիայից անպակաս երկրաշարժների եւ հրդեհների պատճառով: Այն փլուզուել է 1688 թ. եւ վերաշինուել 1689 թ., այրուել 1845 թ. եւ նորոգուել 1853 թ.: Այս անգամ եկեղեցին նախագծել եւ կառուցուել էր ճարտարապետ Մելքոն Երամեանը՝ ազգային արուեստի աւանդոյթների հմուտ կիրառմամբ: Իր նրբարուեստ խոյակներով, սիւներով եւ զանգակատնով, ինչպէս եւ ճարտարապետական ինքնատիպ լուծումներով Ս. Ստեփաննոս եկեղեցին երկար ժամանակ մնում էր Զմիւռնիայի ամենարժէքաւոր կոթողներից մէկը: Արուեստի տեսակէտից ուշագրաւ կառոյցներ էին նաեւ Ս. Մեսրոպեան դպրոցի շէնքը եւ Ս. Լուսաւորչեան եկեղեցին (1801): Աչքի ընկնող շինութիւն էին համայնքի Ս. Լուսաւորչեան ազգային հիւանդանոցը, որի նորոգման վրայ 1864 թ. ծախսուել էր 582 ոսկի,<sup>7</sup> ինչպէս եւ իգական Ս. Հոփսիմեան վարժարանը, որ կառուցուել էր 1845-1849 թթ.: Այսուհանդերձ, Զմիւռնիայում հայութեան ամենահին արուեստը մնում էր գրչութիւնը: Այն բաւական զարգացում է ունեցել գրչութեան վերջին շրջանում՝ 17-18-րդ դդ., գաղթօջախում գրատպութեան յայտնուելուց մօտ մէկ երեսնամեակ առաջ: Այստեղ գրչագրուել են կրօնական, փիլիսոփայական, քերականական, մշակոյթի այլեւայլ բնագաւառներին վերաբերող ուշագրաւ ձեռագրեր: Էգէեանի շրջանում գրուած հնագոյն ձեռագրերից է Զմիւռնիային կից Եփեսոսում 1622 թ. գրուած Աւետարանը:<sup>8</sup> Ձեռագրեր են գրուել Զմիւռնիայում, նրան կից Բերգամայում, Թուրքութում, Մանիսայում, Այտրնում եւ այլուր:<sup>9</sup> Կրօնաւորներից բացի, Զմիւռնիայում այս ժամանակաշրջանում մշակութային գործունէութեամբ զբաղուել են նաեւ կրթուած վաճառականները: Առեւտուրը եւ մշակոյթը միաւորող զմիւռնացի մշակութային գործչի մենք տեսնում ենք դեռեւս 17-րդ դարում: Այդ անձը գրիչ Սուքիասն է, 1662 թ. Զմիւռնիայում Սաղմոսարան գրչագրող վաճառականը: Իր ձեռագրի յիշատարանում նա գրում է. «Աւարտեցաւ ի թուականիս հայոց ՌՃԺԱ ամին եւ Յունիսի ԻԱ յաւուր շաբաթու, ի քաղաքն Զմիւռ, ընդ հովանեաւ սուրբ Բարդուղիմէոսի եկեղեցու եւ այլ կար գիրքս այս ի ձեռին իմում ոչ կարէի աւարտել, զի էի վաճառող ընչից, երթայի քաղաքէ քաղաք, յայլ երկիր, որ կոչի Տալիա, քաղաքս Լիկոնայ...»:<sup>10</sup>

6. Հայերէն ձեռագիր յիշատականներ, ժէ դար (1621-1640), կազմ. Վ. Յակոբեան, Ա. Յովհաննիսեան, Կ. Ա., Երեւան, 1978, էջ 87:  
 7. «Արեւիկ», Կ. Պոլիս, 1902, 14 Օգոստոսի:  
 8. Մատենադարան, ձեռ. 94:  
 9. Նոյն տեղում, ձեռ. 6332, 6751, 2129, 4669, 805 եւ այլն:  
 10. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Միխրաբեանցի Վենետիկ, Կ. Ա., (կազմ. Բ. Սարգսեան), Վենետիկ, 1914, էջ 349:



Տնտեսական եւ մշակութային գործունէութիւնը միաւորող գործչի այս կերպարը յարատեւեց Զմիւռնիայում մինչեւ 20-րդ դ. սկիզբը՝ ի դէմս Տէտէեան եղբայրների, Գր. Մսերեանի, Գ. Բաբազեանի, Պալեոզեանի եւ ուրիշների: Լուսամիտ վաճառականներից Պետրոս Ապրոյեանը, ռուսաց Պետրոս Առաջին ցարից Ռուսաստանից արտօնեալ պայմաններով առեւտրի իրաւունք ստացած նոյն անձնաւորութիւնը, զբաղուել է նաեւ թարգմանական գործունէութեամբ: 1745-1746 թթ. նա Զմիւռնիայում թարգմանել է «ի Ֆիլէմէնկի բարբառոյ ի հայ բարբառ» (իմա Ֆլամանդերէնից) «Պատմութիւն Բիւզանդիոյ կամ Բիւզանդարան» ժողովածուն, որտեղ ուշագրաւ են էգէեանի մերձափնեայ տարածքներին վերաբերող պատմաշխարհագրական հատուածները («Վասն լիկիացուոց Իսմիռային», «Յաղագս Մանիսայու», «Յաղագս Եփեսոսի» եւ «Յաղագս Ֆիլատելիոյ»):<sup>11</sup>

Զմիւռնահայ մշակոյթի մէջ հին արմատներ ունի նաեւ գրատպութեան արուեստը: Դրա պատմութիւնը սկիզբ է առնում մի հետաքրքիր միջադէպով. 1676 թ. Մարսէլում տպագրուած Մաշտոցում որպէս տպագրութեան վայր նշուած է Զմիւռնիան՝ դաւանական բարդութիւններից խուսափելու նպատակով: Յիրաւի, Զմիւռնիայի հայ գաղթօջախը ի հնուց անտի Եւրոպայում ճանաչում ունէր իբրեւ առեւտրական ու մշակութային կենտրոն, ուստի եւ միանգամայն ընդունելի կարող էր լինել այնտեղ գիրք տպագրելու իրողութիւնը: Զմիւռնիայում, մինչդեռ, առաջին հայերէն գրքերը տպագրուել են 1759-1762 թթ.՝ Մահտեսի Մարկոսի տպարանում: Դրանք են՝ Մեկնութիւն ժամանակագրութեան, Ոորհրդատետր եւ Եզնիկ Կողբացու յայտնի գործը:<sup>12</sup> Այս տպարանի գործունէութեանը նպաստել էին Սիմէոն Երեւանցի Կաթողիկոսը եւ կրօնական գործիչ Մեսրոպ Գանձակեցին: Յայտնի են Սիմէոնի ջանքերը էջմիածնում տպարան հաստատելու գործում, իսկ ինչ վերաբերում է Մեսրոպ Գանձակեցուն, ապա նա Զմիւռնիայում բաւական եռանդ ու կարողութիւններ է դրսեւորել ձեռագրերի ընդօրինակութեան, կրօնական բնոյթի ձեռագիր ժողովածուներ կազմելու ուղղութեամբ: Այդպիսին է նրա կազմած «Համառօտ մեկնութիւնը» (1758), «Լուծմունք Ս. գրոց Գրիգորի աստուածաբանի եւ մեկնութիւն Դանիէլ մարգարէի» ձեռագիրը<sup>13</sup> եւ այլն: Մեսրոպ Գանձակեցուն սատարում էր նաեւ ժամանակի Զմիւռնիայի Հայոց Առաջնորդ Աբրահամ Աստապատցին: Այս գործիչներն էին, ի դէպ, որ Զմիւռնիայում նախապատրաստեցին առաջին ազգային վարժարանի ստեղծումը 18-րդ դ. վերջին քառորդին:

Զմիւռնիայում գրատպութեան սկիզբ առած ընթացքը ընդհատուեց աւելի

11. Ցուցակ հայերէն ձեռագրաց Միխրաբեան մատենապարանին ի Վիեննա, Կ. Բ. (կազմ. Յ. Ոսկեան), Վիեննա, 1963, էջ 238-239:

12. Այլոյնամեան Ա., Զմիւռնիոյ տպարանները, «Պատմա քանասիրական հանդէս», 1964, 2, էջ 71-72:

13. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, Կ. Ա. (կազմ. Տէր Աւետիսեան Ս.), Վիեննա, 1970, էջ 562, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի սրբոց Յակոբեանց վանքի (կազմ. Ա. Սիրմէեան), Կ. 1, Երուսաղէմ, 1948, էջ 288:

քան եօթ տասնամեակ եւ վերսկսուեց ամերիկացի բողոքական գործիչների ձեռքով: 1833-1853 թթ. նրանք այստեղ տպագրեցին կրօնական եւ ուսումնական բովանդակութեան մի շարք գրքեր, ինչպէս Հեգարան, անգլերէնի քերականութիւն եւ այլն: 1839-1850-ական թթ. այդ նոյն՝ Հոման Հալլոքի տպարանում էր տպագրուում բողոքականների «Շտեմարան պիտանի գիտելիաց» ամսագիրը:

1840-ական թթ. տպագրական արուեստի զարգացման համար նոր պայմաններ ստեղծուեցին: 1839 թ. սկսուած թանգիմաթի բարեփոխումները գոնէ խոշոր քաղաքներում ինչ-ինչ չափերով նպաստեցին ոչ մահմեդական ազգաբնակչութեան հոգեւոր կեանքի աշխուժացմանը: Նշուած տասնամեակին Զմիւռնիայի մշակութային իրականութեան մէջ յայտնի են Ստ. Պապոյեանի տպարանը (1840-1844) եւ Թաթիկեան վիմագրատունը (1840-1910-ական թթ.): Իր առաջին տարիներին Ստ. Պապոյեանի տպարանում էր տպագրուում «Արշալոյս արարատեան» թերթը, որից չորս տարի անց այն դարձաւ թերթի սեփականութիւնը՝ կոչուելով նրա անունով: Այս տպարանը գործել է մինչեւ «Արշալոյս արարատեանի» դադարը՝ 1884 թ.:

Իր արտադրական կարողութիւններով առաւել աչքի էր ընկնում Թաթիկեան տպարանը: Բացի հայերէն գրականութիւնից, այստեղ տպուում էին արեւելեան եւ եւրոպական լեզուներով գրքեր, գրքոյկներ, պարբերականներ, ծանուցումներ եւ այլն: Երկար ժամանակ այդ տպարանը Զմիւռնիայում անմրցելի էր մնում իր արդիւնքների քանակով եւ որակով: Այստեղ էր տպագրուում նաեւ Ստ. Ոսկեանեանի խմբագրած «Ռեֆորմ» թերթը (1869-1901):

Սեփական տպարան ունէր «Արագածունեաց» լուսաւորական ընկերութիւնը: Այստեղ տպագրուել են Խ. Մելիքսեւումեանի «Հայրենասէր» (1843-1846), թերթը եւ մի քանի գրքեր: Տպարանը գործել է 1843-1847 թթ.:

Համայնքի լուսաւորական կեանքում ազդեցիկ դեր ունէր Ս. Մեսրոպեան արական վարժարանը, որը 1841 թ. ունեցաւ իր սեփական տպարանը՝ նշանաւոր մանկավարժ Ռ. Ա. Փափագեանի եռանդուն ջանքերի շնորհիւ: Այս տպարանը նուիրուել էր տրիեստաբնակ բարեգործ, զմիւռնացի Պետրոս Եռուսեֆեանը: Ս. Մեսրոպեանի տպարանում էին տպագրուել Յ. Վանանդեցու «Ոսկի դար Հայաստանի» պոէմը, Շատորբիանի «Աթալան»՝ Տ. Յ. Սաւալանեանի թարգմանութեամբ, Կորիւնի «Վարք Մաշտոցին» եւ այլն:

Հայ տպագրութեան ասպարէզում բացառիկ կարեւոր նշանակութիւն ունեցաւ Տէտէեան եղբայրների հրատարակչութիւնը (1853-1892), որը աննախընթաց համբաւի հասաւ անուանի տպագրապետ եւ թարգմանիչ Տիգրան Յարութիւն Տէտէեանի (1832-1868) ժամանակ: Իր շուրջ համախմբելով զմիւռնահայ տաղանդաւոր թարգմանիչներին (Գր. Զիլինկիրեան, Մ. Նուպարեան, Մ. Մամուրեան, Ա. Կ. Տէտէեան եւ ուրիշներ), նա գործնականում նոր ուղղութիւն սկզբնաւորեց հայ թարգմանական գրականութեան եւ գրատպութեան արուեստի մէջ՝ ձեռնարկելով եւրոպական դասական հեղինակների տպագրութիւնը: Տպագրապետը նիւթապէս խրախուսում էր թարգմանիչներին եւ ամենայն իրաւունքով նրան պէտք է վերագրել



գմիւռնահայ թարգմանական փայլուն դպրոցի կազմակերպման գործը: Ինքը՝ տպագրապետը, անձամբ իր ծանրակշիռ մասնակցութիւնն էր բերում թարգմանական՝ իր ժամանակի եւ պայմանների համար յղացած վիթխարի ծրագրին: Նրա թարգմանութեամբ տպագրուեցին «Հազարումէկ գիշերը» (անաւարտ), Մոլիերի «Ազահը», «Ակամայ բժիշկը» եւ «Սէրը բժիշկ է» կատակերգութիւնները, Ալ. Դիւմայի «Կոմս Մոնտէ Բրիստոն» եւ այլն: Թարգմանական գործունէութեամբ էին զբաղում նաեւ Տիգրան Յարութիւն Տէտէեանի միւս եղբայրները՝ Արամ Կարապետ եւ Հայկ Յակոբ Տէտէեանները:<sup>14</sup> Տէտէեան տպարանում են տպագրուել Վոլթերի, Մոլիերի, Շեքսպիրի, Սվիֆտի, Հիւգոյի, Սկոտի, Շատոբրիանի, Դիւմայի, է. Սիւի, Ժ. Սանդի եւ եւրոպական այլ հեղինակների շատ երկեր, աշխարհաբարի ուսուցման ձեռնարկներ՝ այբբենարաններ եւ այլն: Տպարանը յազեցած էր եւրոպական տեխնիկական սարքաւորումներով, որոնք բերուած էին Իտալիայից եւ Ֆրանսիայից: Ա. Ալպոյաճեանը Տ. Հ. Տէտէեանին իրաւացիօրէն համարում է «մեծ տպագրապետ եւ արեւմտեան հայոց ամենամեծ հրատարակիչ»:<sup>15</sup> 1860-1870-ական թթ. այստեղ՝ Տէտէեան տպարանում էին լոյս տեսնում գմիւռնահայ գրեթէ բոլոր պարբերականները:

1850-ական թթ. համայնքի գրական շարժման խանդավառ մթնոլորտում նկատուում էր առաջին հայեացքից բացառիկ թուացող երեւոյթ՝ տպագրական գործունէութեան էին ձեռք գարկում, նոյն Ռ. Ա. Փափազեանի խրատոյսներով, Ս. Մեսրոպեանի պատանի սաները: «Պատանեկան» այսպիսի հրատարակութիւններից էին «Թուրակ Հայկազեանը» եւ Մ. Նուպարեանի «Երկասէր» պարբերականը, որի մամուլը Նուպարեանը ձեռք էր բերել Տէտէեան տպարանից:

1878-1880 թթ. գործում էր «Արեւելեան մամուլի» տպարանը, որ հիմնել էր Գր. Մսերեանը՝ օգտուելով Մ. Մամուրեանի արտօնագրից: 1880 թ. Գր. Մսերեանը ձեռք է բերում սեփական արտօնագիր եւ հիմնում տպարան, որի արդիւնքն էին նրա խմբագրութեամբ հրատարակուող «Մետէորա» տարեգիրքը եւ մի քանի այլ գրքեր ու գրքոյկներ: Մսերեան տպարանը գործել է մինչեւ 1881 թ.:

14. Զմիւռնահայ այս գործիչների, ինչպէս եւ քաղմաքիւ այլ գմիւռնացիների երկու եւ մոյնիսկ երեք անուն ունենալը բացատրուում է գաղթօջախում ընդունուած հնագոյն սովորոյթով: Հնարարութեամբ, անշուշտ, որ գրական գործիչներին երկրորդ անուամբ օժտած լինէր նրանց ուսուցիչ Ռ. Ա. Փափազեանը, որը ինչպէս նշում է Կ. Ճինգոզեանը, իր սաներին հաղորդում էր «Իբրեւ բանաստեղծական յանրապետ անուն կրել հայ դիւցազունների ոգեշունչ անուններ» (տես Ճինգոզեան Կ. Հ., էջեր 1850-60-ական թթ. գմիւռնահայ գրական շարժման պատմութիւնից, «Պատմաբանասիրական հանդէս», 1982, 2, էջ 62): Բայց անկախ դրանից էլ գմիւռնացիները, այդ բուն եւ կամայք, կրել են երկու անուն: Այս տեսակետից ուշագրաւ է գմիւռնացի Աստուածատուր Ապրոյանի՝ Ներսէս Աշտարակեցուն ուղղած 1848 թ. Մարտի 10-ի թուակիր նամակի մի վկայութիւնը: «Զանուն էրեց դստերն իմոյ Բէն Կիւլատէ յորջորջեալ, այլ աւագանի՝ Վարդուհի անուանեալ է հնագոյն սովորութեամբ գոյով», - գրում է նա (Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, ԲՊԲ. 137, վա. 92):

15. Ալպոյաճեան Ա., Զմիւռնիոյ տպարանները, էջ 81:

1883 թ. անուանի հրապարակախօս, թարգմանիչ եւ մանկավարժ Մ. Մամուրեանը հիմնեց «Արեւելեան մամուլի» տպարանը (յետագայում՝ Մամուրեան տպարան): Այն յարատեւեց մինչեւ գաղթօջախի վախճանը՝ մշակութային խոր հետք թողնելով նրա պատմութեան մէջ: Այստեղ են տպագրուել «Արեւելեան մամուլ» պարբերականը, «Դաշինք» թերթը եւ բազմաթիւ գեղարուեստական ինքնուրոյն եւ թարգմանական գրքեր, դասագրքեր:

Գաղթօջախի վերջին տպարաններից էին Բ. Քէչիշեանի (հիմն.՝ 1907 թ.) եւ Հ. Շեքէրեանի հաստատութիւնները, որտեղ տպագրուել են գմիւռնահայ 10-ական թթ. պարբերականները, գրքեր, տեղեկագրեր, լրատուական բնոյթի գործեր:

Գաղթօջախի դարաւոր պատմութեան մէջ եզակի արժէք են ունեցել ազգային դպրոցները: 18-րդ դ. 2-րդ քառորդին Զմիւռնիայում կրթական գործն իրականացրել են էջմիածնական կրթուած հոգեւորականները, որոնք նուիրակական կամ առաջնորդական պաշտօններով սերտօրէն առնչուել են գաղթօջախի հետ: Նկատենք, որ գմիւռնահայ գաղթօջախը վաղեմի ժամանակներից համարուել է էջմիածնի «տէրունի թեմ»: Միայն 1825 թ. էջմիածնական վերջին առաջնորդ Ստ. Ենոքեանից յետոյ Զմիւռնիայի թեմը անցել է Կ. Պոլսի պատրիարքութեան իրաւասութեան ներքոյ:<sup>16</sup> 18-րդ դ. վերջին տասնամեակներին հիմնուեց եւ մինչեւ 1922 թ. գործեց Ս. Մեսրոպեան վարժարանը:<sup>17</sup> Այն իւրովի արտացոլում էր նոր ժամանակների հայ դպրոցի եւ մանկավարժական մտքի անցած ուղին՝ պահպանողական կրթօջախից մինչեւ մանկավարժական ծրագրով ու մեթոդներով առաջնորդուող դպրոցի ուղին: 18-րդ դ. առաջին քառորդին այս վարժարանի տեսուչն էր ճանաչուած մանկավարժ եւ բանաստեղծ, լուսաւորիչ Յ. Վանանդեցին: Նրա եւ մանաւանդ Ռ. Ա. Փափազեանի տեսչութեան (1830-1857) ժամանակ Ս. Մեսրոպեան վարժարանը արժանի հեղինակութիւն ձեռք բերեց առհասարակ հայութեան մէջ: Այստեղ ուսանելու էին գալիս նաեւ Կ. Պոլսից ու արտասահմանից եկած հայ երեխաներ: Արեւմտահայ դպրոցի պատմութեան մէջ Ս. Մեսրոպեանն առաջինն էր, որ աշխարհաբարն ընդունեց որպէս ուսուցման պաշտօնական լեզու եւ իրականացրեց ազգային լուսաւորութեան առաջաւոր սկզբունքները: 1830-ական թթ. այստեղ մտցուեցին եւրոպական լեզուների (անգլերէն, ֆրանսերէն, իտալերէն), բնագիտական եւ մաթեմատիկական առարկաների ուսուցում, դասաւանդման նոր եղանակներ: Ռ. Փափազեանի ղեկավարութեամբ Ս. Մեսրոպեանի սաները կազմակերպեցին թատերական ներկայացումների խումբ՝ նրանց ուժերով 1830-ական թթ. բեմադրուել է Կ.

16. Ստ. Ենոքեան եպիսկոպոսը 1820-1821 թթ. անձամբ է կազմել Ս. Մեսրոպեան վարժարանի Կանոնադրութեան նախագիծը՝ «Ցուցակ բարւոյ կառավարութեան վարժարանին Զմիւռնիոյ քաղաքի» վերնագրով (Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, ԲՊԲ.՝ 51, վա. 197): 1825 թ. Մայիսի 11-ին առաջնորդը կատարել է այս վարժարանի վերաշինութեան առիւ արարողութիւնը («Դափնի», Զմիւռնիա, 1921, 2, էջ 61):

17. Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, ԲՊԲ. 51, վա. 197:



Գուղտնիի «Հիւրանոցի տիրուհին» ներկայացումը: Վերը տեսանք որ վարժարանը ունէր նաեւ սեփական տպարան: Հետեւաբար, այս վարժարանը զմիւռնահայ մշակոյթի համար եղել է շատ աւելին, քան սոսկ դպրոցն էր: Բաւական է միայն ասել, որ ամբողջ 19-րդ դ. 2-րդ կէսի եւ յետագայի զմիւռնահայ անուանի մտաւորականութիւնը սովորել է այս վարժարանում, եւ որը հայ մշակոյթը հարստացրել է հրապարակախօսական, գրական, մանկավարժական, փիլիսոփայական եւ այլ մնայուն համազգային արժէքներով: 19-րդ դ. երկրորդ կէսին վարժարանի տեսչութիւնը վարել են այնպիսի ականաւոր գործիչներ, ինչպէս Ստ. Ոսկանեանը, Մ. Մամուրեանը, Մ. Սարեանը եւ ուրիշներ: 1870-1900-ական թթ. եւ դրանից յետոյ Ս. Մեսրոպեանն ունէր մինչեւ 400 աշակերտ: 19-րդ դ. վարժարանին նիւթական ձեռնտուութիւն են ցոյց տուել բարեգործներ Պետրոս Եոսուֆեանը (1830-ական թթ.՝ օտար լեզուների ուսուցում) եւ Յովհ. Սպարթալեանը (կառուցել է վարժարանի նոր շէնքը՝ 1886 թ.):

Զմիւռնիայի իգական Ս. Հռիփսիմեան վարժարանը հիմնադրուել է 1820 թ.՝ տրիեստաբնակ մեծահարուստ Յակոբ Սարգսեանի միջոցներով եւ մինչեւ 1845 թ. կոչուել նրա անուամբ: 1845 թ. Յուլիսի 21-ի մեծ հրդեհը, որ ճարակել էր Զմիւռնիայի գրեթէ ամբողջ հայկական թաղը, կործանեց նաեւ այս վարժարանի շէնքը: Հայկական թաղամասի 700 տնից անվթար մնաց ընդամէնը 40-ը:<sup>18</sup> Վարժարանը վերականգնուեց 1849 թ.՝ Տիկին Հռիփսիմէ կոստանդեանի նուիրատուութեամբ եւ վերանուանուեց Ս. Հռիփսիմեան վարժարանի: Մեր դարասկզբին այն ունէր շուրջ 300-400 աշակերտուհիներ: Դպրոցի նպատակն էր կրթել եւ դաստիարակել հայ ընտանիքին նուիրուած լուսամիտ մայրեր, աղջիկներին տալ ազգային դաստիարակութիւն եւ առտնին հմտութիւններ: Ինչպէս եւ Ս. Մեսրոպեան վարժարանը, Ս. Հռիփսիմեանը եւս գոյատեւել է մինչեւ գաղթօջախի կործանումը:

80-ական թթ. Զմիւռնիայում իր մանկավարժական նորամուծութիւններով առանձնանում էր Աղաբեկեան վարժարանը, որի տեսուչներն էին Մ. Աղաբեկեանը (ապագայ «Կոռնկ հայոց աշխարհին» եւ «Ծիլն Աւարայրի» պարբերականների խմբագիրը) եւ Մ. Մամուրեանը: Դպրոցը նախապէս արական էր, իսկ յետոյ դարձաւ երկսեռ, որ նորոյթ էր առհասարակ հայ դպրոցի համար: Ուսուցման մեթոդներն ու եղանակները այս վարժարանում յենուում էին եւրոպական մանկավարժական սկզբունքների վրայ:

Գաղթօջախի մշակոյթի զարգացումը նշանակալիօրէն խթանել են լուսաւորական-մշակութային ընկերութիւնները: Գործունէութեան թափով ու նպատակադրումներով աչքի էր ընկնում մանաւանդ «Սիւնեաց» ընկերութիւնը, որ արդիւնաւէտ է գործել 1841-1845 թթ.: Ընկերութիւնը աջակցել եւ նիւթապէս խրախուսել է ոչ միայն Զմիւռնիայի, այլեւ շրջակայ բնակավայրերի կրթական գործին: Նրա նիւթական պատկառելի հնարաւորութիւնների մասին է խօսում անդամակցող վաճառականութեան ստուար շերտը (սկսած տեղի հայ

18. Մատենադարան, Կարողիկոսական դիւան, քրդ. 116, վաւ. 28ա, 28բ:

վաճառականներից մինչեւ Տրիեստի վաճառականները, Վիեննայի, Պադուայի, Պոմպէյի եւ այլ քաղաքների ու գաղթօջախների հարուստ ազգայիններ, օտարազգի վաճառականներ եւ այլն): Ընկերութիւնը դպրոցներ է հիմնել էգէ-եանի ողջ շրջակայքով մէկ՝ Մանիսա, Բայանդըր, Էյդեմիշ, Ազհիսար, Ինչպէս նաեւ հեռաւոր Վառնայում (Պուլկարիա): 1845 թ. հրդեհը ծանր հարուած հասցրեց «Սիւնեացին», ընկերութեան վարչութեան մէջ ծայր առան դրան հետեւած շփոթն ու երկպառակութիւնները: Զլատուած ընկերութիւնը գործել է մինչեւ 1850-ականի սկիզբը՝ անուանապէս:

1843-1845 թթ. գործում էր «Արագածունեաց» ընկերութիւնը, որն իր տպարանում, ինչպէս տեսանք, հրատարակել է սեփական «Հայրենասէր» թերթը եւ մի քանի գրքեր: 1845 թ. մեծ հրդեհը այրեց ընկերութեան հնարաւորութիւնները եւ գործունէութեան հեռանկարները: Նոյն պատճառով իր գործունէութիւնը դադարեցրեց «Հայկազնեան» ընկերութիւնը, որից մնացել են մի երկու տպագրուած գիրք, այդ թուում «Հարիւր առակները»:

Զմիւռնիայում թատերական մշակոյթի զարգացման գործը կապուած է «Վասպուրական» ընկերութեան գործունէութեան հետ: Այն յայտնի է գաղթօջախում փրոֆեսիոնալ համանուն թատրոնի հիմնադրմամբ: «Վասպուրական» թատրոնը թատերական թարգմանական խաղացանկի հետ միասին տեղ է տուել նաեւ ազգայինին՝ բեմադրելով պատմական հայ անցեալին նուիրուած՝ Մ. Պեշիկթաշեանի, Մ. Վանանդեցու եւ այլոց թատերգութիւնները: 1863 թ. «Վասպուրական» թատրոնը համազգային արժէք ստացաւ Կ. Պոլսից հիւրախաղերի եկած Յ. Վարդուկեանի եւ Ստ. Էքզեանի խմբերի շնորհիւ: Այս թատրոնի բեմում ելոյթներ են ունեցել նաեւ Զմիւռնիայի եւրոպական օփերետային «Կամարանօ» թատրոնը, արտասահմանցի դերասաններ եւ այլն: «Վասպուրականը» իւրովսանն նպաստել է թուրքական թատրոնի զարգացմանը: Նկատի առնելով քաղաքի յունական ստուար ազգաբնակչութեանը, թատրոնը ներկայացրել է նաեւ յունարէն փիէսներ:

1860-ական թթ. զմիւռնահայ գաղթօջախի կեանքում ուշադրաւ երեւոյթ էր «Տիգրան» մասոնական օթեակը (հիմն. 1865 թ.): Զմիւռնիայում ֆրանկմասոնական ընկերութիւններ ունէին անգլիացիները («Հոմբրոս»), իտալացիները («Ստելլա Իոնիա»), յոյները («Այոս Յորեյոս»): «Տիգրան» օթեակը, ինչպէս եւ Կ. Պոլսի հայկական «Հայկ-Օրիոնը» ընդգրկում էր հայ մտաւորականութեան տարբեր մտայնութեան ներկայացուցիչներին, նրան անդամակցել են Մ. Մամուրեանը, Գր. Զրիլիկիրեանը, Կ.Ա. Տէտէեանը, Մ. Վանանդեցին, «Հաշտենից» ընկերութեան շատ անդամներ: Այս օթեակում է Մ. Մամուրեանը կարդացել իր ատենախօսութիւնը Մ. Նալբանդեանի մահուան տարելիցին (1867), որը յետոյ տպագրուեց «Մաղիկ» հանդէսում: Օթեակի գործունէութիւնը կապուած է ազգային ինքնագիտակցութեան վերելքի եւ համայնքում հասարակական մտայնութեան զարգացման հետ: Մինչեւ գաղթօջախի անկումը գործում էր «Հայ ընթերցատունը» (հիմն. Գ. Բարազեան, 1869-1922), որի հարուստ հաւաքածուն կազմուած էր հայ եւ օտարազգի դասականների երկերից:



Զմիւռնահայ մշակութային իրականութեան մէջ դժուար է գերազնահատել պարբերական մամուլի դերը: Առաջին հայերէն պարբերականը Զմիւռնիայում ամերիկեան բողոքականների հրատարակած «Շտեմարան պիտանի գիտելեաց» ամսագիրն էր, սակայն այն չունէր ազգային նկարագիր եւ բնականաբար, չէր կարող գոհացնել զմիւռնահայերի հասարակական պահանջները: Այս պարբերականը հայագիտութեան համար արժէքաւոր կարող է լինել այնքանով, որքանով բաւական նպաստ է բերել գրական հայերէնի մշակմանը, խթանել լրագրային ոճի զարգացմանը: Այս ամսագրի հրատարակութիւնից մէկ տարի անց, 1840 թ. Զմիւռնիայում սկսուեց հրատարակուել «Արշալոյս արարատեան» թերթը (տպագրուել է մինչեւ 1884 թ. վերջը)<sup>19</sup> արեւմտահայ անդրանիկ ազգային-հասարակական պարբերականը: «Արշալոյս արարատեանը» (խմբագիր-հիմնադիր՝ Ղ. Պարզագարեան, վերջում՝ Յ. Կ. Սվաճեան) բազմակողմանիօրէն արտացոլել է հայ կեանքը եւ դուրս եկել զուտ Զմիւռնիայի շրջանակներից: Նրա էջերում բազմաթիւ յօդուածներ եւ վաւերագրեր են տպագրուել ոչ միայն արեւմտահայութեան, այլեւ արեւելահայերի, Եւրոպայի ու Ասիայի հայ գաղթօջախների կեանքի եւ իրականութեան վերաբերեալ: Այս թերթի շուրջ չորս եւ կէս տասնամեակի գործունէութիւնը կարեւոր նշանակութիւն ունեցաւ ազգային համախմբման, հայ ժողովուրդի տարբեր հատուածների ու գաղթօջախների առնչութիւնների խորացման, նրանց ազգային դիմանկարը պահպանելու գործում:

«Արշալոյս արարատեանի» հետ մի որոշ ժամանակահատուածում տպագրուում էր «Հայրենասէր» շաբաթաթերթը (խմբ.՝ Ս. Մելիքսելումեան): 1845 թ. Յունիսի մեծ հրդեհը նիւթական անդարմանելի կորուստներ հասցրեց «Հայրենասէրին», որը այլեւս չկարողացաւ ոտքի կանգնել եւ մի կերպ հրատարակուելով մինչեւ 1846 թ., ասպարէզը թողեց «Արշալոյս արարատեանին»: Այս թերթը ուշագրաւ է ոչ միայն զմիւռնահայ համայնքի ներքին կեանքի, նրա հակասութիւնների բացայայտման, այլեւ արեւելահայութեան հետ արեւմտահայ հատուածի առնչութիւնները խորացնելու տեսակէտից:

Գրական թեքում ունէր յաջորդ տասնամեակին լոյս տեսած «Արփի արարատեան» ամսագիրը (1853-1856), որ հրատարակում էին Տէտէեան եղբայրները (խմբ.՝ Ա. Կ. Տէտէեան): Լինելով արեւմտահայ երկրորդ գրական հրատարակութիւնը Կ. Պոլսի «Բանասէրից» յետոյ (1850-1851), «Արփի արարատեանը» փաստօրէն հիմք էր դնում եւրոպական դասական գրականու-

19. Հայ պարբերական մամուլի մատենագրութիւններում «Արշալոյս արարատեանի» դադարի տարին է համարում հիմնականում 1887 թուականը, որ նիշը չէ: Այս բերքը վերջնականապէս փակուել է 1884 թ. Դեկտեմբերի 29-ից յետոյ, Դեկտեմբերի 22-ի համարում բուրբակաւ իշխանութիւնների դէմ մի գրգռիչ նամակ տպագրելու պատճառով: Այս նոյն պատճառով ձերբակալուում եւ բանտ է նետուում բերքի վերջին խմբագիր Յարութիւն Կ. Սվաճեանը՝ Փարիզում իրաւաբանական բարձրագոյն կրթութիւն ստացած եւ առաջադէմ հայնացիների տէր մի մտաւորական: Մօտ մէկ եւ կէս տարի բանտում տառապելուց յետոյ նա ազատուում է եւ խիստ հիւժուած՝ վախճանուում 1887 թ. («Մասիս», 1887, թիւ 3866, «Փունջ», 1887, թիւ 2036, 2074): Հաւանական է, որ մատենագետները նրա մահուան տարին շփոթում են բերքի դադարի թուականի հետ:

թեան հայերէն թարգմանութեանը՝ Օսմանեան Թուրքիայի տարածքում: Այս հանդէսում տպագրուեցին Տ. Հ. Տէտէեանի թարգմանութեամբ՝ Մուլիերի «ժլատը», «Ակամայ բժիշկ» եւ «Աէրը բժիշկ է» կատակերգութիւնները եւ այլն:

Մշակութային ինքնատիպ երեւոյթ էր զմիւռնահայ լուսաւորիչ, մտածող Գ. Կոստանդեանի «Թանգարան հասարակաց» վերնագրով մատենաշարի թողարկումը: Մատենաշարը նուիրուած էր տարբեր գիտութիւնների (գանգաբանութիւն, երկրաբանութիւն, ձգողաբանութիւն եւ այլն)՝ ընդամէնը 16 գրքոյկ:<sup>20</sup> Կոստանդեանը առաջինն էր Զմիւռնիայում, որ փորձում էր ժողովրդականացնել գիտութիւնը եւ մատչելի դարձնել այն հասարակական լայն խաւերին: Իրացիոնալիզմին ինչ-որ չափով տալը այդ գրքոյկներում (մեամերաբանութիւն, մագնիսաբանութիւն) պէտք է բացատրել ժամանակի գիտութեանը յատուկ թերութիւններով, որոնցից զերծ չէր կարող մնալ, բնականաբար, երիտասարդ հեղինակը: Յետագայում Գ. Կոստանդեանը գրեց «Մեթոտին վրայ» փիլիսոփայական խորիմաստ աշխատութիւնը, որն իր գիտական արժէքով մնաց բացառիկ եւ եզակի երեւոյթ հայ փիլիսոփայական մտքի պատմութեան մէջ:

Առաջդիմական ուղղութիւն ունէր Զմիւռնիայի «Միութիւն» պարբերականը (1860-1862՝ ընդհատումներով): Այն «Հաշտեանից» ընկերութեան հրատարակութիւնն էր եւ համայնքում բերում էր նոր գաղափարներ: Գաղթօջախում զարգացող հասարակական միտքը աւելի ազդեցիկ դարձաւ «Մաղիկ» հանդէսում (1861-1867, խմբագիրներ՝ Գր. Չիլինկիրեան եւ Ա. Հայկունի, 1862-ից՝ միայն Գր. Չիլինկիրեան): Այս պարբերականը գաղափարական ակնառու նշանակութիւն ունեցաւ արեւմտահայ ազգային մարմինների դեմոկրատացման, հայ հասարակական կեանքի եւ մշակոյթի եւրոպականացման գործում: Պակաս կարեւոր չէ եւ այն, որ 1860-ական թթ. արեւմտահայ գեղագիտական միտքը բաւական շատ բան է պարտական «Մաղիկին», մասնաւորապէս ռոմանտիկական գեղագիտական կողմնորոշումների տեսակէտից: Չիլինկիրեանը նախ «Մաղիկում»,<sup>21</sup> այնուհետեւ առանձին գրքերով տպագրեց Վ. Հիւզոյի «Թշուառները», մի վէպ, որ երկար ժամանակ պահպանեց իր հմայքը արեւմտահայ գեղագիտական ու գրաքննադատական մտքի վրայ, կարելի է ասել՝ մինչեւ 1870-ական թթ. վերջը:

1860-ականի սկզբներին Զմիւռնիայում յայտնուեցին նոր պարբերականներ՝ «Իմակը», «Գարուն Հայաստանին» եւ «Յաւերժահարսը» (բոլորն էլ 1862 թ.): «Իմակը» փորձում էր, աւելի կամ պակաս յաջողութեամբ, զարգացնել երգիծանքի ժանրը հայ լրագրութեան մէջ, իսկ միւս երկուսի մէջ առաւել նկատելի է թարգմանական գրականութեան ժողովրդականացման միտումը: «Իմակը», սակայն, ուշագրաւ է նաեւ այս տեսակէտից, նրա էջերում Ա. Կ.

20. Յակոբեան Մ. Ն., Զմիւռնահայ մշակութային կեանքը, «Լրաբեր հասարակական գիտութիւնների», 1972, թիւ 9, էջ 38: Կոստանդեան Գ., Մեթոդի վրայ, Նրբուան, 1961, Գ. Ն. Գասպրեանի Առաջաբանը, էջ 5-56:  
21. «Մաղիկ», 1862, թիւ 34, էջ 281-285, 1863, էջ 6-7, թիւ 64, էջ 10-13, թիւ 65, էջ 21-24, թիւ 66, էջ 28-31 եւ այլն:



Տէտէեանը տպագրեց հատուածներ Շեքսպիրի «Համլետից»: Իր հերթին, «Յաւերժահարսը» տպագրեց նոյն հեղինակի «Վենետիկի վաճառականը» եւ այս հանգամանքը ցոյց է տալիս, որ զմիւռնահայ մշակութային կեանքում աճում էր հետաքրքրութիւնը մեծ անգլիացու ստեղծագործութիւնների նկատմամբ: «Գարուն Հայաստանին» ընթերցողին ծանօթացրել է Բայրոնի ստեղծագործութեան հետ: Նրա «Հրէական մեղեդիների» հատուածային թարգմանութեամբ այդ պարբերականը իր բողոքն էր յայտնում բռնակալութեան դէմ: Բայրոնի թարգմանիչ Գր. Մսերեանը յայտնում էր, որ Բայրոնի ամբողջ պոէզիան յագեցած է ազատասիրական շնչով:

1870-ական թթ. ոչ միայն Զմիւռնիայի, այլեւ արեւմտահայ ամբողջ մշակութային կեանքում նոր գաղափարների ու մտածողութեան տարածողներից էր «Արեւելեան մամուլ» պարբերականը (1871-1909), որ հրատարակում էր Մ. Մամուրեանի խմբագրութեամբ: Իր հանրագիտական բովանդակութեամբ «Արեւելեան մամուլը» բազմակողմանիօրէն է սնունդ տուել արեւմտահայ ընթերցողի հոգեւոր ու մշակութային պահանջմունքներին: Այստեղ իրենց որոշակի ձեւաւորումը ստացան հրապարակախօսական շատ ժանրեր, որով նոր, արդիական սահմանազծերին մօտեցաւ ազգային լրագրական մշակոյթը: Այս պարբերականի էջերում հրատարակում էին հրատապ նշանակութիւն ունեցող՝ ժողովուրդի կացութեան, արուեստին, գրականութեանը, թատրոնին, բարոյաէթիկական հարցերին, դպրոցին, մանկավարժութեանը, առողջապահութեանը, հայ ժողովուրդի պատմական անցեալին նուիրուած բազմաթիւ յօդուածներ, տեսութիւններ, լրատուութիւն եւ այլն: «Արեւելեան մամուլի», ինչպէս եւ յետագայում լոյս տեսած «Մետէօրա» տարեգրքի (1880-1881, խմբագիր-հրատարակիչ՝ Գր. Մսերեան) էջերում դրսեւորուեցին արեւմտահայ առաջաւոր հասարակական մտքի էական կողմերը՝ մասնաւորապէս ազգային ինքնորոշման, եւրոպական ու ռուսական մշակոյթի, գիտութեան ժողովրդականացման, փիլիսոփայական ու զեղագիտական, տնտեսագիտական իմացութիւնների տարածման ասպարէզներում: «Մետէօրան» արեւմտահայ միակ հրատարակութիւնն էր, որը համիդեան բռնութիւնների ժամանակաշրջանում կարողացաւ (եւ ի վերջոյ, դրա համար հատուցեց իր խափանմամբ) գրաքննութիւնից անցկացնել ազգային-ազատագրական պայքարի գաղափարը՝ իր թարգմանական զեղարուեստական գրականութեան շնորհիւ: Հարկ է նշել «Մետէօրայի» եւս մէկ երախտիքը հայ զեղագիտական մտքի զարգացման ասպարէզում. տարեգրքը առաջիններից մէկն էր, որ հիմնաւորեց ռեալիզմի զեղագիտութիւնը, ընդ որում, առաջինը այն իմաստով, որ այդ հիմնաւորմանը տուեց տեսական-փիլիսոփայական հիմքեր՝ յենուելով պոզիտիվիզմի փիլիսոփայութեան վրայ:

«Արեւելեան մամուլից» քսանվեց տարի անց Զմիւռնիայում հրատարակուեց «Իզմիր» շաբաթաթերթը (1897, խմբ.՝ Ն. Ներսիսեան): Թերթը կոչուած էր լրացնելու լրատուութեան այն սուր պակասը, որ ունէին զմիւռնահայերը եոթեայ «Արշալոյս արարատեանի» դադարից ի վեր: Շաբաթաթերթը, սակայն, տեւական կեանք չունեցաւ եւ գաղթօջախում

տեղեկատուութեան միակ աղբիւրը շարունակեց մնալ «Արեւելեան մամուլը», որն այդ ժամանակ հրատարակուեւ էր որպէս կիսամեայ հանդէս: Գաղթօջախում վերստին թերթ յայտնուեց մէկ տասնամեակ անց, ընդ որում՝ օրաթերթ, «Արշալոյսը» (1907-1908 թթ., խմբ.՝ Բ. Քէչիշեան): Թերթն արտայայտել է գաղթօջախի առաջադէմ հասարակական խաւերի տրամադրութիւնները, իր էջերում տեղ տուել մտաւորականութեան հոգեւոր մղումներին եւ սուր քննադատութեան ենթարկել պոլսահայ եւ տեղի վերնախաւին: Վերջիններիս ձեռնարկած հալածական միջոցառումներն էլ, հաւանաբար, որոշեցին «Արշալոյսի» կենսունակութեան չափերը եւ թերթը դադարեց իր հրատարակութեան յաջորդ տարին: Նոյն՝ 1908-ին Զմիւռնիայում հրատարակուել է «Միմոս» շաբաթաթերթը՝ Ռ. Ղազիկեանի խմբագրութեամբ, որ դարձեալ երկար չի շարունակուել: Յաջորդ՝ 1909 թ. «Արեւելեան մամուլ» շաբաթաթերթը վերածուեց օրաթերթի՝ «Դաշինք» անուամբ (1909-1919, խմբ.՝ Ս. Պարթեւեան): «Դաշինքը» արտայայտել է Ռամկավար Կուսակցութեան հայեացքները եւ հետեւողական պայքար է մղել արեւմտահայերի ազգային ինքնորոշման համար՝ ակնկալելով արեւմտահայութեան վարչական ու մշակութային ինքնավարութիւնը Օսմանեան Թուրքիայի կազմում: Այս թերթը իր հրատարակութեան վերջին շրջանում, Մեծ Եղեռնից յետոյ, կրկին վերանուանուել է «Արեւելեան մամուլի» (1919-1922) եւ ուշագրաւ ու փաստականօրէն յագեցած բազմաթիւ նիւթեր է տպագրել եղեռնի ժամանակաշրջանում արեւմտահայերի, մասնաւորապէս զմիւռնահայ համայնքի նկատմամբ առաջին աշխարհամարտի վերջին թուրքական իշխանութիւնների հալածական քաղաքականութեան մասին:

1909 թ. Զմիւռնիայում հրատարակուել է «Մունետիկ» շաբաթաթերթը՝ Ս. Պապիկեանի խմբագրութեամբ, ընդամէնը մի քանի համար: Լրագրական եւ հրապարակախօսական երեւոյթ էր «Աշխատանք» շաբաթաթերթը (1910-1914, տէր եւ տնօրէն՝ Ս. Թոքաճեան): Շաբաթաթերթը ուշագրաւ նիւթեր է տպագրել Արեւմտահայաստանի, Կ. Պոլսի եւ հայ գաղթօջախների ազգային ու հասարակական իրականութեան մասին: Հետաքրքիր են, մանաւանդ, զմիւռնահայ գաղթօջախի անցեալի եւ ժամանակակից կեանքի վերաբերեալ նրա հրապարակումները, որի հեղինակներն են Զմիւռնիայի եւ Կ. Պոլսի լրագրողներն ու հրապարակախօսները: Տպագրել է նաեւ արեւմտահայ գաւառի տնտեսութիւնը վերլուծաբար ներկայացնող նիւթեր, վիճակագրական տեղեկութիւններ եւ այլն:

1910-ական թթ. Զմիւռնիայի աշխուժացած ազգային կեանքը առաջադրում էր նաեւ երգիծանքի պահանջմունքը: Այս ժամանակաշրջանում հրատարակուեցին «Հտպիտ» (1910, խմբագիրներ՝ Մ. Թոփալեան, Յ. Շիրինեան) եւ «Մոծակ» երգիծական շաբաթաթերթերը: Սրանք, ինչպէս եւ «Փեթակ» շաբաթաթերթը, (1910 խմբ.՝ Գ. Սարգիսեան) հրատարակուել են կարճ ժամանակ եւ դադարել տարբեր պատճառներով: Շատ աւելի լուրջ եւ մնայուն ներդրում ունեցաւ «Հայ գրականութիւն» գրական, զեղարուեստական ու գիտական հանդէսը (1911-1914, խմբ.՝ Զ. Գազազեան): Հանդէսում



տպագրուել են գաղթօջախի տաղանդաւոր գրական եւ հրապարակախօսական ուժերը, առհասարակ ճանաչուած մտաւորականներ: Նրա բովանդակութիւնը վկայում է, որ 1910-ականի սկզբին զմիւռնահայ գաղթօջախում ազգային-հոգեւոր մշակոյթը ապրում էր նոր վերելք՝ կապուած հայ գրականութեան ժողովրդայնացման եւ հայագիտական մտքի զարգացման նորովի կողմնորոշումների հետ: Նոյն Զ. Գազազեանի խմբագրութեամբ 1919-1921 թթ. հրատարակուել է «Միմոս», դատելով անունից՝ երգիծական շաբաթաթերթը, որը համեմատաբար տեւական է եղել զմիւռնահայ վերջին շրջանի պարբերականների մէջ:

Ամբողջովին իր ժամանակաշրջանի տրամադրութիւններն էր արտայայտում «Ատրուշան» կիսամեայ հանդէսը (1919, տնօրէն-խմբագիր՝ Մ. Բարթիկեան), որի էջերում իւրովի արտացոլուել է ոչ միայն եղեռնի արհաւիրքներին դիմակայած զմիւռնահայ համայնքի հասարակական ու մտաւոր կեանքը, այլեւ ցեղասպանութիւնը վերապրած հայ բեկորների ողբերգութիւնը, ժողովրդի իրական կացութիւնը: «Ատրուշանի», ինչպէս եւ «Դափնիի» (Կիսամսեայ, 1921-1922, արտօնատէր եւ տնօրէն՝ Յ. Զվանշիր-Ղ. Դուրեան) եւ «Իրաւունք» օրաթերթի (1919) նիւթերը հետաքրքրական են յատկապէս այն առումով, որ ներկայացնում են զմիւռնահայ հնամենի գաղթօջախի պատմութեան եւ հասարակական կեանքի վերջին էջերը: «Դափնի», մասնաւորապէս, բացի կրօնական բնոյթի ուսուցողական նիւթերից, ինչպէս եւ գաղթօջախի հայութեան կրթական կեանքին նուիրուած հրապարակումներից, տպագրել է պատմական արժէք ներկայացնող վաւերագրեր, որոնք կարեւոր տեղեկութիւններ են պարունակում 17-18-րդ դդ. բնաշխարհից հայ ժողովուրդի հատուածների գաղթի, զմիւռնահայ գաղթօջախի պատմութեան, դրանում եկեղեցու դերի եւ նշանակութեան մասին:

Ռամկավարներից յետոյ Զմիւռնիայում ազգային կուսակցութիւններից թերթ է հրատարակել ՀՀ Դաշնակցութիւնը՝ «Գոյամարտ» անուամբ: (1920, հրատարակիչ-խմբագիրներ՝ Մ. Սարեան, Վ. Գէորգեան, Անտ. Կազել): Այս պարբերականը եւս կարճ կեանք է ունեցել, որ դարձեալ վկայում է գաղթօջախի վերջին շրջանի հեղհեղուկ կացութեան մասին: Նոյն թուականին, փոքր-ինչ աւելի տեւականութեամբ (1920-1921) լոյս է տեսել «Մամուլ» ամսագիրը: 1922 թ., կարծես գաղթօջախի մօտալուտ վախճանի իւրօրինակ արտացոլում, Զմիւռնիայում հայ ազգային-հասարակական որեւէ թերթ չի տպագրուել: Ամենավերջինը «Պատրաստ» կիսամեայ հանդէսն էր (1920-1922, խմբ.՝ Զ. Յարէթեան), որը սկսուածների պաշտօնաթերթն էր: Վերջին պարբերականների հետ միասին դադարել էր նաեւ զմիւռնահայ մշակութային կեանքը:

CULTURE IN THE ARMENIAN SETTLEMENT OF SMYRNA

ALBERT KHARATIAN

SUMMARY

The Armenian settlement in Smyrna, formed in the last quarter of the XIVth century, made a valuable contribution to the development of national spiritual and intellectual life. Principles established in this settlement had a great impact on the development of book-printing, national education and schooling, the press, fiction and improvement of the new literary language, theatre, etc. Earlier than any other Armenian cultural centre in Ottoman Turkey between 1840 and 1850, intellectuals in Smyrna worked on European literature, translating the calssics (Shakespeare, Moliere, Hugo, Goldoni, etc.), which in fact strongly incentivated the whole of West Armenian literature. As from 1840 various periodicals of different social leanings were published.

This was where the first West Armenian national newspaper on social matters was published. It was called "Arshaluys Araratian" (1840-1884). In eighteen sixties a theatre called "Vaspourakan" housed the best representatives of West Armenian theatre.

It was here that one of the most eminent philosophers - Galoust Kostandian - lived and worked. His points of view were fairly close to those of A. Conte's positivism.

In Septemper 1922 the Armenian and Greek population of the city of Smyrna was slain by the soldiers of Kemal. Until this date the Armenian settlement in Smyrna played a significant role in the enrichment of Armenian culture.







# PAGES FROM THE HISTORY OF THE ARMENIAN DIASPORA

## CONTENTS

Introduction	p. III
Biography of Dr. Roberto Gulbenkian	p. IV
Vladimir Barkhoudarian	
Beginnings and importance of Armenian Settlements	p. 1
Vardges Michaelian	
Exodus of the Armenian people in the VIth - XIXth Century	p. 21
Ruben Egheiazarian	
Feature articles Anglo-Armenian historical relations (VIIth-VIIIth Century A.D.)	p. 43
Azat Bozoian	
Armenian population of Philipoupolis and Armenian-Byzantine religious political relations in the second half of the XIIth Century	p. 61
Jullietta O. Galstian	
Increase of Armenian Settlements in Ukraine and Poland	p. 77
Hemayak Mardirossian	
Anthon of Sultaniye - A journey to China	p. 99
Elizabeth Tadjirian	
"Travel notes" by Corneille le Bruyn as a source for studying the History of Armenian Settlements	p. 123
V.M. Martirossian	
Armenians in the Commercial-Economic life of Georgia (second half of XVIIIth Century)	p. 147
Pavel Chobanian	
On the history of relations between the Armenian, Georgian and Russian peoples (Ninth decade of the XVIIIth century)	p. 161



PAGES FROM THE HISTORY OF  
THE ARMENIAN DIASPORA

James H. Ananian

Armenian merchants in Russia  
(end of the XVIIIth - beginning of the XIXth Century

p. 181

Vartan Khatchaturian

The Armenian press in Astrakhan  
(end of the XVIIIth beginning of the XXth Century

p. 205

Albert Kharatian

Culture in the Armenian settlement of Smyrnia

p. 225

Contents

p. 243